

Ամերիկյան գրականություն, Վեպ, Արձակ

13+

Ջեյ Լոնդոն

Երեք սիրտ

HEARTS OF THREE

Խաչիկ Զրաչյանի թարգմանությամբ

«Երեք սիրտ» վեպը առաջին անգամ տպագրվել է «Նյու Յորք Ջոննել» թերթում, 1919 թ. մայիս-հունիս ամիսներին, իսկ 1920 թ. հրատարակվել է առանձին գրքով:

ՆԱԽԱԲԱՆ

Չուսով եմ ընթերցողը կների ինձ, որ նախաբանն սկսում եմ գլուխ գովելով: Բանն այն է, որ այս աշխատանքը հոբեյանական է: Սրա ավարտումով ես նշում եմ իմ քառասնամյակը, իմ հիսուներորդ գիրքը, իմ գրական գործունեության տասնվեցերորդ տարին և մի նոր ուղղություն իմ ստեղծագործության մեջ: «Երեք սիրտ» իրոք նոր ուղղություն է: Մինչև այժմ ես ոչ մի այսպիսի բան չեմ գրել, անշուշտ, և գրեթե համոզված եմ, որ այսուհետև էլ չեմ գրի: Եվ բոլորովին մտադիր չեմ թաքցնել, որ հպարտանում եմ այս աշխատանքով: Իսկ այժմ խորհուրդ կտայի գործողության սրընթաց զարգացում սիրող ընթերցողին ցատկեղ-անցնել նախաբանում եղած ողջ պարծենկոտության վրայով ու գլխովին խորասուզվել պատմության մեջ, և թող հետո նա փորձի ասել, թե հեշտ է այժ կտրել իմ գրքից:

Ինձ թույլ եմ տալիս որոշ հանգամանքներ բացատրել հետաքրքրասերներին: Մինչդեռ կինեմատոգրաֆիան կդառնար զվարճության ամենամասսայական ձևը ամբողջ աշխարհում, համաշխարհային բեյլետոհատիկայի կուլտակած ֆաբուլաների ու ինտրիգների պաշարն սկսեց արագորեն սպառվել: Ինչ-որ մի կինոընկերություն երկու տասնյակ ռեժիսորների օգնությամբ ի վիճակի է եկրանացնել Շեքսպիրի, Բալզակի, Դիկկենսի, Սքոթի, Չոլայի, Տոլստոյի և մի տասնյակ ավելի պակաս բեղմնավոր գրողների ամբողջ գրական ժառանգությունը: Իսկ քանի որ աշխարհում հարյուրավոր կինոընկերություններ կան, դժվար չէ կռահել, որ նրանք շուտով դեմ կառնեն այն հուժկի պակասին, որից կինոնկարներ են թխում:

Բոլոր այն վեպերի, պատմվածքների ու պիեսների Եկրանացման իրավունքը, որոնք հրատարակվել են կամ ենթակա են հրատարակության որոշակի հրատարակչությունների կամ անձերի կողմից, վաղուց արդեն գնված են ու պայմանագրերով ձևակերպված. իսկ եթե պատահում է մի նյութ, որի սեփականության իրավունքը վերացել է վաղեմիության պատճառով, ապա Եկրանացվում է նույնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ ոսկեավազ ափ իջած նավաստիները կհարձակվեին ոսկու բնակտորների վրա: Չազարավոր սցենարիստներ,— ավելի ճիշտ կլինի ասել տասնյակ հազարավորներ, որովհետև չկա մի այնպիսի տղամարդ, կին կամ մանուկ, որն իրեն լիովին հասունացած չհամարի սցենար գրելու համար,— այսպես, ուրեմն, տասնյակ հազարավոր սցենարիստներ չափ ընկած նետվում են գրականության վրա (ինչպես հեղինակային իրավունքով պահպանվող, այնպես էլ չպահպանվող), ամսագրերը խլում համարյա մեքենայի տակից, հուսալով գտնել իրենց գրչակից եղբայրների կողմից հորինված որևէ նոր պատկեր, ֆաբուլա կամ պատմություն:

Ի դեպ, արդարությունը պահանջում է նշել, որ բոլորովին վերջերս, այն օրերին, երբ դեռևս սցենարիստներին այնքան էլ չէին հարգում, նրանք շաբաթական տասնհինգ-քսան դոլարի համար տքնում էին քրտինքի մեջ կորած, պատահում էր և այնպես, որ գծուձ դիրեկտորները տալիս էին նրանց հատավճար՝ սցենարի հատը տասը-քսան դոլար, ըստ որում հարյուրից հիսունի դեպքում

չէին վճարում նաև այն գրոշները, որ հասնում էր նրանց. պատահում էր և այնպես, որ սցենարիստների գողացած ապրանքն իր հերթին գողանում էին ոչ պակաս անխիղճ ու անամոթ մարդիկ, որոնք աշխատում էին հաստիքով: Այդպես էր միայն երեկ, իսկ այսօր ես սցենարիստներ գիտեմ, որոնք ունեն երեքական մեքենա ու երկուական վարորդ, որոնք իրենց երեխաներին ուղարկում են ամենաթանկ դպրոցները և ընդհանրապես օժտված են կայուն վճարունակությամբ:

Չենց հատկապես բելլետրիստիկական հումքի պակասության պատճառով նշանակալից չափով սկսեցին գնահատել ու հարգել սցենարիստներին: Առաջ եկավ պահանջ, նրանք ճանաչում գտան, սկսեցին ավելի լավ վճարել նրանց ու ավելի բարձրորակ արտադրանք պահանջել նրանցից: Սկսվեցին նյութերի նոր որոնումներ, որը մասամբ արտահայտվում էր հայտնի գրողներին իբրև սցենարիստներ հավաքագրելու փորձերի մեջ: Բայց նույնիսկ եթե մարդը գրել է քսան վեպ, դեռևս չի կարող երաշխիք ծառայել, թե նա կարող է լավ սցենար գրել: Ճիշտ հակառակը. շատ շուտով պարզվեց, որ բելլետրիստիկայի ասպարեզում ունեցած հաջողությունը Էկրանում տապալվելու հաստատ երաշխիք է:

Բայց այստեղ հանդես են գալիս կինոընկերությունների տերերը: Ամենից առաջ՝ աշխատանքի բաժանում: Եվ ահա, կապվելով լրագրային հզոր միավորումների կամ առանձին անձանց հետ, ինչպես դա տեղի ունեցավ այս դեպքում,— ես ի նկատի ունեմ «Երեք սիրտը»,— նրանք պատվիրում են բարձրորակ սցենարիստների (որոնք նույնիսկ սեփական կյանքի գնով չեն կարող վեպ գրել) գրել սցենար, որը հետո վիպասանները (որոնք նույնիսկ սեփական կյանքի գնով չեն կարող սցենար գրել) դարձնում են վեպ:

Եվ այսպես, միստր Չարլզ Գոդարդը գալիս է ոմն Ջեյ Լոնդոնի մոտ ու ասում. «Գործողության ժամանակը, գործողության տեղը և գործող անձերը որոշված են. կինոընկերությունները, թերթերն ու կապիտալը ձեր տրամադրության տակ են. եկեք պայմանավորվենք»: Եվ մենք պայմանավորվեցինք: Արդյունքը՝ «Երեք սիրտը»: Ոչ ոքի մոտ կասկած անգամ չի կարող ծագել միստր Գոդարդի արվեստի ու վարպետության նկատմամբ, եթե թվարկեմ նրա ստեղծագործությունները. իսկ նրա գրչին են պատկանում «Պոլիսայի դժբախտությունները», «Իլեյնի արկածները», «Աստվածուհին», «Չարստացիր, Ուոլլինգֆորդ» և այլն: Բացի դրանից, սույն վեպի հերոսուհու անունը՝ Լեոնսիա, նույնպես նա է հորինել:

Առաջին մի քանի Էպիզոդները նա գրեց Լուսնի Յոլտում գտնվող իր ռանչոյում: Սակայն նա ավելի արագ է գրում, քան ես, և իր տասնհինգ Էպիզոդը ավարտեց ինձնից մի քանի շաբաթ առաջ: «Էպիզոդ» խոսքը թող ձեզ մոլորության մեջ չզցի: Առաջին Էպիզոդի վրա երեք հազար ֆուտ ժապավեն գնաց: Իսկ հետևյալ տասնչորսին՝ երկուհազարական ֆուտ յուրաքանչյուրին: Ամեն Էպիզոդում մոտ իննսուն պատկեր, որ կազմում է ընդամենը մոտ հազար երեք հարյուր պատկեր: Եվ այսպես, մենք աշխատում էինք զուգահեռ, ամեն մեկս իր բաժնի վրա: Երբ ես գրում էի որևէ գլուխ, բնականաբար չէի կարող հաշվի առնել, թե ինչ է կատարվում հաջորդ կամ տասներկուերորդ գլխում, որովհետև չգիտեի: Չգիտեի նաև միստր Գոդարդը: Այստեղից էլ անխուսափելի հետևանքները. չի կարելի ասել, թե «Երեք սրտում» պատմությունը աչքի է ընկնում առանձին հետևողականությամբ, չնայած այն, անշուշտ, զուրկ չէ տրամաբանությունից:

Պատկերացրեք իմ զարմանքը, երբ ես Չավայան կղզիներում հանկարծ միստր Գոդարդից փոստով ստանում եմ տասնչորսերորդ Էպիզոդի սցենարը (մինչդեռ ես այդ ժամանակ նոր-նոր միայն աշխատում էի տասներորդ Էպիզոդի գրական մշակման վրա) ու տեսնում, որ իմ հերոսն ամուսնացել է բոլորովին էլ ոչ այն կնոջ հետ: Եվ մեր տրամադրության տակ ընդամենը մեկ Էպիզոդ կա, որպեսզի ազատվենք այդ կնոջից ու իմ հերոսին օրինական ամուսնական կապերով միացնենք այն միակ կնոջը, որի հետ նա կարող է և պետք է ամուսնանա: Թե ինչպես է դա արված՝ խնդրում եմ նայել վերջին գլուխը կամ տասնհինգերորդ Էպիզոդը: Կարող եք չկասկածել, որ միստր Գոդարդն ինձ գլխի գցեց, թե ինչպես պետք է անել:

Բանն այն է, որ միստր Գոդարդը գործողության զարգացման վարպետ է ու արագության հանճար: Գործողության զարգացումը բոլորովին չի հուզում նրան: «Պատկերել»,— հանգիստ նշում է նա կինոդերասանին՝ հեղինակային ռեմարկայում: Ըստ երևույթին դերասանը «պատկերում է», որովհետև միստր Գոդարդը տեղնուտեղը մի գործողությունը մյուսի վրա է բարդում: «Պատկերել վիշտ»,— հրամայում է նա, կամ «տխրություն», կամ «բարկություն», կամ «անկեղծ կարեկցանք», «սպանելու ցանկություն» կամ «ինքնասպանության ձգտում»: Ուրիշ ոչինչ: Այդպես էլ պետք է

լինի, այլապես նա ե՞րբ կարող էր ավարտել աշխատանքն ու գրել իր հազար երեք հարյուր պատկերը:

Բայց կարո՞ղ էք պատկերացնել, թե ինչ վիճակի մեջ էի ես, դժբախտս, որ չէի կարող սահմանափակվել «պատկերել» կախարդական խոսքով, այլ պետք է նկարագրեի,— ըստ որում հույժ մանրամասն,— բոլոր այն տրամադրություններն ու վիճակները, որ միստր Գոդարդը նշել էր գրչի մի հարվածով: Գրո՞ղը տանի: Դիկկենսի համար չափազանց մեծ շռայլությունն չէր թվում հազար բառ ծախսել նկարագրության և իր այս կամ այն հերոսի դառն ապրումների հնարավորին չափ ավելի նուրբ գծագրության վրա: Իսկ ահա միստր Գոդարդն ասում է՝ «պատկերել», և կինոապարատի ստրուկները անում են այն ամենը, ինչ անհրաժեշտ է:

Հապա գործողության զարգացո՞ւմը: Իր ժամանակին ես շատ արկածային վեպեր եմ գրել, բայց այդ բոլորի մեջ միասին վերցրած դուք չեք գտնի գործողության այնպիսի սրընթաց զարգացում, ինչպես «Երեք սրտում» է:

Դրա փոխարեն ես այժմ գիտեմ, թե կինեմատոգրաֆիան ինչու է այդքան ժողովրդականություն վայելում: Գիտեմ, թե ինչու են «Նյույորքցի պարոնայք Բառնեսները» «Թեքսասցի բրուտը» տարածվում միլիոնավոր օրինակներով: Ես այժմ գիտեմ, թե ինչու որևէ փքուն ագիտացիոն ճառ կարող է շատ ավելի ձայներ նվաճել, քան պետական գործչի ամենագեղեցիկ ու առաքինի արարքը կամ մտադրությունը: Միստր Գոդարդի սցենարը վեպի ձևափոխելն ինձ համար հետաքրքիր և հույժ ուսանելի մի փորձ էր: Այդ աշխատանքը նոր ձևով լուսավորեց իմ վաղուց մտածած սոցիոլոգիական ընդհանրացումները, նոր հիմք դրեց դրանց տակ ու ամրապնդեց: Իբրև գրող, իմ ուժերը ինձ համար նոր բնագավառում օգտագործելու այդ փորձից հետո, ես սկսեցի ժողովրդի հոգին իր ամբողջության մեջ հասկանալ ավելի խորը, քան մինչև այժմ, և հասկացա,— ավելի լիակատար ձևով, քան երբևէ,— թե ժեստի ու դիմախաղի ինչպիսի բարձր արվեստի պետք է տիրապետի այն դեմագոգը, որը ընտրողների ձայներն իր կողմն է գրավում մասսաների կուլեկտիվ հոգու հետ խաղալու կարողության շնորհիվ: Ես խիստ կզարմանամ, եթե այս գիրքն ամենալայն տարածում չգտնի («Արտահայտել զարմանք»,— կասեր միստր Գոդարդը, կամ «Արտահայտել լայն տարածում»):

Եթե «Երեք սիրտ» կոչվող այս արկածախնդրության հիմքում ընկած է համագործակցությունը, ապա ես հիացած եմ համագործակցության գաղափարով: Բայց, ավա՛րդ, վախենում եմ, որ միլիոնից մեկը միստր Գոդարդի նման կոլեգա չլինի: Մենք ոչ մի անգամ նույնիսկ մի խոսք չդարձրինք իրար, չունեցանք ոչ մի կռիվ, ոչ մի բանավեճ: Բայց այդ դեպքում երևի ես էլ ոչ թե կոլեգա եմ, այլ երազանք: Մի՞թե ես չէի, որ թույլ տվի նրան,— առանց դժգոհության կամ առարկության որևէ ակնարկի,— սցենարի 15 էպիզոդի, 1300 պատկերի և 31000 ֆուտ ժապավենի, իսկ հետո նաև վեպը կազմող 111000 բառի ընթացքում «արտահայտել» այն ամենը, ինչ իր քեֆը կտա: Բայց և այնպես այժմ, երբ ավարտեցի սույն աշխատանքը, շատ ուրախ կլինեի սկսած չլինել մի պարզ պատճառով. ես կուզենայի ինքս կարդալ ու տեսնել, թե ինչպես է կարդացվում: Իսկ դա ինձ շատ է հետաքրքրում: Շա՛տ:

Հավայան կղզիներ, Ուայկիկի,

23 մարտի 1916 թվական

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

ՀԻՆ ԾՈՎԱՅԵՆԱՅԻՆ ԵՐԳ

Ով պատրաստ է դաժան մարտում

Բախտը ձեռքովն իր վերցնել,

Դուրս ել իբրև դու ծովահեն

Ծովի արձակ հեռուներ:

ԿՐԿՆԵՐԳ

Յողմն է ոռնում, ծովը եռում,
Մենք՝ անհողողող և հուսով:
Մենք՝ մեջք մեջքի, կայմի կողքին,
Յագարի դեմ երկուսով:

Պիստոլետ ու դանակ մեկտեղ—
Ինչ պայծառ օր է, մարդիկ...
Թուփը կընկճի նրանց կամքը,
Սուրը ճամփա կհարթի:

ԿՐԿՆԵՐԳ

Փա՛ռք համընթաց քամիներին,
Փա՛ռք ավարին ու գինուն:
Է՛յ, նավաստի՛, ներում խնդրիր,
Նավապետդ մտավ քուն:

ԿՐԿՆԵՐԳ

Փառաբանիր նավը խլված,
Զաջերի է նա բաժին:
Մենք վերցնում ենք բեռ ու կանայք,
Մնացածը տանք ծովին:

ՋՈՐՋ ՍՏԵՈՒԽՆԳ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Այդ ուշ գարնանային առավոտ դեպքերը խիստ արագ զարգացան Ֆրենսիս Մորգանի կյանքում: Եթե երբևէ մարդուն վիճակված է, ժամանակի մեջ տեղափոխվելով, մասնակից դառնալ պարզ հոգիների դաժան, արյունոտ մի դրամայի, իսկ ավելի ճիշտ՝ ողբերգության, միաժամանակ վկա լինել Լատինական Նոր Աշխարհի բնակիչներին հատուկ սենտիմենտալությամբ ու բուռն կրքերով հագեցած միջնադարյան մի մելոդրամայի, ապա այդ մարդը ճակատագրի կանխորոշմամբ պետք է լիներ Ֆրենսիս Մորգանը, ըստ որում շատ շուտով:

Սակայն, ինքը Ֆրենսիս Մորգանը ծուլ անգիտության մեջ էր, թե աշխարհում ինչ-որ բան է պատրաստվում իր համար, և հազիվ թե պատրաստ էր դիմագրավելու վերահաս իրադարձություններին: Մինչև ուշ գիշեր բրիջ խաղալով, նա ուշ սկսեց իր օրը: Ուշ արթնանալուն հետևեց մրգերից ու շիլայից բաղկացած ուշ նախաճաշը. վերջացնելով նախաճաշը՝ Ֆրենսիսը ուղղվեց դեպի գրադարան, խիստ ճաշակով կահավորված մի սենյակ, որտեղից նրա հայրը կյանքի վերջին տարիներին ղեկավարում էր իր ընդարձակ ու բազմազան գործերը:

— Փարկեր,— դիմեց Ֆրենսիսը սպասավորին, որը ծառայել էր դեռևս նրա հորը,— դու Ռ. Յ. Մ.-ի մոտ գիրացման նշաններ չե՛ս նկատել նրա կյանքի վերջին տարիներին:

— Օ՛, ոչ, սըր,— պատասխանեց նա լավ վարժեցրած սպասավորի ողջ ականածանքով, սակայն ականայից փութանցիկ գնահատող մի հայացք նետելով երիտասարդի հոյակապ կազմվածքին:— Սըր, ձեր հայրը միշտ էլ աչքի էր ընկնում բարեկազմությամբ: Նրա կազմվածքը երբեք չէր փոխվում. նա լայնաթիկունք էր, ուժեղ կրծքով, և չնայած լայնաթիկունք էր, բայց իրանը բարակ էր, սըր, միշտ բարակ: Երբ նրան լողացրին, սըր, ու դրին սեղանի վրա, մեր քաղաքի շատ

երիտասարդներ կարող էին ամաչել իրենց կազմվածքից: Նա միշտ ուշի-ուշով հետևում էր իրեն, սըր. ես ի նկատի ունեմ բոլոր այն վարժությունները, որ նա անում էր անկողնում, ամեն առավոտ կես ժամ: Ոչ մի բան չէր կարող նրան հարկադրել հրաժարվելու դրանից: Դա համարում էր իր պաշտամունքը:

— Այո, հայրս հազվադեպ կազմվածք ուներ,— ցրված ասաց երիտասարդը, դիտելով բորսային հեռագրական ու հեռախոսային մի քանի ապարատները, որ դեռևս հայրն էր տեղադրել:

— Միանգամայն ճիշտ է,— համոզված հաստատեց Փարկերը:— Ձեր հայրը բարեկազմ էր արիստոկրատի նման, չնայած լայն ոսկորին, հզոր ուսերին ու կրծքին: Եվ դուք ժառանգել եք այդ, սըր. միայն թե դուք ավելի գեղեցիկ եք:

Երիտասարդ Ֆրենսիս Մորգանը, որ հորից ժառանգել էր ոչ միայն բարեձև կազմվածք, այլև մի քանի միլիոն դոլար, անհոգ փռվեց կաշեպատ լայն բազկաթոռի վրա ու մեկնեց ոտքերը, ճիշտ ինչպես վանդակում փակված հզոր առյուծը, որ չգիտե, թե իր ուժերը ինչի վրա գործադրի: Բացելով առավոտյան թերթը, նրա հայացքը կանգ առավ մի վերնագրի վրա, որը հայտնում էր Պանամայի ջրանցքի Բյուլեբր տեղամասում նոր նստվածքի մասին:

— Լավ է, որ մենք՝ Մորգաններս, հակված չենք գիրության,— հորանջելով ասաց նա,— թե չէ ախր ես կարող էի հաստանալ այսպիսի կյանքից. . . Այնպես չէ՞, Փարկեր:

Չառամյալ սպասավորը, լավ չլսելով, շփոթված նայեց տիրոջը:

— Օ՛, այո, սըր,— աճապարանքով ասաց նա:— Այսինքն, ուզում եմ ասել՝ ոչ, սըր: Դուք այժմ լավագույն ձևի մեջ եք:

— Բնավ ոչ,— համոզված ասաց երիտասարդը:— Ես միգուցե և չեմ գիրացել, բայց, անշուշտ, կակդել եմ. . . Յո՞, Փարկեր:

— Այո, սըր. . . Այսինքն, ոչ, սըր, ես ուզում էի ասել՝ ոչ, սըր: Դուք նույնն եք, ինչ որ երեք տարի առաջ, երբ վերադարձաք քուեջից:

— Եվ որոշեցի, որ պարապությունն իմ կոչումն է,— ծիծաղեց Ֆրենսիսը:— Փարկեր:

Փարկերը հարգալիի ձգվեց: Սակայն նրա տերն արդեն թաղվել էր խոր մտքերի մեջ, ասես առաջնակարգ կարևորություն ունեցող մի խնդիր էր լուծում, իսկ ձեռքով մի գլուխ քաշքշում էր պատիկ բեղի ցից-ցից մագերը, որ վերջերս էր սկսել թողնել:

— Փարկեր, ես մտադիր եմ գնալ ձկնորսության:

— Այո, սըր:

— Ես պատվիրել էի մի քանի ծալովի կարթեր ուղարկել: Հավաքիր դրանք, ինդրում եմ, ու բեր այստեղ, ուզում եմ տնտղել: Կարծում եմ, որ մի երկու շաբաթով որևէ անտառ գնալն ամենից օգտակարն է ինձ համար: Եթե այդպես չանեմ, ապա, անշուշտ, կսկսեմ չաղանալ ու մեր ամբողջ տոհմը կխայտառակեմ: Սըր Հենրիի մասին հո լսե՛լ ես: Ծերուկ սըր Հենրիի, այդ ծովահենի ու թոկից փախածի մասին:

— Այո, սըր: Կարդացել եմ նրա մասին, սըր:

Փարկերն արդեն կանգնել էր դռան մեջ և սպասում էր այն րոպեին, երբ ջահել տիրոջ շատախոսությունը կսպառմի, որպեսզի գնա նրա հանձնարարությունը կատարելու:

— Այո, այստեղ հպարտանալու բան չկա, էլ ո՛նց կլիներ՝ ծեր ծովահեն:

— Օ՛, ոչ, սըր,— բողբոջեց Փարկերը:— Ախր նա Ջամայկայում նահանգապետ էր և մեռավ հարգանքով ու պատվով:

— Դեռ լավ է, որ չկախեցին,— քրքջաց Ֆրենսիսը:— Ճիշտն ասած, միայն նա է խայտառակում մեր տոհմը, որ հենց ինքն էլ հիմնադրեց: Բայց ահա թե ինչ էի ուզում ասել. ես ուշի-ուշով աչքի անցկացրի այն ամենը, ինչ վերաբերում է նրան: Նա խիստ հոգ էր տանում իր կազմվածքին և, փառք ասածու, մինչև մեռնելը պահպանեց իր նուրբ իրանը: Այդ տեսակետից նա լավ

ժառանգություն է թողել մեզ: Իսկ նրա գանձերը մենք՝ Մորգաններս, այնպես էլ չգտանք. ասենք, բարակ իրանը, որ նա կտակել է մեզ, բոլոր սուտակներից ավելի թանկ արժե: Բնագետների լեզվով ասած՝ տոհմանշան, ինչպես սովորեցնում էին ինձ պրոֆեսորները:

Վրա հասավ վաղուց սպասված լռությունը, և Փարկերն զգուշությամբ դուրս ծլկեց, իսկ Ֆրենսիս Մորգանը խորատուզվեց Պանամայի մասին լրագրային հոդվածի ուսումնասիրության մեջ, որից պարզվում էր, որ ջրանցքը նավագնացության համար կբացվի, ըստ երևույթին, երեք շաբաթից ոչ շուտ:

Հեռախոսը զնգաց, և ժամանակակից բարձր քաղաքակրթության էլեկտրական ջղերի օգնությամբ ճակատագիրն առաջին փորձն արավ իր շրջափունկները հասցնելու Ֆրենսիս Մորգանին, որն այդ րոպեին նստած էր այն առանձնատան գրադարանում, որ նրա հայրը կառուցել էր Ռիվերսայդ-դրայվի վրա:

— Բայց, սիրելի միսիս Զառուզերս,— բողոքեց նա խոսափողի մեջ,— ինչ էլ ուզում է լինի, դա պարզապես ժամանակավոր աժիոտաժ է: «Տեմպիկո պեթրոլեումը» միանգամայն կարգին վիճակում է: Դրանք ոչ թե չարաշահող թղթեր են, այլ կապիտալի լիովին հուսալի գետեղում: Պահեք դրանք: Պինդ պահեք. . . Հավանորեն ամբողջ բանն այն է, որ միևնույն ժամանակ ինչ-որ ֆերմեր եկել է Նյու Յորք ու որոշել գնել մի երկու ծրար բաժնետոմս, որովհետև այդ բաժնետոմսերը հաստատուն են թվում նրան, ինչպես որ է իսկապես. . . Եվ ինչ կա զարմանալու, որ դրանք բարձրացել են մի երկու գիծ: Միևնույն է, չվաճառեք: «Տեմպիկո պեթրոլեումը» վիճակախաղ չէ, ոչ էլ ռուլետկա: Դա արդյունաբերական հաստատուն ձեռնարկություն է: Ես, օրինակ, շատ կուզենայի, որ դա այդքան էլ վիթխարի չլիներ. այդ դեպքում ես կարող էի մենակ ֆինանսավորել ձեռնարկությունը. . . Դե ոչ, լսեցեք ինձ, դա ամենևին էլ օճառի պղպջակ չէ: Մենք այժմ ավելի քան մեկ միլիոն դոլարի ցիստեռն ենք պատվիրել միայն: Մեր երկաթուղին ու երեք նավթամուղներն արժեն ավելի քան հինգ միլիոն դոլար: Միայն գործող նավթահորերը հարյուր միլիոնի նավթ են տալիս մեզ, այնպես որ այժմ մեր հիմնական խնդիրն է այդ նավթը հասցնել ծովափ ու բեռնել տանկերները: Այժմ իսկ և իսկ կապիտալ ներդնելու ժամանակն է: Կանցնի մեկ-երկու տարի, և պետական արժեթղթերը մեր բաժնետոմսերի համեմատությամբ միանգամայն դատարկ բաներ կլվան. . .

. . . Այո, այո, խնդրեմ: Ուշադրություն մի դարձնեք բորսային շուկայի վրա: Եվ հետո՝ ես ամենևին էլ խորհուրդ չեմ տվել ձեզ այդ բաժնետոմսերը ձեռք բերելու: Ես երբեք իմ բարեկամներին այդպիսի խորհուրդներ չեմ տվել: Բայց քանի որ դուք այդ բաժնետոմսերը ձեռք եք բերել, ապա պինդ պահեցեք: «Տեմպիկոն» նույնպիսի լուրջ ձեռնարկություն է, ինչպես անգլիական բանկը. . . Այո, երեկ երեկոյան ես ու Դիկկին բաժանեցինք ավարը: Հրաշալի ընկերություն էր հավաքվել: Չնայած պետք է ասել, որ Դիկկին բրիջի համար չափազանց տաքարյուն է. . . Այո, բախտներս բերեց, ինչպես բորսային խաղամուկի բախտը. . . Հա՛-հա՛: Ե՛ս եմ տաքարյուն: Հա՛-հա՛. . . Այո՞. . . Ասացեք Հարրիին, որ ես մի երկու շաբաթով բացակայում եմ. . . Գնում եմ կարմրախայտ որսալու. . . Գիտեք, զարուն է, ամվակները խոխոջում են, ծառերը հյութավորվել են, բացվում են բողբոջները, ծաղկում ծաղիկներն ու նման բաներ. . . Այո, ամենալավ ցանկություններով: Եվ երկու ձեռքով պինդ կառչեցեք «Տեմպիկո պեթրոլեումից»: Եթե բաժնետոմսերը փոքր-ինչ ընկնեն, երբ այդ միևնույն ժամանակ ֆերմերը կվերջացնի բարձրացում խաղալ, նորից ձեռք բերեցեք: Ես էլ եմ մտածում այդպես անել: Դա նույնն է, թե փող ես գտնում. . . Այո. . . Այո, իհարկե. . . Հենց այնպես,— ոչ այս, ոչ այն,— չի կարելի վաճառել. դրանք չափազանց հաստատուն բաժնետոմսեր են. ախր երևի այլևս երբեք չընկնեն. . . Դե իհարկե, ես գիտեմ ինչ եմ ասում: Ես այսօր քնել եմ ուր ժամ ու դեռ մի կաթիլ բան չեմ խմել. . . Այո, այո. . . Տոտություն:

Առանց բազկաթռոցի բարձրանալու՝ Ֆրենսիսը մոտ քաշեց բորսայի հետ միացած ապարատի ժապավենը և ծուլորեն աչքի անցկացրեց. ինչ որ հաղորդվում էր այնտեղ, մի առանձին հետաքրքրություն չառաջացրեց նրա մեջ:

Փարկերը վերադարձավ, բերելով մի քանի բարալիկ կարթեր. դրանցից յուրաքանչյուրը իր հղկվածությամբ ու մշակմամբ արվեստի ու վարպետության մի կատարելություն էր: Ֆրենսիսը մի ակնթարթում վեր թռավ բազկաթռոցից, մի կողմ նետեց հեռագրական ժապավենը, որի մասին իսկույն էլ մոռացավ, և սկսեց երեխայի նման ուրախությամբ ու հիացմունքով գննել խաղալիքները ու փորձել իրար հետևից. նա մեկ այնպես էր թափահարում կարթերը, որ կարթաթելը մտրակի

հարվածի նման սուլոցով կտրում էր օդը, մեկ զգույշ, հաշվենկատ շարժումով նետում էր դեպի բարձր առաստաղը, ասես այնտեղ, սենյակի մյուս ծայրում, գտնվում էր անտեսանելի մի լճակ, ուր խորհրդավոր կերպով պսպղում էր կարմրախայտը:

Հեռախոսը զնգաց: Ֆրենսիսի դեմքը ջղայնությունից ծամռվեց:

— Ի սեր աստծու, դու խոսիր, Փարկեր,— հրամայեց նա:— Եթե դա նորից բորսայում խաղացող որևէ հիմար կին է, ասա, որ ես մեռել եմ, հարբած եմ, պառկած եմ տիֆով կամ ամուսնանում եմ. մի խոսքով, որևէ սարսափելի բան հորինիր:

Հանգիստ, քաղաքավարի տոնով անցկացված կարճատև բանակցություններից հետո, որն այնպես սազում էր այդ պառ, վայելուչ սենյակի մեծաքանակ ոճին, Փարկերն ասաց խոսափողի մեջ. «Մի թուպե, սը՛ր»,— և, ձեռքով ծածկելով այն, ասաց.

— Միստր Բեսկոմն է, սըր: Նա խնդրում է ձեզ:

— Ասա միստր Բեսկոմին, որ գրողի ծոցը գնա,— պատասխանեց Ֆրենսիսը, ձեռքն այնպես թափահարելով, ասես ուզում էր կարթը նետել և իսկապես, եթե կարթաթելը գծեր այն կորագիծը, որ նրա հմայված հայացքը գծեց, ապա դուրս կնետվեր պատուհանից և, ամենայն հավանականությամբ, մահու չափ կվախեցներ պարտիզպանին, որն այդ պահին, չղքած, վարդենու մի թուփ էր տնկում:

— Միստր Բեսկոմն ասում է, սը՛ր, որ դա վերաբերում է բորսայում տիրող դրությանը, և որ նա ձեզ հինգ թուպեից ավելի չի զբաղեցնի,— պնդում էր Փարկերը, բայց այնպես մեղմ ու կրքավարի, ասես կատարում էր ինչ-որ բոլորովին անկարևոր, չնչին հանձնարարություն:

— Լավ:— Ֆրենսիսը կարթն զգուշությամբ հենեց սեղանին ու վերցրեց խոսափողը:— Այո՛, — ասաց նա:— Այո՛, ես եմ, Մորգանը: Դե, շուտ, ի՞նչ է պատահել:

Նա մի թուպե լսեց, ապա գրգռված ընդհատեց խոսողին.

— Վաճառե՛լ: Ինչպե՛ս չէ: Ոչ մի դեպքում. . . Անշուշտ, ուրախ եմ դրա համար: Բայց եթե նույնիսկ բաժնետոմսերը. տասը գիծ բարձրանան,— որ, իհարկե, չի լինի,— միևնույնն է, պահեցեք: Խիստ հնարավոր է, որ դա օրինաչափ բարձրացում է, և բաժնետոմսերն այլևս չեն ընկնի: Այդ բաժնետոմսերը լուրջ բան են: Դրանք շատ ավելի արժեն, քան արժենշվում են: Ընդհանրապես ուրիշները կարող են և չիմանալ, բայց ես հո գիտեմ: Մի տարի հետո դրանք կհասնեն երկու հարյուրի, եթե, իհարկե, Մեքսիկայում այդ մշտական հեղափոխությունները դադարեն. . . Բայց այ, եթե բաժնետոմսերն ընկնեն, դուք գնելու հրաման կստանաք ինձանից. . . Ամստություն: Այդ ո՛վ է ուզում ձեռք բերել վերահսկիչ ծրարը: Դե ոչ, դա պարզապես պատահական երևույթ է... Ի՞նչ: Ներողություն: Ուզում էի ասել՝ պարզապես ժամանակավոր: Այսպես ուրեմն. ես մի երկու շաբաթով գնում եմ ձկնորսության: Եթե բաժնետոմսերը կընկնեն հինգ գիծ, գնեցեք: Գնեցեք բոլորը, ինչ որ կառաջարկեն: Այո-ո՛, երբ մարդ իր ձեռքում ունի պատկառելի ձեռնարկություն, և սկսվում է նրա բաժնետոմսերի բարձրացման խաղը, դա գրեթե նույնքան վտանգավոր է, ինչքան իջեցման խաղը. . . Այո. . . Իհարկե. . . Այո. . . Ցտեսություն:

Ֆրենսիսը նորից սկսեց հիանալ իր կարթերով, մինչդեռ այդ նույն ժամին քաղաքի մյուս ծայրում ճակատագիրն արդեն անխոնջ կերպով տքնում էր Թոմաս Ռիզանի առանձնասենյակում: Թոմաս Ռիզանը հրամայեց մակլերների իր բանակին՝ գնել «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսերը, բազմազան ուղիներով խորհրդավոր լուրեր տարածեց, իբր թե «Տեմպիկո պեթրոլեումը» մեքսիկական կառավարության հետ ինչ-որ բարդություններ ունի կոնցեսիաների առթիվ, և թաղվեց իր նավթի էքսպերտի հաշվետվության ընթերցման մեջ, էքսպերտ, որը ամբողջ երկու ամիս անց էր կացրել տեղում՝ պարզելով այդ ընկերության իսկական հեռանկարներն ու հնարավորությունները:

Ներս մտավ գրագիրը, սովեց մի այցեքարտ ու զեկուցեց, թե ինչ-որ օտարերկրացի խնդրում է ընդունել իրեն: Ռիզանը նայեց այցեքարտին:

— Հայտնեցեք այդ սենյոր Ավարես Թորեսին,— ասաց նա,— որ չեմ կարող իրեն ընդունել:

Հինգ թույն հետո գրագիրը վերադարձավ Լույս այցեքարտով, որի հետևում այժմ մատիտով ինչ-որ բան էր խզրզած: Կարդալիս ժպիտը տարածվեց Ռիզանի դեմքին:

«Սիրելի ու մեծարգո միստր Ռիզան: Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, սը՛ր, որ ինձ հայտնի է այն գանձի տեղը, որը թաքցրել էր սը՛ր Յենրի Մորգանը դեռևս ծովահեն եղած ժամանակ:

Ավարես Թորես»:

Ռիզանը գլուխն օրորեց. գրագիրն արդեն դռան մոտ էր, երբ հանկարծ տերը ձայն տվեց նրան.

— Թող անմիջապես ներս գա:

Մենակ մնալով, Ռիզանն անձայն ծիծաղեց, խոր մտածելով գլխում ծագած գաղափարի մասին:

— Կաթնակեր, լակո՛տ,— մրթմրթում էր նա սիգարի ծխի միջից:— Իրեն առյուծ է երևակայում, ասես ծերուկ Ռ. Յ. Մ.-ն ինքն է որ կա: Մի լավ ծեծ, ահա թե ինչ է հարկավոր նրան, և ձեր փորձված Ռիզանը կհոգա այդ մասին:

Սենյոր Ավարես Թորեսի անգլերենը Լույսքան անթերի էր, որքան և Նորաձև գարնանային կոստյումը, և չնայած թուխ մաշկը մատնում էր նրա լատինամերիկյան ծագումը, իսկ սև աչքերի փայլը բավական պերճախոսությամբ վկայում էր, որ այդ մարդու երակներում հոսում է իսպանական ու հնդկական արյան վաղեմի խառնուրդ, նա այն աստիճան տիպիկ Նյույորքցի էր թվում, որ Թոմաս Ռիզանը ավելին ցանկանալ իսկ չէր կարող:

— Երկար տարիների համառ աշխատանքից ու որոնումներից հետո,— սկսեց Թորեսը,— ես, վերջապես, գլխի ընկա, թե որտեղ է պահված սը՛ր Յենրի Մորգանի գանձը: Համոզված եմ, որ այն թաղված է Մոծակի Ափին: Ավելի ճիշտ՝ Չիրիկվիի ծովալճակից մինչև այնտեղ հազար մղոն էլ չկա, իսկ ամենամոտիկ քաղաքը, ամեն ինչից դատելով, Բոքասոդե-Թորոն է: Ես ծնվել եմ այնտեղ, չնայած կրթությունս ստացել եմ Փարիզում. տեղանքը հինգ մատիս պես գիտեմ: Այդպիսի արշավախմբի համար մի փոքրիկ շխուռնան էլ բավական է: Այնքան էլ թանկ չի Նստի այն սարքավորելը, բոլորովին թանկ չի Նստի, մինչդեռ ինչպիսի՛ շահույթ կբերի՝ ամբողջ մի հարստություն:

Սենյոր Թորեսը լռեց. ավելի որոշակի արտահայտվելու համար բառերը չէին հերիքում, բայց Թոմաս Ռիզանը, կոշտ ու խստաբարո մի մարդ, որ սովոր էր գործ ունենալ իր նման մարդկանց հետ, սկսեց տեղեկություններ դուրս կորզել նրանից, ինչպես խաչաձև հարցաքննություն վարող փաստաբանը:

— Այո,— իսկույն խոստովանեց սենյոր Թորեսը,— ներկայումս ես մի փոքր նեղվում եմ. . . Ինչպես ասել. . . միջոցներից:

— Ձեզ փող է հարկավոր,— կոպտությամբ ճշտեց Ռիզանը, և Թորեսը տխուր տեսքով գլուխ տվեց: Ավարես Թորեսն ստիպված էր էլի շատ բան խոստովանել հարցաքննության արագ կրակի տակ: Այո, նա միայն վերջերս է թողել Բոքասոդե-Թորոն և հուսով է այլևս երբեք չվերադառնալ այնտեղ: Բայց և այնպես պատրաստ է վերադառնալ, եթե իրենք այժմ որևէ համաձայնության հանգեն. . . Սակայն Ռիզանը կանգնեցրեց նրան այն մարդու տիրական շարժումով, որը սովոր է հրամայել հասարակ մահկանացուներին. նա վերցրեց չեքի գրքույկը և Ավարես Թորեսի անունով չեք դուրս գրեց: Երբ վերջինս նայեց թղթին, նկատեց, որ այնտեղ նշված է հազար դոլարի գումար:

— Այսպես, ուրեմն, ահա թե ինչի է հանգում իմ միտքը,— ասաց Ռիզանը:— Ես անձամբ բնավ չեմ հավատում ձեր փչոցներին: Բայց մի պատանի բարեկամ ունեմ: Ես շատ եմ սիրում այդ տղային, և ինձ վշտացնում է, որ նրան չափազանց շատ են ձգում մեծ քաղաքի գայթակղությունները՝ Բրոդվեյն իր գեղեցկուհիներով և այլն, դե՛, դուք հասկանում եք:

Սենյոր Ավարես Թորեսը գլխով արեց իբրև աշխարհիկ մարդու հետ գրուցող աշխարհիկ մարդ:

— Այդպես ուրեմն, հանուն նրա առողջության, ինչպես և նրա ոչ միայն հոգու, այլև կարողության փրկության, լավագույն բանը, որ կարելի էր մտածել՝ արկածալից, ֆիզիկական լարվածություն պահանջող ճամփորդությունն է գանձի հետևից և... մի խոսքով, համոզված եմ, որ դուք ինձ հասկանում եք:

Ավարես Թորեսը նորից գլխով արեց:

— Ձեզ դրամ է հարկավոր,— շարունակեց Ռիզանը:— Աշխատեցեք շահագրգռել նրան: Այս հազարը՝ ձեր ջանքերի համար: Շահագրգռեցեք նրան այնպես, որ նա գնա ծերուկ Մորգանի ոսկին որոնելու, և էլի երկու հազար կստանաք: Եթե կարողանաք այնպես շահագրգռել նրան, որ երեք ամիս բացակայի այստեղից՝ ևս երկու հազար կավելացնեմ. իսկ եթե կես տարի՝ ապա հինգ հազար: Կարող եք հավատալ ինձ. ես նրա հորը լավ գիտեի, մենք ընկերներ էինք, գործընկերներ, նույնիսկ. . . նույնիսկ կարող եմ ասել՝ համարյա եղբայրներ: Ես պատրաստ եմ ուզածդ գումարը զոհաբերել, որպեսզի բարեկամիս որդուն ճիշտ ճանապարհի բերեմ ու մարդ դարձնեմ: Ի՞նչ կասեք սրան: Սկզբի համար ահա ձեզ հազար դոլար: Եղա՛մ:

Սենյոր Ավարես Թորեսը դողդոջուն մատներով ծալում էր ու բացում չեքը:

— Ես. . . Ես համաձայն եմ,— կմկմալով ասաց Թորեսը և սկսեց հուզմունքից նույնիսկ կակազել:— Ես. . . Ես. . . ինչպես ասեմ. . . Ես ամբողջովին ձեր տրամադրության տակ եմ:

Հինգ թուղթում Թորեսին տրվեցին բոլոր հրահանգներն իր խաղալիք դերի մասին, իսկ Մորգանի գանձի առթիվ նրա պատմությունը խորամանկ, պրակտիկ բորսայականի կողմից փոքր-ինչ ձևափոխվեց՝ ավելի ևս ճշմարտաման տեսք տալու համար: Դրանից հետո իսպանացին վեր կացավ տեղից և, նախքան հրաժեշտ տալը, կատակով, բայց ոչ առանց տխրության, նկատեց.

— Ամենազվարճալիս այն է, միստր Ռիզան, որ այս ամենը զուտ ճշմարտություն է: Այն փոփոխությունները, որ դուք մտցրիք իմ պատմության մեջ, ավելի ճշմարտաման են դարձնում դա, բայց առանց այդ էլ նա ճշմարիտ էր: Ինձ փող է հարկավոր: Դուք շատ առատաձեռն եք, և ես կաշխատեմ իմ ամբողջ ուժերով. . . Ես. . . Ես հպարտ եմ, որ օժտված եմ արտիստի ձիրքով: Բայց և այնպես երդվում եմ՝ ես իրոք կռահել եմ, թե որտեղ են պահված Մորգանի թալանած ու թաղած գանձերը: Ես հնարավորություն եմ ունեցել աչքի անցկացնելու այնպիսի փաստաթղթեր, որոնք անմատչելի են լայն հասարակությանը. ասենք, միևնույնն է, հազիվ թե որևէ մեկը զլուխ հաներ դրանցից: Այդ փաստաթղթերը պահվում են մեր ընտանիքում, և իմ նախնիներից շատերը իրենց ամբողջ կյանքում տքնել են դրանց վրա, բայց այնպես էլ գաղտնիքը չեն գտել: Սակայն նրանք ճիշտ ճանապարհի վրա են եղել. կռահելու ընդունակություն չեն ունեցել միայն սխալվել են ընդամենը քսան մղոնով: Բայց այսր վայրը ճշտորեն նշված է փաստաթղթերում: Ըստ իս, նրանք սխալվել են, որովհետև այնտեղ դիտմամբ ամեն ինչ գաղտնագրած է, խառնած, գրված է ռեբուսի ձևով. և ես, միայն ես կարողացա հասկանալ ու վերծանել: Անցած ժամանակների բոլոր ծովագնացները իրենց քարտեզները գծելիս դիմում էին այդպիսի հնարանքների: Իմ իսպանացի նախահայրերն այդ եղանակով թաքցրին Չավայան կղզիները, լայնության ամբողջ հինգ աստիճան մի կողմի վրա գետնեղելով դրանք:

Թոմաս Ռիզանի համար այդ ամենը չինական այբուբեն էր. նա լսում էր Թորեսին համբերատար ժպիտով, որն ակնհայտորեն ասում էր. «Ահա, ստիպում է զբաղված մարդուն կտրվել գործերից և ինչ-որ անմտություններ լսել»:

Սենյոր Թորեսը հենց նոր էր հրաժեշտ տվել, երբ առանձնասենյակ մտավ Ֆրենսիս Մորգանը:

— Որոշեցի մի թուղթով անցնել ձեզ մոտ խորհուրդ հարցնելու,— ասաց նա սովորական ողջույններ փոխանակելուց հետո:— Էլ ուրիշ ո՞ւմ դիմեի, եթե ոչ ձեզ. չէ որ դուք այնքան տարիներ աշխատել եք հորս հետ: Որքան հայտնի է ինձ, դուք նրա գործընկերն եք եղել խոշորագույն գործարքներում: Նա միշտ խորհուրդ էր տալիս ինձ՝ վստահել ձեր դատողություններին: Դե, ահա ես էլ եկա: Ամենից առաջ ասացեք, թե «Տեմպիկո պեթրոլեումի» հետ ի՞նչ է կատարվում: Բանն այն է, որ ես ուզում եմ գնալ ձկնորսության:

— «Տեմպիկո պեթրոլեումի» հետ ինչ է կատարվո՞ւմ,— հարցին հարցով պատասխանեց Ռիզանը, ճարպկորեն լիակատար անտեղյակություն խաղալով, չնայած ամեն ինչում միայն ինքն էր մեղավոր:

Ֆրենսիսը գլխով արեց և, նստելով թիկնաթոռին, սիգարետ վառեց, իսկ Ռիզանն սկսեց աչքի անցկացնել բորսային հեռագրական ժապավենը:

— «Տեմպիկո պեթրոլեոմի» բաժնետոմսերը բարձրացել են. . . երկու գիծ. . . Իսկ քեզ իսկապես ի՞նչն է անհանգստացնում,— հարցրեց նա:

— Դե ոչինչ,— պատասխանեց Ֆրենսիսը:— Պարզապես ոչինչ: Բայց դուք չե՞ք կարծում արդյոք, որ ինչ-որ խումբ ուզում է «Տեմպիկոն» իր ձեռքն առնել. ախր այդ ձեռնարկության պոտենցիալ արժեքը վիթխարի է: Այս բանը, ինչպես հասկանում եք, մեր մեջ ասած. այսինքն, ուզում եմ ասել՝ խիստ գաղտնի:

Ռիզանը գլխով արեց:

— Ձեռնարկությունը վիթխարի է,— շարունակեց Ֆրենսիսը:— Լիովին կարգին վիճակում: Ամեն տեսակետից հուսալի: Առանց խաբեության: Եվ հանկարծ այսպիսի թռիչք: Արդյոք ձեզ չի՞ թվում, թե ինչ-որ մարդ, կամ մարդկանց խումբ, ուզում է ձեռք գցել բաժնետոմսերի վերահսկող ծրարը:

Նրա հոր գործընկերը ցնցեց ճերմակ մազերի դեզը, սակայն այդ ազնիվ ճերմակությամբ ծածկված գլխում թաքնվում էին ամենալին ոչ ազնիվ մտքեր:

— Ի՞նչ ես ասում,— նկատեց նա,— դա ավելի շուտ պարզապես պատահական թռիչք է: Իսկ գուցե բորսայում խաղացող հասարակությունը գլխի է ընկել, որ «Տեմպիկո պեթրոլեոմի» բաժնետոմսերն իսկապես արժեքավոր բան են: Դու ինքդ ի՞նչ ես կարծում:

— Իհարկե, արժեքավոր են,— ջերմորեն պատասխանեց Ֆրենսիսը:— Ռիզան, ես այնպիսի հաճելի լուրեր եմ ստացել, որ դուք զարմանքից անի կքաշեք: Ես իմ բոլոր բարեկամներին ասում եմ, որ այս գործը լավ գործ է, առանց խաբեության: Խիստ ցավում եմ, որ ստիպված էի կողմնակի կապիտալ ներգրավել: Բայց ձեռնարկությունն այնքան խոշոր դուրս եկավ, որ ես պարզապես ստիպված էի այդպես անել: Եթե նույնիսկ ներդնեի հորս թողած ողջ դրամը, ես ի նկատի ունեմ ազատ կապիտալը, և ոչ այն, որ արդեն ներդրված է այլ ձեռնարկություններում, ուրիշ խոսքով՝ կանխիկ դրամը, ապա, միևնույն է, մենակ չեի կարող այդ գործի տակից դուրս գալ:

— Դու միջոցների հարցում նեղվո՞ւմ ես, ի՞նչ է,— հարցրեց ծերունի Ռիզանը:

— Օ՛, ես ունեմ մի կլոր գումար, որով կարող եմ գործել,— անհոգությամբ պատասխանեց երիտասարդը:

— Ուզում ես ասել...

— Իհարկե: Զենց այդ: Եթե «Տեմպիկոյի» բաժնետոմսերն ընկնեն, ես կսկսեմ գնել: Ախր այդ նույնն է, թե փող ես գտել:

— Իսկ որքա՞ն ես մտադիր գնել,— հարցրեց Ռիզանը, փորձելով շոշափել հյուրին, բայց իր հետաքրքրությունը թաքցնելով բարեհոգության ու հավանության դիմակի տակ:

— Որքան միջոց ունեմ,— առանց տատանվելու պատասխանեց Ֆրենսիս Մորգանը:— Ախր ասում եմ ձեզ, Ռիզան, դա վիթխարի գործ է:

— Ես կարգին չեմ հետաքրքրվել այդ ձեռնարկությամբ, Ֆրենսիս, ու չեմ կարող ասել, թե ինչ արժե, բայց դատելով այն սակավաթիվ փաստերից, որ հայտնի են ինձ, այդ գործը լիովին լուրջ գործ է թվում:

— Թվո՞ւմ: Ասում եմ ձեզ, Ռիզան, որ դա ոսկու հանք է, առանց որևէ խաբեության, և ես ամաչում եմ, որ հարկադրված էի բաժնետոմսեր բաց թողնել բորսա: Դրա փոխարեն ոչ ոք այդ բաժնետոմսերի պատճառով չի սնանկանա: Ես աշխարհին ծառայություն կմատուցեմ միայն շուկա նետելով. . . այժմ նույնիսկ չեմ կարող ճիշտն ասել, թե քանի հարյուր միլիոն բարել հիանալի նավթ. . . Ախր դուք չգիտեք, որ Զուլաստեքի նավթահանքերում ես ունեմ մի նավթահոր, որն ահա յոթ ամիս է, ինչ օրական քսանյոթ հազար բարել նավթ է տալիս: Եվ շատրվանը դեռևս չի սպառվել: Բայց դա մի կաթիլ է ծովում՝ համեմատած այն բանի հետ, ինչ մենք կարող ենք մատակարարել շուկային: Այդ նավթի տեսակարար կշիռը քսաներկուս է, իսկ նստվածքը երկու տասնորդական տոկոսից պակաս: Զետո կա ևս մի շատրվան— միայն հարկավոր է վաթսուն մղոն երկարությամբ նավթամուղ անցկացնել մինչև այնտեղ, որը դուրս է նետում օրական մոտ յոթանասուն հազար բարել նավթ և, չնայած ձեռք առած միջոցներին, տառացիորեն հեղեղում

ամբողջ շրջակայքը: Ես սա հայտնում եմ իբրև գաղտնիք, հասկանում եք անշուշտ: Մեր գործերը վատ չեն գնում, և ես բոլորովին էլ չեմ ուզում, որ «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսերը թռչեն մինչև երկինք:

— Կարող ես դրա համար չանհանգստանալ, տղաս: Դեռ հարկավոր է, որ նավթը հոսի նավթամուղներով, և Մեքսիկայում հեղափոխությունները դադարեն, միայն այդ ժամանակ «Տեմպիկոյի» բաժնետոմսերը կարող են վեր թռչել: Իսկ առայժմ մեկնիր ծուկ որսալու և մոռացիր այդ մասին:— Ռիզանը լռեց, ապա ձևացնելով, թե հանկարծ ինչ-որ բան հիշեց, վերցրեց սեղանից Ալվարես Թորեսի այցեքարտը, որի վրա մատիտով խզբզած էր երկտողը:— Տես, թե հենց նոր ով էր ինձ մոտ:— Ռիզանը լռեց, ասես կշռադատելով գլխում հանկարծակի ծագած միտքը:— Դե, ի՞նչ կարիք կա գնալ ինչ-որ կարմրահայտ որսալու: Ախր դա վերջ ի վերջո դատարկ գվարճություն է: Իսկ այ այստեղ ավելի հետաքրքիր որս կա քեզ համար. սա տղամարդուն վայել, իսկական գվարճություն է, և ոչ թե Ադիրոնդական լեռներում գտնվող՝ պարսկական պալատի նմանվող ամառանոցը, ուր և՛ պաղպաղակ կա, և՛ սպասավորներ, և՛ էլեկտրական զանգեր: Քո հայրը միշտ էլ շատ էր հպարտանում այդ ծովահենով, որից սկիզբ առավ ձեր ամբողջ տոհմը: Նա պնդում էր, որ ինքը նման է նրան, դե իսկ դու անպայման նման ես քո հայրիկին:

— Սըր Չենրիին,— ժպտով նկատեց Ֆրենսիսը, ձեռքը պարզելով դեպի այցեքարտը:— Բայց ախր ես նույնպես քիչ չեմ հպարտանում այդ ձեր ավագակով:

Կարդալով այցեքարտի վրա խզբզած այդ ծուռտիկ-մուռտիկ երկտողը, նա հարցական նայեց Ռիզանին:

— Այդ երիտասարդի պատմածը միանգամայն ճշմարտանման է հնչում,— բացատրեց Ռիզանը:— Նա ասում է, որ ծնվել է հենց նույն Մոծակի Ափին և գանձի մասին իմացել է իրենց ընտանիքում պահվող փաստաթղթերից: Բայց ես, իհարկե, նրա ոչ մի խոսքին չեմ հավատում: Ես ոչ ժամանակ, ոչ էլ ցանկություն ունեմ հետաքրքրվելու մի բանով, որը ոչ մի առնչություն չունի իմ գործերի հետ:

— Չետաքրքրական է, որ սըր Չենրին մեռավ համարյա աղքատության մեջ,— ասաց Ֆրենսիսը. հոնքերն իրար եկան, և նրանց միջև գոյացան մորգանյան համառ ծայքեր,— իսկ նրա թաքցրած գանձն այնպես էլ ոչ ոք չգտավ:

— Դե ինչ, ցանկանում եմ հաջող ձկնորսություն,— բարեհոգաբար ծիծաղեց Ռիզանը:

— Բայց և այնպես կուզենայի տեսնել այդ Ալվարես Թորեսին,— ասաց երիտասարդը:

— Թաղած ոսկու այդ ողջ պատմությունը դատարկ զառանցանք է,— շարունակեց Ռիզանը:— Չնայած պետք է խոստովանեմ, որ այդ երիտասարդի պատմածը խիստ ճշմարտանման է հնչում: Չըմ, եթե ես ավելի ջահել լինեի. . . Բայց, ինչպես երևում է, ինձ վիճակված է նստած մնալ այստեղ:

— Դուք չգիտե՞ք, թե որտեղ կարող եմ գտնել նրան,— արդեն մեկ րոպեից հետո հարցրեց Ֆրենսիսը, դյուրահավատությամբ գլուխը մտցնելով այն օղակի մեջ, որ ճակատագիրը թոմաս Ռիզանի կերպարանքով պատրաստել էր նրան որսալու համար:

Տեսակցությունը տեղի ունեցավ հաջորդ առավոտյան, Ռիզանի առանձնասենյակում: Ֆրենսիսին տեսնելով՝ սենյոր Ալվարես Թորեսը ցնցվեց, բայց իսկույն էլ հավաքեց իրեն: Այդ բանը չխուսափեց Ռիզանի հայացքից, որը քմծիծաղով հարցրեց.

— Ոնց որ ճիշտ ու ճիշտ ձեր ծովահենը լինի իր սեփական անձով, այնպես չէ՞:

— Այո, նմանությունն ապշեցուցիչ է,— ստեց կամ համարյա ստեց Թորեսը, որովհետև, չնայած նկատեց Ֆրենսիսի նմանությունը սըր Չենրի Մորգանի լուսանկարների հետ, բայց միաժամանակ երևակայության առաջ կանգնեց մի այլ, միայն թե ողջ մարդու պատկեր, որը նույնչափ նման էր և՛ Ֆրենսիսին, և՛ սըր Չենրիին, որքան այդ երկուսը նման էին իրար:

Ֆրենսիսը ջահել էր, իսկ ջահելությունը արգելակներ չի ճանաչում: Իսկույն մեջտեղ բերվեցին ժամանակակից ատլասները և աշխարհագրական հին քարտեզները, ինչպես և փաստաթղթերը, որոնք գրված էին գունաթափ թանաքով, ժամանակից դեղնած թղթի վրա, և կես ժամ էլ չէր անցել, որ Ֆրենսիսը հայտարարեց, թե այսուհետև ձկնորսություն ասած բառն ընդունում է միայն Ցուկի

կամ Յորթի կղզիներում, այսինքն՝ Չիրիկվի ծովալճակի այն երկու կղզիներից մեկում, որտեղ, Թորեսի ասելով, պետք է գտնվեր թաղված գանձը:

— Դեհ այսօր երեկոյան գնացքով մեկնում եմ Նոր Օռլեան,— հայտարարեց Ֆրենսիսը: — Այդ դեպքում ճիշտ ժամանակին կարող եմ հասնել «Յունայտեդ Ֆրոլթ քոմփանիի» Կոլոն մեկնող շոգենավերից մեկնումեկին: Օ՛, ես արդեն երեկ, քնելուց առաջ, ամեն ինչ պարզել եմ:

— Միայն թե Կոլոնում շխուհա չվարձեք,— խորհուրդ տվեց Թորեսը:— Ձիով գնացեք մինչև Բելեն: Այնտեղ ամենից լավ է նավ վարձել. նավաստիները հասարակ մարդիկ են, բնիկներ, և ընդհանրապես ամեն ինչ հասարակ է:

— Թերևս դա խելացի է,— համաձայնեց Ֆրենսիսը:— Ես վաղուց էի ուզում տեսնել այդ կողմերը: Իսկ դուք կհասնե՞ք գնացքին, սենյոր Թորես. . . Դուք, անշուշտ, հասկանում եք, որ ես ինձ վրա եմ վերցնում գանձապահի պարտականություններն ու բոլոր ծախսերի վճարումը:

Սակայն, որսալով Ռիգանի հայացքը, Ալվարես Թորեսը մի ակնթարթում հասկացավ, թե ինչ է պահանջվում իրենից, և սկսեց ոգևորությամբ ստել.

— Միստր Մորգան, դժբախտաբար ես ստիպված եմ մնալ և ձեզ կմիանամ ավելի ուշ: Ես այստեղ մի անհետաձգելի գործ ունեմ. . . Ինչպե՞ս ասեմ. . . Մի ոչ մեծ դատական գործ, որ պետք է հասցնեմ մինչև վերջ: Ծիշտ է, հայցի գումարն աննշան է, բայց այստեղ շոշափվում են մեր ընտանիքի շահերը, ուստի այդ գործն ինձ համար չափազանց կարևոր է: Մենք՝ Թորեսներս, ունենք մեր հայարտությունը: Ես գիտեմ, ձեզ՝ ամերիկացիներիդ համար դա ծիծաղելի է թվում, բայց մեզ համար խիստ կարևոր է:

— Նա հետո կմիանա քեզ ու կօգնի, եթե դու հետքը կորցնես,— հավատացրեց Ֆրենսիսին Ռիգանը:— Ի դեպ, քանի դեռ չեք մոռացել, չէր խանգարի նախապես պայմանավորվել ավարի բաժանման մասին. . . Եթե, իհարկե, երբևէ գտնելու լինեք այդ գանձը:

— Խոսքը ձերն է: Ի՞նչ կասեք դուք,— հարցրեց Ֆրենսիսը:

— Հավասար բաժանեցեք: Ամեն մեկիդ ճիշտ կեսը,— առաջարկեց Ռիգանը, մեծահոգաբար նրանց միջև բաժանելով այն, ինչը, նրա համոզմամբ, գոյություն չունեի առհասարակ:

— Եվ դուք, հենց որ կարողանաք, անմիջապես կգաք, այո՞,— հարցրեց Ֆրենսիսը Թորեսին:— Լսեցեք, Ռիգան, զբաղվեցեք սրա հայցով ու ամեն բան շուտով հարթեցեք: Լա՛վ:

— Անպայման, տղաս,— եղավ պատասխանը:— Իսկ եթե փող պահանջվի՝ տա՛մ:

— Անշուշտ:— Ֆրենսիսն ամուր սեղմեց երկուսի ձեռքն էլ:— Դա ինձ կազատի ավելորդ հոգսերից: Դե, իսկ հիմա ես վազեցի. հարկավոր է պատրաստվել, խափանել նշանակած բոլոր տեսակցություններն ու հասնել գնացքին: Մնաք բարով, Ռիգան: Ցտեսություն, սենյոր Թորես, Բոկաս-դել-Թորոյի մոտերքում կամ Ցուլի և Յորթի որևէ խորխորատում: Այսպես, ուրեմն, ձեր կարծիքով գանձը Յորթի՞ կղզում է: Մի խոսքով, մինչև նոր հանդիպում: Adios! /Ցտեսություն (խա.)/:

Իսկ սենյոր Ալվարես Թորեսը էլի որոշ ժամանակ մնաց Ռիգանի մոտ ու մանրամասն հրահանգներ ստացավ իր խաղալիք դերի մասին. ճանապարհորդության հենց սկզբից և ամբողջ տևողության ընթացքում նա պետք է ամեն կերպ արգելակի ու ձգձգի Ֆրենսիսի արշավախումբը:

— Կարճ ասած,— եզրափակեց Ռիգանը,— ես շատ չեմ վշտանա, եթե հանուն իր առողջության նա երկար մնա այնտեղ, իսկ եթե ընդհանրապես չվերադառնա, նույնպես լաց չեմ լինի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Դրամը, ինչպես և ջահելությունը, արգելք չեն ճանաչում, և Ֆրենսիս Մորգանը, օրինական ու բնական տերը թե՛ մեկի, թե՛ մյուսի, մի գեղեցիկ առավոտ, Ռիգանին հրաժեշտ տալուց երեք շաբաթ հետո, հայտնվեց իր վարձած «Անջելիկա» շխուհայի տախտակամածին, շխուհա, որը ափից ոչ հեռու ընկել էր անշարժության գիրկը: Չուրը նման էր ապակու, շխուհան հազիվհազ օրորվում էր, և Ֆրենսիս Մորգանը, տանջվելով ձանձրույթից ու եռանդի առատությունից, որը

ջահելության նման նույնպես արգելք չի ճանաչում, ինդրեց մետիս-նավապետին՝ ջամայկացի նեգրի և հնդկուհու որդուն, փոքրիկ մակույկը իջեցնել ջուրը:

— Կարծես թե այստեղ կարելի է թուփակ որսալ, կապիկ կամ նման մի բան,— նկատեց Ֆրենսիսը, ցեյսի ուժեղ հեռադիտակով գննելով ափը, որը գտնվում էր կես մղոնի վրա ու ծածկված էր անանցանելի անտառով:

— Ավելի շուտ, սը՛ր, դեմ կառնեք տեղական թունավոր օձ լաբառիին, որի խայթոցը մահացու է,— քմծիծաղեց «Անջելիկայի» տնօրենն ու նավապետը, որը ջամայկացի հորից ժառանգել էր լեզուներ տիրապետելու ընդունակությունը:

Բայց Ֆրենսիսին արդեն չէր կարելի ետ պահել. այդ նույն պահին նա հեռադիտակով նախ ճերմակ մի հասիենդա /Յասիենդա— ագարակներով շրջապատված տուն/ նկատեց հեռվում, ապա սպիտակազգեստ մի կնոջ կերպարանք՝ ծովափին, մինչև իսկ տեսավ, որ կինը նույնպես հեռադիտակով դիտում է իրեն և շխու՛նան:

— Մակույկն իջեցրեք, նավապետ,— հրամայեց նա:— Այնտեղ ովքե՛ր են ապրում: Սպիտակներ:

— Էնրիկո Սոլանոյի ընտանիքը, սը՛ր,— եղավ պատասխանը:— Դրանք տոհմիկ իսպանացի ազնվականներ են, հավատացեք իմ խոսքին: Այս ամբողջ տեղանքը, ծովից մինչև Կորդիլեր, ինչպես նաև Գիրիկվի ծովալճակի կեսը, պատկանում է նրանց: Հող շատ ունեն, իսկ փող՝ քիչ: Սարսափելի հպարտ են, և բռնկվում են վառողի պես:

Երբ Ֆրենսիսը փոքրիկ մակույկով լողաց դեպի ափ, նավապետի սուր աչքը նկատեց, որ նա իր հետ ոչ հրացան էր վերցրել, ոչ էլ կոտորքացան՝ թուփակի կամ կապիկի ենթադրվող որսի համար: Նավապետի աչքը որսաց նաև սպիտակազգեստ կնոջ կերպարանքը, որն առանձնանում էր ջու՛նգիների մուգ ֆոնի վրա:

Ֆրենսիսը թիավարում էր ուղիղ դեպի սպիտակ կորայյան ավազով ծածկված ափը, սիրտ չանելով գլուխը շուռ տալ և ուսի վրայով նայել՝ այնտե՛ղ է դեռ այն կինը, թե արդեն անհետացավ: Նրա մտքում ոչ մի վատ բան չկար. միայն երիտասարդի համար միանգամայն բնական մի ցանկություն՝ ծանոթանալ գյուղական ջահել աղջկա, հավանորեն կիսավայրենու, իսկ լավագույն դեպքում՝ միամիտ գավառացու հետ, զրուցել ու կատակել, քանի դեռ հանդարտ ծովը կաշկանդել է «Անջելիկային»: Երբ մակույկի հատակը խշրտաց ավազին, Ֆրենսիսը դուրս ցատկեց, ուժեղ ձեռքով վեր բարձրացրեց նրա քիթն ու քաշեց ափ, և միայն դրանից հետո շուռ եկավ: Շրջապատում ոչ ոք չկար: Ֆրենսիսը վստահորեն առաջ գնաց: «Ամեն մի ճանապարհորդ, անծանոթ ափ ընկնելով, իրավունք ունի որոնելու տեղական բնակիչներին՝ ճամփան հարցնելու համար»,— ասաց նա ինքն իրեն:

Եվ Ֆրենսիսը, որ միայն անցողիկ զվարճության հույս ուներ, այնչափ ու այնպիսի զվարճություններ ստացավ, որոնց մասին երագել իսկ չէր կարող: Ջունգիների կանաչ պարսպի հետևից, ինչպես հավերժահարսը զգրոցի միջից, հանկարծ դուրս թռավ այն երիտասարդ կինը և երկու ձեռքերով բռնեց նրա ձեռքը: Բավական էր մի հայացք գցել՝ հասկանալու համար, որ դա լիովին հասունացած ու ձևավորված աղջիկ է: Ֆրենսիսին զարմացրին այն ուժն ու քնքշությունը, որոնցով նա սեղմում էր իր ձեռքը: Ազատ ձեռքով նա հանեց շյապան ու գլուխ տվեց անծանոթուհուն Նյու Յորքում դաստիարակված Մորգանի անխռովությամբ, որը սովոր էր ոչնչի վրա չզարմանալ, բայց զարմացավ, և այն էլ ինչպե՛ս: Ըստ որում, Ֆրենսիսին ապշեցրեց ոչ միայն աղջկա գեղեցկությունը, այլև այն հայացքը, որով նա սևեռուն նայում էր իրեն՝ մռայլ ու անհողողող: Ֆրենսիսին նույնիսկ թվաց, թե մի տեղ արդեն հանդիպել էր աղջկան: Նա բնավ չէր նկատել, որ անծանոթ մարդիկ այդպես նայեին իրար:

Աղջիկը երկու ձեռքով քաշեց նրա թևից և հուզված շշնջաց:

— Եկեք իմ հետևից: Շո՛ւտ:

Ֆրենսիսը մի րոպե տատանվեց: Այն ժամանակ աղջիկն անհամբերությամբ ձիգ տվեց նրան՝ տանելով իր հետևից: Մտածելով, թե դա ինչ-որ տարօրինակ խաղ է, որն ընդունված է Կենտրոնական Ամերիկայի ծովափնյա շրջաններում, նա ժպտալով գիջեց, և արդեն չգիտեր՝ արդյոք կամովի՞ն է հետևում նրան, թե աղջիկն իրեն ուժով է քարշ տալիս դեպի ջունգիները:

— Արեք այն, ինչ ես եմ անում,— ուսի վրայով նետեց աղջիկը, այժմ արդեն միայն մի ձեռքով բռնելով նրա ձեռքից: Նա ժպտալով հնազանդվեց. սողում էր, երբ սողում էր աղջիկը, կռանում էր, երբ կռանում էր նա, և անդադար իրեն համեմատում էր Ջոն Սմիթի և Պոկահոնտասի /Ջոն Սմիթ և Պոկահոնտաս— Ամերիկայի առաջին հայտնագործողները/ հետ:

Հանկարծ աղջիկը կանգ առավ ու նստեց գետնին, ձեռքի շարժումով հրամայելով Ֆրենսիսին՝ նստել իր կողքին: Նա իր ձեռքն ազատեց երիտասարդի ձեռքից ու սեղմեց սրտին:

— Փառք ասածու,— ասաց նա, դժվարությամբ շունչը ետ բերելով:— Օ՛, ողորմած Մարիամ աստվածածին:

Հետևելով նրան,— այդպես էր նրա կամքը և ըստ երևույթին այդպիսին էին խաղի կանոնները,— երիտասարդը նույնպես ժպտալով ձեռքը սեղմեց սրտին, չնայած չդիմեց ոչ աստծուն, ոչ էլ Մարիամ աստվածածնին:

— Մի՞թե դուք երբեք չեք սովորելու լուրջ լինել,— հարձակվեց նրա վրա աղջիկը՝ աչքերը բարկությամբ փայլեցնելով:

Ֆրենսիսն անմիջապես ընդունեց ամենալուրջ ու բնական արտահայտություն:

— Սիրելիդ իմ լեդի...— սկսեց նա:

Բայց աղջիկը կտրուկ շարժումով ընդհատեց նրան: Ֆրենսիսն աճող զարմանքով նկատեց, թե նա ինչպես թեքվեց ու սկսեց ականջ դնել, իսկ հետո ինքն էլ լսեց մոտիկ կածանից իջնող քայլերի ձայնը:

Իր փափուկ, տաք ափը տիրաբար դնելով նրա ձեռքին ու ասես հրամայելով լռել, աղջիկը պոռթկուն շարժումով թռավ ոտքի,— Ֆրենսիսն արդեն եկել էր այն եզրակացության, որ այդ պոռթկունությունը նրա բնավորության գիծն է,— և արահետով վազեց ներքև: Ֆրենսիսը քիչ մնաց զարմանքից շվացներ: Ասենք կշվացներ էլ, եթե մոտերքից չլսեր աղջկա ձայնը. նա խսպաներեն լեզվով ինչ-որ բան էր հարցնում խստությամբ, իսկ տղամարդկային ձայները, չնայած հարգալիր, բայց առարկում էին նրան:

Ապա Ֆրենսիսը լսեց, թե ինչպես նրանք խոսելով շարունակեցին իրենց ճամփան: Մոտ հինգ րոպե մեռելային լռությունն տիրեց, հետո նորից աղջկա ձայնը հասավ Ֆրենսիսին. նա հրամայում էր դուրս գալ թաքստոցից:

«Այ քեզ բան: Հետաքրքիր է, թե այսպիսի պայմաններում Ռիզանն իրեն ինչպե՞ս կպահեր»,— քնծիծաղով մտածեց նա, դուրս գալով թփերի հետևից:

Նա հետևում էր աղջկան,— այժմ արդեն սա չէր բռնել երիտասարդի ձեռքից,— ջունգլիների միջով դեպի ծովը: Երբ աղջիկը կանգ առավ, Ֆրենսիսը ընդհուպ մոտեցավ ու կանգնեց նրա առաջ, շարունակելով կարծել, թե դա խաղ է:

— Խփեցի՛,— ծիծաղեց նա, ձեռքը դիպցնելով աղջկա ուսին:— Խփեցի՛,— կրկնեց նա:— Հիմա դուք պիտի բռնեք:

Աղջկա սև աչքերը փայլատակեցին բարկացայտ ցառումով:

— Հիմա՛ր,— բացականչեց նա և, ձեռքը բարձրացնելով, մատը տնկեց,— ինչպես Ֆրենսիսին թվաց՝ ավելորդ ընտանեկարությամբ— նրա բեղիկին:— Մի՞թե կարծում եք, թե սա ձեզ անճանաչելի է դարձնում:

— Բայց, սիրելիդ իմ լեդի...— սկսեց նա, կամենալով բացատրել աղջկան, որ, անշուշտ, առաջին անգամ է տեսնում նրան:

Սակայն այն, ինչ հաջորդեց դրան, ստիպեց Ֆրենսիսին լեզուն կծել, և նույնքան անսպասելի էր, որքան և այն ամենը, ինչ աղջիկն արել էր մինչ այդ: Դա կատարվեց այնպիսի արագությամբ, որ նա նույնիսկ չնկատեց, թե որտեղից դուրս հանվեց փոքրիկ արծաթե ասորճանակը, որի փողը ոչ միայն ուղղված էր նրա վրա, այլև կիպ սեղմված էր փորին:

— Սիրելիդ իմ լեդի...— նորից փորձեց սկսել նա:

— Ես չեմ ցանկանում ձեզ հետ խոսել,— ընդհատեց նրան աղջիկը:— Գնացեք ձեր շխուռան ու մեկնեցեք...— Ֆրենսիսին թվաց, թե նա զսպեց հեկեկանքը: Եվ միայն դադարից հետո ավարտեց.— ... ընդմիջտ:

Ֆրենսիսը նորից ուզեց բերանը բանալ, բայց սրտի գոպի տակ զգալով ատրճանակի կտրուկ հարվածը, այդպես էլ ոչինչ չասաց:

— Եթե երբևէ նորից վերադառնաք, թող աստվածամայրն ինձ ների, ես կսպանեմ ձեզ:

— Այդ դեպքում թերևս ավելի լավ է հեռանամ այստեղից,— կատակով նետեց Ֆրենսիսը և, շուռ գալով, քայլեց դեպի մակույկը, նա և՛ ամոթ էր զգում, և՛ ուզում էր ծիծաղել այն մտքից, թե ինչ անհասկանալի ու հիմար վիճակի մեջ է ընկել:

Փորձելով պահպանել արժանապատվության վերջին մնացորդները, նա այնպիսի տեսք ընդունեց, ասես չէր նկատում, որ անձանդությունը գալիս է իր հետևից: Ավագի միջից դուրս քաշելով մակույկի ցռուկը, նա նկատեց, որ մեղմ հովը խշխշացրեց արմավենիների տերևները: Ցամաքից փչող թեթև քամուց ծովն ավի մոտ սկսեց մթնել. նա մթնեց նաև այնտեղ, Չիրիկվի ծովալճակի՝ հայելու պես հարթ ելքի մոտ, ուր հորիզոնից օդերևույթի պես բարձրանում էին խութերի հեռավոր գծագրությունները:

Ֆրենսիսն արդեն ոտքը բարձրացրել էր, որպեսզի մակույկ նստի, երբ հանկարծ հեծկտոց լսեց, որն ստիպեց նրան կանգ առնել ու գլուխը շրջել: Տարօրինակ աղջիկը կանգնել էր ատրճանակը ցած թողած ու արտասվում էր: Մի ակնթարթում Ֆրենսիսը հայտնվեց նրա կողքին ու կարեկցությամբ ձեռքը դիպրեց աղջկա ուսին: Աղջիկը ցնցվեց նրա հպումից ու, ետ քաշվելով, արցունքների միջից հանդիմանությամբ նայեց նրան: Ֆրենսիսն ուսերը թոթվեց, կարծես կամենալով ասել, թե հրաժարվում է տրամադրության այդպիսի փոփոխությունները հասկանալ, և ուզեց նորից շուռ գալ դեպի մակույկը, բայց անձանդությունն կանգնեցրեց նրան:

— Դուք. . . — սկսեց նա, ապա կանգ առավ ու ծանր հառաչեց,— դուք կարող էիք գոնե հրաժեշտի համբույր ինձ տալ:

Եվ աղջիկը գրկաբաց, ուժգին թափով նետվեց դեպի նա, բայց դեռ շարունակելով աջ ձեռքում պահել այնքան անհարկի ատրճանակը: Վերջնականապես մոլորված Ֆրենսիսը ինչ-որ ակնթարթ մնաց շփոթված, ապա գրկեց նրան ու պարզևատրվեց կրքոտ համբույրով, որը բուրրովին զարմացրեց նրան, իսկ անձանդությունն գլուխը դրեց նրա ուսին ու Ֆրենսիսի աչքերը մթնեցին, բայց և այնպես նա շարունակում էր թիակների միջև զգալ ատրճանակի ճնշող ծանրությունը: Զիչ հետո աղջիկը բարձրացրեց արցունքներից թաց դեմքը ու մի քանի անգամ համբուրեց Ֆրենսիսին, իսկ սա մտածեց՝ արդյոք իր կողմից ստորությունն չի՞ լինի աղջկա համբույրների փատասխանել ոչ պակաս հանելուկային կրքոտ համբույրներով:

Հենց նոր էր նա որոշել, որ ընդհանրապես իր համար մեկ է, թե որքան կտևի այդ քնքուշ տեսարանը, երբ աղջիկը հանկարծ ետ ընկրկեց, և նրա դեմքը նորից բռնկվեց զայրույթով ու ատելությամբ. սպառնազին վեր բարձրացնելով ատրճանակը, նա երիտասարդին ցույց տվեց նավակը:

Թոթվելով ուսերն ու կարծես ասելով, որ ինքը ոչինչ չի կարող մերժել գեղեցիկ կնոջը, Ֆրենսիսը հնազանդվեց, նստեց թիակների մոտ, դեմքը դարձրած նրան, և սկսեց թիավարել դեպի ծովի խորքը:

— Թող Մարիամ աստվածածինը փրկի ինձ ու չթողնի կորչելու իմ թույլ սրտի պատճառով,— բացականչեց աղջիկը, ազատ ձեռքով վզից պոկելով մեղալիոնը: Ոսկե հուլունքները շաղ եկան անձրևի պես, և մեղալիոնը թռավ ջրի մեջ, որն աղջկան բաժանում էր Ֆրենսիսից:

Այդ բոպեին ջուռգլիներից դուրս թռան երեք հրացանավոր մարդիկ ու վազեցին դեպի աղջիկը, որը ուժասպառ նստեց ավազների: Տղամարդիկ օգնեցին նրան ոտքի կանգնելու և այդ ժամանակ միայն նկատեցին Ֆրենսիսին, որն այժմ թիավարում էր ամբողջ ուժով: Ֆրենսիսը փոթով ետ նայեց՝ տեսնելու, թե մինչև «Անջելիկան» որքան էր մնացել, ու նկատեց, որ թեթևակիորեն մի կողմ թեքված շխուռան, ցռուկով ճեղքելով ջուրը, գալիս է իրեն ընդառաջ: Այդ բոպեին ավին կանգնած տղամարդկանցից մեկը,— նա, որ մյուսներից տարեց էր ու մորուքով,— հեռադիտակը խլեց

աղջկա ձեռքից և ուղղեց դեպի Ֆրենսիսը: Իսկ հետևյալ պահին, հեռադիտակը շարտելով, նա արդեն հրացանով նշան էր բռնել երիտասարդին:

Գնդակը շոմփաց ջրում մակույկից ընդամենը մեկ յարդ հեռավորության վրա, սակայն նախքան երկրորդ կրակոցը աղջիկը շտապ ցատկեց տեղից ու ներքևից հասցված հարվածով հրացանը ցած գցեց ծերունու ձեռքից: Շարունակելով կատաղորեն թիավարել՝ Ֆրենսիսը նկատեց, թե ինչպես տղամարդիկ, վազելով աղջկանից հեռու, նշան վերցրին իրեն, բայց աղջիկը հանեց ատրճանակը և, ուղղելով նրանց վրա, ստիպեց հրացաններն իջեցնել:

Քամու դեմ դարձած «Անջելիկան» կանգ առավ, ջուրը փրփրացնելով, և Ֆրենսիսը ճարպիկ թռիչքով ցատկեց տախտակամած. նույն վայրկյանին նավապետը պտտեց դեկանիվը, առագաստները փքվեցին, շխունան ընթացավ դեպի ծով: Ֆրենսիսը տղայական չարաճճիությամբ հրաժեշտի օդային համբույր ուղարկեց անձանդուհուհու, որը շարունակում էր նայել իր հետևից, և նկատեց, թե ինչպես նա, լիովին ուժասպառ, ընկավ մորուքավոր ծերունու գիրկը:

— Այ թե վառոդ են այդ անիծյալ Սոլանները: Խենթության աստիճան հպարտ,— ասաց Ֆրենսիսին մետիս-նավապետը ու ժպտաց, փայլեցնելով սպիտակ ատամները:

— Ինչ-որ կատաղած արարածներ են, իսկական ընկևավորներ,— ծիծաղեց Ֆրենսիսը և, վազելով դեպի նավեզր, էլի մի քանի օդային համբույրներ ուղարկեց ջահել էքսցենտորիկ կնոջը:

Շնորհիվ ցամաքից փչող համընթաց քամու՝ «Անջելիկան» հասավ Չիրիկվի ծովալճակի մուտքը պաշտպանող խութերին և, մի հիսուն մղոն ևս անցնելով նրանց երկայնքով, կեսգիշերին մոտեցավ Ցուլի և Յորթի կղզիներին. այստեղ նավապետը խարիսխ գցեց, որոշելով սպասել մինչև լուսաբաց: Նախաճաշից հետո Ֆրենսիսը, ջամայկացի նեգր մի նավաստու նստեցնելով թիակների մոտ, մակույկով գնաց հետագոտելու Ցուլի կղզին, որն ավելի մեծ էր Յորթի կղզուց և տարվա այդ ժամանակ, նավապետի ասելով, բնակեցված էր հնդիկներով, որոնք ցամաքից անցնում են այստեղ կրիաներ որսալու:

Դեռևս կղզուն չհասած՝ Ֆրենսիսը հասկացավ, որ իրեն Նյու Յորքից բաժանում են ոչ միայն լայնության երեսուն աստիճանները, այլև երեսուն դարեր, որոնց վրայով արագ թռել-անցել է՝ գերժամանակակից քաղաքակրթությունից ընկնելով, կարելի է ասել, նախնադարյան վայրենության իրադրության մեջ: Կրիայի որսորդները, բոլորովին մերկ, եթե չհաշվենք ազդրերին կապած պարկի կտորները, զինված ծանր, արտակարգ սուր մաչետ-կացիներով, շատ շուտով ասպացուցեցին, որ իրենք թունդ մուրացիկներ են և կանգ չեն առնի սպանության առաջ: Ցուլի կղզին պատկանում է նրանց,— հայտնեցին նրանք Ֆրենսիսին թարգման-նավաստու միջոցով, որը նրան բերել էր այստեղ,— իսկ Յորթը, որն առաջ կրիաների որսասեզոնին նույնպես նրանց էր պատկանում, այժմ զավթել է մի կատաղի գրինգո /Գրինգո— Կենտրոնական Ամերիկայում այդպես են անվանում՝ անգլիացիներին ու Միացյալ Նահանգների բնակիչներին:/, մի հանդուգն թռիչք փախած, իրասածի ու տիրական, որը կարողացել է ահաբեկման միջոցով նվաճել նրանց հարգանքը՝ հարգանք հանդեպի երկոտանի արարածը, որն իրենցից էլ վայրագ է:

Արծաթյա մի դոլար տալով՝ Ֆրենսիսը հնդիկներից մեկին համոզեց գնալ այդ խորհրդավոր գրինգոյի մոտ ու հայտնել, որ ինքը կուզենար այցելել նրան: Այդ միջոցին մյուսները շոջապատեցին մակույկը, սկսեցին տնտղել Ֆրենսիսին, փող մուրալ նրանից և նույնիսկ առանց քաշվելու թոցրին ծխամորճը, որ նա մի պահ հանեց բերանից ու դրեց կողքին: Ֆրենսիսն անմիջապես հասցրեց գողի ականջին, ապա և երկրորդին, որը խլել էր այն առաջինից, ու ծխամորճը ետ վերցրեց: Մի ակնթարթում ամբոխը վեր պարզեց մաչետները, որոնց սայրերը սպառնալից փայլիլեցին արևի տակ, բայց Ֆրենսիսն արագորեն մարեց հնդիկների կրակը, ավտոմատ ատրճանակն ուղղելով նրանց վրա. նրանք ետ-ետ գնացին և, իրար գլխի կիսովելով, սկսեցին չարագուշակ քչփչալ: Այստեղ Ֆրենսիսը նկատեց, որ իր միակ ուղեկիցն ու թարգմանը վախեցել է. մոտենալով կրիաներ որսացողներին՝ նա խոսեց բացահայտ շողոքորթ տոնով, որը բոլորովին դուր չեկավ Ֆրենսիսին:

Այդ միջոցին վերադարձավ այն հնդիկը, որ երկտողը տարել էր, և Ֆրենսիսը, համոզվելով, որ ինքն ստիպված պիտի լինի բացատրվել նրա հետ, քանի որ ջամայկացու հետ հույս կապելն իզուր է, առավ նրանից թերթիկը, որի վրա մատիտով խզբզած էր. «Vamos! Կորիր գրողի ծոցը»:

— Ինչպես երևում է, ստիպված ես պետք է գնամ այնտեղ,— նեգր նավաստունն իր մոտ կանչելով՝
ասաց Ֆրենսիսը:

— Սը՛ր, որքան կարելի է զգուշ եղեք ու շրջահայաց,— նախազգուշացրեց նեգրը:— Այս բթամիտ
անասուններն ամեն ինչի ընդունակ են, սը՛ր:

— Նստիր նավակ և տար ինձ այնտեղ,— կարճ հրամայեց Ֆրենսիսը:

— Ոչ, սը՛ր: Շատ եմ ցավում, բայց ոչ, սը՛ր,— պատասխանեց սևամորթ նավաստին:— Սը՛ր, ես
վարձվել եմ նավապետ Թրեֆեզենի մոտ իբրև նավաստի և ոչ թե իբրև անձնասպան, և ես
հաստատ մահվան դեմ չեմ գնա ձեզ հետ, սըր: Մեզ համար ամենալավն այն կլիներ, որ
հեռանայինք այս դժոխքից, իսկ եթե մնանք, սը՛ր, լավ ծեծ կուտենք, դա արդեն հաստատ է:

Մինչև հոգու խորքը վրդովված, Ֆրենսիսը նավաստունն չափեց մի արհամարհական հայացքով,
ատրճանակը խոթեց գրպանը, մեջքը դարձրեց կիսամերկ վայրենիներին ու հեռացավ արմավենու
պուրակի միջով: Այնտեղ, ուր դուրս էր ցցվել վաղեմի երկրաշարժից դուրս նետված
մարջանախուրթը, նա դուրս եկավ ծովափ: Հորթի ափին, որից մի բարակ նեղուց էր բաժանում
Նրան, Ֆրենսիսը նկատեց կապած մի մակույկ: Իսկ այն ափին, ուր գտնվում էր ինքը, կապված էր
փայտից փորած հին ու պարզապես ծակ մի կանոն: Ֆրենսիսը շուռ տվեց այն, որպեսզի շուրը
դուրս թափի, և այստեղ նկատեց, որ կրիայի որսորդները հետևել են իրեն և այժմ կոկոսյան
ընկուզենու պուրակից դիտում են իր գործողությունները. սակայն վախկոտ նավաստին նրանց
մեջ չէր: Բարակ նեղուցն անցնելը Ֆրենսիսի համար մի քանի րոպեի գործ էր, բայց Հորթի ափին
Նրան սպասում էր ոչ ավելի սիրալիր դիմավորում. արմավենու հետևից դուրս եկավ մի
բարձրահասակ, ոտաբոբիկ երիտասարդ, ավտոմատ ատրճանակը ձեռքին, ու բղավեց.

— Vamos! Հեռացեք այստեղից: Շո՛ւտ:

— Օ՛, աստվածներ ծովային խորությունների՝ բոլոր ձկներով ու ձկնիկներով հանդերձ,—
կեսկատակ, կեսլուրջ բացականչեց Ֆրենսիսն ու ժպտաց:— Այստեղ ձեզ մոտ մարդ չի կարող ոչ
մի քայլ փոխել առանց դեմքին ուղղված ատրճանակի: Եվ բոլորը բղավում են. «Կորիր այստեղից,
pronto!»: /Արագ, շուտ (իսպ.):/

— Ոչ ոք ձեզ այստեղ չի կանչել,— առարկեց անձանոթը:— Դուք եկել եք առանց հարցնելու:
Հեռացեք իմ կղզուց: Կես րոպե ժամանակ եմ տալիս:

— Գիտեք ի՞նչ, բարեկամ, ես սկսում եմ զայրանալ,— անկեղծորեն խոստովանեց Ֆրենսիսը,
միաժամանակ աչքի տակով դիտելով մոտակա արմավենին ու մտովի հաշվելով, թե ինչ
տարածություն է բաժանում իրեն նրանից:— Բոլոր նրանք, ում այստեղ հանդիպել եմ, մի տեսակ
խելագարներ են ու անքաղաքավարի արարածներ. առանց անհարմար զգալու քշում են մարդու:
Այնպես որ ի վերջո իմ բնավորությունն էլ փոխվեց: Իսկ գալով այն բանին, իբրև թե այս կղզին
ձերն է, ապա լոկ խոսքերը դեռևս ապացույց չեն...

Եվ, խոսքը չվերջացրած, Ֆրենսիսը նետվեց դեպի արմավենին: Հագիվ էր անցել ծառի հետևը, երբ
գնդակը հարվածեց բնին:

— Ախ, այդպե՛ս,— բացականչեց նա ու գնդակը մեխեց այն ծառաբնի մեջ, որի հետևում թաքնվեց
անձանոթը:

Փոխիրաճությունը շարունակվեց մի քանի րոպե. հակառակորդները մերթ կրակում էին իրար
վրա, մերթ սպասում, ուշի-ուշով հաշվելով կրակոցները: Վերջապես Ֆրենսիսն արձակեց վերջին,
ուղթերորդ, գնդակը և այստեղ առանց հատուկ բավականության հիշեց, որ անձանոթի կողմից
ընդամենը յոթ կրակոց է հաշվել: Այն ժամանակ նա իր խցանե սաղավարտը դրեց ձեռքին և
զգուշությամբ դուրս հանեց արմավենու հետևից. գնդակն անմիջապես խոցեց սաղավարտը:

— Ձեր ատրճանակն ի՞նչ սխտեմի է,— սառը-քաղաքավարի տոնով հարցրեց նա:

— Կոլտ,— հետևեց պատասխանը:

Ֆրենսիսը համարձակորեն դուրս եկավ թաքստոցից:

— Այդ դեպքում դուք ձեր ողջ պաշարն սպառեցիք: Ես հաշվեցի կրակոցները: Ուր: Այժմ կարող եմք խոսել:

Անծանոթը նույնպես դուրս եկավ ծառի հետևից: Եվ Ֆրենսիսն ականա հիացավ նրա վայելուչ կազմվածքով, որը աղավաղել չէր կարողանում անգամ հագուստը, որ բաղկացած էր պարուսիներ կեղտոտ վարտիքից, շապիկից ու եզրերը կախ ընկած սոմբրերոյից: Ավելին՝ Ֆրենսիսին թվաց, թե ինչ-որ տեղ արդեն տեսել է այդ մարդուն, չնայած մտքով իսկ չանցավ, որ նայում է իր ճշգրիտ պատճենին:

— Խոսե՛լ,— փնչացրեց անծանոթը և, ատրճանակը շարտելով, գոտկից դուրս քաշեց դանակը:— Այ, հիմա ականջներդ կկտրեմ, իսկ հետո, թերևս, գանգամաշկո հանեմ:

— Տե՛ս մի: Սակայն ի՞նչ սիրելի ու համակրելի գազաններ են ապրում այստեղի անտառներում,— նույն տոնով խոսեց Ֆրենսիսը, զգալով, թե գայրույթն ու բարկությունը ինչպես են աճում ներսում: Նա նույնպես դուրս քաշեց իր որսորդական դանակը, որ դեռևս բոլորովին նոր էր ու փայլուն:— Ավելի լավ է արի ուժերս չափենք՝ առանց քրեական վեպերին հատուկ դանակակոշի:

— Ինձ քո ականջներն են հարկավոր,— սիրալիրությամբ առարկեց անծանոթը և սկսեց դանդաղ առաջանալ դեպի Ֆրենսիսը:

— Շատ լավ: Ով առաջինը մեջքի վրա պառկի, նա էլ թող ականջները հաղթողին տա:

— Համաձայն եմ:— Պարուսիներ անդրավարտիք հագած երիտասարդը դանակը թաքցրեց:

— Ափսոս կինոպարատ չկա այստեղ, որ նկարահանի այս տեսարանը,— քմծիծաղեց Ֆրենսիսը, իր հերթին թաքցնելով որսորդական դանակը:— Ես չարացած եմ հազար սատանայի պես: Ամենագագազած հնդկիկի նման: Չգուշացիր: Ես քեզ հիմա ուզածդ ձևով մեջքի վրա կպառկեցնեմ:

Ասածն արած է, բայց Ֆրենսիսի փայլուն գործը հասցրեց ամենամոթալի արդյունքի. անծանոթը, որ առաջին հայացքից ասես կարող էր դիմագրավել ամեն մի հարձակման, հենց որ նրանք իրար եկան, փռվեց մեջքի վրա: Դա խորամանկություն էր. ոտքը բարձրացնելով, նա Ֆրենսիսի փորին մի այնպիսի քացի տվեց, որ սա օդի մեջ պտույտ գործելով, թռավ-անցավ նրա գլխի վրայով:

Անկումից Ֆրենսիսը համարյա գիտակցությունը կորցրեց: Դա դեռ քիչ էր, հակառակորդն էլ մյուս կողմից նետվեց նրա վրա ու այնպես սեղմեց գետնին, որ քիչ մնաց շունչը փչել: Ֆրենսիսը պառկած էր մեջքի վրա, անգոր մի խոսք արտաբերելու, երբ հանկարծ նկատեց, որ վրան ընկած մարդը անակնկալ հետաքրքրությամբ զննում է իրեն:

— Ինչի՞դ է պետք այս բեղը,— հարցրեց անծանոթը:

— Լավ, մի խոսիր, կտրիր ականջներս,— ասաց Ֆրենսիսը, հենց որ շունչը ետ եկավ:— Ականջներն են քոնը, իսկ բեղը իմն է: Այդ մասին չենք պայմանավորվել: Իսկ ընդհանրապես դու ինձ մեջքի վրա զգեցիր ջիու-ջիցուի /Ջիու-ջիցու— ճապոնական ըմբշամարտի ձև:/ բոլոր կանոններով:

— Դու ինքդ ասացիր՝ «Ուզածդ ձևով մեջքի վրա կպառկեցնեմ»,— ծիծաղելով մեջքերում արեց անծանոթը:— Այդպես ահա, ականջներդ կարող ես քեզ պահել. ես չեի էլ պատրաստվում կտրել դրանք, իսկ այժմ, ավելի մոտիկից դիտելով, բոլորովին չեմ ուզում՝ դրանք հարկավոր չեն ինձ: Վեր կաց ու հեռացիր այստեղից: Ես հաղթեցի քեզ: Vamos! Եվ այլևս չհամարձակվես երևալ այստեղ ու հոտոտել: Կորիր այստեղից, շո՛ւտ:

Առաջվանից էլ ավելի վրդովված և ստորացված պարտության գիտակցությունից, Ֆրենսիսը վերադարձավ ափ, որտեղ կապված էր նրա կանոն:

— Է՛յ, երիտասարդ, միգուցե գոնե այցեքա՞րտդ կթողնես ինձ,— ձայն տվեց նրա հետևից հաղթողը:

— Թուկից փախածների մոտ այցեքարտեր չեն թողնում,— ուսի վրայից նետեց Ֆրենսիսը, ցատկելով նավակի մեջ ու թիակով կտրվելով ափից:— Իսկ ազգանունս Մորգան է: Անծանոթի դեմքին մեծագույն զարմանք արտացոլվեց. քիչ մնաց բերանը բանար ինչ-որ բան ասելու, բայց հետո միտքը փոխեց, քթի տակ շշնջալով միայն. «Նույն տոհմից: Չարմանայի չէ, որ այդքան նման եմք իրար»:

Բարկությունից դեռևս փրփրած Ֆրենսիսը հասավ Ցուլի կղզին, կանոն դուրս քաշեց ափ, նստեց մակույկի եզրին, ծխամորճը ցրեց, ծխեց ու խորասուզվեց մռայլ մտքերի մեջ: «Այստեղ բոլորն էլ խելագարներ են, վճռականապես բոլորը,— մտածում էր նա:— Ոչ մի մարդ իրեն մարդավարի չի պահում: Հետաքրքիր է, թե ծերուկ Ռիզանն ինչպե՞ս գործ կբռներ այսպիսի մարդկանց հետ: Նրա ականջները հաստատ որ կկտրեին»:

Եթե Ֆրենսիսն այդ րոպեին կարողանար տեսնել պարոուսինե վարտիքի տիրոջը ու այնքան ծանոթ կերպարանքը, վերջնականապես կգար այն համոզման, որ Լատինական Ամերիկայի բնակիչներն ամենախսկական խելագարներ են, քանզի վերոհիշյալ երիտասարդը նստել էր կղզու իր խոտածածկ խրճիթում և, ժպտալով սեփական մտքերից, բարձրաձայն ասում էր.

— Բայց և այնպես, կարծեմ ես լավ վախեցրի մորգանյան ընտանիքի այդ ներկայացուցչին:— Եվ, մոտենալով պատին, սկսեց դիտել այնտեղ կախված Մորգանների նախահոր՝ սը՛ր Չենրիի դիմանկարի պատճենը:— Եվ այսպես, պարոն ծովահեն,— շարունակեց նա քմծիծաղով,— ձեր երկու վերջին շառավիղները քիչ մնաց վերջ տային իրար ավտոմատ ատրճանակներով, որոնց համեմատությամբ ձեր անդրջրհեղեղյան զենքը գրոշանոց խաղալիք է:

Նա խոնարհվեց ծովային հին փտած սնդուկի վրա, որը որդերը կերել էին, բարձրացրեց վրան «Ս» տառը փորագրած կափարիչը և նորից դիմեց նկարին.

— Այո, իմ ազնիվ նախահայր, վալլիցի ծովահեն, այնքան էլ շատ բան չես թողել դու ինձ՝ հին քուրջեր, մեկ էլ մի դեմք, որը ջրի երկու կաթիլի պես նման է քոնին: Բայց եթե ինձ վրա կրակ տեղային, ինչպես քեզ վրա Պորտ-օ-Պրենսում, ես էլ կարող էի ինձ ցույց տալ:

Այս ասելով, նա սկսեց հագնել ցեցակեր հագուստը, որը խուճացել էր երկար տարիներ սնդուկում մնալու հետևանքով:

— Ահա և ես զուգվեցի,— ավելացրեց նա մի րոպե հետո:— Հապա, թանկագինդ իմ նախահայր, դուրս արի շրջանակից ու համարձակվիր ասել, որ մենք նման չենք իրար, ինչպես ջրի երկու կաթիլ:

Այժմ, երբ երիտասարդը հագել էր սըր Չենրի Մորգանի հինավուրց շորերը, կապել կիսասուները և լայն գոտկի տակ խրել երկու փորագրագարդ, կայծքարե հսկայական ատրճանակները, այդ կենդանի մարդու և վաղուց փոշիացած ծեր ծովահենի դիմանկարի նմանությունն իսկապես ապշեցուցիչ էր:

Հողմն է ոռնում, ծովը եռում,

Մենք անհողողող և հուսով:

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Հագարի դեմ երկուսով,—

կիթառի լարերը ծլնագնելով երգեց երիտասարդը ծովահենային հինավուրց երգը: Նկարից նայող կերպարանքն սկսեց աստիճանաբար ճապաղվել, և երիտասարդը բոլորովին այլ պատկեր տեսավ իր առաջ:

Մեջքը հենած միջնակայմին, փայլատակող կիսասուները ձեռքին, կանգնած էր ծերուկ ծովահենը, իսկ նրա դեմ կիսաշրջանաձև խռնվել էին տարօրինակ հագուստներով թոկից փախած նավաստիներ. կայմի մյուս կողմում, մեջքը նրա մեջքին, կանգնած էր մի ուրիշ մարդ՝ նույնպիսի հագուստով և նույնպես կիսասուները ձեռքին, որի առաջ նույնպես կիսաշրջանաձև խռնվել էին թոկից փախած նավաստիները, եզրափակելով կայմի շուրջը կազմվող շրջանը:

Վառ տեսիլը չքացավ հանկարծ, պատառոտվելով կտրվող լարի զնգոցից. երիտասարդը մտքերով տարված ուժգին ձգել էր լարը: Վերահաս լռության մեջ նրան թվաց, թե ծերուկի սըր Չենրին դուրս եկավ շրջանակից և, կանգնելով նրա առաջ, քաշքշում է թևքից, ասես հրամայելով խրճիթից դուրս գալ, իսկ ինքը ուրվականի համառությամբ մի գլուխ շշնջում է.

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Հագարի դեմ երկուսով:

Անսալով ուրվականի կանչին կամ գուցե և սրված ներհայեցողությանը, երիտասարդը դուրս եկավ խրճիթից և իջավ դեպի ծով: Բարակ նեղուցի վրայով նայելով դիմացի ափին, նա Ցուլի կղզում նկատեց իր քիչ առաջվա հակառակորդին, որը, մեջքը հենած մարջանախութի վիթխարի բեկորին, պաշտպանվում էր կիսամերկ հնդիկներից, որոնք իրենց մաչետներով հարձակվում էին նրա վրա. երիտասարդի ձեռքին մի ծանր ճյուղ կար, որ նա, հավանորեն, ջրից էր հանել:

Այդ պահին մեկը քարով հասցրեց Ֆրենսիսի գլխին, և նրա աչքերի դեմ ամեն ինչ լողաց. գիտակցությունը կորցնելով՝ նա հանկարծ այնպիսի մի բան տեսավ, որը համարյա համոզեց նրան, որ ինքը մեռած է ու գտնվում է ստվերների աշխարհում. սըր Չենրի Մորգանը սեփական անձով, կիսասուները ձեռքին, շտապում էր ափով նրան օգնության: Ավելին, նա թափահարում էր այդ կիսասուները և, աջ ու ձախ խորտակելով հնդիկներին, հնչեղ ձայնով երգում էր.

Չողմն է ոռնում, ծովը եռում,

Մենք անհողորդը և հուսով:

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Չազարի դեմ երկուսով:

Ֆրենսիսի ոտքերը ծալվում էին, նա ամբողջովին փափկեց ու դանդաղ իջավ գետնին. վերջին բանը, որ տեսավ, հնդիկներն էին, որոնք ցանուցի ճողորպեցին, հետապնդվելով խորհրդավոր ծովահենի կողմից:

«Ողորմած աստված», «Սուրբ տիրամայր, փրկիր մեզ», «Ախր դա ծեր Մորգանի ուրվականն է»,— Ֆրենսիսի ականջին հասան նրանց աղաղակները:

Նա ուշքի եկավ Չորթի կղզու հենց կենտրոնում կանգնած խոտածածկ խրճիթում: Առաջին բանը, որ ուշքի գալով տեսավ, սըր Չենրի Մորգանի դիմանկարն էր, որը պատից նրան էր նայում: Ապա նա տեսավ սըր Չենրիի ճշգրիտ պատճենին, միայն բոլորովին ջահել, կենդանի միս ու արյունից, և այդ սըր Չենրին բրենդիով տափաշիչը մոտեցրեց նրա շրթունքներին ու պատվիրեց մի կում անել: Չենց որ Ֆրենսիսը մի կում արեց, ուժերն անմիջապես վերադարձան, և նա ոտքի թռավ. երիտասարդները, նույն ներքին ցանկությունից դրդված, սևեռուն նայեցին իրար, հետո նկարին և, տափաշները շրխկացնելով, խմեցին նախնիների ու իրենց կենացը:

— Դուք ինձ ասացիք, որ Մորգան եք,— ասաց անձանոթը:— Ես նույնպես Մորգան եմ: Պատից նայող այդ մարդը իմ տոհմի սկիզբն է դրել: Իսկ ձեր տոհմը որտեղի՞ց է սկսվում:

— Նույն մարդուց,— պատասխանեց Ֆրենսիսը:— Իմ անունը Ֆրենսիս է: Իսկ ձե՞րը:

— Չենրի, ինչպես և մեր նախահոր անունը: Մենք ձեզ հետ երևի հեռավոր ազգական ենք՝ հորեղբոր հորեղբոր տղաներ կամ այդպիսի մի բան: Ես որոնում եմ այն գանձերը, որ իր ժամանակին թալանել է այս խորամանկ ու կծծի վայլիցին:

— Ես նույնպես,— ասաց Ֆրենսիսն ու ձեռքը պարզեց նրան:— Միայն թե գրողի ծոցն ամեն կարգի բաժանում:

— Զո մեջ խոսում է Մորգանների արյունը,— հավանությամբ քմիծաղեց Չենրին:— Իբրև, թող ամեն ինչ հասնի նրան, ով առաջինը կգտնի: Այս կես տարվա ընթացքում ես փորփրել եմ համարյա ողջ կղզին և ինչ որ գտել եմ, ահա այս քուրջերն են: Իհարկե, ես կաշխատեմ գանձը քեզանից շուտ գտնել, բայց հենց որ պետք գամ, և դու ինձ կանչես, մեջք մեջքի կկանգնեմ քեզ հետ կայմի կողքին:

— Դա հիանալի երգ է,— ասաց Ֆրենսիսը,— ես կուզենայի սովորել: Չապա, նորից կրկնիր այն տողերը:

Եվ, տափաշները զնգացնելով, նրանք երգեցին.

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Հագարի դեմ երկուսով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Սակայն ուժեղ գլխացավը Ֆրենսիսին ստիպեց երգելը դադարեցնել, և նա ուրախությամբ թույլ տվեց Հենրիին՝ պառկեցնել իրեն սովորում կապած ցանցաճոճի մեջ: Ինքը՝ Հենրին ուղղվեց դեպի «Անջելիկա», որպեսզի նավապետին հաղորդի իր հյուրի հրամանը: Խարիսխ գցել և ոչ մի պայմանով թույլ չտալ նավաստիներին Հորթի ափ իջնելու: Միայն հաջորդ օրվա ուշ առավոտյան, երկար ու ծանր քնից հետո, վերջապես Ֆրենսիսը ոտքի ելավ ու ասաց, որ գլուխը նորից պարզվել է:

— Ես գիտեմ, թե դա ինչպես է լինում. ինքս էլ մի անգամ ցած եմ ընկել ձիուց,— կարեկցությամբ նկատեց տարօրինակ ազգականը, մի մեծ գավաթ բուրումնավետ սև սուրճ լցնելով նրա համար:— Այ, սա խմիր, և իսկույն ուրիշ մարդ կդառնաս: Բացի աղած մսից, պաքսիմատից ու կրիայի ձվից պատրաստած ձվածեղից ուրիշ ոչինչ չեմ կարող առաջարկել նախաճաշի համար: Ձվերը թարմ են, կարող եմ երաշխավորել. ինքս եմ այս առավոտ ավագի միջից հանել, երբ դու քնած էիր:

— Այս սուրճն ինքնին արդեն մի ամբողջ նախաճաշ է,— գիտակ մարդու տոնով պատասխանեց Ֆրենսիսը, զննելով իր նոր ազգականին ու ժամանակ առ ժամանակ հայացքը նրանից դարձնելով նկարի վրա:

— Ախր դու էլ ճիշտ նրա պատճենն ես. և դուք նման եք իրար ոչ միայն արտաքնապես,— ծիծաղեց Հենրին՝ Ֆրենսիսի հայացքը բռնելով:— Երբ դու երեկ հրաժարվեցիր գանձը կիսելուց, դատում էիր այնպես, ինչպես կդատեր սրը Հենրին, եթե ողջ լիներ: Նա բնածին հակակրանք ուներ բաժանման հանդեպ, անգամ սեփական խմբի հետ ավարը չէր բաժանում: Այստեղից էլ նրա բոլոր աղետները: Եվ, իհարկե, նա ոչ մի պենսի չէր բաժանի իր հետնորդների հետ: Իսկ այժմ, ես բոլորովին այլ եմ: Ես ոչ միայն պատրաստ եմ Հորթի կեսը քեզ տալ, այլև իմ բաժին կեսն էլ վրադիր՝ ողջ շարժական ու անշարժ գույքի հետ միասին. վերցրու և խրճիթը, և հիանալի կահավորանքը, և տոհմական արժեքները, բոլորը, մինչև իսկ կրիայի մնացած ձվերը: Ե՛րբ կհաճեիք տեր կանգնել այդ ամենին:

— Այդ ինչպե՞ս հասկանալ. . . — հարցրեց Ֆրենսիսը:

— Հենց այդպես: Այստեղ ոչինչ չկա: Կարելի է ասել՝ ես փորփրել եմ ամբողջ կղզին, և միակ բանը, որ գտել եմ քուրջերով լցված սնդուկն է:

— Բայց դա պետք է քեզ ոգևորեր՝ հետագա որոնումները շարունակելու:

— Այն էլ ո՛նց: Արդեն կարծում էի գանձը գրպանումս է: Համենայն դեպս, այս սնդուկը ցույց էր տալիս, որ ճիշտ ճանապարհի վրա եմ:

— Իսկ ինչո՞ւ բախտներս չփորձենք Ցուլի կղզում,— հարցրեց Ֆրենսիսը:

— Ահա ես հենց այդ մասին էլ մտածում եմ, չնայած հիմքեր ունեմ ենթադրելու, որ գանձը թաղված է ինչ-որ տեղ ցամաքում: Չէ՞ որ հնում մարդիկ սովորություն ունեին լայնությունն ու երկարությունը նշելու մի քանի աստիճանի տարբերությամբ:

— Այո, եթե քարտեզի վրա նշված է հյուսիսային լայնության տասը աստիճան և արևելյան երկայնության իննսուն աստիճան, դա լիովին կարող է նշանակել հյուսիսային լայնության տասներկու և արևելյան երկայնության իննսուներկու աստիճան,— հաստատեց Ֆրենսիսը:— Կարող է նշանակել նաև հյուսիսային լայնության ութ և արևելյան երկայնության ութսունութ աստիճան: Ծովահենները ուղղումը պահում էին մտքներում, և եթե մեռնում էին անակնկալ, որ ինչպես երևում է նրանց սովորությունն էր, ապա գաղտնիքն էլ իրենց հետ էր մեռնում:

— Ես արդեն համարյա որոշել էի անցնել Ցուլի կղզին և կրիայի բոլոր այդ որսորդներին այնտեղից ցամաք քշել,— շարունակեց Հենրին:— Բայց հետո հանկարծ սկսեց ինձ թվալ, որ թերևս լավ կլինի ցամաքից սկսել: Երևի դու էլ գանձը որոնելու քո բանալիներն ունես:

— Իհարկե,— գլխով արեց Ֆրենսիսը:— Բայց գիտես, ես կուզենայի բաժանքի մասին իմ խոսքերը ետ վերցնել:

— Վերցրու, վերցրու,— քաջալերեց Յենրին:

— Դե, ուրեմն, վերցնում եմ:

Եվ, ի վավերացումն իրենց պայմանագրի, նրանք ամուր սեղմեցին իրար ձեռք:

— «Մորզան և Մորզան»— միայն երկու հոգուց բաղկացած ընկերություն,— ծիծաղեց Ֆրենսիսը:

— Ակտիվը՝ ամբողջ Կարաիբյան ծովը, մայրցամաքի իսպանական գաղութները, Կենտրոնական Ամերիկայի մեծ մասը, անպետք հնոստիով լցված մի սևուկ և գետնի մեջ փորված բազում փոսեր,— նրա տոնով շարունակեց Յենրին:— Պասսիվը՝ օձի խայթոցներ, հնդիկ թալանչիներ, մալարիա, դեղին տենդ...

— Եվ սիրուն աղջիկներ, որոնք նախ համբուրում են բոլորովին անծանոթ մարդուն, իսկ հետո արծաթյա փայլուն ատրճանակը դեմ անում նրա փորին,— վրա բերեց Ֆրենսիսը:— Ես հիմա մի հետաքրքիր բան պատմեմ քեզ: Երեկ չէ մյուս օրը մակույկով ուղղվեցի դեպի մայրցամաք: Դեռ նոր էի ափ իջել, երբ մոտ վազեց աշխարհի ամենասիրուն աղջիկը և ինձ քարշ տվեց դեպի ջուկայինները: Մտածեցի, որ կամ նա պատրաստվում է ուտել ինձ, կամ ուզում է ամուսնացնել իր հետ: Բայց թե երկուսից որն էր՝ չկարողացա հասկանալ: Եվ ահա, մինչդեռ ես կպարզեի, ինչ ես կարծում, ի՞նչ արեց այդ չքնաղ արարածը: Ինչ-որ հույժ անվայելուչ խոսք ասավ իմ բեղի մասին և ատրճանակով սպառնալով, քշեց ետ, դեպի նավակը: Իսկ այդտեղ ասաց, որ անմիջապես հեռանամ և այլևս երբեք չվերադառնամ կամ նման մի բան:

— Իսկ դա որտե՞ղ պատահեց,— հարցրեց Յենրին՝ ամբողջովին լսողություն դարձած:

Սակայն իր չարաբաստիկ արկածի հիշողությամբ տարված՝ Ֆրենսիսը չնկատեց զրուցակցի արտակարգ հետաքրքրությունը:

— Ահա այնտեղ, Չիրիկվիի հակադիր կողմը,— պատասխանեց նա:— Ես հետո իմացա, որ դա Սոլանո ընտանիքի տոհմական կավածքն է: Այ թե մարդի՛կ ես, իսկական վառող: Բայց ես դեռ ամեն բան չեմ պատմել քեզ: Լսիր: Ուրեմն, սկզբում այդ աղջիկն ինձ քարշ տվեց թփուտների մեջ ու վիրավորական ձևով արտահայտվեց բեղիս մասին, հետո, ատրճանակով սպառնալով, ետ դարձրեց նավակի մոտ: Իսկ վերջում ուզեց իմանալ, թե ինչո՞ւ իրեն չհամբուրեցի: Չէ, չէ, դու այսպիսի բան լսած կա՞ս...

— Եվ դու նրան համբուրեցի՞ր,— հարցրեց Յենրին, և նրա ձեռքն ակամայից բռունցքվեց:

— Իսկ ուրիշ ի՞նչ էր մտում այդ անծանոթ երկրում հայտնված օտարականին: Աղջիկը չափազանց լավիկն էր...

Հաջորդ վայրկյանին Ֆրենսիսն արդեն ոտքի վրա էր, և ձեռքով պաշտպանելով ծնոտը, հագիվ կարողացավ ետ վանել Յենրիի հզոր բռունցքի հարվածը:

— Ես... ես... ներիր, խնդրում եմ,— մրթմրթաց Յենրին, ծանրությամբ նստելով ծովային հին սևուկի վրա:— Ես ապուշ եմ, գիտեմ, բայց թող ինձ կախեն, եթե կարողանամ տանել այդ...

— Դե ահա, նորից,— հանդիմանությամբ ընդհատեց նրան Ֆրենսիսը:— Չէ, դու էլ ճիշտ նույնպիսի խելագար ես, ինչպես և բոլորն այս խելագար երկրում: Մեկ դու կապում ես գլխիս վերջը, մեկ էլ պատրաստ ես այդ նույն գլուխը թռցնել ուսերիցս: Ավելի լավ չես պահում քեզ այն աղջնակից, որը նախ համբուրեց ինձ, իսկ հետո ատրճանակը դեմ տվեց փորիս:

— Ճիշտ է: Հայհոյիր ինձ, տեղն է,— վիատությամբ ասաց Յենրին և անմիջապես էլ ակամա նորից բորբոքվեց:— Դե գոր՞ղը քեզ տանի, այսր դա Լեոնսիան է եղել:

— Հետո՞ ինչ, որ Լեոնսիան է: Կամ Մերսեդեսը: Կամ Դոլորեսը: Մի՞թե եթե տղան համբուրել է մի սիրունիկ աղջկա, այն էլ ատրճանակի սպառնալիքի տակ, դա իրավունք է տալիս կեղտոտ պարուսինե վարտիք հագած ինչ-որ ստահակի, որն ապրում է կղզի կոչվող մի աղբակույտում, թռցնել այդ տղայի գլուխը:

— Իսկ եթե այդ սիրունիկ աղջիկը նշանված է կեղտոտ պարուսիներ վարտիք հագած ստահակի հե՛տ...

— Չի՛ կարող պատահել...— հուզմունքով ընդհատեց նրան Ֆրենսիսը:

— Այո,— շարունակեց Յենրին,— և այդ քրոջոտի համար այնքան էլ հաճելի չէ լսել, որ նրա հարսնացուն համբուրվել է մի ստահակի հետ, որին ինչ-որ կասկածելի ջամայական նեգրի շխունայից իջնելուց առաջ երբեք չէր տեսել:

— Ուրեմն, նա ինձ քո տեղն է ընդունել,— մտածկոտ խոսեց Ֆրենսիսը, սկսելով հասկանալ, թե այդ ամենն ինչպես էր տեղի ունեցել:— Ես քեզ չեմ մեղադրում, որ տաքացար. չնայած պիտի ասեմ, որ գարշելի բնավորություն ունես: Երեկ, օրինակ, դու պատրաստվում էիր իմ ականջները կտրել, այնպես չէ՛:

— Դե, քո բնավորությունն էլ մի բանի նման չէ, սիրելի Ֆրենսիս: Երբ ես քեզ գետին զցեցի, ինչպես էիր պնդում, որ ականջներդ կտրեմ, հա՛-հա՛:

Եվ երկուսն էլ ուրախ քրքջացին:

— Դա ծերունի Մորգանի բնավորությունն է,— ասաց Յենրին:— Ըստ ավանդության նա սատանայի պես կռվազան է եղել:

— Դե, երևի ոչ ավելի կռվազան, քան այդ Սոլանոները, որոնց հետ դու պատրաստվում ես ազգակցություն հաստատել: Ախր այն ժամանակ համարյա ողջ ընտանիքը դուրս թափվեց ծովափ և, միևնչյե՛ն ես կթիավարելի դեպի շխունա, քիչ մնաց ծակծկեին ինձ: Իսկ քո Լեոնսիան քաշեց իր թնդանոթը և սպառնաց երկարամորուքին, երևի հորը, որ կսպանի նրան, եթե նա չդադարի ինձ վրա կրակել:

— Գրագ կգամ, որ դա իրոք նրա հայրն է եղել, ծերունի Էնրիկոն ինքը,— բացականչեց Յենրին:— Իսկ մնացածները նրա եղբայրներն են:

— Սքանչելի թեփամորթներ,— ասաց Ֆրենսիսը:— Չե՛ս վախենում արդյոք, որ քո կյանքը հույժ միապաղաղ կլիսի, երբ ամուսնանաս ու մտնես այդ խաղաղ ու հեզ հարկի տակ:— Սակայն նա իսկույն էլ խոսքը փոխեց:— Լսիր, Յենրի, բայց քանի որ նրանք ինձ քո տեղն ընդունեցին, էլ ինչո՞ւ էին ուզում քո գլուխն ուտել: Երևի նորից մորգանյան կռվարար բնավորությունն է մեղավոր: Ինչո՞վ ես այդպես գրգռել ապագա կնոջդ հարազատներին:

Յենրին մի բոպե նայեց նրան, ասես որոշելով՝ ասե՛լ թե չասել, և վերջապես պատասխանեց.

— Դե ինչ, քեզ կարող եմ ասել: Դա մի շատ զգվելի պատմություն է, ու երևի ամեն ինչում մեղավոր է իմ բնավորությունը: Ես կռվեցի նրա հորեղբոր հետ: Դա հորեղբայրներից ամենափոքրն էր. . .

— Է՛ր,— բազմանշանակ ընդհատեց նրան Ֆրենսիսը:

— Արդեն ասացի, որ էր,— շարունակեց Յենրին, գլխի շարժումով հաստատելով իր խոսքերը:— Նա արդեն ողջ չէ: Անունն էր Ալֆարո, և բնավորությունը նույնպես ընտիր էր: Նրանք բոլորն իրենց համարում են իսպանական կոնկիստադորների /Կոնկիստադորներ— իսպանական նվաճողներ, որոնք XV դարի վերջում և XVI դարում զավթեցին Հարավային և Կենտրոնական Ամերիկայի վիթխարի տերիտորիաներ:/ հետևորդներն ու դրա համար էլ հնդուհավերի պես փքվում են: Ալֆարոն կարողություն էր դիզել ընտիր փայտանյութի վաճառքից և հենց այդ ժամանակ ծովափին կամպեշկյան ծառի մեծ ագարակ էր ստեղծել: Մի անգամ ես նրա հետ կռվեցի: Դա պատահեց Սան-Անտոնիո փոքրիկ քաղաքում: Միգուցե դա թյուրիմացություն էր, չնայած մինչև այժմ էլ ես գտնում եմ, որ նա անիրավացի էր: Նա միշտ էլ կռվի առիթ էր փնտրում ինձ հետ. հասկանում ես, չէր ուզում, որ ես ամուսնանամ Լեոնսիայի հետ:

Այ թե գործ բացվե՛ց: Ամեն ինչ սկսվեց պուկերիայում /Պուկերիա— գինետուն:/: Ալֆարոն մեսկալ /Մեսկալ—մեքսիկական օղի:/ էր խմում այնտեղ ու երևի չափն անցել էր: Նա լրջորեն վիրավորեց ինձ: Մեզ բաժանեցին ու զենքեր վերցրին. բայց նախքան հեռանալը երդվեցինք սպանել իրար: Եվ ամբողջ դժբախտությունն այն է, որ մեր կռվի ժամանակ ներկա էին մի քսան մարդ, ու բոլորն էլ լսեցին, թե մենք ինչպես սպառնացինք իրար:

Երկու ժամ հետո, հենց այն պահին, երբ կոմիսարը երկու ոստիկանի հետ անցնում էր մի խուլ նրբանցքով, ես խոնարհվեցի Ալֆարոյի դիակի վրա. ինչ-որ մեկը դանակը խրել էր նրա մեջքը, և ես դեպի ափ գնալիս, դիակին դեմ առնելով, սայթաքեցի: Այդ վիճակում ի՞նչ կարելի էր ասել: Ոչինչ: Բոլորը գիտեին մեր գժտության ու վրեժխնդրության սպառնալիքի մասին: Եվ ահա երկու ժամ էլ չանցած ինձ բռնում էին հանցանքի մեջ, Ալֆարոյի դեռևս չսառած դիակի մոտ:

Այդ օրվանից ես այլևս ոչ մի անգամ Սան-Անտոնիոյում չեմ եղել. առանց իզուր ժամանակ կորցնելու՝ վայրկենապես փախա: Ալֆարոն խիստ ճանաչված մարդ էր՝ նա կտրիճ երիտասարդ էր, իսկ ամբողջ միշտ սիրում է այդպիսիներին: Ինձ նույնիսկ չէին դատի, այլ տեղնուտեղը աղիքներս դուրս կթափեին. այնպես որ բարվոք համարեցի անհետանալ, որքան կարելի է շուտ— pronto!

Յետո, երբ արդեն Բոկաս-դել-Թորոյում էի, Լեոնսիայի բանբերը գտավ ինձ ու հանձնեց նշանտուքի ադամանդե մատանին. նա վերադարձնում էր իմ նվերը: Այժմ դու ամեն ինչ գիտես: Այդ պատմությունից հետո ամեն բան զգվեցրեց ինձ: Այն կողմերը վերադառնալ սիրտ չարի, իմանալով, որ Սոլանո ընտանիքը, նաև այնտեղի բնակիչները, ծարավի են իմ արյան. ահա ես էլ եկա այստեղ մի քիչ ճգնափորի կյանքով ապրելու և Մորգանի գանձերը փնտրելու համար. . . Սակայն շատ կուզենայի իմանալ, թե ով էր դանակը Ալֆարոյի մեջքը խրել. այն ժամանակ մենք անկասկած կամուսնանայինք: Իսկ այժմ կարող եմ խոստովանել քեզ, որ Ալֆարոն այնքան էլ վատ մարդ չէր, չնայած անասելի տաքարյուն էր:

— Ցերեկվա պես պարզ է,— մրթմրթաց Ֆրենսիսը:— Այժմ հասկանում եմ, թե ինչու էին նրա հայրն ու եղբայրներն ուզում ծակծկել ինձ. . . Իսկապես, որքան շատ եմ նայում քեզ, այնքան ավելի եմ համոզվում, որ մենք նման ենք իրար, ինչպես սիսեռի երկու հատիկ, եթե չհաշվենք բեղս. . .

— Ահա,— Յենրին ծալեց թևքը, և Ֆրենսիսը տեսավ նրա ձախ թևի վրա ճերմակին տվող երկար ու բարակ սափն:— Սա մանկությունից է մնացել. պոկվեցի հողմաղացից և ապակե տանիքի միջով ուղղակի ներս ընկա ջերմից:

— Այժմ լսիր, թե ինչ եմ ասում,— սկսեց Ֆրենսիսը, և նրա դեմքը շողաց գլխում ծագած մտքից:— Մեկնումեկը պետք է քեզ դուրս քաշի այդ կեղտոտ պատմությունից: Եվ այդ բանը կանի ոչ այլ ոք, եթե ոչ Ֆրենսիսը՝ «Մորգան և Մորգան» ֆիրմայի քո գործընկերը: Կարող ես մնալ այստեղ կամ մեկնել Ցուլի կղզին՝ հետախուզություն սկսելու, իսկ ես կվերադառնամ այնտեղ և ամեն ինչ կբացատրեմ Լեոնսիային ու նրա հարազատներին. . .

— Եթե նրանք քեզ ավելի շուտ չթրխկացնեն, նախքան կբացատրես, որ դու դու ես, և ոչ թե՛ ես,— դառնությամբ նկատեց Յենրին:— Սոլանոների դժբախտությունն էլ հենց այդ է: Նախ կրակում են, ապա միայն խոսում: Նրանք կարող են ականջ դնել բանականությանը միայն այն ժամանակ, երբ հակառակորդն արդեն կենդանի չէ:

— Բայց և այնպես բախտ կփորձեմ, եղբայրս,— հավաստիացրեց Ֆրենսիսը՝ ոգևորված Յենրիի ու նրա սիրածի միջև եղած տխուր թյուրիմացությունը հարթելու գաղափարով:

Սակայն նա ինքն էլ էր զարմանում, թե ինչպիսի զգացմունքով է հիշում աղջկան: Անասելիորեն ցավում էր, որ այդ հմայիչ արարածը իրավամբ պատկանում է մի մարդու, որն այնքան նման է իրեն: Ֆրենսիսը նորից տեսավ աղջկան, ինչպես որ կար այն թուպին ծովափին, երբ իրարամերձ զգացմունքներից ալեկոծված, մերթ բոցավառվում էր սիրով ու մղվում դեպի նա, մերթ զայրույթով ու արհամարհանքով հարձակվում նրա վրա: Ֆրենսիսն ականա հառաչեց:

— Այդ ի՞նչ հառաչանք է,— ծաղրանքով հարցրեց Յենրին:

— Լեոնսիան հազվադեպ գեղեցիկ աղջիկ է,— անկեղծորեն խոստովանեց Ֆրենսիսը:— Սակայն ինչ ուզում է ինի, նա քունն է, և ես կաշխատեմ, որ քեզ բաժին հասնի: Ո՛ւր է այն մատանին, որ նա վերադարձրել է: Եթե ես սա քո անունից չդնեմ Լեոնսիայի մատը և մի շաբաթ հետո բարի լուրերով այստեղ չվերադառնամ, կարող ես ոչ միայն ականջներս կտրել, այլև բեղս:

Արդեն մի ժամ հետո «Անջելիկայից» Յորթի ափին մոտեցավ մի նավակ, որ նավապետ Թրեֆեզենն էր ուղարկել ի պատասխան ափից տրված ազդանշանի: Երիտասարդներն սկսեցին հրաժեշտ տալ:

— Եվս երկու հանգամանք, Ֆրենսիս: Առաջին, մոռացա քեզ ասել, որ Լեոնսիան բոլորովին էլ Սոլանո չէ, չնայած ինքն այդ բանը չգիտե: Այդ մասին Ալֆարոն ասաց ինձ: Լեոնսիան հոգեգավակ է, բայց ծերունի Էնրիկոն պարզապես աղոթում է նրա համար, չնայած աղջկա երակներում իր արյունը չի հոսում, և նրանք նույնիսկ նույն ազգության չեն պատկանում: Ալֆարոն երբեք ինձ մանրամասնությունները չի պատմել, միայն ասել է, որ նա իսպանուհի չէ: Ես մինչև իսկ չգիտեմ անգլուհի՞ է նա, թե ամերիկուհի: Բավական կարգին անգլերեն է խոսում, չնայած այդ լեզուն ուսումնասիրել է վանքում:

Բանն այն է, որ Էնրիկոն որդեգրել է Լեոնսիային, երբ սա բոլորովին պստիկ երեխա է եղել: Նրա մտքով իսկ չի անցնում, որ Էնրիկոն իր հայրը չէ:

— Չարմանալի չէ, որ նա այնպիսի ատելությամբ ու արհամարհանքով էր վերաբերվում ինձ,— քրքջաց Ֆրենսիսը:— Ախր նա ինձ քո տեղն էր ընդունել. մինչդեռ համոզված է եղել ու մինչև հիմա էլ համոզված է, որ դու ես դանակը խրել նրա հարազատ հորեղբոր մեջքը:

Չենրին գլխով արավ ու շարունակեց ընդհատված պատմությունը.

— Երկրորդ, ուզում եմ քեզ նախազգուշացնել մի խիստ կարևոր հանգամանքի մասին: Խոսքը վերաբերում է այստեղի օրենքներին, ավելի ճիշտ այդ օրենքների բացակայությանը: Աստծու կողմից մոռացված այս ծակուռում օրենքը շուռ են տալիս, ինչպես կամենան: Պանաման հեռու է, իսկ այդ գավառի, նահանգի կամ ով գիտե ինչի պետք մի ծերուկ է, իսկը քնկոտ Սիլեն: Դրա փոխարեն Սան Անտոնիոյի ոստիկանապետը մի մարդ է, որի հետ պետք է զգույշ լինես: Նա այս ետ ընկած անկյունում թագավոր է ու աստված, առաջնակարգ սրիկայի մեկը՝ ով-ով, իսկ ես այդ բանը լավ գիտեմ: Կաշառակերը նրա համար թույլ խոսք է, նա դաժան է ու արյունարբու ժանտաքիսի պես: Մարդ գլխատելը նրա համար ամենամեծ բավականությունն է, կախաղան հանելը պաշտում է: Չգուշացիր նրանից և աչքերդ չորս բաց արա. . . Դե, լավ, ցտեսություն: Յուլի կղզում գտածիս կեսը քոնն է... Տես, հա, աշխատիր մատանին դնել Լեոնսիայի մատը:

Անցավ երկու օր: Երբ մետիս-նավապետը հետախուզություն կատարեց և լուր բերեց, թե Սոլանո ընտանիքի ողջ տղամարդկային կեսը բացակայում է, Ֆրենսիսն իջավ ափ, ուր առաջին անգամ հանդիպել էր Լեոնսիային: Այս անգամ մոտերքում ոչ արծաթե ատրճանակներով զինված աղջիկներ էին երևում, ոչ էլ հրացանավոր մարդիկ: Խաղաղություն էր չորս կողմը, և միայն մի քրոջու հնդիկ տղա նստել էր ջրափին պղնձադրամը տեսնելով, նա հաճույքով համաձայնեց երկտողը մեծ հասիենդայի շահել սենյորիտային տանել: Ֆրենսիսը ծոցատետրից մի թերթիկ պոկեց ու սկսեց գրել. «Ես այն մարդն եմ, որին Դուք ընդունեցիք Չենրի Մորգանի տեղը. ես նրա կողմից հանձնարարությունն ունեմ Ձեզ. . . », բնավ չկասկածելով, թե ինչպիսի իրադարձություններ են փվելու իր գլխին, և ոչ պակաս արագությամբ, քան առաջին անգամ այս կողմերն այցելելիս:

Եթե նրա մտքով անցներ նայել այն ժայռի ելուստի հետևը, որին մեջքով հենվել էր՝ Լեոնսիային այդ ուղերձը գրելիս, աչքերի առաջ մի ապշեցուցիչ տեսարան կբացվեր. ինքը Լեոնսիան լողանալուց հետո դուրս էր գալիս ջրից, ինչպես ծովերի թագուհին: Բայց Ֆրենսիսը շարունակում էր հանգիստ գրել, իսկ փոքրիկը նրանից ոչ պակաս կլանված էր այդ արարողությամբ, այնպես որ Լեոնսիան, դուրս գալով ժայռի հետևից, առաջինն ինքը նկատեց նրան: Չարմանքի ճիչը զսպելով, նա շուռ եկավ, և առանց ճամփին նայելու, վազելով նետվեց ջունգլիների մացառուտների մեջ:

Գրեթե նույն րոպեին Ֆրենսիսն իմացավ, որ Լեոնսիան մոտերքում է, երբ ականջին հասավ աղջկա լեղապատառ ճիչը: Թուղթն ու մատիտը շարտելով ավազին, նա վազեց կանչի վրա ու ընդհարվեց թաց, կիսահագնված աղջկան, որը լեղաճաք ետ էր փախչում, աշխատելով ազատվել ինչ-որ բանից: Գլխի չընկնելով, որ Ֆրենսիսը վազել եկել է իրեն օգնելու, Լեոնսիան նորից ճչաց:

Նա նետվեց մի կողմի վրա, այնպես որ քիչ մնաց ցած գլորեր հնդիկ տղային, և հասնելով ավազոտ ծանծաղուտին, կանգ առավ: Վախից նրա դեմքը քաթանի պես ճերմակել էր: Միայն այդ ժամանակ նա շուռ եկավ ու տեսավ, որ իր դեմ ոչ թե նոր թշնամի է կանգնած, այլ փրկիչ:

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հուզված հարցրեց Ֆրենսիսը:— Վնասվե՞լ եք: Ի՞նչ է պատահել:

Աղջիկը ցույց տվեց մերկ ծունկը, որի վրա կարմրին էին տալիս արյան երկու պստիկ կաթիլներ. դրանք դուրս էին ցայտել երկու հազիվ նկատելի վերքերից:

— Իժ էր,— ասաց աղջիկը:— Նրա խայթոցը մահացու է: Հինգ րոպեից հետո կմեռնեմ, և ես ուրախ եմ դրա համար, շատ ուրախ եմ. այն ժամանակ գոնե դուք այլևս իմ սիրտը չեք տանջի:

Եվ Լեոնսիան, մատը կշտամբանքով պարզելով նրան, ասես ուզում էր արտահայտել այն ամենը, ինչ մտածում էր նրա մասին, բայց ուժերը դավաճանեցին, և նա ուշաթափ ընկավ ավազների վրա:

Ֆրենսիսը լսել էր միայն Կենտրոնական Ամերիկայի օձերի մասին, և ինչ որ լսել էր, զարհուրելի էր. ասում էին, որ քսան դյույմանոց ինչ-որ պստիկ օձի խայթոցից անգամ ջորիներն ու շները հիկոտաաը րոպեից հետո սատկում են ահավոր տանջանքներով: «Չարմանալի ոչինչ չկա, որ սա գիտակցությունը կորցրեց,— մտածեց Ֆրենսիսը,— չէ որ այդ թույնը խիստ արագ է ներգործում, և, ըստ երևույթին, արդեն սկսել է իր աշխատանքը»: Թե ինչ օգնություն պետք է ցույց տալ օձի կծածին՝ Ֆրենսիսը նույնպես լսել էր միայն: Բայց նա վայրկենապես հիշեց՝ անհրաժեշտ է խայթոցից վերև ոտքը կապել՝ արյան շրջանառությունը դադարեցնելու և թույլ չտալու համար, որ թույնը հասնի սրտին:

Նա թաշկինակը հանեց, ծնկից վերև կապեց Լեոնսիայի ոտքը, հանգույցի մեջ մտցրեց ափին ընկած ու հավանորեն ալիքների կողմից ափ նետված կարճ փայտի կտորը և պինդ-պինդ ոլորեց: Ապա, գործելով նորից լսածի համաձայն, արագ բացեց գրչահատը, սայրը ախտահանելու համար շիկացրեց մի քանի լուցկիով և զգույշ բայց վճռական շարժումով մի քանի կտրվածք արավ այնտեղ, ուր երևում էին օձի ատամների հետքերը:

Ֆրենսիսն անասելի վախեցած էր. նա գործում էր տենդագին շտապողականությամբ, րոպե առ րոպե սպասելով, թե ահա ուր որ է մահվան սարսափելի նշանները երևան կզան իր առջև պառկած այդ սքանչելի արարածի վրա: Նա լսել էր, որ օձի խայթոցից մարմինն արագ ուռչում է անասելի չափերով: Դեռևս կտրվածքները չվերջացրած, արագ որոշեց, թե հետո ինչ է անելու: Նախ և առաջ հնարավորին չափ կծծի ամբողջ թույնը, իսկ հետո մի սիգարետ կկայցնի և վառվող ծայրով կայրի վերքերը:

Դեռ Ֆրենսիսը դանակով երկու խաչածև կտրվածք չէր արել, որ աղջիկն անհանգիստ շարժվեց տեղում:

— Հանգիստ պառկեցեք,— հրամայեց Ֆրենսիսը:

Բայց Լեոնսիան նստեց հենց այն րոպեին, երբ նա կռացավ, որպեսզի թույնը վերքից դուրս ծծի: Նրա խոսքի պատասխանը եղավ հնչուն մի ապտակ, որ հասցրեց նրան Լեոնսիայի փոքրիկ ձեռքը:

Այդ պահին ջունգլիներից պարելով դուրս թռավ հնդիկ մի տղա, ձեռքին թափահարելով սատկած մի օձ:

— Լաբարրի՛, լաբարրի՛,— բղավում էր նա՝ հիացմունքից շնչասպառ լինելով:

Այդ լսելով, Ֆրենսիսը մտածեց, որ բանը շատ վատ է:

— Հանգիստ պառկեցեք,— խստությամբ կրկնեց նա:— Ոչ մի վայրկյան չի կարելի կորցնել:

Բայց Լեոնսիան հայացքը չէր հեռացնում սատկած օձից: Հոգում ակնհայտ թեթևություն զգաց, սակայն Ֆրենսիսը չնկատեց այդ. նա նորից կռացավ, պատրաստվելով բոլոր կանոններով բուժման անցնելու:

— Դե, ինչպե՛ս եք համարձակվում,— բղավեց աղջիկը նրա վրա:— Ախր դա եղած-չեղած լաբարրի է, այն էլ ոչ թե մեծ օձ, այլ ձագ. նրա կծածն անվնաս է: Իսկ ես կարծում էի, թե իժ է: Փոքրիկ լաբարրիները շատ նման են իժերին:

Չգալով, որ ոտքը թմրել է,— քուղը, որով ոտքը կապված էր, համարյա կանգնեցրել էր արյան շրջանառությունը,— Լեոնսիան նայեց ու տեսավ ծնկից վերև փաթաթված Ֆրենսիսի թաշկինակը:

— Այս ի՛նչ եք արել,— վառ կարմրությունը պատեց նրա դեմքը:— Ախր սա ընդամենը լաբարրիի ձագուկ է,— հանդիմանությամբ կրկնեց նա:

— Դուք ինքներդ ասացիք, որ իժ Է,— առարկեց Ֆրենսիսը:

Աղջիկը դեմքը թաքցրեց ափերի մեջ, բայց շփոթությունը թաքցնել չկարողացավ. ականջներն այրվում էին: Ֆրենսիսը կարող էր երդվել, որ նա ծիծաղում է,— եթե դա, իհարկե, հիստերիկա չէր: Այստեղ միայն նա հասկացավ, թե որքան դժվար է լինելու հանձն առած խնդրի կենսագործումը՝ մի ուրիշ տղամարդու մատանին հազցնել Լեոնսիայի մատը: Բայց հաստատ որոշեց չենթարկվել նրա հմայքներին:

— Դե, պետք է ենթադրել, որ այժմ ձեր ազգականները կծակծկեն ինձ նրա համար, որ ես չեմ կարողանում լաբարրին իժից տարբերել,— դառնությամբ նկատեց նա:— Կարող եք կանչել ազարակի բանվորներից մեկնումեկին, որպեսզի կատարի այդ առաքելությունը: Կամ գուցե կուզենաք սեփական ձեռքով սպանել ինձ:

Բայց, ըստ երևույթին, աղջիկը չստացավ նրան. թեթև ու նազելիորեն ցատկելով ոտքի, ինչպես և պետք էր սպասել այդքան անթերի կազմվածք ունեցող արարածից, նա սկսեց ամբողջ ուժով ոտքը խփել ավազին:

— Ոտքս թմրել է,— ծիծաղով բացատրեց նա՝ այլևս դեմքը չթաքցնելով նրանից:

— Դուք պարզապես ամոթալի կերպով եք պահում ձեզ,— գրգռելով նրան, նկատեց Ֆրենսիսը:— Չէ որ դուք գտնում եք, որ ես եմ սպանել ձեր հորեղբորը:

Լեոնսիան մեկեն դադարեց ծիծաղել, և արյունը ետ գնաց նրա դեմքից: Նա ոչինչ չպատասխանեց, միայն կռացավ փորձեց զայրույթից դողացող մատներով թաշկինակը արձակել, ասես այն այրում էր իր ոտքը:

— Թույլ տվեք օգնել ձեզ,— սիրալիրությամբ առաջարկեց Ֆրենսիսը:

— Դուք զազան եք,— գրգռված բղավեց նա:— Զաշվեք մի կողմ: Ձեր ստվերն ընկնում է ինձ վրա:

— Այ, հիմա դուք միանգամայն հմայիչ եք, պարզապես սքանչելի,— շարունակեց ծաղրել Ֆրենսիսը, միաժամանակ դժվարությամբ խեղդելով նրան իր գիրկն առնելու տիրական ցանկությունը:— Այժմ դուք ճիշտ և ճիշտ այնպիսին եք, ինչպես որ ես ձեզ առաջին անգամ տեսա ծովափին. դուք մեկ հանդիմանում էիք ինձ, թե ինչու չեմ համբուրում ձեզ, մեկ ինքներդ էիք սկսում համբուրել ինձ,— այո, այո, դուք համբուրել եք ինձ,— իսկ հաջորդ վայրկյանին արդեն սպառնում էիք ձեր այն արծաթե խաղալիքով ընդմիջտ փչացնել իմ մարսողությունը: Ոչ, դուք այն պահից ի վեր մազաչափ անգամ չեք փոխվել: Մնացել եք միշտ նույն հրաբուխը, որ կոչվում է Լեոնսիա: Ավելի լավ է թույլ տվեք թաշկինակն արձակել. Մի՞թե չեք տեսնում, որ հանգույցն ամուր ձգված է: Ձեր մատիկները երբեք գլուխ չեն հանի դրանից:

Լեոնսիան անխոս կատաղությամբ ոտքը խփեց գետնին:

— Դեռ բախտս բերեց, որ լողանալու գնալիս դուք ձեր խաղալիքը հետներդ չեք վերցնում,— շարունակեց ծաղրել նրան Ֆրենսիսը,— թե չէ հարկ կլիներ այստեղ, ծովափին, կազմակերպել մի հմայիչ երիտասարդի թաղումը, որի մտադրությունները ձեր նկատմամբ միշտ էլ աչքի են ընկել իրենց ազնվությամբ:

Այդ ռոպեին վազելով նրանց մոտեցավ հնդիկ տղան՝ Լեոնսիայի լողակոստյունը ձեռքին. աղջիկը խլեց այն ու արագ-արագ հագավ, հետո միայն, տղայի օգնությամբ, նորից սկսեց հանգույցն արձակել: Երբ թաշկինակն արձակվեց, նա այն իրենից հեռու շարտեց մի այնպիսի տեսքով, ասես դա թունավոր օձ էր:

— Թո՛ւհ, զարշանք,— բացականչեց նա, որպեսզի խայթի Ֆրենսիսին:

Սակայն Ֆրենսիսը, հոգու խորքում շարունակելով պայքարել ինքն իր դեմ, որպեսզի չենթարկվի նրա հմայքին, դանդաղ օրորեց գլուխը:

— Դա ձեզ չի օգնի, Լեոնսիա,— նկատեց նա:— Ես այնպիսի մի նշան եմ թողել ձեզ վրա, որը երբեք չի ջնջվի:— Նա ձեռքը դիպրեց նրա ծնկին արված կտրվածքներին ու ծիծաղեց:

— Գազանի նշան,— նետեց աղջիկը ուսի վրայով ու շուռ եկավ գնալու:— Նախագգուշացնում եմ ձեզ, միսոր Զենրի Մորգան, որ այլևս չերևաք իմ ճամփին:

Բայց Ֆրենսիսը մի քայլ արավ ու փակեց նրա ճանապարհը:

— Դե, իսկ այժմ խոսենք գործնականորեն, միսս Սոլանո,— տոնը փոխելով, ասաց նա:— Եվ դուք կլսեք ինձ: Կարող եք աչքներդ փայլեցնել որքան ուզեք, բայց խնդրում եմ չընդհատել ինձ:— Նա կռացավ ու վերցրեց այն երկտողը, որ սկսել էր գրել:— Ես արդեն պատրաստվում էի այս տղայի միջոցով սա ուղարկել ձեզ, երբ դուք ճչացիք: Վերցրեք ու կարդացեք՝ այս թուղթը ձեզ չի կծի: Չե՞ որ սա թունավոր օձ չէ:

Չնայած Լեոնսիան վճռականորեն հրաժարվեց երկտողը վերցնելուց, սակայն ակամայից աչքերը սահեցրեց առաջին տողի վրայով:

«Ես այն մարդն եմ, որին Դուք ընդունեցիք Զենրի Մորգանի տեղը. . . »:

Աղջիկը նայեց իր խոսակցին: Նրա վախվորած աչքերից նկատելի էր, որ նա շատ բաներ չի հասկանում, բայց շատ բաների մասին արդեն գլխի է ընկնում:

— Ազնիվ խոսք,— լրջորեն ասաց երիտասարդը:

— Դուք. . . Զենրին չե՞ք,— կմկմալով հարցրեց նա:

— Ոչ, ես Զենրին չեմ: Միգուցե այնուամենայնիվ կվերցնեք ու կկարդա՞ք այս երկտողը:

Նա հնազանդվեց ու սկսեց կարդալ, իսկ երիտասարդը առանց աչքը կտրելու դիտում էր այդ խարտիչահեր աղջկա կիզիչ արևից ոսկեգօծված փայլատ դեմքը, արև, որը ոչ միայն այրում էր մարմինը, այլև բորբոքում արյունը, գուցե և ընդհակառակը՝ հենց թե՛ արյունն էր Լեոնսիայի մաշկին այդ հրաշալի ոսկեգույն-փայլատ երանգը տալիս:

Ֆրենսիսն ասես երազում լիներ. հանկարծ հասկացավ, որ ուղղակի նայում է նրա վախվորած, հարցական թավշյա-շագանակագույն աչքերի մեջ:

— Իսկ այս գրության տակ ո՞ւմ ստորագրությունը պետք է լիներ,— արդեն երկրորդ անգամ հարցրեց Լեոնսիան:

Զարկադրելով իրեն ուշքի գալ՝ երիտասարդը գլուխ տվեց:

— Բայց անո՞ւնը: Ինչպե՞ս է ձեր անունը:

— Մորգան, Ֆրենսիս Մորգան: Ինչպես արդեն երկտողում բացատրել եմ, ես ու Զենրին հեռավոր ազգականներ ենք, ծոռնեղբայրներ կամ դրա նման մի բան:

Ի զարմանս Ֆրենսիսի, հանկարծ աղջկա աչքերում կասկած հայտնվեց և հայացքը նորից բռնկվեց բարկությամբ:

— Զենրի,— կշտամբանքով ասաց նա,— ախր սա խաբեություն է, սատանայական խորամանկություն: Դուք պարզապես փորձում եք խաղ խաղալ ինձ հետ: Իհարկե, դուք Զենրին եք:

Ֆրենսիսը մատնացույց արեց իր բեղը:

— Դուք այն ժամանակից ի վեր չեք սափրել այն,— չնահանջեց նա:

Երիտասարդը թևքը քշտեց և ցույց տվեց իր ձախ ձեռքը դաստակից մինչև արմունկը: Բայց աղջիկը միայն տարակուսանքով նայում էր նրան, ակներևաբար չհասկանալով, թե նա դրանով ինչ է ուզում ապացուցել:

— Դուք հիշո՞ւմ եք սպին,— հարցրեց նա աղջկան:

Սա գլխով արեց:

— Այդ դեպքում փորձեցեք գտնել:

Աղջիկը խոնարհվեց, հայացքը սահեցրեց նրա ձեռքի վրայով դանդաղորեն տարուբերեց գլուխը:

— Ես. . . — կակազելով խոսեց նա,— ես խնդրում եմ ներել ինձ: Սա ահավոր սխալ է: Պատկերացնել միայն, թե ես. . . Թե ես ինչպես եմ վարվել ձեզ հետ:

— Դուք ինձ պարզապես աստվածային մի համբույր,— դպրոցականի չարածճիւղայամբ նկատեց Ֆրենսիսը:

Բայց աղջիկը հիշեց քիչ առաջ պատահած դեպքը, նայեց իր ծնկին և, ինչպես երիտասարդին թվաց, զսպեց իր հմայիչ ծիծաղը:

— Դուք ասացիք՝ Չենրիից հանձնարարություն՞ն ունեք,— հարցրեց նա, հանկարծ փոխելով խոսակցության թեման:— Եվ որ նա անմե՞ղ է... Դա ճի՞շտ է: Ա՛խ, ինչպես կուզենայի հավատալ ձեզ:

— Ես խորապես համոզված եմ, որ Չենրին նույնքան քիչ է մեղավոր ձեր հորեղբոր սպանության մեջ, որքան և ես:

— Այդ դեպքում այլևս ոչինչ մի՛ ասեք, գոնե հիմա,— ուրախությամբ ընդհատեց նրան:— Ամենից առաջ ես պետք է ներողություն խնդրեմ ձեզանից, չնայած դուք չեք կարող ժխտել, որ ձեր որոշ բառերն ու արարքները պարզապես վրդովեցուցիչ էին: Եվ դուք իրավունք չունեիք համբուրելու ինձ:

— Եթե հիշում եք,— առարկեց նա,— ես այդ արի ատրճանակի սպառնալիքի տակ: Հանկարծ ու դուք խփեիք ինձ, եթե ես ձեզ չհամբուրեի:

— Օ՛հ, լռեցեք, լռեցեք,— աղաչեց նա:— Իսկ այժմ գնանք մեր տուն: Եվ ճամփին դուք ինձ կպատմեք Չենրիի մասին:

Նրա հայացքը պատահաբար ընկավ թաշկինակին, որը այնպիսի արհամարհանքով շարտել էր մի կողմ: Նա վազեց ու վերցրեց:

— Խեղճ, վիրավորված թաշկինակ, ինչպես վատ վարվեցին քեզ հետ,— քնքշությամբ շնչաց նա:— Զեզանից էլ պետք է ներողություն խնդրեմ: Ես ինքս կլվանամ քեզ ու... — Նա աչքերը բարձրացրեց Ֆրենսիսի վրա,— ու կվերադարձնեմ ձեզ, սը՛ր, թարմ ու մաքուր, ներծծված իմ սրտի շնորհակալությամբ...

— Ինձ նման զազանի՞ն,— հարցրեց նա:

— Ներեցեք, խնդրում եմ,— զղջմամբ ասաց աղջիկը:

— Եվ այժմ ինձ կթույլատրվի՞ ստվեր նետել ձեզ վրա:

— Այո՛, այո՛,— ուրախ բացականչեց նա:— Ահա: Տեսնո՞ւմ եք. ես կանգնել եմ ձեր ստվերում: Իսկ հիմա գնանք:

Ֆրենսիսը մի պետ նետեց ուրախացած հնդիկ տղային և ամենազվարթ տրամադրությամբ շուռ եկավ ու հետևեց Լեոնսիային այն արահետով, որը արևադարձային խիտ բուսականության միջով ձգվում էր դեպի սպիտակ հասիենդան:

Ավարես Թորեսը, որ նստած էր Սոլանոների հասիենդայի առջևում ընկած լայն դարավանդին, խիտ թփուտների միջից նկատեց ոլորապտույտ ծառուղով տանը մոտեցող ջահել զույգին: Եվ այն, ինչ նա տեսավ, ստիպեց նրան կրճտացնել աստամները և հույժ սխալ հետևություններ անել: Նա մտքում անեծքներ տեղաց ու զայրույթից նույնիսկ ջնկատեց, որ սիգարետը հանգել է:

Նա տեսավ աշխույժ խոսակցությամբ տարված Լեոնսիային և Ֆրենսիսին, որոնք ասես աշխարհում ամեն ինչ մոռացել էին: Նա տեսավ, թե Ֆրենսիսն ինչպես էր թափահարում ձեռքերը, տաքացած ինչ-որ բան ապացուցելով: Լեոնսիան նույնիսկ կանգ առավ՝ ակնհայտորեն ազդված իր ուղեկցի աղաչանքներից: Նա տեսավ,— Թորեսը դժվարությամբ կարողացավ հավատալ սեփական աչքերին,— թե ինչպես Ֆրենսիսը հանեց մատանին, իսկ Լեոնսիան երեսը շուռ տալով,

պարզեց ձախ ձեռքը, թույլ տալով այդ մատանին հազցնել իր մատնեմատին, որի վրա դնում են նշանադրության մատանին: Թորեսը կարող էր երդվել այդ բանում:

Իսկ իրականում Ֆրենսիսը պարզապես Յենրիի նվերը դրեց Լեոնսիայի մատը: Լեոնսիան, ինքն էլ չիմանալով ինչու, առանց հատուկ բավականության ետ ընդունեց այն:

Թորեսը հանգած սիգարետը շարտեց մի կողմ, ցասկոտությամբ ոլորեց բեղը, ասես դրանով ինչ-որ թեթևացում գգալով, և ուղղվեց երիտասարդներին ընդառաջ, որոնք արդեն բարձրանում էին դարավանդ: Նույնիսկ չպատասխանելով աղջկա բարևին՝ նա գայրույթից ծռված դեմքով հարձակվեց Ֆրենսիսի վրա:

— Անշուշտ, դժվար է սպասել, թե մարդասպանը կամաչի իր արարքից, բայց նա կարող էր գոնե պատշաճությունը պահպանել:

Ֆրենսիսը հեզնաբար ծիծաղեց:

— Դե ահա, նորից է սկսվում,— ասաց նա:— Եվս մի խելագար այս խելագար երկրում: Լեոնսիա, վերջին անգամ ես այս ջենթլմենին տեսել եմ Նյու Յորքում: Նա այն ժամանակ լի էր պատրաստակամությամբ՝ ինձ հետ մասնակցելու մի գործի: Իսկ այժմ նրան հանդիպում եմ այստեղ, և առաջին բանը, որ նա ասում է ինձ, այդ այն է, թե ես ստոր, անամոթ մարդասպան եմ:

— Սենյոր Թորես, դուք պետք է ներողություն խնդրեք,— միջամտեց վրդովված աղջիկը:— Սոլանոների տանն ընդունված չէ հյուրերին վիրավորել:

— Այդ դեպքում, որքան ես հասկանում եմ, Սոլանոների տանն ընդունված է, որպեսզի եկվոր արկածախնդիրներն սպանեն նրանց ընտանիքի անդամներին,— նույն տոնով ասաց նա:— Անշուշտ, չկա այնպիսի զոհողություն, որ հնարավոր չլիներ անել հանուն հյուրընկալության:

— Սթափվեցեք, սենյոր Թորես,— սիրալիրությամբ խորհուրդ տվեց Ֆրենսիսը:— Դուք չափն անցնում եք: Ես կասեմ, թե ինչու է ձեր սխալը: Դուք կարծում եք, թե ես Յենրի Մորգանն եմ: Մինչդեռ ես Ֆրենսիս Մորգանն եմ, և ձեզ հետ սրանից ոչ շատ առաջ գրուցում էի Նյու Յորքում, Ռիզակի աշխատասենյակում: Ահա ձեզ իմ ձեռքը, ստեղծված հանգամանքներում ես ուրիշ ներողություն չեմ պահանջի ձեզանից:

Առաջին պահին բոլորովին շշմեցված, որ կարող էր այսպես սխալվել, Թորեսը բռնեց Ֆրենսիսի պարզած ձեռքը և ներողություն խնդրեց նրանից ու Լեոնսիայից:

— Հիմա,— ասաց աղջիկը ուրախ ծիծաղելով ու ծափ տվեց՝ կանչելով սպասուհուն,— անհրաժեշտ է միտոր Մորգանին տեղավորել որևէ սենյակում, իսկ ես պետք է շորերս փոխեմ: Դրանից հետո, սենյոր Թորես, եթե դուք թույլ կտաք, մենք ձեզ կպատմենք Յենրիի մասին:

Լեոնսիան գնաց իր սենյակը: Ֆրենսիսը սիրունիկ, ջահել մետիս սպասուհու հետ նույնպես ուղղվեց դեպի իր համար առանձնացված սենյակը: Իսկ Թորեսն այդ ժամանակ որոշ չափով ուշքի եկավ: Բայց և այնպես նրա զարմանքին ու բարկությանը չափ չկար: Այդպես, ուրեմն, Լեոնսիան այդ եկվորին, բոլորովին անծանոթ այդ մարդուն, թույլ տվեց մատանի դնել իր մատը, ասես նա իր նշանածն է: Եվ Թորեսի ուղեղն սկսեց արագ ու կատաղորեն աշխատել: Լեոնսիան, որին նա հոգու խորքում անվանում էր իր անուրջների տիրուհին, հանկարծ մի ակնթարթում նշանվում է ինչ-որ օտարերկրացու, կյուրոքյան գրինգոյի հետ: Անհավատալի է, հրեշավոր:

Ծափ տալով՝ նա կարգադրեց պատրաստել կառքը, որ վարձել էր Սան Անտոնիոյում: Եվ երբ Ֆրենսիսը դուրս եկավ դարավանդ, որպեսզի ավելի հանգամանորեն խոսի նրա հետ ծերունի Մորգանի գանձի մասին, Թորեսն իր կառքով արդեն դարպասի մոտ էր:

Նախաճաշից հետո Ֆրենսիսը նկատեց, որ քամին ուղղությունը փոխեց ու փչում է ցամաքից, հետևաբար, կարող է արագ կտրել Չիրիկվի ծովալճակը և ափի մոտերքով հասնել Ցուլի ու Յորթի կղզիներին: Այրվելով Յենրիին շուտով ուրախացնելու ցանկությամբ, որ նրա մատանին նորից զարդարում է Լեոնսիայի մատը, նա վճռականորեն մերժեց աղջկա սիրալիր առաջարկությունը՝ գիշերել իրենց մոտ և ծանոթանալ Էնրիկո Սոլանոյի ու նրա որդիների հետ: Ֆրենսիսը մի պատճառ ևս ուներ շուտափույթ մեկնելու համար. նա չէր կարող ավելի երկար մնալ Լեոնսիայի

ընկերակցությամբ: Իհարկե, ոչ այն պատճառով, որ աղջիկը հաճելի չէր նրա համար, ընդհակառակը. նա կախարդում էր Ֆրենսիսին, այնպես ուժգին հրապուրում, որ սա սիրտ չարեց այլևս երկար մնալ այստեղ, ենթարկվելով աղջկա թուլանքներին ու հետզհետե անող սիրուն, եթե ուզում էր պահել պարուսիներ տաբատավոր մարդուն տված իր խոսքը, որն այժմ Յուլի կղզում գանձ էր որոնում:

Եվ այսպես, Ֆրենսիսը մեկնեց՝ տանելով իր հետ Լեոնսիայի նամակը Յենրիին: Հրաժեշտը կարճ եղավ: Ֆրենսիսը պոկվեց նրա ձեռքից ու հեռացավ ճակատամուտքի ծառուղով, այնպիսի արագությամբ խեղդելով հառաչանքը, որ Լեոնսիան նույնիսկ մտածեց՝ արդյոք չթվա՞ց իրեն: Աղջիկը նայում էր նրա հետևից, մինչև որ նա կորավ աչքից, ապա անորոշ տազնապով հայացքը դարձրեց մատանուն, որը փայլում էր մատին:

Հասնելով ափ՝ Ֆրենսիսը ազդանշան տվեց խարիսխ նետած «Անջելիկային», որպեսզի մակույկ ուղարկեն: Բայց դեռ նավաստիները մակույկը ջուր չէին իջեցրել, երբ անտառից դուրս թռան վեց ձիավորներ՝ ատրճանակները կապած գոտիներին, հրացանները թամբերին լայնակի դրած, և քառատրոփ սլացան դեպի նա: Երկուսն արշավում էին առջևից: Մեկին Ֆրենսիսը ճանաչեց՝ Թորենս էր: Մնացած չորսը մետիս էին՝ ելուզակային դեմքերով: Բոլորը հրացաններն առան ու նշան բռնեցին Ֆրենսիսին, այնպես որ նրան մնում էր միայն ենթարկվել անձանոթ պարագլխին: Սա բղավեց, որպեսզի Ֆրենսիսը ձեռքերը վեր բարձրացնի:

— Հապա մի մտածեք,— ասաց Ֆրենսիսը,— դեռ բոլորովին վերջերս,— կամ գուցե դա միլիոն տարի առաջ էր,— ես խաղանիշը մեկ դուրսով բրիջը ամենահուզիչ զվարճությունն էի համարում: Իսկ այստեղ, պարոնայք, հանկարծ հայտնվում եք դուք, ձիեր նստած, և իմ խեղճ մարմնին սպառնում ամեն տեսակ օտարածին մարմիններով: Այսպես, մի գուցե դուք ինձ կբացատրե՞ք, թե բանն ինչու՞մն է: Մի՞թե ինձ միշտ վիճակված է այս ափից հեռանալ կրակոցների նվազակցությամբ: Իսկապես, ի՞նչ եք ուզում իմ ականջները, թե՛ միայն բեռը հերիք է:

— Դու ինքդ ես հարկավոր մեզ,— պատասխանեց անձանոթ պարագլուխը: Նրա բեռը կատաղորեն ցցվեց, իսկ սև, արագաշարժ, պստիկ աչքերը կատաղորեն փայլատակեցին:

— Մի գուցե, ի սեր Ադամի ու Եվայի և բոլոր ջնջաղ թեփամորթների, ասեք ինձ, թե ով եք դուք:

— Սա հարգարժան սենյոր Մարիանո Վերքարա-ի-Իքոսն է, Սան Անտոնիոյի ոստիկանապետը, կարճ ասած՝ շեֆը,— պատասխանեց Թորենսը:

— Դե, կորա,— ծիծաղեց Ֆրենսիսը, հիշելով, թե Յենրին ինչպես էր նկարագրել այդ մարդուն:— Երևի դուք գտնում եք, որ այստեղ խարիսխ նետելով, ես խախտել եմ նավերի կանգառման որևէ կանոն կամ սանիտարական հանձնաժողովի կարգադրություն: Բայց այդ մասին դուք պետք է խոսեք իմ նավապետ Թրեֆեզենի՝ խիստ հարգարժան մի ջենթլմենի հետ: Իսկ ես լոկ շխուռան վարձակալող մի անձ եմ, սովորական մի ուղևոր: Դուք, անշուշտ, կհամոզվեք, որ նավապետ Թրեֆեզենը ծովագնացության օրենքների և նավահանգստում նավերի կանգառման մեծ գիտակ է:

— Դուք պետք է պատասխան տաք Ալֆարո Սոլանոյի սպանության համար,— ասաց Թորենսը:— Յենրի Մորգան, հասիենդայում ունեցած ձեր խոսակցություններով, որ իբր թե Դուք ինչ-որ ուրիշ մարդ եք, ձեզ չհաջողվեց հիմարացնել ինձ: Ես այդ ուրիշ մարդուն ճանաչում եմ: Նրա անունն է Ֆրենսիս Մորգան, և ես համարձակորեն կարող եմ ասել, որ նա բոլորովին էլ մարդասպան չէ, այլ ջենթլմեն է:

— Օ՛, աստվածներ ծովային խորքերի՝ բոլոր ձկներով ու ձկնիկներով,— բացականչեց Ֆրենսիսը:— Բայց ախր դուք սեղմեցիք իմ ձեռքը, սենյոր Թորենս:

— Ես խաբվեցի,— դեմքի թախծոտ արտահայտությամբ խոստովանեց Թորենսը,— բայց միայն ինչ-որ ակնթարթ: Դե, ինչ, անձնատուր լինո՞ւմ եք խաղաղ ճանապարհով:

— Ասես ես կարող եմ. . . — Ֆրենսիսը նայեց վեց հրացաններին և ուները թոթվեց պերճախոսությամբ:— Կարծում եմ, որ դուք ինձ կդատեք pronto և լուսադեմին կկախե՞ք:

— Պանամայում արդարադատությունն արագ է կատարվում,— պատասխանեց ոստիկանապետը անզլերեն. նա խոսում էր շատ թե քիչ հասկանալի, միայն թե զվարճալի առոզանությամբ:— Բայց

և այնպես՝ ոչ այնքան էլ արագ: Մենք ձեզ լուսադեմին չենք կախի, ավելի լավ է առավոտյան ժամը տասին, այդպես բոլորի համար էլ հարմար կլինի: Ի՞նչ եք կարծում:

— Օ, ինքներդ որոշեցեք,— պատասխանեց Ֆրենսիսը:— Կարելի է և տասնմեկին, և տասներկուսին, ինձ համար միևնույն է:

— Խնդրում եմ հետևել մեզ, սենյոր,— ասաց Մարիանո Վերքարա-ի-Իքոսը մեղմ տոնով, որը, սակայն, չէր կարող թաքցնել նրա մտադրությունների երկաթյա կարծրությունը:— Խուսան, Իզնասիո,— հրամայեց նա իսպաներեն:— Իջեք ձիերից: Վերցրեք նրա զենքը: Ոչ, կարիք չկա ձեռքերը կապել: Նստեցրեք նրան Գրեգորիոյի թարքը:

Ֆրենսիսին ներս հրեցին հինգ ոտնաչափ հաստությամբ կավաշեն պատերով բանտախուցը, որ խնամքով սպիտակեցրել էին: Հողե հատակին տարբեր դիրքերով քնած էին վեց բանտարկյալ-պետն: Ականջ դնելով կացնի խուլ հարվածներին, որ գալիս էին ինչ-որ մոտերքից, Ֆրենսիսը հիշեց հենց նոր ավարտված դատը և կամացուկ ու երկար սուլեց: Երեկոյան ժամը ութն անց էր կես: Դատն սկսվեց ութին: Իսկ կացնիներն արդեն հարվածում էին գերաններին, որոնցից կախադան էին պատրաստում. վաղը, առավոտյան ժամը տասին, այդ լաստակի վրա պարանը կանցկացնեն իր վիզն ու կկախեն: Գործի քննությունն իր ժամացույցով երեսուն րոպե տևեց: Նրանք քսան րոպեում էլ հարցը կլուծեին, եթե դահլիճ չներխուժեր Լեոնսիան և դատավորների ուշադրությունը չգբաղեցներ ևս տասը րոպեով, որ սիրալիրությամբ տրամադրվեց նրան, իբրև Սոլանո անվանի ընտանիքի դատեր:

«Շեֆն իրավացի էր,— մտովին եզրակացրեց Ֆրենսիսը:— Իրոք, արդարադատությունը Պանամայում արագ է կատարվում»:

Ֆրենսիսին կործանեց հենց միայն այն, որ նրա գրպանում գտան Հենրի Մորգանին հասցեագրված նամակը: Մնացածը պարզ էր: Կես դյուժին վկաներ երդվեցին, որ կատարվել էր սպանություն, և նրան ճանաչեցին իբրև մարդասպանի: Նույնը հաստատեց նաև ոստիկանապետը: Միակ լուսավոր պահը Լեոնսիայի անակնկալ հայտնվելն էր ծերությունից ցնցվող զառամյալ Սոլանո հորաքրոջ ուղեկցությամբ: Ֆրենսիսի սիրտը հաճույքից նվաղեց, երբ տեսավ, թե չքնադ աղջիկն ինչպիսի եռանդով նետվեց պայքարի իր կյանքի համար, չնայած այդ պայքարը նախապես արդեն դատապարտված էր ձախողման:

Ամենից առաջ աղջիկը պատվիրեց Ֆրենսիսին ծայել թևքը և ցույց տալ ձախ ձեռքը, ըստ որում Ֆրենսիսը նկատեց, թե ինչպես ոստիկանապետը արհամարհանքով ուները թոթվեց: Ապա Լեոնսիան դարձավ Թորեսին ու խոսեց իսպաներեն, կրքոտ կերպով ինչ-որ բան ապացուցելով՝ թե հատկապես ի՞նչ, Ֆրենսիսը չկարողացավ հասկանալ, որովհետև աղջիկը չափազանց արագ էր խոսում: Իսկ հետո Ֆրենսիսը տեսավ ու լսեց, թե դահլիճում խռնված ամբոխն ինչպես էր ոռնում ու ձեռքերը թափահարում, երբ Թորեսը խոսք առավ:

Բայց ինչ որ նա չտեսավ՝ այն էր, թե ինչպես Թորեսը կամացուկ մի քանի բառ փոխանակեց ոստիկանապետի հետ, նախքան ամբոխի միջով կանցնել դեպի վկաներին հատկացված տեղը: Նա չտեսավ այդ տեսարանը, ինչպես որ չգիտեր և այն, որ Թորեսը Ռիզանից ռոճիկ է ստանում, որպեսզի իրեն՝ Ֆրենսիսին, որքան կարելի է երկար ժամանակով հեռու պահի Նյու Յորքից, իսկ եթե հաջողվի՝ ապա և ողջ կյանքի ընթացքում: Ֆրենսիսը չգիտեր նաև, որ Թորեսը սիրահարված է Լեոնսիային ու տանջվում է խանդից, որը կարող էր նրան մղել ամեն մի քայլի:

Ուստի Ֆրենսիսը չհասկացավ այն ամենը, ինչ թաքնված էր Լեոնսիայի հարցերին Թորեսի տված պատասխանների հետևում, Լեոնսիայի, որն այնուամենայնիվ հարկադրեց նրան խոստովանել, որ երբեք Ֆրենսիս Մորգանի ձախ ձեռքին սպի չի տեսել: Լեոնսիան հաղթականորեն նայեց ծերուկ դատավորին, բայց այդտեղ ոստիկանապետն առաջ եկավ և, մոտենալով Թորեսին, որոտընդոստ ձայնով հարցրեց.

— Իսկ կարո՞ղ եք երդվել, որ երբևէ սպի տեսել եք Հենրի Մորգանի ձեռքին:

Իրեն կորցրած Թորեսը հուզմունքով ու շփոթությամբ նայեց դատավորին, ապա հայացքն աղաչանքով դարձրեց Լեոնսիայի վրա և, վերջապես, լուռ ճոճեց գլուխը ի նշան այն բանի, որ չի կարող երդվել այդ մասին:

Դահլիճում խռնված քրջոտների ամբոխը հաղթականորեն ոռնաց: Դատավորը արտասանեց դատավճիռը, ոռնոցն ուժեղացավ, և կոմիսարը մի քանի ժանդարմների հետ շտապ Ֆրենսիսին դուրս բերեց,— ոչ առանց նրա դիմադրության,— դատարանի դահլիճից և ուղեկցեց բանտախուց. թվում էր, թե նրանք աշխատում էին Ֆրենսիսին փրկել ամբոխի ձեռքից, որը չէր ուզում սպասել մինչև վաղը ժամը տասը, որպեսզի նրա հետ դատաստան տեսներ:

«Է՛հ, այդ խեղճ Թորենս ինչպես բռնվեց, երբ սկսեցին Յենրիի սպիի մասին հարցնել»,— բարեկամաբար մտածեց Ֆրենսիսը: Յանկարծ սողակները դողդացին, բացվեց խցի դուռը, և շեմքին հայտնվեց Լեոնսիան:

Ֆրենսիսը տեղից վեր ելավ նրան ընդառաջ: Բայց սա, չպատասխանելով երիտասարդի ողջույնին, դարձավ իրեն ուղեկցող կոմիսարին ու հարձակվեց նրա վրա՝ իր խոսքը հաստատելով տիրական շարժումներով: Ըստ երևույթին կոմիսարը համոզվեց ու հրամայեց բանտապետին՝ պետներին տեղափոխել ուրիշ խուց, իսկ ինքը մի տեսակ ջղային գլուխ տվեց, ասես ներողություն խնդրելով Լեոնսիայից, և դուրս գնաց՝ դուռն իր հետևից ծածկելով:

Միայն այդ ժամանակ Լեոնսիան կորցրեց իրեն. նա նետվեց Ֆրենսիսի գիրկը և հեկեկաց՝ գլուխը խոնարհած նրա ուսին:

— Անիծյա՛լ երկիր, անիծյա՛լ երկիր: Արդարություն չկա այստեղ:

Գրկած պահելով նրա ճկուն, այնպես հուզախոռով սքանչելի մարմինը, Ֆրենսիսը հիշեց Յենրիին՝ բոբիկ, պարուսիկն տաբատով ու կախ ընկած սոմբրերոյով, որն այնտեղ, Յուլի կղզում, համառորեն փորփրում է ավազը՝ գանձը գտնելու համար:

Եվ չնայած Լեոնսիան ձգում էր նրան, նա աշխատում էր ազատվել նրա գրկից, սակայն դա լիովին չհաջողվեց: Բայց և այնպես մասամբ տիրապետեց իրեն ու խոսեց նրա հետ բանականության ձայնով և ոչ թե սրտի, որը տիրաբար հիշեցնում էր իր մասին:

— Այժմ ես գոնե գիտեմ, թե ինչ ասել է համաձայնության գալ,— ասաց նա, չնայած այդ պահին սիրտը բոլորովին այլ խոսքեր էր թելադրում:— Եթե ձեր հայրենակիցները կարողանային տաքացած գործելու փոխարեն հանգիստ դատել, երկաթուղիներ կանցկացնեին կգարգացնեին իրենց երկիրը: Նայեցեք այդ դատավարությանը, ախր այն ամբողջովին կառուցված էր կրքերի խաղի, խոսքը մեկ անելու վրա: Նրանք, ովքեր ինձ դատում էին, առաջուց **գիտեին**, որ ես մեղավոր եմ, և այնպես էին ուզում պատժել ինձ, որ նույնիսկ նեղություն չկրեցին իմ մեղավորության ապացույցներ գտնելու կամ գոնե պարզելու մեղադրյալի իսկությունը: Ինչո՞ւ հետաձգել: Նրանք **գիտեին**, որ Յենրի Մորգանը դանակը խրել էր Ալֆարոյի կողմ: Նրանք **գիտեին**, որ Յենրի Մորգանը ես եմ: Իսկ երբ մարդ գիտի, էլ ինչո՞ւ ստուգելով իրեն նեղություն տա:

Լեոնսիան հեկեկում էր, չլսելով նրան, և շարունակ աշխատում էր գրկել Ֆրենսիսին, իսկ երբ սա լռեց, աղջիկն արդեն նրա գրկում էր. Լեոնսիայի գլուխը հպվել էր նրա կրծքին, իսկ շրթունքները՝ շրթունքներին, և երիտասարդը դեռ ուշքի չէր եկել, երբ ինքն սկսեց համբուրել նրան:

— Սիրում եմ քեզ, սիրում եմ քեզ,— հեկեկանքի միջից շշնջում էր աղջիկը:

— Ոչ, ոչ,— ասաց Ֆրենսիսը, հեռացնելով իրենից նրան, որին ամենից շատ էր ցանկանում:— Ես ու Յենրին պարզապես շատ ենք նման իրար: Չէ որ դուք սիրում եք Յենրիին, իսկ ես Յենրին չեմ:

Թևերը բաց թողնելով՝ Լեոնսիան մատից պոկեց Յենրիի մատանին ու շարտեց հատակին: Ֆրենսիսը բոլորովին գլուխը կորցրեց. նա ինքն էլ չգիտեր, թե ինչ տեղի կունենար հաջորդ վայրկյանին, եթե նրան չփրկեր ժամացույցը ձեռքին կոմիսարի հայտնվելը, որն առանց գլուխը բարձրացնելու համառորեն նայում էր բոպեն ցույց տվող սլաքին, ձևացնելով, թե այլևս ուրիշ ոչինչ գոյություն չունի իր համար:

Լեոնսիան հպարտորեն ուղղվեց, բայց երբ Ֆրենսիսը նորից Յենրիի մատանին դրեց նրա մատն ու համբուրեց ձեռքը, նա քիչ մնաց հեծկլտար: Դեռ մոտ նա շուռ եկավ ու միայն շրթունքներով անձայն շշնջաց. «Սիրում եմ քեզ»:

Ճիշտ տասին, ժամացույցի վերջին զարկի հետ, Ֆրենսիսին դուրս բերեցին բանտի բակ, ուր պատրաստված էր կախաղանը: Սան Անտոնիոյի, այլև շրջակա շատ գյուղերի բոլոր բնակիչները հավաքվել էին այստեղ. ամբոխը գրգռված էր և ուրախ տրամադրված: Այդտեղ էին նաև Լեոնսիան, Էնրիկո Սոլանոն և նրա հինգ բարձրահասակ որդիները: Լեոնսիայի հայրն ու եղբայրները, զայրույթից եռալով, անհամբեր ետ ու առաջ էին քայլում, բայց ոստիկանապետը, շրջապատված ժանդարմներով, կոմիսարի գլխավորությամբ, մնում էր անվրդով: Լեոնսիան իզուր էր ջանում հասնել Ֆրենսիսին, երբ սրան մոտեցնում էին կախաղանին, և իզուր էին հարազատները աղջկան համոզում հեռանալ բակից: Չայրն ու եղբայրները նույնպես իզուր էին բողոքում, պնդելով, որ Ֆրենսիսն այն մարդը չէ, որին արդարադատությունը որոնում է: Ոստիկանապետն արհամարհանքով քմծիծաղեց միայն ու հրամայեց սկսել:

Երբ Ֆրենսիսը բարձրացավ լաստակի վրա ու ոտքն արդեն դրեց կախաղանի սյունին հենած սանդուղքին, քահանան մոտեցավ նրան, բայց Ֆրենսիսը վերջին հաղորդությունից հրաժարվեց. նա իսպաներեն ասաց քահանային, որ եթե կախում են անմեղ մարդուն, ապա նա առանց ուրիշի աղոթքների էլ կընկնի դրախտ, թող աղոթեն նրանք, ովքեր կախում են նրան:

Ֆրենսիսի ոտքերը կապեցին ու սկսեցին կապել ձեռքերը, արդեն պատրաստվում էին սև գլխադիրը գլխին հագցնել և օղակը գցել պարանոցը, երբ հանկարծ բանտային պարսպի հետևից լավեց մոտեցող երգի ձայնը:

Մենք՝ մեքք մեքքի, կայմի կողքին,

Չազարի դեմ երկուսով:

Կիսաուշաթափ վիճակում գտնվող Լեոնսիան, այդ ձայնը լսելով, ուշքի եկավ և նույնիսկ ուրախությունից բացականչեց, տեսնելով Չենրի Մորգանին, որը, դես ու դեն հրիբելով իր ճանապարհը փակող պահակներին, ներս մտավ բակ:

Միայն Թորեսը վշտացավ Չենրիի հայտնվելով, բայց բոլորն այնպես էին գրգռված, որ ոչ ոք այդ բանը չնկատեց: Չանդիսականները չառարկեցին, երբ ոստիկանապետը, ուսերը թոթովելով, հայտարարեց, որ իր համար միևնույնն է, թե այդ երկուսից որին կկախեն՝ միայն թե կախեն: Մինչդեռ Սոլանո ընտանիքի տղամարդկանց կեսը եռանդուն կերպով բողոքեց, պնդելով, որ Չենրին նույնպես մեղավոր չէ Ալֆարոյի սպանության մեջ: Սակայն ինչի՞րը Ֆրենսիսը լուծեց. դեռևս կանգնած մնալով լաստակին, մինչև որ կարծակեին ձեռքերն ու ոտքերը, նա բղավեց՝ խլացնելով ամբոխի աղմուկը.

— Դուք ի՞նձ դատեցիք: Նրան չեք դատել: Դուք չեք կարող առանց դատի մարդուն կախել: Նախ և առաջ պետք է դատ լինի:

Ֆրենսիսը լաստակից իջավ ու երկու ձեռքերով բռնեց Չենրիի ձեռքը, բայց դեռ մի կարգին չէր սեղմել, որ ոստիկանապետի ուղեկցությամբ նրանց մոտեցավ կոմիսարը և, բոլոր ձևականությունները պահպանելով, Չենրի Մորգանին ձերբակալեց Ալֆարո Սոլանոյին սպանելու մեղադրանքով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

— Պետք է արագ գործել՝ դա է գլխավորը,— ասաց Ֆրենսիսը, դիմելով ընտանեկան ոչ մեծ խորհրդին, որ հավաքվել էր Սոլանոների հասիենդայի պատշգամբում:

— Գլխավորը,— կշտամբանքով բացականչեց Լեոնսիան, դատարելով հուզված քայլել պատշգամբում:— Գլխավորը նրան փրկելն է:

Եվ նա զայրույթով մատը թափ տվեց Ֆրենսիսի քթի առաջ, ասես ընդգծելով ասածի կարևորությունը: Դրանով չգոհանալով, նա մատը թափ տվեց նաև իր բոլոր հարազատների՝ հոր և յուրաքանչյուր եղբոր քթի առաջ:

— Եվ արագ,— եռանդով շարունակեց նա:— Մենք պետք է արագ գործենք, այլապես. . . — Եվ նրա ձայնը խզվեց անասելի սարսափից, որ համակեց նրան այն մտքից, թե ինչ կարող է կատարվել Չենրիի հետ, եթե իրենք արագ չգործեն:

— Շեֆի համար բոլոր գրինգոները մեկ են,— նույն տոնով նկատեց Ֆրենսիսը, իսկ ինքն իրեն մտածեց. «Ինչ գեղեցիկ է նա ու սքանչելի»։— Շեֆը Սան Անտոնիոյում տեր ու տնօրէն է, անշուշտ,— շարունակեց նա,— և սովոր է գործել առանց երկար-բարակ մտածելու։ Նա Յենրիին ավելի ժամանակ չի տա, քան տվեց ինձ։ Մենք պետք է հենց այսօր այդ խեղճին ազատենք բանտից։

— Լսեցեք,— նորից խոսեց Լեոնսիան։— Մենք՝ Սոլանոներս, չենք կարող թույլ տալ այդ . . . այդ մահապատիժը։ Մեր հպարտութիւնը . . . մեր պատիվը . . . Մենք չենք կարող այդ բանը թույլ տալ։ Դե, խոսեցեք։ Դե, որևէ մեկը խոսեցեք։ Թեկուզ դու, հայրիկ։ Որևէ բան առաջարկիր . . .

Մինչդեռ տեղի կունենար քննարկումը, Ֆրենսիսը, որ լուռ լսում էր վիճաբանությունները, խորապէս տառապում էր։ Ինչ հոյակապ կրակով էր խոսում Լեոնսիան, բայց այդ կրակն առաջանում էր ուրիշ մարդու հանդէպ տածած զգացմունքից, որը, իհարկէ, չէր կարող ուրախացնել Ֆրենսիսին։ Այն տեսարանը, որ տեղի ունեցավ բանտի բակում, երբ նրան բաց թողին, իսկ Յենրիին ձերբակալեցին, դեռևս Ֆրենսիսի աչքի առաջ էր։ Ասես հենց հիմա տեսնում էր,— և այդ հիշողութիւնից նրա սիրտը կսկծաց,— թէ ինչպէս Լեոնսիան նետվեց Յենրիի գիրկը, իսկ նա գտավ աղջկա ձեռքը, որպեսզի համոզվի՝ մատանին իր տեղումն է, և, համոզվելով, ամուր գրկեց նրան ու պինդ-պինդ համբուրեց։

«Դե լավ, բավական է»,— հառաչանքով մտածեց Ֆրենսիսը։

Համենայն դեպս, ինքն արեց այն ամենը, ինչ կարող էր։ Մի՞թէ Յենրիին տանելուց հետո ինքը Լեոնսիային չասաց,— հանգիստ և մինչև իսկ սառը,— որ Յենրին նրա նշանածն է ու սիրածը, և որ Սոլանոյի դուստրը ավելի լավ ընտրություն չէր էլ կարող կատարել։

Բայց այդ հիշողությունները, ինչպէս և այն գիտակցությունը, որ ինքը ճիշտ է վարվել, նրան բոլորովին էլ չուրախացրին։ Այո, ճիշտ է։ Ոչ մի անգամ նա չէր կասկածել դրանում, և դա հնարավորություն էր տալիս խլացնել իր մեջ Լեոնսիայի հանդէպ տածած զգացմունքը։ Սակայն սեփական իրավացիության զգացողությունը, ինչ որ նա բացահայտեց այս դեպքում, բոլորովին էլ բավական չէ, որպեսզի մարդ իրեն երջանիկ զգա։

Սակայն ուրիշ ի՞նչ կարող էր հուսալ։ Պարզապէս բախտը չէր բերել՝ ինքը չափազանց ուշ էր եկել Կենտրոնական Ամերիկա, ուրիշ ոչինչ. եկավ, երբ այդ չքնաղ կինը իր սիրտն արդեն նվիրել էր մեկին, որն իրենից առաջ էր եկել, մի մարդու, որն իրենից ամենևին էլ վատը չէր, այլ թերևս, ինչպէս արդարացիության զգացումը հուշում էր, նույնիսկ ավելի լավ։ Եվ արդարացիության այդ զգացումը պահանջում էր, որ նա ազնվորեն վարվի Յենրիի՝ իր արյունակից ազգական Մորգանի, անզուսպ նախահոր անզուսպ հետնորդի հետ, պարուսինե տաբատով կախ ընկած սոմբրերոյով այդ մարդու հետ, որն անտարբեր չէ անծանոթ երիտասարդների ականջների նկատմամբ, սնվում է պաքսիմատով ու կրիայի ձվերով և պատրաստ է փորփրել ամբողջ երկու կողմի՝ Յուլի և Հորթի, ծերուկ ծովահենի գանձը գտնելու համար։

Էնրիկո Սոլանոն և նրա որդիները, նստած իրենց տան ընդարձակ հովնոցում, Յենրիին ազատելու ծրագրեր էին կազմում, իսկ Ֆրենսիսը ցրված լսում էր նրանց. այդ պահին աղախինը դուրս եկավ սենյակից, ինչ-որ բան շշնջաց Լեոնսիայի ականջին ու տարավ նրան դէպի տան հետևը, հովնոցի մյուս ծայրը, ուր տեղի ունեցավ մի տեսարան, որը շատ կզվարճացներ ու կկատաղեցներ Ֆրենսիսին, եթէ սա ներկա գտնվէր։

Շուռ գալով տան հետևը, Լեոնսիան տեսավ Ալվարես Թորեսին՝ հագած հարուստ ազարակատիրոջ միջնադարյան շքեղ զգեստ, որ դեռևս կրում են Լատինական Ամերիկայում։ Թորեսը հանեց սոմբրերոն և, պահելով ձեռքում, խոնարհվեց աղջկա առաջ համարյա մինչև գետին, ապա մոտեցրեց նրան հնդկական եղեգնից գործած փոքրիկ բազմոցին ու նստեցրեց։ Լեոնսիան տրտմութեամբ պատասխանեց նրա ողջույնին, չնայած ձայնի մեջ հետաքրքրություն կար. ասես սպասում էր որևէ հուսադրող լուր լսել Թորեսից։

— Դատը վերջացավ, Լեոնսիա,— կամացուկ ու տխուր շշնջաց Թորեսը, ասես խոսում էր հանգուցյալի մասին։— Նա դատապարտված է։ Վաղն առավոտյան տասին մահապատիժն է։ Այս ամենը ցավալի է, խիստ ցավալի, բայց,— նա ուսերը թոթվեց։— Ոչ, ես նրա մասին ոչ մի վատ բան չեմ ասի։ Նա արժանավոր մարդ էր։ Միակ պակասությունը բնավորությունն էր։ Շատ էր

տաքարյուն, շատ էր բռնկվող: Չենց այդ էլ կործանեց նրան, ստիպելով մեղք գործել պատվի դեմ: Եթե նա այն ժամանակ հանգիստ ու սառնարյուն լիներ, երբեք դանակը չէր խրի Ալֆարոյի...

— Իմ հորեղբորը նա չի՛ սպանել,— բացականչեց Լեոնսիան, գլուխը բարձրացնելով ու նայելով նրան:

— Այդ ամենը խիստ ցավալի է,— մեղմ ու տխուր շարունակեց Թորեսը, խուսափելով նրան հակաճառելուց:— Դժբախտաբար բոլորը՝ դատավորը, մարդիկ, ոստիկանապետը, միաբերան հաստատում են, որ նա մեղավոր է: Խիստ ցավալի է, անշուշտ: Բայց այդ մասին չէ, որ ուզում եմ խոսել ձեզ հետ: Ես եկել եմ իմ ծառայություններն առաջարկելու ձեզ: Տնօրինեցե՞ք ինչպես կամենաք: Իմ կյանքը, իմ պատիվը ձեր տրամադրության տակ են: Չրամայեցե՞ք: Ես ձեր ստրուկն եմ:

Եվ հանկարծ Թորեսը նազանքով ծունկի իջավ նրա առաջ. վերցնելով աղջկա ձախ ձեռքը, նա, ինչպես երևում է, պատրաստվում էր շարունակել իր գունազեղ ճառը, բայց այդ պահին հայացքն ընկավ Լեոնսիայի մատնեմատը զարդարող շողակնյա մատանուն: Թորեսը մռայլվեց ու խոնարհեց գլուխը, ապա, շտապով իր դեմքին սովորական արտահայտություն տալով, շարունակեց.

— Լեոնսիա, ես ձեզ գիտեի, երբ դուք դեռևս մանուկ էիք, չքնաղ, հմայիչ պատվիկ երեխա, և դեռ այն ժամանակ սիրում էի ձեզ: Ո՛չ, լսեցե՞ք ինձ: Խնդրում եմ: Ես պետք է սիրոս բանամ: Լսեցե՞ք ինձ մինչև վերջ: Ես միշտ սիրել եմ ձեզ: Բայց երբ դուք վերադարձաք արտասահմանից, այն մենաստանից, որտեղ սովորում էիք,— վերադարձաք արդեն իբրև հասակ առած, ազնվական վեհաքանչ օրհորդ, ինչպիսին պետք է որ լինի Սոլանոների տանտիրուհին,— օ՛, այդ ժամանակ ես պարզապես շանթվեցի ձեր գեղեցկությունից: Ես համբերատար էի: Ես ձեզ չեմ պատմել իմ զգացմունքների մասին: Բայց դուք կարող էիք կռահել: Եվ, իհարկե, կռահում էիք: Այդ օրվանից ես բոցավառվեցի ձեր սիրով: Ինձ լափում էր այն բոցը, որ վառել էր ձեր գեղեցկությունը, ձեր հոգին, որն ավելի գեղեցիկ է, քան ձեր գեղեցկությունը:

Լեոնսիան գիտեր, որ անհնար է կանգնեցնել նրա զեղումների հեղեղը, ուստի համբերությամբ լսում էր, դիտելով Թորեսի խոնարհած գլուխն ու պարապությունից մտածելով, թե ինչու են նրա մազերն այդպես սզեղ կտրած և վերջին անգամ որտեղ է նա սափրվել՝ Նյու Յորքո՞ւմ, Սան Անտոնիոյո՞ւմ:

— Արդյոք գիտե՞ք, թե ձեր վերադառնալուց ի վեր դուք ինձ համար ի՞նչ եք եղել:

Լեոնսիան չպատասխանեց ու չփորձեց ձեռքն ազատել, չնայած նա այնպես ուժգին էր սեղմում, որ Չենրի Մորգանի մատանին խրվել էր մատների մեջ՝ սուր ցավ պատճառելով: Նա չէր լսում Թորեսի խոսքերը, մտքերի մեջ ավելի ու ավելի հեռու տարվելով: Եվ առաջին միտքն այն էր, թե Չենրի Մորգանը բոլորովին էլ այսպիսի վերամբարձ ճառերով չէ, որ արտահայտեց իր սերն ու փոխադարձաբար նվաճեց իրեն: Եվ ինչո՞ւ են իսպանացիք միշտ այդպես ճոռում ու շատախոս կերպով արտահայտում իրենց զգացմունքները: Չենրին բոլորովին այլ կերպ էր պահում իրեն: Ընդհանրապես նա համարյա ոչ մի խոսք չսասց իրեն: Նա գործում էր: Անձնատուր նրա հմայքին՝ զգալով, որ աղջիկն էլ անտարբեր չէ իր նկատմամբ, նա առանց որևէ նախազգուշացման,— այնքան որ համոզված էր, թե չի զարմացնի ու չի վախեցնի իր սիրածին,— գրկեց նրան ու շրթունքները հպեց նրա շրթունքներին: Եվ Լեոնսիան չվախեցավ ու անտարբեր չմնաց: Միայն այդ առաջին համբույրից հետո, շարունակելով նրան գրկում պահել, Չենրին խոսեց իր սիրո մասին:

Իսկ այժմ այնտեղ, դարավանդի մյուս ծայրին, ինչի՞ մասին են խորհրդակցում նրա հարազատներն ու Ֆրենսիս Մորգանը, և ի՞նչ են մտածում անել: Նրա մտքերը շարունակեցին առաջ գնալ. նա խուլ էր իր երկրպագուի աղաչանքներին: Ֆրենսիսը: Ա՛խ. . . Նա նույնիսկ հառաչեց. ինչո՞ւ, չնայած Չենրիի հանդեպ տածած սիրուն, այդ օտար գրինգոն խռովում էր իր սիրտը: Մի՞թե ինքն արդեն այդ աստիճան անբարոյական է: Նրանցից ո՞րն է ավելի սիրելի իրեն: Սա՞: Թե՞ նա: Թե՞ ընդհանրապես ամեն մի տղամարդ կարող է իրեն հրապուրել: Ո՛չ: Ո՛չ: Ինքը թեթևամիտ և ուխտադրուժ չէ: Բայց և այնպե՞ս. . . Միգուցե այդ նրանից է, որ Ֆրենսիսն ու Չենրին այդքան նման են իրար, և իր կանացի խեղճ, հիմար, սիրող սիրտը չի կարողանում տարբերել նրանց: Առաջ նրան թվում էր, թե պատրաստ է Չենրիի հետևից մինչև աշխարհի ծայրը գնալ, կիսել նրա հետ ուրախությունն ու վիշտ, սակայն այժմ նրան թվում էր, թե Ֆրենսիսի հետևից կարող է ավելի հեռու գնալ: Նա, անշուշտ, սիրում է Չենրիին. սիրտն այդպես է հուշում: Բայց սիրում է նաև

Ֆրենսիսին գրեթե համոզված է, որ Ֆրենսիսն էլ իրեն է սիրում. ինքը երբեք չի կարող մոռանալ, թե ինչպիսի կրքոտությամբ համբուրվեցին այնտեղ, բանտային խցիկում: Եվ չնայած նա այդ երկու երիտասարդներին սիրում էր տարբեր ձևով, բայց և այնպես այդ զգացմունքը չէր ամփոփվում նրա գիտակցության մեջ, իսկ երբեմն էլ ստիպում էր ամոթալի հետևության հանգել, որ ինքը՝ կանանց գծով Սուլանների տոհմի վերջին ներկայացուցիչը, անբարոյական կին է:

Յենրիի մատանին ուժգին խրվեց Լեոնսիայի մատը,— կրքի բռնկման պահին Թորեսը նորից ամուր սեղմեց նրա ձեռքը,— և դա աղջկան վերադարձրեց իրականությանը, հարկադրելով կամա թե ակամա լսել նրա զեղումները:

— Դուք իմ սիրտը խրված հիասքանչ վարդի փուշն եք՝ իմ կուրծքը խոցոտող սուր խթանը, բայց դրանք սիրո վերքեր են՝ տանջալից ու քաղցր: Ես երազել եմ ձեր մասին. . . և այն սխարանքի մասին, որ պատրաստ եմ գործելու ձեզ համար: Եվ ես ձեզ համար ունեի հատուկ, միայն մեկ անուն՝ իմ անուրջների տիրուհի: Եվ դուք կամուսնանաք ինձ հետ, իմ Լեոնսիա: Մենք կմոռանանք այդ խելագար գրինգոյին, որն այժմ նույնն է, թե մեռած է: Ես քնքուշ ու բարի կլինեմ ձեզ հետ: Միշտ կսիրեմ ձեզ: Եվ երբեք նրա՝ այն մյուսի պատկերը չի կանգնի մեր միջև: Ինչ վերաբերում է ձեզ. . . Ես այնպես ուժգին կսիրեմ ձեզ, որ դուք կմոռանաք այդ մարդուն, և երբեք հիշողությունները չեն կսկծացնի ձեր սիրտը:

Լեոնսիան լռում էր, մտածելով միայն, թե ինչպես վարվի, և այդ լռությունը լուր բորբոքում էր Թորեսի հույսերը: Լեոնսիան զգում էր, որ հարկավոր է ժամանակ շահել անմիջապես չպատասխանել: Եթե պետք է ձեռք գարկել Յենրիին փրկելու. . . չէ՞ որ Թորեսն առաջարկում է իր ծառայությունները: Ինչո՞ւ ետ վանել, երբ նրանից, թերևս, կախված է մարդու կյանքը:

— Խոսեցե՛ք: Ես այրվում եմ,— կցկտուր ձայնով աղաչում էր Թորեսը:

— Չարկավոր չէ, հարկավոր չէ,— մեղմությամբ ասաց նա:— Դե, ես ինչպե՞ս կարող եմ լսել մեկ ուրիշի սիրո մասին, երբ նա, որին սիրում էի, դեռևս ողջ է:

— Սիրում էի. . . Նա նույնիսկ ցնցվեց լսելով այդ խոսքն անցյալ ժամանակով: Ցնցվեց նաև Թորեսը, և հույսն ավելի պայծառ բոցավառվեց նրա սրտում: Նա Լեոնսիային գրեթե արդեն իրենն էր համարում: Չէ որ նա ասաց՝ «սիրում էի», ուրեմն, այլևս չի սիրում Յենրիին: Նա **սիրում էր** նրան, բայց այժմ այդ ամենը անցյալ է: Եվ, իհարկե, այդպիսի քնքուշ ու զգայուն հոգու տեր կինը չի կարող նրա հետ խոսել սիրո մասին, քանի դեռ այն մյուսը ողջ է: Չզացմունքների ինչպիսի՜ նրբություն: Թորեսը հպարտությամբ մտածեց նաև իր զգացմունքների նրբության մասին և նույնիսկ հոգու խորքում շնորհավորեց իրեն, որ կարողացավ այդպես ճշգրտորեն կարդալ Լեոնսիայի գաղտնի մտքերը: Չիմա արդեն ինքը կհոգա, որոշեց Թորեսը, որպեսզի այդ մարդը, որին վիճակված է մեռնել հաջորդ օրվա առավոտյան տասին, ներում չստանա և չփախչի բանտից: Նրա համար պարզ էր՝ որքան Յենրի Մորգանը շուտ մեռնի, այնքան շուտ նա կստանա Լեոնսիայի ձեռքը:

— Այդ մասին չխոսե՛ք. . . առայժմ,— ասաց նա ասպետական քաղաքավարությամբ, ոչ պակաս քաղաքավարությամբ սեղմելով Լեոնսիայի ձեռքը, ապա ոտքի կանգնեց երկար-երկար նայեց աղջկան:

Լեոնսիան պատասխանեց շնորհակալական ձեռքսեղմումով և, ձեռքն ազատելով նրա ձեռքից, նույնպես ոտքի ելավ:

— Գնանք,— ասաց նա,— տեսնենք մյուսներն ինչ են անում: Չէ որ հիմա նրանք մշակում են,— կամ, ավելի ճիշտ, փորձում են մշակել,— Յենրի Մորգանի ազատման ծրագիրը:

Երբ նրանք մոտեցան դարավանդում նստածներին, խոսակցությունն անմիջապես ընդհատվեց, ասես Թորեսի ներկայությունը անվստահությունն ներշնչեց գրուցակիցներին:

— Դե՞, մի բան մտածեցի՞ք, թե ոչ,— հարցրեց Լեոնսիան:

Ծերուկի Էնրիկոն, որը, չնայած տարիքին, նույնքան վայելչակազմ էր, շիտակ ու ճարպիկ, որքան իր որդիներից յուրաքանչյուրը, միայն գլուխն օրորեց:

— Եթե թույլ կտաք, ես կարող եմ մի ծրագիր առաջարկել ձեզ,— սկսեց Թորեսը, բայց իսկույն էլ լռեց, որսալով Ալեասանդրոյի նախազգուշացնող հայացքը:

Հովնոցի մոտ, ծառուղում, երևացին երկու ցնցոտիապատ երեխաներ: Հասակից դատելով՝ նրանց տասը տարուց ավելի չէր կարելի տալ, բայց դեմքերի ու աչքերի խորամանկ արտահայտությանը նայելով, շատ ավելի մեծ էին թվում: Հագնված էին խիստ անսովոր. շապիկ ու վարտիքը բաժանել էին իրենց մեջ, այնպես որ մեկին շապիկն էր հասել, մյուսին՝ վարտիքը: Բայց ի՞նչ շապիկ և ի՞նչ վարտիք: Դրանք պարուսիներ էին շորեր էին, որ ժամանակին պատկանելիս էին եղել բարձրահասակ մի մարդու. տղաներից մեկը տաբատը քաշել էր մինչև կզակն ու առասանով կապել վզին, որպեսզի ցած չընկներ, իսկ ձեռքերը դուրս էր հանել կողքի գրպանների տեղում բացված անցքերից. ներքևից տաբատի տոտերը դանակով կտրված էին նրա հասակի չափով: Մյուս տղան հագել էր տղամարդու շապիկը, որի փեշերը քարշ էին գալիս գետնի երեսին:

— Կորե՞ք այստեղից,— բղավեց նրանց վրա Ալեասանդրոն:

Բայց տաբատով տղան ամենամանխոռով տեսքով վերցրեց գլխին դրած քարը և նրա տակից մի նամակ հանեց: Ալեասանդրոն կռացավ բազրիքից, վերցրեց նամակը և, ծրարին նայելով, հանձնեց Լեոնսիային, իսկ տղաներն սկսեցին փող խնդրել: Ֆրենսիսը, նայելով այդ զվարճալի տեսարանին, ակամա ծիծաղեց, մի քանի արծաթադրամներ նետեց ցած, և շապիկն ու վարտիքը անմիջապես փախան-հեռացան ծառուղով:

Նամակը Հենրիից էր, և Լեոնսիան արագ կարդաց: Դա չէր կարելի համարել հրաժեշտի նամակ, քանզի Հենրին գրել էր այն իբրև մի մարդ, որը մահվան մասին չի էլ մտածում, եթե, իհարկե, որևէ չնախատեսված բան տեղի չունենա: Սակայն, քանի որ այդպիսի բան կարող էր պատահել, Հենրին իր պարտքն էր համարում հրաժեշտ տալ Լեոնսիային. ըստ որում, կատակով խնդրում էր չմոռանալ Ֆրենսիսին, որն արժանի է ուշադրության հենց թեկուզ այն պատճառով, որ այնքան նման է իրեն՝ Հենրիին:

Սկզբում Լեոնսիան ուզում էր նամակը ցույց տալ մյուսներին, բայց Ֆրենսիսի մասին եղած տողերն ստիպեցին հրաժարվել այդ մտադրությունից:

— Հենրիից է,— ասաց նա, երկտողը թաքցնելով կորսածի տակ:— Ոչ մի Եսկան բան չի գրում: Բայց, ինչպես երևում է, ոչ մի բոպե չի կասկածում, որ այսպես թե այնպես կհաջողվի փրկվել:

— Մենք կաշխատենք, որ դա նրան հաջողվի,— վճռականորեն ասաց Ֆրենսիսը:

Շնորհակալությամբ ժպտալով նրան ու հարցական ժպիտով դառնալով Թորեսին՝ Լեոնսիան ասաց.

— Դուք ասացիք՝ ինչ-որ պլան ունեք, սենյոր Թորես:

Թորեսը ժպտաց, ոլորեց բեղն ու լուրջ տեսք ընդունեց:

— Գոյություն ունի միայն մի միջոց՝ գրինգոների միջոցը, որին սովորաբար դիմում են անգլոսաքսերը՝ ուղղակի և գործուն: Այո, ուղղակի և գործուն: Մենք կզնայենք ու Հենրիին կգողանանք բանտից՝ կոպիտ, բացահայտ, հանդգնորեն, ինչպես անում են գրինգոները: Այդ բանն այնտեղ բոլորովին չեն սպասում, ուստի անկասկած կհաջողվի: Ծովափին կարելի է գտնել բավականաչափ ելուզակներ, որոնց կախաղան վաղուց է սպասում, և նրանց օգնությամբ գրոհել բանտի վրա: Խոստացեք նրանց լավ վճարել, միայն ամբողջ փողը մեկեն մի՛ տվեք, և գործը գլուխ կգա:

Լեոնսիան խանդավառությամբ գլխով արեց: Ծերունի Էնրիկոյի աչքերը բոցավառվեցին, իսկ ռունգները փքվեցին, ասես արդեն վառողի հոտ առավ: Նայելով նրան՝ երիտասարդները նույնպես բորբոքվեցին: Բոլոր հայացքները դարձան դեպի Ֆրենսիսը. ի՞նչ է մտածում նա այդ մասին, արդյոք համաձայն է: Նա դանդաղորեն գլուխն օրորեց, և վրդովված Լեոնսիան նույնիսկ ինչ-որ սուր խոսք շարտեց նրա հասցեին:

— Այդ ծրագիրն անհուսալի է,— ասաց Ֆրենսիսը:— Ախր ինչո՞ւ գլուխներս վտանգի տակ դնենք, նետվելով այդ խելահեղ արկածախնդրության մեջ, որը նախապես ձախողման է դատապարտված:— Այդ ասելիս նա վեր կացավ Լեոնսիայի կողքից և, մոտենալով բազրիքին,

կանգնեց Թորեսի ու մնացյալների միջև: Հարմար թույլ տրուեց, նա մի նախագգուշացնող հայացք նետեց Էնրիկոյի և նրա որդիների կողմը:— Ինչ վերաբերում է Հենրիին, ապա երևում է, որ նրա երգը երգված է...

— Այլ կերպ ասած, դուք ինձ չե՞ք վստահում,— զայրացավ Թորեսը:

— Ի սեր աստծու, ի՞նչ եք ասում,— բողոքեց Ֆրենսիսը:

Բայց Թորեսը, առանց նրա վրա ուշադրություն դարձնելու, շարունակեց.

— Ուրեմն, ձեր կարծիքով, ես չպե՞տք է մասնակցեմ Սոլամոնների՝ իմ վաղեմի և ամենահարգելի բարեկամների ընտանեկան խորհրդին: Եվ այդ արգելքը դնում եք դուք՝ մի մարդ, որի հետ ես հազիվ ծանոթ եմ:

Տեսնելով, թե Լեոնսիայի դեմքն ինչպես բռնկվեց զայրույթից, ծերունի Էնրիկոն շտապեց հայացքով հանգստացնել նրան և, ձեռքի սիրալիր շարժումով ընդհատելով Թորեսի ճառը, ասաց.

— Սենյոր Թորես, Սոլամոնները չեն կարող մի այնպիսի ընտանեկան խորհուրդ ունենալ, որին ձեր ներկայությունն արգելվեր: Չե՞ որ դուք, իրոք, մեր ընտանիքի վաղեմի բարեկամն եք: Ձեր հանգուցյալ հայրն ու ես ընկերներ էինք, եղբոր պես հարազատ: Բայց այդ ամենը,— ներքեցեք ծերունուս, եթե ես անկեղծորեն արտահայտեմ իմ կարծիքը,— սենյոր Մորգանին չի խանգարում իրավացի լինել, երբ նա խոսում է ձեր ծրագրի անհուսալիության մասին: Իսկական խելահեղություն է գրոհել բանտի վրա: Նայեցեք պատերի հաստությանը: Դրանք կարող են շաբաթների պաշարման դիմանալ: Այնուամենայնիվ, պետք է խոստովանեմ, որ սկզբում ձեր միտքը խիստ կաշառեց ինձ: Երբ ես դեռ բոլորովին ջահել էի ու Կորդիլերներում կռվում էի հնդիկների դեմ, մեզ մոտ ճիշտ նման մի դեպք պատահեց: Ավելի հարմար նստենք, ես ձեզ պատմեմ այդ պատմությունը...

Բայց Թորեսը, որ դեռ շատ գործեր ուներ, մերժեց հրավերը, բոլորի ձեռքերը սեղմեց բարեկամաբար, մի քանի խոսքով ներողություն խնդրեց Ֆրենսիսից և, նստելով իր ձին, որի թամբն ու սանձը արծաթով էին բանված, սլացավ դեպի Սան Անտոնիո: Այդպիսի կարևոր գործերից մեկը այն հեռագրական գրագրությունն էր, որ պահպանում էր նա Թոմաս Ռիգանի գրասենյակի հետ: Նա գաղտնի մուտք ուներ պանամական կառավարության Սան Անտոնիոյում գտնվող ռադիոկայանը և կարող էր հեռագրեր հաղորդել Վերա-Կրուս: Ռիգանի հետ ունեցած միությունը ոչ միայն շահավետ էր, այլև համընկնում էր Լեոնսիայի և Մորգանների հանդեպ ունեցած նրա սեփական ծրագրերին:

— Դուք ի՞նչ ունեք սենյոր Թորեսի դեմ և ինչո՞ւ մերժեցիք նրա ծրագիրն ու բարկացրիք նրան,— հարցրեց Լեոնսիան Ֆրենսիսին:

— Ոչինչ,— պատասխանեց Ֆրենսիսը,— պարզապես մենք նրա կարիքը չենք զգում, և նա մի առանձին բարյացակամություն չի ներշնչում ինձ: Նա հիմար է, ուստի կարող է ամեն մի ծրագիր կործանել: Հիշեցեք, թե ինչպես ձախողվեց իմ գործի առթիվ դատարանում ցուցմունքներ տալիս: Իսկ գուցե ընդհանրապես չի կարելի նրան վստահել: Չգիտեմ: Ինչպես էլ լինի, ինչո՞ւ վստահել նրան, երբ նա մեզ պետք չէ: Դե, իսկ նրա ծրագիրը ճիշտ է: Մենք հենց այդպես էլ կվարվենք. ուղղակի կգնանք բանտ և Հենրիին կգողանանք, եթե բոլորը համաձայն եք: Եվ կարիք չկա այդ գործը հանձնարարել կախաղանի արժանի սրիկաներին ու ծովափի քրջոտներին: Մենք վեց տղամարդ ենք: Եթե մեր ուժերով գլուխ չհանենք այս գործից, ուրեմն պետք է դրա վրա խաչ քաշել:

— Բայց միշտ էլ բանտի մոտ մի տասը ժամապահներ են շրջում,— առարկեց Լեոնսիայի եղբայրը՝ տասնութամյա Ռիկարդոն:

Նորից աշխուժանալու պատրաստ Լեոնսիան հանդիմանությամբ նայեց եղբորը, բայց Ֆրենսիսը պաշտպանեց պատանուն:

— Ճիշտ է ասված,— համաձայնեց նա:— Մենք կվերացնենք ժամապահներին:

— Հապա չորս ոտնաչափ հաստությամբ պարիսպներ՞ը,— հիշեցրեց երկվորյակներից մեկը՝ Մարտինես Սոլանոն:

— Մենք կանցնենք դրանց միջով,— պատասխանեց Ֆրենսիսը:

— Բայց ինչպե՞ս,— բացականչեց Լեոնսիան:

— Այ, հենց դրան էլ մոտենում եմ: Ասացեք, սենյոր Սոլանո, դուք հեծնելու ձիեր շա՞տ ունեք: Հիանալի է: Իսկ դուք, Ալեասադո, պատահաբար չե՞ք կարող ազարակում մի քիչ դիսամիտ ճարել: Հիանալի է: Հոյակապ: Դե, իսկ դուք, Լեոնսիա, իբրև հասիենդայի տիրուհին, անշուշտ, պետք է իմանաք, թե արդյոք մառանում «Երեք աստղ» վիսկիի բավականաչափ պաշար ունե՞ք:

— Օհո՛, դավադրությունն սկսում է հասունանալ,— ծիծաղեց նա, դրական պատասխան ստանալով Լեոնսիայից:— Այժմ մենք ունենք Ռայդեր Հագարդի կամ Ռեքս Բիչի ոգով գրված արկածային վեպի բոլոր հատկանիշները: Ուրեմն, լսեցեք. . . Ասե՛ք, սպասեք: Ես նախ ուզում եմ այս ներկայացման որոշ մասնակի կողմերի մասին խոսել ձեզ հետ, Լեոնսիա...

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կեսօրից շատ անց էր: Հենրին կանգնել էր իր խցի վանդակապատ լուսամուտի առաջ ու նայում էր դեպի փողոց, սպասելով, թե վերջապես երբ Չիրիկվի ծովալճակից թեթև հով կփչի և գոնե փոքր-ինչ կզովացնի շիկացած օդը: Փողոցը փոշոտ էր ու կեղտոտ, կեղտոտ, որովհետև քաղաքի հիմնադրման օրից, բազում հարյուրամյակներ, ոչ ոք չէր մաքրել այն, բացի թափառական շներից ու Նոդկալի շամբաճուռակներից, որոնք հենց այժմ էլ սավառնում էին փողոցի վերևում ու նետվում թափթփուկների վրա: Քարից կամ թրծած աղյուսից շինած և կրով սպիտակեցրած ցածրիկ տները իսկական դժոխքի էին վերածում այդ փողոցը:

Փոշուց ու ճերմակությունից Հենրիի աչքերը Նույնիսկ կսկծում էին, և նա արդեն ուզում էր հեռանալ պատուհանից, երբ հանկարծ նկատեց, որ մի քանի ցնցոտիավորներ, որոնք ննջում էին դիմացի տան դռան խորշում, արթնացան ու սկսեցին հետաքրքրությամբ նայել փողոցի երկայնքն ի վեր: Հենրին ոչինչ չէր տեսնում, բայց լսում էր արագընթաց կառքի դողոյունը: Ապա նրա տեսադաշտում երևաց ոչ մեծ ու խարխուլ մի ֆուրգոն, որը թռցնում էր սանձակոտոր ձին: Նստիքին բազմած ճերմակահեր ու ճերմակամորուք ծերունին իզուր էր փորձում զսպել նրան:

Հենրին զարմանում էր, թե ինչպես այդ խարխուլ ֆուրգոնը դեռևս չի քայքայվում՝ այնպես էր այն վեր-վեր թռչում ճամփի խոր փոսերում. ծռված անիվները հազիվ էին մնում սռնիի վրա ու պտտվում էին աններդաշնակ: Բայց եթե ֆուրգոնը դեռևս մի կերպ անվսաս էր մնում, ապա ինչպես է, որ մաս-մաս չէր լինում խարխուլ լծասարքը, այդ արդեն, Հենրիի կարծիքով, պարզապես հրաշք էր: Հավասարվելով այն պատուհանին, որի մոտ կանգնած էր Հենրին, ծերունին էլի մի հուսահատ փորձ արեց ձիուն կանգնեցնելու. նա ոտքի ելավ ու ձգեց սանձերը: Սանձերից մեկը փտած դուրս եկավ և տեղնուտեղը կտրվեց: Կառապանը զլորվեց Նստիքին, ձեռքում մնացած սանձը ձգվեց, և ձին, ենթարկվելով դրան, կտրուկ թեքվեց դեպի աջ: Թե հետո ինչ կատարվեց,— անի՛վը կտրվեց, թե նախ դուրս թռավ՝ ապա միայն կտրվեց,— Հենրին չէր կարող ասել: Մի բան անկասկած էր՝ ֆուրգոնը կտոր-կտոր եղավ: Ծերունին ցած ընկավ և, քարշ գալով փոշոտ փողոցով, սակայն համառորեն ձեռքից բաց չթողնելով սանձը, ստիպեց ձիուն շրջան գծել, և սա փռնագալով կանգնեց, մռուրով դարձած ծերունու կողմը:

Երբ ծերունին ոտքի ելավ, շուրջն արդեն բազմություն էր հավաքվել: Սակայն բանտից դուրս թռած ժանդարմները հետաքրքրասերներին աջ ու ձախ ցրեցին: Հենրին շարունակում էր կանգնած մնալ պատուհանի մոտ և ընդամենը մի քանի ժամվա կյանք ունեցող մարդու համար իսկապես զարմանալի հետաքրքրությամբ հետևել իր առաջ կատարվող տեսարանին ու ականջ դնել հասնող ձայներին:

Ծերունին ձին տվեց ժանդարմներին պահելու և, Նույնիսկ առանց հագուստի կեղտն ու փոշին մաքրելու, կաղալով գնաց դեպի ֆուրգոնը և սկսեց զննել բեռը, որը բաղկացած էր մի մեծ ու մի քանի փոքր արկղերից: Նա հատկապես հոգում էր մեծ արկղի մասին, Նույնիսկ փորձեց վեր բարձրացնել և, փոքր-ինչ տեղից շարժելով, ասես ականջ դրեց:

Այդ ժամանակ ժանդարմներից մեկը ձայն տվեց նրան. ծերունին ուղղվեց և սկսեց հաճույքով ու շատախոսությամբ պատասխանել:

— Ասում եք ես ո՞վ եմ: Ես ծեր մարդ եմ, սեկյորներ, և ապրում եմ այստեղից հեռու: Իմ անունն է Լեոպոլդո Նարվաես: Մայրս գերմանուհի էր,— թող բոլոր սրբերը պահպանեն նրա հանգիստը,— իսկ հորս անվանում էին Բալթազար դը Յեսու-ի-Սերվալյոս-ի-Նարվաես, իսկ նրա հայրը քաջարի գեներալ Նարվաեսն էր, որը կռվում էր ամենամեծ Բոլիվարի /Բոլիվար— Ամերիկայի ազգային-ազատագրական շարժման առաջնորդներից մեկը:/ ձեռքի տակ: Իսկ ես, ես հիմի բոլորովին կորա և նույնիսկ չեմ կարող տուն վերադառնալ:

Նա փոքր-ինչ սրտապնդվեց, լսելով իրեն տրվող հարցերն ու կարեկցանքի քաղաքավարի արտահայտությունները, որի պակասությունը չի զգացվում անգամ ամենաողորմելի քրջոտների մոտ, և շնորհակալությամբ շարունակեց իր պատմությունը:

— Ես եկել եմ Բոկաս-դել-Թորոյից: Ճամփան հինգ օր տևեց, և ես դեռ ոչ մի բան չեմ վաճառել: Ապրում եմ Կոլոնում, ու ավելի լավ կլիներ դուրս չգալի այնտեղից: Բայց ախր նույնիսկ ազնիվ Նարվաեսը կարող է դառնալ շրջիկ մանրավաճառ, իսկ մանրավաճառը նույնպես պետք է ապրի: Այդպես չէ՞, սեկյորներ: Հիմի ասեք, արդյոք չէ՞ք ճանաչում Թոմաս Ռոմերոյին, որն ապրում է ձեր սիրուն Սան Անտոնիոյում:

— Պանամայի ուզածդ քաղաքում Թոմաս Ռոմերոներ՝ որքան ուզես,— քրքջաց Պեդրո Չուրիտան՝ բանտապետի օգնականը:— Հարկ կլինի ավելի մանրամասն նկարագրել նրան:

— Նա իմ երկրորդ կնոջ հորեղբոր տղան է,— հուսավառ ձայնով ասաց ծերունին և ասես խիստ զարմացավ քրքիչի պոռթկումը լսելով:

— Դե, ախր Սան Անտոնիոյում և նրա արվարձաններում տասից ոչ պակաս ամեն տեսակ Թոմաս Ռոմերոներ են ապրում,— առարկեց բանտապետի օգնականը,— և նրանցից ամեն մեկը կարող է ձեր երկրորդ կնոջ հորեղբոր տղան լինել, սեկյոր: Այստեղ մենք ունենք հարբեցող Թոմաս Ռոմերո: Կա Թոմաս Ռոմերո-գող: Կա Թոմաս Ռոմերո... ասենք, չէ, դա կախվեց մի ամիս առաջ մարդասպանության ու կողոպուտի համար: Կա մի հարուստ Թոմաս Ռոմերո, որը սարբերում մեծ նախիրներ ունի: Կա...

Ամեն մի նոր անվան հետ Լեոպոլդո Նարվաեսը գլուխն էր միայն տարուբերում վշտահար, բայց երբ հիշատակվեց անասնաբույժը, նրա դեմքը լուսավորվեց հուսով, և նա խոսողին ընդհատեց.

— Ներեցեք ինձ, սեկյոր, ինչպես երևում է՝ դա հենց նա է որ կա: Համենայն դեպս, նա դրա նման մեկը պիտի լինի: Ես նրան կգտնեմ: Եթե հնարավոր լիներ իմ թանկագին ապրանքը որևէ տեղ պահ տալ, իսկույն ևեթ կգնայի նրան փնտրելու: Էլի լավ է, որ այս փորձանքն իմ գլխին եկավ հենց այստեղ: Ես կարող եմ իմ ապրանքը վստահել ձեզ. բավական է մի հայացք գցել՝ հասկանալու համար, որ դուք ազնիվ ու հարգարժան մարդ եք:— Այդ ասելով, ծերունին քրքրեց գրպանը, հանեց այնտեղից երկու արծաթե պետո ու պարզեց բանտապահին:— Ահա, վերցրեք: Հուսով եմ, որ դուք և ձեր մարդիկ չեք ափսոսա, որ ինձ օգնություն եք ցույց տվել:

Հենրին ծիծաղեց, նկատելով, թե փողի հայտնվելուն պես Պեդրո Չուրիտան և ժանդարմները ինչպիսի մեծ հետաքրքրությամբ ու հարգանքով սկսեցին վերաբերվել ծերունուն:

Հետաքրքրասերներին ետ մղելով շարդված ֆուրգոնից, նրանք իսկույն սկսեցին արկղները քառշ տալ բանտի շենքը:

— Չգույշ, սեկյորներ, զգույշ,— անասելի հուզմունքով աղաչում էր ծերունին, երբ նրանք ձեռք զարկեցին մեծ արկղին:— Կամաց տարեք: Դա խիստ արժեքավոր ու փխրուն ապրանք է:

Մինչդեռ ֆուրգոնի պարունակությունը բանտ կտեղափոխեին, ծերունին հանեց ձիու վրայի ամբողջ սարքը, բացի սանձից, ու դրեց ֆուրգոնի մեջ:

Բայց Պեդրո Չուրիտան հրամայեց ձիասարքը ևս ներս տանել, մի պերճախոս հայացք գցելով շուրջը խռնված քրջոտների վրա:

— Բավական է աչքներս թեքենք, ամեն ինչ մի ակնթարթում կչքանա, ընդհուպ մինչև վերջին փոկն ու ճարմանդը,— բացատրեց նա:

Բարձրանալով ֆուրգոնի բեկորների վրա՝ ծերունին Պեդրո Չուրիտայի և պահակախմբի օգնությամբ մի կերպ հեծավ ձի:

— Դե, շատ լավ է,— ասաց նա և երախտագիտությամբ ավելացրեց.— Յագարապատիկ շնորհակալ եմ, սենյորներ: Բախտս բերեց, որ պատահեցի ձեզ նման ազնիվ մարդկանց, որոնց մոտ իմ ապրանքն ապահով ու անվնաս կմնա: Ծիշտ է, ապրանքն էլ մի բան չէ. ինքներդ գիտեք, թե շրջիկ մանրավաճառն ինչ ապրանք կարող է ունենալ, բայց ինձ համար ամեն մի չնչին բանն էլ նշանակություն ունի: Շատ հաճելի էր ձեզ հետ ծանոթանալ: Վաղը կվերադառնամ իմ ազգականի հետ, որին, անշուշտ, կգտնեմ, և ձեզ կազատեմ իմ խղճուկ հարստությունը պահպանելու հոգսից:— Այստեղ նա հանեց գլխարկը:— Adios, սենյորներ, adios:

Եվ նա շտապ ճամփա ընկավ, որոշ անվստահությամբ աչքը շլելով իր ձիու վրա, որն այդ ամբողջ աղետի պատճառն էր: Բայց Պեդրո Չուրիտան ձայն տվեց նրան: Ծերունին սանձը քաշեց ու գլուխը շուռ տվեց:

— Գերեզմանոցում փնտրեցեք, սենյոր Նարվաես,— խորհուրդ տվեց բանտապետի օգնականը:— Այնտեղ մի հարյուր թոմաս Ռոմերոներ կգտնեք:

— Իսկ դուք, սենյոր, շատ եմ խնդրում, հատկապես պահպանեցեք մեծ արկը,— ի պատասխան բղավեց առևտրականը:

Յենրիի աչքի առաջ փողոցն ամայացավ. ժանդարմներն շտապ ցրվեցին, հավաքված ամբոխը՝ նույնպես. արևը շատ թունդ էր խաշում: Բոլորովին զարմանալի չէ, մտածեց Յենրին, որ ծեր առևտրականի առոգանության մեջ ինչ-որ ծանոթ բան կար: Չէ որ նա միայն կիսով չափ էր իսպանացի, հետևաբար լեզուն էլ կիսով չափ իսպաներեն էր, կիսով չափ գերմաներեն, քանի որ նրա մայրը գերմանուհի էր: Բայց և այնպես նա խոսում էր տեղացու նման: «Այ թե կթալանեն նրան իբրև տեղացու, եթե այդ ծանր արկը, որ նա թողեց բանտում, որևէ արժեքավոր բան կա»,— եզրակացրեց Յենրին ու դադարեց մտածել տեղի ունեցածի մասին:

Իսկ այդ միջոցին պահակատանը, Յենրիի խցից ընդամենը հիսուն ոտնաչափ հեռու, կողոպտում էին Լեոպոլդո Նարվաեսին: Սկիզբը դրեց Պեդրո Չուրիտան, որն ուշադիր ու բազմակողմանիորեն զննեց մեծ արկը: Նա բարձրացրեց արկի մի ծայրը, որպեսզի գաղափար կազմի քաշի մասին և, մի ճեղք գտնելով, սկսեց հոտոտել շան պես, հույս ունենալով հոտից որոշել, թե ինչ կա արկում:

— Արկը հանգիստ թող, Պեդրո,— ծիծաղելով ասաց ժանդարմներից մեկը:— Ախր քեզ երկու պետ են վճարել, որպեսզի ազնիվ լինես:

Բանտապետի օգնականը հառաչեց, մի քանի քայլ հեռացավ, նստեց, նորից նայեց արկին ու նորից հառաչեց: Խոսակցությունն առաջ չէր գնում: Ժանդարմները ստեպ-ստեպ նայում էին արկին: Նույնիսկ յուրոտված խաղաթղթերի կապուկը չէր կարողանում նրանց ուշադրությունը շեղել: Խաղը չէր ստացվում: Պեդրոյին ձեռք առնող ժանդարմն ինքը այժմ մոտեցավ արկին ու հոտոտեց:

— Ոչինչ չեմ գտնում,— ասաց նա:— Այս արկից ոչ մի հոտ չի գալիս: Ի՞նչ կարող է լինել: Կաբայներն ասաց, որ արժեքավոր ապրանք կա ներսում:

— Կաբայներո,— փնչացրեց մյուս ժանդարմը:— Այդ ծերունկի հայրիկն ավելի շուտ Կոլոնի փողոցներում տապակած ձուկ էր վաճառում, և պապը, երևի, նույնպես: Բոլոր այդ փչանաղքատները պնդում են, իբր թե կոնկիստադորների ուղղակի սերունդներն են:

— Իսկ ինչո՞ւ ոչ, Ռաֆայել,— առարկեց Պեդրո Չուրիտան:— Մի՞թե մենք բոլորս նրանց սերունդները չենք:

— Դա ճիշտ է,— շտապեց համաձայնել Ռաֆայելը:— Կոնկիստադորները քիչ ժողովուրդ չկոտորեցին:

— Եվ դարձան նրանց նախահայրերը, ովքեր կարողացան դուրս արձնել,— ավարտեց նրա փոխարեն Պեդրոն: Բոլորը քրքջացին:— Իսկ գիտեք, ես պատրաստ եմ այդ երկու պետներից մեկը տալ, միայն թե իմանայի ի՞նչ կա արկի մեջ:

— Ահա և Իգնասիոն,— բացականչեց Ռաֆայելը, ողջունելով ներս եկող բանտապահին, որի ուռած աչքերն ակնհայտորեն վկայում էին, որ նա նոր-նոր է վեր կացել սիեստայից /Սիեստա—

ետճաշյա հանգիստ ամենաշոգ ժամերին:/ հետո:— Յո նրան չեն վճարել, որ ազնիվ լինի: Այստեղ արի, Իզնասիո, մեր հետաքրքրասիրությանը բավարարություն տուր և ասա, թե ի՞նչ կա այս արկղում:

— Իսկ ես ի՞նչ իմանամ,— պատասխանեց Իզնասիոն՝ աչքերը ճպճպացնելով ու դիտելով ընդհանուր ուշադրության առարկան:— Ես հենց նոր արթնացա:

— Ուրեմն, քեզ չե՞ն վճարել նրա համար, որ ազնիվ լինես,— հարցրեց Ռաֆայելը:

— Ամենաողորմած աստվածամայր, ախր ո՞վ ինձ կվճարի ազնվության համար,— բացականչեց բանտապահը:

— Այդ դեպքում վերցրու այնտեղից կացինը և արկղը բաց,— իր միտքն ավարտեց Ռաֆայելը:— Մենք այդ բանը չենք կարող անել. ախր Պեդրոն իր երկու պետն պիտի բաժանի մեր մեջ, նշանակում է՝ մեզ էլ են վճարել ազնվության համար: Իզնասիո, բաց արա արկղը, թե չէ հետաքրքրասիրությունից բոլորս էլ կմեռնենք:

— Մենք միայն կնայենք, միայն կնայենք,— հուզված փնթփնթում էր Պեդրոն, երբ Իզնասիոն կացնի բերանը մտցրեց տախտակներից մեկի տակ:— Յետո նորից կփակենք արկղը և . . . ձեռքդ ներս մտցրու, Իզնասիո: Դե, ի՞նչ կա այնտեղ, հը՞ . . . Ինչի՞ է նման:

Իզնասիոն երկար ժամանակ ձգում ու քաշում էր ինչ-որ բան. վերջապես երևաց նրա ձեռքը՝ ափի մեջ ստվարաթղթե մի տուփ:

— Ըհը՛, զգույշ հանիր. ախր պետք է նորից տեղը դնենք,— նախազգուշացրեց Պեդրոն:

Երբ տուփն ու անհամար փաթեթները հանվեցին, ժանդարմները տեսան բրնձօղու մի մեծ շիշ:

— Այ քեզ ծրարո՛ւմ,— զարմանքով մրթմրթաց Պեդրոն:— Երևի շատ լավ վիսկի է, քանի որ պահում են այսպիսի զգուշությամբ:

— Ամերիկյան է,— հառաչեց մյուս ժանդարմը:— Միայն մի անգամ եմ բախտ ունեցել Սանթոսում ամերիկյան վիսկի փորձել: Յիանալի բան է: Դրանից հետո իսկույն այնպիսի քաջություն եկավ վրաս, որ ուղղակի թռա մրցասպարեզ ցլամարտի ժամանակ ու մերկ ձեռքերով նետվեցի կատաղած ցուլի վրա: Ծիշտ է, ցուլն ինձ ցած գլորեց, բայց ես, այնուամենայնիվ, թռա մրցասպարեզ:

Պեդրոն վերցրեց շիշը և ուզում էր վիզը թռցնել:

— Սպասի՛ր,— գոռաց Ռաֆայելը:— Ախր քեզ վճարել են, որ ազնիվ լինես:

— Վճարելը վճարել են, բայց նա, ով ինձ փող տվեց, ինքն ազնի՞վ է,— առարկեց Պեդրոն:— Ախր սա մաքսանենգություն է, ծերուկն, անշուշտ, մաքս չի վճարել: Նրա մոտ մաքսանենգային ապրանք է: Ուստի եկեք փառք տանք ճակատագրին և մաքուր խղճով յուրացնենք: Մենք սա կբռնագրավենք ու կոչնչացնենք:

Չսպասելով մինչև շիշը շրջան գործի, Իզնասիոն և Ռաֆայելը մի քանի շիշ էլ հանեցին ու վզերը թռցրին:

— «Երեք աստղ», ամենալավ վիսկին,— վերահաս լռության մեջ ազդարարեց Պեդրո Չուրիտան, ցույց տալով առևտրական պիտակը:— Յասկանո՞ւմ եք, գրիսգոները վատ վիսկի չեն ունենում. . . Մի աստղը նշանակում է, որ այդ վիսկին շատ լավն է, երկու աստղը՝ գերազանց է, իսկ երեք աստղը՝ հոյակապ է, հիանալի, ավելի լավը չի կարող լինել: Ես որ լավ գիտեմ: Գրիսգոները թունդ խմիչքների վարպետ են: Մեր պուլկան նրանց դուր չի գա:

— Իսկ չո՞րս աստղը,— հարցրեց Իզնասիոն. նրա ձայնը օդուց խռպոտել էր, աչքերը յուղոտ փայլ էին արձակում:

— Չո՞րս աստղը: Իզնասիո, բարեկամս, չորս աստղը կամ վայրկենական մահ է, կամ հավերժական երանություն: Մի քանի րոպե էլ չէր անցել, ինչ Ռաֆայելը, գրկելով մյուս ժանդարմին, արդեն նրան «ախպերս» էր անվանում և պնդում էր, որ լիակատար երջանկության համար մարդուն շատ քիչ բան է հարկավոր այստեղ, այս երկրի վրա:

— Ծերուկը հիմար է, եռակի հիմար և ինն անգամ հիմար,— համարձակվեց մեջ ընկնել Աուգուստինոսն, մռայլ կերպարանքով մի ժանդարմ, որն այդ ամբողջ ժամանակամիջոցում առաջին անգամ բաց արեց բերանը:

— Կեցցե՛ Աուգուստինոսն,— գոչեց Ռաֆայելը:— Տեսեք, թե երեք աստղերը ինչ հրաշք գործեցին: Հանեցին Աուգուստինոսի բերանի փակը:

— Եվ սորից ինն անգամ հիմար է ձեր ծերուկը,— հարբած ձայնով բղավեց Աուգուստինոսն:— Այս աստվածային խմիչքը նրա մոտ էր, նրա լիակատար տրամադրության տակ, նա ամբողջ հինգ օր ճամփա էր կտրում Բոկաս-դել-Թորոյից և ոչ մի անգամ ձեռք չի տվել սրանց: Դե, այդպիսի հիմարներին հարկավոր է տկլոր-տկլոր նստեցնել մրջնանոցի վրա, այ թե ինչ կասեմ ես ձեզ:

— Ծերուկը խարդախի մեկն է,— կռթռեց Պեդրոն: Երբ նա վաղն առավոտյան ներկայանա իր «Երեք աստղերի» հետևից, ես նրան կծերբակալեմ իբրև մաքսանենգի: Դա բոլորիս համար կհաշվեն իբրև ծառայություն:

— Իսկ եթե մենք ապացույցները վերացնե՞նք,— այ, այսպես,— հարցրեց Աուգուստինոսն, ևս մի շշի վիզը թռցնելով:

— Մենք կթողնենք ապացույցները, այ, այսպես,— առարկեց նրան Պեդրոն, դատարկ շիշը շրխկացնելով քարե հատակին:— Լսեք, բարեկամներ, եկեք պայմանավորվենք: Արկղը չափազանց ծանր էր: Այն ցած գցեցինք: Շշերը ջարդվեցին: Վիսկին թափվեց, և այսպիսով մենք իմացանք մաքսանենգության մասին: Արկղը և փշրված շշերը հերիք են այդ բանն ապացուցելու համար:

Մինչդեռ խմիչքի պաշարները պակասում էին, աղմուկը գնալով աճում էր: Մի ժանդարմ Իգնասիոյի հետ կռիվ սարքեց տասը սենտավո մոռացված պարտքի համար: Ուրիշ երկուսը, գրկած իրար ու նստած հատակին, դառն արցունքներով ողբում էին իրենց դժբախտ ընտանեկան կյանքը: Աուգուստինոսն շատախոս սեթևեթանքով շարադրում էր իր սեփական փիլիսոփայական հայացքները, որոնց հիմքում ընկած էր այն միտքը, թե լուրջությունը ոսկի է: Իսկ Պեդրոն Չուրիտան հուզված ապացուցում էր, որ բոլոր մարդիկ եղբայրներ են:

— Նույնիսկ բանտարկյալներին սիրում եմ եղբոր պես,— ասում էր նա, հագիվ լեզուն բերանում դարձնելով:— Կյանքը տխուր բան է:— Արցունքները հորդեցին նրա աչքերից. նա լռեց ու սորից մի կում արավ:— Ինձ համար բանտարկյալները ոնց որ հարազատ զավակներ: Սրտիցս արյուն է գնում նրանց համար: Տեսեք, ես լաց եմ լինում: Եկեք նրանց էլ բաժին հանենք: Թող նրանք էլ գոնե մի րոպե իրենց երջանիկ զգան: Իգնասիո, սիրելի եղբայր իմ, շնորհ արա ինձ, տեսնում ես ես արտասվում եմ: Մի շիշ այս էլիքսից տար գրիկոտ Մորգանին: Ասա նրան, որ շատ եմ ցավում. ես այնպես վշտացած եմ, որ նրան վաղը կախելու եմ: Հաղորդիր նրան իմ ողջույնը և խնդիր խմել. թող նա այսօր բախտավոր լինի:

Իգնասիոն գնաց հանձնարարությունը կատարելու, իսկ ժանդարմը, որը մի անգամ Սանթոսում ցլամարտի ժամանակ ցատկել էր մրցասպարեզ, բղավեց.

— Ցո՛ւլ բերեք այստեղ, ցո՛ւլ:

— Այս պատվական մարդն ուզում է գրկել ցուլին ու ասել, թե ինչպես է սիրում նրան,— բացատրեց Պեդրոն Չուրիտան, արցունքի հեղեղներ թափելով:— Ես էլ եմ սիրում ցուլերին: Աստծու բոլոր արարածներին էլ սիրում եմ: Նույնիսկ մժեղներին: Աշխարհը գեղեցիկ է: Սերն է թագավորում այնտեղ: Ես կուզեի մի առյուծ ունենալ, որ հետը խաղամ:

Ծովահենային հինավուրց երգի եղանակը, որ մեկը բարձրաձայն սուլում էր փողոցում, գրավեց Հենրիի ուշադրությունը, և նա ուզում էր նետվել դեպի պատուհանը, բայց, լսելով բանալու դրճոտոցը կողպեքի մեջ, շտապով պառկեց հատակին ու քնած ձևացրեց: Երերալով խցիկ ընկավ հարբած Իգնասիոն և շիշը հանդիսավորությամբ մեկնեց Հենրիին:

— Լավագույն ցանկություններով մեր ամենաբարի պետ Պեդրոն Չուրիտայից,— փնթփնթաց ժանդարմը:— Ասաց, որ դու խմես ու մոռանաս, որ վաղը նա ստիպված է լինելու քեզ կախաղան հանել:

— Իմ լավագույն ցանկությունները Պեդրո Չուրիտային, և իմ անուկից ասա նրան, որ գրողի ծոցը գնա իր վիսկիով հանդերձ,— պատասխանեց Յենրին:

Բանտապահը ուղղվեց տեղում և նույնիսկ դադարեց երեքայլ, ասես մեկեն զգաստացավ:

— Շատ լավ, սենյոր,— ասաց նա, դուրս եկավ խցից և դուռը փակեց:

Յենրին շեշտակի նետվեց դեպի պատուհանը և երես առ երես հանդիպեց Ֆրենսիսին, որն անմիջապես ճաղերի միջով նրան մեկնեց մի ատրճանակ:

— Ողջույն, սիրելի բարեկամ,— ասաց Ֆրենսիսը:— Մենք քեզ մի ակնթարթում կազատենք այստեղից:— Նա ձեռքում ուներ դինամիտի երկու գլանիկ՝ պայթուցիչներով ու հրապատիճներով:— Նայիր, թե ինչ եմ բերել,— սա ուզածդ լինգից ավելի լավ է: Փախիր դեպի ամենահեռավոր անկյունը, pronto!— շուտով այս պատի մեջ այնպիսի մի անցք կբացվի, որ նույնիսկ մեր «Անջելիկան» կարող է անցնել այնտեղով: Ի դեպ, «Անջելիկան» կանգնած է այստեղ մոտիկ, ափին, և սպասում է քեզ: Հապա, հեռացիր: Ես հիմա գլանիկները կդնեմ: Զուրը շատ կարճ է:

Յենրին դեռ չէր հասել խցի հեռավոր անկյունը, երբ բանալին դրճտաց կողպեքի մեջ ինչ-որ մեկի անհաստատ ձեռքում, դուռը կրնկի վրա բացվեց, և ձայների աղմուկը լցվեց խուց: Յենրին լսեց անկանոն բացականչությունների և լատինամերիկացիների անփոփոխ մարտական կոչը. «Խփի՛ր-գրինգոներին»:

Յենրին լսեց նաև, թե ինչպես խուց մտնող Ռաֆայելն ու Պեդրոն ինչ-որ բան էին փնթփնթում: «Նա չի ճանաչում ընդհանուր եղբայրությունը»,— գայրանում էր մեկը, իսկ մյուսը. «Նա ասաց, որ ես գրողի ծո՞ցը գնամ: Իսկապե՞ս այդպես ասաց, Իգնասիո»:

Ժանդարմների ձեռքին հրացան կար. նրանց հետևում խռնվել էին հարբած զինվորները, զինված ով ինչով կարող էր՝ ոմանք կիսասուներով, ոմանք հին ատրճանակով, ոմանք տապարով, իսկ ոմանք էլ պարզապես շշերով: Յենրիի ձեռքին ռևոլվեր տեսնելով, նրանք կանգ առան, և Պեդրոն, անհաստատ ձեռքով շոշափելով իր հրացանը, հայտարարեց.

— Սենյոր Մորգան, հիմա դուք բոլոր կանոններով կուղարկվեք դժոխք:

Բայց Իգնասիոն չուզեց սպասել: Կայունության համար հրացանը սեղմելով ազդրին, նա կրակեց յա-բախտ ու վրիպեց. գնդակը դիպավ պատին, մինչդեռ ինքը հենց նույն վայրկյանին ընկավ Յենրիի գնդակից: Մնացածներն արագ ետ քաշվեցին միջանցք և, թաքնվելով այնտեղ, սկսեցին գնդակոծել խուցը:

«Փառք աստծու, որ պատերն այդպես հաստ են, միայն թե անդրադարձ գնդակ չդիպչի»,— մտածեց Յենրին, շարունակելով կանգնած մնալ պատի ելուստի անկյունում և սպասելով պայթյունին:

Եվ կատարվեց. այն պատի մեջ, ուր պատուհանն էր, այժմ մի հսկայական անցք էր բացված: Բայց այդ րոպեին թա՛ծ քարաբեկորը դիպավ Յենրիի գլխին, ամեն ինչ լողաց նրա աչքերի առջև, և նա ծանրությամբ տապալվեց հատակին: Իսկ երբ պայթյունի փոշին ու վառողի ծուխը ցնդեցին, Յենրին աղոտ կերպով նշմարեց Ֆրենսիսին, որը կարծես ուղղակի լողաց նրա մոտ, խուցը: Ֆրենսիսը գրկեց նրան ու դուրս բերեց փողոց: Այստեղ Յենրին իսկույն իրեն լավ զգաց: Նա տեսավ Էնրիկո Սոլանոյին և նրա կրտսեր որդի Ռիկարդոյին, որոնք հրացաններով ետ էին մղում փողոցի վերևը փակած ամբոխին, մինչդեռ երկվորյակ եղբայրներ Ալվարադոն և Մարտինեսը ետ էին մղում ամբոխին փողոցի ներքևի մասում:

Բայց բնակիչները վազել էին այդտեղ պարզապես հետաքրքրասիրությունից. նրանցից ոչ ոք չէր էլ պատրաստվում կյանքը վտանգի ենթարկել ու փակել այնպիսի մեծագոր մարդկանց ճամփան, որոնք պայթեցնում են պարիսպները և օրը ցերեկով գրոհում բանտի վրա: Ուստի ամբոխը հարգալիիր ետ քաշվեց փոքրիկ խմբի առջև, երբ սա ուղղվեց դեպի փողոցն ի վար:

— Զիերն սպասում են մեզ կողքի նրբանցքում,— ասաց Ֆրենսիսը, ընթացքի ժամանակ պատասխանելով Յենրիի ձեռքսեղմումին:— Լեոնսիան էլ է այնտեղ: Զառորդ ժամում կհասնենք ափ, ուր մեզ սպասում է շխունան:

— Լսիր, ախր ես քեզ վատ երգ չսովորեցրի,— ժպիտով նկատեց Յենրին:— Երբ դու սկսեցիր շվշվացնել, ինձ թվաց, թե դրանից ավելի սքանչելի բան չի կարող լինել: Այդ շներն այնպես էին շտապում, որ չէին կարող սպասել վաղվան: Նրանք վիսկի էին լակել ու որոշել տեղնուտեղը վերջ տալ ինձ: Ինչ-որ նախկին կաբայերո, այժմ առևտրական, անցնում էր այստեղից այդ բուժախոտով բարձված ֆուրգոնով, և հենց դռների մոտ ֆուրգոնը ջարդուփշուր եղավ...

— Ախր մինչև իսկ ազնիվ Նարվատեը, որդին Բայթագար դե Յետու-ի-Սերվայոս-ի-Նարվատեի, որդին գեներալ Նարվատեի, որը հիշատակ է թողել իր մարտական փառքով, կարող է առևտրական դառնալ, իսկ առևտրականը նույնպես պետք է ապրի, այնպես չէ՞, սենյորներ,— խոսեց Ֆրենսիսը ճիշտ և ճիշտ քիչ առաջվա ծերունու պես:

Յենրին ուրախ նայեց նրան ու երախտագիտությամբ ասաց.

— Գիտես, Ֆրենսիս, ես շատ ուրախ եմ մի բանի համար, անասելի շատ...

— Ինչի՞ համար,— հարցրեց Ֆրենսիսը, երբ շուռ եկան փողոցի անկյունը, ուր ձիերն սպասում էին նրանց:

— Որ այն օրը Յորթի կղզում չկտրեցի ականջներդ, երբ քեզ մեջքի վրա գցեցի, և դու պնդում էիր, որ անպայման կտրեմ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Մարիանո Վերքարա-ի-Իքոսը՝ Սան Անտոնիոյի ոստիկանապետը, դատարանի դահլիճում ետ ընկավ բազկաթռոճի թիկնակին և, իրենից գոհ, հանգիստ ժպիտով սկսեց սիգարետ փաթաթել: Ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես մտածված էր: Ամբողջ օրը նա հետևում էր, որ ծերուկ դատավորը մեակալ չիմի, և այժմ վարձատրված էր դրա համար. դատավորը վարեց դատը ու այնպիսի մի որոշում հանեց, ինչպիսին ուզում էր շեֆը: Նա ոչ մի վրիպում թույլ չտվեց: Վեց փախած պեռնները տուգանվեցին խոշոր գումարով և ուղարկվեցին ետ, Սանթոսի ազարակը: Դատարանը նրանց ստրկական պայմանագիրը երկարաձգեց այնքան ժամանակով, որքան կպահանջվի տուգանքը վճարելու համար: Իսկ ոստիկանապետը դրա շնորհիվ հարստացավ ևս երկու հարյուր ամերիկյան ոսկե դոլարով: «Սանթոսցի այդ գրինգոները,— ժպտաց նա ինքն իրեն,— այնպիսի մարդիկ են, որոնց հետ արժե գործ ունենալ: Առաջին, նրանք ստեղծում են ազարակներ, դրանով իսկ նպաստելով երկրի զարգացմանը: Իսկ երկրորդ,— և սա գլխավորն է,— նրանք անհաշիվ փող ունեն ու լավ են վճարում այն փոքրիկ ծառայությունների համար, որ ես ի վիճակի եմ անել»:

Այստեղ նա նկատեց Ալվարես Թորեսին ու ժպտաց լայն ժպիտով:

— Լսեցեք,— ասաց իսպանացին՝ թեքվելով ոստիկանապետի ականջին:— Մենք կարող ենք այդ երկու Մորգաններին էլ վերջ տալ: Խոզ Յենրիին վաղը կկախեն: Այդ դեպքում ինչո՞ւ այսօր իր նախահայրերի մոտ չուղարկենք նաև խոզ Ֆրենսիսին:

Ոստիկանապետը հարցականորեն հոնքերը վեր բարձրացրեց:

— Ես այդ գրինգոյին խորհուրդ տվեցի գրոհել բանտի վրա: Սուլանոները հավատացել են նրա փչոցներին և այժմ նրա հետ են: Նրանք ամենայն հավանականությամբ կփորձեն հարձակում գործել այս երեկո: Ավելի շուտ չեն հասցնի: Ձեր գործն է պատրաստվել ու հետևել, որպեսզի Ֆրենսիս Մորգանը ընդհարման ժամանակ անպայման սպանվի:

— Ինչո՞ւ համար,— անշտապ հարցրեց ոստիկանապետը:— Ես ուզում եմ Յենրիին վերցնել ճանապարհից: Ինչ վերաբերում է Ֆրենսիսին, ապա թող նա վերադառնա իր սիրած Նյու Յորքը:

— Այսօր և եթե նա պետք է ուղարկվի իր նախահայրերի մոտ, իսկ թե ինչու՞ հիմա կհասկանաք: Ինչպես ձեզ հայտնի է այն հեռագրերից, որ ես ուղարկում եմ կառավարական ռադիոկայանի միջոցով, և որոնք դուք կարդում եք...

— Ներեցեք, մենք այդպես ենք պայմանավորվել, և այդ պայմանով էլ ես ձեզ համար թույլտվություն ձեռք բերեցի՝ օգտվելու կառավարական ռադիոկայանից,— հիշեցրեց ոստիկանապետը:

— Դրա համար ես չեմ էլ գանգատվում,— հավատացրեց Թորեսը:— Եվ այսպես, ձեզ հայտնի է, որ ես խիստ գաղտնի և հույժ կարևոր գործեր ունեմ նյույորքցի Ռիզանի հետ:— Նա ձեռքը դրեց ծոցագրպանի վրա:— Չենց հիմա ես նոր հեռագիր ստացա նրանից: Նա պահանջում է խոզ Ֆրենսիսին ևս մի ամիս պահել այստեղ, իսկ եթե այդ երիտասարդը բոլորովին չվերադառնա Նյու Յորք, ապա, որքան ես ճիշտ հասկացա սենյոր Ռիզանին, ոչ ոք արցունք չի թափի: Այդպես, եթե ինձ հաջողվի այդ բանը, ապա ձեզ համար էլ վատ չի լինի:

— Բայց դուք չասացիք, թե դրա համար որքան եք ստացել և որքան էլ ստանալու եք,— որոշեց հողը շոշափել ոստիկանապետը:

— Այդ առթիվ մեր միջև մասնավոր բնույթի համաձայնություն է եղել, և գումարն այնքան էլ մեծ չէ, որքան ձեզ կարող է թվալ: Այդ սենյոր Ռիզանը կծծի մեկն է, սարսափելի կծծի: Բայց և այնպես, եթե մեր գործը հաջողությամբ պսակվի, ես ազնվությամբ այդ գումարը կկիսեմ ձեզ հետ:

Ոստիկանապետը գոհունակությամբ գլխով արավ ու հարցրեց.

— Դե, գոնե հազար դոլար կստանա՞ք ոսկով:

— Կարծում եմ՝ այո: Այդ իռլանդացի վարազը հո չի կարող ավելի պակաս վճարել. այն ժամանակ հինգ հարյուր դոլարը ձերն է, եթե, իհարկե, խոզ Ֆրենսիսն իր գլուխը դնի Սան Անտոնիոյում:

— Իսկ միգուցե և հարյուր հազար՞ կստանաք ոսկով,— շարունակեց հարցաքննել ոստիկանապետը:

Թորեսը ծիծաղեց, կարծես մի զվարճալի կատակ էր լսել:

— Դե, համենայն դեպս, ո՛չ հազար,— չէր հանգստանում նրա խոսակիցը:

— Միգուցե առատաձեռնությունը բռնի և ավելին տա,— հաստատեց Թորեսը:— Միանգամայն հնարավոր է, որ մի հինգ հարյուր էլ ավելացնի. այդ դեպքում, պարզ է, այդ փողերի կեսն էլ ձերն է:

— Ես իսկույն մեկնում եմ բանտ,— ասաց ոստիկանապետը:— Սենյոր Թորես, կարող եք հույս դնել ինձ վրա, ինչպես ես եմ հույս դնում ձեզ վրա: Առանց ուշացնելու հենց հիմա գնանք և գնանք միասին, որպեսզի ինքներդ համոզվեք, թե ինչպես եմ նախապատրաստվում Ֆրենսիս Մորգանի ընդունելությանը: Չենք գործածելը ես դեռ չեմ մոռացել: Բացի, դրանից, ես կասեմ երեք ժանդարմներին, որպեսզի կրակեն միայն նրա վրա: Այդպես, ուրեմն, այդ շուն գրինգոն պատրաստվում է գրոհել մեր բանտի վրա՞: Գնացինք: Գնացինք, շուտ:

Նա վեր կացավ ու վճռական շարժումով սիգարետը դեռ շարտեց: Բայց դեռ սենյակի մեջտեղը չէր հասել, երբ ներս ընկավ ինչ-որ քրջոտ մանչուկ, որից քրտիկքը հոսում էր հեղեղի նման, քաշեց նրա թևքից և, հագիվ շունչը ետ բերելով, լալկան ձայնով ծվաց.

— Ես կարևոր նորություն ունեմ ձեզ համար: Դուք ինձ կվճարե՞ք, մեծարգո սենյոր: Ես ամբողջ ճանապարհը վագել եմ:

— Ես քեզ կուղարկեմ Սան Խուան, որպեսզի շամբաճուռակները քեզ քրքրեն, լեշի մեկը,— եղավ պատասխանը:

Տղան այդ սպառնալիքից նույնիսկ կծկվեց, բայց, մղվելով ստամոքսի դատարկությունից, սարսափելի աղքատությունից և մի քանի գրոշ ձեռք գցելու ցանկությունից, որպեսզի կարողանա վճարել առաջիկա ցլամարտի մուտքի համար, իր ողջ քաջությունը օգնության կանչեց ու կրկնեց.

— Սենյոր, մի՛ մոռանաք, որ ես առաջինն եմ բերել ձեզ այս նորությունը: Ես ամբողջ ճանապարհը վագել եմ, քիչ էր մնում շունչս կտրվեր, դուք ինքներդ էլ հո տեսնում եք, սենյոր: Ես ամեն ինչ կպատմեմ, միայն խնդրում եմ չմոռանաք, որ ես ամբողջ ճանապարհը վագել եմ և որ առաջինը ես եմ ասել ձեզ:

— Ախ դու անասուն: Լավ, չեմ մոռանա: Բայց քեզ համար միայն ավելի վատ կլինի, եթե հիշեմ, որ այդ դու ես առաջինն ասել: Ասա տեսնեմ՝ ի՞նչ նորություն է: Երևի դա մի սենտավո էլ չարժե: Իսկ եթե իրոք մի սենտավո չարժե, այ, այն ժամանակ կափսոսաս, որ լույս աշխարհ ես եկել: Սան Խուանը քեզ դրախտ կթվա այն բանի համեմատությամբ, ինչ ես կբերեմ քո գլխին:

— Բանտը. . . — սարսափով թոթովեց տղան:— Այն գրինգոն, որին երեկ պիտի կախեին, պայթեցրեց բանտի պատը: Արդար սրբեր: Անցքը այնքան մեծ է, ոնց որ մեր տաճարի զանգակատունը: Եվ մյուս գրինգոն, նա, որն այնպես նման է նրան և որին պիտի կախեին վաղը, փախավ այդ անցքի միջով: Այն գրինգոն դուրս քաշեց նրան: Ես ինքս իմ սեփական աչքերով տեսա և իսկույն էլ վազեցի այստեղ, ամբողջ ճանապարհը վազեցի, և դուք չմոռանաք, սեւյոր...

Բայց ոստիկանապետն արդեն շուռ եկավ դեպի Թորեսը և ոչնչացնող հայացքով նայեց նրան.

— Այդպես, ուրեմն, ձեր կարծիքով այդ սեւյոր Ռիզանը թագավորական առատաձեռնություն հանդես կբերի, եթե վճարի մեզ այն մեծ գումարը, որ խոստացել է: Դե, նա հինգ անգամ ավելի, տասն անգամ ավելի պետք է տա մեզ,— ախր այդ վագր-գրինգոն կործանում է մեր օրենքներն ու կարգերը, և նույնիսկ մեր բանտի ամրակուռ պարիսպները...

— Դե, դա, անշուշտ, կեղծ տազնապ է միայն, փետուր, որը ցույց է տալիս, թե քամին որ ուղղությամբ է փչում և ինչ մտադրություններ ունի Ֆրենսիս Մորգանը,— թթու ժպիտով մրթմրթաց Թորեսը:— Չմոռանաք, որ բանտի վրա գրոհելու խորհուրդը ես եմ տվել:

— Ուրեմն, այդ դեպքում դուք և սեւյոր Ռիզանը պիտի վճարեք բանտի վերականգնման ծախսերը,— հարցրեց ոստիկանապետը և, փոքր-ինչ լռելով, ավելացրեց.— Բայց ես այնուամենայնիվ չեմ հավատում, որ նա այդ բանն արել է: Դա անհնար է: Նույնիսկ կիսախելագար գրինգոն սիրտ չէր անի:

Այդ պահին դռների մեջ երևաց ժանդարմ Ռաֆայելը, որի ճակատի վերքից արյուն էր հոսում. հրացանով դես ու դեն հրելով հետաքրքրասերներին, որոնք արդեն սկսում էին հավաքվել Թորեսի և ոստիկանապետի շուրջը, նա կանգնեց իր շեֆի առաջ:

— Մենք ջարդված ենք,— սկսեց նա:— Բանտը համարյա ամբողջովին ավերված է: Հարյուր ֆունտ դինամիտ: Հազար ֆունտ: Մենք խիզախորեն նետվեցինք բանտը փրկելու: Բայց այն օդ թռավ: Ախր հազար ֆունտ դինամիտը հանաք բան չէ: Ես ընկա ուշակորույս, բայց հրացանը ձեռքիցս բաց չթողի: Հետո ուշքի եկա ու նայեցի շուրջս: Չորս կողմը միայն դիակներ էին: Զաջ Պեդրոն, քաջ Իզնասիոն, քաջ Աուգուստինոն, բոլորը, բոլորը մեռած ընկած էին:— Ռաֆայելը հավանաբար պիտի ասեր՝ «մեռելի պես հարբած էին», բայց ինչպես ամեն մի լատինամերիկացու, այնպես էլ նրա բնավորությունը բարդ էր, ուստի նա ողբերգական գծերով պատկերեց այդ աղետը, այնպես որ ինքը և բոլոր մյուս ժանդարմները հերոսացան, ինչպես անկեղծորեն պատկերվում էր նրա երևակայության առաջ:— Նրանք մեռած ընկած էին: Գուցե և ոչ մեռած, այլ միայն խլացած: Ես սողացի: Հասա այդ գրինգո Մորգանի խուցը: Դատարկ է: Պատի մեջ մի մեծ, սարսափելի անցք: Այդ անցքի միջով դուրս սողացի փողոց: Տեսնեմ ահագին ամբոխ էր հավաքվել: Բայց գրինգո Մորգանի հետքն էլ չկար արդեն: Խոսեցի մի ցնցոտիավորի հետ, որը տեսել էր, թե այդ ամենը ինչպես էր եղել: Ձիերն սպասելիս են եղել նրանց: Նրանք սլացել են դեպի ծովափ: Այնտեղ արդեն առագաստները բաց կանգնած է եղել շխուռան: Ֆրենսիս Մորգանի թամբին կապած է եղել ոսկու մի պարկ. ցնցոտիավորն իր աչքով է տեսել: Մի այսպիսի մեծ պարկ. . .

— Իսկ անցքը մե՞ծ է,— հարցրեց ոստիկանապետը:— Պատի անցքը:

— Դե, պարկից մեծ կլինի, շատ ավելի մեծ,— պատասխանեց Ռաֆայելը:— Չնայած գրինգոյի պարկը մեծ էր, ցնցոտիավորն այսպես ասաց ինձ: Եվ պարկը կապած էր Մորգանի ձիու թամբին:

— Իմ բանտը,— բացականչեց ոստիկանապետը. նա արագ դուրս քաշեց դաշույնն ու բարձրացրեց վեր, բռնելով ծայրից այնպես, որ նրա կոթը, որի վրա մեծ վարպետությամբ փորագրված էր խաչված Զրիստոսը, թվաց իսկական խաչ:— Երդվում եմ բոլոր սրբերով, որ ես վրեժխնդիր կլինեմ: Օ՛, մեր բանտ: Մեր արդարադատություն: Մեր օրենք. . . Ձիեր: Շո՛ւտ, ձիեր տվեք: Ժանդարմ, շտապ, ձիեր:— Նա դարձավ Թորեսին ու հարձակվեց վրան, չնայած վերջինս ոչ մի ծպտուն չէր հանել:— Գրողի ծոցը սեւյոր Ռիզանը: Գոնե իմը վերադարձնեին ինձ: Ինձ անպատվեցին: Ավերեցին իմ բանտը: Ծաղրուծանակի ենթարկեցին իմ օրենքը, մեր օրենքը, թանկագին բարեկամներ: Ձիեր, ձիեր: Խլել անցորդներից: Դե շո՛ւտ, շո՛ւտ:

«Անջելիկայի» տեր նավապետ Թրեֆեզենը, որդին մայա ցեղի հնդկուհու և ջամայկացի նեգրի, քայլում էր ետ ու առաջ իր շխուռայի նեղ տախտակամածին, նայելով Սան Անտոնիոյի կողմը, որտեղից արդեն շարժվում էր մարդկանցով լեցուն մակույկը, և մտածում. արդյոք չփախչե՞լ նավը

վարձակալող այդ խելագար ամերիկացուց: Կամ գուցե պատռել պայմանագիրը և նո՞րը կազմել՝ երեք անգամ ավելի մեծ գումարով: Թրեֆեզենին տանջում էին իր խառը արյան հակասական հրամանները. իբրև նեգր, նա հակված էր զգուշության և Պանամայի օրենքները պահպանելուն, իսկ իբրև հնդիկ՝ ձգտում էր ապօրինության և կոնֆլիկտների:

Հաղթեց հնդկական արյունը. նավապետը հրամայեց բարձրացնել կյուլվերը և նավն ուղղեց դեպի արև, որպեսզի որքան կարելի է շուտ վերցնի մոտեցող մակույկը: Նկատելով, որ բոլոր Սոլանոներն ու Մորգանները զինված են հրացաններով, նա քիչ մնաց փախուստի դիմեր՝ բախտի քմահաճույքին թողնելով նրանց: Բայց երբ տեսավ նավախելում կին կա, ռոմանտիկայի հակումն ու ազահուկությունը դրդեցին սպասել ու վերցնել մակույկը. քանզի նա գիտեր, որ եթե տղամարդկանց գործերին կին է խառնված, ապա դրա հետ միասին երևան են գալիս վտանգն ու փողը:

Եվ այսպես, նավեզրին հայտնվեց մի կին, հետևապես և վտանգ ու փող՝ Լեոնսիան, հրացանները և ոսկու պարկը: Ինչ կար-չկար մակույկում, ոչ առանց ջանքի, բարձրացավ շխուռնա. քանի որ քամին թույլ էր, նավապետը նեղություն չկրեց մինչև իսկ նավը կանգնեցնել:

— Ուրախ եմ ձեզ ողջունելու «Անջելիկայի» նավեզրին, սը՛ր,— լայն ժպտաց նավապետ Թրեֆեզենը՝ բարևելով Ֆրենսիսին:— Իսկ դա՞ ով է,— հարցրեց նա, գլխով անելով Հենրիի կողմը:

— Իմ բարեկամն է, նավապետ, իմ հյուրը և նույնիսկ ազգականը:

— Համարձակվում եմ հարցնել, սը՛ր, իսկ այն ի՞նչ ջենթլմեններ են այդպես արագ սլանում ավի երկայնքով:

Ֆրենսիսը նայեց ավագոտ ավիով քառատրոփ սլացող ձիավորների խմբին, նավապետի ձեռքից համարձակորեն վերցրեց հեռադիտակը և ուղղեց դեպի արև:

— Խմբի առջևից ընթանում է ինքը շեֆը,— հայտնեց նա, դիմելով Լեոնսիային ու նրա հարազատներին,— իսկ նրա հետևից՝ ժանդարմները:— Հանկարծ նա ինչ-որ բացականշուկություն արձակեց, ապա երկար նայեց հեռադիտակով և, վերջապես, օրորեց գլուխը.— Ինձ թվաց, թե նրանց մեջ նկատեցի մեր բարեկամ Թորեսին:

— Ո՞ւմ հետ, մեր թշնամիների՞,— բղավեց Լեոնսիան, չհավատալով սեփական ականջներին: Նա հիշեց, թե ինչպես Թորեսը հենց այս առավոտ, հասիենդայի հովնոցում, սիրտն ու ձեռքը առաջարկեց իրեն և ասաց, որ կարող է տնօրինել նրա կյանքն ու պատիվը, ինչպես կամենա:

— Երևի սխալվեցի,— խոստովանեց Ֆրենսիսը:— Նրանք մի տեսակ բոլորն իրար գլխի հավաքվեցին: Բայց շեֆին լավ եմ ջոկում, նա սլանում է մի երկու յարդ առջևից:

— Իսկ ի՞նչ մարդ է այդ Թորեսը,— խոստովանեց հարցրեց Հենրին:— Նա հենց սկզբից ինձ դուր չեկավ, իսկ ձեր տանը, Լեոնսիա, միշտ ուրախությամբ են ընդունում նրան:

— Ներողություն եմ խնդրում, սըր,— շողջորթությամբ ընդհատեց նրանց նավապետ Թրեֆեզենը,— և թույլ տվեք ամենախոնարհ հարգանքը կրկնել իմ հարցը, սը՛ր. ովքե՞ր են այդ ձիավորները, որոնք այդպես սրընթաց թռչում են ավի երկայնքով: Ովքե՞ր են նրանք, սը՛ր:

— Նրանք երեկ քիչ մնաց կախեին ինձ,— քրքջաց Ֆրենսիսը:— Իսկ վաղը պատրաստվում էին կախել ահա իմ այս ազգականին: Միայն թե մենք նրանց խաբեցինք: Եվ, ինչպես տեսնում եք, այստեղ ենք ահա: Իսկ այժմ, միտոր շկիպեր, խնդրում եմ ուշադրություն դարձնել, որ մեր առաջատները միայն օրորվում են քամուց: Մենք չենք շարժվում: Որքա՞ն ժամանակ եք մտադիր ցցված մնալ այստեղ:

— Միտոր Մորգան, սը՛ր,— հետևեց պատասխանը,— ես խորին հարգանքով ծառայում եմ ձեզ իբրև իմ նավը վարձակալող կլիենտի: Բայց պետք է հայտնեմ ձեզ, որ ես բրիտանահպատակ եմ: Գևորդ թագավորն իմ թագավորն է, սը՛ր, և ես ամենից առաջ պարտավոր եմ նրան ենթարկվել, այլև օտարերկրյա ջրերում նավարկելու առթիվ նրա սահմանած օրենքներին, սը՛ր: Ինձ համար պարզ է, սը՛ր, որ դուք խախտել եք այս երկրի օրենքները, որի արդյունք է հասցրել ես ձեզ, այլապես ահա կարգուկանոնի այն պահապանները այդպիսի համառությամբ չէին հետապնդի ձեր ողորմածությանը: Բացի դրանից, ինձ համար պարզ է, որ դուք ուզում եք, որպեսզի ես

խախտում ծովագնացության օրենքները և օգնում ձեզ փախչելու: Սակայն պատիվը պարտավորեցնում է ինձ, սը՛ր, մնալ այստեղ այնքան, մինչև որ այն փոքրիկ թյուրիմացությունը, որն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել ցամաքում, չհարթվի ի գոհացումս բոլոր շահագրգռված կողմերի, սը՛ր, այլև ի գոհացումս իմ օրինական միապետի:

— Բայց առագաստները և դուրս ել ծով, շկիպեր,— զայրացկոտությամբ ընդհատեց նրան Յենրին:

— Յուսով եմ, որ դուք ողորմածաբար կներեք ինձ, սը՛ր, բայց ցավոք սրտի ես պետք է ձեզ երկու բան ասեմ: Առաջին, դուք այն անձը չեք, որը վարձակալել է իմ նավը. իսկ երկրորդ, դուք իմ քաջակորով Գևորգ թագավորը չեք, որին երդվել եմ ծառայել հավատով ու ճշմարտությամբ:

— Բայց ես հո վարձակալե՞լ եմ քո նավը, շկիպեր,— բարեհոգությամբ միջամտեց Ֆրենսիսը, որն արդեն սովորել էր զլուխ հանել մետիսից:— Բարի եղիր, ուրեմն, վերցնել ղեկանիվը և մեզ դուրս բերել Չիրիկվիի ծովաճակից, և, ի սեր աստծու, որքան կարելի է շուտ, թե չէ քամին կդադարի:

— Բայց, սը՛ր, պայմանագրում չի նշված, որ «Անջելիկան» պետք է խախտի Պանամայի և Գևորգ թագավորի օրենքները:

— Ես քեզ լավ կվճարեմ,— խոստացավ Ֆրենսիսը, սկսելով համբերությունը կորցնել:— Անցիր գործի:

— Այդ դեպքում, սը՛ր, համաձայն եք նոր պայմանագիր կնքել ինձ հետ երեք անգամ ավելի գումարով:

Ֆրենսիսը հաստատական գլխով արավ:

— Այդ դեպքում մի թուպե, սը՛ր, ես՝ հիմա: Վագեմ խցիկ թուղթ ու գրիչ բերելու, որպեսզի կարողանանք նոր փաստաթուղթ սարքել:

— Օ՛Ֆ, տեր աստված,— տնքաց Ֆրենսիսը:— Դե գոնե մի քիչ արագ շարժվիր: Չէ որ մենք կարող ենք ընթացքի ժամանակ էլ այդ թուղթը կազմել, պարտադիր չէ կանգնած տեղում: Նայիր, նրանք կրակում են:

Նավապետ-մետիսը, համազարկը լսելով, աչք ածեց բացված առագաստներին և միջևակայմի ամենավերևում նկատեց գնդակի մի անցք:

— Լավ, սը՛ր,— համաձայնեց նա:— Դուք ջենթլմեն եք ու պատվախնդիր մարդ: Ես հավատում եմ ձեր խոսքին և հուսով եմ, որ առաջին իսկ հնարավորության դեպքում փաստաթուղթը կստորագրեք. . . Յեյ դու, սևամուկ, վերցրու ղեկանիվը: Շուտ, սև սատանաներ, թուլացնել գլխավոր առագաստը: Իսկ դու, Պերսիվալ, օգնիր այ այնտեղ:

Անձնակազմը վայրկենապես հնազանդվեց: Մշտաժպիտ կինգստոնցի նեգր Պերսիվալը, այլև մյուսը, որի անունն էր Խուլան,— մաշկի բաց դեղնավուն գույնը և բարակ, քնքուշ աղջկական մատները վկայում էին, որ նա մետիս է,— կիսախսպանացի, կիսահնդիկ,— նետվեցին առագաստները թուլացնելու:

— Յասցրու այդ սևամուկի գլխին, եթե նա հետագայում էլ հանդգնի,— փնթփնթաց Յենրին, դիմելով Ֆրենսիսին:— Կամ հանձնարարիր ինձ, և ես իսկույն նրա հաշիվը կմաքրեմ:

Բայց Ֆրենսիսը գլուխն օրորեց.

— Նա հիանալի մարդ է, միայն Ջամայկայի նեգրերից է, իսկ դու գիտես, թե ինչպիսին են նրանք: Ըստ որում, նրա մեջ կա նաև հնդկական արյուն: Ավելի լավ է արի յուրա գնանք, քանի որ նա այդպիսի թռչուն է: Նրա մտքում ոչ մի վատ բան չկա, պարզապես ուզում է ավելի շատ պոկել մեզանից. չէ որ նա վտանգի է ենթարկում իր շխուռնան, որը կարող են բռնագրավել: Բացի դրանից, նա տառապում է vocabularitis-ի մտամոլությամբ. պարզապես կտրաքվի, եթե ամեն տեսակ խորիմաստ անհեթեթություններ դուրս չտա:

Այդ պահին նրանց մոտեցավ Էնրիկո Սոլանոն. նրա ռունգները փքվում էին, իսկ մատներն անհամբերությամբ թմբկահարում էին հրացանը, միևնույն աչքերը ստեպ-ստեպ դառնում էին դեպի ափ, որտեղից անկանոն հրաձգություն էր կատարվում:

— Սենյոր Մորգան, ես լռջորեն մեղավոր եմ ձեր առաջ,— ասաց նա, ձեռքը պարզելով Յենրիին:— Ես այնպես էի ընկճված իմ սիրելի եղբոր՝ Ալֆարոյի, մահվամբ, որ, խոստովանում եմ, առաջին պահ մտածեցի, թե դուք եք սպանել նրան:— Այստեղ ձեր Էնրիկոյի աչքերը փայլատակեցին անջնջելի, բայց ոչնչացնող բարկությամբ:— Դա իսկական սպանություն էր, ինչ-որ վախկոտի կողմից կատարված խարդավանք՝ մթության քողի տակ մեջքին հասցված հարված: Եվ ինչպե՞ս իսկույն գլխի չընկա ես: Բայց վիշտն այնպես էր շանթահարել ինձ, իսկ բոլոր հանցանշանները ձեր դեմ էին: Ես նույնիսկ մոռացա, որ իմ ջերմորեն սիրած ու միակ աղջիկը նշանված է ձեզ հետ. չմտածեցի, որ այդպիսի բարոյական հատկանիշների տեր մարդը,— ուղղամիտ, խիզախ, արի,— ընդունակ չէ մթության քողի տակ թիկունքին հարվածել: Ցավում եմ իմ սխալի համար: Խնդրում եմ ներքեք ինձ: Եվ ես նորից ուրախ կլինեմ հպարտությամբ ընդունել ձեզ իմ ընտանիքը, իբրև իմ Լենսիայի ամուսնու:

Մինչդեռ Յենրի Մորգանին նորից այդպես անկեղծորեն կընդունեին Սոլանո ընտանիքի գիրկը, Լենսիան գրգռված մտածում էր. ինչո՞ւ է հայրը հետևում լատինամերիկյան այդ հիմար սովորույթին ու այդքան փքուն խոսքեր ասում, երբ բավական կլիներ միակ մի նախադասություն, ամուր ձեռքսեղմում և անկեղծ հայացք իրար աչքերի մեջ: Եթե հոր տեղը Յենրին լիներ կամ Ֆրենսիսը, այդպես էլ, անշուշտ, կվարվեր: Դե, ինչո՞ւ նրա բոլոր իսպանացի ազգականները սիրում են արտահայտվել այդպես գունազեղ ու բազմաբառ, ճիշտ ինչպես այդ ջամայկացի նեգրը:

Իսկ Ֆրենսիսն այդ միջոցին ամբողջ ուժով ջանում էր այնպիսի տեսք ընդունել, իբրև թե այդ ամենը բնավ չէր հետաքրքրում իրեն. բայց և այնպես նա նկատեց, որ Խուան անուևով դեղնադեմ նավաստին ինչ-որ բանի մասին քչփչում է մյուսների հետ, բազմանշանակ ուսերն է թոթվում ու կատաղորեն թափահարում թևերը:

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

— Այ տեսաք, մենք այդ երկու խոզ-գրինգոներին էլ բաց թողեցինք,— դառնությամբ բացականչեց Ալվարես Թորեսը, ափից նկատելով, թե ինչպես «Անջելիկան», պարզելով ուժեղացող քամուց փքված առագաստները, սկսեց արագորեն հեռանալ, և այժմ արդեն ցամաքից թռչող գնդակները չէին կարող նրան հասնել:

— Ինձ թվում է, թե ես կարող էի տաճարի երեք զանգի համար դրամ նվիրաբերել, միայն թե տեսնեի նրանց իմ հրացանից հարյուր յարդ հեռավորության վրա,— բարբառեց Մարիանո Վերքարա-ի-Իքոսը:— Ը՛հ, թե որ ինձնից կախված լիներ, ես բոլոր այդ գրինգոներին այնպես արագ կճամփեի այն աշխարհը, որ սատանան ստիպված կլիներ դժոխքում անգլերեն սովորել:

Բարկությունից ու անգոր զայրույթից շնչասպառ լինելով Ալվարես Թորեսը մի քանի անգամ բռունցքով խփեց թամբի աղեղին:

— Իմ երագների տիրուհին,— համարյա հեկեկալով բացականչեց նա:— Նա մեկնեց, անհետացավ երկու Մորգանների հետ: Ես ինքս տեսա, թե ինչպես նա բարձրացավ շխուևա: Յիմա ի՞նչ պիտի ասեմ Ռիգանին Նյու Յորքում: Ախր եթե շխուևան դուրս գա Չիրիկվի ծովալճակից, կարող է ուղիղ ընթացքով նավարկել դեպի Նյու Յորք: Եվ այն ժամանակ կպարզվի, որ այդ խոզ Ֆրենսիսը մի ամիս էլ չի բացակայել, իսկ սենյոր Ռիգանը չի ուզենա մեզ ոչինչ վճարել:

— Նրանք Չիրիկվիից դուրս չեն գա,— մռայլ հայտարարեց ոստիկանապետը:— Ես անուղղել անասո՞ւն եմ, ինչ է: Ոչ, ես մարդ եմ: Եվ գիտեմ, որ նրանք այստեղից դուրս չեն գա: Մի՞թե չեմ երդվել մինչև մահ ու գերեզման վրեժխնդիր լինել նրանցից: Մայրամուտից երևում է, որ գիշերվա դեմ քամին կդադարի: Երկնքին նայելով, իսկույն կարելի է հասկանալ այդ: Տեսնո՞ւմ եք այն փետրածև ամպերը: Եթե քամի բարձրանա էլ, ապա դա կլինի միայն թույլ քամի, և անպայման հյուսիս-արևելքից: Ուրեմն, այդ քամին նրանց կքշի ուղիղ Չորրերա նեղուցը: Իսկ նրանք երբեք չեն համարձակվի մտնել այնտեղ: Այդ սևամորթ նավապետը իր հինգ մատի նման գիտի ծովալճակը: Նա կփորձի կորագծով անցնել Բուկաս-դել-Թորոյի մոտով կամ Կարտախո նեղուցով: Բայց այ դեպքում էլ մենք ավելի խորամանկ դուրս կգանք: Ես էլ եմ որոշ բաներ հասկանում: Այն էլ ո՞նց եմ հասկանում: Լսեցեք: Մենք պետք է երկար ճամփա կտրենք ձիով: Ափով կգնանք մինչև Լաս Պալմաս: Իսկ հիմա այնտեղ է նավապետ Ռոզարոն իր «Դուրեցով»:

— Դա այն քոսոտ հին բուքսիրը չէ՞, որը նույնիսկ չի կարողանում ինչպես հարկն է շուռ գալ,— հարցրեց Թորեսը:

— Բայց ախր գիշերը քամի չի լինելու, առավոտյան նույնպես: Եվ մենք այդ բուքսիրով կգրավենք «Անջելիկան»,— հանգստացրեց նրան ոստիկանապետը:— Առաջ, բարեկամներ: Գնացինք: Նավապետ Ռոզարոն իմ մտերիմն է: Նա ամեն տեսակ ծառայություն կմատուցի մեզ:

Բոլորովին տանջահար եղած մարդիկ ուժասպառ ձիերով լուսադեմին անցան Լաս Պալմաս լքյալ գյուղի միջով դեպի լքյալ նավամատույց, ուր կանգնած էր բոլորովին լքյալ տեսքով, ներկայափ մի բուքսիր, որը, սակայն, նրանց աչքին աշխարհում լավագույնն էր: Ծխնելույզից ծուխ էր դուրս հորդում ի նշան այն բանի, որ բուքսիրը պատրաստ է մեկնելու: Տեսնելով այդ, ոստիկանապետը ցնձաց, չնայած հոգնածությանը:

— Բարի լույս, սենյոր նավապետ Ռոզարո: Ուրախ եմ ձեզ տեսնելու,— ողջունեց նա ծեր ծովագայլ իսպանացի շկիպերին, որը, կիսապառկած ճոպանօղակին, գավաթով սև սուրճ էր խմում. ամեն անգամ սուրճը բերանին մոտեցնելիս՝ նրա ատամները կտկտում էին գավաթի եզրին:

— Լավ բարի լույս է, խոսք չկա, երբ այս անիծյալ տենդը հոգիս հանեց,— մռայլ մրթմրթաց նավապետ Ռոզարոն. նրա ձեռքերն ու ամբողջ մարմինը այնպես էին դողում, որ տաք հեղուկը թափվում էր կզակի վրայով ու հոսում վերնաշապկի արծակած օձիքի տակ, դեպի ճերմակահեր կուրծքը:— Դե վերցրու, սատանի ծնունդ,— բղավեց նա, սուրճով լի գավաթը շարտելով մետիստոլայի վրա, որը երևի նրա սպասավորն էր և որքան էլ աշխատում էր ծիծաղը զսպել, չէր կարողանում:

— Արևը դուրս կգա, տենդը կհանդարտվի. .. ձեզ հանգիստ կթողնի,— նրբանկատությամբ ասաց ոստիկանապետը, ցույց տալով, որ չի նկատում նավապետի վատ տրամադրությունը:— Ձեր գործերն այստեղ ավարտված են, դուք ուղղվում եք դեպի Բոկաս-դել-Թորո, մենք էլ մեր ամբողջ խմբով կգանք ձեզ հետ. չափազանց հետաքրքիր արկածներ են սպասում մեզ: Մենք պետք է գրավենք «Անջելիկա» շխուռան, որը հանդարտության պատճառով չկարողացավ գիշերը դուրս գալ ծովալճակից: Ես բազմաթիվ մարդկանց կձերբակալեմ, և ամբողջ Պանաման կխոսի ձեր քաջության ու հնարամտության մասին, նավապետ, այնպես որ կմոռանաք նույնիսկ, որ տենդը երբևէ տանջել է ձեզ:

— Որքա՞ն,— ուղղակի հարցրեց նավապետ Ռոզարոն:

— Որքա՞ն,— զարմացած տեսքով կրկնեց ոստիկանապետը:— Ախր դա պետական գործ է, թանկագին բարեկամ, և դուք, միևնույն է, գնում եք Բոկաս-դել-Թորո: Չէ՞ որ դրա վրա ոչ մի ավելորդ բահ ածուխ չէք ծախսելու:

— Muchacho! /Տղա (իսպ.):/ Էլի՛ սուրճ,— բղավեց շկիպերը՝ դիմելով տղային:

Լռություն տիրեց, որի ժամանակ Թորեսը, ոստիկանապետը և նրանց բոլոր հոգնած ուղեկիցները ազահորեն նայում էին տղայի բերած տաք խմիչքին: Նավապետ Ռոզարոյի ատամները կաստանետների նման զարկվում էին գավաթին, բայց և այնպես նա կարողացավ սուրճը խմել առանց թափելու, չնայած բերանը վառեց:

Ինչ-որ վեղացի, բացակա հայացքով, կեղտոտ կոմբինեզոնով ու յուղոտ գլխարկով, որի վրա գրված էր՝ «մեխանիկ», դուրս եկավ իջանցքից, վառեց ծխամորճը և, նստելով նավեզրին, ասես ամբողջովին թաղվեց իր մտքերի մեջ:

— Ուրեմն, որքա՞ն,— նորից հարցրեց նավապետ Ռոզարոն:

— Եկեք շարժվենք, թանկագին բարեկամ,— ասաց ոստիկանապետը:— Իսկ հետո, երբ տենդը հանգիստ թողնի ձեզ, խելացիորեն կքննենք ամեն ինչ. չէ որ մենք բանական արարածներ ենք և ոչ թե անասուններ:

— Որքա՞ն,— կրկնեց նավապետ Ռոզարոն:— Ներեցեք, ես անասուն չեմ: Իմ խելքը միշտ տեղն է՝ արև լինի, թե չլինի, նույնիսկ երբ այս երիցս անիծյալ տենդը ցնցում է ինձ: Ուրեմն, որքա՞ն:

— Լավ, շարժվեցինք: Դուք որքա՞ն եք ուզում,— անձնատուր լինելով, հոգնած խոսեց ոստիկանապետը:

— Հիսուն դուար ոսկով,— իսկույն հետևեց պատասխանը:

— Բայց ախր մեկ է, դուք գնում եք այնտեղ, այդպես չէ՞, նավապետ,— մեղմությամբ հարցրեց Թորեսը:

— Ես արդեն ասացի՝ հիսուն դուար:

Ոստիկանապետն անհուսալիորեն ձեռքերը զարկեց իրար և շուռ եկավ կրունկների վրա, որպես թե ուզում է հեռանալ:

— Բայց ախր դուք երդվեցիք մինչև մահ վրեժ լուծել ձեր բանտի ավերման համար,— հիշեցրեց Թորեսը:

— Սակայն ոչ այն դեպքում, երբ դրա համար ստիպված կլինեմ վճարել հիսուն դուար,— մռմռաց ոստիկանապետը, աչքի ծայրով հետևելով տենդից ցնցվող նավապետին՝ արդյոք չի՞ պատրաստվում անձնատուր լինել:

— Հիսուն դուար ոսկով,— ասաց նավապետը, վերջացնելով սուրճը և աշխատելով դողդոջուն մատներով սիգարետ փաթաթել: Ապա գլխով արավ շվեդացու կողմն ու ավելացրեց.— Մի ոսկի հնգանոց էլ իմ մեխանիկին: Այդպես է մեզ մոտ կարգը:

Թորեսը մոտեցավ ոստիկանապետին ու շնջաց:

— Բուքսիրի համար ես կվճարեմ, իսկ գրինգո Ռիզանից մի հարյուր դուար ավելի կպոկեմ, տարբերությունը կկիսենք մեր միջև: Այնպես որ մենք չենք վնասվի: Ընդհակառակը, դեռ օգուտ կանենք: Ռիզանը պատվիրել է ծախսերի մեջ ժլատություն չանել:

Երբ արևը հորիզոնից բարձրացավ և շլացուցիչ կերպով փայլեց երկնքում, ժանդարմներից մեկը տանջահար ձիերով ետ դարձավ դեպի Լաս Պալմաս, իսկ մնացածները բարձրացան բուքսիրի տախտակամած: Շվեդացի մեխանիկն իջավ մեքենայական բաժնի խորքերը: Նավապետ Ռոզարոն, արևի կենարար շողերի շնորհիվ ազատվելով տենդից, նավաստիներին հրամայեց արձակել պարանները, իսկ նրանցից մեկին պատվիրեց կանգնել մենախցիկում, կողմնացույցի մոտ:

Լուսադեմին «Անջելիկան» դեռևս դրեյֆում էր ափից ոչ հեռու. ամբողջ գիշերը քամի չկար, և նավը չկարողացավ ծով դուրս գալ, չնայած բավականաչափ առաջացել էր դեպի հյուսիս և այժմ գտնվում էր Սան Անտոնիոյի և Բոկաս-դել-Թորո ու Կարտախո նեղուցների միջև ընկած կիսաճամփին: Այդ երկու նեղուցները, որոնք տանում են դեպի բաց ծով, «Անջելիկայից» դեռևս քսանհինգ մղոնի վրա էին, իսկ շխունան ասես քնած լինե՞ր ծովալճակի հայելանման մակերեսին: Արևադարձային հեղձուցիչ գիշերը բոլորին ստիպեց բարձրանալ տախտակամած, որը տառաջիորեն ծածկված էր քնածներով: Նավապետի խցի տանիքում պառկած էր Լեոնսիան: Խցի երկու կողմի նեղ անցուղիներում տեղավորվել էին նրա հայրն ու եղբայրները: Իսկ նավաքթին, նավապետի խցի և դեկորդի մենախցիկի միջև կողք կողքի պառկած էին երկու Սորզանները: Ֆրենսիսի ձեռքը հանգչում էր Հենրիի ուսին, ասես պահպանելով նրան: Ղեկանիվի մի կողմում, ծնկները գրկած ու գլուխը ձեռքերին, Նստած քնել էր մետիս-նավապետը, իսկ մյուս կողմում ճիշտ նույն դիրքով քնած էր դեկորդը՝ ոչ այլ ոք, բայց եթե Պերսիվալը՝ կինգստոնցի սևամորթ նեգրը: Տախտակամածի միջին մասում, շկաֆուտում, խառնիխուռն պառկած էին նավաստիները, մինչդեռ նավաքթին, փոքրիկ կիսաբաքում, քնած էր հերթակալը:

Առաջինն արթնացավ Լեոնսիան: Հենվելով արմունկին ու նրա տակ մտցնելով վերարկուի փեշը, որի վրա պառկած էր, նա նայեց ներքև, տախտակամածին, ու նկատեց կողք կողքի խաղաղ քնած Հենրիին և Ֆրենսիսին: Նրանք երկուսով էլ ձգում էին նրան. չէ որ այնքան նման էիր իրար: Նա սիրում էր Հենրիին, հիշեց, թե նա ինչպես համբուրեց իրեն, և հիշելով, ամբողջ մարմնով դողաց: Սիրում էր նաև Ֆրենսիսին, հիշեց նաև նրա համբույրը և ամբողջովին շիկնեց: Նա ինքն էլ էր զարմանում այն բանի վրա, թե իր սրտում ինչպես են հաշտ ապրում միաժամանակ երկու մարդու հանդեպ տածած սերերը: Լեոնսիան արդեն բավականաչափ գլուխ էր հանում իր զգացմունքից և գիտեր, որ պատրաստ է Հենրիի հետ մինչև աշխարհի ծայրը գնալ, իսկ Ֆրենսիսի հետ՝ էլ ավելի հեռուն: Եվ նրան տանջում էր սեփական անբարոյականությունը:

Աշխատելով խույս տալ վախեցնող մտքերից՝ Լեոնսիան պարզեց ձեռքը և սկսեց մետաքսյա շարֆի ծայրով խողտացնել Ֆրենսիսի քիթը. երիտասարդը շարժվեց տեղում, ձեռքը թափահարեց, ասես քշելով մժեղին կամ ճանճին, և քնաթաթախ հարվածեց Յենրիի կրծքին: Այդպիսով Յենրին առաջինն արթնացավ: Կտրուկ շարժումով նա բարձրացավ ու նստեց, արթնացնելով նաև Ֆրենսիսին:

— Բարի լույս, ուրախ ազգականս,— ողջունեց Ֆրենսիսը:— Այդ ի՞նչ չարաճճիությունն էս անում:

— Բարի լույս, սիրելի բարեկամ,— փնթփնթաց Յենրին,— բայց թե մեզնից ո՞վ է չարաճճիություն անում: Ախր դու խփեցիր ինձ ու արթնացրիր: Քնիս մեջ մինչև իսկ թվաց, թե դահիճն է հետևիցս եկել. այխր ուզում էին հենց այս առափոտ ինձ կախել:— Նա հորանջեց, ձգվեց, բազրիքի միջով նայեց քնած ծովին և, Ֆրենսիսին բոթելով, ցույց տվեց քնած նավապետին ու դեկորդին:

«Ի՞նչ գեղեցիկ տղամարդիկ են այդ Մորգանները»,— մտածեց Լեոնսիան և իսկույն էլ զարմացավ, բռնելով իրեն այն բանում, որ մտովին այդ նախադասությունն արտասանեց ոչ թե իսպաներեն, այլ անգլերեն: Մի՞թե նրա համար, որ այդ երկուսը տիրել են իր սրտին, ինքն սկսել է մտածել նաև նրանց լեզվով և ոչ թե իր մայրենի իսպաներենով:

Այդպիսի շփոթ մտքերից խույս տալու համար նա նորից սկսեց շարֆի ծայրով խողտացնել Ֆրենսիսի քիթը և հանկարծակիի եկավ. ստիպված էր ծիծաղելով խոստովանել, որ ինքն էր նրանց անակնկալ արթնացման պատճառը:

Երեք ժամ հետո, կազդուրվելով մրգերով ու սուրճով, Լեոնսիան կանգնեց դեկի մոտ, իսկ Ֆրենսիսն սկսեց սովորեցնել նրան, թե նավն ինչպես վարել և ինչպես կողմնացույցով որոշել տեղը: «Անջեղիկան», հնազանդ դեպի հյուսիս փչող զով գեփյուռին, ընթանում էր վեց հանգույց արագությամբ: Կանգնած տախտակամածի այն մասում, որտեղից փչում էր քամին, Յենրին հեռադիտակով ուսումնասիրում էր հորիզոնը, ամբողջ ուժով ջանալով չնկատել, թե ինչպիսի հափշտակությամբ են պարապում ուսուցիչն ու աշակերտուհին, չնայած մտքի մեջ հայիոյելով հայիոյում էր իրեն, որ առաջինը իր մտքով չէր անցել՝ սովորեցնել Լեոնսիային դեկի և կողմնացույցի հետ վարվելու եղանակը: Բայց և այնպես նա իրեն հավաքեց. ոչ միայն չէր նայում, այլ նույնիսկ աչքի պոչով չէր հետևում նրանց:

Մինչդեռ նավապետ Թրեֆեզենը, հնդիկներին հատուկ կոպիտ հետաքրքրասիրությամբ և անպատկառությամբ Գևորգ թագավորի հպատակ նեգրի՝ նվազ նրբանկատ էր: Նա աչքերը չռած նայում էր երիտասարդ գույգին, և նրա հայացքից չլրիպեց այն անհաղթահարելի սերը, որ տածում էին իրար նկատմամբ նավը վարձակալող ամերիկացին և այդ սիրունիկ իսպանուհին: Նրանք կանգնած էին իրար խիստ մոտիկ, և երբ հակվեցին դեկանիվի վրա՝ նակտողը դիտելու, Լեոնսիայի մագափուկները քսվեց Ֆրենսիսի այտին, և նրանք անմիջապես զգացին, թե ինչպես իրենց մարմինների միջով ասես էլեկտրական հոսանք անցավ: Մետիս նավապետն էլ նկատեց: Բայց նրանք զգացին և այն, ինչ որ մետիս նավապետը չէր կարող նկատել՝ մեծագույն շփոթություն: Չարմանքով նայեցին իրար և աչքները խոնարհեցին հանցավորի պես: Ֆրենսիսն սկսեց բացատրել, թե ինչպես է գործում կողմնացույցի կոճը, ըստ որում այնպես արագ ու բարձրաձայն, որ լսելի էր տախտակամածի մյուս ծայրին: Բայց, լսելով նրան, նավապետ Թրեֆեզենը քմծիծաղեց միայն: Քամու անակնկալ պոռթկումը Ֆրենսիսին ստիպեց կառչել դեկանիվից, որի վրա արդեն գտնվում էր Լեոնսիայի ձեռքը: Ֆրենսիսին ոչինչ չէր մտում, բայց եթե ձեռքը դնել նրա ձեռքի վրա: Եվ նորից երկուսով էլ ցնցվեցին, նորից նավապետը քմծիծաղեց: Լեոնսիան աչքերը հառեց Ֆրենսիսին և իսկույն էլ շփոթված ցած խոնարհեց: Նա ձեռքն ազատեց և, հասկացնելով, որ դասն ավարտված է, դանդաղ հեռացավ դեկանիվից, այնպես ցույց տալով, թե իբր դեկն ու կողմնացույցը այլևս չեն հետաքրքրում իրեն: Ֆրենսիսը մնաց խռովահույզ վիճակում. նա հասկանում էր, որ դա անազնվություն է, դավաճանություն, և, ականա նայելով Յենրիի կողմը, որը կանգնած էր կիսադեմով, մտովի ցանկացավ, որ սա չտեսներ, թե ինչ կատարվեց: Մինչդեռ Լեոնսիան չտեսնող աչքերով նայում էր խիտ անտառով ծածկված ափին՝ Յենրիի մատանին մտախոհ կերպով պատելով մատի շուրջը:

Սակայն Յենրին ամեն ինչ տեսավ պատահականորեն. հենց ճիշտ այդ րոպեին նա դարձավ նրանց կողմը, որպեսզի հայտնի, թե հորիզոնում ինչ-որ ծուխ է երևում: Մետիս-նավապետը նույնպես նկատեց: Նա մոտեցավ Յենրիին և հնդիկի դաժանությամբ ու նեգրի անպատկառությամբ ասաց կիսաձայն.

— Մի՛ ընկճվեք, սը՛ր: Սենյորիտան բարի սիրտ ունի, երկուսիդ համար էլ նրա սրտում տեղ կճարվի. չէ՛ որ դուք ազնիվ ջենթլմեններ եք:

Յենց նույն վայրկյանին հավերժական ճշմարտության մի դաս տրվեց նրան. սպիտակները չեն սիրում, երբ խառնվում են իրենց գործերին: Ուշքի գալով՝ նավապետը տեսավ, որ պառկած է մեջքի վրա. ծոծրակը տնքում էր տախտակամածին ուժեղ զարնվելուց, իսկ ճակատը՝ ոչ պակաս ուժեղ հարվածից, որ հասցրել էր նրան Յենրին:

Եվ այստեղ նավապետի մեջ խոսեց հնդկական արյունը. կատաղությունից իրեն կորցրած, նա ոտքի թռավ, ձեռքում փայլատակեց դանակը: Դեղնադեմ մետիս հուռանը մի ակնթարթում հայտնվեց նավապետի կողքին. նրա ձեռքում էլ դանակ կար: Վազեցին եկան մոտերքում գտնվող մի քանի նավաստիներ ևս. կիսաշրջան կազմելով՝ նրանք հարձակվեցին Յենրիի վրա: Բայց սա, կայծակի արագությամբ ետ ցատկելով դեպի նավեզրը, ներքևից հասցված բռունցքի հարվածով բնից թռցրեց երկաթե բազրիքը և, օդում որսալով, պատրաստվեց ինքնապաշտպանության: Ֆրենսիսն անմիջապես թողեց դեկանիվը և, խլելով ավտոմատ ատրճանակը, ճեղքեց անցավ դեպի Յենրին ու կանգնեց նրա կողքին:

— Ի՛նչ ասաց նա,— հարցրեց Ֆրենսիսն իր ազգականին:

— Ես կկրկնեմ, թե ինչ ասացի,— սպառնալից միջամտեց նավապետը. այժմ նրա մեջ հաղթել էր նեգրական արյունը, և նա արդեն հաշտության ուղիներ էր որոնում շանտաժի օգնությամբ:— Ես ասացի...

— Կա՛նգ առ, նավապետ,— գոչեց Յենրին:— Ես շատ ցավում եմ, որ հարվածեցի քեզ: Կոծկենք այս գործը: Լեզուդ կծիր, մոռացիր: Շատ եմ ցավում, որ խփեցի քեզ: Ես... — Յենրին ակամայից կանգ առավ ու ջղաձգորեն թուրք կով տվեց՝ բառերը լեզվից չէին պոկվում: Եվ միայն նրա համար, որ Լեոնսիան մոտիկ կանգնած նայում էր ու լսում, ասաց.— Ես... Ես ներողություն եմ խնդրում, նավապետ:

— Դուք ինձ վիրավորեցիք,— գայրացկոտ տոնով հայտարարեց նավապետ Թրեֆեզենը:— Դուք հաշմել եք ինձ: Իսկ ոչ ոք իրավունք չունի հաշմելու Գևորգ թագավորի հպատակին,— թող աստված օրինի նրան,— առանց դրամական փոխհատուցման:

Լսելով շանտաժիստի այդ անկեղծ պահանջը, Յենրին քիչ մնաց նետվեց նրա վրա: Բայց Ֆրենսիսը հաշտարար եղանակով ձեռքը դրեց նրա ուսին ու ետ պահեց: Տիրապետելով իրեն, Յենրին ծիծաղեց բարեհոգի ծաղրական տոնով, հանեց գրպանից երկու հատ տասը դոլարանոց ոսկեդրամ և, ասես այդ դրամներն այրում էին նրան, խոթեց նավապետ Թրեֆեզենի ձեռքի մեջ:

— Էժան պրծա,— կիսաձայն շշնջաց նա, չկարողանալով զսպել իրեն:

— Ոչինչ, միանգամայն լավ գին է,— հավատացրեց նավապետը:— Վնասված գլխի դիմաց քսան դոլարը միանգամայն կարգին գին է: Կարգադրեցեք, սը՛ր, ես ձեր տրամադրության տակ եմ: Դուք, անշուշտ, ջենթլմեն եք: Այդպիսի գումարով ուզած ժամանակ կարող եք հասցնել իմ ականջին:

— Իմ ականջին էլ, սը՛ր,— շողոքորթ ու լայն ժպտալով, մեջ մտավ կինգստոնցի նեգր Պերսիվալը:— Այդպիսի գումարով ուզած ժամանակ կարող եք թակել ինձ, սը՛ր: Եվ ընդհանրապես կարող եք թակել, երբ ավելորդ փող կունենաք... .

Յենց այստեղ էլ պատահարը վերջացավ, որովհետև այդ բոպեին լավեց առաջ նայողի ճիչը.

— Ծո՛ւխ: Շոգենավ է գալիս մեր կողմը:

Մի ժամ հետո բոլորն արդեն գիտեին, թե ինչ ծուխ է դա և ինչ է նշանակում, որովհետև «Դոլորեսի» համար մի առանձին դժվարություն չէր ներկայացնում «Անջելիկային» հասնելը, որը նորից ընկել էր անդորրության մեջ, և այժմ շխուռայից, որին ինչ-որ կես մղոն տարածություն էր բաժանում բուքսիրից, հեռադիտակով արդեն կարելի էր տեսնել զինված մարդկանցով լցված նրա առաջամասի փոքրիկ տախտակամածը: Ե՛վ Յենրին, և՛ Ֆրենսիսը իսկույն ճանաչեցին ոստիկանապետին ու մի քանի ժանդարմների:

Ծերունի Էնրիկո Սուլանոյի ռուկները փքվեցին. նա իր չորս որդիներին շարեց նավախելում, ինքը կանգնեց նրանց կողքին ու պատրաստվեց կռվի: Տանջվելով Յենրիի և Ֆրենսիսի հանդեպ տածած սիրուց՝ Լեոնսիան ավելի շատ տարված էր իր սեփական ապրումներով, չնայած աշխատում էր ցույց չտալ. բոլորի հետ ծիծաղում էր ողորմելի նավակի վրա ու բոլորի հետ միասին ուրախանում քամու պոռթկումի համար, որը «Անջելիկայի» ձախ եզրն այնպես թեքեց, որ բազրիքները համարյա դիպան ջրին, և առաջ քշեց ինը հանգույց արագությամբ:

Բայց եղանակն ու քամին այդ առավոտ կայուն չէին: Ծովալճակի դեմքը մերթ կնճռոտվում էր վերահաս քամուց, մերթ նորից հարթվում ապակու նման:

— Սըր, դժբախտաբար պետք է հայտնեմ, որ մենք չենք կարող խույս տալ նրանցից, — հայտնեց Ֆրենսիսին նավապետ Թրեֆեզենը: — Եթե քամին պահպանվեր, սըր, կհեռանայինք: Բայց շարունակ փոխվում է կամ բոլորովին դադարում: Քամին մեզ քշում է ուղղակի դեպի ափ: Մենք քված ենք փակուղի, սըր, այժմ այլևս չենք կարող խույս տալ նրանցից:

Յենրին ցած իջեցրեց հեռադիտակը, որով ուսումնասիրում էր ափը, և նայեց Ֆրենսիսին:

— Հապա՛, մեջտեղ բեր, — բացականչեց Ֆրենսիսը: — Իսկույն երևում է, որ մի բան ես մտածել: Ի՛նչ ծրագիր ունես: Պատմիր:

— Ահա այնտեղ երկու կղզյակներ կան, որ կոչվում են Վագրի կղզյակներ, — սկսեց իր ծրագիրը շարադրել Յենրին: — Դրանք պաշտպանում են Խուչիտան ծովախորշի նեղ մուտքը, որը կոչվում է Էլ Տիգրե: Եվ հավատացե՛ք, այդ վագրի ատամներն ավելի վատ չեն, քան իսկականինը: Կղզյակների երկու կողմերի, ափի և իրար միջև եղած անցուղիներն այնքան ծանծաղ են, որ մակույկն անգամ խրվում է տիղմի մեջ: Անցնել կարող է միայն նա, ով գիտե ֆարվատների բոլոր կեռմանները, իսկ ես գիտեմ: Ծիշտ է, կղզիների միջև Էլ Տիգրե նեղուցը բավականաչափ խորն է, բայց այնքան է նեղ, որ ծավալվելու հնարավորություն չկա: Ծխունան միայն այն դեպքում կարող է ներս մտնել այդ նեղուցը, եթե քամին փչի նավախելի կամ տրավերգի /Տրավերգ— նավի ընթացքին ուղղահայաց ուղղություն: / կողմից: Այժմ քամին բարենպաստ է մեզ համար, և մենք կանցնենք նեղուցով: Բայց դա իմ ծրագրի կեսն է միայն. . .

— Իսկ եթե քամին ուղղությունը փոխի կամ դադարի, սը՛ր, — ախր այս ծովախորշում մակընթացության ու տեղատվության ժամանակ այիքներն ուղղակի լեռնանում են, ես դա լավ գիտեմ, — իմ գեղեցկուհի շխունան ժայռերին խփվելով ջարդուփշուր կլինի, — բողոքեց նավապետ Թրեֆեզենը:

— Եթե այդպիսի բան պատահի, ես քեզ կվճարեմ լրիվ արժեքը, — կարճ հավաստիացրեց Ֆրենսիսը և, այլևս ուշադրություն չդարձնելով նավապետի վրա, դարձավ Յենրիին: — Այսպես, ուրեմն, ո՞րն է քո ծրագրի երկրորդ մասը:

— Նույնիսկ ամաչում եմ ասել, — ծիծաղեց Յենրին: — Բայց դա անեծքների այնպիսի մի տարափ կառաջացնի իսպաներեն լեզվով, ինչպիսին Չիրիկվի ծովալճակը չի լսել դեռևս այն ժամանակներից, երբ ծերունի սըր Յենրին թալանում էր Սան Անտոնիոն և Բուկաս-դել-Թորոն: Այ, հիմա կտեսնես:

Աչքերը փայլեցնելով՝ Լեոնսիան ծափ տվեց ու բացականչեց.

— Դա երևի ինչ-որ հիանալի բան է, Յենրի: Ձեր դեմքից է երևում, որ այդպես է: Դե, գոնե ինձ ասացե՛ք:

Լեոնսիային մի կողմ տանելով ու բռնելով իրանից, որովհետև տախտակամածը անասելի ճոճվում էր, Յենրին սկսեց ինչ-որ բան շշնջալ նրա ականջին: Միևչեռ Ֆրենսիսը հեռադիտակն ուղղեց հետապնդողների կողմը, որպեսզի թաքցներ այդ պահին իրեն համակող զգացմունքը: Նավապետ Թրեֆեզենը խորամանկորեն քմծիծաղեց, բազմանշանակ մի հայացք փոխանակելով դեղնադեմ նավաստու հետ:

— Ահա թե ինչ, շկիպեր, — ասաց Յենրին, մոտենալով նրան: — Մենք այժմ գտնվում ենք Էլ Տիգրեի մուտքի մոտ: Վերցրու դեկանիվը և նավն ուղղիր դեպի նեղուց: Բացի դրանից — և pronto! — թող այստեղ բերեն կետոյույմանոց հին փափուկ մի ճուպան, որքան կարելի է շատ պարան ու

առագաստաթել, մի արկղ գարեջուր, որ մառանում կա, սրճաման ու հինգգալլոնանոց այն բիդոնը, որի միջից երեկ երեկոյան դատարկեցինք նավթի մնացորդը:

— Բայց ես ցավոք ձեր ուշադրությունը պետք է հրավիրեմ այն բանի վրա, սըր, որ այդ ճոպանը փող արժե,— նկատեց նավապետ Թրեֆեզենը, երբ Յենրին սկսեց այդ կյութերից ինչ-որ բան պատրաստել:

— Դրա համար քեզ կվճարեն,— հանգստացրեց նրան Ֆրենսիսը:

— Եվ սրճամանն էլ համարյա նոր-նոր է:

— Դրա համար էլ կվճարեն:

Նավապետը հառաչեց ու անձնատուր եղավ, բայց, տեսնելով Յենրիի հետագա գործողությունները,— սա սկսեց բացել գարեջրի շշերն ու պարունակությունը դատարկել շափգատների /Շափգատներ— ակոսներ՝ տախտակամածային ջրի հոսքի համար:/ մեջ,— նորից հառաչեց:

— Խնդրում եմ, սըր,— աղաչեց Պերսիվալը,— եթե շատ եք ուզում դատարկել այդ գարեջուրը, ապա ավելի լավ է դատարկեք իմ կոկորդի մեջ:

Նավաստիները մի ակնթարթում հարձակվեցին թանկագին խմիչքի վրա և շուտով դատարկ շշերը շարեցին Յենրիի ոտքերի մոտ: Նա դրանք նորից խցանեց ու սկսեց կապել պարանին իրարից վեցական ոտնաչափ հեռավորությամբ: Այս պարանից կտրեց մի քանի կտոր,— յուրաքանչյուրը երկու սաժեն երկարությամբ,— ու կապեց շշերի միջև, որպեսզի սրանք ծառայելիս իբրև յուրատեսակ լողաններ: Այստեղ ամրացրեց նաև սրճամանն ու երկու թիթեղները: Պարանի մի ծայրին կապեց նավթի բիդոնը, իսկ մյուս ծայրին՝ գարեջրի արկղը և, այդ բոլորն ավարտելով, նայեց Ֆրենսիսին:

— Օ՛, դեռևս հինգ րոպե առաջ ես հասկացա, թե դու ինչ ես մտածել,— ծիծաղեց Ֆրենսիսը:— Ըստ երևույթին էլ Տիգրեն իսկապես շատ նեղ է, այլապես չէ՞ որ բուքսիրը կարող էր խույս տալ քո թակարդից:

— Էլ Տիգրեն հենց այդպիսի լայնություն ունի,— եղավ պատասխանը:— Մի տեղ կա, ուր ծանծաղուտների միջև եղած տարածությունը քառասուն ֆուտի էլ չի հասնում: Եթե նավապետն իր բուքսիրը տանի մեր թակարդի կողքից, կխրվի ծանծաղուտը: Այդ դեպքում նրա մարդիկ լողալով կհասնեն ափ: Իսկ այժմ հարկավոր է այս սարքը նավախել քարշ տալ ու ջուրն իջեցնել: Դու կանգնիր աջ նավեզրին, իսկ ես կկանգնեմ ձախում: Երբ բղավեմ, արկղը նետիդ ջուրը որքան կարելի է հեռու:

Չնայած քամին փոքր-ինչ հանդարտվեց, բայց ճիշտ քամու ուղղությամբ ընթացող «Անջելիկան» այնուամենայնիվ գնում էր հինգ հանգույց արագությամբ, մինչդեռ «Դոլորեսը», որը վեց հանգույց էր կտրում, սկսեց աստիճանաբար հասնել նրան: Երբ «Դոլորեսից» հրացանները խոսեցին, նավապետը Յենրիի ու Ֆրենսիսի ղեկավարությամբ կարտոֆիլի ու սոխի պարկերից, հին առագաստներից ու թոկերից ոչ բարձր մի բարիկադ կանգնեցրեց նավախելին: Կռանալով այդ թաքստոցի հետևում՝ ղեկորդը շարունակում էր վարել շխունան: Լեռնախան հրաժարվեց ներքև իջնելուց, բայց երբ կրակոցներն ավելի հաճախակի դարձան, զիջելով հարագատների թախանձանքներին, կուչ եկավ խցիկի հետևում: Նավաստիները թաքնվեցին ծակ ու ծուկերում, մինչդեռ ծերունի Սոլանոն և նրա որդիները, պառկելով նավախելին, գնդակոծում էին բուքսիրը:

Յենրին և Ֆրենսիսը գրավեցին նշված դիրքերը և, մինչդեռ «Անջելիկան» կմոտենար Էլ Տիգրեի ամենանեղ տեղին, նույնպես մասնակցում էին փոխհրաձգությանը:

— Ընդունեցեք իմ շնորհավորանքները, սըր,— ասաց նավապետ Թրեֆեզենը Ֆրենսիսին: Յնդակական արյունը դրդում էր նրան երբեմն-երբեմն գլուխը վեր բարձրացնել ու նայել բազրիքի արանքից, այնինչ նեգրական արյունը ստիպում էր պառկել երեսնիվար, ասես նա ձուլված լիներ տախտակամածին:— Ախր ինքը՝ նավապետ Ռոզարոն է վարում նավը: Իսկ հենց նոր նա այնպես վեր ցատկեց ու բռնեց ձեռքը, որ կարելի է չկասկածել՝ դուք ծակեցիք այդ ձեռքը: Նավապետ Ռոզարոն խիստ տաքարյուն hombre /Մարդ (իսպ.):/ է, սըր: Ինձ թվում է, թե այստեղից լսում եմ նրա անեծքները:

— Պատրաստվիր, Ֆրենսիս, հիմա ազդանշան կտամ,— ասաց Յենրին, հրացանը ցած դնելով և ուշադիր դիտելով նավի երկու կողմերից Էլ Տիգրեն շրջափակող ցածրադիր ավերը:— Համարյա հասել ենք անհրաժեշտ տեղը: Չշտապես: Սպասիր ազդանշանի և երբ կասեմ «երեք», նետիր:

Բուքսիրը մոտ երկու հարյուր յարդ հեռու էր նրանցից և արագորեն մոտենում էր, երբ Յենրին ազդանշան տվեց: Նա և Ֆրենսիսն ուղղվեցին և «երեք» հրահանգով ծայրերը նետեցին ջուրը: Գարեջրի արկղն ու նավթի բիդոնը ընկան ծովը, իրենց հետևից քարշ տալով վրան տուփեր, թիթեղներ ու շեր ամիացրած պարանը:

Յենրին ու Ֆրենսիսը այնպես էին տարվել իրենց գործով, որ շարունակում էին կանգնած մնալ, դիտելով, թե փրփրած ջրի մեջ ինչպես է ձգվում իրենց թակարդը: «Դուրես» բուքսիրից տրված համազարկն ստիպեց նրանց բերանքսիվայր փռվել տախտակամածին, իսկ երբ բազրիքի արանքից նայեցին, բուքսիրի քիթն արդեն իր տակ առավ լողաններով թոկը: Մի րոպե հետո նրանք տեսան, թե ինչպես նավը դանդաղեցրեց ընթացքն ու կանգ առավ:

— Վատ չխճճեցինք նրա պտուտակը,— ծափ տվեց Ֆրենսիսը:— Կեցցես, Յենրի:

— Միայն թե քամին չդադարի. . . — համեստորեն նկատեց Յենրին:

«Անջելիկան» հեռացավ, հետևում թողնելով անշարժացած բուքսիրը, որն աստիճանաբար փոքրանում էր ու փոքրանում: Բայց և այնպես շխունայից նկատեցին, որ բուքսիրը նստեց ծանծաղուտին, իսկ մարդիկ, ցատկելով ջուրը, սկսեցին շարժվել դեպի ափ:

— Եկեք երգենք մեր երգը,— ուրախ բացականչեց Յենրին ու սկսեց.

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին...

— Այս բոլորը շատ լավ է, սըր,— ընդհատեց նրանց նավապետ Թրեֆեզենը, երբ Մորգաններն առաջին քառյակն ավարտեցին. նա երգի տակտով ուսերն էր ցնցում, իսկ աչքերը փայլում էին:— Բայց քամին թուլացավ, սըր: Մենք նորից դանդաղում ենք: Հիմա ինչպե՞ս պիտի դուրս գանք Խուչիտան ծովախորշից: Չէ՞ որ «Դուրեսը» ոչ մի վնասվածք չի ստացել: Մենք միայն ետ գցեցինք նրան, ուրիշ ոչինչ: Որևէ նեգր կուզվի նավի տակ, կմաքրի պտուտակը, և այն ժամանակ նրանք իսկույն կհասնեն մեզ:

— Բայց ափն այստեղից հեռու չէ,— նկատեց Յենրին, հայացքով չափելով ափի հեռավորությունը, և, շուռ գալով Էնրիկոյի կողմը, հարցրեց.— Այս ափն ինչպե՞ս է, սենյոր Սոլանո: Ուլքե՞ր են ապրում այստեղ՝ մայա ցեղի հնդիկներ՞, թե ազարակատերեր:

— Ե՛վ ազարակատերեր կան, և՛ հնդիկներ,— պատասխանեց Էնրիկոն:— Բայց ես այս վայրերը լավ գիտեմ: Եթե շխունայի վրա մնալը վտանգավոր է, ապա կարծում եմ, որ ափին անվտանգության մեջ կլինենք: Այնտեղ և՛ ձիեր կգտնենք, և՛ թամբեր, և՛ միս, և՛ հաց: Կորդիլերները հեռու չեն: Ուրիշ ի՞նչ է հարկավոր մեզ:

— Հապա Լեոնսիա՞ն,— հոգատարությամբ հարցրեց Ֆրենսիսը:

— Նա ի ծնե ամազոնուհի է, և քիչ կգտնվեն այնպիսի ամերիկացիներ, որոնց նա չգերազանցեր ձիավարության մեջ,— պատասխանեց Էնրիկոն:— Ուստի խորհուրդ կտայի ձեզ,— եթե, իհարկե, համաձայն եք,— մեծ մակույկը ջուրն իջեցնել, հենց որ «Դուրեսն» սկսի հասնել մեզ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

— Ամեն ինչ կարգին է, շկիպեր, ամեն ինչ կարգին է,— հավաստիացրեց Յենրին մետիս նավապետին: Սա կանգնած էր ծովափին, նրա մոտ և, ասես, վարանում էր հրաժեշտ տալ ու վերադառնալ «Անջելիկա», որը դրեյֆում էր մեռյալ հանդարտության մեջ քարացած Խուչիտան ծովախորշի մոտերքում:

— Սա, այսպես ասած, շեղում է ուղղությունից,— բացատրեց Ֆրենսիսը:— Հաճելի բառ է՝ «շեղում»: Ավելի հաճելի է, եթե հաջողվում է շեղվել նախամտածված ծրագրով:

— Իսկ եթե չի հաջողվում,— առարկեց նավապետ Թրեֆեզենը,— ապա դա կոչվում է բոլորովին այլ և խիստ տհաճ բառով՝ «աղետ»:

— Այ, հենց այդ էլ տեղի ունեցավ «Դուրրեսի» հետ, երբ մենք խճճեցինք նրա պտուտակը,— ծիծաղեց Յենրին:— Բայց մենք չգիտենք՝ ինչ ասել է աղետ: Մենք դա անվանում ենք այլ կերպ՝ շեղում ուղղությունից: Եվ իբրև ապացույց, որ հավատում ենք մեր հաջողությանը, սենյոր Սուլանոյի երկու որդիներին թողնում ենք ձեզ հետ: Ավարադոն ու Մատինեսը իրենց հինգ մատների նման գիտեն ֆարվատերը: Նրանք ձեզ այստեղից դուրս կբերեն, երբ բարեհաջող քամի փչի: Չէ՞ որ ոստիկանապետը ձեր հետևից չի ընկել: Նա հետապնդում է մեզ: Յենց որ շարժվենք դեպի լեռները, նա իր ողջ ջոկատով կնետվի մեր հետևից:

— Դե մի՞թե դու չես հասկանում,— միջամտեց Ֆրենսիսը:— «Անջելիկան» ծուղակի մեջ է: Եթե մենք մնանք նավի վրա, շեֆը կճանկի և՛ մեզ, և՛ «Անջելիկան»: Ուստի որոշեցինք ուղղությունը շեղել ու բարձրանալ լեռները: Նա կհետապնդի մեզ, և դա «Անջելիկային» հնարավորություն կտա թաքնվելու: Դե, իսկ մեզ, իհարկե, չի կարող բռնել:

— Իսկ եթե հանկարծ ես կորցնեմ իմ շիուևա՞ն,— ձեռք չէր քաշում թխամորթ շկիպերը:— Եթե նավը զարկվի ժայռին, ես անկասկած կկորցնեմ այն. ախր անցուղիներն այնպես վտանգավոր են այստեղ:

— Այն ժամանակ քեզ դրա դիմաց կվճարեն, ես մի գլուխ այդ եմ կրկնում,— ասաց Ֆրենսիսը աճող ջղայնությամբ:

— Իսկ ինչքա՞ն ամեն կարգի այլ ծախսեր եմ արել...

Ֆրենսիսը հանեց ծոցատետրն ու մատիտը, շտապով մի քանի բառ գրեց ու երկտողը տվեց նավապետին:

— Սա Բոկաս-դել-Թորոյում կհանձնես սենյոր Մելխիոր Գոնզալեսին,— ասաց նա:— Եվ կստանաս նրանից հազար դոլար ոսկով: Դա բանկիր է, իմ գործակալը, ուստի հենց ինքն էլ կվճարի քեզ:

Նավապետ Թրեֆեզենը անվստահորեն նայեց երկտողին:

— Մի՛ վախենա, նա լիովին վճարունակ է,— հավատացրեց Յենրին:

— Այո, սը՛ր, ես գիտեմ, սը՛ր, որ միստր Ֆրենսիս Մորգանը հարուստ ու հայտնի ջենթլմեն է: Բայց ինչքա՞ն է հարուստ: Միգուցե նրա ողջ հարստությունն ավելի քի՛չ է իմ համեստ ունեցվածքից: Ահա, ես ունեմ «Անջելիկան», որի համար ոչ մի պետ պարտք չեմ որևէ մեկին: Երկու չբարեկարգված քաղաքային հողամաս ունեմ Կոլոնում և չորսը Բելենե նավահանգստում. ես կարող եմ լավ հարստանալ դրանց շնորհիվ, երբ «Յունայտեդ Ֆրուտ քոմփանին» սկսի այնտեղ պահեստներ կառուցել. . .

— Հապա, Ֆրենսիս, հայրիկդ ինչքա՞ն է թողել քեզ,— հարցրեց Յենրին, որպեսզի ծաղրի մետիսին:— Եթե կլորներով հաշվենք, իր՞...

Ֆրենսիսը թոթվեց ուսերն ու անորոշ պատասխանեց.

— Ավելի շատ, քան ձեռքերիս ու ոտքերիս մատները:

— Դուլարնե՞ր, սը՛ր,— հարցրեց նավապետը:

Յենրին գլուխը կտրուկ տարուբերեց:

— Հազա՞ր, սըր:

Յենրին նորից տարուբերեց գլուխը:

— Միլիոննե՞ր, սըր:

— Այ, հիմա ճիշտ նշանակետին խփեցիր,— պատասխանեց Յենրին:— Միստր Ֆրենսիս Մորգանը բավականաչափ հարուստ է, որպեսզի համարյա Պանամայի ամբողջ հանրապետությունը գնի, եթե ջրանցքը չհաշվենք:

Մետիս նավապետն անվստահությամբ նայեց Էնրիկո Սոլանոյին:

— Միստր Մորգանը միանգամայն հարգարժան ջենթլմեն է,— հաստատեց նա:— Դա լավ հայտնի է ինձ: Ես հազար պետ ստացա նրա երկտողով, որը հասցեագրված էր Բոկաս-դել-Թորո, սենյոր Մելխիոր Գոնզալեսին: Այդ փողերն ահա այնտեղ են, պարկի մեջ:

Եվ գլխի շարժումով ցույց տվեց այն կողմը, ուր ծանրոցների հակերին նստած Լեոնսիան զվարճության խաթեր լցնում էր վինչեստերը: Պարկը, որ նավապետը վաղուց էր նկատել, ընկած էր նրա ոտքերի մոտ:

— Տանել չեմ կարող անփող ճամփորդելը,— շփոթված բացատրեց Ֆրենսիսն իր ուղեկիցներին: Երբեք չգիտես, թե դուրսը երբ կարող է պետք գալ քեզ: Մի անգամ երեկոյան Սմիթ-Ռիվեր-Քորներսում, Նյու Յորքից ոչ հեռու, մեքենան ջարդվեց: Մոտս միայն չեքերի գրքույկն էր և, պատկերացնում էք, ես այդ փոքրիկ քաղաքում մնացի առանց սիգարետի:

— Մի անգամ Բարբադոսում հավատ ընծայեցի մի սպիտակ ջենթլմենի, որը վարձակալել էր իմ նավը, որպեսզի թռչող ձկներ որսա...— սկսեց նավապետը:

— Դե լավ, նավապետ, ցտեսություն,— ընդհատեց նրան Ջենրին:— Ավելի լավ է վերադարձիր նավ, իսկ մենք հիմա ճամփա ենք ընկնելու:

Եվ փոքրիկ ջոկատը Էնրիկոյի գլխավորությամբ շարժվեց դեպի լեռները, այնպես որ նավապետ Թրեֆեզենին ուրիշ բան չէր մտում, քան հնազանդվել: Նա օգնեց նավաստիներին՝ մակույկը հրելու ջուրը, նստեց նրա մեջ, դեկի մոտ, ու հրամայեց թիավարել դեպի «Անջելիկան»: Մերթ ընդ մերթ ետ նայելով, նա տեսավ, թե ինչպես իր ուղևորները բեռները շալակեցին ու շուտով կորան խիտ կանաչներում:

Շուտով ճանապարհորդները դուրս եկան մի բացատ, ուր պեռների մի քանի խմբեր կտրում էին արևադարձային կուսական անտառը ու կոճղերն արմատախիլ անում, որպեսզի դրանց տեղում կաուչուկի ծառեր տնկեն. ավտոդողերի համար այժմ մեծ քանակությամբ կաուչուկ էր պահանջվում: Լեոնսիան հոր հետ քայլում էր ջոկատի առջևից: Նրա եղբայրները՝ Ռիկարդոն և Ալեսանդրոն, հակերը շալակած հետևում էին նրանց, իսկ Ֆրենսիսն ու Ջենրին, նույնպես բեռնավորված, փակում էին երթը:

Հիդալգոյի արտաքինով բարձրահասակ ու նիհար ծերունի, որը, չնայած տարիքին, նստել էր թամբին շիփ-շիտակ, տեսնելով այդ տարօրինակ երթը, ուղղակի տապալված ծառերի ու փոսերի վրայով ձին արշավասույր քշեց ուղևորներին ընդառաջ:

Ճանաչելով Էնրիկոյին՝ նա ձիուց ցած թռավ, Լեոնսիայի առաջ հանեց սոմբրերոն, իսկ Էնրիկոյի ձեռքն ամուր սեղմեց, իբրև հին, մտերիմ բարեկամի: Նրա ողջույնից ու հայացքներից երևում էր, որ ուղղակի սքանչացած է Լեոնսիայով:

Խոսակցությունն ընթանում էր իսպաներեն, գնդացրի արագությամբ. իսկույն ինդրեցին ձիերով օգնել և ի պատասխան ստացվեց սիրալիր համաձայնություն, ապա տեղի ունեցավ երկու Մորգաններին ներկայացնելու արարողությունը: Ըստ լատինամերիկյան սովորության, ազարակատերն անմիջապես իր ձին գիջեց Լեոնսիային. նա ինքը կարճացրեց ասպանդակները և աղջկան նստեցրեց թամբին: Ժանտախտը, բացատրեց նա, համարյա բոլոր հեծնելու ձիերին ոչնչացրեց ազարակում, բայց իր գլխավոր վերակացուի մոտ դեռևս մնացել է միանգամայն կարգին մի ձի, որը կդրվի Էնրիկոյի տրամադրության տակ, հենց որ բերեն:

Նա սրտագին ու միաժամանակ մեծ արժանապատվությամբ սեղմեց Ջենրիի և Ֆրենսիսի ձեռքերը, ապա մոտ երկու թուպե սեթևեթանքով հավատացնում էր, որ թանկագին բարեկամ Էնրիկոյի ամեն մի բարեկամը նաև իր բարեկամն է: Էնրիկոն սկսեց ազարակատիրոջը հարցնել Կորդիլերների ճանապարհի մասին հիշատակեց նավթը: Ֆրենսիսը մեկնեց ականջները սրեց:

— Ուզում եք ասել, սենյոր, որ Պանամայում նա՛վթ է հայտնաբերված,— միջամտեց նա:

— Իհարկե,— լուրջ գլխով անելով, հաստատեց ազարակատերը:— Դեռևս մեր նախնիները գիտեին, որ մեզ մոտ նավթային շատրվաններ կան: Բայց իսկականից գործի կպավ միայն

«Էրմոսիլոյ» ընկերությունը, որը սուսիկ-փուսիկ այստեղ ուղարկեց իր գրինգո-ինժեներներին և, հետախուզություն կատարելով, սկսեց հողերը գնել: Ասում են, թե սա նավթային ամբողջ մի դաշտ է: Անձամբ ես նավթից ոչինչ չեմ հասկանում: Գիտեմ միայն, որ շատ նավթահորեր են փորել, և շարունակում են փորել նորերը, իսկ նավթն այնքան շատ է, որ ամեն ինչ հեղեղում է շուրջը: Ասում են, որ ոչ մի կերպ չեն կարողանում գետնի տակ պահել, այնքան որ շատ է ու մեծ ճնշմամբ է դուրս գալիս: Այժմ նրանց նավթամուղ է հարկավոր, որպեսզի նավթը օվկիանոս հասցվի, և նրանք սկսել են կառուցել: Իսկ առայժմ նավթը հոսում է ուղղակի ձորակներով, և վնասները վիթխարի չափերի են հասնում:

— Իսկ նավթամբարներ կառուցե՞լ են արդեն,— հարցրեց Ֆրենսիսը, հուզմունքով հիշելով «Տեմպիկո պեթրոլեումի» մասին, ձեռնարկություն, որ կլանում էր նրա կարողության առյուծի բաժինը: Նյու Յորքից մեկնելու պահից, երբ «Տեմպիկոյի» բաժնետոմսերը կտրուկ բարձրացան, նա ոչինչ չէր լսել նրա մասին:

Ազարակատերը գլուխը տարուբերեց:

— Ամբողջ ինդիոն տրանսպորտն է,— բացատրեց նա:— Նյութերը ջորիներով ծովափից մինչև նավթահանքեր բերելը պարզապես անհնարին է: Բայց այդ ուղղությամբ նրանք շատ բան արդեն արել են: Լեռնային ցածրավայրերում սարքել են յուրատեսակ նավթային ավազաններ՝ նավթային մեծ լճեր, հողաթմբերով փակելով հոսքը: Բայց և այնպես նրանց չի հաջողվում հոսանքը կանգնեցնել, և թանկարժեք հեղուկը ձորակներով հոսում է ներքև:

— Իսկ այդ ավազանները ծածկա՞ծ են,— հետաքրքրվեց Ֆրենսիսը, հիշելով, թե «Տեմպիկո պեթրոլեումի» գոյության առաջին օրերին ինչպիսի աղետներ պատճառեց հրդեհը:

— Ոչ, սենյոր:

Ֆրենսիսը բացասաբար շարժեց գլուխը:

— Ավազանները պետք է ծածկած անել: Բավական է որևէ հարբած մարդ կամ վրեժխնդիր պետն մի լուցկի նետի, և ամեն ինչ կարող է վառվել: Գործը վատ է դրված, շատ վատ:

— Բայց ախր «Էրմոսիլոյի» տնօրենը ես չեմ,— առարկեց ազարակատերը:

— Ես, իհարկե, նկատի ունեի ոչ թե ձեզ, այլ «Էրմոսիլոյ» ընկերությունը,— բացատրեց Ֆրենսիսը:— Ես ինքս էլ իմ կապիտալը դրել եմ նավթի վրա: Եվ արդեն հարյուր հազարներով եմ հատուցել նման պատահականությունների կամ հանցագործությունների համար: Չէ՞ որ երբեք կարգին չգիտես, թե դա ինչպես է պատահում: Բայց որ այնուամենայնիվ պատահում է՝ փաստ է...

Թե ուրիշ ինչ էր ուզում ասել Ֆրենսիսը նավթամբարները հիմար ու չարամիտ պետներից պահպանելու նպատակահարմարության մասին, այդպես էլ անհայտ մնաց, քանզի այդ թուպին նրանց մոտեցավ ազարակի գլխավոր վերակացուն՝ մտրակը ձեռքին. նա հետաքրքրությամբ դիտեց նորեկներին և նույնքան էլ աչալըջորեն աչք ածեց մոտերքում աշխատող պետների խմբին:

— Սենյոր Ռամիրես, շնորհ արեք իջնել ձիուց,— քաղաքավարությամբ դիմեց նրան իր ազարակատերը և, հենց որ նա ցած իջավ, ծանոթացրեց հյուրերի հետ:

— Ձին ձերն է, Էնրիկո, բարեկամս,— ասաց ազարակատերը:— Եթե սատկի, ինդրում եմ թամբն ու սանձը հարմար առիթով ուղարկեք ինձ: Իսկ եթե դա դժվար կլինի ձեզ համար, ապա ինդրում եմ մոռանաք, որ անհրաժեշտ է որևէ բան ուղարկել ինձ, բացի, անշուշտ, ողջույնից: Ցավում եմ, որ դուք և ձեր ուղեկիցները չեք կարող ընդունել իմ հրավերն ու այցելել տունս: Բայց շեֆը արևախում գազան է, ես գիտեմ: Եվ մենք կաշխատենք սխալ հետքերով ուղարկել նրան:

Երբ Լեոնսիան ու Էնրիկոն նստեցին ձիեր և ուղեբեռը կաշվե փոկերով կապեցին թամբերին, խումբը ճանապարհ ընկավ. Ալեսանդրոն ու Ռիկարդոն վազում էին կողք կողքի, բռնած հոր ձիու ասպանդակներից. այդպես ավելի հեշտ էր վազել: Ֆրենսիսն ու Յենրին հետևեցին նրանց օրինակին, կառչելով ասպանդակներից Լեոնսիայի ձիու, որի թամբաղեղից կապած էր արծաթե դուլարների պարկը:

— Այստեղ ինչ-որ սխալմունք կա,— ասաց ազարակատերն իր վերակացուին:— Էնրիկո Սոլանոն ազնիվ մարդ է: Եվ ինչ որ նա անում է, նույնպես ազնիվ է: Եվ եթե երաշխավորում է մեկի համար,

Նշանակում է՝ դա ազնիվ մարդ է: Սակայն Մարիանո Վերքարա-ի-Իքոսը հետապնդում է նրանց: Եթե նա հայտնվի այստեղ, մենք սխալ հետքերով կճամփենք նրան:

— Ահա և նա՛,— բացականչեց վերակացուն:— Միայն երևում է, որ առայժմ նրան չի հաջողվել ձիեր ճարել:

Եվ նա, ասես ոչինչ էլ չէր պատահել, անասելի հայիոյանքներով հարձակվեց պեոնների վրա. դե, գոնե ամբողջ օրվա ընթացքում կատարեն նախատեսված աշխատանքի կեսը:

Ազարակատերն աչքի պոչով հետևում էր Ալվարես Թորեսի գլխավորությամբ արագ մոտեցող խմբին, ցույց տալով, թե բոլորովին չի նկատում նրանց, և շարունակեց վերակացուի հետ քննարկել, թե ինչպես կարելի է ավելի հեշտ հանել այն կոճղը, որի վրա պեոնները չարչարվում էին:

Ազարակատերը սիրալիք պատասխանեց Թորեսի ողջույնին և քաղաքավարությամբ, բայց առանց ծաղրի հարցրեց, թե ո՞ր է տանում նա իր ջոկատը՝ արդյոք ո՞չ նավթ որոնելու:

— Ոչ, սենյոր,— պատասխանեց Թորեսը:— Մենք փնտրում ենք սենյոր Էնրիկո Սոլանոյին, նրա աղջկան, նրա որդիներին և երկու բարձրաժառանգ գրինգոների, որ ճամփորդում են նրանց հետ միասին: Ծիշտոն ասած, մեզ հենց այդ գրինգոներն են հարկավոր: Նրանք այստեղից չանցա՞ն, սենյոր:

— Այո, անցան: Ես կարծեցի, թե նրանց էլ է բռնել նավթի տենդը. նրանք այնպես էին շտապում, որ նույնիսկ քաղաքավարության համար մի քիչ չմնացին մեզ մոտ ու չասացին, թե ուր են գնում: Մի՞թե նրանք որևէ հանցանք են գործել: Ի՛նչ եմ հարցնում: Սենյոր Էնրիկո Սոլանոն այնքան արժանավոր մարդ է...

— Ո՞ր ուղղությամբ գնացին,— հարցրեց շնչակտուր ոստիկանապետը, դուրս գալով ժանդարմների խմբի միջից, որոնց հենց նոր էր հասել:

Աշխատելով ժամանակ շահել, ազարակատերն ու վերակացուն անորոշ պատասխան տվին, ապա մատնացույց արեցին ուղղակի հակադիր կողմը: Սակայն Թորեսը նկատեց, որ բահին կռթնած պեոններից մեկը ուշադիր հետևում է խոսակցությանը: Եվ մինչդեռ հիմարացած ոստիկանապետը հրաման կտար շարժվելու սխալ հետքերով, Թորեսը ծածուկ արծաթե մեկդոլարանոց ցույց տվեց պեոնին: Սա գլխի շարժումով հասկացրեց, թե ձիավորներն իսկապես որ կողմ գնացին, անկատելիորեն որսաց դրամը և նորից սկսեց փորել հսկայական ծուռ կոճղի տակ:

Թորեսն անմիջապես փոխեց շեֆի հրամանը:

— Մենք այնտեղ չենք գնա,— ասաց նա, աչքով անելով ոստիկանապետին:— Մի պատիկ թռչնակ ճուղտաց իմ ականջին, որ մեր հարգելի բարեկամը սխալվում է. նրանք բոլորովին այլ ուղղությամբ են գնացել:

Եվ ժանդարմների ջոկատն առաջ շարժվեց թարմ հետքերով, իսկ ազարակատերն ու վերակացուն, բոլորովին ընկճված, զարմանքով նայում էին իրար. միայն շրթունքների շարժումով վերակացուն հասկացրեց իր տիրոջը, որպեսզի լռի, և արագ մի հայացք գցեց անտառահատների վրա: Մատնիչ պեոնն աշխատում էր եռանդով, առանց մեջքն ուղղելու, բայց հարևանը գլխի հագիվ նկատելի շարժումով վերակացուին ցույց տվեց նրան:

— Ահա նա, այդ պատիկ թռչնակը,— բացականչեց վերակացուն և, ցատկելով մատնիչի մոտ, սկսեց նրա ուսերը ցնցել:

Արծաթե մեկդոլարանոցը ցած գլորվեց պեոնի քուրջերի միջից:

— Ահա՛,— արտաբերեց ազարակատերը, հասկանալով ամեն ինչ:— Պարզվում է, որ սա հարստացել է: Ի՛նչ սարսափ, որ իմ պեոնը դարձել է հարուստ: Ուրեմն, նա մեկնումեկին սպանել է կամ կողոպտել: Մտրակահարել, մինչև խոստովանի:

Դժբախտ պեոնը, ծնկի իջած հարվածների կարկուտի տակ, որ տեղում էր նրա գլխին վերակացուն, վերջապես խոստովանեց, թե ինչպես էր վաստակել այդ դոլարը:

— Ծեծեք նրան, անխնա ծեծեք: Թեկուզ մահվան դուռը հասցրեք այդ սրիկային, որն իմ լավագույն բարեկամներին մատնեց,— անտարբերությամբ ասում էր ազարակատերը:— Ասենք, ոչ, սպասեցեք: Ծեծեք, բայց ո՛չ մեռցնելու աստիճան: Մենք՝ այժմ բանվորական ձեռք քիչ ունենք և չենք կարող ազատություն տալ մեր արդարացի գայրույթին: Ծեծեք այնպես, որ նա իր ողջ կյանքում հիշի, բայց որպեսզի երկու օրից հետո նորից կարողանա աշխատանքի վերադառնալ:

Այն մասին, թե պետնը դրանից հետո ինչպիսի տառապանքներ ու դժբախտություններ կրեց, կարելի է գրել մի ամբողջ հատոր՝ նրա կյանքի էպոպեան: Բայց այնքան էլ հաճելի չէ դիտել, թե ինչպես են մարդուն ծեծելով կիսամեռ անում, ու նկարագրել այդ:

Ասենք միայն, որ պետնը, ստանալով սահմանված հարվածների մի մասը, հանկարծ վեր թռավ, պոկվեց տեղից, ցնցոտիների կեսը թողնելով վերակացուի ձեռքում, և խելագարի պես նետվեց դեպի ջուռազինները. ինչպե՞ս կարող էր հասնել նրան վերակացուն, որը սովոր էր արագ գնալ միայն ձիով:

Եվ այնպես սրընթաց էր սլանում գանահարության ցավից վերակացուի հանդեպ ունեցած վախից քշված այդ դժբախտը, որ վայրկենապես թռավ-անցավ մացառուտները և հասավ Սուլանոյին ու սրա ուղեկիցներին ճիշտ այն ժամանակ, երբ նրանք անցնում էին մի փոքրիկ գետակի միջով: Նրանց տեսնելով, պետնն ընկավ ծնկներին, խնդրելով ներել իրեն, ներել, որովհետև մատնել էր նրանց: Բայց նրանք այդ չգիտեին: Նկատելով պետնի ողորմելի վիճակը, Ֆրենսիսը կանգ առավ, հանեց գրպանի տափաշշի կափարիչը և, որպեսզի փոքր-ինչ կազդուրի խեղճին, պարունակության կեսը լցրեց նրա կոկորդը, ապա շտապեց իր ուղեկիցների հետևից:

Իսկ դժբախտ պետնը, ինչ-որ շնորհակալական խոսքեր միմնջալով, ծլկեց փրկարար ջուռազինների խորքը, միայն հակառակ ուղղությամբ: Սակայն թերսնումից և ուժից վեր աշխատանքից այնպես էր թուլացել, որ ոտքերը ծավլում էին, և նա տեղնուտեղը փռվեց կանաչ սաղարթների վրանի տակ:

Շուտով հետապնդողներն էլ երևացին գետակի մոտ. առջևից խուզարկու շան պես գնում էր Ալվարես Թորեսը, հետևից՝ ժանդարմները, իսկ բոլորի վերջում հեալով կաղին էր տալիս ոստիկանապետը: Թորեսի ուշադրությունը գրավեցին պետնի բոբիկ ոտքերի թաց հետքերը գետակի չոր քարերին: Չանցած մի վայրկյան պետնին գտան և, կառչելով դեռևս վրան մնացած ցնցոտիներից, դուրս քաշեցին թաքստոցից: Ընկնելով ծնկներին, որոնք այդ օրը բավականաչափ աշխատել էին, նա խնդրեց ինայել իրեն, ու խիստ հարցաքննության ենթարկվեց: Ասաց, որ Սուլանոյի ջուռատի մասին ոչինչ չգիտե: Պետնը մատնել էր այդ մարդկանց, որի համար ծեծ էր կերել. միևնչեռ նրանք, որոնց ինքը մատնել էր, օգնություն ցույց տվին իրեն, և այժմ նրա մեջ շնորհակալության ու բարին գործելու ցանկության պես ինչ-որ բան արթնացավ. ասաց, որ Սուլանոյին չի տեսել այն բացատից հեռանալուց հետո, որտեղ ինքը մատնեց նրանց արծաթե մի դոլարի համար: Թորեսի փայտն իջավ պետնի գլխին,— հինգ հարված, տասը,— և թվում էր, թե դրանք վերջ չեն ունենալու, եթե նա ճշմարտությունը չասի: Բայց ախր պետնն ընդամենը խեղճուկրակ արարածի մեկն էր, որի կամքը կոտրվել էր համարյա օրորոցից ստացած ծեծերից, և այնքան ուժեղ էին Թորեսի հարվածները, որն սպառնում էր ծեծելով մեռցնել նրան (մի բան, որ ազարակատերը չէր կարող թույլ տալ իրեն), որ պետնը անձնատուր եղավ ու ցույց տվեց հետապնդողներին, թե որ կողմը գնալ:

Բայց դա միայն սկիզբն էր այն աղետների, որ այդ օրը վիճակված էր պետնին: Շարունակելով չոքած մնալ, նա դեռևս չէր հասցրել երկրորդ անգամ մատնել Սուլանոյին, երբ ծառերի հետևից փրփրակալած ձիերով դուրս թռան նրա տերը և մի քանի հարևաններ ու վերակացուն:

— Մենյորներ, դա իմ պետնն է,— ազդարարեց ազարակատերը, որը շտապում էր շուտով որսալ փախստականին:— Իսկ դուք տանջում եք նրան:

— Իսկ ինչո՞ւ չտանջենք,— հարցրեց ոստիկանապետը:

— Որովհետև նա իմն է, և միայն ես իրավունք ունեմ նրան ծեծելու:

Պետնը գալարվելով սողաց դեպի ոստիկանապետի ոտքերը և սկսեց խնդրել, որ չմատնի իրեն: Բայց նա գուրթ էր խնդրում մեկից, որին այդ զգացմունքն անձանոթ էր:

— Իհարկե, սենյոր,— ասաց ոստիկանապետը ազարակատիրոջը:— Ետ վերցրեք նրան, խնդրեմ: Մենք պետք է օրենքը պահպանենք, իսկ այս մարդը ձեր սեփականությունն է: Մանավանդ որ նա

այլևս մեզ հարկավոր չէ: Բայց հիանալի պե՛տն է, սե՛նյոր: Սա արեց մի բան, ինչ չի արել ոչ մի այլ պե՛տն Պանամայի գոյության ամբողջ ընթացքում՝ մեկ օրվա ընթացքում երկու անգամ ճշմարիտ է խոսել:

Պե՛տնի ձեռքերը կապեցին առջևից և, թոկով ամրացնելով վերակացուի ձիու թամբին, քարշ տալով տարան ետ. այժմ արդեն նա միանգամայն համոզված էր, որ ճակատագրի կողմից այդ օրվա համար սահմանված ամենադաժան ծեծը դեռևս սպասում է իրեն: Եվ չսխալվեց: Երբ վերադարձան ագարակ, նրան անատուսի պես կապեցին փշալարե ցանկապատի սյունից, իսկ տներն իր բարեկամների հետ, որոնք օգնել էին բռնելու փախստականին, մեկնեց հասիենդա նախաճաշելու: Պե՛տնը լավ գիտեր, թե ինչ է սպասում իրեն: Բայց տեսնելով արոտավայրը շրջափակող փշալարը և մոտերքում թափառող զամբիկին, մի հուսահատ միտք հղացավ: Ուշադրություն չդարձնելով ձեռքի դաստակի մեջ մտնող փշերի պատճառած ցավին, նա կապանքներն արագ կտրատեց, քսելով սուր փշալարին, և մտածելով, որ այժմ բացի իշխանություններից ուրիշ ոչ ոք սարսափելի չէ իր համար, դուրս սողաց ցանկապատի տակից, կաղ զամբիկին դուրս բերեց դարպասից, թռավ մեջքին և, մերկ կրունկներով խթանելով նրա կողերը, քառատրոփ սլացավ դեպի փրկարար Կորդիլերները:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Այդ միջոցին հետապնդողներն արդեն հասվեհաս էին, և Յենրին սկսեց Ֆրենսիսին ձեռք առնել:

— Այ, եթե մի տեղ կա, ուր դուրսներն արժեք չունեն, այստեղ է, ջունգլիները: Ձիեր չես կարող գնել դրանցով, նույնիսկ այս եղածներին չի կարելի բուժել, որ, հավանորեն, նույնպես վարակված են ժանտախտով, չէ՞ որ ագարակատիրոջ մնացած բոլոր ձիերը սատկել էին:

— Ես դեռ ոչ մի անգամ այնպիսի վայրում չեմ եղել, ուր փողն անգոր լիներ,— առարկեց Ֆրենսիսը:

— Բո կարծիքով նույնիսկ դժոխքում կարելի է փողով խմել,— նկատեց Յենրին:

Լեոնսիան ծափ տվեց:

— Ճիշտն ասած, չգիտեմ,— նույն տոնով պատասխանեց Ֆրենսիսը:— Ես այնտեղ չեմ եղել:

Լեոնսիան նորից ծափ տվեց:

— Բայց և այնպես կարծում եմ, որ դուրսներն այստեղ, ջունգլիներում էլ կծառայեն ինձ: Ես նույնիսկ մտադիր եմ հենց այժմ բախտս փորձել,— շարունակեց Ֆրենսիսը, փողի պարկն արձակելով Լեոնսիայի ձիու թամբից:— Իսկ դուք շարունակեցեք ձեր ճամփան:

— Բայց դուք գոնե ինձ պարտավոր եք ասել, թե ինչ եք ուզում անել,— պահանջեց Լեոնսիան: Նա թամբի վրայից թեքվեց դեպի Ֆրենսիսը, և սա սկսեց ինչ-որ բան շշուշուկ նրա ականջին. աղջիկը ծիծաղեց, իսկ Յենրին, որ գրուցում էր Էսրիկոյի ու նրա որդիների հետ, լսելով այդ ծիծաղը, մտքում իրեն խանդոտ հիմար անվանեց:

Նախքան ծառերը Ֆրենսիսին կծածկեին, նրանք տեսան, որ նա հանեց ծոցատետրն ու մատիտը և սկսեց ինչ-որ բան գրել: Այն, ինչ նա գրեց, կարճ էր, բայց արտահայտիչ, պարզապես մի թիվ՝ «50»: Ֆրենսիսը թերթիկը պոկեց դրեց արահետի մեջտեղը, աչքի զարնող տեղում, և արծաթե մեկրոլարանոցով սեղմեց գետնին: Եվս քառասունինը դուրս հաշվելով պարկից, նա շաղ տվեց գրության մոտերքում, ապա վազեց իր ուղեկիցներին հասնելու:

Ժանդարմ Աուգուստինոս, որը չիմած ժամանակ ավելի շատ լռում էր, իսկ խմած ժամանակ սկսում շատախոսությամբ ապացուցել, թե լռությունը ոսկի է, գնում էր բոլորի առջևից, գլուխը կախ, ասես հոտոտելով գազանի հետքերը և աչալոջորեն չորս կողմը դիտելով: Հանկարծ նա նկատեց թերթիկն ու արծաթե դուրանոցը: Դուրսը վերցրեց իրեն, իսկ գրությունը հանձնեց ոստիկանապետին: Թորեսը նայեց շեֆի ուսի վրայով, և երկուսով էլ տեսան խորհրդավոր «50» թվանշանը: Ոստիկանապետը թուղթը դնե նետեց, ոչ մի հետաքրքիր բան չգտնելով դրանում, և ուզեց շարունակել հետապնդումը, բայց Աուգուստինոսն թերթիկը վեր առավ ու սկսեց մտածել, թե

ինչ կարող էր նշանակել «50» թվանշանը: Նա դեռ մտածմունքի մեջ էր, երբ լսվեց Ռաֆայելի բարձրաձայն ճիչը: Այստեղ արդեն Աուգուստինոս գլխի ընկավ, թե բանն ինչու՞մն է. ուրեմն, Ռաֆայելը գտավ ևս մեկ դուլար. եթե ինչպես հարկն է փնտրես, ապա այստեղ մոտերքում կարելի է հիսուն նույնպիսի արծաթյա դրամ գտնել: Եվ, թուղթը մի կողմ շարտելով, նա մի ակնթարթում ընկավ չորս թաթերի վրա ու սկսեց փնտրել. մնացած ժանդարմներն իսկույն հետևեցին նրա օրինակին: Ընդհանուր իրարանցման մեջ ոչ ոք ուշադրություն անգամ չդարձրեց թորեսի և ոստիկանապետի վրա, որոնք իզուր անեծքներ էին տեղում, պահանջելով, որ ջոկատն առաջ շարժվի:

Երբ պարզվեց, որ ոչ ոք այլևս ոչինչ չի գտնում, ժանդարմները որոշեցին հաշվել, թե քանի դուլար են հավաքել: Պարզվեց, որ քառասունյոթ:

— Այստեղ մոտերքում էլի երեք դուլար պետք է լինի, — բացականչեց Ռաֆայելը, և բոլոր ժանդարմները նորից փռվեցին գետնին ու սկսեցին որոնումները: Եվս հինգ թուղթ անցավ, մինչև որ երեք դուլարն էլ գտան: Ամեն մեկն իր գրպանը դրեց այն, ինչ հաջողվել էր վերցնել, և բոլորը հնազանդորեն հետևեցին թորեսին ու ոստիկանապետին:

Մոտ մի մղոն անցան, երբ թորեսը մի փայլուն դուլար նկատեց գետնին ու փորձեց ոտքով ցեխի մեջ մտցնել, բայց Աուգուստինոյի՝ ժանտաքիսի աչքերի նման սրատես աչքերը հասցրին նկատել, և նրա արագաշարժ մատներն իսկույն արծաթյա դրամը դուրս հանեցին խոնավ հողից: Այժմ նրա ընկերներն արդեն փորձով գիտեին, թե որտեղ կա մեկ դուլար, այնտեղ էլի կա: Ջոկատը կանգ առավ, և որքան էլ պետերն սպառնացին ու խնդրեցին, մեկ է՝ ժանդարմները իսկույն ցրվեցին անտառով մեկ ու սկսեցին արահետի երկու կողմերի հողը տակնուվրա անել:

Առաջինը հետքը գտավ Վիսենտեն՝ լուսնի նման կլորադեմ մի մարդ, որն ավելի շուտ նման էր մեքսիկական հնդկի, քան մայայի կամ պանամական մետիսի: Մի ակնթարթում բոլոր ժանդարմները շրջապատեցին նրան, ինչպես շների ոհմակը շրջապատում է ծառը, որի մոտ նրանք քշել են օպոստոմին՝ պարկամկանը: Նմանությունը ուժեղանում էր նրանով, որ Վիսենտեն էլ էր կանգնած ծառի մոտ: Այդ ծառը կատար չուներ, փտած էր ու փչակավոր, տասներկու ոտնաչափ բարձրությամբ ու մոտ չորս ոտնաչափ պարագծով: Բնի մեջտեղում փչակ կար, որի վերևում փշով ամրացված էր նույնպիսի մի թերթիկ, ինչպիսին գտել էին դրանից առաջ: Թղթի վրա գրված էր՝ «100»:

Գզվառուք սկսվեց, որը շարունակվեց մի քանի թուղթ: Կես ոյուժին ձեռք հրիրում էին իրար. ամեն մեկն ուզում էր առաջինն ինքը մտնել փչակը ու հասնել գանձին: Բայց փչակը խորն էր, և ձեռքերը հատակին չէին հասնում:

— Եկեք ծառը կտրենք, — գոչեց Ռաֆայելը, մաչետի բուրձ կողմով թխկթխկացնելով ծառաբնին՝ որոշելու համար, թե փչակը որտեղ է վերջանում: — Ծառը միասին ցած կտապալենք, ապա կհաշվենք գտած փողերն ու հավասար կբաժանենք մեր մեջ:

Լսելով այդ, պետերը բոլորովին գազազեցին, իսկ շեֆն սպառնաց, որ Սան Անտոնիո վերադառնալուսն պես նրանց կուղարկի Սան Խուան՝ ի կեր մորեխների:

— Բայց, փառք աստծու, մենք չենք վերադարձել Սան Անտոնիո, — խոսեց Աուգուստինոն, կտրելով զգաստ պահերին իր շուրթերը կաշկանդող լռության կնիքը և հերթական իմաստությունը բարբառելով:

— Մենք աղքատ մարդիկ ենք ու ազնվաբար կբաժանենք, — հայտարարեց Ռաֆայելը: — Աուգուստինոն իրավացի է. փառք աստծու, մենք դեռ Սան Անտոնիոյում չենք: Այդ հարուստ գրինգոն մի օրում իր ճամփին ավելի շատ դրամ շաղ տվեց, քան մենք կարող էինք վաստակել մեկ տարի ծառայելով: Ես, օրինակ, հեղափոխության կողմն եմ, որպեսզի բոլորն էլ շատ փող ունենան:

— Եվ որպեսզի ղեկավարը լինի հարուստ գրինգոն, — ավելացրեց Աուգուստինոն: — Եթե նա սրանից հետո էլ մեզ կառաջնորդի արծաթ շաղ տված ճամփով, ես պատրաստ եմ ամբողջ կյանքումս գնալ նրա հետևից:

— Ես էլ, — հաստատեց Ռաֆայելը: — Իսկ եթե սրանք, — նա գլխով արեց թորեսի ու ոստիկանապետի կողմը, — թույլ չտան հավաքելու այն, ինչ աստվածներն ուղարկել են մեզ, ապա թող դժոխք գնան, գրողի ծոցը: Մենք մարդ ենք և ոչ թե ստրուկ: Աշխարհը մեծ է: Մեր առջևն են

Կորդիլերները: Կբնակվենք Կորդիլերներում, և բոլորս էլ հարուստ կլինենք ու ազատ: Իսկ ինչպիսի՜ գեղեցիկ ու ախորժաբեր հնդկուհիներ կան այնտեղ...

— Եվ ի դեպ, կազատվենք մեր կանանցից. թող մնան Սան Անտոնիոյում,— ասաց Վիսենտեն:— Եկեք կտրենք թանկարժեք ծառը:

Մաչետների ծանր հարվածների տակ փտած ու չեչուտ ծառը պարզապես փշուր-փշուր էր լինում: Երբ ծառը ցած տապալվեց, ժանդարմները հաշվեցին ու հավասար բաժանեցին իրար մեջ ոչ թե հարյուր, այլ հարյուր քառասունյոթ արծաթյա դոլար:

— Այդ գրինգոն առատածեռն տղա է,— կռնչաց Վիսենտեն:— Նույնիսկ թողնում է ավելին, քան խոստացել է: Միգուցե էլի կա այնտեղ:

Տաշեղների ու ծառի փտած մանրուքի կույտի տակից հինգ դոլար ևս գտան, ուղիղ տասը ռոպե կորցնելով դրա համար, այնպես որ Թորենս ու ոստիկանապետը իսկական կատաղության հասան:

— Տե՛ս, թե ի՞նչ հարուստ է, նույնիսկ ծուլացել է հաշվել,— ասաց Ռաֆայելը:— Երևի ուղղակի բաց է անում պարկի բերանն ու փողը թափում այնտեղից: Դա երևի այն պարկն է, որ նա փախցրեց Սան Անտոնիոյից, մեր բանտի պարիսպը պայթեցնելուց հետո:

Չետապնդումը վերսկսվեց, և կես ժամ նրանք քայլում էին անկանգառ, մինչև որ հասան մի լքված ազարակ, որի դաշտերի վրա արդեն հարձակվել էին ջունգլիները: Կիսավեր, ծղոտածածկ տնակ, բանվորների փլված բարաքներ, քարուքանդ եղած ախոռ, որի սյուներն ընձյուղներ էին արձակել ու վերածվել իսկական ծառերի, և, վերջապես, ջրհոր, որից ըստ երևույթին դեռ վերջերս ջուր էին վերցրել, քանի որ դույլը կապված էր թմբուկին ռիատայի /Ռիատա— ինքնաշեն թուկ:/ բոլորովին նոր կտորով,— ամեն ինչ խոսում էր այն մասին, որ մարդն այստեղ նահանջել էր, այնպես էլ չկարողանալով նվաճել վայրի բնությունը: Իսկ ջրհորի թմբուկի ամենաաչքի ընկնող տեղում ամրացված էր տեսքից արդեն ծանոթ թերթիկը, որի վրա գրված էր «300»:

— Սո՛ւրբ աստվածածին,— բացականչեց Ռաֆայելը:— Ախր մի ամբողջ հարստություն է:

— Ա՛, թող այդ գրինգոն հավիտյանս հավիտենից խորովվի դժոխքում մարմանդ կրակի վրա,— ավելացրեց Թորենսը:

— Նա ավելի լավ է վճարում, քան ձեր սենյոր Ռիգանը,— նենգորեն նկատեց ոստիկանապետը, որ լիակատար հուսահատության էր հասել արդեն:

— Այդ արծաթի պարկն այնքան էլ արդեն մեծ չէ,— նկատեց Թորենսը:— Ինչպես երևում է, տիրոջը բռնելուց առաջ, մենք պետք է հավաքենք այդ գանձարանի ամբողջ պարունակությունը: Ահա, երբ ամեն ինչ հավաքենք, և պարկը դատարկվի, հենց այդտեղ էլ կբռնենք նրան:

— Առաջ շարժվենք, բարեկամներ,— շողոքորթ տոնով դիմեց իր ջոկատին ոստիկանապետը:— Չետո կվերադառնանք այստեղ ու հանգիստ կհավաքենք ամբողջ արծաթը:

Այստեղ Աուգուստինոն նորից իր շրթունքներից պոկեց լռության կնիքը:

— Ոչ ոք չգիտե, թե ինչ ճանապարհով պիտի վերադառնա և պիտի վերադառնա՞ ընդհանրապես,— հռեռտեսորեն ազդարարեց նա. և, ոգեշնչված իմաստության այն մարգարտով, որ դուրս մղեց իրենից, որոշեց ևս մի ասույթ պարզաբան աշխարհին.— Ավելի լավ է երեք հարյուրը ձեռքում, քան երեք միլիոնը ջրհորի հատակին, որը, միգուցե, երբեք էլ չտեսնենք:

Մեկնումեկը պետք է իջնի ջրհոր,— ասաց Ռաֆայելը և, բռնելով գործած թուկից, կախ ընկավ:— Տեսնում եք, ռիատան ամուր է: Որևէ մեկին սրանով ցած կիջեցնենք: Ուրեմն, ո՞վ է այն քաջը, որը կիջնի ջրհոր:

— Ես, ցանկությունս հայտնեց Վիսենտեն:— Ես եմ այդ քաջը ես կիջնեմ...

— Այո, և այնտեղ եղած փողի կեսը կգողանաս,— վայրկենապես ծնված կասկածը բարձրաձայն արտահայտեց Ռաֆայելը:— Եթե դու ուզում ես ցած իջնել, ապա նախ բոլոր փողերդ մեզ հանձնիր: Իսկ երբ դուրս գաս, կխուզարկենք քեզ ու կիմանանք, թե ինչքան դրամ ես գտել: Չետո բոլորը հավասար կկիսենք ու կվերադարձնենք այն, ինչ առաջ քեզ մոտ կար:

— Այդ դեպքում ես չեմ իջնի այնպիսի մարդկանց համար, որոնք չեն վստահում ինձ,— համառոտաբար հայտարարեց Վիսենտեն:— Այստեղ, ջրհորի մոտ, ես նույնքան հարուստ եմ, որքան ձեզանից ամեն մեկը: Այդ դեպքում ինչո՞ւ պետք է հենց ես իջնեմ: Շատ անգամ եմ լսել, որ մարդիկ մեռել են ջրհորների մեջ:

— Դե մտի՛ր, ի սեր աստծու,— բղավեց ոստիկանապետը:— Շո՛ւտ, շո՛ւտ:

— Ես շատ եմ չաղ, այս թոկն ինձ չի դիմանա: Ջրհոր մտնողը չեմ,— հայտարարեց Վիսենտեն:

Բոլոր հայացքները դարձան դեպի Աուգուստինոն, այն լռակյաց ժանդարմը, որն այդ մի օրվա ընթացքում ավելի շատ էր խոսել, քան մի ամբողջ շաբաթում:

— Գիլերմոն ամենանիհարն է ու ամենաբարակը,— ասաց Աուգուստինոն:

— Դեևս Գիլերմոն էլ կմտնի,— խմբով հայտարարեցին մնացածները:

Բայց Գիլերմոն վախվորած նայեց ջրհորի խորքն ու ետ-ետ գնաց, խաչակնքելով ու գլուխն օրորելով:

— Չեմ իջնի, եթե նույնիսկ այնտեղ լինի մայաների խորհրդավոր քաղաքի սրբազան գանձը,— մրթմրթաց նա:

Ոստիկանապետը դուրս քաշեց ատրճանակը ու հարցական նայեց իր ժանդարմներին, ասես հավանություն խնդրելով նրանցից: Նրանք պատասխանեցին հայացքներով ու գլուխների շարժումով:

— Դանուն բոլոր սրբերի, իջիր ջրհորը,— սպառնական ձայնով ասաց նա փոքրիկ ժանդարմին:— Եվ շտապիր, թե չէ այնպես կպարզևատրեմ քեզ, որ այլևս երբեք չես իջնի չես բարձրանա, այլ հավիտյանս հավիտենից կմնաս այստեղ ու կհոտես այս անիծյալ ջրհորի մոտ... Ճի՛շտ վարված կլինեմ, տղերք, եթե սպանեմ սրան, քանի որ հրաժարվում է իջնել ջրհոր:

— Ճիշտ վարված կլինես,— պաշտպանեցին ժանդարմները:

Եվ այսպես, Գիլերմոն դողդոջուն մատներով՝ հաշվեց դրանից առաջ գտած դրամները, ապա վախից ծամածռված դեմքով, չղաղարելով խաչակնքել, մոտեցավ դույլին (հետևից հրում էին ընկերները), նստեց նրա վրա, ոտքերի մեջ առնելով այն, և ժանդարմներն սկսեցին շտապով նրան իջեցնել ցած, ջրհորի դժոխային խավարի մեջ:

— Սպասեցե՛ք,— ջրհորի խորքից լսվեց նրա ճիչը:— Կանգ առեք: Ջո՛ւրը: Ես արդեն ջրի մեջ եմ:

Ժանդարմներն ընկան թմբուկի վրա ու պահեցին այն:

— Իմ հասանելիքից բացի պահանջում եմ տասը պետ,— նորից լսվեց Գիլերմոյի ձայնը:

— Սպասիր, հիմի մենք քեզ մի լավ կմկրտենք,— բղավեց ինչ-որ մեկը:

Բոլորը դռվառոց բարձրացրին.

— Այսօր դու մի կուշտ ջուր կուլ կտաս:

— Այ, հիմի թոկը բաց կթողնենք:

— Կկտրենք մեջտեղից, պրծավ գնաց:

— Բաժանքի ժամանակ մի հոգով պակաս կլինի:

— Ջուրը շատ է գարշահոտ,— նորից ջրհորի մոլթ խորքերից լսվեց Գիլերմոյի ձայնը, որն ասես ուրվականի ձայն լինեց:— Այստեղ ինչ-որ քնկոտ մողեսներ կան ու մի սատկած թռչուն, որը թունդ գարշահոտություն է տարածում: Միգուցե օձեր էլ կան այստեղ: Ըջմարիտ, տասը ավելորդ պետն այնքան էլ մեծ գին չէ այսպիսի աշխատանքի համար:

— Այ, հենց հիմի մենք քեզ կխեղդենք,— բղավեց Ռաֆայելը:

— Ես քեզ շանսատակ կանեմ,— գոռաց ոստիկանապետը:

— Շանսատակ կանեք թե կխեղդեք՝ դրանից ձեզ ոչ մի օգուտ,— լավեց Գիլերմոյի ձայնը:— Փողերը, մե՛կ է, կման ջրհորում:

Տիրեց լռություն. վերևում գտնվողները հայացքներով հարցնում էին իրար, թե ինչ ասեն հիմա:

— Իսկ գրինգոներն ավելի ու ավելի են հեռանում մեզանից,— պայթեց Թորեսը:— Լավ կարգապահություն է, սենյոր Մարիանո Վերքարա-ի-Իքոս: Խոսք չունեմ, կարողանում եք ձեր ժանդարմներին ձեռքի մեջ պահել:

— Սա ձեզ համար Սան Անտոնիո չէ,— կծեց ոստիկանապետը:— Սա Խուչիտանի խորքերն է: Իմ շները հավատարմությամբ են ծառայում ինձ, քանի դեռ Սան Անտոնիոյում են, իսկ այս խորքերում պետք է նրանց հետ զգույշ լինել. մեկ էլ տեսար կատաղեցին, և այն ժամանակ ի՞նչ կկատարվի մեզ հետ:

— Ամեն ինչ այդ անիծյալ ոսկու պատճառով եղավ,— տեղի տալով, տխրությամբ ասաց Թորեսը:— Այստեղ, իսկապես, կարող ես սոցիալիստ դառնալ. մի մտածիր, է, ինչ-որ գրինգո արդարադատության ձեռքերը կապկպում է ոսկե կապանքներով:

— Արծաթե,— ուղղեց ոստիկանապետը:

— Կորեք գրողի ծոցը,— ասաց Թորեսը:— Դուք հաճեցիք բոլորովին ճիշտ նկատել, որ սա Սան Անտոնիոն չէ, այլ Խուչիտանի խորքերը, և այստեղ ես կարող եմ ձեզ համարձակորեն գրողի ծոցն ուղարկել: Դե, ո՞վ է մեղավոր, որ դուք դյուրաբորբոք բնավորություն ունեք: Ինչո՞ւ պետք է դրա համար իրար հետ գժտվենք, երբ մեր ամբողջ հաջողությունը կախված է մեր համերաշխությունից:

— Ել դո՛ւք, լսո՛ւմ եք,— նորից հասավ Գիլերմոյի ձայնը:— Ջրի խորությունն այստեղ ընդամենը երկու ֆուտ է: Այնպես, որ ձեզ չի հաջողվի խեղդել ինձ: Ես հենց նոր հասա հատակին և ձեռքիս արդեն չորս կլորիկ արծաթյա պեսո ունեմ: Դրանք գորգի պես ծածկել են ամբողջ հատակը: Ուրեմն, ինչպե՛ս, թոկը ցա՛ծ եք թողնում, թե՞ ես տասը ավելորդ պեսո կստանամ այս կեղտոտ գործի համար: Ջուրն այստեղ զարշահոտություն է տարածում, ինչպես քանդված գերեզմանը:

— Այո՛, այո՛, — բղավեցին ժանդարմները՝ կռանալով ջրհորի վրա:

— Ի՛նչը՝ այո: Թո՛կն եք ցած թողնում, թե տասը պեսո եք տալիս:

— Տալիս ենք,— պատասխանեցին խմբով:

— Օ՛Ֆ, ի սեր բոլոր սրբերի, շտապիր, մարդ արարած: Շտապի՛ր,— բղավեց ոստիկանապետը:

Ջրհորի խորքից լսվում էին անեծքներ ու ճողփյուն, և ռիատայի թուլանալուց ժանդարմները հասկացան, որ Գիլերմոն դույլից իջել, դրամներն է հավաքում:

— Դիր դույլի մեջ, սիրելի Գիլերմո,— բղավեց նրան Ռաֆայելը:

— Գրպաններս եմ դնում,— եղավ պատասխանը:— Եթե դնեմ դույլի մեջ, մեկ էլ տեսար ինձ մոռացաք ու դույլը վեր քաշեցիք:

— Բայց ախր այդպիսի ծանրությունից ռիատան կարող է կտրվել,— նախազգուշացրեց Ռաֆայելը:

— Ռիատան իսկապես էլ կարող է չդիմանալ, բայց իմ կամքը կդիմանա, որովհետև այստեղ արդեն ես անձնատուր չեմ լինի,— ասաց Գիլերմոն:

— Իսկ եթե ռիատան կտրվի՞...— նորից սկսեց Ռաֆայելը:

— Դե ինչ, ելք կա,— ասաց Գիլերմոն:— Դու էլ ցած իջիր: Այն ժամանակ առաջ ինձ կբարձրացնեն, հետո դույլով փողը, հետո միայն վերջում՝ քեզ: Այ, դա արդարացի կլինի:

Ռաֆայելը վախեցավ, նույնիսկ ծնոտը կախվեց ցած, և նա չկարողացավ ծպտուն հանել:

— Դե, ինչ կասես, Ռաֆայել, իջնո՛ւմ ես:

— Ոչ,— պատասխանեց նա:— Ամբողջ արծաթը լցրու գրպանների ու նրա հետ միասին դուրս արի:

— Ա՛, գրողը տանի այս ամբողջ զարմը, ինձ էլ հետը,— համբերությունը կորցնելով, բացականչեց ոստիկանապետը:

— Ես վաղուց եմ արդեն այդ նույնն ասում,— ասաց Թորենը:

— Է՛յ, բարձրացրե՛ք,— բղավեց Գիլերմոն:— Ես այստեղ հավաքեցի ինչ կար-չկար, բացի զարշահոտությունից: Խեղդվում եմ: Բարձրացրեք շուտ, թե չէ կորած եմ, ինձ հետ և ամբողջ երեք հարյուր պետն: Ի՛նչ եմ ասում. այստեղ երեք հարյուրից շատ ավելի կլինի: Երևի այդ գրինգոն իր ամբողջ պարկը դատարկել է այստեղ:

Իսկ այդ միջոցին փախստականները,— նրանք բավականաչափ հեռացել էին հետապնդողներից,— որպեսզի սոված, ծանր փնչացող ձիերին հնարավորություն տան հանգստանալու, կանգ առան այնտեղ, ուր արահետն սկսում էր բարձրանալ դեպի լեռը: Այդտեղ էլ հենց Ֆրենսիսը հասավ նրանց:

— Այսուհետև առանց հնչյուն դրամի երբեք չեմ ճանապարհորդի,— հայտարարեց նա ու սկսեց նկարագրել, թե ինչեր էր տեսել, թաքնվելով լքված ագարակատան հետևում:— Գիտես ինչ, Յենրի: Երբ ես մեռնեմ ու ճամփա ընկնեմ երկինք, այնտեղ էլ հետո մի պարկ դրամ կվերցնեմ, որքան կարելի է ծանր: Փողը նույնիսկ այնտեղ պետք կգա. այնքա աստծուն է միայն հայտնի, թե ինչպիսի անախորժություններ են սպասում մեզ այնտեղ: Լսեցե՛ք: Ջրհորի մոտ ժանդարմները այնպիսի կռիվ սարքեցին, ոնց որ կատուները շների հետ: Իրար չէին վստահում, հենց իրենց ընկերոջը թույլ չտվին իջնել ջրհոր, մինչև որ սա մինչ այդ հավաքած իր բոլոր փողերը չհանձնեց նրանց: Ժանդարմները բոլորովին չէին ենթարկվում ոստիկանապետին: Ծեֆն ստիպված էր ատրճանակ ցույց տալ, որպեսզի ստիպեր ամենափոքր ու նիհար ժանդարմին՝ իջնել ջրհոր: Իսկ սա, ջրհորի հատակը հասնելուն պես, սկսեց նրանց շանտաժի ենթարկել: Իհարկե, բոլորը խոստումներ էին տալիս, բայց ջրհորից դուրս գալուն պես սկսեցին ծեծել: Երբ ես հեռացա, դեռ թակում էին նրան:

— Բայց հիմա պարկդ դատարկ է,— նկատեց Յենրին:

— Այո, և հիմա մեզ համար դա ամենամեծ դժբախտությունն է,— համաձայնեց Ֆրենսիսը:— Եթե ես բավականաչափ փող ունենայի, նրանք երբեք չէին հասնի մեզ: Կարծեմ, չափազանց առատաձեռն գտնվեցի: Չգիտեի, որ այդ տակալքը կարելի է այդքան էժան գնել: Իսկ այժմ այնպիսի մի նորություն հայտնեմ, որ բոլորդ ապշեք. հետապնդումը շեֆի հետ միասին գլխավորում է Թորենը, սենյոր Թորենը, սենյոր Ալվարես Թորենը, պերճաշուք ջենթլմեն և Սոլանո ընտանիքի վաղեմի բարեկամ Ալվարես Թորենը: Նա կատաղում է, որ ուշանում են: Բիչ էր մտում լրջորեն գժտվեր շեֆի հետ, որովհետև վերջինս չէր կարողանում իրեն ենթարկել ժանդարմներին: Այո, սիրելիներս, նա շեֆին գրողի ծոցն ուղարկեց: Պարզ լսեցի, թե ինչպես գրողի ծոցն ուղարկեց նրան:

Մի-հինգ մղոն էլ վազելով, հոգնած ձիերն ընկան: Արահետն այդտեղ իջնում էր մռայլ, խոր ձորը ու դիմացի լանջով նորից ոլորվում դեպի վեր: Ֆրենսիսը պնդեց, որ բոլորը շարունակեն ճամփան, իսկ ինքը մնա: Նա մի քանի թուփ սպասեց և, ժամանակ տալով իր ուղեկիցներին առաջ անցնելու, հետևեց նրանց, այսպես ասած, իբրև վերջապահ: Բիչ հետո նա դուրս եկավ մի բաց տեղ, ուր հողը ծածկված էր թանձր խոտով, և, ի սարսափ իր, ձիու սմբակների հետքեր նկատեց, որոնք խոր ափսեների նման տպված էին ճիմերի վրա: Սմբակի փոսերում կուտակվել էր սև, յուղոտ մի հեղուկ. Ֆրենսիսն անմիջապես ճանաչեց անմշակ նավթը: Դրանք նավթի առաջին հետքերն էին միայն, նավթ, որը ներծծվում էր այստեղ քիչ վերևում հոսող առվակից և, ինչպես երևում է, հիմնական հոսանքի մի ճյուղավորումն էր: Իսկ հարյուր քայլ հետո Ֆրենսիսը դեմ առավ հենց այդ հոսանքին,— նավթի ամբողջ մի գետ, որը ցած էր իջնում այնպիսի թեթ լանջով, որ եթե ջուր լիներ, ջրվեժ կառաջացներ այդտեղ: Բայց քանի որ դա անմշակ նավթ էր, մաթի պես թանձր, ապա հոսում էր սարից դանդաղ, ինչպես կիսսեր մաթը: Ֆրենսիսը որոշեց այդտեղ դարան սարքել, որպեսզի ստիպված չլինի նավթային գետն անցնել: Նստեց մի քարի վրա, հրացանը դրեց մի կողմը, ավտոմատ ատրճանակը՝ մյուս, մի սիգարետ փաթաթեց, ծխեց ու սկսեց ականջ դնել՝ վայրկյան առ վայրկյան սպասելով հետապնդողների մոտեցող ոտնաձայներին:

Այդ միջոցին կիսամեռ լինելու չափ ծեծված պեռնը, որին էլ ավելի դաժան ծեծ էր սպասում, քշելով իր առանց այն էլ ուժասպառ ձին, ճիշտ Ֆրենսիսի գլխավերևից անցավ ճորաբերանով: Նավթահորի մոտ կենդանին ցած ընկավ. նա քացիներով ստիպեց ձիուն ոտքի կանգնել և սկսեց փայտով այնպես ծաղկել, որ կենդանին կաղալով փախավ դեպի ջունգլիները: Սակայն նրա արկածների առաջին օրը դեռ չէր վերջացել, չնայած ինքը չգիտեր: Նա էլ ծալապատիկ նստեց քարին, որպեսզի ոտքերը չնավթոտվեն, մի սիգարետ փաթաթեց, ծխեց ու սկսեց դիտել անցքից դուրս հոսող նավթը: Հանկարծ ինչ-որ ձայներ լսեց ու գլխապատառ նետվեց մոտակա թփուտների մեջ. զգուշությամբ նայելով այդտեղից, նա նկատեց երկու անծանոթ տղամարդու: Նրանք ուղղակի մոտեցան անցքին և, երկաթե անիվի օգնությամբ պտտեցնելով բաշխիչկափույրը, նավթի հոսքը նվազեցրին:

— Բավական է,— հրամայեց նա, որն ըստ երևույթին ավագն էր:— Եթե ավելի ամուր պտտենք, ճշունքից խողովակները կարող են պայթել. այդ մասին ինձ հատկապես նախազգուշացրեց այդ ինժեներ-գրինգոն:

Այժմ լեռնալանջով հոսում էր նավթի մի բարակ առվակ միայն, որը, սակայն, զգալի վտանգ էր ներկայացնում: Այդ երկուսը դեռևս իրենց գործը չէին ավարտել, երբ անտառից դուրս եկան մի խումբ ձիավորներ: Թաքնված պեռնը ճանաչեց իր տիրոջը և նրա հարևան ազարակատերերին, այլև նրանց վերակացուններին: Այդ խմբի համար փախստական բանվորի որսը նույնպիսի բավականություն էր, ինչպես անգլիացիների համար՝ աղվեսի որսը:

Չէ, նավթագործները ոչ ոքի չեն տեսել: Բայց ազարակատերը, որ գնում էր խմբի առջևից, նկատեց սմբակի հետքեր և, խթանելով ձիուն, սլացավ հետքերով: Մնացածները՝ նրա հետևից:

Պեռնն սպասում էր, մինչև նրանք հեռանան, ծխում էր ու մտածում: Երբ բոլորն էլ աչքից կորան, նա զգուշությամբ դուրս եկավ իր թաքստոցից ու մինչև վերջ բացեց նավթի հոսքը կարգավորող մեխանիզմը: Ստորերկրյա գազերի ճնշման տակ նավթը շատրվանեց ու հոսեց լեռն ի վար արդեն իսկական գետի նման: Պեռնը ականջ դրեց. նրան էր հասնում ճեղքից դուրս հորդող գազի ֆշշոցը, խլիչխլիչոցն ու մռնչուկը: Թե ինչ էր տեղի ունենում այդտեղ՝ նա չէր հասկանում, և իր կյանքը պահպանեց հետագա արկածների համար միայն շնորհիվ այն բանի, որ սիգարետը կացնելիս վառել էր վերջին լուցկին. հենց դա էլ փրկեց նրա կյանքը: Իզուր էր նա քրքրում իր ցնցոտիները, ականջների մեջ, ականջների հետևում ու մազերը՝ լուցկի չկար:

Այն ժամանակ նայեց նավթի գետին, ցնծալով, որ այդքան բարիք է կորչում, և, հիշելով կիրճի հատակից անցնող արահետը, նետվեց ցած, որտեղ և Ֆրենսիսը հանդիպեց նրան՝ ավտոմատ ատրճանակը ձեռքին: Պեռնը սարսափով փլվեց իր քրքրված, վիրավոր ծնկներին ու սկսեց ներում հայցել մի մարդուց, որին երկու անգամ մատնել էր այդ օրվա ընթացքում: Ֆրենսիսը նայեց նրան ու չճանաչեց. պեռնի դեմքն ամբողջովին չանգոծված էր, արյունը լերդացել էր, վերածելով այդ դեմքը ինչ-որ դիմակի:

— Amigo, amigo,— /Բարեկամ (իսպ.)/ թոթովեց նա:

Ներքևում, ուր ձգվում էր արահետը, լսվեց ցած գլորվող քարի դղրոյուն, որն ըստ երևույթին տեղից խախտվել էր ինչ-որ մեկի ոտքից: Եվ հենց նույն րոպեին էլ ի դեմս մարդու այդ ողորմելի նմանության, Ֆրենսիսը ճանաչեց այն պեռնին, որին տվել էր իր տափաշշի վիսկիի կեսից ավելին:

— Դե, amigo,— ասաց նրան Ֆրենսիսը տեղական բարբառով,— ինչպես երևում է, նրանք հետապնդո՞ւմ են քեզ:

— Նրանք կսպանեն ինձ, մահու չափ կծեծեն, նրանք շատ են բարկացած,— միմնջաց թշվառը:— Դուք իմ միակ բարեկամն եք, իմ հայրն ու մայրը: Փրկեցեք ինձ:

— Կրակել կարո՞ղ ես,— հարցրեց Ֆրենսիսը:

— Սենյոր, մինչև ստրկության վաճառվելս ես որսորդ էի Կորդիլերներում:

Ֆրենսիսն ավտոմատ ատրճանակը տվեց նրան, ձեռքով ցույց տվեց, թե որտեղ թաքնվի, ու պատվիրեց կրակել միայն այն դեպքում, երբ համոզված կլինի, որ չի վրիպի: Իսկ ինքն իրեն մտածեց. «Հիմա արդեն Թերրիտաունի կորտերում գոլֆ են խաղում: Միսիս Բելլինգհեմը երևի նստած է ակումբի հովնոցում ու գլուխ է կտրում, թե ինչ վճարի տանուլ տված երեք հազար

խաղանիշների դիմաց ու աղոթում ասածուն, որ բախտը ժպտա իրեն: Իսկ ես կանգնած եմ ահա այստեղ,— տե՛ր իմ աստված,— և նավթը փակում է իմ ճանապարհը...»

Նրա մտքերն անակնկալ ընդհատվեցին ոստիկանապետի, Թորեսի և ժանդարմների հայտնվելով: Ֆրենսիսը վայրկենապես կրակեց, ու նրանք վայրկենապես էլ անհետացան աչքից: Նա նույնիսկ չէր կարող ասել՝ արդյոք իր գնդակը դիպա՞մ վեկնումեկին, թե՞ հետապնդողները նահանջեցին պարզապես: Ինչպես երևում է, նրանք չէին պատրաստվում գրոհել ճակատ առ ճակատ, այլ որոշել էին առաջ շարժվել, թաքնվելով ծառերի հետևում: Ֆրենսիսն ու պեռնը հետևեցին նրանց օրինակին և պահվեցին թփուտների միջև գտնվող ժայռերի հետևում, հաճախակի տեղից տեղ վազելով:

Մի ժամ հետո Ֆրենսիսի հրացանի մեջ միայն մեկ փամփուշտ էր մնացել: Շնորհիվ նրա հրահանգների ու սպառնալիքների, ևս երկու փամփուշտ կար պեռնի ատրճանակում: Այնուամենայնիվ նրանք մեկ ժամ շահել էին Լեոնսիայի ու նրա ուղեկիցների համար. ըստ որում, Ֆրենսիսին պահպանում էր այն գիտակցությունը, որ ուզած թուպին կարող է կտրել-անցնել նավթային գետն ու թաքնվել: Վիճակն այնքան էլ վատ չէր արդեն, և ամեն ինչ բարեհաջող կանցներ, եթե վերևում ևս մի խումբ ձիավորներ չհայտնվեին, որոնք սկսեցին իսկույն ցած իջնել լանջով, կրակելով ծառերի հետևից: Դա ազարակատերն էր ու իր բարեկամները, որոնք փնտրում էին փախստական պեռնին, մինչդեռ Ֆրենսիսը ենթադրեց, թե էլի ինչ-որ ոստիկանական ջոկատ է ուղարկված իրենց հետապնդելու. ըստ որում, ձիավորների արձակած կրակն ասես հաստատում էր նրա ենթադրությունը:

Պեռնը սողեսող մոտեցավ Ֆրենսիսին ու ատրճանակը տվեց նրան, ցույց տալով, որ մեջը մնացել է երկու փամփուշտ, և փոխարենը մի տուփ լուցկի խնդրեց: Ապա ձեռքի շարժումով պատվիրեց Ֆրենսիսին անցնել ձորն ու բարձրանալ դիմացի լանջը: Աղոտ կերպով կռահելով պեռնի մտադրությունը, Ֆրենսիսը ենթարկվեց և, իր նոր, ավելի նպաստավոր դիրքից հրացանի վերջին գնդակն արձակելով մոտեցող ջոկատի վրա, ստիպեց նրան նահանջել դեպի ձորը:

Պեռնը վառած լուցկին նետեց նավթի մեջ, և հաջորդ թուպին նավթի գետը վերածվեց հրեղեն գետի: Եվս մի թուպ հետո երկինք մխրճվեց հարյուր ոտնաչափ բարձրությամբ գազի բռնկված սյունը: Էլի մի թուպ անց հրեղեն գետը հոսեց ձորն ի վար, ուղղակի Թորեսի ու ժանդարմների վրա:

Թուլանալով բոցվառվող նավթի տապից, Ֆրենսիսն ու պեռնը բարձրացան լանջն ի վեր, շրջանցեցին վառվող նավթը և, նորից դուրս գալով արահետ, առաջ վազեցին:

ԳՆՈՒՆ ՏԱՆԵՐՈՐԴ

Մինչդեռ Ֆրենսիսն ու պեռնը բարեհաջող կերպով շարունակում էին փախչել ձորը, որի հատակով հոսում էր նավթը, արդեն վերածվեց հրահեղուկ գետի հունի, այնպես որ ոստիկանապետին, Թորեսին ու ժանդարմներին ուրիշ ոչինչ չէր մնում, բայց եթե վերև մագցել ուղղաձիգ լանջով: Ազարակատերն ու նրա բարեկամներն էլ ստիպված էին ետ դառնալ ու բարձրանալ վերև, խույս տալու համար ձորում մոլեգնող բոցերից:

Պեռնը ստեպ-ստեպ ուսի վրայով ետ էր նայում և, վերջապես, ուրախ ճիչով ցույց տվեց սև ծխի երկրորդ սյունը, որ ձգվում էր վերև, վառվող նավթահորի հետևում:

— Մե՛կն էլ,— ուրախացավ նա:— Այնտեղ էլի հորեր կան: Եվ բոլորն էլ կվառվեն: Այդպես էլ պետք է դրանց: Նրանք կհատուցեն այն ծեծ ու ջարդի համար, որ ես տարել եմ: Գիտե՞ք, այդտեղից քիչ ավելի հեռու նավթի մի ամբողջ լիճ կա, նույնիսկ ծով՝ Խուչիտանի մեծությամբ:

Ֆրենսիսը հիշեց, որ ազարակատերը պատմում էր ամենաքիչը հինգ միլիոն բարել նավթ պարունակող լճի մասին, նավթ, որն առայժմ հնարավոր չէր եղել ծով հասցնել՝ նավերը բարձելու համար: Այդ նավթը պահվում էր ուղղակի բաց երկնքի տակ, հողե ամբարտակով պատնեշված բնական փոսորակում:

— Դու ի՞նչ արժես,— հարցրեց նա պեռնին, որն ասես ոչ մի առնչություն չունեի գործի հետ:

Վերջինս չհասկացավ:

— Ի՞նչ արժե հագուստդ. բոլորը, ինչ որ ունես հագիդ:

— Կես պետ... չէ, նույնիսկ կեսի կեսը,— վիատությամբ խոստովանեց նա, աչք ածելով վրան մնացած ցնցոտիներին:

— Իսկ ուրիշ ի՞նչ ունես:

Խեղճն ի նշան իր աղքատության տարածեց ձեռքերն ու դառնությամբ պատասխանեց.

— Ես ոչինչ չունեմ, պարտքից բացի: Իսկ պարտք եմ երկու հարյուր հիսուն պետ: Մինչև մահ ես դրանից չեմ պրծնելու. ինչպես հիվանդը չի կարող ազատվել քաղցկեղից, այնպես էլ ես՝ այդ պարտքից: Ահա թե ինչու եմ ազարակատիրոջ մոտ ստրուկ:

— Հը՛մ:— Ֆրենսիսը չկարողացավ ժպիտը զսպել: Ուրեմն, դու արժես երկու հարյուր հիսուն պետ. այդ նույնն է, թե ոչինչ: Դա նույնիսկ թիվ չէ, այլ վերացական բացասական մի մեծություն, որը գոյություն ունի լոկ մաթեմատիկոսի պատկերացման մեջ: Եվ ահա այդ գրոն այժմ այրում է միլիոնավոր պետների արժողության նավթը: Ախր եթե այստեղ հողը փուխր է, հեշտ ողողվող և նավթատար խողովակը թողնում է, ապա կարող է ամբողջ նավթադաշտը բռնկվել, իսկ դա արդեն միլիարդ դոլարի վնաս է: Գիտես, դու երկու հարյուր հիսուն դոլար արժողության վերացական մեծություն չես, այլ իսկական *hombre* ես:

Այդ ամբողջ խոսքից պետնը ոչինչ չհասկացավ, բացի «*hombre*» բառից:

— Ես մարդ եմ,— հպարտությամբ ասաց նա, կուրծքը դուրս ցցելով ու բարձրացնելով արնաշաղախ գլուխը:— Այո, ես *hombre* եմ, մայա:

— Մի՞թե դու մայա ցեղի հնդիկ ես,— կասկածեց Ֆրենսիսը:

— Կիսով չափ,— տհաճությամբ խոստովանեց պետնը:— Իմ հայրն իսկական մայա է: Ապրում էր Կորդիլերներում, բայց մայա ցեղի կանայք դուր չէին գալիս նրան: Եվ ահա նա սիրահարվեց *tierra caliente*-ի /Տաք երկրներից (հսպ.), Այստեղ նշանակում է՝ հովտից:/ մի մետիսուհու: Նրանից էլ ծնվել եմ ես. բայց հետո նա հորս մոտից գնաց բարբադոսցի մի նեգրի մոտ, իսկ հայրս վերադարձավ Կորդիլերներ: Ես էլ հորս պես սիրահարվեցի *tierra caliente*-ի մի մետիսուհու: Նա փող պահանջեց ինձանից, իսկ ես այնպես էի սիրում նրան, որ գլուխս բոլորովին կորցրի ու վաճառվեցի երկու հարյուր պետյով: Այդ օրվանից այլևս ոչ փող տեսա, ոչ նրան: Ահա արդեն հինգ տարի է, ինչ պետն եմ: Հինգ տարի եղել եմ ստրուկ ու ծեծ կերել: Եվ ի՞նչ. այժմ ես պարտք եմ ոչ թե երկու հարյուր, այլ երկու հարյուր հիսուն պետ:

Մինչդեռ Ֆրենսիս Մորգանը և մայա ցեղի բազմաչարչար հետևորդը կխորանային Կորդիլերներում, աշխատելով հասնել յուրայիններին, իսկ Խուլչիտանի նավթային դաշտերը, ծխի սև քուլաներ արձակելով, կշարունակեին բոցավառվել, հեռվում, Կորդիլերների բուն սրտում, հասունանում էին այնպիսի իրադարձություններ, որոնց վիճակված էր ի մի բերելու և՛ հետապնդողներին, և՛ հետապնդողներին՝ մի կողմից Ֆրենսիսին, Յենրիին, Լեոնսիային, նրա հարազատներին ու պետին, մյուս կողմից ազարակատերերին, ժանդարմների ջոկատը ոստիկանապետի գլխավորությամբ և Ալվարես Թորեսին, որն անհամբերությամբ սպասում էր ստանալու ոչ միայն Ռիգանի խոստացած դրամը, այլև՝ Լեոնսիա Սոլանոյի ձեռքը:

Մի տղամարդ ու կին նստել էին քարանձավում: Մետիսուհին ջահել էր ու շատ լավիկը: Էժանագին լամպի լույսով նա բարձրաձայն կարդում էր կաշեկազմ մի գիրք. դա Բլեքստոնի /Բլեքստոն Ռիլյամ (1723—1780) — անգլիացի պրոֆեսոր-իրավաբան, որը գրել է «Անգլիական օրենքների մեկնություններ» քառահատոր աշխատությունը/ մի հատորն էր իսպաներեն լեզվով: Թե՛ տղամարդը և թե՛ կինը բռբիկ էին, հագած անթև քտավե կնգուղավոր պարեգոտներ: Ջահել կնոջ կնգուղը ետ էր գցված, և նրա սև, թանձր մազերը թափվել էին ուսերին: Իսկ ծերունու կնգուղը թեքվել էր ճակատին, ինչպես կուսակրոնի վեղարը: Սուր գծագրությամբ ճգնավորի նրա դեմքը, արտահայտիչ ու ոգեշունչ, ուժ էր շնչում. միայն իսպանացին կարող էր այդպիսի դեմք ունենալ: Հավանորեն ճիշտ այդպիսի դեմք է ունեցել Դոն Կիխոտը: Միայն թե ծերունու աչքերը փակ էին. նրան շրջապատում էր կուրության հավերժական խավարը: Երբեք չէր կարող տեսնել հողմաղացը, որպեսզի կռվեր նրա հետ:

Նա նստել էր Ռոդենի «Մտածողի» դիրքով ու ցրված լսում էր սիրունիկ մետիսուհու ընթերցանությունը: Բայց նա բոլորովին էլ երագող չէր, և նրա բնավորությունից հեռու էր հողմադացների հետ կռվելը, ինչպես արեց Դոն Կիխոտը: Չնայած կուրությանը, որ անթափանց թաղանթով ծածկել էր նրանից աշխարհը, նա գործողության մարդ էր, և նրա հոգին կույր չէր բնավ. նա անսխալ կերպով թափանցում էր իրերի ու երևույթների, ինչպես նաև մարդկային սրտերի խորքը, կարողանում տեսնել և՛ գաղտնի արատները, և՛ մաքուր, ազնիվ նպատակները:

Նա ձեռքի շարժումով ընդհատեց աղջկան ու սկսեց բարձրաձայն մտածել կարդացածի մասին:

— Մեր օրերում մարդկանց ստեղծած օրենքները հանգում են մտքերի մրցության,— դանդաղ, բայց համոզված ասաց նա:— Դրանք հիմնվում են ոչ թե արդարության, այլ սովետության վրա: Օրենքներն ստեղծվել են մարդկանց բարօրության համար, բայց մարդիկ դրանց մեկնության ու կիրառման խնդրում սխալ ճանապարհով են ընթացել: Նրանք դեպի նպատակ տանող ուղին ընդունել են իբրև նպատակ, գործողությունների մեթոդը՝ իբրև վերջնական արդյունք: Բայց և այնպես օրենքներն օրենքներ են՝ անհրաժեշտ ու օգտակար: Սակայն մեր օրերում դրանք գործադրվում են թարս ու շիտակ: Դատավորներն ու փաստաբանները խելքներին զոռ են տալիս, իրար հետ մրցելով մտքի ճկունությամբ, պարծենում իրենց գիտնականությամբ և բոլորովին մոռանում հայցվորներին ու մեղադրյալներին, որոնք վճարում են նրանց ու նրանցից ոչ թե մտքի ճկունություն և գիտնականություն սպասում, այլ անաչառություն ու արդարություն:

Բայց և այնպես ծերունի Բլեքստոնն իրավացի է: Օրենքների հիմքում իբրև անկյունաքար, որի վրա բարձրանում է արդարադատության միջնաբերդը, ընկած է ազնիվ մարդկանց ջերմ ու անկեղծ ձգտումը դեպի անաչառություն ու արդարություն: Սակայն ի՞նչ է ասում այդ առթիվ ուսուցիչը: «Դատավորներն ու փաստաբանները հույժ հնարամիտ դուրս եկան»: Եվ մարդկանց բարօրության համար ստեղծված օրենքներն այնպիսի հնարամտությամբ աղավաղվեցին, որ այժմ արդեն դրանք չեն պաշտպանում ո՛չ վիրավորվածին, ո՛չ վիրավորողին, այլ միայն ճարպակալած դատավորներին ու նիհար, անկշտում փաստաբաններին, որոնք փառք են վաստակում ու փոր հաստացնում, եթե հաջողում են ապացուցել, որ իրենք ավելի խելոք են իրենց հակառակորդներից և նույնիսկ վճիռ կայացնող դատավորներից:

Նա լռեց ու թաղվեց մտքերի մեջ, միշտ նույն ռոդենյան «Մտածողի» դիրքում. ասես ծանրութեթև էր անում աշխարհի ճակատագիրը: Մետիսուհին նստել և սպասում էր սովորական նշանին՝ ընթերցումը վերսկսելու համար: Վերջապես, սթափվելով խոր մտածումներից, ծերունին խոսեց.

— Բայց այստեղ, պանամական Կորդիլերներում, օրենքը պահպանվել է իր ամբողջ անձեռնմխելիությամբ՝ արդարացի, անաչառ ու բոլորի համար հավասար: Այն ծառայում է ոչ թե ինչ-որ անհատի կամ հարուստների բարօրությանը: Անաչառ ու արդարացի դատավորին ավելի շատ սազական է կտավե հագուստը, քան նուրբ մահուղը: Շարունակիր ընթերցել, Մերսեդես: Բլեքստոնը միշտ էլ իրավացի է, եթե նրան ճիշտ կարդաս: Զո կարծիքով սա պարադոքս է: Այո: Բայց, ի դեպ, ժամանակակից բոլոր օրենքներն էլ պարադոքս են: Շարունակիր կարդալ, Բլեքստոնը մարդկային արդարադատությունն ինքն է, բայց, աստված իմ, խելոք մարդիկ որքան են խորամանկում, որպեսզի Բլեքստոնի անունով քողարկեն այն չարիքը, որ նյութում են իրենք:

Մի տասը րոպեից հետո կույր փիլիսոփան գլուխը բարձրացրեց, հոտոտեց օդն ու ձեռքի նշանով ընդհատեց աղջկան: Նրա օրինակին հետևելով՝ աղջիկը նույնպես հոտոտեց օդը:

— Միգուցե դա լամպի խանձահոտն է, օ՛, Արդարամիտ,— եկթաղրեց նա:

— Ոչ, նավթ է այրվում,— առարկեց կույրը:— Լամպն այստեղ գործ չունի: Եվ վառվում է շատ հեռվում: Ես նաև կրակոցներ լսեցի ձորում:

— Իսկ ես ոչինչ չլսեցի...— սկսեց մետիսուհին:

— Աղջիկս, ախր դու տեսնում ես և կարիք չունես այնպիսի սուր լսողության, ինչպես՝ ես: Ձորում կրակեցին: Հրամայիր որդիներին՝ պարզել, թե բանն ինչ է, ու զեկուցել ինձ:

Հարգալիր գլուխ տալով ծերունուն, որը թեև չէր տեսնում, բայց սովորել էր ականջով տարբերել նրա ամեն մի շարժումը, ուստի հասկացավ, որ նա գլուխ տվեց, ջահել կինը բարձրացրեց վերմակի փեշը ու դուրս ելավ: Զարայրի մուտքի մոտ նստած էին երկու պեոն: Ամեն մեկը հրացան ուներ ու մաչետե, իսկ գոտկի տակից երևում էին դանակի շեղբերը: Աղջիկը ծերունու հրամանը

հաղորդեց նրանց. երկուսով էլ վեր թռան տեղներից ու գլուխ տվին, բայց ոչ աղջկան, այլ այն անտեսանելի մարդուն, որից գալիս էր հրամանը: Նրանցից մեկը մաչետեով թխկթխկացրեց այն քարին, որի վրա քիչ առաջ նստած էր, ապա ականջը դրեց նրան ու սկսեց լսել: Քարը ծածկում էր պղնձահանքի այն երակը, որը ձգվում էր ամբողջ լեռան երկարությամբ և այդտեղ դուրս գալիս մակերես: Իսկ լեռան հետևում, դիմացի լանջին, արծվաբնում, որտեղից հոյակապ տեսարան էր բացվում դեպի Կորդիլերների ճյուղավորումները, նստած էր մի ուրիշ պեոն: Նա ականջը մոտեցրեց կվարցի մի նույնպիսի բեկորի և իր մաչետեով թխկթխկացրեց պատասխանը: Ապա մոտեցավ մի բարձր, կիսաչոր ծառի, որը գտնվում էր վեց քայլի վրա, ձեռքը մտցրեց փչակի մեջ ու քաշեց ներսում կախված թելից, ինչպես ժամկոչը գանգակատանը:

Բայց ոչ մի ձայն չլսվեց: Դրա փոխարեն մոտ հիսուն ֆուտ վերևում գլխավոր բնից սեմաֆորի սլաքի պես անջատվող խոշոր ճյուղը օրորվեց վեր ու վար, ինչպես վայել է սեմաֆորին: Այդտեղից մի երկու մղոնի վրա, լեռան կատարից, նրան պատասխանեցին նույնպիսի ծառ-սեմաֆորի օգնությամբ: Իսկ էլ ավելի հեռվում, լեռնալանջերն ի վար, շողողացին ձեռքի հայելիները, անդրադարձնելով արևի ճառագայթներն ու այդ միջոցով իրար հաղորդելով քարայրում գտնվող ծերունու հրամանը: Եվ շուտով Կորդիլերների այդ ամբողջ շրջանը սկսեց խոսել թնդացող պղնձերակների, արևի փայլուն կետերի և օրորվող ճյուղերի պայմանական լեզվով:

Շփ-շիտակ ձգված Էնրիկո Սոլանոն հնդիկ պատանու պես թռչում էր առաջ, աշխատելով հնարավորին չափ լավ օգտագործել այն ժամանակը, որ ընծայել էր Ֆրենսիսի արյերգարդային ճակատամարտը. Ալեսանդրոն ու Ռիկարդոն վազում էին նրա ձիու կողքով, բռնելով ասպանդակներից, մինչդեռ Լեոնսիան ու Յենրի Մորգանը այնքան էլ չէին շտապում. մերթ մեկը, մերթ մյուսը անընդհատ նայում էին ետ, որպեսզի տեսնեն, թե արդյոք Ֆրենսիսը չի՞ հասնում: Ինչ-որ պատրվակ հորինելով՝ Յենրին ետ դարձավ: Իսկ հինգ րոպե հետո Լեոնսիան էլ, որը նրանից պակաս չէր անհանգստանում Ֆրենսիսի համար, որոշեց ետ դառնալ: Բայց նրա ձին, չկամենալով ետ մնալ Սոլանոյի ձիուց, համառեց, ծառս եղավ, սկսեց սմբակներով դոփել և, վերջապես, կանգ առավ: Լեոնսիան թամբից ցած թռավ, և սանձը գետին նետելով, ինչպես ասում են պանամացիք, փոխանակ թամբած ձիուն բխովելու կամ կապելու, ոտքով ետ դարձավ: Այնպես արագ էր քայլում, որ համարյա հասել էր Յենրիին, երբ սա հանդիպեց Ֆրենսիսին ու պեոնին: Իսկ մի րոպե հետո երկուսն էլ,— և՛ Յենրին, և՛ Ֆրենսիսը,— արդեն նախատում էին նրան խելահեղության համար, բայց երկուսի ձայնի մեջ էլ ականա հնչում էին ախոյանի խանդը շարժող սիրո ու քնքանքի շեշտեր:

Սերն այն աստիճան էր համակել նրանց, որ այլևս ոչնչի մասին չէին մտածում, ուստի պարզապես շշմեցին, երբ հանկարծ ջունգլիներից դուրս թռավ հրացաններով զինված ագարակատերերի ջոկատը: Չնայած փախստական պեոնը, որի գլխին անհապաղ հարվածների կարկուտ տեղաց, հայտնաբերվեց նրանց միջև, այնուամենայնիվ ոչ ոք ձեռք չէր տա Լեոնսիային և երկու Մորգաններին, եթե պեոնի տերը՝ Սոլանո ընտանիքի վաղեմի բարեկամը, այստեղ լիներ: Բայց ճահճատենողը, որ երկու օրը մեկ բռնում էր նրան, ցած տապալեց ագարակատիրոջը, որն այժմ ցրտից դողալով պառկած էր բոցավառ նավթադաշտի մոտերքում:

Բայց և այնպես ագարակատերերը, ծեծելով պեոնին այն աստիճան, որ սա ծունկի իջավ ու հեկեկալով սկսեց ներում խնդրել, ասպետորեն ու քաղաքավարի վարվեցին Լեոնսիայի հետ և ոչ այնքան էլ կոպիտ՝ Ֆրենսիսի ու Յենրիի հետ, չնայած սրանց ձեռքերը կապեցին հետևներում, նախքան թեք լանջով կբարձրանային այնտեղ, ուր թողել էին իրենց ձիերը: Մինչդեռ դեռ նրանք շարունակում էին լատինաամերիկացիներին հատուկ դաժանությամբ իրենց գայրույթը թափել պեոնի գլխին:

Սակայն նրանց վիճակված չէր իրենց գերյալներին տեղ հասցնել: Հանկարծ ժանդարմներն իրենց պետի և Ալվարես Թորեսի գլխավորությամբ ուրախ աղաղակով հայտնվեցին լեռնալանջին: Բոլորի լեզուներն էլ վայրկենապես բացվեցին. ձայների հարածուն դժժոցի մեջ խլանում էին բացատրություն պահանջողների հարցերը և ինչ-որ բան բացատրել կամեցողների պատասխանները: Մինչդեռ այդ խառնաշփոթությունը կշարունակվեր, և բոլորը կբղավեին առանց իրար լսելու, Թորեսը, գլխով անելով Ֆրենսիսին ու հաղթական քմծիծաղով նայելով Յենրիին, առաջացավ դեպի Լեոնսիան և, որպես իսկական հիդալգո, հարգալիր խոնարհվեց նրա առաջ:

— Լսեցեք,— կամացուկ ասաց նա, նկատելով աղջկա զգվանքով լի շարժումը:— Մի՛ սխալվեք իմ մտադրությունների վերաբերյալ: Ճիշտ հասկացեք ինձ: Ես այստեղ եմ եկել, որպեսզի փրկեմ ձեզ ու պաշտպանեմ ամեն տեսակ փորձանքներից: Դուք իմ անուրջների տիրուհին եք: Ես պատրաստ եմ մեռնել ձեզ համար և կմեռնեի ուրախությամբ, չնայած էլ ավելի մեծ ուրախությամբ պատրաստ եմ ապրել ձեզ համար:

— Ես ձեզ չեմ հասկանում,— խստությամբ պատասխանեց աղջիկը:— Մի՞թե խոսքը վերաբերում է մեր կյանքին կամ մահվանը: Մենք ոչ ոքի չարիք չենք պատճառել՝ ոչ ես, ոչ իմ հայրը, ոչ Ֆրենսիս Մորգանը, ոչ էլ Յենրի Մորգանը: Ուստի մեր կյանքին ոչ մի բան չի կարող սպառնալ, սը՛ր:

Յենրին և Ֆրենսիսը մոտեցան Լեոնսիային ու կանգնեցին նրա կողքին, աշխատելով, չնայած ընդհանուր ազդուկ-աղաղակին, ոչ մի բառ բաց չթողնել Թորեսի հետ ունեցած նրա խոսակցությունից:

— Յենրի Մորգանին, անտարակույս, կախաղան է սպառնում,— պնդեց Թորեսը:— Ճշտորեն ապացուցված է, որ նա է սպանել Ալֆարո Սոլանոյին, ձեր հոր հարազատ եղբորը և ձեր հարազատ հորեղբորը: Նրան փրկել անկարելի է: Բայց Ֆրենսիս Մորգանին ես հաստատապես կարող էի փրկել: Եթե...

— Եթե ի՞նչ,— հարցրեց Լեոնսիան, ամուր սեղմելով ատամները, ինչպես որսը բռնած էզ վագր:

— Եթե... Դուք բարեհաճ կլինեք իմ նկատմամբ ու կամուսնանաք ինձ հետ,— անվրդով հանգստությամբ ավարտեց Թորեսը, չնայած կապված ձեռքերով անզոր կանգնած երկու գրինգոյի աչքերում էլ միաժամանակ բռնկվեց նրան տեղնուտեղը սպանելու ցանկություն:

— Անկեղծ սիրո պոռթկումով Թորեսը խլեց Լեոնսիայի ձեռքերը, բայց առաջուց մի արագ հայացք նետեց Մորգանների կողմը, նորից համոզվելու համար, որ նրանք ոչ մի վնաս չեն կարող պատճառել իրեն:

— Լեոնսիա,— աղաչական տոնով ասաց նա,— եթե ես դառնամ ձեր ամուսինը, թերևս կարողանամ որոշ բան անել Յենրիի համար: Թերևս նույնիսկ հաջողվի նրա կյանքը փրկել, եթե նա համաձայնի անմիջապես հեռանալ Պանամայից:

— Ա՛խ դու, իսպանական շո՛ւն,— խորրաց Յենրին, իզուր փորձելով ձեռքերն ազատել:

— Յենց դու ինքդ ես ամերիկյան շունը,— բղավեց Թորեսը, ձեռքի թարս կողմով հարվածելով Յենրիի ատամներին:

Նույն վայրկյանին Յենրին բարձրացրեց ոտքն ու այնպես հասցրեց Թորեսի կողին, որ սա չկարողացավ պահել իրեն ու թռավ դեպի Ֆրենսիսը. իր հերթին Ֆրենսիսն էլ չուշացրեց ինչպես հարկն է հարվածել նրա մյուս կողին: Այդպես նրանք Թորեսին նետում էին իրար, ինչպես ֆուտբոլիստները՝ զնդակը, մինչև որ վերջապես ժանդարմները բռնեցին նրանց ու սկսեցին ծեծել, օգտվելով վերջիններիս անզորությունից: Թորեսը ոչ միայն բացականչություններով խրախուսում էր ժանդարմներին, այլև դուրս քաշեց դանակը. անկասկած, բանը կվերջանար արյունոտ ողբերգությամբ, ինչպես հաճախ է պատահում, երբ եռում է լատինամերիկյան վիրավորված արյունը, եթե հանկարծ չհայտնվեին մի երկու տասնյակ զինված հեծյալներ, որոնք անաղմուկ դուրս եկան ծառերի հետևից և նույնքան անաղմուկ էլ դարձան դրության տերերը: Այդ խորհրդավոր անձանդներից ոմանք հագել էին պարուսիներ շապիկ ու վարտիք, մյուսները՝ քաթանե կնգուղավոր երկար պարեգոտներ:

Ժանդարմներն ու ազարակատերերը սարսափահար ետ-ետ գնացին, խաչակնքելով ու աղոթքներ մրմնջալով:

— Կույր ավագանի: Դաժան դատավորը: Այդ նրա մարդիկ են: Կորած ենք,— լսվում էր այս ու այն կողմից:

Միայն բազմաչարչար պետնը առաջ նետվեց ու արնաթաթախ ծնկներով ընկավ խստադեմ մարդու առաջ, որը, ինչպես երևում է, առաջնորդում էր Կույր ավագանի մարդկանց: Բարձրաձայն զանգատներ տեղացին պետնի շուրթերից և աղաչանքներ՝ արդարադատ լինելու:

— Իսկ գիտե՞ս, թե ինչ արդարության մասին ես խնդրում,— կոկորդային ձայնով հարցրեց ջոկատի պարագլուխը:

— Այո, Դաժան Արդարության,— պատասխանեց պեռնը:— Ես գիտեմ, թե ինչ է նշանակում դիմել Դաժան Արդարության, բայց և այնպես դիմում եմ, որովհետև ծարավ եմ արդարության, և իմ խնդիրը արդար է:

— Ես էլ եմ պահանջում Դաժան Արդարություն,— աչքերը փայլեցնելով, բացականչեց Լեոնսիան: Եվ կամացուկ ավելացրեց, դիմելով Ֆրենսիսին ու Յենրիին.— Ինչպիսին էլ որ լինի այդ Դաժան Արդարությունը:

— Չազիվ թե դա ավելի վատ լինի, քան այն, ինչ որ Թորեսից ու ոստիկանապետից կարող ենք սպասել,— շշուկով պատասխանեց Յենրին և, համարձակ առաջ գալով, դիմեց ջոկատի պարագլխին.— Ես էլ եմ պահանջում Դաժան Արդարություն:

Պարագլուխը գլխով արեց:

— Ես նույնպես,— նախ՝ շշուկով, ապա՝ բարձրաձայն ասաց Ֆրենսիսը:

Ինչպես երևում է, ժանդարմների համար միևնույնն էր, իսկ ազարակատերերը հասկացնել տվին, որ պատրաստ են ենթարկվելու ամեն մի վճռի, ինչ որ Կույր ավագակին հաճո է արձակել: Միայն ոստիկանապետը բողոքեց:

— Երևի չգիտե՞ք, թե ով եմ ես,— գոռոզությամբ հարցրեց նա:— Ես Սարիանո Վերքարա-ի-Իքոսն եմ, հինավուրց մեծանուն տոհմի ներկայացուցիչը, որն իր ամբողջ կյանքում բարձր պաշտոններ է գրավել: Ես Սան Անտոնիոյի ոստիկանապետն եմ, նահանգապետի մերձավորագույն բարեկամը, վստահելի անձը Պանամայի հանրապետության կառավարության: Օրենքը հենց ես եմ, որ կամ: Եվ ընդհանրապես մեր երկրում գոյություն ունի միայն մի օրենք և մի արդարություն՝ ամբողջ Պանամայի և Կորդիլերների համար նույնպես: Ես բողոքում եմ այն օրենքի դեմ, որ դուք հաստատել էք այստեղ լեռներում և անվանում եք Դաժան Արդարություն: Ես զինվորներ կոչարկեմ ձերբակալելու ձեր Կույր ավագակին ու կփակեմ Սան Խուանում, որպեսզի շամբաճուռակները քրքրեն նրան:

— Խորհուրդ կտայի, այնուամենայնիվ, չմոռանալ, որ դուք Սան Անտոնիոյում չեք, այլ Խուչիտանի խորքերում,— ծաղրանքով նախազգուշացրեց Թորեսը մոլեգնած ոստիկանապետին:— Եվ ոչ մի բանակ էլ չունեք այստեղ:

— Ահա այս երկուսը,— խստությամբ հարցրեց պարագլուխը,— վիրավորանք հասցրե՞լ են ձեզանից մեկնումեկին, որ հենց նոր Դաժան Արդարության էիք կոչում:

— Այո,— ասաց պեռնը:— Նրանք ծեծել են ինձ: Բոլորն էլ ծեծել են: Այ, սրանք էլ են ծեծել՝ առանց որևէ պատճառի: Ձեռքս ամբողջովին արյունոտված է, իսկ մարմինս ծածկված է չանգովածքներով ու արյան լճակներով: Ես նորից պաշտպանություն եմ խնդրում և այս երկուսին մեղադրում եմ անարդարության մեջ:

Պարագլուխը գլխով արավ ու ձեռքով հրամայեց իր մարդկանց՝ զինաթափել գերիներին ու ճամփա ընկնել:

— Արդարությո՛ւն... Ես էլ եմ պահանջում բոլորի համար հավասար արդարություն,— բացականչեց Յենրին:— Իսկ իմ ձեռքերը կապված են մեջքիս: Թող այդ դեպքում բոլորին էլ կապեն կամ մերն էլ արձակեն: Չէ որ ձեռքերը կապած մարդու համար քայլելը դժվար է:

Մի թույլ ժպիտ խաղաց պարագլխի շրթունքներին, և նա հրամայեց իր մարդկանց՝ կտրատել փոկերը, համոզիչ ապացույց, որ Յենրիի գանգատն արդարացի էր:

— Օ՛հ:— Ֆրենսիսը խորամանկորեն նայեց Լեոնսիային ու Յենրիին:— Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, ապա մոտ մեկ միլիոն տարի առաջ ես ապրում էի Նյու Յորք կոչեցյալ մի խուլ, պատլիկ քաղաքում, որտեղ միամտորեն մենք մեզ երևակայում էինք կատաղի թոկից փախածներ, որովհետև ամբողջ օրը գուժ էինք խաղում, կռվում Թամմանի-հոլլի /Թամմանի-հոլլ— դեմոկրատական կուսակցության կազմակերպությունը Նյու Յորքում/ դեմ, մի անգամ օգնեցինք ոստիկանության

տեսուչին էլեկտրական աթոռին նստեցնելու և խիզախորեն լրացուցիչ խաղաթուղթ էինք վերցնում, չորս շահաթուղթ ունենալով ձեռքներումս:

— Ա՛խ դու,— բացականչեց Յենրին կես ժամ հետո, երբ նրանք դուրս եկան մի լեռնանցք, որտեղից բացվում էր լեռնագագաթների տեսարանը:— Ա՛խ, գրողը տանի: Այս երկար պարեգոտով հրացանավոր տղաները բնավ էլ այնքան վայրենի չեն: Տե՛ս, տե՛ս, Ֆրենսիս: Այստեղ նրանք ազդանշանների ամբողջ մի սիստեմ ունեն: Տեսնո՞ւմ ես, ահա ծառը, իսկ հետո ա՛յ, այն մեծը, ձորի մյուս կողմում: Նայիր, թե նրանց ճյուղերն ինչպես են օրորվում:

Վերջին մի քանի մղոնը գերիներին տարան կապած աչքերով, ապա, արձակելով կապերը, ներս թողեցին քարայր, ուր թագավորում էր նա, ով մարմնավորում էր Դաժան Արդարությունը: Երբ կապերն արձակվեցին, նրանք տեսան, որ գտնվում են ընդարձակ ու բարձր մի քարայրում, որ լուսավորված էր բազմաթիվ ջահերով, իսկ դիմացը, ժայռի մեջ փորված գահին, բազմել էր կտավե պարեգոտ հագած մի կույր ծերունի. ծերունու ոտքերի մոտ նստել էր գեղեցիկ մետիսուհին՝ ուսը նրա ծնկին հենած:

Կույրը խոսեց. նրա ձայնը արծաթե զանգակի նման մաքուր էր ու զնգուն, իսկ խոսքը՝ տարիքով ու ծանր կենսափորձով իմաստնացած մարդու խոսք:

— Դուք աղերսում էիք Դաժան Արդարություն: Ես լսում եմ: Ո՞վ է անաչառ ու արդարացի որոշում պահանջում:

Բոլորը ակամայից ետ ընկրկեցին, և նույնիսկ ոստիկանապետը սիրտ չարեց բողբջելու Կորդիլերների օրենքների դեմ:

— Այստեղ ձեր մեջ կին կա,— շարունակեց Կույր ավագակը:— Առաջինը թող նա խոսի: Բոլոր մահկանացուները,— կին թե տղամարդ,— մեղավոր են որևէ բանում կամ գոնե շրջապատողների կողմից մեղավոր են համարվում:

Յենրին ու Ֆրենսիսը ուզում էին ետ պահել Լեոնսիային, բայց սա, նրանցից ամեն մեկին մի ժպիտ պարզելով, նայեց Արդար դատավորին և զնգուն ձայնով ասաց.

— Ես մեղավոր եմ միայն նրանում, որ օգնեցի փեսացուհիս՝ խուսափելու մահապատժից մի սպանության համար, որ նա չի կատարել:

— Ես լսեցի քեզ,— ասաց Կույր ավագակը:— Մոտեցիր ինձ:

Պարեգոտով մարդիկ Լեոնսիային տարան կույրի մոտ ու ստիպեցին ծունկի գալ նրա առաջ. երկու սիրահարված Մորզաններն էլ հուզմունքով հետևում էին աղջկա ամեն մի շարժմանը:

Մետիսուհին ծերունու ձեռքը դրեց Լեոնսիայի գլխին: «Մի թույլ հանդիսավոր լռություն տիրեց քարայրում. կույրի մատները հանգչում էին Լեոնսիայի ճակատին, շոշափելով քունքերի ու զարկերակների բաբախյունը: Ապա նա ձեռքը վերցրեց ու, ետ ընկնելով, սկսեց որոշումը որոճալ:

— Վեր կաց, սենյորիտա,— ասաց նա:— Չարություն չկա քո սրտում: Դու ազատ ես... Ուրիշ ո՞վ է Դաժան Արդարություն կոչում:

Ֆրենսիսն անմիջապես առաջ քայլեց.

— Ես նույնպես օգնեցի այս մարդուն ազատվելու մահապատժից, որ դատապարտված էր հանիրավի: Ես ու նա ազգականներ ենք, չնայած հեռավոր, և կրում ենք նույն ազգանունը:

Նա ևս ծունկի իջավ և զգաց, թե ինչպես փափուկ մատները զգուշությամբ սահեցին իր հոնքերի ու քունքերի վրայով, ապա շոշափեցին ձեռքն ու կանգ առան դաստակի մոտ, զարկերակի վրա:

— Այստեղ ինձ համար ամեն ինչ պարզ չէ,— ասաց ծերունին:— Չկա քո հոգում խաղաղություն ու հանգիստ: Ինչ-որ բան կրծում է քեզ:

Այդ թույլին հանկարծ պետքը առաջ նետվեց ու խոսեց, առանց թույլտվություն խնդրելու. նրա ձայնից պարեգոտ հագած մարդիկ նույնիսկ ցնցվեցին, ասես նա սրբապղծություն կատարեց:

— Օ՛, Արդարամիտ, ազատիր այս մարդուն,— աղաչեց պեռնը:— Այսօրվա ընթացքում ես երկու անգամ անձնատուր եղա թուլության ու սրան մատնեցի իր թշնամիներին, իսկ այսօրվա ընթացքում երկու անգամ պաշտպանեց ինձ ու փրկեց իմ թշնամիներից:

Եվ պեռնն արդեն ո՛րերորդ անգամ նորից փլվեց ծնկներին, բայց միայն առաջին անգամ՝ օրենքի արդար տնօրենի առաջ, և, սնահավատ սարսափից դողալով ու նվաղելով, զգաց այդ ամենաարտասովոր դատավորի մատների թեթև ու միաժամանակ վստահ հպումը: Այդ մատներն արագորեն զննեցին պեռնի մաշկի բոլոր սպիներն ու ճմլվածքները, անգամ ուսերին ու մեջքին եղածները:

— Այն մարդը նույնպես ազատ է,— ազդարարեց Արդար դատավորը:— Բայց և այնպես ինչ-որ բան տանջում ու պեկոծում է նրան: Այստեղ չկա՞ մեկը, որը գիտենար ու պատասխաներ մեզ, թե բանն ինչումն է:

Եվ Ֆրենսիսն անմիջապես հասկացավ, թե կույրն ինչ պեկոծություն էր գուշակել նրա հոգում. դա Լեոնսիայի հանդեպ տածած սերն էր, որն ուտում էր նրան ու սպառնում խախտել Յենրիի հանդեպ ունեցած անձնվիրությունը: Նույնքան շուտ կռահեց այդ բանը նաև Լեոնսիան, և եթե կույրը կարողանար որսալ փոխըմբռնմամբ լի այն հայացքը, որ երիտասարդները ակամա փոխանակեցին, ու նկատեր, թե երկուսով էլ ինչպիսի շփոթվածությամբ անմիջապես հայացքները փախցրին, ապա անսխալ կերպով կգուշակեր Ֆրենսիսի հուզմունքի պատճառը: Մինչդեռ մետիսուհին նկատեց դա, և սիրտը նրան հուշեց, որ այդտեղ խառն էր սիրո մատը: Այդ բանը չխուսափեց նաև Յենրիից, որը մռայլվեց անգիտակցաբար:

Այստեղ Արդարամիտը նորից խոսեց:

— Երևի դա սիրային պատմություն է,— ասաց նա:— Այն ցավը, որ կինը միշտ պատճառում է տղամարդուն: Բայց և այնպես ես ազատում եմ այս մարդուն: Մինևույն օրվա ընթացքում նա երկու անգամ օգնել է մի մարդու, որը երկու անգամ մատնել է նրան: Սրան տանջում է վիշտը, բայց և այնպես օգնել է այն մարդուն, որն անարդարացի կերպով դատապարտված էր մահվան: Մնում է փորձել նաև այդ մարդուն. բացի դրանից, պետք է լուծել, թե ինչպես վարվենք այս դաժանորեն ծեծված պեռնի հետ, որը կանգնած է իմ դեմ և որը սեփական փրկության համար այսօրվա ընթացքում երկու անգամ հանդես է բերել հոգու թուլություն, իսկ այժմ թոթափելով բոլոր երկյուղները, հանդես բերեց ուժ և արիություն:

Նա կռացավ ու սկսեց շոշափել պեռնի հոնքերն ու դեմքը:

— Դու մահից վախենո՞ւմ ես,— հանկարծ հարցրեց նա:

— Օ՛, մեծ ու սուրբ մարդ, շատ եմ վախենում,— պատասխանեց պեռնը:

— Այդ դեպքում ասա, որ այս մարդու մասին ստեցիր, ասա, որ իբր երկու անգամ քեզ օգնության ձեռք մեկնելը սուտ է, և դու կենդանի կմնաս:

Կույրի մատների տակ պեռնը ամբողջ մարմնով կուչ եկավ ու զլուխը խոնարհեց ցած:

— Ինչպես հարկն է մտածիր,— խստությամբ նախազգուշացրեց ծերունին:— Մահը սարսափելի է: Հավելտ անշարժանալ, դառնալ հողի կամ քարի պես՝ մի՞թե սարսափելի չէ: Ասա, որ ստեցիր, և դու կապրես: Դե, խոսիր:

Եվ չնայած պեռնի ձայնը մատնում էր նրա սարսափը, բայց նա իր մեջ ուժ գտավ վարվելու խիզախ ու մեծ հոգու տեր մարդու նման:

— Այսօրվա ընթացքում ես երկու անգամ մատնել եմ նրան, ով սուրբ մարդ: Բայց ես Պետրոսը չեմ, և երրորդ անգամ այդ մարդուն չեմ մատնի: Ես շատ եմ վախենում, բայց երրորդ անգամ մատնել չեմ կարող նրան:

Կույր դատավորը թեքվեց ետ: Նրա դեմքը կերպարանափոխվեց, ասես լուսավորվելով ներքին լույսով:

— Դու լա՛վ ասացիր,— խոսեց նա:— Զո հոգին իսկական մարդու հոգի է: Իսկ այժմ լսիր իմ դատավճիռը. այսօրվանից և մինչև քո կյանքի վերջը դու միշտ կմտածես իբրև մարդ ու կվարվես

իբրև մարդ: Ավելի լավ է ամեն բոլոր մեռնել իբրև մարդ, քան հավիտյան ապրել անասունի պես: Գիրք Ժողովուրդն անիրավացի էր: Մեռած առյուծը կենդանի շնից ավելի լավ է: Գնա, վերածնված զավակ իմ, դու ազատ ես:

Բայց երբ պետևր մետիսուհու նշանով ուզում էր ոտքի ելնել, հանկարծ դատավորը կանգնեցրեց նրան.

— Ասա ինձ, ով մարդ, որ միայն այսօր մարդ դարձար, ո՞րն էր քո բոլոր դժբախտությունների սկզբնապատճառը:

— Օ՛, արդարամիտ, իմ թույլ սիրտը ծարավի էր tierra caliente-ի խառնածին կնոջ սիրուն: Ես ինքս այս լեռների ծնունդ եմ: Այդ կնոջ համար ես ազարակատիրոջից երկու հարյուր պեսո պարտք առա: Նա վատ մարդ չէ, բայց դե էլի ազարակատեր է: Ես աշխատում էի, ծեծ ուտում և ամբողջ հինգ տարի տառապեցի, իսկ իմ պարտքն հիմա հասել է երկու հարյուր հիսուն պեսոյի. ես էլ ոչինչ չունեմ, միայն ողորմելի ցնցոտիներով ծածկված կաշի ու ոսկոր:

— Իսկ այն կինը շա՛տ լավն էր,— մեղմությամբ հարցրեց Կույր դատավորը:

— Ես նրա համար գժվում էի, ով սուրբ մարդ: Հիմա արդեն ինձ չի թվում, թե նա այնքան էլ լավն էր: Բայց այն ժամանակ նա ինձ շատ գեղեցիկ էր թվում: Նրա սերը տենդի նման այրում էր իմ ուղեղն ու սիրտը և ինձ դարձրեց ստրուկ: Իսկ նա հենց առաջին գիշերը փախավ իմ մոտից, և այդ օրվանից ես այլևս նրան չեմ տեսել:

Ծունկի իջած, գլուխը կախ, պետնն սպասում էր, իսկ Կույր ավագակը, ի զարմանս բոլորի, խոր հառաչեց և, ասես, ամեն ինչ մոռացավ աշխարհում: Նրա ձեռքն ականա իջավ մետիսուհու գլխին ու շոյում էր աղջկա սև, փայլուն մազերը:

— Կինը...— խոսեց նա այնքան կամաց, որ նրա՝ զանգակի պես հստակ ու զնգուն ձայնը այժմ շշուկից բարձր չէր:— Միշտ կինը, գեղեցիկ կինը: Բոլոր կանայք գեղեցիկ են... տղամարդու համար: Նրանք սիրել են մեր հայրերին, մեզ աշխարհի բերել: Մենք սիրում ենք նրանց. նրանք աշխարհ են բերում մեր որդիներին, որպեսզի սրանք սիրեն նրանց դուստրերին ու ջքնաղ անվանեն նրանց. այդպես է եղել միշտ և միշտ էլ այդպես կլինի, քանի աշխարհում գոյություն ունի մարդը և մարդկային սերը:

Քարայրում խորին լռություն տիրեց, իսկ Դաժան դատավորը խորասուզվեց իր մտքերի մեջ: Վերջապես գեղեցիկ մետիսուհին քնքշությամբ ձեռք տվեց նրան ու ստիպեց հիշել պետնին, որը դեռևս չորած էր նրա առաջ:

— Ահա իմ դատավճիռը,— ասաց Կույրը:— Դու քիչ հարվածներ չես ստացել: Քո մարմնին իջած ամեն մի հարվածն արդեն իսկ բավարար փոխհատուցում է ազարակատիրոջ պարտքի դիմաց: Դու ազատ ես: Գնա: Բայց մնա լեռներում և մյուս անգամ սիրիր լեռնցի կնոջ, քանի որ դու պետք է կին սիրես և քանի որ առանց կնոջ ընդհանրապես անհնար է տղամարդու կյանքը: Գնա՛, ազատ ես: Դու հո կհսով չափ մայա՞ ես:

— Այո, կհսով չափ մայա եմ,— փնթփնթաց պետնը:— Իմ հայրը մայա է:

— Վեր կաց ու գնա: Եվ քո մայա հոր հետ մնա լեռներում: Tierra caliente-ն Կորդիլերներում ծնված մարդու տեղ չէ: Իսկ քո ազարակատերն էլ այստեղ չէ, ուստի մենք չենք կարող նրան դատել: Ազարակատերն ազարակատեր է: Նրա բարեկամները կարող են իրենց ազատ համարել:

Դաժան դատավորն սպասում էր ինչ-որ բանի, սպասում էր նաև Հենրիին, ապա առանց հրավերի քայլեց առաջ:

— Ես այն մարդն եմ,— քաջաբար ասաց նա,— որը սպանության համար դատապարտված էր մահվան, բայց ես սպանություն չեմ կատարել: Սպանվածն իմ սիրած աղջկա հարազատ հորեղբայրն է, և ես կամուսնանամ այդ աղջկա հետ, եթե այստեղ, Կորդիլերներում, այս քարայրում իրոք թագավորում է արդարությունը:

Բայց ոստիկանապետն ընդհատեց նրան.

— Քսան մարդ վկա են եղել, թե նա ինչպես է սպառնացել սպանել այս սենյորայի հորեղբորը: Իսկ մի ժամ հետո մենք այս գրինգոյին գտանք դեռևս տաք դիակի մոտ:

— Նա ճիշտ է ասում,— հաստատեց Յենրին:— Ես իսկապես սպառնացի այդ մարդուն. գինին ու տաք արյունը, երկուսիս էլ գլուխն էր թռել: Եվ իսկապես ժանդարմներն ինձ գտան, երբ ես կանգնած էի դեռևս տաք դիակի մոտ: Բայց նրան ես չեմ սպանել: Եվ չգիտեմ, պատկերացնել չեմ կարող, թե ո՞ւմ վախկոտ ձեռքն է մթութայան քողի տակ դանակը նրա թիկունքը խրել:

— Երկուսով էլ ծունկի իջեք, որպեսզի կարողանամ հարցաքննել ձեզ,— հրամայեց Կույր ավագակը:

Երկար ժամանակ նա իր զգայուն, քննախույզ մատներով հարցաքննություն էր վարում: Երկար ժամանակ դրանք սահում էին երկու տղամարդկանց դեմքերի վրայով. Կույրը շոշափեց նաև զարկերակները, բայց և այնպես չկարողացավ հանգել որևէ եզրակացության:

— Այդ գործի մեջ կի՞ն է խառնված,— շեշտակի հարցրեց նա Յենրի Մորգանին:

— Այո՛, չքնաղ մի կին: Ես սիրում եմ նրան:

— Այդ լավ է, որ սերն այդպես ուժեղ է դիպել քո սրտին, քանզի տղամարդը, որին կնոջ սերը չի խոցել, միայն կիսով չափ է տղամարդ,— ներողամտորեն նկատեց Կույր դատավորը: Եվ, դիմելով ոստիկանապետին, ավելացրեց.— Ահա քո սիրտը կին չի վիրավորել, սակայն քեզ էլ ինչ-որ բան տանջում է: Ինչ վերաբերում է այս մարդուն,— նա ցույց տվեց Յենրիին,— ապա չեմ կարծում, թե միայն կնոջ սերն է վիրավորել նրա սիրտը: Թերևս մասամբ դու ես մեղավոր դրանում, մասամբ էլ այն չարությունը, որը սրան դրդում է գործել քո դեմ: Երկուսով էլ վեր կացեք: Ես չեմ կարող դատել ձեզ: Բայց կա այնպիսի մի փորձություն, որն անսխալ պատասխան է տալիս. դա Օձի և Թռչունի փորձությունն է: Դա նույնքան անսխալ է, որքան անսխալ է ինքն աստված, քանզի նա այդ եղանակով է ճշմարտությունը վերականգնում: Ահա Բլեքստոնն էլ է ասում, որ աստծու դատաստանով փորձելը օգնում է վերականգնել ճշմարտությունը:

ԳԼՈՒԽ ՏԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Կույր ավագակի տիրապետության կենտրոնում տասը ֆուտ խորությամբ և երեսուն ֆուտ տրամագծով մի փոսորակ կար, որը լիովին կարող էր ծառայել իբրև ցլամարտի փոքրիկ մրցասպարեզ: Հարթ հատակով և ուղղաձիգ պատերով այդ փոսորակը առաջացել էր բնական ճանապարհով և բնության այնպիսի մի կատարյալ ստեղծագործություն էր, որ համարյա մարդկային ձեռքի միջամտության հարկ չէր եղել՝ այդ կատարելությունը մինչև վերջ հասցնելու համար: Կտավե երկար պարեգոտներ հագած ավագակները, ագարակատերերն ու ժանդարմները բոլորն էլ այդտեղ էին, բացի դաժան դատավորից ու մետիսուհուց. բոլորն էլ կանգնել էին փոսորակի եզրին, ասես ցլամարտի կամ գլադիատորների գոտեմարտի հանդիսատեսներ լինեին:

Նրանց գերի վերցնող խիստ պարագլխի նշանով Յենրին և ոստիկանապետը փոքրիկ սանդուղքով իջան փոսորակի մեջ: Նրանց հետևեցին ջոկատի խիստ պարագլուխը և մի քանի ավագակներ:

— Միայն աստծուն է հայտնի, թե հիմա ինչ է կատարվելու,— ծիծաղելով ասաց Յենրին անգլերեն, դիմելով վերևում մնացած Լեոնսիային ու Ֆրենսիսին:— Բայց եթե դա կենաց և մահու կռիվ է լինելու, եթե թույլ կտան ոտք տալ, խածել ու բռունցքի հարվածներ տալ մարքիզ Զվինսբերրիի կամ լոնդոնյան մրցամարտերի կանոններով, միստր հաստափոր շեֆն անպայման իմ որսը կդառնա: Ասենք, ծերուկը խելոք է, նա կհոգա, որպեսզի այս մենամարտում շանսերը հավասար լինեն: Այսպես, ուրեմն. եթե շեֆը հաղթի ինձ, վեր բարձրացրեք բոլթ մատներդ ու կոկորդով մեկ բղավեցեք: Կարող եք չկասկածել՝ եթե ես նրան հաղթեմ, նրա ամբողջ ավագակախումբը մատները վեր կցցի:

Ոստիկանապետը, որի վրա փոսորակը վիատեցուցիչ տպավորություն թողեց, իսպաներեն դիմեց ջոկատի պարագլխին:

— Ես այս մարդու հետ չեմ կռվի,— հայտարարեց Մարիանո Վերջարա-ի-իքոսը:— Նա ինձանից ջահել է, և շնչառությունն էլ ավելի լավ է իմինից: Բացի դրանից, այս ամենը անիրավացի է:

Պանամայի հանրապետության օրենքով այդպես չեն դատում: Իսկ ես Կորդիլերների արտերկրայինությունը և նման ապօրինի գործողությունները չեմ ընդունում:

— Սա Օձի և Թռչունի փորձությունն է,— ընդհատեց նրան պարագլուխը:— Դու կլինես Օձը: Ահա այս հրացանը կտան քո ձեռքը: Այդ մարդը կլինի Թռչունը: Նրա ձեռքը մի զանգակ կտան: Տես: Հիմա կհասկանաս, թե ինչու ես փորձությունը:

Նրա կարգադրությամբ ավազակներից մեկին հրացան տվին ու աչքերը կապեցին: Մյուս ավազակին, որի աչքերը չկապեցին, տվին մի արծաթե զանգակ:

— Հրացանավոր մարդը Օձն է,— ասաց հրամանատարը:— Նա իրավունք ունի մի անգամ կրակել Թռչունի՝ զանգակավոր մարդու վրա:

Տրված ազդանշանով երկրորդ ավազակը պարզեց այն ձեռքը, որ զանգակն էր, զանգահարեց ու արագ ցատկեց մի կողմ: Առաջինը ականջ դրեց դողանջին և, ենթադրաբար նշան բռնելով, ցույց տվեց, թե կրակում է:

— Պա՛րզ է,— հարցրեց ջոկատի պարագլուխը Հենրիին ու նրա ախոյանին:

Հենրիին ի պատասխան գլխով արեց միայն, իսկ ոստիկանապետը, բավականությունից շնչասպառ լինելով, բացականչեց.

— Ուրեմն, Օձը ե՛ս եմ լինելու:

— Այո,— հաստատեց պարագլուխը:

Ոստիկանապետն աշխուժորեն խլեց հրացանը, այլևս չբողոքելով Կորդիլերների արտերկրայինության և այդպիսի դատի ապօրինության դեմ:

— Ուրեմն ինչ, կփորձեք պառկեցնե՛լ ինձ,— սպառնալից ձայնով հարցրեց Հենրիին:

— Չէ, սենյոր Մորգան: Չեմ փորձի, այլ պարզապես կպառկեցնեմ: Պանամայում ընդամենը երկու լավ հրաձիգ կա, և դրանցից մեկը ես եմ: Ավելի քան քառասուն մեղալ ունեմ հրաձգության համար: Ես կարող եմ կրակել փակ աչքերով: Կարող եմ կրակել մթության մեջ: Հաճախ եմ կրակել մթության մեջ և կրակել եմ անվրեպ: Այնպես, որ կարող եք ձեզ հանգուցյալ համարել:

Պահուկանակի մեջ մի փամփուշտ դրին, որից հետո կապեցին ոստիկանապետի աչքերը, հրացանը հանձնեցին ու պատվիրեցին առայժմ կանգնել դեմքը պատին դարձրած: Մատնիչ զանգակը տվին Հենրիի ձեռքն ու կանգնեցրին հակադիր պատի տակ: Ապա ավազակները դուրս եկան փոսից, սանդուղքը քաշեցին վերև, և պարագլուխն արդեն այնտեղից ասաց.

— Սենյոր Օձ, ուշադիր լսեք ինձ ու չշարժվեք, մինչև ես չվերջացնեմ: Օձը մի կրակոց ունի: Նա իրավունք չունի աչքերի կապը շարժելու: Եթե շարժի, մենք պարտավոր ենք անմիջապես սպանել նրան: Դրա փոխարեն Օձի ժամանակը չի սահմանափակված: Նա կարող է սպասել օրվա ամբողջ մնացորդը ու ամբողջ գիշերը և ընդհանրապես այնքան, որքան ուզում է, նախքան իր միակ գնդակն արձակելը: Ինչ վերաբերում է Թռչունին, ապա նա պետք է հաստատ հիշի մի կանոն՝ ոչ մի թույլ ձեռքից բաց չթողնել զանգակը ու ոչ մի դեպքում ձեռք չտալ լեզվակին՝ խանգարելով նրան դողանջել: Եթե Թռչունն այս կանոնը չկատարի, անմիջապես կսպանվի: Ախր մենք կանգնած ենք վերևում, ձեր գլխին, հրացանները ձեռքներին, այնպես որ ձեզանից նա, ով կարգը կխախտի, նույն վայրկյանին կմեռնի: Իսկ հիմա գործի անցեք, և թող աստված պահպանի արդարին:

Ոստիկանապետը դանդաղ շուռ եկավ ու ականջ դրեց: Հենրիին անվստահորեն քայլեց մի կողմի վրա, և զանգակը զնգզնգաց: Նույն վայրկյանին հրացանը վեր բարձրացավ և ուղղվեց նրա վրա: Հենրիին փոսի մեջ դետուղեն ընկավ՝ հրացանի փողը հետևում էր նրան: Հենրիին զանգակն արագ նետեց մի պարզած ձեռքից մյուսը, իսկ ինքը նետվեց մի կողմի վրա, և փողը անողորձաբար նետվեց նրա հետևից: Սակայն ոստիկանապետը շատ էր խորամանկ, որպեսզի պատահական ռիսկի համար վտանգի ենթարկեր ամեն ինչ, ուստի սկսեց դանդաղորեն, զգույշ կտրել անցնել փոսորակը: Հենրիին քարացավ տեղում, և զանգակը լռեց:

Ոստիկանապետի զգայուն ականջը այնպիսի անսխալկանությամբ որոշեց այն տեղը, որտեղից վերջին անգամ լսվեց արծաթե զնգոցը, որ, չնայած կապած աչքերին, նա քայլեց ուղիղ դեպի

Յենրին ու հայտնվեց նրա կողքին, հենց այն պարզած ձեռքի տակ, որի մեջ գանգակն էր: Մեծագույն զգուշութամբ, աշխատելով ամենաչնչին ձայն իսկ չհանել, Յենրին ձեռքը բարձրացրեց, և հակառակորդն անցավ նրա ձեռքի տակից, գանգակից ընդամենը մի ոյույմ հեռավորութան վրա:

Յրացանը նշան բռնած, ոստիկանապետը անվճռականորեն կանգ առավ պատից մի ֆուտ հեռու, իզուր ականջ դրեց մի րոպե, ապա մի քայլ էլ արեց, հրացանի փողը կացնելով պատին: Վայրկենապես շուռ գալով, նա սկսեց կույրի պես հրացանի փողով շոշափել օդը, աշխատելով գտնել հակառակորդին: Եվ փողն անպայման կոխաչեց Յենրիին, եթե փութկոտութամբ մի կողմ չցատկեր ու չսկսեր վազել ոլոր-մոլոր՝ գանգակն անընդհատ զնգզնագցնելով:

Փոսորակի մեջտեղում Յենրին կանգնեց ու անշարժացավ: Թշնամին անցավ նրա մոտից ընդամենը մի յարդ հեռավորութամբ ու դեմ առավ դիմացի պատին: Այն ժամանակ նա քայլեց պատի երկայնքով, ոտքերը փոխելով կատվի զգուշութամբ ու շարունակ օդը շոշափելով հրացանի փողով: Ապա որոշեց կտրել անցնել փոսը: Կտրեց անցավ մի քանի անգամ, բայց այնպես էլ Յենրիին չգտավ. գանգակը լռում էր: Եվ այստեղ ոստիկանապետը դիմեց հույժ խորամանկ մի միջոցի: Գլխարկը ցած նետելով, որպեսզի սա իբրև ելման կետ ծառայի նրա համար, ոստիկանապետը ամենակարճ լարով կտրեց փոսը, պատի երկայնքով երեք քայլ արեց ու շարժվեց ետ՝ մյուս, ավելի երկար լարով. ևս երեք քայլ արեց պատի երկարութամբ, մինչև գլխարկը մնացող տարածության օգնութամբ, ստուգեց երկու լարերի զուգահեռականությունը, ապա, սկսած գլխարկից էլի երեք քայլ հաշվեց պատի երկայնքով և սկսեց փոսորակը հատել երրորդ լարով:

Նայելով, թե նա ինչպես է սանրում մարտադաշտը, Յենրին հասկացավ, որ իր բանը բուրդ է և որ չի կարող խույս տալ հակառակորդի հետ հանդիպելուց: Նա չսպասեց, մինչև որ թշնամին կհայտնաբերի իրեն: Չանգակը զնգզնագցնելով ու նետելով մի ձեռքից մյուսը, նա սկսեց հանգույցներ գծել փոսորակում, ապա հանկարծ անշարժացավ, բայց արդեն ուրիշ տեղում:

Ոստիկանապետը վերսկսեց հակառակորդի իր բազմաշխատ որոնումները, բայց Յենրին հակված չէր ձգձգելու իր լարվածութամբ այնքան տանջալից այդ խաղը: Նա սպասեց, մինչև որ վերջին լարը նրան և ոստիկանապետին բերեց դեմ առ դեմ: Սպասեց այնքան, որ հրացանի փողը բարձրացավ մինչև իր կուրծքը, սրտից մի քանի ոյույմի վրա, և այնժամ, արագ պագելով, որպեսզի հրացանը մնա վերևում, որոտալից ձայնով բղավեց.

— Կրակ:

Դա այնքան անակնկալ էր, որ ոստիկանապետն ականայից հրահանն իջեցրեց, և գնդակը սուլոցով անցավ Յենրիի գլխավերևից: Վերևից լսվեց ծափերի որոտ. ծափահարում էին կտավե պարեգոտով մարդիկ: Ոստիկանապետը աչքերի կապը պոկեց և իր առաջ տեսավ հակառակորդի ժպտացող դեմքը:

— Յիանալի է, աստված իր խոսքն ասաց,— իջնելով փոսը, հայտարարեց ավագակների պարագլուխը:— Նա, որին գնդակը չդիպավ, անմեղ է: Մտում է փորձել մյուսին:

— Ի՞նձ,— ոչ իր ձայնով ոռնաց ոստիկանապետը՝ անսպասելիությունից ու վախից ցնցված:

— Շնորհավորում եմ, շեֆ,— ծաղրանքով ասաց Յենրին:— Դուք իսկապես ուզում էիք պառկեցնել ինձ: Այժմ իմ հերթն է: Տվեք հրացանը:

Բայց ոստիկանապետը, անհաջողությունից ու զայրույթից կուրացած, մոռանալով, որ հրացանը լցված էր միայն մեկ փամփուշտով, փողը դեմ տվեց ուղղակի Յենրիի կրծքին ու կրակեց: Յրահանը չրիսկաց մետաղային սուր ձայնով:

— Յիանալի է,— ասաց պարագլուխը, հրացանը վերցնելով նրա ձեռքից ու նորից լցնելով:— Զո վարմունքի մասին ես կզեկուցեմ: Փորձությունը շարունակվում է. միայն թե այժմ իսկույն երևում է, որ դու աստծու ընտրյալը չես:

Ինչպես վիրավոր ցուլն է թաքստոց փնտրում մրցասպարեզում և հուսահատորեն աչքերը հածում դաժան դեմքերով լի ամֆիթատրոնում, այդպես էլ ոստիկանապետը նայեց վերև ու տեսավ լոկ ավագակների հրացանները, Լեոնսիայի ու Ֆրենսիսի հաղթական դեմքերը, իր ժանդարմների

հետաքրքրվող կերպարանքներն ու ագարակատերերի արյունով ցլված աչքերը, ինչպիսի աչքեր որ ունենում են ցլամարտը դիտող հանդիսատեսները:

Պարագլխի խստորեն սեղմված շրթունքներին մի թեթև ժպիտ երևաց, երբ հրացանը հանձնելով Յենրիին, սկսեց նրա աչքերը կապել:

— Ինչո՞ւ չեք հրամայում նրան դեմքով դառնալ դեպի պատը, մինչև որ ես կպատրաստվեմ,— հարցրեց ոստիկանապետը, և արծաթե գանգակը դողանջեց զայրույթից դողացող նրա ձեռքում:

— Որովհետև սա աստվածահաճ մարդ է,— եղավ պատասխանը:— Սա փորձությունը դիմացավ: Ուրեմն, ընդունակ չէ ուխտադրուժ արարքի: Յիմա դու կենթարկվես աստծու դատաստանին: Եթե ճշմարտացի ու արդար մարդ ես, Օձը քեզ ոչ մի վնաս չի պատճառի: Այդպես է աստծու նախախնամությունը:

Ոստիկանապետը որսորդի դերում շատ ավելի ճարպիկ էր, քան՝ որսի: Կանգնելով Յենրիի առաջ, նա փորձեց տեղից չշարժվել, բայց երբ հրացանի փողն սկսեց մոտենալ նրան, ջղերը չդիմացան, ձեռքը ցնցվեց, և գանգակը դողանջեց: Հրացանը համարյա անշարժացավ. միայն փողն էր չարագուշակորեն տատանվում, որսալով ձայնի ուղղությունը: Ոստիկանապետն իզուր էր ջանում հանգստացնել ձեռքի դողը: Որպեսզի գանգակը չզնգար. գանգակը շարունակում էր զնգալ: Այն ժամանակ շեֆը հուսահատությունից մի կողմ շարտեց գանգակը, իսկ ինքը բերանքսիվայր փռվեց գետնին: Բայց Յենրիին, լսելով վայր ընկնող մարմնի թմփոցը, իջեցրեց հրացանն ու կրակեց: Ոստիկանապետը ցավից ոռնաց՝ գնդակը ծակել էր նրա ուսը. նա ուզում էր ոտքի ելնել, բայց իսկույն էլ, անեծքներ տեղալով, նորից փռվեց գետնին և մնաց այդպես պառկած, շարունակելով անեծքներ թափել:

Բոլորը նորից հայտնվեցին քարայրում, որտեղ Կույր ավազակը, որի ոտքերի մոտ նստած էր մետիսուհին, դատը կտրեց:

— Այդ մարդը, որը վիրավորված է և որը չափազանց շատ էր շաղակրատում tierra caliente-ի օրենքի մասին, այժմ կիմանա, թե ինչ ասել է Կորդիլերների օրենք: Օձի և Թռչունի փորձությունը ապացուցեց, որ նա մեղավոր է: Նրա կյանքի համար փրկավճար է սահմանվում տասը հազար դոլար ոսկով. եթե դրամը չմուծվի, նա կմնա այստեղ ծառ կտրելու և ջուր կրելու մինչև իր կյանքի վերջը, որ տերը պարզել է նրան երկրի վրա: Ես ամեն ինչ ասացի: Գիտեմ, որ եթե փրկագինը չմուծվի, տերը թույլ չի տա նրան երկար շնչելու այս աշխարհում:

Հաջորդեց երկարատև լռություն, որի ժամանակ նույնիսկ Յենրիին, որ կարող էր մարտի թեժ պահին, առանց երկար մտածելու, հակառակորդին ցած փռել, ողջ իր տեսքով ցույց տվեց, որ նողկալի է մարդուն ոչնչացնելու այդպիսի սառնասիրտ որոշումը:

— Օրենքն անխնա է,— հայտարարեց Դաժան դատավորը, և նորից լռություն տիրեց:

— Թող սատկի առանց փրկագնի,— ասաց ագարակատերերից մեկը:— Նա ապացուցեց, որ շուն է ու դավաճան: Ծանր շան մահ:

— Իսկ դո՞ւ ինչ կասես,— խստությամբ հարցրեց պեռնին Կույր ավազակը:— Ի՞նչ կասես դու, պեռն, որ այնքան ծեծ ես կերել, որ վերածնվել ես այսօր, խառնածին, գեղեցիկ կանանց սիրահար: Արդյոք նա պե՞տք է մեռնի շան մահով, որովհետև չեն ուզում փրկագին վճարել նրա համար:

— Նա դաժան մարդ է,— խոսեց պեռնը:— Բայց չգիտեմ ինչու այսօր իմ սիրտը փափուկ է շատ: Եթե ես տասը հազար դոլար ունենայի, ինքս կվճարեի նրա փրկագինը: Իսկ եթե, ով սուրբ ու արդար մարդ, ես ունենայի երկու հարյուր հիսուն պետ, նույնիսկ իմ պարտքը կվերադարձնեի ագարակատիրոջը, որից ինձ նոր ազատեցիք:

Կույրի դեմքը կերպարանափոխվեց, ասես լուսավորվելով ներքին լույսով:

— Այսօր քո շուրթերով աստված է խոսում, օ՛, վերածնված մարդ,— հավանությամբ ասաց նա:

— Բայց այդ րոպեին, շտապ ինչ-որ բան խզբզելով իր չեքերի գրքուկում, Ֆրենսիսը մետիսուհուն մեկնեց չեքը, որի վրա թանաքը դեռևս չէր չորացել:

— Թույլ տվեք ինձ ևս մի խոսք ասել,— խոսեց նա:— Չնայած այս մարդը սրիկա է ու արժանի շան մահի, բայց կարիք չկա, որ նա մեռնի. թող ապրի:

Մետիսուհին բարձրաձայն կարդաց չեքի վրա գրածը:

— Մի՛ աշխատիր բացատրել,— ընդհատեց Ֆրենսիսին Կույր ավագակը, գուշակելով, որ նա ուզում է ինչ-որ բան ասել:— Ես այնքան էլ հիմար չեմ և միշտ չեմ, որ ապրել եմ Կորդիլերներում: Ես առևտրական կրթություն եմ ստացել Բարսելոնում: Գիտեմ Նյու Յորքի «Զեմիկլ Նեյշնլ» բանկը. իր ժամանակին ես իմ ներկայացուցիչների միջոցով գործեր եմ վարել նրա հետ: Դա տասը հազար դոլարի չեք է: Այն մարդը, որ դուրս է գրել սա, այսօր արդեն ասել է ճշմարտությունը: Չեքը միանգամայն կարգին վիճակում է: Ավելին. ես համոզված եմ, որ նա բանկին չի տեղեկացնի, որպեսզի ինձ այս չեքով չվճարեն: Նա, ով իր թշնամու համար փրկագին է վճարում, կամ պետք է շատ բարի լինի, կամ շատ հիմար, կամ էլ շատ հարուստ՝ երեքից մեկը: Ասա ինձ, ով մարդ, այստեղ խառը չե՞ գեղեցիկ կնոջ մատը:

Եվ Ֆրենսիսը, չհամարձակվելով նայել ոչ դեպի աջ, ոչ դեպի ձախ,— ո՛չ Լեոնսիային, ո՛չ Յենրիին,— այլ նայելով ուղիղ Կույր ավագակի դեմքին, պատասխանեց, քանզի այլ կերպ չէր կարող պատասխանել.

— Այո, ով Դաժան դատավոր, այստեղ խառն է գեղեցիկ կնոջ մատը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Նույն այն տեղում, ուր դեպի լեռները տանող ճամփի վրա կտավե պարեգոտով մարդիկ գերիների աչքերը կապեցին, հեծելախումբը կանգ առավ: Խումբը բաղկացած էր մի քանի ավագակներից, որոնք ուղեկցում էին ջորիներ նստած, աչքերը կապած Լեոնսիային, Յենրիին ու Ֆրենսիսին, և պեռնին՝ Նույնպես աչքերը կապած, բայց հետիոտն: Կես ժամ դրանից առաջ Նույնպիսի պահակախմբի ուղեկցությամբ այստեղից անցավ մի այլ հեծելախումբ՝ բաղկացած ազարակատերերից, Թորենից, ոստիկանապետից և նրա ժանդարմներից:

Խիստ պարագլխի թույլտվությամբ գերիները, որոնց այժմ պետք է ազատեին, հանեցին աչքների կապը:

— Կարծես թե ես արդեն եղել եմ այստեղ,— ծիծաղելով նկատեց Յենրիին, որն իսկույն ճանաչեց նախկինում տեսած վայրերը:

— Կարծես նավթը դեռևս շարունակում է վառվել,— ասաց Ֆրենսիսը, ցույց տալով կիսով չափ սև ծխի վարագույրով ծածկված հորիզոնը:— Պեռն, նայիր քո արարքին: Ոչ մի գրոշ չունեցող աղքատների մեջ դու մեծագույն վատնիչն ես, որին ես երբևէ հանդիպել եմ: Ասում են, թե նավթի արքաները, լավ խմելով, հազար դոլարանոց բանկնոտներով սիգարներ են ծխում, իսկ ահա դու յուրաքանչյուր թոպեում այրում ես միլիոն դոլար:

— Ես աղքատ չեմ,— խորհրդավոր եղանակով, հպարտությամբ ասաց պեռնը:

— Ծպտոյալ միլիոնատե՛ր,— կատակեց Յենրիին:

— Որտե՞ղ ես պահում քո կապիտալները,— միջամտեց Լեոնսիան:— «Զեմիկլ Նեյշնլ» բանկո՞ւմ:

Պեռնը սրամտությունները չհասկացավ, բայց գլխի ընկնելով, որ ծիծաղում են իր վրա, նեղացած ուղղվեց ու լռեց:

Այդ ժամանակ խոսեց ավագակների խիստ պարագլուխը.

— Այստեղից ամեն մեկը կարող է իր ճամփով գնալ: Այդպես հրամայեց Արդարամիտը: Սենյորներ, խնդրում եմ ցած իջնել և ջորիները վերադարձնել ինձ: Ինչ վերաբերում է սենյորիտային, ապա նա կարող է ջորին պահել իբրև նվեր Արդարամիտից, որը երբեք իրեն թույլ չէր տա ստիպել, որ կինը ոտքով գնա: Իսկ ձեր երկուսի համար, սենյորներ, քայլելը վնասակար չէ: Արդարամիտը հատկապես հարուստ սենյորին հանձնարարեց ավելի շատ քայլել: Հարստությունը հասցնում է այն բանին, ասաց նա, որ մարդ համարյա բոլորովին չի քայլում: Իսկ երբ մարդ համարյա չի

քայլում, ճարպակալում է, իսկ ճարպակալումը չի նպաստում գեղեցիկ կանանց մոտ հաջողություն ունենալուն: Այսպիսին են Արդարամիտի իմաստուն խոսքերը:

Բացի դրանից, նա պեռնիս ստիպողական խորհուրդ է տալիս մնալ լեռներում: Այստեղ նա գեղեցիկ կին կգտնի, և քանի որ պետք է սիրի, ապա ամենախոհեմն այն կլինի, որ սիրի իր ցեղի կնոջ: Tierra caliente-ի կանայք սահմանված են tierra caliente-ի տղամարդկանց համար: Իսկ Կորդիլերների կանայք սահմանված են Կորդիլերների տղամարդկանց համար: Աստված խառնարյունություն չի սիրում: Իզուր չէ, որ ջորին արևի տակ եղած ամենազգվելի կենդանին է: Աշխարհն ստեղծվել է ո՛չ նրա համար, որ ցեղերն իրար խառնվեն, այդ բոլորը մարդու հնարած բաներն են: Որքան էլ ցեղերը մաքուր լինեն, կդադարեն մաքուր լինելուց, հենց որ նրանց իրար խառնեն: Ջուրը և նավթը չեն կարող միատարր խառնուրդ տալ: Բնությունն իր օրենքներն ունի: Այդպես ասաց Արդարամիտը, և ես միայն կրկնում եմ նրա խոսքերը: Նա պատվիրեց ավելացնել, որ գիտե, թե ինչ է ասում, որովհետև իր ժամանակին ինքն էլ է մեղավոր եղել:

Այդ խոսքերից հուզմունքն ու շփոթությունը պաշարեցին անգլոսաքս Յենրիին ու Ֆրենսիսին, և նրանցից ոչ պակաս՝ Լեոնսիային, Լատինական Ամերիկայի զավակին: Անշուշտ, Լեոնսիան սիրած երիտասարդներից յուրաքանչյուրին իր հայացքով կասեր, որ նա չի ուզում դրա հետ հաշվի նստել, եթե մյուսը ներկա չլիներ. ասենք, նրանք էլ բարձրաձայն կբողոքեին, եթե մենակ մնային Լեոնսիայի հետ: Բայց և այնպես, հոգու խորքում յուրաքանչյուրն ականա գիտակցում էր, որ Կույր ավազակն իրավացի է: Եվ դրանից ինչ-որ բան ծանրացավ նրանց սրտերին:

Թփուտներից հասնող ճռճոցն ու ճթճթոցը շեղեցին նրանց այդ մտքերից. կիրճի թեք կողով, նստած ցած սահող ու սայթաքող ձիերին, ուղիղ նրանց մոտ էին իջնում հիվանդությունից ապաքինված ագարակատերը և մի քանի ձիավորներ: Իբրև իսկական հիդալգո՝ նա խոր գլուխ տվեց Սոլանոյի դստերը, ապա ոչ պակաս քաղաքավարությամբ, չնայած և փոքր-ինչ չոր, ողջունեց Յենրիին և Ֆրենսիսին, հիշելով, որ այնուամենայնիվ նրանց հովանավորում է Էնրիկո Սոլանոն:

— Իսկ ո՞ր է ձեր ազնիվ հայրը,— հարցրեց նա Լեոնսիային:— Ես հաճելի լուրեր եմ բերել նրա համար: Վերջին անգամ ձեզ տեսնելուց հետո,— իսկ դա մեկ շաբաթ առաջ էր,— ես մի քանի օր պառկեցի, տենդի նոպայով գամված անկողնուն: Բայց սուրհանդակներ ուղարկեցի Բոկաս-դել-Թորո, ուղեկից քամու շնորհիվ նրանք արագորեն լողացել անցել էին Զիրիկվի ծովալճակը և, տեղ հասնելուն պես, կառավարական ռադիոյով,— Բոկաս-դել-Թորոյի ոստիկանապետն իմ մեծ բարեկամն է,— կապվել են Պանամայի պրեզիդենտի հետ: Պրեզիդենտը նույնպես իմ վաղեմի բարեկամն է,— քանի՜-քանի անգամներ եմ ես նրա քիթը խրել ցեխի մեջ, իսկ նա՝ իմ, երբ մենք սովորում էինք Կոլոնի դպրոցում և ապրում միևնույն սենյակում: Եվ ահա նրանից պատասխան եկավ, որ ամեն ինչ կարգին է. արդարադատությունը մոլորության մեջ է ընկել Սան Անտոնիոյի ոստիկանապետի չափազանց մեծ, բայց և այնպես գովելի ջանքերի շնորհիվ: Այժմ ամեն ինչ մոռացված է ու ներված, և Սոլանոների ազնիվ ընտանիքը իրենց ազնիվ բարեկամ ամերիկացիների հետ կարող է օրինական հիմունքով, առանց վախենալու քաղաքական հետապնդումներից, վերադառնալ տուն...

Ի հաստատումն իր ճառի, ագարակատերը գլուխ տվեց Յենրիին և Ֆրենսիսին: Բայց այդ րոպեին հանկարծ նրա հայացքն ընկավ Լեոնսիայի թիկունքում թաքնված պեռնի վրա, և ագարակատիրոջ աչքերը վառվեցին հաղթական կրակով:

— Օ՛, աստվածամայր, դու ինձ չես մոռացել,— ջերմությամբ բացականչեց նա և, շուռ գալով դեպի իրեն ուղեկցող բարեկամները, ավելացրեց.— Ահա նա, այն անամոթ, բթամիտ անասունը, որը փախել էր իմ մոտից, առանց պարտքը վճարելու: Բռնեցեք նրան: Ես նրան այնպիսի թակոց տամ, որ մի ամբողջ ամիս տեղից վեր չկենա:

Ագարակատերը սանձը ձգեց և մի ցատկով հայտնվեց Լեոնսիայի ջորու հետևում, բայց պեռնը նույնպիսի արագությամբ մտավ կենդանու դնչի տակ և անպայման կհասցներ փախչել ջունգլիները, եթե մյուս ագարակատերը, ձիուն խթանելով, չկտրեր նրա ճամփան ու ցած չտապալեր: Այդպիսի գործին սովոր ագարակատերերը մի ակնթարթում թշվառին վեր թռցրին գետնից, ձեռքերը ոլորեցին մեջքին և նույն թուկի ծայրն էլ փաթաթեցին վզի շուրջ:

Ֆրենսիսը և Յենրին միաձայն բողոքեցին:

— Մենյորներ,— պատասխանեց ագարակատերը,— իմ հարգանքը ձեր նկատմամբ, ձեզ ծառայելու և օգտակար լինելու ցանկությունս նույնքան խորն են, որքան և իմ զգացմունքները Սուլանների ազնիվ ընտանիքի հանդեպ, որի հովանավորության տակ եք գտնվում դուք: Ձեր բարեկեցությունն ու հանգստությունը ինձ համար սրբազան են: Ես պատրաստ եմ կրծքով պաշտպանել ձեզ ամեն մի փորձանքից: Հրամայեցեք, ես լսում եմ ձեզ: Իմ հասիենդան ձեր տրամադրության տակ է, ինչպես և այն ամենը, ինչ ունեմ: Բայց ինչ վերաբերում է պեոնին, ապա դա բոլորովին այլ բան է: Նա ձերը չէ: Նա իմ պեոնն է, իմ պարտապանը, որը փախել է իմ ագարակից: Համոզված եմ, որ դուք կհասկանաք ու կներեք ինձ: Սա սեփականության հարց է: Իսկ նա իմ սեփականությունն է:

Հենրին և Ֆրենսիսը շփոթված ու տարակուսանքով նայեցին իրար: Այդպիսին է երկրի օրենքը, նրանք այդ բանը հիանալի գիտեին:

— Արդարամիտ դատավորն իմ պարտքը բաշխեց, այստեղ բոլորը վկա են,— հագիվ լսելի թոթովեց պեոնը:

— Ճիշտ է, Արդարամիտ դատավորը բաշխեց նրա պարտքը,— հաստատեց Լեոնսիան:

Ագարակատերը ծաղրանքով խոր գլուխ տվեց:

— Բայց պեոնը ինձ հետ է պայմանագիր կնքել,— նույն ծաղրանքով նկատեց նա:— Եվ ո՞վ է այդ կույր ավազակը, որ իր հիմար օրենքները հաստատի իմ ագարակում և ինձ զրկի երկու հարյուր հիսուն պետյից, որ օրենքով ինձ է պատկանում:

— Ճիշտ է, Լեոնսիա,— հաստատեց Հենրին:

— Այդ դեպքում ես կվերադառնամ Կորդիլերներ,— ասաց պեոնը:— Օ՛, Արդարամիտ դատավորի ռազմիկներ, ինձ է ձեզ հետ տարեք Կորդիլերներ:

Բայց խիստ պարագլուխը չհամաձայնեց:

— Մենք այստեղ բաց թողինք քեզ: Դրանով վերջացան մեր լիազորությունները: Քո նկատմամբ մենք այլևս ոչ մի իրավունք չունենք: Մեզ մնում է միայն հրաժեշտ տալ բոլորին ու հեռանալ:

— Սպասեցեք,— բացականչեց Ֆրենսիսը, հանելով իր չեքերի գրքույկը և սկսելով ինչ-որ բան գրել:— Մի բոլոր սպասեցեք: Ես հիմա այս պեոնի պարտքը կվճարեմ: Բայց ձեր գնալուց առաջ ուզում եմ մի բան խնդրել ձեզանից:— Եվ նա չեքը ագարակատիրոջը հանձնեց այս խոսքերով:— Տասը պետս ավելացրել եմ վայրուտայի փոխանակման համար:

Ագարակատերը նայեց չեքը, դրեց գրպանը և Ֆրենսիսին հանձնեց այն թոկի ծայրը, որը փաթաթված էր թշվառի վզին:

— Այժմ պեոնը ձերն է,— ասաց նա:

Ֆրենսիսը նայեց թոկին ու քրքջաց:

— Տեսեք, ես դարձա ստրկատեր: Ստոր՛կ, դու իմն ես, իմ սեփականությունը, հասկանալի՞ է:

— Այո, սենյոր,— նվաստորեն քրթմնջաց պեոնը:— Ինչպես երևում է, երբ ես գլուխս կորցրի այն կնոջ սիրուց ու նրա համար զոհաբերեցի իմ ազատությունը, աստված որոշեց, որ այդ օրվանից ողջ կյանքումս որևէ մեկի սեփականությունը լինեմ: Արդարացի դատավորն իրավացի է: Աստված ինձ պատժեց նրա համար, որ ես հրապուրվեցի ուրիշ ցեղի կնոջով:

— Դու ստրուկ դարձար նրա պատճառով, ով աշխարհում միշտ էլ համարվել է ամենագեղեցիկը՝ կնոջ պատճառով,— նկատեց Ֆրենսիսը, կտրատելով պեոնի ձեռքերի թոկերը:— Իսկ այժմ ես քեզ ընծայում եմ քեզ:— Այդ խոսքերով նա պեոնին հանձնեց այն թոկի ծայրը, որը փաթաթված էր նրա վզին:— Այսուհետև դու ես քո տերը: Եվ հիշիր՝ երբեք ու ոչ ոքի մի հանձնիր այս թոկը:

Մինչդեռ այս բոլորը տեղի կունենար, հանկարծ ինչ-որ տեղից անաղմուկ լույս ընկավ բարձրահասակ, նիհար մի ծերուկ: Նրա մազադաթի նման չոր մաշկի տակից խստորեն որոշվում էին կողոսկրերը: Դա մայա ցեղի գտարյուն հնդիկ էր: Նա բոլորովին մերկ էր, եթե կոնքակապը չհաշվենք: Չսանրած մազերը գորշ կեղտագույն խոպոպներով թափվել էին այտոսկրոտ, մուկիայի

դեմքի պես սմբած դեմքին: Մկանները ողորմելի պարկերի նման կախ էին ընկել ձեռքերին ու ոտքերին: Ներս ընկած բերանից դուրս էին ցցվել մի քանի ջարդված ատամներ, այտերը փոս էին ընկել, իսկ սև հուլունքների նման ակնակապիճներում թաղված աչքերը վառվում էին վայրի կրակով, ինչպես տենդով տառապող մարդու աչքեր:

Նա օձաձկան պես սողաց անցավ խռնված մարդկանց միջով և իր ոսկրոտ ձեռքերով գրկեց պեռնին:

— Սա իմ հայրն է,— հպարտորեն հայտարարեց պեռնը:— Նայեցեք նրան: Նա գտարյուն մայա է և գիտե այդ ցեղի բոլոր գաղտնիքները:

Մինչդեռ իրար գտած հայր ու որդի աշխուժորեն նորոգություններ կփոխանակեին, Ֆրենսիսը դիմեց ավազակների պարագլխին, խնդրելով գտնել Էնրիկո Սոլանոյին ու նրա երկու որդիներին, որոնք թափառում էին լեռներում, և հայտնել, որ օրենքն այլևս չի հետապնդում նրանց, և որ կարող են վերադառնալ տուն:

— Նրանք ոչ մի վատ բան չէ՞ն կատարել,— հարցրեց պարագլուխը:

— Ոչ մի,— հավաստացրեց Ֆրենսիսը:

— Լավ: Խոստանում եմ անմիջապես գտնել նրանց, որովհետև մեզ հայտնի է, թե նրանք որ ուղղությամբ են գնացել, ու ձեր հետևից ուղարկել ծովափ:

— Իսկ առայժմ համեցեք ինձ մոտ,— սրտաբացորեն հրավիրեց ազարակատերը:— Իմ ազարակի մոտ, Խուչիտանի ծոցում, խարիսխ է նետել մի բեռնատար շիուևա, որը շուտով պետք է մեկնի Սան Անտոնիո: Ես կարող եմ նավը պահել, մինչև որ ազնիվ Էնրիկոն ու իր որդիները Կորդիլերներից իջնեն:

— Դե, իսկ Ֆրենսիսն, անշուշտ, կվճարի պարապուրդի համար,— խայթեց Յենրին, որը չխուսափեց Լեոնսիայի աչքից, բայց աննկատ մնաց Ֆրենսիսի համար:

— Իհարկե, կվճարեմ,— ուրախ-ուրախ բացականչեց նա:— Եվս մի ապացույց հօգուտ այն բանի, որ չեքի գրքույկն ամենուրեք կարող է պետք գալ:

Երբ բոլորը հրաժեշտ տվին ավազակներին, պեռնն ու իր հայրը, ի մեծ զարմանս շրջապատողների, հետևեցին Մորգաններին և բոլորի հետ մեկտեղ այրվող նավթադաշտերի միջով իջան ազարակ, այն վայրը, ուր այնքան տարիներ ստրկության մեջ պեռնը տառապել էր: Ե՛վ հայրը, և՛ որդին ամեն կերպ իրենց նվիրվածությունն էին ցույց տալիս Ֆրենսիսին, այլև Լեոնսիային ու Յենրիին: Այդ ժամանակամիջոցում նրանք շատ անգամներ էին ինչ-որ բանի մասին երկար ու աշխույժ զրուցել: Երբ Էնրիկոն ու իր որդիները վերադարձան ազարակ, և բոլորը շարժվեցին դեպի ծովափ, ուր շիուևան նրանց էր սպասում, պեռնն ու իր հայրը գնացին նրանց հետևից: Ֆրենսիսն ուզում էր հրաժեշտ տալ հնդիկներին, բայց պեռնն ասաց, որ իրենք էլ են մեկնելու շիուևայով:

— Արդեն ասել եմ ձեզ, որ ես աղքատ չեմ,— բացատրեց պեռնը, մի կողմ տանելով Մորգաններին և Սոլանոների ընտանիքին, որպեսզի նավաստիներն իրեն չսեսն:— Եվ դա ճշմարիտ է: Ինձ հայտնի է, թե որտեղ է թաքցրած մայա ցեղի գանձը, որը չկարողացան գտնել ո՛չ կոնկիստադորները, ո՛չ էլ ինկվիզիցիայի կուսակրոնները:

Ես նրա պահապանն եմ: Ավելի ճիշտ, ոչ թե ես, այլ իմ հայրը: Նա մայա ցեղի գերագույն քուրմի ուղղակի սերունդն է: Այդ ցեղի վերջին քուրմը: Ես ու հայրս շատ խոսեցինք ու որոշեցինք, որ կյանքում ամենազլխավորը հարստությունը չէ: Դուք երկու հարյուր հիսուն պետյով գնեցիք ինձ, բայց ազատություն պարգևեցիք, ինձ հանձնեցիք ինձ: Դուք կյանք պարգևեցիք մարդուն, և հիմա ես եմ իմ տերը: Այդպես եմ մտածում ես, իմ հայրը նույնպես: Եվ ահա, քանի որ գրինգոներն ու իսպանացիք ստեղծված են այնպես, որ նրանց համար ամենազլխավորը հարստությունն է, ապա մենք՝ ես ու իմ հայրը, ձեզ կտանենք մայա ցեղի գանձերի մոտ. ախր իմ հայրը ճանապարհը գիտի: Դետք է լեռները բարձրանալ Սան Անտոնիոյից և ոչ թե Խուչիտանից:

— Իսկապե՞ս քո հայրը գիտե, թե գանձը որտեղ է գտնվում: Ճի՞շտ գիտե,— հարցրեց Յենրին ու կամացուկ փսփսաց Ֆրենսիսին, որ հենց այդ գանձն ստիպեց նրան դադարեցնել Մորգանի պահուստի որոնումները Յորթի կղզում և տեղափոխվել մայրցամաք:

Պեոնը գլուխը տարուբերեց:

— Իմ հայրը երբեք այնտեղ չի եղել, նրա ինչի՞ն էր պետք. նրան հարստություն պետք չէ: Յայրիկ, ցույց տուր հապա, թե ինչ է գրած մեր հին լեզվով, որը բոլոր կենդանի մայաներից միայն դու ես կարողանում կարդալ:

Ծերունին իր կոնքակապի տակից դուրս քաշեց մի կեղտոտ, մաշված, պարուսինե պարկ, որի միջից հանեց ամբողջովին հանգույցների մեջ խճճված թուղթի կծիկի նման ինչ-որ բան: Բայց դրանք իսկական թուղթ չէին, այլ ծառի կեղևի ինչ-որ հյուսեր, այնքան հին, որ թվում էր, թե ահա ուր որ է լույս կհայտնվի կփոշիանան: Եվ իսկապես, երբ ծերունին ձեռք տվեց դրանց, մատների տակից սկսեցին կեղևի մասնիկներ թափվել: Մայաների հինավուրց լեզվով քթի տակ աղոթքներ մրմնջալով, հնդիկը կծիկը բարձրացրեց վերև ու երկյուղածությամբ գլուխ տվեց, ապա սկսեց արձակել:

— Յանգուցագիր,— հնում այդպես էին գրում մայաները,— կամացուկ ասաց Յենրին:— Այժմ ոչ ոք այդ լեզուն չգիտե: Դրան կարելի է հավատալ, եթե միայն ծերուկը կարդալը չի մոռացել:

Կծիկը հանձնվեց Ֆրենսիսին, և բոլորը հետաքրքրությամբ խոնարհվեցին նրա վրա: Դա նման էր բազմաթիվ թուղթից անշնորհք կերպով կապած վրձնի, թուղթի, որոնք ծածկված էին մեծ ու փոքր հանգույցներով: Թուղթը նույնպես միատեսակ չէին. որը հաստ էր, որը բարակ, որը երկար էր, որը կարճ: Ծերունին մատներն արագ սահեցրեց դրանց վրայով, ինչ-որ անհասկանալի բան քրթմնջալով քթի տակ:

— Նա կարդո՞ւմ է,— հաղթականորեն բացականչեց պեոնը:— Յանգույցները մեր հին լեզուն են, և նա դրանցով կարդում է, ոնց որ գիրք կարդա:

Ֆրենսիսը և Լեոնսիան, ցած խոնարհվելով, որպեսզի ավելի լավ տեսնեն, պատահաբար մազերով քսվեցին իրար. երկուսն էլ ցնցվեցին ու ետ քաշվեցին արագ, բայց այդ պահին հայացքները հանդիպեցին իրար, և նորից էլեկտրական հոսանք անցավ նրանց միջով: Յենրին, որ ամբողջովին կլանված էր հնդիկի պատմածով, ոչինչ չնկատեց նա նայում էր միայն խորհրդավոր կծիկին:

— Ի՞նչ կասես, Ֆրենսիս,— շշուկով հարցրեց նա:— Ախր սա հոյակապ է, հոյակապ:

— Նյու Յորքում արդեն սպասում են ինձ:— Ֆրենսիսը որոշակիորեն տատանվում էր:— Չէ՛, ոչ թե ինչ-որ մարդիկ կամ զվարճություններ, այլ գործերը,— շտապ ավելացրեց նա, զգալով Լեոնսիայի լուռ հանդիմանանքն ու վիշտը:— Մի՛ մոռանաք, որ ես կապված եմ «Տեմպիկո պեթրոլեումի» և բորսային շուկայի հետ. նույնիսկ սարսափում եմ մտածել, թե քանի՞-քանի միլիոններ եմ ներդրել այդ գործերում:

— Թո՛ւ, գրողը տանի,— բացականչեց Յենրին:— Ախր եթե մայաների գանձը նույնիսկ տասն անգամ ավելի պակաս է, քան այդ մասին պատմում են, ապա, միևնույն է, յուրաքանչյուրիս փայլը,— քո, իմ և Էնրիկոյի,—ավելի մեծ կլինի, քան քո այժմվա ողջ հարստությունը:

Ֆրենսիսը դեռևս տատանվում էր: Էնրիկոն սկսեց նրան երկար-բարակ համոզել, որ մայաների գանձն իրոք գոյություն ունի, իսկ Լեոնսիան, հարմար բոպե որսալով, շնջաց նրա ականջին.

— Մի՞թե ձեզ այդպես շուտ ձանձրացրեց... գանձ որոնելը:

Ֆրենսիսը զննող հայացքով նայեց նրան, ապա հայացքը փոխադրեց աղջկա մատին շողացող նշանածի նվերին ու նույնպես շշուկով պատասխանեց.

— Մի՞թե կարող եմ այստեղ մնալ, եթե ես սիրում եմ ձեզ, իսկ դուք սիրում եք Յենրիին:

Նա առաջին անգամ բացահայտ խոստովանեց իր սերը, և Լեոնսիան զգաց, որ հոգում խնդրություն բռնկվեց, որը, սակայն, անմիջապես փոխվեց ամոթի. ինչպե՞ս կարող է իրեն առաքինի համարել, եթե, ինչպես պարզվում է, կարող է միաժամանակ սիրել երկու հոգու: Նա նայեց Յենրիին, ասես կամենալով ստուգել այդ, և սիրտը պատասխանեց՝ «այո»: Նա սիրում էր Յենրիին նույնչափ

անկեղծորեն, որքան Ֆրենսիսին, և նրան միատեսակ դուր էին գալիս այն գծերը, որոնք միատեսակ էին նրանց մոտ, ու տարբեր ձևով էին հուզում նրանք, որոնք տարբեր էին:

— Վախենում եմ ստիպված լինեմ նստել «Անջեյիկա»,— ավելի շուտ Բոկաս-դել-Թորո,— ու մեկնել,— մինչ այդ ասաց Ֆրենսիսը նրա նշանածին:— Իսկ դու և Էնրիկոն մեկնեցեք գանձի հետևից և, եթե գտնեք, կիսեցեք:

Լսելով այդ, պեոնն շտապ խոսեց հոր հետ իրենց լեզվով, ապա դիմեց Յենրիին:

— Լսո՞ւմ ես, թե ինչ է ասում, Ֆրենսիս,— ասաց Յենրին, ցույց տալով սրբազան վրձինը:— Ստիպված կլինես գալ մեզ հետ: Ախր ծերուկը հատկապես քեզ է ուզում երախտահատույց լինել որդու ազատման համար: Եվ նա գանձը հանձնում է ոչ թե մեզ, այլ քեզ: Եթե դու չգաս, նա ոչ մի հանգույց չի կարողա մեզ համար:

Բայց, այնուամենայնիվ, Լեոնսիան դրդեց Ֆրենսիսին՝ որոշումը փոխելու. նա լուռ, տխրությամբ նայեց նրան ու ասեւ աղաչում էր հայացքով. «Դե, խնդրում եմ, ինձ համար»:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՆԵՔԵՐՈՐԴ

Մի շաբաթ հետո, միևնույն օրը Սան Անտոնիոյից երեք տարբեր արշավախմբեր դուրս եկան դեպի Կորդիլերներ: Առաջին խմբում էին Յենրին, Ֆրենսիսը, պեոնը ու սրա գառամյալ հայրը և Սոլանոների ազարակի մի քանի պեոններ: Ամեն մի պեոն սանձից բռնած տանում էր սննդամթերքով ու հանդերձանքով բեռնված մի ջորի: Ծերուկի Էնրիկո Սոլանոն հարկադրված էր վերջին պահին մեկնելուց հրաժարվել անակնկալ բացված վերջի պատճառով, որը նա ստացել էր վաղուց, ջահել օրերին, բազում հեղափոխություններից մեկին մասնակցելիս:

Արշավախումբն անցավ Սան Անտոնիոյի գլխավոր փողոցով, բանտի կողքով, որի պարիսպը Ֆրենսիսը պայթեցրեց, և որը միայն վերջերս էին սկսել շարել բանտարկյալներն իրենք: Ճանապարհին նրանց հանդիպեց Թորեսը, որն անշտապ գնում էր փողոցով. նա հենց նոր էր ստացել Ռիգանի հերթական հեռագիրը և, տեսնելով ամբողջ խմբի գլուխն անցած երկու Մորգաններին, զարմանքով աչքերը չռեց նրանց վրա:

— Այդ ո՞ր էք գնում, սեյորներ,— բղավեց Թորեսը:

Մի ակնթարթում, ասեւ նախապես պայմանավորված ու փորձած լինելով, Ֆրենսիսը մատնացույց արեց երկինքը, Յենրին՝ ուղղակի գետինը, պեոնը՝ դեպի աջ, իսկ նրա հայրը՝ դեպի ձախ: Այդ անքաղաքավարությունը կատաղեցրեց Թորեսին, և նա կոպիտ հայիոյանքների մի տարափ տեղաց: Բայց դա լուր ընդհանուր ծիծաղ առաջացրեց. ծիծաղում էին մինչև իսկ ջորի քոջ պեոնները:

Թորեսին սպասում էր ևս մի անակնկալ: Քիչ ավելի ուշ, երբ ճաշից հետո ամբողջ քաղաքը քնած էր, նա նկատեց ջորիներ հեծած Լեոնսիային և նրա կրտսեր եղբորը՝ Ռիկարդոյին. նրանց հետևից սանձափոկով կապված քայլում էր երրորդ ջորին, հայտնապես բարձված ճամբարային հանդերձանքով:

Երրորդ արշավախումբը Թորեսինն էր, որի անձնակազմը, ոչ ավելի, ոչ պակաս, նույնքան էր, որքան Լեոնսիայի արշավախմբինը, քանզի ընդամենը բաղկացած էր հենց Թորեսից և ոմն խոսեւ Մանչենոյից՝ այդ կողմերում հայտնի մի մարդասպանից, որին Թորեսն ինչ-որ նկատառումներով ազատել էր ահավոր մահից Սան Խուանում: Սակայն երբ Թորեսը ձեռնարկեց այդ արշավախումբը, շատ ավելի ընդարձակ ծրագրեր ուներ, քան կարող էր թվալ: Յենց համարյա Կորդիլերների ստորոտում ապրում էր կարունների տարօրինակ ցեղը: Այդ ցեղի նախահայրերն էին Աֆրիկայից փախած ստրուկ նեգրերն ու Մոծակի Ափի կարաիբ-ստրուկները, որոնք հաստատվել էին այստեղ և ամուսնացել հովտից առևանգած կամ իրենց նման փախստական ստրուկների կանանց հետ: Իր տեսակի մեջ այդ միակ գաղութը, որը հաստատվել էր հնդիկներով բնակեցված Վերին Կորդիլերների և հովտում ընկած Պանամական պետության միջև, կարողացել էր համարյա լիակատար անկախություն պահպանել: Ավելի ուշ, երբ այդ գաղութը լցվեցին փախած իսպանացի աքսորականները, տեղի ունեցավ ցեղերի ու տոհմերի արդեն վերջնական խառնում, և կարունների ամբողջ ժողովրդի մասին այնպիսի վատ համբավ տարածվեց, որ եթե այն ժամանակվա

կառավարությունը մինչև կոկորդն զբաղված չլինել ամեն տեսակ քաղաքական խարդավանքներով, անպայման զորք կուղարկեր՝ ոչնչացնելու այդ ախտի բույնը: Ահա հենց այդ ախտաբանում էլ պրոֆեսիոնալ մարդասպան իսպանացի հորից և նույն արհեստով զբաղվող մետիսուևի մորից ծնվել էր Խոսե Մանչենոն: Եվ հենց այդտեղ էլ ահա Խոսե Մանչենոն առաջնորդում էր Ալվարես Թորեսին, որպեսզի վերջինս կարողանար կատարել Թոմաս Ռիգանի ուղղ-սթրիտյան գրասենյակից ստացվող հրամանը:

— Այ թե բախտներս բերեց, որ հանդիպեցինք սրան,— նկատեց Ֆրենսիսը, Յենրիին մատնացույց անելով մայա ցեղի վերջին քուրմին, որը գնում էր նրանց առջևից:

— Այո, միայն թե շատ է զառամյալ,— ասաց Յենրին:— Յապա մի նայիր նրան:

Առջևից գնացող ծերունին շարունակ ջոկջոկում էր սրբազան փնջիկը և ինչ-որ մրմնջում քթի տակ:

— Յուսանք, որ ծերունկը փշուր-փշուր չի անի այն,— ի սրտե կամեցավ Յենրին:— Թվում է, թե կարելի էր ցուցումները մի անգամ կարդալ ու հիշել, և ոչ թե անվերջ քաշքշել:

Նրանք թփուտներից դուրս եկան մի բացատ. ամենայն հավանականությամբ ինչ-որ մեկն այստեղ կտրել էր ծառերը և ստիպել ջունգլիներին նահանջելու: Այդտեղից երևում էր Բլանկո Ռովալո հեռավոր լեռը, որը գծագրվում էր արևով ողողված երկնքի ֆոնին: Ծեր հնդիկը կանգնեցրեց իր ջորին, մատը սահեցրեց սրբազան փնջի մի քանի թելերի վրայով և, լեռը ցույց տալով, կտորատված իսպաներենով բացատրեց.

— Այստեղ ասված է. «Սպասիր այնտեղ, ուր աստծո Ոտնահետքն է, մինչև որ բռնկվեն Չիայի աչքերը»:

Եվ նա ցույց տվեց թելերից մեկի վրայի հանգույցները, որոնցով կարդաց:

— Բայց որտե՞ղ է այդ հետքը, ծերունկ,— հարցրեց Յենրին, գննելով չտրորված խոտերը:

Առանց խոսելու ծերունին քշեց իր ջորին և, կողերին հասցված մերկ կրունկների հարվածներով շտապեցնելով նրան, վարձով կտրեց բացատն ու մտավ ջունգլիները:

— Բերծեի նման գնում է հետքերով,— նկատեց Ֆրենսիսը,— և, ինչպես երևում է, թարմ հետքերով:

Այդպես նրանք անցան մի կես մղոն. ջունգլիները վերջացան, և հեծյալների առաջ փռվեցին լեռների խիտ խոտերով ծածկված թեք լանջերը: Այստեղ ծերունին իր ջորին քշեց քառատրոփ և ընթացքը չդանդաղեցրեց, մինչև հասան մոտ երեք ֆուտ խորությամբ բնական մի խոռոչի, որն իր ձևով զարմանալիորեն նման էր վիթխարի ոտնահետքի: Այդտեղ հանգիստ կերպով տասներկու մարդ կտեղավորվեց:

— Աստծո Ոտնահետքը,— հանդիսավորությամբ հայտարարեց ծեր քուրմը, իջավ ջորուց և աղոթելով փռվեց գետնին:— «Սպասիր այնտեղ, ուր աստծո Ոտնահետքն է, մինչև որ բռնկվեն Չիայի աչքերը»,— այսպես են ասում սրբազան հանգույցները:

— Նախաճաշի հիանալի տեղ է,— ասաց Յենրին:— Վատ չէր լինի ամեն տեսակ հրաշքների սպասելուց առաջ ամրապնդվել:

— Եթե Չիան չի առարկում,— ծիծաղեց Ֆրենսիսը:

Եվ Չիան չառարկեց,— համենայն դեպս ծեր քուրմն իր հանգույցներում ոչ մի առարկություն չկարողացավ գտնել:

Ջորիներին ոտնակցեցին անտառեզրին, ջուր բերին մոտակա առվակից և Ոտնահետքի մեջտեղում խարույկ վառեցին: Թվում է, թե ծեր մայան ոչինչ չէր տեսնում ու չէր լսում. նա մի գլուխ իր անվերջանալի աղոթքներն էր մրմնջում, նորից ջոկջոկելով փնջի թելերը:

— Միայն թե չցնորվի,— ասաց Ֆրենսիսը:

— Դեռևս Խուչիտանում ինձ թվում էր, թե նա մի տեսակ վայրի հայացք ունի,— խոստովանեց Յենրին:— Իսկ հիմա տես ինչ աչքեր են:

Բայց այստեղ մեջ ընկավ պեռնը, որը, չնայած անգլերեն ոչ մի բառ չգիտեր, սակայն զգաց, թե խոսքն ինչի մասին է:

— Մայաների հին սրբությունների գաղտնիքների մեջ թափանցելը խիստ մեղք է ու վտանգավոր: Դա մահվան ճանապարհն է: Ով-ով, իսկ իմ հայրն այդ գիտե: Այստեղ շատ մարդիկ են մեռել: Եվ մեռել են անակնկալ ու սարսափելի մահով: Դրանց մեջ եղել են նաև մայա ցեղի քուրմեր: Այդպես է մեռել իմ հոր հայրը: Նա էլ է tierra caliente-ի կին սիրել: Նրա սիրո համար ոսկով վաճառել է մայաների գաղտնիքը՝ հանգույցներով կարդացել է, թե գանձը որտեղ է թաքցրած, և tierra caliente-ի մարդկանց առաջնորդել այնտեղ: Նա մեռել է: Նրանք բոլորն էլ մեռել են: Հիմա, երբ իմ հայրը ծերացել է, այլևս չի սիրում tierra caliente-ի կանանց: Իսկ ջախել ժամանակ շատ է սիրել նրանց և նույնիսկ մեղք է գործել: Նա գիտե, թե որքան վտանգավոր է գանձի մոտ տանել ձեռք: Մի քանի դար է անցել այն օրից, ինչ մայաները թաքցրել են այն և այդ ժամանակամիջոցում շատ մարդիկ են փորձել գտնել այդ գանձը: Թաքստարան հասած մարդկանցից ոչ ոք չի վերադարձել: Ասում են, թե կոնկիստադորներն ու անգլիացի Մորգանի ծովահենները այնուամենայնիվ հասել են, բայց իրենց ոսկորները թողել են այնտեղ:

— Իսկ երբ քո հայրը մեռնի, դու կհաջորդես նրան և նույնպե՞ս կդառնաս մայաների գլխավոր քուրմը,— հարցրեց Ֆրենսիսը:

— Ոչ, սեկյոր:— Եվ պեռնը գլուխը շարժեց բացասաբար:— Ախր ես կիսով չափ եմ մայա: Հանգույցներով կարդալ չգիտեմ: Հայրս ինձ կարդալ չի սովորեցրել, որովհետև ես գտարյուն մայա չեմ:

— Իսկ եթե նա հիմա մեռնի, մայաների մեջ կա՞ մեկը, որ կարողանա կարդալ հանգույցներով:

— Ո՛չ, սեկյոր: Իմ հայրը վերջին մարդն է, որ գիտե այդ հին լեզուն:

Խոսակցությունը ընդհատվեց Լեոնսիայի և Ռիկարդոյի հայտնվելով, որոնք, բխովելով իրենց ջորիներին, բաց թողին նրանց արածելու մյուսների հետ, իսկ իրենք մոտեցան ու ամաչկոտ հայացքները հառեցին գետնին: Լեոնսիային տեսնելով՝ Յենրին ու Ֆրենսիսը ուրախությունից փայլեցին, բայց դիմավորեցին նրան հանդիմանություններով և նախատեցին ինչպես հարկն է, պահանջելով, որ նա Ռիկարդոյի հետ տուն վերադառնա:

— Բայց դուք հո ինձ սոված-ծարավ ետ չե՞ք ուղարկի,— բացականչեց նա և չսպասելով պատասխանի, ցած սահեց նրանց մոտ, մտադրվելով զուտ կանացի խորամանկությամբ խոսակցությունը շարունակել ավելի մեծ մտերմության տրամադրող պայմաններում:

Նրանց բարձրաձայն խոսակցությունը ծեր քուրմին հանեց աղոթքների մեջ թաղված ինքնամոռացումից, և նա վրդովմունքով նայեց Լեոնսիային, ոչ պակաս վրդովմունքով հարձակվելով նրա վրա, մայաների լեզվով արտասանած իր զայրացկոտ ճառին իսպաներեն բառեր ու նախադասություններ խառնելով:

— Նա ասում է՝ կինը չարիք է,— թարգմանեց որդին, հենց որ քուրմը մի րոպե լռեց:— Նա ասում է՝ կանանց պատճառով տղամարդիկ գժտվում են, գործի դնում դանակներն ու սպանում են իրար: Որտեղ կանայք, այնտեղ աղետներ ու աստծու բարկություն: Նրանք շեղվում են աստծու ճամփից ու մարդուն տանում դեպի կործանում: Նա ասում է՝ կինը աստծու և տղամարդու հավերժական թշնամին է: Կինը միշտ կանգնած է տղամարդու և աստծու միջև: Նա ասում է՝ կինը մշտապես խլացնում է աստծու ոտնաձայները և տղամարդուն խանգարում մոտենալու նրան: Նա ասում է, որ այդ կինը պետք է հեռանա այստեղից:

Ներքնապես ծիծաղից խեղդվելով, Ֆրենսիսը միայն սուլում էր ի նշան հավանության, իսկ Յենրին ասաց.

— Խելացի եղեք, Լեոնսիա: Լսո՞ւմ եք, թե ինչ են ասում հնդիկները գեղեցիկ սեռի մասին: Ուրեմն, այստեղ ձեր տեղը չէ: Ձեր տեղը Կալիֆորնիայում է: Այնտեղ կանայք ձայնի իրավունք ունեն:

— Ամբողջ դժբախտությունն այն է, որ ծերուկը դեռևս չի մոռացել այն կնոջը, որը ջահելության օրերին այնքան վիշտ է պատճառել իրեն,— ասաց Ֆրենսիսը և, դառնալով դեպի պեռնը, ավելացրեց,— ինդրիի հորդ հանգույցներով կարողա՛լ արդյոք ասվա՛ծ է այնտեղ, թե կնոջը չի թույլատրվում ոտք դնել աստծու Ոտնահետքերին:

Իզուր էր զառամյալ քուրմը ջոկջկում սրբազան հանգույցները: Նա այնտեղ արշավախմբին կնոջ մասնակցության դեմ չնչին առարկություն իսկ չգտավ:

— Նրա գլխում խառնվել է ամեն ինչ՝ ավանդություններն ու սեփական կյանքի դեպքերը,— հաղթականորեն ժպտաց Ֆրենսիսը:— Այնպես որ, Լեոնսիա, ինձ թվում է, թե ամեն ինչ համարյա կարգին է, և դուք կարող եք մնալ ու մի բան ուտել մեզ հետ: Սուրճն արդեն պատրաստ է: Իսկ հետո...

Բայց ինչ որ կատարվելու էր հետո, կատարվեց այժմ: Նոր էին նստել գետնին և ուտել սկսել, որ գնդակը Ֆրենսիսի գլխից թռցրեց շյապան, երբ սա բարձրացրեց յուղաբլիթը Լեոնսիային տալու:

— Օհո՛ր,— ասաց նա, արագ նստելով:— Այ քեզ անակնկալ: Հապա, Հենրի, մի նայիր, թե ո՞վ էր ուզում սպանել ինձ:

Հաջորդ րոպեին, ծեր հնդիկից բացի, բոլորն զգուշությամբ մոտեցան խոռոչի եզրին ու նայեցին դուրս: Եվ ահա թե ինչ տեսան. բոլոր կողմերից դեպի իջվածքն էին սողում աննկարագրելի շորեր հազած ինչ-որ մարդիկ. դեմքերից ու մաշկի գույնից դատելով՝ նրանք չէին պատկանում որևէ որոշակի ցեղի, այլ բոլոր ցեղերի խառնուրդ էին: Ըստ երևույթին, մարդկային ողջ ընտանիքն էր մասնակցել նրանց դիմագծերի կերտմանն ու մաշկի գունավորմանը:

— Այ թե արարածներ են, հա՛: Կյանքումս սրանց նման մարդիկ չեմ տեսել,— բացականչեց Ֆրենսիսը:

— Կարո՞ւնե՞ր են,— հազիվ կարողացավ խոսել պեռնը, իր ողջ տեսքով ցույց տալով, որ ահաբեկված է:

— Իսկ դրանք ովքե՞ր են, սատանան...— սկսեց Ֆրենսիսը, բայց իսկույն էլ սթափվեց.— Ներողություն: Ի սեր աստծու, ասա, ովքե՞ր են դրանք, այդ կարո՞ւնե՞րը:

— Սատանայի որդիներն են,— պատասխանեց պեռնը:— Դրանք իսպանացիներից ավելի կատաղի են ու մայաներից ավելի սարսափելի: Դրանց մոտ տղամարդիկ չեն ամուսնանում, իսկ աղջիկները մարդու չեն գնում: Նույնիսկ քուրմեր չունեն: Դրանք այլանդակ ծնունդներ են, սատանայի որդիներ և նույնիսկ ավելի վատ:

Այստեղ ծեր մայան բարձրացավ տեղից ու մատը տնկեց Լեոնսիայի կողմը, ասես այդ մեղադրական շարժումով կամենալով ասել. «Ահա սա է մեր դժբախտության պատճառը»: Նույն պահին գնդակը խոցեց նրա ուսը, և նա երերաց:

— Կռացրո՛ւ նրան,— բղավեց Հենրին Ֆրենսիսին:— Չէ որ միայն նա գիտե հանգույցների լեզուն, իսկ Չիայի աչքերը,— կամ դրա նման մի բան,— դեռևս չեն բռնկվել:

Ֆրենսիսը հնազանդվեց. նա բռնեց ծերունու ոտքերից ու թափով ներքև ձգեց: Վերջինս ցած ընկավ ոսկորներով լիքը պարկի նման:

Հենրին հրացանն իջեցրեց ուսից և սկսեց կրակել: Ի պատասխան՝ կրակոցների կարկուտ տեղաց: Մի րոպե հետո Ռիկարդոն, Ֆրենսիսը և պեռնը միացան Հենրիին: Իսկ ծերուկը, իր հանգույցները ջոկջկելով, անթարթ հայացքով նայում էր իջվածքից վերև, այնտեղ, ուր ցցվել էր լեռան ժայռապատ լանջը:

— Դադարեցրե՛ք,— բղավեց Ֆրենսիսը, բայց նրա ձայնը խեղդվեց կրակոցների որոտի մեջ:

Ստիպված էր սողալով մեկից մյուսին անցնել, որպեսզի իր ուղեկիցներին հարկադրի կրակը դադարեցնել: Նա ամեն մեկին առանձին-առանձին բացատրեց, որ իրենց ամբողջ մարտական պաշարները բարձած են ջորիներին, ուստի պետք է ինչպե՛լ դեռևս պահեստատուփերում ու պահուսակներում մնացած փամփուռները:

— Եվ զգույշ եղեք՝ չվիրավորվեք,— նախազգուշացրեց Յենրին:— Նրանք հին մուսկետներ ունեն և արկերուզներ, որոնք կարող են ավստի մեծության անցքեր բանալ:

Մի ժամ հետո արձակվեց վերջին գնդակը, եթե չհաշվենք Ֆրենսիսի ավտոմատ ատրճանակում մնացած մի քանի փամփուռները, որից հետո փոսում նստածները կրակը դադարեցրին, չնայած կարունների անկանոն հրաձգությանը: Առաջինը խոսեց Մանչենոն գլխի ընկավ, թե բանն ինչումն է: Նա զգուշությամբ սողաց, մոտեցավ փոսի եզրին, որպեսզի համոզվի, թե իր ենթադրությունը ճիշտ է, և նշանացի հասկացրեց յուրայիններին, որ պաշարվածների բոլոր փամփուռները վերջացել են և, հետևապես, նրանց կարելի է մերկ ձեռքերով վերցնել:

— Լավ խաբեցիկը ձեզ, սենյորներ,— չարախնդորեն հայտնեց նա պաշարվածներին: Այդ խոսքերն ուղեկցվեցին փոսը շրջապատող կարունների քրքիջով:

Բայց այն, ինչ կատարվեց հաջորդ վայրկյանին, նույնքան անակնկալ էր ու անսպասելի, ինչպես լինում է թատրոնում պատկերները փոխելիս: Հանկարծ կարունները շուռ եկան ու սարսափի աղաղակներով փախուստի դիմեցին: Փախչում էին այնպիսի ահ ու սարսափով, որ նույնիսկ շատերը նետում էին իրենց մուսկետներն ու մաչետները:

— Այնուամենայնիվ ես քեզ ցած կգլորեմ, սենյոր Սարիչ,— սիրալիր կերպով բղավեց Ֆրենսիսը Մանչենոյի հետևից, ատրճանակն ուղղելով նրա վրա:

Նա ուզում էր նշան բռնել ելուզակին, բայց փոշմանեց ու չիջեցրեց շնիկը:

— Ընդամենը երեք փամփուռ է մնացել ինձ մոտ,— ասես ներողություն խնդրելով, բացատրեց նա Յենրին:— Իսկ այս երկրում նախապես չի կարելի իմանալ, թե ամենից շատ երբ կարող են պետք գալ այդ փամփուռները, «ինչպես նկատել եմ պարզ ու բացահայտ»,— երգեց նա:

— Տես՛ք,— բղավեց պետնը, ցույց տալով հորը, ապա հեռվում երևացող լեռը:— Ահա թե ինչու նրանք փախան: Հասկացան, որ մայաների սրբերը սպառնում են կործանել նրանց:

Ծեր քուրմը ինքնամոռացման, ավելի ճիշտ՝ տրանսի մեջ ջոկջկում էր սրբազան փնջի հանգույցները և անթարթ աչքերով նայում հեռավոր լեռան, որի լանջին, իրար մոտիկ, շարունակ բռնկվում էին երկու վառ կրակներ:

— Ով ասես կարող է երկու հայելիների օգնությամբ այդպիսի օյին սարքել,— հեգնանքով նկատեց Յենրին:

— Դրանք Չիայի աչքերն են, դրանք Չիայի աչքերն են,— կրկնում էր պետնը:— Դուք հո լսեցիք, թե ինչ ասաց հայրս: Նա կարդաց հանգույցներով. «Սպասիր այնտեղ, ուր աստծո Ոտնահետքն է, մինչև որ բռնկվեն Չիայի աչքերը»:

Ծերունին ոտքի ելավ և ոչ իր ձայնով աղաղակեց.

— «Գանձը գտնելու համար պետք է աչքերը գտնել»:

— Լավ, ծերունկ,— հանգստացնող տոնով ասաց Յենրին և գրպանի փոքրիկ կողմնացույցով որոշեց երկու կրակների տեղը:

— Ինչպես երևում է, սրա կողմնացույցն իր գլխում է,— մի ժամ հետո նկատեց Յենրին, ցույց տալով ծեր քուրմին, որը, ջորի նստած, գնում էր բոլորի առջևից:— Ես նրան ստուգում եմ կողմնացույցով, և եթե նույնիսկ որևէ բնական արգելք ստիպում է նրան թեքվել մի կողմ, միևնույնն է, հետո դուրս է գալիս ուղիղ ճանապարհ, ասես մագնիսական սլաք լինի:

Հենց որ ճանապարհորդները հեռացան աստծո Ոտնահետքից, կրակներն աչքից կորան: Քանի որ վայրը խորդուբորդ էր, ըստ երևույթին դրանք կարելի էր տեսնել միայն այնտեղից: Իսկ վայրը, պետք է ասել, իսկապես անհարթ էր. գետակների չորացած հուններին փոխարինում էին ժայռերը, անտառին՝ ավազաթմբերն ու քարքարոտ գետինը, որն իր վրա կրում էր հրաբխային փոշու հետքեր:

Վերջապես հասան այնպիսի մի տեղ, ուր այլևս ջորի հեծած չէր կարելի առաջ գնալ. քշողներին ջորիների հետ թողեցին Ռիկարդոյի ինամքի տակ ու պատվիրեցին ճամբար խփել: Մնացածներն առաջ շարժվեցին թփածածկ թեք լանջով, քաշելով իրար ձեռքից ու կառչելով գետնից դուրս ցցված արմատներից: Առաջվա պես ծեր հնդիկը գնում էր առջևից և ասես մոռացել էր Լեոնսիայի ներկայության մասին:

Անցան ևս կես մղոն, երբ ծերունին հանկարծ, ասես օձից խայթված, կտրուկ կանգ առավ ու ետ ընկրկեց: Պատահել էր ահա թե ինչ. Ֆրենսիսը քրքջաց, և, տնագելով նրան, թնդուն արձագանքը տարածվեց ժայռից ժայռ: Մայր ցեղի վերջին քուրմը մատներն շտապով սահեցրեց հանգույցների վրայով, ընտրեց քուղերից մեկը, երկու անգամ շոշափեց նրա հանգույցներն ու ասաց.

— «Երբ աստվածները ծիծաղում են, զգուշացիր»,— այսպես են ասում հանգույցները:

Ֆրենսիսն ու Յենրին մի քառորդ ժամ ծիծաղում ու բղավում էին տարբեր ձայներով, փորձելով ծեր քուրմին համոզել, որ դա միայն արձագանք է:

Կես ժամ հետո ճամփորդները հասան գառիթափ ավազաթմբերին: Եվ նորից ծերունին ետ ընկրկեց: Ավազին դրվող յուրաքանչյուր քայլը ձայների ամբողջ մի աններդաշնակություն էր առաջացնում: Մարդիկ քարանում էին տեղներում, և շուրջն ամեն ինչ քարանում էր, լռում: Բայց հերիք է թեկուզ մի քայլ անեին, և ավազը նորից էր սկսում երգել:

— «Երբ աստվածները ծիծաղում են, զգուշացիր»,— նախազգուշացնող տոնով բացականչեց ծերուկը:

Նա մատով ավազի վրա շրջան գծեց, և մինչդեռ կզծեր, ավազը ոռնում էր ու ճղավում. ապա ծերունին ծունկի իջավ, և ավազը բղավեց ու փողհարեց: Հոր օրինակով պետքը նույնպես մտավ թնդացող շրջանի մեջ, որի ներսում ծերունին ցուցամատով ինչ-որ խորհրդավոր ֆիգուրներ ու նշաններ էր գծագրում, ըստ որում, այդ ժամանակ ավազը ոռնում ու ճղավում էր:

Այդ ամենից մահու չափ վախեցած Լեոնսիան կպել էր Յենրիին ու Ֆրենսիսին: Նույնիսկ Ֆրենսիսը շշմել էր:

— Իհարկե, թնդածայն արձագանք է,— ասաց նա:— Բայց ախր միայն արձագանք չէ այստեղ: Ոչինչ չեմ հասկանում: Ծիշտն ասած, նա սկսում է ազդել իմ ջղերի վրա:

— Դատարկ բան,— առարկեց Յենրին ու ոտքով շարժեց ավազը, լսվեց մռնչյուն:— Սա երգող ավազ է: Ինձ վիճակվել է այսպիսի ավազ տեսնել Հավայան կղզիներից մեկում՝ Կաուլայում, հավատացնում եմ ձեզ, հիանալի վայր է զբոսաշրջիկների համար: Միայն թե այստեղ ավազն ավելի լավ է ու ավելի ձայնեղ: Գիտնականները տասնյակ դժվարիմաց տեսություններ են հորինել, որպեսզի բացատրեն այս երևույթը: Ես լսել եմ, որ այս բանը նկատվել է նաև երկրագնդի այլ վայրերում: Նման դեպքերում անհրաժեշտ է կողմնացույցը վերցնել ձեռքը և, հետևելով նրան, կտրել-անցնել ավազները: Չնայած այս ավազները հաչում են, բայց, բարեբախտաբար, չեն կծում:

Սակայն դժվար էր քուրմին համոզել, որ իր գծած շրջանից դուրս գա. միակ բանը, որին Մորգանները հասան, այն է, որ ծերունին դադարեց աղոթել ու կատաղությամբ նետվեց նրանց վրա, անհասկանալի բառեր մրթմրթալով մայաների լեզվով:

— Նա ասում է,— թարգմանեց որդին,— որ մենք պարզապես սրբապղծություն ենք կատարում, նույնիսկ ավազն է զայրույթից աղաղակում: Նա այլևս չի շարունակի ճամփան. վախենում է մոտենալ Չիայի սարսափելի կացարանին: Ես էլ չեմ գա՝ իմ պապը զոհվել է այնտեղ, բոլոր մնացածները գիտեն այդ: Հայրս ասում է, որ չի ուզում այնտեղ մեռնել: Նա ասում է. «Ես այնքան էլ մեծ չեմ, որ մեռնեմ»:

— Դե, իհարկե, ընդամենը ութսուն տարեկան,— քրքջաց Ֆրենսիսը և իսկույն էլ վախեցած ցնցվեց ծաղրածու-արձագանքի կախարդական թնդյուններից, որոնց միացան ավազաթմբերը:

— Շատ է ջահել, որպեսզի մեռնի: Իսկ ի՞նչ կասեք ձեր մասին, Լեոնսիա: Ձեզ համար էլ մեռնելը դեռևս վաղ է:

— Հապա, պատասխանիր իմ փոխարեն,— կատակով խոսեց նա ու ոտքով թեթևակի խառնեց ավազը, ստիպելով նրան հանդիմանական հառաչանքի նման մի ձայն հանել:— Ծիշտ հակառակը,

Եւ շատ եմ պառաւ, որպէսզի վախից մեռնեմ լոկ նրա համար, որ ժայռերը ծիծաղում են, իսկ ավազաթմբերը հաչում մեզ վրա: Ավելի լավ է առաջ գնանք: Չէ որ մենք այժմ շատ մոտիկ ենք այդ կրակներին: Իսկ ծերուկը թող նստի իր շրջանի մեջ ու սպասի մեր վերադարձին:

Նա բաց թողեց նրանց ձեռքերը և քայլեց առաջ, իսկ Ֆրենսիսն ու Յենրին հետևեցին աղջկան: Յենց որ նրանք շարժվեցին, ավազաթմբերն սկսեցին քրթմնջալ, իսկ այն մեկը, որը նրանց ավելի մոտիկ էր, մռնչաց ու թնդաց: Ի բախտավորություն իրենց, ինչպէս շուտով համոզվեցին, Ֆրենսիսն իր հետ վերցրել էր բարակ, բայց ամուր թելի մի կծիկ:

Ավազների միջով անցնելիս նրանք ընկան այնպիսի մի տեղ, ուր արձագանքն էլ ավելի ուժեղ էր: Նրանց կանչերը հստակորէն կրկնվում էին վեց և նույնիսկ ութ անգամ:

— Թո՛ւ քեզ, չար սատանա,— բացականչեց Յենրին:— Չուր չէ, որ բնիկները վախենում են այսպիսի տեղերից:

— Իսկ հիշո՞ւմ եք, Մարկ Տվենը նկարագրում է մի մարդու, որը արձագանքների հավաքածու էր կազմում,— հարցրեց Ֆրենսիսը:

— Առաջին անգամ եմ լսում: Բայց մայրները կարող էին այստեղ, անշուշտ, լավ հավաքածու կազմել: Խելոք են մտածել, թե որտեղ թաքցնեն գանձը: Անկասկած, վաղուց ի վեր այս վայրը համարվել է սրբազան, նույնիսկ երբ դեռ իսպանացիք էլ այստեղ ոտք չէին դրել: Նախկին քուրմերը գիտեին այս երևույթների պատճառը, բայց իրենց հոտին դրանց մասին պատմում էին իբրև մեծագույն գաղտնիքի, իբրև ինչ-որ գերբնական բանի մասին:

Մի քանի րոպեից հետո դուրս եկան հարթ ու բաց մի տեղ, որի վրա կախվել էր ճեղքված մի ժայռ: Այնուհետև քայլեցին արդեն ոչ թե իծաշարուկ, այլ երեքով կողք կողքի: Չորս կողմ հողը ծածկված էր այնպիսի չոր ու քարեղեն կեղևով, որ դժվար էր պատկերացնել, թե իբր ինչ-որ տեղ աճում են ծառեր և խոտ է կանաչում: Աշխուժացած և ուրախ Լեոնսիան, չուզենալով տղամարդկանցից որևէ մեկին վշտացնել, բռնեց երկուսի ձեռքից էլ ու սկսեց վազել նրանց հետ: Դեռևս հիևք քայլ էլ չէին անցել, երբ դժբախտություն պատահեց: Կեղևը ճեղքվածք տվեց, և երկուսով էլ,— Յենրին և Ֆրենսիսը,— մեկեն թաղվեցին մինչև ծնկից վեր, իսկ նրանց հետևից էլ Լեոնսիան, համարյա նույնքան խորը:

— Թո՛ւ քեզ, չար սատանա,— քրթմնջաց Յենրին:— Սա իսկապէս որ սատանայի պապենական կալվածքն է:

Շշուկով ասված այդ բառերն անմիջապէս խլեցին շրջապատի ժայռերը և սկսեցին ամեն կերպ,— նույնպէս շշուկով,— կրկնել անվերջ:

Լեոնսիան և նրա ուղեկիցները մեկեն չգիտակցեցին իրենց դրության ամբողջ վտանգը: Միայն, երբ դուրս գալու ապարդյուն փորձերից հետո թաղվեցին մինչև գոտկատեղ ու սկսեցին ավելի խոր թաղվել, տղամարդիկ հասկացան, թե դա ինչով է սպառնում: Մինչդեռ Լեոնսիան շարունակում էր ծիծաղել, ասես զվարճալի արկած էր պատահել նրա հետ:

— Սորուն ավազներ,— սարսափով շշուջաց Ֆրենսիսը:

— Սորուն ավազներ,— սարսափով պատասխանեցին ավազաթմբերը, անվերջ կրկնելով այդ սարսռազդեցիկ մարող շշուկով, ասես չարախնդացորէն ինչ-որ նորություն դուրս տալով:

— Այստեղ սորուն ավազներով ծածկված իջվածք է,— գուշակեց Յենրին:

— Երևում է, այնուամենայնիվ, ծերուկն իրավացի էր, որ մնաց այնտեղ, երգող ավազներում,— ասաց Ֆրենսիսը:

Սարսռազդեցիկ փսփսոցը վերսկսվեց, և նրա արձագանքները դեռ երկար հնչում էին, մարելով հեռվում:

Այդ ժամանակ երեքն էլ արդեն մինչև կուրծքը թաղվել էին ավազների մեջ և շարունակում էին դանդաղորէն խորասուզվել:

— Բայց մեկնումեկս պետք է որ կենդանի դուրս պրծնենք այս անախորժությունից,— բացականչեց Յենրին:

Մինչև իսկ առանց պայմանավորվելու երիտասարդներն սկսեցին բարձրացնել Լեոնսիային, չնայած դրա համար գործադրվող ջանքերը և աղջկա մարմնի ծանրությունը հարկադրեցին նրանց ավելի արագորեն խորասուզվել ավազի մեջ: Երբ Լեոնսիան, մագլցելով նրանց ուսերին, վերջապես դուրս եկավ գետնի երես, Ֆրենսիսն ասաց, իսկ արձագանքը ծաղրաբար կրկնեց նրա հետևից.

— Լեոնսիա, այժմ մենք ձեզ դուրս կնետենք այստեղից: «Առաջ» հրահանգը լսելուն պես ցատկեցեք ու բերանքսիվայր փռվեք կեղևի վրա, միայն աշխատեցեք որքան կարելի է թեթևորեն անել այդ բանը: Իսկույն կսկսեք սահել նրա վրայով: Եվ շատ լավ կլինի, միայն թե կանգ չառնեք: Սողացեք առաջ: Չորեքթաթ շարժվեցեք, մինչև կհասնեք ամուր գետնին: Ինչ ուզում է լինի՝ վեր չկենաք, մինչև չզգաք, որ ոտքներիդ տակ ամուր գետին է: Յենրի, պատրաստվեցի՞նք:

Եվ նրանք սկսեցին ճոճել նրան՝ առաջ, ետ, չնայած ամեն շարժման հետ ավելի ու ավելի էին խորասուզվում. երրորդ անգամ ճոճելով Լեոնսիային, Ֆրենսիսը բղավեց. «Առաջ», և նրանք Յենրիի հետ աղջկան նետեցին այն հաշվով, որ նա ընկնի ամուր գետնի վրա:

Լինսիան ճշտությամբ կատարեց նրանց ցուցմունքները և չորեքթաթ սողալով հասավ ժայռերին:

— Այժմ տվեք պարանը,— բղավեց նա:

Բայց Ֆրենսիսն արդեն այնքան խորն էր թաղվել, որ ի վիճակի չէր հանելու պարանի օղակը, որ զցել էր իր վիզն ու անցկացրել թևի տակով: Նրա փոխարեն Յենրին արեց դա և ճարակորեն պարանի ծայրը նետեց Լեոնսիային, չնայած այդ անելիս նույնքան խոր թաղվեց ավազի մեջ, որքան և Ֆրենսիսը:

Լեոնսիան որսաց պարանը ու քաշեց դեպի իրեն, ապա փաթաթեց ավտոմեքենայի մեծության մի քարի ու ձայն տվեց Յենրիին, որպեսզի ձգի: Բայց դրանից բան դուրս չեկավ. միայն Յենրին էլ ավելի խոր թաղվեց ավազում. նա արդեն խորասուզվել էր մինչև կզակը, երբ Լեոնսիան հանկարծ բղավեց՝ իսկական քառս առաջացնելով օդում.

— Սպասեցե՛ք: Մի՛ ձգեք: Ես մի բան մտածեցի: Ամբողջ պարանը նետեցեք ինձ: Թողեք ձեզ մոտ միայն այնքան, որպեսզի կարողանաք կապվել թևատակից:

Պարանը քարշ տալով իր հետևից՝ նա սկսեց մագլցել ժայռն ի վեր: Քառասուն ֆուտ բարձրության վրա, ժայռի ճեղքում, աճել էր մի փոքրիկ ոստողոտ ծառ, որտեղ Լեոնսիան կանգ առավ: Պարանը զցելով ծառի բնին, ասես դա ճախարակ լիներ, նա ազատեց ծայրն ու փաթաթեց զառիթափի գլխին կախված հսկայական ծանր քարի շուրջը:

— Կեցցե՛ս, աղջիկ: Ճիշտ չե՞, Յենրի,— բացականչեց Ֆրենսիսը:

Երկուսով էլ իսկույն հասկացան՝ ի՞նչ էր մտածել նա. միայն ամեն ինչ կախված էր նրանից, թե արդյոք նրան կհաջողվե՞ր տեղից շարժել զառիթափի գլխին թեքված քարաժայռը և ցած գլորել: Յինք թանկագին ընկերներ անցան, մինչև որ Լեոնսիան բավականաչափ ամուր մի ոստ գտավ, որը կարող էր ծառայել իբրև ամբարձիչ: Յանգիստ, լարելով բոլոր ուժերը, նա սկսեց հետևի կողմից քարը հրել, մինչդեռ այդ նույն ժամանակ նրա երկու սիրելի մարդիկ ավելի ու ավելի խորն էին թաղվում ավազի մեջ: Վերջապես նրան հաջողվեց ցած գլորել քարաժայռը:

Ցած ընկնելով, քարաժայռն այնպիսի ուժով ձգեց պարանը, որ անակնկալ ձիգ օղակով սեղմված Յենրիի կրծքից ակամա տնքոց դուրս թռավ: Նա դանդաղ դուրս սողաց տհաճորեն իրեն բաց թողնող ավազների հորձանուտից, ավազներ, որոնք բարձրաձայն ծայծպոցով իրար եկան նրա հետևից: Յաննելով գետնի մակերեսին, նա սրընթաց նետվեց օդի մեջ, թռավ, անցավ փխրուն կեղևի շերտը և ընկավ ամուր գետնին, ուղղակի ծառի տակ, իսկ քարաժայռը գլորվեց ու անշարժացավ նրա կողքին:

Երբ պարանի ծայրը նետվեց Ֆրենսիսին, սորուն ավազներն արդեն նրան ներս էին քաշել մինչև վիզը: Յայտնվելով Լեոնսիայի ու Յենրիի կողքին, tierra firma-ի /Ամուր հող (իտալ.):/ վրա, նա բռունցք ցույց տվեց սորուն ավազներին, որոնցից հագիվ դուրս պրծավ, և սկսեց ծաղր ու ծանակի

Ենթարկել դրանք: Լեոնսիան ու Յենրին միացան նրան: Ի պատասխան՝ բյուրավոր ոգիներ ծիծաղեցին նրանց վրա, և ամբողջ օդը լցվեց չար կատակի պես հնչող քչփչոցով ու շրշուկով:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՂՈՐՍԵՐՈՐԴ

— Յո աստծու Ոստահետքը միլիոն մղոն հեռու չէ՞ր այդ երկու կրակներից,— նկատեց Յենրին, երբ երեքով կանգ առան բարձր, ուղղաձիգ մի ժայռի ստորոտում՝ շունչները ետ բերելու:— Ախր եթե կրակները հեռու լինեին, չէինք նկատի. այս հսկա ժայռը նրանց կծածկեր մեզանից: Սրա վրա բարձրանալ անհնար է, իսկ շրջանցելն անհաճին ժամանակ կպահանջի: Ուստի եկեք նախ ամեն ինչ մի լավ տևողենք: Իմ կարծիքով, կրակները բռնկվում էին այստեղ մոտերքում:

— Իսկ չէ՞ր կարող արդյոք որևէ մեկն անել այդ բանը հայելու օգնությամբ,— ենթադրեց Լեոնսիան:

— Ոչ, դա ավելի շուտ բնության ինչ-որ երևույթ է,— պատասխանեց Ֆրենսիսը:— Այս հաչող ավազներից հետո ես այժմ հավատում եմ նրա հրաշքներին:

Պատահաբար նայելով վերև, ժայռի կատարին, Լեոնսիան քարացավ տեղում:

— Նայեցե՛ք,— բացականչեց նա:

Յենրին ու Ֆրենսիսը նույնպես բարձրացրին գլուխները: Այն, ինչ նրանք տեսան, արդեն ոչ թե բռնկում էր, այլ հավասար, անթափթ լույս, որն արևի նման շլացնում էր աչքերը: Տղամարդիկ անմիջապես սկսեցին մոտենալ ժայռի ստորոտին: Խոտերի թանձրությունից դատելով, այստեղ երկար տարիներ մարդու ոտք չէր դիպել: Ծանր շնչելով՝ նրանք վերջապես դուրս եկան մի բաց տեղ, ուր համեմատաբար մոտ ժամանակներում տեղի ունեցած փլուզումը ոչնչացրել էր ամեն տեսակ բուսականություն:

Լեոնսիան ծափ տվեց: Այժմ արդեն լույսի աղբյուրը երևում էր բոլորին: Երեսուն ոտնաչափ բարձրության վրա, ժայռի մեջ, փայլում էին երկու հսկայական աչքեր, յուրաքանչյուրն ամբողջ մի սաժեն, ծածկված ինչ-որ փայլուն, սպիտակ նյութով:

— Չիայի աչքե՛րը,— բացականչեց Լեոնսիան:

Ինչ-որ բան հիշելով՝ Յենրին ծոծրակը քորեց:

— Ինձ թվում է՝ գլխի եմ ընկնում, թե դրանք ինչից են պատրաստված,— ասաց նա:— Ես մինչև այժմ երբեք այդ աչքերը չէի տեսել, բայց լսել էի ծերունիների պատմածները: Դա մայա ցեղի հնդիկների հնադարյան հնարանքն է: Գանձի իմ բաժինը դնում եմ տասը սենթանոց ծակ դրամի դիմաց, Ֆրենսիս, որ կարող եմ ասել, թե այդ նյութն իրենից ինչ է ներկայացնում:

— Համաձայն եմ,— պատասխանեց Ֆրենսիսը:— Պետք է իսկական հիմար լինել՝ նման գրագի չհամաձայնելու համար, եթե մինչև իսկ վեճը գնում է բազմապատկման աղյուսակի մասին: Ախր կարելի է միլիոններ շահել, միևնույն տարվելու ռիսկն ընդամենը տասը սենթ է: Դե, այդպիսի պայմաններով ես պատրաստ եմ վիճել, որ երկու անգամ երկու հավասար է հինգի. միգուցե ինչ-որ հրաշքով կարողանամ ապացուցել: Ասա, ուրեմն, դա ի՞նչ է: Գրագը կնքված է:

— Ոստրեներ,— ժպտաց Յենրին:— Ոստրեի խեցիներ: Ես ի նկատի ունեմ, անշուշտ, սադափե խեցիները: Դա մոզակայի ձևով վարպետորեն շարած սադափ է, որի շնորհիվ էլ ստացվել է համատարած արտացոլող մակերես: Եթե ուզում ես ապացուցել, որ ես իրավացի չեմ, վեր ել ու նայիր:

Մեջտեղում, աչքերից մի փոքր ներքև, դուրս էր ցցվել եռանկյուն մի ելուստ՝ նման հսկայական քթի: Դա ոնց որ յուրատեսակ մի կոշտ լիներ ժայռի կերպարանքին: Զարն անհարթ էր, և, շնորհիվ իր կատվային ճարպկության, Ֆրենսիսին հաջողվեց բավական արագ հաղթահարել այն տասը ֆուտը, որ նրան բաժանում էր ելուստի հիմքից: Հետագա վերելքը նրա կողքով շատ ավելի հեշտ էր: Սակայն այդպիսի ամայի վայրում քսանհինգ ֆուտ բարձրությունից ցած ընկնելը և ձեռքը կամ ոտքը ջարդելը այնքան էլ հաճելի հեռանկար չէ, և Լեոնսիան, Յենրիի աչքերում ականա խանդի փայլ առաջացնելով, բղավեց.

— Ի սեր աստծու, Ֆրենսիս, զգո՛ւյշ եղեք:

Կանգ առնելով եռանկյունու բարձունքում, Ֆրենսիսը գննեց նախ՝ մեկ, ապա՝ մյուս աչքը: Ապա հանեց իր որսորդական դանակն ու սկսեց փորել աջ աչքը:

— Եթե ծեր ջենթլմենն այստեղ լիներ, կաթված կստանար, տեսնելով այս սրբապղծությունը,— նկատեց Յենրին:

— Տասը սենթը շահեցի՛ր,— բղավեց Ֆրենսիսը, Յենրիի պարզած ձեռքի մեջ նետելով իր փորած-հանած աչքի անկյունը:

Դա սաղափի տափակ մի կտոր էր, մոզահկայի մի մասը, որով աչքը շարված էր:

— Առանց կրակի ծուխ չի լինում,— ասաց Յենրին:— Իզուր չէ, որ մայաները ընտրել են այս վայրի տեղը և ժայռի մեջ Չիայի աչքերը շինել:

— Անշուշտ, մենք սխալվեցինք՝ ծեր ջենթլմենին իր սրբազան հանգույցների հետ թողնելով այնտեղ,— ասաց Ֆրենսիսը:— Հանգույցներն ամեն ինչ կբացատրեին մեզ և կհուշեին, թե հետո ինչ անենք:

— Որտեղ աչքեր կան, պետք է նաև քիթ լինի,— միջամտեց Լեոնսիան:

— Ահա և քիթը,— բացականչեց Ֆրենսիսը:— Աստված իմ, չէ որ հենց քիչ առաջ ես նրա վրայով էի մազլցում: Մենք շատ մոտիկ ենք կանգնած, պետք է հեռվից նայել: Հարյուր յարդ հեռավորությունից սա երևի հսկայական դեմքի տեսք ունենա:

Լեոնսիան մոտեցավ ժայռին և ոտքով բոթեց փտած տերևների ու ճյուղերի կույտը, որ ըստ երևույթին արևադարձային միստրալներն /Միստրալ — հյուսիսարևմտյան չոր ու ցուրտ քամի Հարավային Ֆրանսիայում:/ էին քշել-բերել այստեղ:

— Այդ դեպքում որտեղ որ հարկն է, քթի ներքևում, բերան էլ պետք է լինի,— ամենալուրջ տեսքով ասաց նա:

Յենրին ու Ֆրենսիսը մի ակնթաթաթում ոտքերով կույտը դեսուդեն նետեցին և ժայռի մեջ գտան մի անցք, ճիշտ է, այնքան փոքր, որ մարդ չէր կարող ներս մտնել: Վերջերս տեղի ունեցած փլուզումը երևի մասամբ լցրել էր այդ անցքը: Մի քանի քարեր դուրս քաշելով և ուսերն ու գլուխը անցքի մեջ մոցնելով, Ֆրենսիսը վառած լուցկով լուսավորեց ներսը:

— Չգուշացեք օծերից,— նախազգուշացրեց Լեոնսիան:

Ի նշան երախտագիտության, Ֆրենսիսն ինչ-որ բան քրթմնջաց ու հայտնեց.

— Սա արհեստական քարայր է. փորված է ժայռի մեջ, ըստ որում, որքան կարող եմ դատել, խիստ հմտությամբ: Ա՛խ, սատանա:— Վերջինս վերաբերում էր լուցկուն, որն այրեց նրա մատները:— Դե ախր այստեղ ոչ մի լուցկի հարկավոր չէ,— զարմանքով բացականչեց նա:— Սա քարայր է բնական լուսավորությամբ. . . Լույսը թափանցում է վերևից: Իսկական ցերեկային լույս: Այ կեցցեն այդ հնադարյան մայաները: Ես չեմ զարմանա, եթե մենք այստեղ վերելակ հայտնաբերենք, տաք և սառը ջուր, շոգեջեռուցում և բարապան: Դե, մնաք բարով:

Ֆրենսիսը ներս մտավ անցքից ու անհետացավ խորքում: Շուտով քարայրից լսվեց նրա ձայնը.

— Ներս եկեք: Այստեղ հիանալի է:

— Եվ դուք դեռ չէիք ուզում ձեզ հետ վերցնել ինձ,— հանդիմանաբար ասաց Լեոնսիան, իր հերթին իջնելով ժայռի մեջ փորած հարթ հատակին. այստեղ թափանցող մթնշաղի լույսով ամեն ինչ շատ լավ էր երևում:— Նախ՝ ես ձեզ օգնեցի գտնելու աչքերը, ապա՝ բերանը: Եթե ես չլինեի, դուք հիմա ավելի շուտ շրջանցած կլինեիք ժայռը և արդեն մի կես մղոն կանցնեիք, ու գնալով ավելի կհեռանայիք նպատակակետից:

— Բայց այստեղ դատարկ է, ճրագով էլ բան չես գտնի,— մի րոպե հետո ավելացրեց նա:

— Միանգամայն հասկանալի է,— ասաց Յենրին:— Չէ որ սա դեռ նախասենյակն է: Այդ մայաներն այնքան էլ հիմար չէին, որ այստեղ թաքցնեին գանձը, որի հետևից այնպիսի համառությամբ ընկել էին կոնկրետադրոները: Ես նույնիսկ պատրաստ եմ գրագ գալ, որ մենք այժմ էլ գանձի թաքստոցից նույնքան հեռու ենք, որքան և Սան Անտոնիոյում:

Այստեղ նրանք նկատեցին տասներկու-տասնհինգ ֆուտ լայնությամբ մի անցք, որի բարձրության մասին դժվար էր դատել: Ինչպես Յենրիին թվաց, իրենք անցան մոտ քառասուն քայլ: Միջանցքը արագ նեղացավ, ուղիղ անկյունով թեքվեց աջ, ապա՝ ձախ, և նրանք ներս մտան մի ուրիշ ընդարձակ քարայր:

Առաջվա նման վերևից ընկնող խորհրդավոր ցերեկային լույսը լուսավորում էր նրանց ճամփան: Հանկարծ առջևից գնացող Ֆրենսիսը կտրուկ կանգ առավ, այնպես որ նույնիսկ Լեոնսիան ու Յենրին դիպան նրան: Երեքն էլ կանգնեցին կողք կողքի, Լեոնսիան մեջտեղում, և ուղիղ իրենց առջևում տեսան վաղուց մեռած, բայց չփոշիացած մարդկանց երկար մի շարք:

— Երևում է, մայա ցեղի հնդիկներն էլ եգիպտացիների նման իմացել են գմբուտը և մոլմիաներ պահելու գաղտնիքը,— ասաց Յենրին, անգիտակցաբար ձայնը շշուկի փոխելով անթաղ մեռյալների այդ շարքի առջև, մեռյալներ, որոնք կանգնել էին զգաստ ու նայում էին նրան, ասես կենդանի մարդիկ լինեին:

Բոլորը հագնված էին եվրոպացիների պես, և դեմքերն աչքի էին ընկնում եվրոպացիներին հատուկ անկիրք արտահայտությամբ: Նրանք հագել էին կոնկրետադրոների և անգլիական ծովահենների հագուստներ, որոնք այժմ համարյա փոել էին: Երկուսը կանգնած էին ասպետական ժանգոտած զրահներով, սաղավարտի երեսակալները վեր բարձրացրած: Ոմանք սուսերներ և տապարներ ունեին գոտիներից կախած, իսկ ուրիշները դրանք պահել էին չորացած ձեռքներում. և բոլորի գոտկատակերից դուրս էին ցցվել հնածև հսկայական կայծքարե ատրճանակների բռնակները:

— Ծեր մայան իրավացի էր,— շնչաց Ֆրենսիսը:— Բոլոր նրանք, ովքեր փորձել են թափանցել գաղտնարանը, նրա նախադուռը զարդարել են իրենց աճյուններով և այժմ կանգնած են այստեղ իբրև նախագզուշացում նրանց, ովքեր կհանդգնեն այստեղ գալ: Նայեցեք հապա: Իսկական իսպանացի է, այնպես չէ՞: Հավանորեն կիթառ է ծլնագացրել, ինչպես իր հայրն ու պապը:

— Իսկ ահա այս մեկը տիպիկ դեռնշիրցի է,— նույնպես շշուկով ասաց Յենրին:— Ծակ տասը սենթանոցով գրագ եմ գալիս հին պղնձադրամի դեմ, որ սա որսագող է եղել, եղևիկ է որսացել արգելանտառում և առաջին իսկ պատահած նավով թագավորական զայրույթից փախել իսպանական այս գաղութը:

— Ու-ու-ո՛ւ. . . — Լեոնսիան ցնցվեց ու կպավ Ֆրենսիսին և Յենրիին:— Այս սրբություններից մահվան ու ամեն տեսակ դիվային բաների հոտ է փչում: Դասական վրեժխնդրություն: Ովքեր ցանկանում էին թալանել գանձատունը, այժմ դատապարտված են կանգնելու հավերժ ու իրենց աննեխ աճյուններով պահպանելու այն:

Ոչ ոք չէր ուզում ճամփան շարունակել: Հնօրյա հագուստներ հագած այդ հանգուցյալներն ասես բոլորին հիպնոսացրին: Յենրին մելոդրամատիկ տրամադրության մեջ ընկավ:

— Տեսեք, թե Ամերիկայի նվաճման առաջին իսկ օրերից հարստության հետևից ընկնելը մարդկանց ինչպիսի վայրի, ահավոր տեղ է բերել,— ասաց նա:— Եվ չնայած գանձը չեն կարողացել տանել, բայց հոտառությունը նրանց անսխալ կերպով բերել-հասցրել է դրա շեմին: Գլխարկս հանում եմ ձեր առաջ, ծովահեններ ու կոնկրետադրոներ: Ողջունում եմ ձեզ, խիզախ թափառաշրջիկներ ու ավազակներ: Դուք նուրբ հոտառություն եք ունեցել, առել եք ոսկու հոտը և բավականաչափ քաջասիրտ եք եղել, որպեսզի կովեք դրա համար:

— Ո՛ւհ,— փնչացրեց Ֆրենսիսը, վաղեմի արկածախնդիրների շարքի միջով իր հետևից տանելով Յենրիին ու Լեոնսիային:— Ծերունի Յենրին էլ այստեղ պետք է լինի, շարքի գլխին:

Նրանք անցան մի երեսուն քայլ, այդտեղ միջանցքն էլի մի պտույտ գործեց: Մոլմիաների կրկնակի շարքի վերջում հանկարծ Յենրին կանգնեցրեց իր ուղեկիցներին և, մատնացույց անելով մոլմիաներից մեկին, բացականչեց.

— Չգիտեմ սրը Յենրիի մասին ինչպես, բայց Ալվարես Թորեսը ձեր առջևն է:

Իսկապես, գլխին իսպանական սաղավարտ դրած, նեղ, թուխ դեմքով, կիսափտած իսպանական միջնադարյան կոստյումով և իսպանական մեծ սուսերը չորացած, դարչնագույն ձեռքում պահած այդ մոմիան ապշեցուցիչ կերպով նման էր Ալվարես Թորեսին, որը ճիշտ այդպիսի նեղ և թուխ դեմք ուներ: Լեոնսիան մինչև իսկ զարմանքի ճիչ արձակեց և, ետ ցատկելով, խաչակնքեց դեմքը:

Ֆրենսիսը հանձնեց նրան Յենրիի խնամքին, իսկ ինքը մոտեցավ մեռյալին, շոշափեց նրա այտերը, ճակատն ու շրթունքները և հանգստացուցիչ ծիծաղեց.

— Կուզենայի, որ Ալվարես Թորեսը կանգնած լիներ այս ասպետի տեղում: Բայց գիտեք, ես ոչ մի կասկած չունեմ, որ սա Թորեսի նախահայրն է եղել, նախքան այստեղ՝ մայաների գանձերի պատվավոր պահակակետում տեղ գրավելը:

Լեոնսիան ամբողջ մարմնով դողալով անցավ ահավոր մոմիայի կողքից: Նեղ միջանցքը բուրբուրովին մթնեց, և Յենրին, որը գնում էր առջևից, շարունակ լուցկի էր վառում:

— Օհո՛,— հանկարծ բացականչեց նա, երբ անցել էին մոտ երկու հարյուր քայլ:— Նայեցեք այս աշխատանքին: Քարը շատ լավ է տաշած:

Այստեղ ինչ-որ վերևից մթնշաղային լույս էր թափանցում միջանցք, որը թույլ էր տալիս ամեն ինչ տեսնել նաև առանց լուցկու: Ճանապարհորդների առաջ մի որմնախորշ էր, որից կիսով չափ դուրս էր ցցվել մի քար, որն իր չափերով ճիշտ համապատասխանում էր անցուղու լայնությանը: Հավանորեն քարը տեղադրել էին այստեղ անցուղին փակելու նպատակով: Քարը տաշված էր ամենայն խնամքով, եզրերն ու անկյունները ճշտորեն համընկնում էին որմնախորշի անցքի հետ:

— Գրագ կգամ, որ հենց այստեղ է զոհվել ծերուկ մայայի հայրը,— բացականչեց Ֆրենսիսը:— Նա իմացել է քարը դարձնող մեխանիզմի գաղտնիքը, և, ինչպես տեսնում եք, կիսով չափ շարժված է...

— Թո՛ւ քեզ, չար սատանա,— հայհոյեց Յենրին, ընդհատելով նրան և ցույց տալով հատակը, որտեղ ընկած էին մարդկային ոսկորներ:— Ահա թե ինչ է մնացել նրանից: Նա մահացել է նրանցից շատ ավելի ուշ, այնպես նրան ևս մոմիա կդարձնեին: Ամենայն հավանականությամբ, նա եղել է վերջին մարդը, որը մեզանից առաջ այստեղ է եկել:

— Ծեր քուրմը պատմում էր, որ նրա հայրը այստեղ է բերել tierra caliente-ի մարդկանց,— հիշեցրեց Լեոնսիան:

— Եվ ասաց նաև, որ նրանցից ոչ ոք չվերադարձավ,— ավելացրեց Ֆրենսիսը:

Յենրին նկատեց մի գանգ ու բարձրացրեց: Հանկարծ նա ինչ-որ բացականչություն արեց ու վառեց լուցկին, այժմ արդեն նրա ուղեկիցներն էլ տեսան գանգը: Այն ոչ միայն ճեղքված էր երկու մասի, սրի կամ մաչետի հարվածով, այլև ծոծրակին մի փոքրիկ անցք էր երևում, վկայելով, որ այդ անցքը գնդակն է բացել: Յենրին գանգը ցնցեց՝ ինչ-որ բան շխշխկաց ներսում. նորից ցնցեց, և գանգի միջից ցած ընկավ տափակած գնդակը: Ֆրենսիսն ուշադիր զննեց:

— Ատրճանակի գնդակ է,— եզրակացրեց նա:— Ինչպես երևում է, վառողը խոնավացած է եղել. անկասկած, կրակել են երես առ երես,— այստեղ այլ կերպ չի էլ կարելի,— և այնուամենայնիվ գնդակը չի ծակել-անցել: Իսկ այս գանգն, անշուշտ, պատկանում է հնդիկի:

Եվս մի շոջադարձ դեպի աջ, և նրանք ներս մտան լավ լուսավորված, ոչ մեծ մի քարայր: Խիստ բարձրադիր պատուհանից, որը ծածկված էր երկայնակի մի ֆուտ հաստության քառակող քարե գերաններով և համարյա նույնպիսի ընդլայնակի գերաններով, քարայր էր թափանցում ցերեկային աղոտ լույսը: Ամբողջ հատակը ծածկված էր մարդկային սպիտակ ոսկորներով: Ոսկորներից դատելով՝ դրանք եվրոպացիներ էին: Հենց այդ նույն տեղում էլ ընկած էին հրացաններ, ատրճանակներ, դանակներ, իսկ այստեղ-այնտեղ՝ նաև մաչետներ:

— Սրանք համարյա հասել են գաղտնարանին,— նկատեց Ֆրենսիսը,— իսկ այստեղ, ինչպես երևում է, իրար հետ կռվել են դեռևս չսպանված արջի մորթու համար: Շատ ափսոս, որ ծեր հնդիկը մեզ հետ չէ և չի կարող տեսնել, թե ինչ է պատահել իր հորը:

— Իսկ եթե հանկարծ որևէ մեկը ողջ մնացած ու փախած լինի ավարի հետ միասին,— ասաց Յենրին: Բայց կտրվելով այն տխուր պատկերից, որ ներկայացնում էին հատակին թափափված ոսկորները, և քարայրը զննելով, ինքն էլ պատասխանեց.— Ասենք, ոչ, չի կարող պատահել: Նայեցեք միայն կուռքի աչքերի այդ թանկագին քարերին: Չէ՞ որ դրանք սուտակ են, եթե ես թեկուզ մի փոքր հասկանում եմ:

Ֆրենսիսը և Լեոնսիան նայեցին նրա հայացքի ուղղությամբ ու նկատեցին բացված բերանով կնոջ քարե մի վիթխարի արձան, որը նստել էր ոտքերը ծալած, և կարմիր աչքերով նայում էր նրանց: Բերանն այնքան մեծ էր, որ ամբողջ դեմքը թվում էր այլանդակ: Նրա կողքին բարձրանում էր ավելի ևս այլանդակ ու զգվելի մի տղամարդ-կուռք, ճիշտ է, քանդակված ավելի հերոսական ոճով: Կուռքի մի ականջը սովորական չափի էր, իսկ մյուսը նույնքան այլանդակորեն խոշոր, որքան և աստվածուհու բերանը:

— Չի կոչեցյալը երևի հենց այս գեղեցկուհին է,— քմծիծաղեց Յենրին:— Իսկ ո՞վ է կանաչ աչքերով այս մեծականջ կավալերը:

— Աստված վկա, չգիտեմ,— քրքջաց Ֆրենսիսը:— Սակայն գիտեմ, որ այս մեծականջ ջենթլմենի աչքերի տեղ ամենամեծ գմբուխտներն են, որ երբևէ տեսել եմ արթուն կամ երագում: Դրանցից յուրաքանչյուրն այնքան խոշոր է, որ այստեղ կարատները /Կարատ — թանկագին քարերի կշռաչափ, որ հավասար է 0,2 գրամի:/ գործ չունեն: Այդպիսի քարեր կարելի է տեսնել թագավորական թագերի վրա, այլապես դրանք ապակու կտորտանք են:

— Բայց երկու գմբուխտը և երկու սուտակը, թեկուզ ամենախոշորները լինեն, անշուշտ, մայաների ամբողջ գանձը չեն,— նկատեց Յենրին:— Մենք անցել ենք գանձատան շեմքից ներս, միայն թե նրա արկղների բանալիները չունենք...

— Իսկ այ, ծերուկ մայան, որ մնաց երգող ավազներում, երևի իր սրբազան փնջի հանգույցներով կգտներ դրանք,— ասաց Լեոնսիան:— Սակայն, բացի այս երկու կուռքերից և հատակին թափված ոսկորներից, այստեղ ուրիշ ոչինչ չկա:

Այս խոսքերով նա մոտեցավ տղամարդու արձանին ու սկսեց զննել նրա վիթխարի ականջը:

— Բանալու մասին չգիտեմ,— նկատեց նա,— սակայն բանալու անցք կա այստեղ...— Եվ նա ցույց տվեց ականջի միջի անցքը:

Եվ իսկապես, այնտեղ, ուր սովորաբար ականջախեցին է լինում, ականջը կազմված էր համատարած քարից. նրա մեջ միայն մի փոքրիկ անցք կար, որը խիստ հիշեցնում էր կողպեքի անցքը: Իզուր էին Լեոնսիան, Ֆրենսիսը և Յենրին շրջում քարայրում, թխկթխկացնելով պատերն ու հատակը, աշխատելով գտնել դեպի գանձատուն տանող վարպետորեն թաքցրած անցքեր կամ քողարկված ուղիներ:

— Tierra caliente-ի բնակիչների ոսկորներ, երկու կուռք, երկու խոշոր գմբուխտ, երկու նույնպիսի սուտակ և մենք ինքներս՝ ահա այն ամենը, ինչ այստեղ կա,— հանրագումարի բերեց Ֆրենսիսը:— Ահա թե մեզ ինչ է մնում. առաջին, ետ գնալ, Ռիկարդոյին ջորիների հետ բերել այստեղ ու քարայրի մուտքի մոտ ճամբար գարկել. երկրորդ, ծեր ջենթլմենին բերել այստեղ իր սրբազան հանգույցներով հանդերձ, եթե նույնիսկ ստիպված լինենք քարշ տալ նրան ձեռքերի վրա:

— Դու սպասիր այստեղ Լեոնսիայի հետ, իսկ ես կվերադառնամ ու կբերեմ նրանց,— ասաց Յենրին, երբ նրանք, անցնելով երկար միջանցքներով ու հետևում թողնելով մեռյալների շարքերը, վերջապես քարայրից դուրս եկան պայծառ ու արևոտ երկնքի տակ:

Իսկ այդ միջոցին երգող ավազներում պեոնը և նրա հայրը շարունակում էին ծնկաչոք կանգնած մնալ ծերունու գծած շրջանագծի մեջ: Արևադարձային տեղատարափ անձրև էր գալիս, և պեոնը ամբողջ մարմնով դողում էր ցրտից, իսկ ծերունին շարունակում էր աղոթել, առանց մտահոգվելու, թե արդյոք իր անկայուն մարմինը կդիմանա՞ այդպիսի քամուն ու անձրևին: Պեոնը տազնապահար էր ու անտրամադիր, ուստի հենց նա էլ նկատեց այն, ինչը վրիպել էր ծերուկի ուշադրությունից: Սկզբում տեսավ Ալվարես Թորեսին ու Խոսե Մանչեսոյին, որոնք դուրս եկան ջուղալիներից և սկսեցին գողեգող առաջանալ ավազների միջով: Իսկ հետո տեսավ հրաշքը:

Յրաշքն այն էր, որ Թորենս ու Մանչենոն հանգիստ քայլում էին ավազների վրայով, և ավազը լռում էր: Երբ նրանք ծածկվեցին տեսողությունից, պենը երկյուղած մատը դիպցրեց ավազին, բայց դրան չհաջողեց ոչ մի սարսռազդեցիկ ձայն: Նա մատն ավելի խոր խրեց՝ ամեն ինչ առաջվա նման խաղաղ էր. և նույնպես խաղաղ էր, երբ նա ամբողջ ավիով սկսեց հարվածել ավազին. հորը անձրևը ավազը զրկել էր ձայնից:

Պենը ցնցեց հորը և, ստիպելով նրան կտրվել իր աղոթքներից, ասաց.

— Ավազն այլևս չի բղավում: Գերեզմանի պես համր է: Ես իմ աչքերով տեսա, թե ինչպես հարուստ գրինգոյի թշնամին անցավ ավազների միջով: Բայց ասիւր նա շատ մեղավոր մարդ է, այդ Ավարես Թորենսը, և այնուամենայնիվ ավազը լուռ էր: Ավազը մեռել է, այլևս ձայն չունի: Իսկ այնտեղով, ուր մեղավորները կարող են անցնել, մենք էլ կարող ենք անցնել, ծերուկ:

Ծեր հնդիկը սկսեց դողացող ցուցամատով շրջանի մեջ գաղտնագիր նշաններ գծել՝ ավազը ոչ մի ձայն չհանեց. նույնիսկ երբ ծերունին փորձեց գծագրել շրջանից դուրս, ավազը լուռ էր: Ավազը խոնավացել էր, իսկ ավազները կարող են երգել միայն այն ժամանակ, երբ ամբողջովին շիկանում են արևից: Ծերունու մատները արագորեն շարժվում էին սրբազան փնջի հանգույցների վրայով:

— Այստեղ ասված է,— հայտնեց նա,— որ երբ ավազը դադարում է խոսել, կարելի է հանգիստ առաջ գնալ: Մինչև այժմ ես սրբությամբ հետևել եմ աստծու բոլոր պատգամներին: Կհետևեմք նաև սրանից հետո, ուստի առաջ գնանք, տղաս:

Եվ նրանք քայլեցին այնպես արագ, որ շուտով դուրս եկան ավազների շերտից և համարյա հասան Թորենսին ու Մանչենոյին, իսկ սույն արժանավոր զույգը, տեսնելով նրանց, շտապեց թաքնվել թփերի մեջ: Ծերունուն իր որդու հետ առաջ թողնելով և պահպանելով պատկառելի հեռավորություն, սրանք շարժվեցին հայր ու որդու հետևից: Այդ նույն ժամանակ Յենրին, որ ավելի կարճ ճամփա էր ընտրել, չհանդիպեց ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ զույգին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅԻՆԳԵՐՈՐԴ

— Եվ այնուամենայնիվ ես իզուր մնացի Պանամայում. իմ կողմից դա սխալ էր ու թուլության դրսևորում,— ասաց Ֆրենսիսը Լեոնսիային: Նրանք նստել էին քարայրի մուտքի առջև, քարերի վրա, սպասելով Յենրիի վերադարձին:

— Մի՞թե Նյու Յորքի բորսան ձեզ համար այդքան շատ բան է նշանակում,— կոկետությամբ տնազելով նրան, հարցրեց Լեոնսիան: Բայց այդ բառերը միայն մասամբ էին կոկետությունից թելադրված. գլխավորը՝ Լեոնսիան ուզում էր ժամանակ շահել: Նա վախենում էր մենակ մնալ այդ մարդու հետ, որին սիրում էր այնպիսի զարմանալի, իրեն վախեցնող սիրով:

Բայց Ֆրենսիսը չէր ուզում սպասել:

— Ես անկեղծ մարդ եմ, Լեոնսիա: Ասում եմ այն, ինչ մտածում եմ ուղղակի, կարճ բացահայտ...

— Եվ դրանով տարբերվում եք մեզանից՝ իսպանացիներիցս,— ընդհատեց աղջիկը:— Մեզ մոտ ընդունված է ամենահասարակ մտքերը պճնել գունագեղ բառերով:

Ֆրենսիսը համառորեն շարունակեց, ասես աղջիկը չէր ընդհատել նրան:

— Լեոնսիա, ահա հենց դուք էլ պատկանում եք այդպիսի խորամանկների թվին: Ես խոսում եմ ուղղակի և անկեղծ, ինչպես խոսում են տղամարդիկ: Իսկ դուք խորամանկում եք ու խույս տալիս, ինչպես թիթեռն է խուսափում թիթեռնացանցից, որը, պետք է խոստովանել, հատուկ է կանանց, և ես պետք է դրան սպասեի: Բայց և այնպես դա անարդարացի է. . . իմ նկատմամբ: Չէ որ ես անկեղծորեն ասում եմ ձեզ, թե ինչ կա իմ սրտում, և դուք ամեն ինչ հիանալի հասկանում եք: Իսկ ինքներդ ոչինչ չեք ասում ձեր զգացմունքների մասին: Խորամանկում եք ու խույս տալիս: Յետևաբար, դուք ինձ դնում եք աննպաստ վիճակում: Դուք հո գիտեք, որ ես սիրում եմ ձեզ: Ես անկեղծորեն խոստովանեցի դա: Իսկ դուք որևէ բան պատասխանեցի՞ք:

Լեոնսիան նստել էր կարմրած, աչքերը ցած խոնարհած և չգիտեր, թե ինչ ասի:

— Ահա նորից,— չէր հանգստանում Ֆրենսիսը:— Դուք ինձ չեք պատասխանում: Դուք ինձ հետ վարվում եք ջերմ, որի պատճառով ավելի չքնաղ ու ցանկալի եք թվում, քան երբևէ, և այնուամենայնիվ խորամանկում եք և ոչինչ չեք ասում ձեր զգացմունքների ու մտադրությունների մասին: Ինչո՞ւ: Որովհետև կի՞ն եք, կամ իսպանուհի՞:

Նրա խոսքերը մինչև սրտի խորքը ավելոծեցին Լեոնսիային: Դժվարությամբ տիրապետելով իրեն, սակայն արտաքնապես լիակատար անխռովություն պահպանելով, նա հանգիստ նայեց նրան և նույնպես հանգիստ ասաց.

— Ես կարող եմ լինել անզուլուհի, ամերիկուհի կամ ով ուզես, բայց իրերին նայում եմ ուղղակի և անվանում դրանք իրենց անուններով:— Նա լռեց, սառնարյունությամբ մտմտալով, թե ինչ ասի հետո, և նույն սառնարյունությամբ շարունակեց.— Դուք գանգատվում եք, որ ահա ինքներդ ասացիք ձեր սիրո մասին. իսկ ես լռում եմ: Հիմա ես ձեզ կբացատրեմ, և լիովին անկեղծ: Ես սիրում եմ ձեզ...

Ֆրենսիսը ձեռքերը պարզեց դեպի Լեոնսիան, բայց սա ետ վանեց նրան:

— Սպասեցե՛ք,— հրամայաբար ասաց նա:— Ուրեմն, մեզանից ո՞վ է իրեն կնոջ. . . կամ իսպանուհու պես պահում: Չէ որ ես դեռ չեմ վերջացրել: Ես սիրում եմ ձեզ: Եվ հպարտ եմ, որ սիրում եմ ձեզ: Բայց դա դեռ բոլորը չէ: Դուք հարցրիք իմ զգացմունքների ու մտադրությունների մասին: Չզացմունքների հարցին պատասխանեցի: Իսկ ինչ վերաբերում է մտադրություններին, ապա ահա ձեզ իմ պատասխանը. ես պատրաստվում եմ ամուսնանալ Յենրիի հետ:

Այդ անզուսաքսոնական անողորությունը պարզապես շշմեցրեց Ֆրենսիսին, և նա դժվարությամբ հարցրեց.

— Բայց, ի սեր աստծո, բացատրեցե՛ք, ինչո՞ւ:

— Որովհետև ես սիրում եմ Յենրիին,— պատասխանեց նա, համարձակորեն նայելով նրա այքերին:

— Բայց ախր դուք. . . դուք ասացիք, որ սիրում եք ինձ,— դողդոջուն ձայնով արտասանեց նա:

— Ձեզ նույնպես սիրում եմ: Սիրում եմ երկուսիդ էլ: Եվ ես բնավ էլ այնքան վատ կին չեմ. գոնե ինձ միշտ այդպես է թվացել: Եվ մինչև այժմ էլ թվում է, չնայած բանականությունը հուշում է, որ առաքինի կինը չի կարող միաժամանակ սիրել երկու տղամարդու: Թող այդպես լինի: Նշանակում է, ես վատ կին եմ. այդպես եմ ծնվել արդեն, ոչինչ անել չես կարող:

Նա լռեց, բայց Ֆրենսիսը դեռևս ոչ մի խոսք արտաբերել չէր կարող:

— Դե, մեզանից ո՞վ է իրեն անզուսաքսի նման պահում,— հարցրեց աղքիկը թեթև ժպիտով, ոչ այն է մարտահրավեր նետելով, ոչ այն է զվարճանալով նրա շփոթվածությամբ:— Ես ձեզ ասացի իմ զգացմունքների ու մտադրությունների մասին առանց խորամանկելու և խույս տալու:

— Բայց դա անմտություն է,— տաքացած բողբոջեց նա:— Հո դուք չեք կարող, սիրելով ինձ, ամուսնանալ Յենրիի հետ:

— Ըստ երևույթին, դուք ինձ չհասկացաք,— հանդիմանությամբ ասաց Լեոնսիան:— Ես պատրաստվում եմ ամուսնանալ Յենրիի հետ: Ես սիրում եմ ձեզ: Յենրիին էլ եմ սիրում: Հո չեմ կարող ամուսնանալ երկուսիդ հետ: Դա չի թույլատրվում օրենքով: Ուստի ես կամուսնանամ ձեզանից միայն մեկի հետ: Եվ ես ընտրել եմ Յենրիին:

— Այդ դեպքում ինչո՞ւ. . . ինչո՞ւ համոզեցիք ինձ մնալ,— հարցրեց նա:

— Որովհետև սիրում եմ ձեզ: Ախր ես արդեն ասացի:

— Եթե դուք շարունակեք կրկնել այդ խոսքերը, ես կխելագարվե՛մ,— բացականչեց Ֆրենսիսը:

— Երբեմն ինձ էլ է թվում, որ խելագարվում եմ,— ասաց նա:— Եթե կարծում եք, որ ինձ համար հեշտ է անզուսաքսոնական սառնասրտություն պահպանել, սխալվում եք: Դրա փոխարեն ոչ մի անզուսաքս, նույնիսկ դուք, որին այնպես սիրում եմ, չի կարող արհամարհել ինձ, որ ես իմ հոգում

ինչ-որ ամոթալի զգացմունքներ են թաքցնում: Ինձ համար շատ ավելի պակաս ամոթալի է թվում ուղղակի ասել ձեզ այդ մասին: Եթե ձեր կարծիքով դա անգլոսաքսերի հատկությունն է, ինչ արած, այդպես համարեցեք: Կամ թերևս դա իսպանացիների հատկությունն է, կամ էլ ինչ-որ զուտ կանացի բան, որը հատուկ է անձնապես ինձ, իբրև Սոլանոների ընտանիքի ներկայացուցչի, ինձ համար միևնույն է, ինչպես ուզում եք, համարեցեք, քանզի, այո՛, ես իսպանուհի եմ, ես կին եմ. . . Եվ ես Սոլանո ընտանիքի ներկայացուցիչն եմ, չնայած խոսելիս ձեռքերս չեն թափահարում,— կատակով ավարտեց նա կարճ լռությունից հետո:

Ֆրենսիսն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Լեոնսիան «սը՛սս» արեց և երկուսն էլ սկսեցին ականջ դնել. մացառուտներում խշխշոց լսվեց. ինչպես երևում է, մեկը մոտենում էր նրանց:

— Լսեցեք,— արագ շշուշաց աղջիկը և աղաչական շարժումով ձեռքը դիպցրեց նրա արմուկին:— Ես վերջին անգամ անգլոսաքսոնուհի կլինեմ ու ամեն ինչ կասեմ ձեզ: Իսկ հետո միշտ կխորամանկեմ ու խույս կտամ, ինչպես, ձեր կարծիքով, հատուկ է իսպանուհիներին, այդ թվում և ինձ: Եվ այսպես, լսեցեք. ես սիրում եմ Յենրիին, դա ճիշտ է, զուտ ճշմարտություն: Բայց ձեզ ավելի եմ սիրում, շատ, շատ ավելի: Ես կամուսնանամ Յենրիի հետ... որովհետև սիրում եմ նրան և կապված եմ երդումով: Բայց և այնպես ձեզ միշտ ավելի շատ կսիրեմ:

Նախքան Ֆրենսիսը որևէ առարկություն կաներ, մացառուտից ուղիղ նրանց դեմ դուրս եկան մայաների ծեր քուրմը և նրա որդին: Հազիվ նույնիսկ նկատելով Ֆրենսիսին և Լեոնսիային, քուրմն ընկավ ծնկների վրա ու բացականչեց իսպաներեն.

— Իմ աչքերն առաջին անգամ են տեսնում Չիայի աչքերը:

Նա մատները սահեցրեց սրբազան փնջի հանգույցների վրայով ու սկսեց մայաների լեզվով աղոթել: Եվ եթե շրջապատողները կարողանային հասկանալ նրան, ապա կլսեին հետևյալը.

— Օ՛ անմահ Չիա, մեծո՛ր ամուսին աստվածային խցատցլի, որը ոչնչից ստեղծեց բոլոր Էակներին: Օ՛, անմահ ամուսինո՛ր խցատցլի: Դու, որ մայրն ես խոտերի, աստվածային միջուկը աճող սերմի, աստվածուհին անձրևի ու արևի պտղավորող ճառագայթների: Դու, որ սնում ես սերմերը, արմատներն ու պտուղները, որոնք անհրաժեշտ են մարդու կյանքը պահպանելու համար: Օ՛, փառապանծ Չիա, որի բերանը հրամայում է խցատցլի ականջին: Զո՛ք քուրմը խոնարհաբար աղոթում է քեզ: Ներողամիտ եղիր իմ հանդեպ ու ողորմած: Տուր քո բերանից խցատցլի ականջը բացող ոսկե բանալին: Թույլ տուր քո հավատարիմ քուրմին հասնելու խցատցլի գանձերին. . . Ինձ համար չեմ խնդրում, օ՛, աստվածուհի, այլ իմ որդու համար, որին փրկեց գրինգոն: Զո՛ք որդիները,— մայա ցեղը,— վերանում են աշխարհից: Այժմ արդեն նրանց գանձեր հարկավոր չեն: Ես քո վերջին քուրմն եմ: Ինձ հետ միասին կմեռնի և այն, ինչ մարդկանց հայտնի է քո մեծ ամուսնու մասին, որի անունը արտասանում են միայն շշուկով, խորին երկրպագությամբ: Լսիր ինձ, օ՛ Չիա, լսիր ինձ: Երեսի վրա ընկած՝ պաղատում եմ քեզ:

Ծեր քուրմն ամբողջ հինգ րոպե պառկած էր, փռված քարին, ցնցվելով ու գալարվելով ինչպես ընկնավոր, իսկ Լեոնսիան ու Ֆրենսիսը հետաքրքրությամբ նայում էին նրան, ակամայից համակված աղոթքի հանդիսավորությամբ, անհասկանալի էր նրանց համար:

Առանց Յենրիին սպասելու, Ֆրենսիսը նորից ներս մտավ: Նա ու Լեոնսիան քայլում էին առջևից, ճամփա ցույց տալով ծեր քուրմին: Իսկ ծերուկը, թողնելով իր հանգույցները և ինչ-որ շշուշալով ինքն իրեն, հետևում էր նրանց, մինչդեռ պետքը մնաց մուտքը պահպանելու: Երբ նրանք մոտեցան մումիաներին, քուրմը կանգ առավ խորին երկյուղածությամբ. ո՛չ այնքան մումիաների, որքան սրբազան հանգույցների պատճառով:

— Ահա թե ինչ է ասված այստեղ,— ծանրությամբ հեզեց նա, ընտրելով հանգույցներով շաղ եկած թելերից մեկը:— Նրանք չար մարդիկ են եղել, ավագակներ: Նրանց վիճակված է հավետ սպասել քարայրի շեմին, որտեղ պահված է մայա ցեղի գաղտնիքը:

Ֆրենսիսը ծերուկին շտապով անցկացրեց սրա հոր ոսկորների կույտի մոտով ու մտքեց երկրորդ քարայրը, ուր ծեր մայան անմիջապես երեսի վրա փռվեց երկու կուռքի առաջ և երկար ու ջերմեռանդ աղոթում էր: Հետո նա ուշադիր գննեց սրբազան փնջի հանգույցները և հայտնեց Ֆրենսիսին ու Լեոնսիային մայաների լեզվով, թե ինչ էր կարդացել: Ֆրենսիսը նշանով ցույց տվեց, որ ոչինչ չեն հասկացել: Այն ժամանակ ծերուկը կրկնեց կոտրատված իսպաներենով:

— «Չիայի բերանից խցաացլի ականջը»,— այսպես են ասում հանգույցները:

Ֆրենսիսը լսեց այդ խորհրդավոր արտահայտությունը, դիտեց աստվածուհու բերանի մուկ խորությունը, որտորական դանակի ծայրը խրեց կողպեքի անցքը, որ երևում էր աստծու վիթխարի ականջի մեջ, դանակի կոթով թխկթխկացրեց քարին ու հայտնեց, որ արձանը սնամեջ է: Ապա վերադարձավ Չիայի արձանի մոտ և, դանակով թխկթխկացնելով համոզվեց, որ սա էլ է դատարկ: Բայց այստեղ ծեր մայան միթմիթաց:

— «Չիայի ոտքերը հանգչում են դատարկության մեջ»:

Յետաքրքրված դրանով՝ Ֆրենսիսն ստիպեց ծերուկին իր խոսքերն ստուգել հանգույցներով:

— Նրա ոտքերն իրոք խոշոր են,— ծիծաղեց Լենսիսան,— բայց դրանց տակ քարե ամուր հատակն է, և ոչ թե դատարկություն:

Ֆրենսիսը ձեռքով հրեց աստվածուհուն. պարզվեց, որ նա տեղից հեշտությամբ շարժվում է: Գրկելով նրան՝ Ֆրենսիսն սկսեց քաշքշելով շարժել տեղից:

— «Նրանց առաջ, ովքեր ուժեղ են ու աներկյուղ, Չիայի ոտքերը կշարժվեն տեղից»,— կարդաց քուրմը:— Բայց հետո երեք հանգույցներն ասում են. «Չգուշացիր: Չգուշացիր: Չգուշացիր»:

— Դե, հուսանք, որ այդ դատարկությունը, ինչպիսին էլ որ լինի, չի խայթի ինձ,— ծիծաղեց Ֆրենսիսը, գրկից բաց թողնելով աստվածուհուն, որին հաջողվել էր մոտ մի յարդ շարժել տեղից:— Եվ այսպես, պառավ, մի քիչ կանգնիր այստեղ կամ նստիր հանգստացիր: Ախր քո ոտքերը, երևի, լավ հոգնել են. փորձիր հապա այդքան հարյուրամյակ հենվել դատարկությանը:

Լենսիսայի բացականչությունը Ֆրենսիսին ստիպեց նայել այնտեղ, ուր քիչ առաջ կանգնած էր Չիան: Ետ գալով՝ նա քիչ մնաց ընկներ փոսը, որ մինչև այժմ ծածկում էին աստվածուհու ոտքերը: Պարզվեց, որ ժայռի մեջ փորված է ամբողջ մեկ յարդ տրամագծով կլոր մի անցք: Ֆրենսիսն իզուր փորձեց որոշել փոսի խորությունը, ցած գցելով վառած լուցկիներ. դրանք ընկնում էին ու հանգչում, առանց հատակին հասնելու:

— Իսկապես, թվում է, թե անհատակ անդունդ է այստեղ,— նկատեց Ֆրենսիսը, մի փոքրիկ քար նետելով ցած:

Անցավ մի քանի վայրկյան, մինչև որ նրանք լսեցին, թե ինչպես քարը դիպավ ինչ-որ բանի:

— Բայց ախր երևի դա էլ դեռևս հատակը չէ,— նկատեց Լենսիսան:— Քարը կարող էր դիպչել ժայռի որևէ ելուստի և նույնիսկ այնտեղ մնալ:

— Այ սա ճիշտ պատասխան կտա մեզ,— ասաց Ֆրենսիսը և, վերցնելով ոսկորների միջև, հատակին ընկած հինավուրց մուսկետը, ուզում էր ցած գցել:

Բայց ծերուկին ետ պահեց նրան.

— Սրբազան հանգույցներն ասում են. «Ով ոտնձգություն կատարի Չիայի ոտքի տակ գտնվող սրբազան դատարկության դեմ, կմեռնի արագ, ահավոր մահով»:

— Իսկ ես բոլորովին էլ մտադիր չեմ ոտնձգություն կատարել սրբազան դատարկության դեմ,— ծիծաղեց Ֆրենսիսը, մուսկետը մի կողմ շարժելով:— Բայց հիմա ի՞նչ անենք, ծերուկ: Յեշտ է ասել. «Չիայի բերանից խցաացլի ականջը». իսկ ինչպե՞ս անենք: Ծերուկ, շարժիր մատներդ սրբազան հանգույցների վրայով և իմացիր, թե ինչն ինչոց է:

Իսկ քուրմի որդու՝ վիրավոր ծնկներով պեռնի համար ինչեց վերջին ժամը: Ինքն էլ՝ չկասկածելով, նա այդ օրը վերջին անգամ տեսավ արևածագը: Ինչ էլ որ պատահելու լիներ այդ օրը, ինչպիսի ճիգեր էլ որ նա գործադրեր, որպեսզի խույս տա իր ճակատագրից, միևնույն է, այդ օրը կոչված էր վերջինը լինելու նրա կյանքում: Եթե մնար քարայրի մուտքը պահպանելու, անկասկած, կսպանվեր Թորեսի և Մանչենոյի կողմից, որոնք համարյա կրկնակիս գալիս էին նրա հետևից:

Բայց, փոխանակ պահակության կանգնելու, երկչուտ և զգույշ պետնը որոշեց խուզարկել շրջակայքը ու տեսնել, թե արդյոք մոտակայքում թշնամիներ չկա՞ն: Այդպես նա խույս տվեց ցերեկվա լույսով բաց երկնքի տակ մեռնելուց: Բայց պետնի կյանքի սլաքները շարժվում էին առաջ, և նրա համար սահմանված վախճանը ավելի հեռու չէր կամ ավելի մոտիկ, քան որոշել էր ճակատագիրը:

Մինչդեռ նա կհետախուզեր շրջակայքը, Ալվարես Թորեսը և Խոսե Մանչենոն հասան քարայրի մուտքին: Ժայռի քարե դեմքին դրված Զիայի հսկայական սադափե աչքերը խիստ մեծ փորձություն էին սնահավատ կարուկի համար:

— Դու ներս գնա,— ասաց նա Թորեսին,— իսկ ես կմնամ այստեղ հսկելու, որպեսզի ոչ ոք ներս չմտնի:

Եվ Թորեսը, որի երակներում հոսում էր մոլմիաների շարքում հարյուրամյակներ շարունակ ազնվորեն կանգնած իր նախահոր արյունը, նույնպիսի խիզախությամբ մտավ մայաների քարայրը, ինչպես մի ժամանակ նրա նախահայրն էր մտել:

Հագիվ էր նա տեսողությունից ծածկվել, երբ Խոսե Մանչենոն, որը չէր վախենա դավաճանաբար սպանելու ուզածը մարդուն, բայց որը խիստ վախենում էր իր համար անհասկանալի երևույթների հետևում թաքնված անտեսանելի աշխարհից, մոռացավ ժամապահի թիկնապահի իր պարտականությունը և շտապ ծլկեց թփերի մեջ: Այդ միջոցին պետնը, համոզվելով, որ շրջակայքում չարամիտներ չկան, և վառվելով հորից մայաների գաղտնիքներն իմանալու ցանկությամբ, վերադարձավ իր նախկին տեղը: Այստեղ ևս ոչ ոքի չնկատելով, մտավ քարանձավ, չիմանալով, որ կրնկակոխ հետևում է Թորեսին:

Իսկ սա առաջ էր շարժվում անադմուկ և զգույշ, վախենալով իր ներկայությունը մատնել նրանց, ում որ հետևում էր: Եվ հետո նա ուշացավ քարայրում, ապշած մեռյալների գորահանդեսի տեսքից: Սկսեց հետաքրքրությամբ զննել այդ մարդկանց, որոնք մտել էին պատմության մեջ և որոնց համար պատմությունը կանգ էր առել այստեղ, մայաների սրբավայրի նախադասը: Թորեսին հատկապես հետաքրքրեց այն մոլմիան, որ եզրափակում էր շարքը: Նրա և Թորեսի նմանությունը շատ էր ակնբախ, որպեսզի սրա աչքին չզարներ, և Թորեսն անմիջապես կռահեց, որ դա իր հեռավոր նախահայրն է:

Նա դեռևս մտախոհ դիտում էր մեռյալին, երբ հանկարծ լսեց քայլերի ձայն. արագ շուրջը նայեց՝ թաքնվելու տեղ գտնելու համար: Այստեղ նրա գլխում ծագեց հրեշավոր մի միտք: Հանելով նախահոր սաղավարտը, նա դրեց իր գլխին, ապա փաթաթվեց նրա փտած թիկնոցի մեջ, զինվեց ահագին սուսերով ու ոտքերին քաշեց ետ ծալված ճոքերով բոտֆորտները, որոնք քիչ մնաց պատառոտվելին: Ապա նա ինամքով, զրեթե քնքշությամբ, մերկ մոլմիային մեջքի վրա պառկեցրեց մյուս մոլմիաների հետևում, այնտեղ, ուր մուլթը վեր էր ածվում համատարած սևության: Այդ բոլորն անելուց հետո նա գրավեց շարքը եզրափակող հանգուցյալի տեղը, ձեռքը դրեց սրի կողին և անշարժացավ նույն դիրքում, ինչ դիրքում որ կանգնած էր իր նախահայրը:

Շարժվում էին միայն նրա աչքերը, որոնք հետևում էին մեռյալների կրկնակի շարքի միջով դանդաղ ու վախվորած առաջացող պետնին: Հավասարվելով Թորեսին՝ պետնը հանկարծ կանգ առավ և, աչքերը սարսափից լայն չռած, իրար հետևից շշնջաց մայաների աղոթքները: Թորեսին, որի առաջ նա կանգ առավ, ուրիշ ոչինչ չէր մտում, բայց եթե փակ աչքերով լսել ու գուշակել, թե ինչ է կատարվում: Լսելով, որ պետնը շարունակեց ճամփան, Թորեսը փոքր-ինչ թեքվեց նրա կողմը. հենց այդ վայրկյանին պետնը կանգ առավ, սիրտ չանելով մտնել նեղ անցուղին: Ուրախանալով, որ հարմար պահ է, Թորեսը բարձրացրեց սուրը, պատրաստվելով հարվածել, որը կձեռքեր պետնի գանգը:

Չնայած դա ճակատագրի կողմից սահմանված պետնի մահվան օրն էր ու ժամը, բայց նրա կյանքի վերջին վայրկյանը դեռևս չէր լրացել: Նրան վիճակված էր մեռնել ո՛չ այդտեղ, մեռյալների կրկնակի շարքի մեջ, և ո՛չ Թորեսի ձեռքով, քանզի վերջինս ետ տարավ ձեռքը և զենքը դանդաղորեն ցած իջեցրեց, իսկ պետնը շարունակեց իր ճամփան ու ծածկվեց ոլորանի հետևում: Շուտով նա հասավ հորը, Լեոնսիային և Ֆրենսիսին. վերջինս խնդրել էր քուրմին երկրորդ անգամ հանգուցների միջոցով պարզել, թե իսցատցյի ականջը ինչով ու ինչպես կարելի է բանալ:

— Ձեռքդ մտցրու Չիայի բերանը և բանալին հանիր,— հրամայեց ծերուկն իր վեհերոտ որդուն, և սա ակնհայտ տհաճությամբ հնազանդվեց:

— Դե նա քեզ հո չի կծի, չէ՞ որ քարից է,— ծիծաղելով ասաց Ֆրենսիսն իսպաներեն:

— Մայաների աստվածները երբեք քարից չեն լինում,— հանդիմանությամբ նկատեց ծերուկը:— Նրանք թվում են քարեղեն, բայց իսկապես կենդանի են, միշտ կենդանի են եղել, և՛ քարի տակ, և՛ քարի միջով մշտապես կենսագործում են իրենց անհողողոդ կամքը:

Լեոնսիան, ցնցվելով, ետ ընկրկեց քուրմից և, թևանցուկ անելով Ֆրենսիսին, սեղմվեց նրան, ասես պաշտպանություն էր փնտրում նրա մոտ:

— Ինչ-որ ահավոր բան պետք է պատահի, ես կանխագգում եմ,— ականա դուրս թռավ նրա շուրթերից:— Ինձ դուր չի գալիս լեռների ընդերքում, մեռյալներով շրջապատված այս վայրը: Ես սիրում եմ կապույտ երկինք, քնքուշ արև ու անծայրածիր ծով: Այստեղ ինչ-որ սարսափելի բան պետք է պատահի մեզ: Կանխագգում եմ, ինչ-որ բան պիտի պատահի:

Ֆրենսիսն սկսեց հանգստացնել նրան, իսկ պեոնի կյանքի ժամացույցն արդեն վերջին վայրկյաններն էր հնչեցնում: Եվ երբ, օգնության կանչելով իր ողջ քաջությունը, նա ձեռքը մտցրեց աստվածուհու բերանը, նրա կյանքի վերջին վայրկյանը լրացավ, և մահվան ժամը հնչեց: Ահավոր ճիչով նա ձեռքը դուրս քաշեց ու հայացքը հառեց իր ենթադաստակին, որտեղ հենց ճիշտ զարկերակի վրա կարմրին էր տալիս մի կաթիլ արյուն: Օձի բծավոր գլուխը ծիծաղելի լեզվակի նման դուրս ընկավ աստվածուհու բերանից ու նորից թաքնվեց մութ խոռոչում:

— Ի՞ժ էր,— բղավեց Լեոնսիան, ճանաչելով օձին:

Պեոնը, որ նույնպես ճանաչեց օձին ու հասկացավ իր անխուսափելի մահը, սարսափահար ետ-ետ գնաց, սայթաքեց ու ցած թռավ անդունդ, որն այդքան դարեր ծածկում էին Չիայի ոտքերը:

Մի ամբողջ րոպե բուրբ լուռ էին, ապա ծեր քուրմը շշնջաց.

— Ես գայրացրի Չիային, և նա սպանեց իմ որդուն:

— Մի՛ հավատացեք դրան,— նկատեց Ֆրենսիսը, աշխատելով հանգստացնել Լեոնսիային:— Այս ամենը միանգամայն բնական է ու բացատրելի: Ի՞նչ զարմանալի բան կա, որ օձը բնակություն է հաստատել ժայռի խոռոչում: Դա հաճախ է պատահում: Եվ ի՞նչ զարմանալի բան կա, որ օձից խայթված մարդը ետ ընկրկեց: Եվ, վերջապես, ի՞նչ կա զարմանալու, որ նա սայթաքեց ու ընկավ անդունդը, որը գտնվում էր նրա հետևում...

— Այդ դեպքում այստե՞ղ էլ զարմանալի բան չկա,— բացականչեց Լեոնսիան, ցույց տալով անցքից կլկլացող գուլալ ջուրը, որը շուտով սկսեց շատրվանել:— Ծերունին ճշմարիտ է: Անգամ քարն է իբրև զենք ծառայում աստվածներին՝ իրենց անհողողոդ կամքը կատարելու համար: Քուրմը մեզ նախագգուշացրեց: Չէ՞ որ նա այդ բանը կարողաց իր սրբազան հանգույցների օգնությամբ:

— Անմտություն,— փնչացրեց Ֆրենսիսը:— Ոչ մի աստծու կամք էլ չկա այստեղ, այլ լույս մայաների հինավուրց քուրմերի կամքը, որոնք հնարել են և իրենց աստվածներին, և այս բանը: Ինչ-որ տեղ խորքում պեոնի մարմինը հարվածեց քարե ջրարգելակի լծակին, և ստորերկրյա աղբյուրն սկսեց խփել: Ահա թե որտեղից է այս ջուրը: Այսպիսի հրեշավոր բերանով աստվածուհիներ չեն լինում, դրանք կարող էին հորինել իսկապես հրեշավոր երևակայությամբ մարդիկ: Միևնույն իսկական աստվածուհին պետք է գեղեցիկ լինի, քանզի գեղեցկությունն ու աստվածությունը անբաժանելի են իրարից: Միայն մարդն է ընդունակ դևեր հորինել՝ իրենց ամբողջ այլանդակությամբ հանդերձ:

Ջուրն այնպիսի ուժով էր խփում փոսից, որ համարյա արդեն հասնում էր նրանց ոտքի կոճերին:

— Ոչ մի վախենալու բան չկա,— ասաց Ֆրենսիսը:— Ես նկատեցի, որ ամբողջ ճանապարհի ընթացքում հատակը քարայրներում ու միջանցքներում թեք է: Այդ հին հնդիկները եղել են լավ ինժեներներ ու ամեն ինչ նախատեսել հոսքի համար: Տեսնում եք, թե ջուրը միջանցքով ինչպես է հոսում դեպի ելքը: Հապա, ծերուկ, կարդա քո հանգույցներով, թե որտե՞ղ է գանձը:

— Որտե՞ղ է իմ որդին,— պատասխանի փոխարեն խուլ, հուսահատությամբ լի ձայնով հարցրեց ծերունին:— Չիան սպանեց իմ միակ որդուն: Նրա մոր համար ես խախտեցի մայաների օրենքը և

մեր ցեղի մաքուր արյունը արատավորեցի tierra caliente ցեղի կնոջ անմաքուր արյամբ: Ախր ես մեղք գործեցի, որպեսզի նա աշխարհ գար, դրա համար էլ նա երիցս թանկ էր ինձ համար: Այժմ ես ի՞նչ գործ ունեմ գանձի հետ: Այլևս ես որդի չունեմ: Մայաների աստվածների բարկությունը փլվեց իմ գլխին:

Ջուրն առաջվա պես ոռնոցով, խլթխլթոցով ու Ֆշշոցով շատրվանում էր, ցույց տալով ներքևի մեծ ճշունքը: Առաջինը Լեոնսիան նկատեց, որ քարայրում ջրի մակարդակը բարձրանում է:

— Ջուրը համարյա արդեն ծնկներիս է հասնում,— ասաց նա Ֆրենսիսին:

— Ժամանակն է այստեղից դուրս գալու,— համաձայնեց վերջինս, հասկանալով դրուժյան ամբողջ լրջությունը:— Գուցե իսկապես էլ հոսքը լավ է հաշված, բայց, ինչպես երևում է, փուլգումը փակել է ջրի ճանապարհը: Մյուս ցած իջնող սրահներում ջուրն, անշուշտ, ավելի շատ է, քան այստեղ: Սակայն այստեղ էլ դրա մակարդակը բավական բարձր է: Իսկ դուրս տանող ուրիշ ճամփա չկա: Գնացի՞նք:

Հրելով Լեոնսիային, որպեսզի առջևից գնա, նա բռնեց վշտից ընկճված քուրմի ձեռքից ու քաշեց իր հետևից: Այնտեղ, ուր սրահը թեքվում էր ուղիղ անկյան տակ, ջուրը հասավ նրանց ծնկներին: Իսկ մուսիաների քարայրում սրանք արդեն մինչև գոտկատեղը ջրի մեջ էին:

Եվ այստեղ քար կտրած Լեոնսիայի առաջ ջրից վեր բարձրացավ նախ սաղավարտավոր մի գլուխ, ապա հնօրյա թիկնոցի մեջ փաթաթված մարմին: Բայց դա դեռևս չէր զարմացնի Լեոնսիային, որովհետև բոլոր մյուս մուսիաներն էլ էին ընկել փոթորկվող ջրերից: Մինչդեռ այդ մուսիան շարժվում էր, շնչելով ընդհատ-ընդհատ, և կենդանի աչքերով նայում Լեոնսիայի աչքերին:

Դա արդեն խիստ անսովոր տեսարան էր սովորական մարդու համար. Լեոնսիայի դեմ կանգնած էր մի ռազմիկ, որը մահացել էր չորս հարյուր տարի առաջ և այժմ մեռնում էր երկրորդ անգամ ջրահեղձի մահով: Լեոնսիան ճչաց, ուզում էր առաջ նետվել, բայց իսկույն էլ գլխապատառ ետ վազեց քարայր. Ֆրենսիսը, որ ապշել էր Լեոնսիայից ոչ պակաս, ետ քաշվեց ու հանեց ավտոմատ-ատրճանակը: Բայց այդ թուպիկն հանգուցյալը, վերջապես ոտքի տակ շոշափելով հատակը, դուրս լողաց արագընթաց հոսանքի միջից, ոտքի կանգնեց ու բղավեց.

— Մի՛ կրակեք: Այդ ես եմ, Թորեսը: Ես նոր քարայրի մուտքի մոտ էի: Ինչ-որ բան է պատահել: Այնտեղից անհնար է անցնել: Ջուրը գլխից էլ բարձր է: Նույնիսկ մուտքը չի երևում: Լսվում է, թե քարերն ինչպես են ցած գլորվում:

— Դե, իսկ դու այստեղից էլ չես անցնի,— ասաց Ֆրենսիսը, ատրճանակն ուղղելով նրա վրա:

— Այժմ կռվելու ժամանակը չէ,— առարկեց Թորեսը:— Հարկավոր է ամենից առաջ կյանքը փրկել, իսկ կռվել միշտ էլ կարող ենք, եթե դրա անհրաժեշտությունն զգացվի:

Ֆրենսիսը տատանվեց:

— Իսկ ի՞նչ է պատահել Լեոնսիային,— հարցրեց խորամանկ Թորեսը:— Ես տեսա, թե նա ինչպես ետ էր փախչում: Նրան ոչինչ չի՞ պատահել:

Ներելով Թորեսին՝ Ֆրենսիսը նորից ուղղվեց դեպի կուռքերի քարայրը, ծերուկին քարշ տալով իր հետևից: Թորեսը հետևեց նրան: Լեոնսիան նորից սարսափից ճչաց:

— Մի՛ վախենաք, սա Թորեսն է,— հանգստացրեց նրան Ֆրենսիսը:— Ես էլ անասելի վախեցա, երբ տեսա նրան: Բայց նա նույնպիսի կենդանի մարդ է, ինչպես մենք բոլորս: Եթե դանակով ծակենք, նրանից արյուն կհոսի: Հապա, ծերուկ: Մենք բոլորովին էլ չենք ուզում խեղդվել այստեղ առնետների նման: Մայաների ոչ բոլոր գաղտնիքներն են դեռևս բացված: Կարողա հանգուցներով և մեզ դուրս բեր այստեղից:

— Ճամփան տանում է ոչ թե դուրս, այլ ներս,— դողդոջուն ձայնով մրթմրթաց քուրմը:

— Մեզ համար միևնույն է, միայն թե մի կերպ դուրս պրծնենք այստեղից: Բայց ինչպե՞ս ընկնենք ներս:

— «Չիայի բերանից խցացոյլի ականջը»,— եղավ պատասխանը:

Հանկարծ մի սարսափելի, հրեշավոր միտք ծագեց Ֆրենսիսի գլխում:

— Թորես,— ասաց նա,— այս քարե լեռի բերանում բանալի կա կամ դրա նման մի բան: Դուք բոլորից մոտիկ եք կանգնած նրան: Մտցրեք այնտեղ ձեր ձեռքը և դուրս հանեք:

Լեռնախան խեղդեց սարսափի ճիչը, գլխի ընկնելով, թե Ֆրենսիսն ինչպիսի վրեժ է ուզում լուծել: Բայց Թորեսը չնկատեց դա և ուրախ-ուրախ գնաց դեպի աստվածուհին այս խոսքերով:

— Ուրախ եմ միայն ձեզ օգտակար լինել:

Սակայն օրինավորության զգացումը թույլ չտվեց Ֆրենսիսին գործը մինչև վերջ հասցնել:

— Սպասեցե՛ք,— կտրուկ հրամայեց նա և ինքը նետվեց դեպի կուռքը:

Եվ Թորեսը, որն սկզբում տարակուսանքով նայեց նրան, շուտով հասկացավ, թե ինչպիսի վտանգից խույս տվեց: Ֆրենսիսը ասորճանակով մի քանի անգամ կրակեց աստվածուհու քարե բերանի մեջ, մինչդեռ ծեր քուրմը կտնքար. «Սրբապղծություն»: Ապա, ձեռքը մինչև ուսը փաթաթելով կուրտկայի մեջ, մտցրեց աստվածուհու բերանը և պոչից բռնած դուրս բերեց վիրավոր օձին: Մի քանի արագ թափահարում, և նա օձի գլուխը ջնջխեց, զարկելով կուռքի կողին:

Ձեռքը մինչև ուսը փաթաթելով կուրտկայով, զգուշության համար, որ կարող է երկրորդ օձ լինել այնտեղ, Ֆրենսիսը նորից ձեռքը մտցրեց աստվածուհու բերանն ու դուրս հանեց ոսկե՝ խնամքով հղկած մի հեռանիկ, որն իր ձևով ու չափով համապատասխանում էր Խցատցի ականջի անցքին: Ծերուկը ցույց տվեց ականջը, և Ֆրենսիսն այսպես կոչված բանալին մտցրեց անցքի մեջ:

— Ճիշտ ինչպես ավտոմատում,— նկատեց նա, երբ հեռանիկն ընկավ անցքի մեջ:— Տեսնե՛ք հիմա ի՞նչ է լինելու: Հետևեցե՛ք ջրին, երևի անմիջապես ետ քաշվի:

Բայց ջուրը շարունակում էր ամբողջ ուժով փրփրել: Հանկարծ Թորեսն ինչ-որ ճիշ արձակեց ու ցույց տվեց պատը, որից անջատվեց մի վիթխարի զանգված ու դանդաղորեն սողաց վերև:

— Ահա՛ ելքը,— բղավեց Թորեսը:

— Մուտքը, ինչպես ասաց ծերուկը,— ուղղեց Ֆրենսիսը:— Դե, ինչ ուզում է լինի, գնանք:

Նրանք անցան պատի միջով ու բավական երկար խորացան նեղ միջանցքի մեջ, երբ հանկարծ ծեր մայան «Որդի՛ս» աղաղակելով շուռ եկավ ու նետվեց դեպի ետ:

Պատի բարձրացած մասն արդեն իջել էր իր տեղը, և քուրմը դժվարությամբ փորսող տալով միայն անցավ նրա տակով: Մի վայրկյան ևս, և պատն ընդունեց իր նախկին դիրքը: Եվ քարերն այնպես ճշգրիտ հագան իրար մեջ, որ իսկույն դադարեց կուռքերի քարայրից հորդող ջրի հոսանքը:

Եթե չհաշվենք ժայռի տակից հոսող փոքրիկ առվակը, ապա դրսից ոչ մի նշան չկար, թե ինչ է կատարվում ներսում: Մոտենալով քարայրի մուտքին՝ Հենրին և Ռիկարդոն նկատեցին այդ առվակը, և Հենրին ասաց.

— Սա ինչ-որ նոր բան է: Երբ ես հեռացա, այստեղ ջուր չկար:

Մի թույն հետո նա նկատեց թարմ փլվածքը:

— Այստեղ քարայրի մուտքն էր,— ասաց նա:— Այժմ չկա: Հետաքրքիր է, թե ո՞ւր են կորել նրանք:

Եվ ասես ի պատասխան նրա խոսքերի՝ փրփրուն հոսանքը լեռան ընդերքից դուրս հանեց մարդու մի դիակ: Հենրին ու Ռիկարդոն նետվեցին առաջ և դիակը հանեցին ջրից: Ճանաչելով ծեր քուրմին, Հենրին նրան պառկեցրեց բերանքսիվայր, ծունկի իջավ նրա կողքին ու սկսեց ճոճել, ինչպես ճոճում են ջրահեղձներին:

Անցավ մոտ տասը թույն, մինչև որ ծերունին սկսեց կյանքի նշաններ ցույց տալ, և էլի նույնքան, մինչև որ բաց արեց աչքերն ու վայրի հայացքով նայեց իր շուրջը:

— Որտե՞ղ են նրանք,— հարցրեց Հենրին:

Ծեր քուրմն ինչ-որ բան քրթանջաց մայաների լեզվով, բայց Յենրին ցնցեց նրան ու ստիպեց ուշքի գալ:

— Չկա, ոչ ոք չկա...— բացատրեց նա իսպաներեն:

— Ո՞վ չկա,— հարցրեց Յենրին, մի անգամ էլ ցնցեց նրան, որպեսզի վերադարձնի հիշողությունը, և նորից կրկնեց իր հարցը:

— Իմ որդին չկա: Չիան սպանեց նրան: Չիան սպանեց իմ որդուն, նա սպանեց բոլորին:

— Այդ ո՞ր բոլորին:

Յարկ եղավ ծերուկին նորից ցնցել ու նորից կրկնել հարցը:

— Ջահել, հարուստ գրինգոյին, որն իմ որդու բարեկամն էր, ջահել, երիտասարդ գրինգոյի թշնամուն, որի անունը Թորես էր, և Սոլանո ընտանիքի ջահել կնոջը, որի պատճառով այս ամենը պատահեց: Ես ձեզ նախագգուշացրի: Նա մեզ հետ չպիտի գար: Կանայք միշտ էլ անեծք են բերում տղամարդկանց գլխին: Նա զայրացրեց աստվածուհուն. ախր Չիան նույնպես կին է: Չիայի լեզուն թունավոր օձ է: Եվ Չիան իր լեզվով սպանեց իմ որդուն: Ու լեռը ամբողջ մի օվկիանոս թափեց մեր գլխին: Եվ բոլորը կործանվեցին: Բոլորին սպանեց Չիան: Վա՛յ ինձ: Ես զայրացրի աստվածներին: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Եվ վա՛յ բոլորին, ովքեր կփնտրեն սրբազան գանձը, որպեսզի հափշտակեն մայաների աստվածներից:

ԳՆՈՒՆ ՏԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Կանգնած ժայռի տակից հոսող ջրի և փլված քարակույտերի միջև՝ Յենրին ու Ռիկարդոն փորձում էին շտապ կարգով հասկանալ կատարվածը: Իսկ նրանց կողքին, գետնին փռված, հառաչում ու աղոթում էր մայաների վերջին քուրմը: Յենրին սկսեց ցնցել ու թափահարել ծերուկին, որպեսզի գոնե փոքր-ինչ պարզի նրա գիտակցությունը, բայց միայն խառնաշփոթ թոթովանքներ լսեց քարայրում կատարվածի մասին:

— Օձը միայն սրա որդուն է կծել, և միայն նա է ընկել այդ անցքը,— հուսավառ ձայնով ասաց Յենրին:

— Միանգամայն ճիշտ է,— հաստատեց Ռիկարդոն:— Մնացածները թռչվել են միայն ինչպես հարկն է: Դատելով սրա խոսքերից, ուրիշ ավելի սարսափելի բան չի պատահել:

— Եվ միանգամայն հնարավոր է, որ նրանք այժմ նստած են որևէ քարայրում, որտեղ ջուրը չի հասնում,— շարունակեց իր միտքը Յենրին:— Այ լավ կլիներ, եթե մեզ հաջողվեր մաքրել քարայրի մուտքը և ջրի առջևը բանալ: Եթե նրանք ողջ են, կարող են դեռևս շատ օրեր դիմանալ. չէ՞ որ արագ մահն ամենից առաջ վրա է հասնում ջրի պակասությունից, իսկ նրանք ջուր ունեն ավելի, քան անհրաժեշտ է: Միևնույն առանց սննդի կարելի է բավական երկար դիմանալ: Բայց ահա թե ինչն է ինձ զարմացնում. ինչպե՞ս է Թորեսն ընկել այնտեղ:

— Յետաքրքիր է՝ նրա շնորհիվ չէ՞ արդյոք, որ կարունները հարձակվեցին մեզ վրա,— նկատեց Ռիկարդոն:

Բայց Յենրին չուզեց այդ հարցի մեջ խորանալ:

— Կարող է պատահել, բայց հիմա դրա ժամանակը չէ: Ամենից առաջ պետք է մտածել լեռան ընդերքը թափանցելու մասին, որպեսզի փրկենք նրանց, եթե դեռևս ողջ են: Ես և դու մեկ ամսում էլ չենք կարող այս քարակույտերը մաքրել: Եթե մի հիսուն մարդ լինեինք, ապա, աշխատելով երկու հերթ, գիշեր ու ցերեկ, կարող էինք քարայրը երկու օրվա ընթացքում բացել: Այսպիսով, այժմ մեզ համար գլխավորը մարդիկ ճարելն է: Ամենից առաջ հենց դրանով էլ պետք է զբաղվենք: Հիմա ես կնստեմ ջրի ու կգնամ այդ կարունների մոտ. կխոստանամ Ֆրենսիսի ամբողջ չեքերի գրքույկը, եթե գան այստեղ մեզ օգնելու: Իսկ եթե բան դուրս չգա, կգնամ Սան Անտոնիո ու այնտեղ մարդիկ կհավաքեմ: Եվ այսպես, դրանով կզբաղվեմ ես: Այդ միջոցին դու մաքրիր կածանը և այստեղ բեր բոլոր պեռներին՝ ջրիկների, սննդամթերքի ու ճամբարային պարագաների հետ միասին: Եվ

ականց դիր, թե սարի ներսից թխկոց չի՞ լսվում. չէ՞ որ նրանք կարող են թխկոցակոցով իմաց տալ իրենց մասին:

Եվ այսպես, Յենրին իր ջորու գլուխն ուղղեց դեպի կարունների գյուղը. ի մեծ դժգոհություն ջորու և ի մեծ զարմանս կարունների, որոնք հանկարծ թշնամիներ տեսան իրենց ամրոցում, ավելի ճիշտ՝ մի թշնամի, և այն էլ նրանցից, որոնց հենց վերջերս փորձում էին ոչնչացնել: Նրանք ծալապատիկ նստել էին իրենց խրճիթների մոտ և ծուլորեն տաքանում էին արևի տակ, քնկոտ անտարբերության ներքո քողարկելով իրենց զարմանքը, որը ասեղի նման ծակծկոտում էր նրանց ու գրգռում ոտքի ցատկելու: Ինչպես միշտ, սպիտակ մարդու խիզախությունը շփոթեցրեց վայրենի մետիսներին ու գրկեց գործելու ընդունակությունից: Անշտապ շարժելով ուղեղները նրանք եկան այն եզրակացության, որ միայն իրենցից մի գլխով բարձր, խիզախ ու այնպիսի զորությամբ օժտված մարդը, որի նմանը երազում անգամ չէին տեսել, կարող էր սիրտ անել հոգևած ջորիով մտնել թշնամական բազմամարդ գյուղը:

Նրանք խոսում էին ջարդված իսպաներենով, այնպես որ Յենրին հասկացավ, և նրանք էլ իրենց հերթին հասկացան նրա իսպաներեն խոսքը: Սակայն սրբազան սարում կատարված դժբախտության մասին արված պատմությունը ոչ մի տպավորություն չթողեց: Նրանք պաղ դեմքերով լսեցին տուժածներին օգնության գնալու խնդիրը ու դրա համար լավ վճարելու խոստումը և լոկ ուսները թոթվեցին անտարբերությամբ:

— Եթե սարը կուլ է տվել ձեր գրինգոներին, ուրեմն աստծու կամքն այդպես է: Իսկ ո՞վ ենք մենք, որ դեմ գնանք նրա կամքին,— պատասխանեցին նրանք:— Մենք աղքատ մարդիկ ենք, բայց ոչ ոքի համար չենք աշխատի և մանավանդ չենք ուզում աստծու կամքին հակառակ գնալ: Չէ որ ամեն ինչում, որ պատահել է, իրենք գրինգոներն են մեղավոր: Սա նրանց երկիրը չէ: Եվ իզուր են բարձրանում մեր սարերը: Թող հիմի իրենք էլ փորձանքից դուրս պրծնեն, քանի որ աստված բարկացել է նրանց վրա: Իսկ մենք առանց այդ էլ շատ հոգսեր ունենք. հենց միայն անհնազանդ կանայք բավական են:

Սիեստայի ժամը վաղուց էր անցել, որ Յենրին արդեն երկու ջորի փոխած, երրորդով մտավ դեռևս քնկոտ Սան Անտոնիո: Գլխավոր փողոցում, դատարանի ու բանտի կիսաճամփին, նա տեսավ ոստիկանապետին և փոքրիկ, հասուլիկ դատավորին, որոնց հետևից քայլում էին մի տասը ուղեկցորդ ժանդարմներ և երկու դժբախտ պեոն, որոնք փախել էին Սանթոնում գտնվող ագարակից: Յենրին կանգնեցրեց իր ջորին և սկսեց դատավորին ու ոստիկանապետին շարադրել իր խնդրանքը՝ օգնություն ցույց տալու: Միևնույն ժամանակ կիսոսեր, ոստիկանապետն աննկատ աչքով արեց դատավորին՝ իր դատավորին, իր դրածոյին, որը հոգով ու մարմնով նվիրված էր նրան:

— Այո, իհարկե, մենք ձեզ կօգնենք,— ասաց ոստիկանապետը, ձգվելով ու հորանջելով:

— Ուրեմն, ե՞րբ կարող եք ինձ մարդիկ տալ,— անհամբերությամբ հարցրեց Յենրին:

— Ինչ վերաբերում է դրան, ապա մենք այժմ շատ ենք զբաղված,— ծուլ անպատկառությամբ հայտարարեց ոստիկանապետը:— Մի՞թե այդպես չէ, հարգարժան դատավոր:

— Այո, մենք շատ ենք զբաղված,— հաստատեց նա, ուղղակի հորանջելով Յենրիի երեսին:

— Եվ զբաղված կլինենք էլի որոշ ժամանակ,— շարունակեց ոստիկանապետը:— Շատ ենք ցավում, բայց ոչ վաղը, ոչ մյուս օրը մտածել իսկ չենք կարող օգնություն ցույց տալու մասին: Բայց այ փոքր-ինչ ավելի ուշ...

— Ասենք, ծնունդին,— մեջ մտավ դատավորը:

— Այո, այո, ծնունդին,— հաստատեց ոստիկանապետը, քաղաքավարությամբ գլուխ տալով:— Մոտավորապես ծնունդին անցեք, և եթե այդ ժամանակ գործներս ավելի պակաս լինի, միգուցե և մտածենք այդպիսի արշավախումբ կազմելու մասին: Իսկ առայժմ գնաք բարով, սենյոր Մորգան:

— Դուք լո՞ւրջ եք ասում,— հարցրեց Յենրին՝ բարկությունից ծոված դեմքով:

— Երևի ահա ճիշտ այսպիսի դեմք է ունեցել սա սենյոր Ալֆարո Սոլանոյի մեջքին դավաճանական հարված հասցնելիս,— չարագուշակ տեսքով բարբառեց ոստիկանապետը:

Յենրին այդ վիրավորանքը ականջի հետև գցեց. նա ուրիշ բանի մասին Էր մտածում:

— Ես կատեմ, թե դուք ով եք,— բորբոքվեց նա՝ ազնիվ գայրույթով համակված:

— Չգուշացե՛ք,— նախագգուշացրեց նրան դատավորը:

— Թքել եմ ձեզ վրա,— նետեց Յենրին:— Դուք ինձ ոչինչ չեք կարող անել: Պանամայի պրեզիդենտն է ներել ինձ: Իսկ դո՛ւք, դո՛ւք ողորմելի տականքներ եք, ոչ այն է մարդիկ, ոչ այն է խոզեր, գլուխ հանելը դժվար է:

— Խնդրեմ շարունակեցեք, սենյոր,— ասաց ոստիկանապետը, նրբակիրթ քաղաքավարության տակ կատաղությունը թաքցնելով:

— Դուք չունեք իսպանացիների կամ կարաիբների առաքինություններից ոչ մեկը, մինչդեռ երկու ցեղերի արատներն էլ ժառանգել եք առատորեն: Խոզեր եք դուք և ոչ թե մարդիկ, ահա թե ովքեր եք դուք:

— Վերջացրի՞ք, սենյոր: Ամեն ինչ ասացիք մինչև վե՛րջ,— շողորթությամբ հարցրեց ոստիկանապետը ու նշան արավ ժանդարմներին. սրանք հետևից հարձակվեցին Յենրիի վրա ու գինաթափ արին:

— Նույնիսկ Պանամայի պրեզիդենտը չի կարող ներում շնորհել մի հանցագործի, որը դեռ հանցագործություն չի կատարել: Ճիշտ չէ՞, դատավոր,— հարցրեց ոստիկանապետը:

— Իսկ սա նոր հանցագործություն է,— պատրաստակամությամբ ձայնակցեց դատավորը, կես խոսքից հասկանալով ոստիկանապետի ակնարկը:— Այս շուն գրինգոն վիրավորանք հասցրեց օրենքին:

— Այդ դեպքում մենք կդատենք նրան, և կդատենք անմիջապես, տեղնուտեղը: Յարկ չկա վերադառնալ դատարան ու նորից նիստ սկսել՝ ինչո՞ւ նեղություն կրենք: Կդատենք սրան այստեղ, դատավճիռ կկայացնենք ու կշարունակենք ճամփան: Ես տանը մի շիշ լավ գինի ունեմ:

— Ես գինու սիրահար չեմ,— շտապեց առաջարկը մերժել դատավորը:— Կգերադասեի մեակալը: Իսկ առայժմ, քանի որ ես և՛ վկան եմ, և՛ վիրավորանքի գոհը, և քանի որ կարիք չկա հետագա ցուցմունքների, բացի նրանցից, որ ունեմ իմ տրամադրության տակ, ապա մեղադրյալին ճանաչում եմ մեղավոր: Ի՞նչ պատիժ կառաջարկեիք, սենյոր Մարիանո Վերքարա-ի-իքոս:

— Մեկ օր ոտքերը կոճղերի մեջ դնել, որպեսզի այս գրինգոյի հույժ տաք գլուխը հովանա,— պատասխանեց ոստիկանապետը:

— Յենց այդպիսի դատավճիռ էլ կկայացնենք,— հայտարարեց դատավորը:— Եվ այն ուժի մեջ է մտնում անմիջապես: Ժանդարմներ, տարեք բանտարկյալին ու ոտքերը դրեք կոճղերի մեջ:

Լուսաբացը Յենրիին գտավ կոճղերի մեջ, որոնցում արդեն անց Էր կացրել տասներկու ժամ: Նա պառկած Էր մեջքի վրա ու քնած: Բայց նրա քունը տագնապալից Էր. մղձավանջային երազները տանջում էին նրան, նա տեսնում Էր լեռան ընդերքում բանտարկված իր բարեկամներին, միտքը հոգսերն էին տանջում, իսկ մարմինը՝ անթիվ-անհամար մլակների խայթոցները: Եվ այդպես, շուռումուռ գալով, գալարվելով ու քշելով թևավոր տանջողներին, նա վերջապես արթնացավ: Իսկ արթնանալով, մեկեն հիշեց, թե ինչ փորձանք է եկել իր գլխին և սկսեց հայիոյել իրեն ամեն տեսակ խոսքերով: Սաստիկ գայրացած հազարավոր մլակների թունավոր խայթերից, նա այնպիսի անեծքներ Էր տեղում, որ գրավեց ուշադրությունը մոտիկից անցնող մի անցորդի, որը գործիքներով լիքը մի արկղ Էր տանում: Դա մի արծվաքիթ, վայելչակազմ երիտասարդ Էր՝ հագած Միացյալ Նահանգների օդաչուի գինվորական համազգեստ: Նա մոտեցավ Յենրիին, ականջ դրեց և սկսեց հետաքրքրությամբ ու հիացմունքով զննել նրան:

— Սիրելի բարեկամ,— ասաց նա, երբ Յենրին մի վայրկյան լռեց՝ շունչը ետ բերելու համար:— Անցյալ գիշեր, երբ ես էլ խրվեցի ու մնացի այստեղ, վրանի պարագաների կեսից ավելին թողնելով ինքնաթիռի մեջ, ինքս էլ մի լավ հիշոցախաղ սարքեցի: Բայց ձերի համեմատությամբ դա մանկական թոթովանք Էր: Ես հիացած եմ ձեզանով, սը՛ր: Դուք կտանեք ուզածդ գինվորականին:

Իսկ հիմա, եթե չեք առարկում, արդյոք չէի՞ք կարող ամեն ինչ կրկնել սկզբից, որպեսզի ես կարողանայի սպառազինվել դրանով ու գործի դնել, երբ թունդ արտահայտություններ պետք լինեն ինձ:

— Իսկ ո՞վ եք դուք, գրողը տանի,— հարցրեց Յենրին:— Եվ ի՞նչ եք քարշ գալիս այս կողմերում:

— Չեմ կարող նեղանալ ձեզանից, սըր,— ժպտալով ասաց օդաչու:— Երբ մարդու դեմքն այդպես ուռած է, լիակատար իրավունք ունի անքաղաքավարի լինելու: Ո՞վ է այդպես նախշել ձեզ: Դե, իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա առայժմ սատանայի մոտ պաշտոն չունեմ, իսկ ահա այստեղ, երկրի վրա հայտնի եմ իբրև Պարսոնս, լեյտենանտ Պարսոնս: Առայժմ դժոխքում էլ ոչինչ չեմ անում, իսկ Պանամայում եմ գտնվում, որպեսզի այսօրվա օրը Ատլանտյան օվկիանոսից թռչեմ մինչև Խաղաղ օվկիանոս: Արդյոք չե՞մ կարող նախքան ճամփա ընկնելը որևէ բանով օգտակար լինել ձեզ:

— Իհարկե, կարո՞ղ եք,— բացականչեց Յենրին:— Որևէ գործիք հանեք ձեր արկղից ու բացեք իմ կոճղերի կողպեքը: Եթե ստիպված լինեմ էլի նստել այստեղ, ապա ռևմատիզմ կստանամ: Իմ ազգանունը Մորգան է, և ոչ ոք ինձ չի ծեծել. այս ամենը մժեղների կծելու հետևանքն է:

Լեյտենանտ Պարսոնսը պնդողակի բանալու մի քանի հարվածով հին կողպեքը պոկեց կոճղերի վրայից ու օգնեց Յենրին տեղից բարձրանալու: Թմրած ոտքերը շփելով՝ Յենրին օդաչուին շտապ պատմեց, թե ինչ փորձանքի մեջ են ընկել Լեոնսիան ու Ֆրենսիսը, և թե այս ամենը որքան ողբերգական վախճան կարող է ունենալ նրանց համար:

— Ես սիրում եմ այդ Ֆրենսիսին,— ասաց նա վերջում:— Նա ճիշտ և ճիշտ իմ պատճենն է: Մենք նման ենք իրար երկվորյակների նման, հավանաբար, հեռավոր ազգականներ ենք: Ինչ վերաբերում է սենյորիտային, ապա ես ոչ միայն սիրում եմ նրան, այլև պատրաստվում եմ ամուսնանալ նրա հետ: Եվ այսպես, դուք պատրա՞ստ եք մեզ օգնելու: Որտե՞ղ է ձեր օդանավը: Ոտքով կամ ջրիով շատ երկար ճանապարհ պետք է կտրել մինչև մայաների լեռը, բայց եթե դուք ձեր մեքենայով տանեք ինձ, ապա երկար ժամանակ չի խլի: Իսկ եթե դրա հետ էլ մի հարյուր գլանիկ դինամիտ վերցնեք, ապա ես կկարողանամ ժայռը պայթեցնել փլվածքի տեղում և ջուրը բաց թողնել:

Լեյտենանտ Պարսոնսը դանդաղում էր:

— Ասացեք «այո՛ր»: Դե, ասացե՛ք,— աղաչում էր Յենրին:

Իսկ այդ նույն պահին, հենց որ կուռքերի քարայրի մուտքը փակող քարը նստեց իր տեղը, սրբազան լեռան սրտում բանտարկված երեք գերյալները մեկեն մնացին լիակատար խավարում: Ֆրենսիսն ու Լեոնսիան շոշափելով գտան իրար ու բռնեցին միմյանց ձեռքից: Մի վայրկյան ևս, և Ֆրենսիսը գրկեց նրան, ու այդ գրկախառնության քաղցրությունը կիսով չափ մեղմեց նրանց համակող սարսափը: Նրանք լսում էին, թե ինչպես է իրենց կողքին Թորեսը ծանրությամբ շնչում: Վերջապես նա շնչաց.

— Օ՛ր աստվածամայր, ա՛յ սա է կոչվում մազից կախված լինել: Ոտքներս հազիվ պրծացրիք: Ի՞նչ է լինելու մեզ այսուհետև:

— Այսուհետև դեռ շատ չարչարանքներ կքաշենք, մինչև այս ծակուռից դուրս գալը,— հավատացրեց Ֆրենսիսը:— Իսկ դուրս գալ, այնուամենայնիվ, հարկավոր է, և որքան շուտ, այնքան լավ:

Առաջ շարժվելու կարգը արագ որոշվեց: Ֆրենսիսը գնում էր առջևից, ձախ ձեռքով շոշափելով պատը. նրան հետևում էր Լեոնսիան, որին Ֆրենսիսը պատվիրել էր պինդ կառչել իր կուրտկայից: Իսկ Թորեսը գնում էր նրա կողքից, ձեռքով հենված մյուս պատին: Նրանք շարունակ խոսում էին, որպեսզի առաջ կամ ետ չընկնեն իրարից, իսկ գլխավորը՝ չբաժանվեն, թեքվելով կողքերի սրահները: Բարեբախտաբար թունելի հատակը (քանզի դա ամենախսկական թունելն էր) հարթ դուրս եկավ, այնպես որ, չնայած քայլում էին անփութությամբ, բայց չէին սայթաքում: Ֆրենսիսը որոշեց լուցկի չվառել, քանի դեռ ծայրահեղ անհրաժեշտություն չէր զգացվում, և, որպեսզի չգլորվեն որևէ ջրհոր կամ փոս, զգուշությամբ նախ մի ոտքն էր առաջ դնում և միայն համոզվելով, որ ոտքի տակ

ամուր գետին է, մարմնի ողջ ծանրությունը տեղափոխում էր նրա վրա: Այդ պատճառով նրանք շարժվում էին խիստ դանդաղ, անցնելով ժամում կես մղոնից ոչ ավելի:

Ամբողջ ճանապարհի ընթացքում միայն մեկ անգամ հանդիպեցին մի տեղի, ուր թունելը երկու սրահների էր ճյուղավորվում: Այստեղ Ֆրենսիսը վառեց թանկագին լուցկին, հանելով անջրաթափանց տուփից, ու տեսավ, որ երկու սրահներն էլ բոլորովին միատեսակ են: Դրանցից ո՞րն ընտրել, որով գնալ:

— Ստիպված եմք այսպես անել,— ասաց Ֆրենսիսը:— Գնանք այս սրահով: Եվ եթե սա մեզ ոչ մի տեղ չի դուրս բերի, կվերադառնանք մեր մեկնակետն ու մյուսով կգնանք: Մի բանում կարելի է հաստատ համոզված լինել. այս սրահներն, անշուշտ, որևէ տեղ տանում են, այլապես մայաները չէին չարչարվի դրանք բացելու համար:

Տաղ ըոպեից հետո Ֆրենսիսը հանկարծ կանգ առավ. առաջ տարած ոտքի տակ դատարկություն էր: Նա նախազգուշաբար ձայն տվեց. «Կանգ առ»,— և վառեց երկրորդ լուցկին: Պարզվեց, որ նա և նրա ուղեկիցները կանգնած են բնական քարայրի մուտքի առաջ, այնպիսի ընդարձակ մի քարայրի, որ լուցկու լույսով ոչ աջ կողմում, ոչ ձախում, ոչ վերևում, ոչ խորքում պատերը չէին երևում: Բայց և այնպես նրանք կարողացան նշմարել բնական ծագում ունեցող սանդուղքի նման մի բան՝ թեթևակիորեն միայն ուղղված մարդկային ձեռքերով, որը տանում էր ցած, դեպի գարհուրելի խավարը:

Իսկ մի ժամ հետո, իջնելով աստիճաններով ու անցնելով բավական տարածություն քարայրի միջով, համարձակ ճանապարհորդները հանկարծ առջևում նկատեցին ցերեկային լույսի մի փայլ, որը նրանց առաջնախույժ հետ գնալով պայծառանում էր: Լույսի աղբյուրը շատ ավելի մոտ էր, քան կարծում էին. շատ շուտով Ֆրենսիսը, ետ տանելով վայրի վազի ճյուղերն ու խիտ մացառները, ուղղակի դուրս եկավ մի բաց տեղ, ողողված ետճաշա արևի շագուցիչ ճառագայթներով: Նույն ակնթարթին Լեոնսիան ու Թորեսը հայտնվեցին նրա կողքին: Նրանց ոտքերի տակ, ներքևում, փռված էր հովիտը, որը շատ լավ էր երևում այդ արծվի բնից: Հովիտը համարյա կլոր էր, մեկ լիզայից /Լիզա — երկարության չափ (խաչ.), որը հավասար է 1986 սաժենի:/ ոչ պակաս տրամագծով. բարձր լեռներն ու սեպածն ժայռերը պարսպի նման շրջափակում էին այն:

— Սա Կորուսյալ Հոգիների հովիտն է,— հանդիսավորությամբ հայտարարեց Թորեսը:— Հաճախ եմ լսել սրա մասին, բայց երբեք չեմ հավատացել, թե գոյություն ունի:

— Ես էլ եմ լսել և նույնպես երբեք չեմ հավատացել,— դուրս թռավ Լեոնսիայի շրթունքներից:

— Դե ի՞նչ,— արձագանքեց Ֆրենսիսը:— Չէ որ մենք կորած հոգիներ չենք, այլ միս ու արյունից բաղկացած մարդիկ: Ինչի՞ց պետք է վախենանք:

— Գիտեք ինչ, Ֆրենսիս,— ասաց Լեոնսիան,— դատելով այն պատմությունից, որ ես լսել եմ դեռևս փոքրիկ ժամանակս, ոչ մի մարդ, մեկ անգամ այստեղ ընկնելուց հետո, այլևս չի վերադարձել:

— Ենթադրենք, թե այդպես է,— ներողամիտ ժպիտով նկատեց Ֆրենսիսը:— Այդ դեպքում ինչպե՞ս են այստեղից դուրս արձեղ նրանք, ովքեր պատմել են այդ մասին: Եթե ոչ ոք երբևէ չի վերադարձել, հապա որտեղի՞ց է այս վայրը հայտնի դարձել:

— Իսկապես, չգիտեմ,— խոստովանեց Լեոնսիան:— Ես հաղորդում եմ այն, ինչ լսել եմ: Ըստ որում, ինքս երբեք դրան չեմ հավատացել: Միայն թե այստեղ ամեն բան շատ է համապատասխանում խորհրդավոր հովտի նկարագրությանը:

— Ոչ ոք երբեք չի վերադարձել այստեղից,— նույն հանդիսավորությամբ հաստատեց Թորեսը:

— Այդ դեպքում դուք որտեղի՞ց գիտեք, թե որևէ մեկը եղել է այստեղ,— պնդեց Ֆրենսիսը:

— Այստեղ ապրում են Կորուսյալ Հոգիները,— պատասխանեց Թորեսը:— Մենք նրանց երբեք չենք տեսել, որովհետև ոչ ոք այստեղից դուրս չի եկել: Ահա թե ինչ կասեմ ձեզ, միտք Ֆրենսիս Սորգան. ես այնքան էլ հիմար մարդ չեմ: Կրթություն եմ ստացել: Սովորել եմ Եվրոպայում և գործեր վարել ձեր հայրենի Նյու Յորքում: Ուսումնասիրել եմ գանազան գիտություններ, փիլիսոփայություն: Բայց այնուամենայնիվ հավատում եմ, որ ով մեկ անգամ ընկավ այս հովիտը, այլևս երբեք չի կարող դուրս գալ այնտեղից:

— Բայց ախր մենք առայժմ այնտեղ չենք:— Ֆրենսիսն ակնհայտորեն սկսում էր համբերությունը կորցնել:— Եվ բոլորովին էլ պարտադիր չէ, որ մենք իջնենք հովիտ, այնպես չէ՞,— նա սողաց դեպի քարերով ու հողակոշտերով ծածկված ելուստի եզրը, որպեսզի ավելի լավ գննի ինչ-որ առարկա, որ գրավել էր նրա ուշադրությունը:— Գրագ կգամ, որ դա ծղոտածածկ խրճիթ է...

Ելուստի եզրը, որից նա բռնել էր, նույն վայրկյանին ցած թափվեց, և ամբողջ հարթակը, ուր նրանք կանգնած էին, փլվեց: Ֆրենսիսը, Թորեսը և Լեոնսիան թեք լանջով ներքև գլորվեցին, հողի, ճիմի ու մանրախճի մի ամբողջ հեղեղ տանելով հետևներից:

Տղամարդիկ առաջինը ոտքի ելան խիտ մացառուտների մոտ, որոնք և պահեցին նրանց. նրանք ուզում էին նետվել Լեոնսիային օգնության, բայց նա էլ արդեն ոտքի վրա էր ու ծիծաղում էր բարձրաձայն:

— Իսկ դուք ասում էիք, որ մեր հովիտ իջնելը բոլորովին էլ պարտադիր չէ,— քրքջալով ասաց նա Ֆրենսիսին:— Դե, իսկ հիմա՞ ինչ կասեք:

Սակայն Ֆրենսիսի ուշադրությունն ուրիշ կողմ էր: Նա ձեռքը պարզեց ու թռչչի մեջ որսաց մի առարկա, որը ծանոթ թվաց նրան. այն ցատկոտելով գլորվում էր նրանց հետևից թեք լանջն ի վար: Դա Թորեսի սաղավարտն էր, որ նա հափշտակել էր մումիաների քարայրից: Ֆրենսիսը սաղավարտը հանձնեց իսպանացուն:

— Դեն նետեք,— ասաց Լեոնսիան:

— Սա իմ միակ պաշտպանության միջոցն է արևից,— առարկեց Թորեսը, սաղավարտը շուռուճուճ տալով ձեռքերի մեջ: Հանկարծ նա ներսի կողմում նկատեց ինչ-որ մակագրություն և ցույց տվեց իր ուղեկիցներին, բարձրաձայն կարդալով. «Դա Վասկո»:

— Ես լսել եմ նրա մասին:

— Ճիշտ է, պետք է որ լսած լինեք,— հաստատեց Թորեսը:— Դա Վասկոն ուղիղ գծով իմ նախապապն է: Մայրս ծնունդով դա Վասկո է: Այս դա Վասկոն իսպանական գաղութներն է եկել Կորտեսի հետ:

— Իսկ երբ տեղ է հասել, ապստամբել է ու խռովություն բարձրացրել,— նրա պատմությունը շարունակեց Լեոնսիան:— Ես դա լավ եմ հիշում. այդ մասին ինձ պատմել են հայրս ու հորեղբայր Ալֆարոն: Տասներկու ընկերների հետ նա մեկնում է մայաների գանձը որոնելու: Նրանց հետևում է ծովափնյա կարաիբների մի ամբողջ ցեղ՝ մի հարյուր տղամարդ ու երեք նույնքան էլ կին: Կորտեսը հետապնդողների խումբ է ուղարկում նրանց հետևից՝ ոմն Մենդոզայի գլխավորությամբ. սրա զեկուցագրում, որը պահվում է արխիվներում, — այդպես էր պատմում ինձ հորեղբայր Ալֆարոն,— ասվում է, որ իրենց քշել են Կորոսայալ Հոգիների հովիտը, ուր և թողել են մեռնելու ողորմելի մահով:

— Եվ ըստ երևույթին դա Վասկոն փորձել է այստեղից դուրս պրծնել այն ճամփով, որով եկանք մենք,— ավարտեց Թորեսը,— իսկ մայաները բռնել են նրան, սպանել ու դարձրել մումիա:

Նա հինավուրց սաղավարտը թեքեց ճակատին ու ասաց.

— Չնայած արևը ցած է իջել, բայց գլուխս այրում է թթվուտի նման:

— Իսկ իմ ստամոքսը այրվում է քաղցից, ոնց որ թթվուտից,— խոստովանեց Ֆրենսիսը:— Այս հովտում որևէ մարդ ապրո՞ւմ է:

— Ճշմարիտը, չգիտեմ, սենյոր,— պատասխանեց Թորեսը:— Մենդոզայի զեկուցագրից հայտնի է միայն, որ նրանք դա Վասկոյին ու նրա ջոկատը թողել են այստեղ մեռնելու ողորմելի մահով, և ոչ ոք այլևս չի տեսել ո՛չ նրան, ո՛չ նրա ուղեկիցներին: Ահա այն, ինչ ես գիտեմ:

— Ինչպես երևում է, այստեղ կարելի է ուտելիք ճարել...— սկսեց Ֆրենսիսը, բայց իսկույն էլ ընդհատեց ինքն իրեն, նկատելով, որ Լեոնսիան ինչ-որ հատապտուղներ է քաղում թփից:— Լսեցեք, Լեոնսիա: Անմիջապես թողեք: Առանց այդ էլ հոգսերից այք չենք բացում, հիմա էլ չարչարվիր թունավորված գեղեցկուհու հետ:

— Սրանք բոլորովին անվնաս են,— ասաց նա, հանգիստ շարունակելով ունել:— Հո տեսնո՞ւմ եք, որ թռչունները կտցահարել են:

— Այդ դեպքում ներողություն եմ խնդրում ու միանում եմ ձեզ,— բացականչեց Ֆրենսիսը, հյուսիսեղ հատապտուղներով լցնելով բերանը:— Իսկ եթե ինձ հաջողվեր բռնել այն թռչուններին, որոնք անուշ են արել սրանք, ապա նրանց էլ կուտեի:

Մինչդեռ նրանք փոքր-ինչ կհագեցնեին իրենց քաղցը, արևն արդեն բոլորովին խոնարհվեց ցած, և Թորեսը գլխից հանեց դա Վասկոյի սաղավարտը:

— Ստիպված եմ գիշերել այստեղ,— ասաց նա:— Ես իմ կոշիկները թողեցի մումիաների քարայրում, իսկ դա Վասկոյի հին բոսֆորտները լողալու ժամանակ կորցրի, Ուոքերս ամբողջովին վիրավորված են, բայց այստեղ չոր խոտ շատ կա, որից կարող եմ սանդալներ հյուսել:

Մինչդեռ Թորեսն իր համար կոշիկ կհյուսեր, Ֆրենսիսը խարույկ վառեց ու մի մեծ կույտ խռիվ հավաքեց, որպեսզի կրակը պահպանի. չնայած հասարակածի մոտիկությանը, այդպիսի բարձրության վրա լեռներում գիշերները ցուրտ է լինում: Նա դեռ խռիվ հավաքելը չէր վերջացրել, իսկ Լեոնսիան, գունդուկծիկ կուշ գալով ու գլուխը դնելով ծայած ձեռքին, արդեն քնել էր խոր քնով: Այն ժամանակ նա չոր տերևներն ու մամուռը մի տեղ հավաքեց ու հոգատարությամբ դրեց Լեոնսիայի այն կողքին, որտեղ խարույկի ջերմությունը չէր հասնում:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՅՈՒԹԵՐՈՐԴ

Կորուսյալ Հոգիների հովիտ: Լուսաբաց: Մի մեծ տուն գյուղամիջում, ուր ապրում է Կորուսյալ Հոգիների ցեղը: Տունը պատկառելի չափեր ունի, ութսուն ֆուտ երկարություն, քառասուն՝ լայնություն և երեսուն՝ բարձրություն, կավաշեն է, ծղոտե երկթեք տանիքով: Տանից դժվարությամբ դուրս է գալիս Արևի քուրմը՝ զառաքյալ մի ծերունի, որը հագիվ է ոտքի վրա մնում. հագել է տանը գործած կտավից երկար խիտոն, ոտքերին՝ սանդալներ. հնդիկի ծեր, կնճռոտ դեմքը որոշ չափով հինավուրց կոնկիստադորների դեմքերն է հիշեցնում: Գլխին դրել է տարօրինակ ոսկե գլխարկ, պսակված փայլուն ոսկե ճառագայթների կիսաշրջանակով: Դա, անկասկած, պետք է որ արտահայտի ծագող արևը:

Ծերուկը բացատի միջով ոտքերը դժվարությամբ քարշ տալով գնաց դեպի սևամեջ գերանը, որ կախ էր տված կենդանիների նկարներով ու զանազան նշաններով ծածկված երկու գերանների միջև: Նայելով արշալույսից արդեն վարդագունող արևեքին ու համոզվելով, որ չի ուշացել, քուրմը բարձրացրեց ծայրին փափուկ գնդակ ունեցող փայտն ու խփեց գերանին: Որքան էլ ծերունին թույլ էր, ու նրա հարվածը թեթև, այնուամենայնիվ սևամեջ գերանը թնդաց ու որոտաց հեռավոր ամպրոպի նման:

Քուրմը շարունակում էր համաչափորեն հարվածել գերանին, և Մեծ տունը շրջապատող բոլոր խրճիթներից արդեն շտապել սկսեցին Կորուսյալ Հոգիները: Տղամարդ ու կին, ծեր ու երիտասարդ, երեխաների հետ ծծկեր մանուկներին գրկած, ներկայացան կանչին ու շրջապատեցին Արևի քուրմին: Դժվար էր դրանից ավելի հնամենի տեսարան պատկերացնել քսաներորդ դարում: Դրանք, անկասկած, հնդիկներ էին, բայց շատերի դեմքերը կրում էին իսպանական ծագման հետքերը: Ոմանք թվում էին ամենաիսկական իսպանացիներ, ուրիշները՝ տիպիկ հնդիկներ: Իսկ մեծամասնությունը ներկայացնում էր այդ երկու ցեղերի խառնուրդ: Սակայն դեմքերից շատ ավելի տարօրինակ էր նրանց հագուստը. շատ քիչ աչքի ընկնելով կանանց մոտ, որոնք հագել էին տնային գործվածքի կտավից պատրաստած համեստ ու երկար խիտոններ, այն խիստ աչքի էր ընկնում տղամարդկանց մոտ, որոնց նույն կտորից պատրաստված հագուստը կոմիկական պատճենում էր այն կոստյումների, որ Կոլումբոսի առաջին ճանապարհորդության ժամանակ կրում էին Իսպանիայում: Այդ տղամարդիկ ու կանայք տգեղ էին ու մռայլ, որ հաճախ է նկատվում այն ցեղերի մոտ, որտեղ ընդունված է ամուսնությունը արյունակիցների միջև. ասես թարմ արյան բացակայությունը կենսաբանական կողմից գրկում է նրանց: Այլասերման կնիքը նկատելի էր բոլորի՝ պատանիների ու աղջիկների, երեխաների ու մինչև իսկ կրծքի մանուկների դեմքերին, բոլորի, բացառությամբ երկու հոգու. տասը տարեկան մի աղջկա՝ կենդանի, խելամիտ դեմքով, որը վառ ծաղկի պես ջոկվում էր Կորուսյալ Հոգիների բուրբ

կերպարանքների միջից, և Արևի ծեր քուրմի՝ Նույնքան արտասովոր, խորամանկ, խարդախ ու խելոք դեմքով:

Մինչդեռ քուրմը կհարվածեր թնդածայն գերանին, ամբողջ ցեղը շարվեց կիսաշրջանաձև, դեմքով դարձած դեպի արևելք: Հագիվ էր արևի սկավառակը բարձրացել հորիզոնից, քուրմը ողջունեց Նրան յուրատեսակ հին իսպաներենով ու երեք անգամ մինչև գետին գլուխ տվեց, իսկ բոլոր մնացածները գետին փռվեցին բերանքսիվայր: Իսկ երբ արևը լրիվ դուրս եկավ հորիզոնի հետևից ու փայլեց երկնքում, քուրմի նշանով ամբողջ ցեղը ոտքի ելավ ու սկսեց երգել մի ուրախ հիմն: Արարողությունը վերջացավ, և ժողովուրդն արդեն պատրաստվում էր ցրվել, երբ հանկարծ քուրմը հովտի մյուս ծայրին մի բարակ ծուխ նկատեց: Նա այդ ծուխը ցույց տվեց մի քանի պատանիների:

— Այդ ծուխը բարձրանում է Սարսափի Արգելված Վայրից, ուր մեր ցեղի անդամների մուտքն արգելված է: Դա, երևի, ինչ-որ չար ոգի է ուղարկված թշնամիների կողմից, որոնք ահա մի քանի դար է, ինչ ապարոյուն որոնում են մեր ապաստարանը: Նրան չի կարելի այստեղից կենդանի բաց թողնել. նա կմատնի մեզ: Իսկ այդ թշնամիները զորավոր են և անպայման կոչնչացնեն մեզ: Գնացեք սպանեցեք նրան, որպեսզի հետո մեզ չսպանեն:

Խարույկի մոտ, որի վրա ամբողջ գիշեր խռիվ էին գցում, քնած էին Լեոնսիան, Ֆրենսիսն ու Թորեսը, վերջինս՝ խոտից հյուսած իր Նոր սանդալներով ու ճակատին թեքած դա Վասկոյի սաղավարտով, որպեսզի ցողից չմրսի: Լեոնսիան առաջինն արթնացավ. և այնքան արտասովոր էր նրա աչքին երևացող տեսարանը, որ նա որոշեց նախ ամեն ինչ ինչպես հարկն է դիտել կիսափակ կոպերի տակից: Երեք մարդ Կորոսյալ Հոգիների տարօրինակ ցեղից կանգնել էին աղեղները լարած. նրանք ակնհայտորեն պատրաստվում էին իրենց նետերն արձակել նրա և մյուս երկուսի վրա, բայց քնած Թորեսի տեսքն այնպես էր ապշեցրել նրանց, որ երեքն էլ քարացել էին տեղներում, անվճռականորեն նայելով իրար, ապա ցած իջեցրին աղեղներն ու գլուխները օրորեցին, կարծես ասելով, որ հրաժարվում են սպանել նրան: Ապա սողացին դեպի Թորեսը, ծալապատիկ նստեցին ու սկսեցին դիտել նրա դեմքը և հատկապես սաղավարտը, որը ինչ-որ բանով հետաքրքրեց նրանց:

Առանց դիրքը փոխելու՝ Լեոնսիան աննկատելիորեն ոտքով հրեց Ֆրենսիսի ուսը: Սա արթնացավ կամացուկ նստեց, սակայն այդ շարժումը գրավեց անձանոթների ուշադրությունը, և նրանք աղեղները դրին նրա ոտքերի մոտ՝ ի նշան խաղաղ մտադրության, ու պարզեցին ձեռքերը, ցույց տալով, որ իրենք զինաթափվեցին:

— Բարի լույս, ուրախ անձանոթներ,— բղավեց նրանց Ֆրենսիսը անգլերեն: Բայց նրանք միայն գլուխներն օրորեցին:

Ֆրենսիսի խոսքերը արթնացրին Թորեսին:

— Երևի հենց սրանք են Կորոսյալ Հոգիները,— շնչաց Լեոնսիան Ֆրենսիսի ականջին:

— Կամ հողամասերի վաճառման տեղական գործակալները,— ի պատասխան ժպտալով շնչաց Ֆրենսիսը:— Այսպես թե այնպես, հովիտը բնակեցված է: Թորես, ձեր այդ բարեկամներն ովքե՞ր են: Ձեզ վրա չա՞ծ հայացքներից կարելի է կարծել, թե ձեր ազգականներն են:

Այդ միջոցին Կորոսյալ Հոգիները քաշվեցին մի կողմ ու սկսեցին կամացուկ, Ֆշշացող ձայնով բանակցել ինչ-որ բանի մասին:

— Նրանց լեզուն նման է իսպաներենին, միայն թե մի տեսակ տարօրինակ է,— նկատեց Ֆրենսիսը:

— Դա պարզապես միջնադարյան իսպաներեն է, ուրիշ ոչինչ,— հաստատեց Լեոնսիան:

— Այդ լեզվով խոսում էին կոնկիստադորները, բայց այժմ արդեն ոչ ոք չի հիշում,— ավելացրեց Թորեսը:— Տեսնո՞ւմ եք, ես իրավացի էի: Այն ժամանակներից Կորոսյալ Հոգիները երբեք չեն հեռացել հովտից:

— Բայց ամուսնացել են, ինչպես բոլոր մարդիկ,— սրախոսեց Ֆրենսիսը,— այլապես այս երեք խրտովիակները որտեղի՞ց հայտնվեցին:

Մինչ այդ երեք խրտովիակները համաձայնության եկան իրար հետ և սկսեցին անձանոթներին շարժումներով հրավիրել՝ հետևելու իրենց դեպի հովտի խորքը:

— Ինչպես երևում է, սրանք բարեհոգի և ընդհանուր առմամբ լավ տղերք են, չնայած մռայլ մոռլթներին,— ասաց Ֆրենսիսը, որոշելով հետևել նրանց:— Խոսք չունեմ, այ թե մռայլ ընկերություն է, հա՛: Երևի սրանք ծնվել են լուսնի խավարման ժամանակ, կամ մեռել են սրանց բոլոր ջահել ընկերուհիները, կամ էլ ավելի տխուր մի բան է պատահել:

— Իսկ իմ կարծիքով Կորուսյալ Յոգիները հենց այդպես էլ պետք է լինեն,— նկատեց Լեոնսիան:

— Յ՛ր՛մ, եթե մեզ չհաջողվի այստեղից դուրս պրծնել, թերևս մեր կերպարանքները շատ ավելի մռայլ լինեն,— ասաց Ֆրենսիսը:— Այսպես թե այնպես, առայժմ ես մեծ հույս ունեմ, որ մեզ տանում են նախաճաշելու: Իհարկե, վատագույն դեպքում կարելի է նաև հատապտուղներ ուտել, բայց ախր հատապտուղներով կշտանալ չես կարող:

Հնազանդորեն հետևելով իրենց ուղեկցողներին, նրանք մի ժամից հետո հասան այն բացատը, ուր ցեղի կացարաններն էին և Մեծ տունը:

— Սրանք դա Վասկոյի արշավախմբի մասնակիցների հետնորդներն են՝ խառնված կարաիբների հետ,— հեղինակավոր տոնով հայտարարեց Թորեսը, նայելով հավաքվածների դեմքերին:— Դրանում համոզվելու համար բավական է մի հայացք զգել նրանց վրա:

— Եվ սրանք դա Վասկոյի քրիստոնեական կրոնից վերադարձել են հինավուրց կռապաշտական ծեսերին,— ավելացրեց Ֆրենսիսը:— Նայեցեք զոհասեղանին՝ քարից է: Եվ չնայած խորոված գառան հոտ է գալիս, դա դեռ ամենևին էլ նախաճաշ չէ մեզ համար, այլ զոհաբերություն:

— Էլի փառք աստծու, որ դա գառ է,— թեթևացած հառաչեց Լեոնսիան:— Ախր հնում Արևի երկրպագելը մարդկային զոհեր էր պահանջում: Իսկ սրանց մոտ այստեղ իսկական Արևի պաշտամունք է: Նայեցեք ասիա երկար խիտոնով ու ոսկեշող գլխարկով այն ծերուկին: Դա Արևի քուրմն է: Հորեղբայր Ալֆարոն ինձ շատ է պատմել այդ պաշտամունքի մասին:

Չոհասեղանի վերևում, փոքր-ինչ ետ, բարձրանում էր մետաղյա հսկայական մի Արև:

— Ոսկի է, մաքուր ոսկի,— փսփսաց Ֆրենսիսը:— Առանց որևէ խառնուրդի: Նայեցեք ճառագայթներին. շատ խոշոր են ու զուտ ոսկուց: Կարող եմ երդվել, որ երեխան անգամ կարող է դրանք ծալել ուզածի պես և հանգույց անել:

— Ողորմա՛ճ տեր,— բացականչեց Լեոնսիան, աչքերով ցույց տալով զոհասեղանից փոքր-ինչ ներքև, նրա մյուս կողմում դրված կոպտաքանդակ քարե կիսանդրին:— Հապա նայեցեք այնտեղ: Ախր դա Թորեսի դեմքն է: Այն մոմիայի դեմքը, որ տեսանք մայաների քարայրում:

— Եվ այնտեղ մակագրություն կա. . . — Ֆրենսիսն ուզում էր արդեն մոտ գնալ, որպեսզի կարդա, բայց իսկույն էլ ստիպված եղավ նահանջել՝ ենթարկվելով քուրմի ձեռքի տիրական շարժումին:— Գրված է. «Դա Վասկո»: Տեսե՛ք՝ արձանի գլխին տույնափսի սաղավարտ կա, ինչպիսին և Թորեսի գլխին. . . Լսեցեք: Հապա մի դուք նայեցեք այդ քուրմին: Ախր նա նման է Թորեսին, ինչպես հարազատ եղբայր: Ես երբեք չէի ենթադրում, թե հնարավոր է այսպիսի նմանություն:

Չարացած քուրմը տիրական շարժումով ստիպեց Ֆրենսիսին լռել ու խոնարհվեց տապակվող զոհի վրա: Այդ թուպեին ասես վերին նշանով քամու պոռթկումը կրակը բորբոքեց.

— Արևի աստվածը զայրանում է,— մռայլ ազդարարեց քուրմը. չնայած իր ամբողջ արխաիկության, նրա յուրօրինակ իսպաներենը հասկանալի էր եկվորներին:— Մեր մեջ հայտնվել են օտարերկրացիներ, և նրանք մինչև այժմ ողջ են: Ահա թե ինչու է Արևի աստվածն այդպես զայրացած: Խոսե՛ք, օտարերկրացիներին մեր զոհասեղանի մոտ բերող պատանիներ. մի՞թե ես ձեզ չհրամայեցի սպանել նրանց: Իսկ իմ շրթունքներով միշտ բարբառում է Արևի աստվածը:

Երեք պատանիներից մեկը, ամբողջ մարմնով դողալով, առաջ եկավ և, շարունակելով դողալ, մատով ցույց տվեց նախ՝ Թորեսի, ապա՝ արձանի դեմքը:

— Մենք ճանաչեցինք նրան,— վեհերոտությամբ խոսեց նա,— ու չհամարձակվեցինք սպանել, որովհետև հիշում ենք այն կանխագուշակումը, որ մեր մեծ նախահայրը պետք է վերադառնա մեզ մոտ: Գուցե այս օտարերկրացին նա՞ է: Մենք չգիտենք: Եվ չենք համարձակվում ոչ իմանալ, ոչ դատել: Օ՛, մեծ քուրմ, քեզ է պատշաճ իմանալ ու դատել: Այդ նա՞ է:

Քուրմը սևեռուն հայացքով դիտեց Թորեսին և ինչ-որ անորոշ բացականչություն արձակեց: Ապա կտրուկ շուռ եկավ ու զոհասեղանի մոտ դրված կաթսայիկի միջի տաք ածուխներով բորբոքեց կրակը: Բոցը բռնկվեց, գալարվեց ու նորից հանգավ:

— Արևի աստվածը գայրանում է,— կրկնեց քուրմը, իսկ Կորուսյալ Յոզիները, լսելով այդ, սկսեցին կրծքները ծեծել, աղաղակել ու հեկեկալ:— Մեր զոհը հաճո՞ւ չէ աստծուն, դրա համար էլ սրբազան կրակը չի ուզում վառվել: Յիմա ամեն ինչ կարելի է սպասել: Սրանք մեծ գաղտնիքներ են, որոնք միայն իմ առջև կբացվեն: Մենք օտարերկրացիներին այժմ չենք զոհաբերի: Ինձ ժամանակ է հարկավոր՝ Արևի աստծու կամքն իմանալու համար:— Եվ նա ձեռքի շարժումով ազատ արձակեց ցեղը, արարողությունն ընդհատելով, ու հրամայեց երեք գերիներին էլ տանել մեծ տուն:

— Ոչ մի կերպ չեմ հասկանում, թե նա ինչ է ուզում անել,— շշնջաց Ֆրենսիսը Լեոնսիայի ականջին:— Բայց հուսով եմ, որ զոհն այնտեղ մեզ կկերակրեն:

— Տեսեք, ի՞նչ սքանչելիք է,— ասաց Լեոնսիան, աչքերով ցույց տալով աղջկան, որի արտահայտիչ դեմքը խելք էր ճառագայթում:

— Թորեսն արդեն նկատել է նրան,— նույնպես շշուկով ասաց Ֆրենսիսը:— Ես տեսա, թե նա ինչպես աչքով արեց այդ աղջկան: Թորեսն էլ չգիտի, թե քուրմն ինչ է մտածել և քամին որ կողմից է փչելու, բայց առիթը չի փախցնում բարեկամներ գտնելու: Պետք է ուշադիր հետևել նրան. նա ստոր, ուխտադրուժ արարած է, ընդունակ ամեն բոպե մատնել մեզ, եթե դա կօգնի նրան իր մաշկը փրկելու:

Մեծ տանը, հենց որ նրանք նստեցին խոտից գործած խսիրների վրա, իսկույն ուստիք բերին՝ ինչ-որ տարօրինակ կավե ամաններով խաշած միս ու բանջարեղեն և խմելու մաքուր ջուր, երկուսն էլ առատորեն: Բացի դրանից, նրանց առաջ դրին եգիպտացորենի բլիթներ:

Երբ կերան կշտացան, մատուցող կանայք գնացին, մնաց միայն աղջիկը, որ բերել էր նրանց ու ամեն ինչ տնօրինում էր տանը: Թորեսը նորից սկսեց սիրատածել նրան, բայց աղջիկը քաղաքավարությամբ խույս էր տալիս նրանից ու կախարդվածի պես նայում էր միայն Լեոնսիային:

— Ինչպես երևում է, նա այստեղ տանտիրուհու նման մի բան է,— բացատրեց Ֆրենսիսը:— Ճիշտ այսպես է նաև Սամոայի գյուղերում. աղջիկները պետք է դիմավորեն ու զբաղեցնեն բոլոր ճանապարհորդներին ու եկվորներին, ինչ բարձրաստիճան մարդիկ էլ որ լինեն սրանք, համարյա թե գլխավորելով բոլոր պաշտոնական հանդեսներն ու արարողությունները: Նրանց ընտրում է ցեղի առաջնորդը, ելնելով գեղեցկությունից, առաքինությունից ու խելքից: Այս աղջիկը հիշեցնում է նրանց, միայն թե սա համարյա երեխա է դեռ:

Աղջիկն ավելի մոտեցավ Լեոնսիային և, չնայած ակնհայտորեն հմայված էր անծանոթուհու գեղեցկությամբ, նրա վարմունքի մեջ ստորաքարշության կամ նվաստության նշույլ անգամ չկար:

— Ասա ինձ,— խոսեց նա տեղական յուրատեսակ հին իսպաներեն բարբառով,— այս մարդն իրո՞ք կապիտան դա Վասկոն է, որը արևի վրայի իր տնից վերադարձել է մեզ մոտ:

Ինքնաբավականությամբ քնծիծաղելով, Թորեսը գլուխ տվեց ու հպարտությամբ ասաց.

— Այո, ես դա Վասկոյի տոհմից եմ:

— Ոչ թե դա Վասկոյի տոհմից, այլ ինքը դա Վասկոն,— անզլերեն հուշեց Լեոնսիան:

— Դա վստահելի հարթաթուղթ է, դե գնացեք,— խորհուրդ տվեց Ֆրենսիսը նույնպես անզլերեն:— Միգուցե դրա շնորհիվ մեզ հաջողվի դուրս պրծնել այս ծակուռից: Ես մի տեսակ շատ էլ չեմ սիրահարվել քուրմին, իսկ նա, ինչպես երևում է, այս Կորուսյալ Յոզիների մոտ տեր ու տնօրեն է:

— Այո, ես արևից եմ երկիր վերադարձել,— ասաց Թորենս աղջկան, հնազանդորեն դերի մեջ մտնելով:

Աղջիկը մի երկար, ուշադիր հայացք պարզեց նրան. զգացվում էր, որ նա կշռադատում, գնահատում և ծանր ու թեթև է անում նրա խոսքերը: Ապա հարգալիր, լիակատար անտարբերությամբ գլուխ տվեց նրան, փութանցիկ նայեց Ֆրենսիսին և, շուռ գալով դեպի Լեոնսիան, ամբողջովին շողաց ժպիտով:

— Ես չգիտեի, որ աստված քեզ նման գեղեցիկ կանայք է ստեղծում,— ասաց աղջնակն իր քնքուշ ձայնով ու գնաց դեպի ելքը: Արդեն դռան մոտ նա կանգ առավ ու ավելացրեց.— Երագողը նույնպես գեղեցիկ է, բայց բոլորովին նման չէ քեզ:

Աղջիկը դեռ դուրս չէր գնացել, որ հայտնվեց Արևի քուրմը. նրան ուղեկցում էին մի քանի պատանիներ, ըստ երևույթին նրա համար, որ հավաքեն ամաններն ու ճաշի մնացորդները: Երկու-երեքը կռացան ամանեղենի վրա, իսկ մնացածները քուրմի նշանով նետվեցին դեպի օտարերկրացիները և, ձեռքներն ամուր կապելով մեջքներին, տարան Արևի աստծու գոհասեղանի մոտ, ուր հավաքվել էր ամբողջ ցեղը: Այստեղ գերյալները նկատեցին եռոտանի մի հալոց, որի տակ ուժեղ կրակ էր վառվում, իսկ կողքին՝ հենց նոր հողում թաղած երեք սյուներ, որոնց շտապով կապկպեցին նրանց, մինչդեռ բազմաթիվ եռանդուն ձեռքեր այնքան խռիվ թափեցին չորս կողմը, որ կույտերը հասան մինչև նրանց ծնկները:

— Դե, ուշքի եկեք ու հպարտ պահեք ձեզ իսկական իսպանացու նման,— խրատեց ու միաժամանակ վիրավորեց Թորենսին Ֆրենսիսը:— Չէ՞ որ դուք դա Վասկոն եք: Հարյուրավոր տարիներ հողի մեջ էիք, այս նույն հովտում, ահա այս այլասերվածների նախահայրերի հետ միասին:

— Դուք պետք է մեռնեք,— ասաց Արևի քուրմը, դիմելով նրանց, և Կորուսյալ Հոգիները միահամուռ գլխով արին:— Ահա արդեն չորս հարյուր տարի է, ինչ ապրում ենք այս հովտում, և մենք միշտ սպանել ենք բոլոր նրանց, ովքեր եկել են մեզ մոտ: Ձեզ չսպանեցինք, և հիշեք, թե ինչպես զայրացավ Արևի աստվածը. մեր գոհասեղանի կրակը հանգավ:— Այստեղ Կորուսյալ Հոգիները ոռնացին, տնքացին ու նորից սկսեցին կրծքները ծեծել:— Ուստի, որպեսզի Արևի աստծու ողորմածությունը շարժենք, դուք կմեռնեք հիմա:

— Չգուշացե՛ք,— բղավեց Թորենսը, որին Ֆրենսիսն ու Լեոնսիան շշուկով հուշում էին, թե ինչ ասի հետո:— Ես դա Վասկոն եմ: Արևից եմ իջել ձեզ մոտ:— Նրա ձեռքերը կապված էին, և նա գլխով ցույց տվեց քարե կիսանդրին:— Ահա այդ նույն դա Վասկոն եմ ես: Ես եմ չորս հարյուր տարի առաջ ձեր նախահայրերին բերել այս հովիտը և հրամայել մինչև իմ վերադարձը մնալ այստեղ:

Արևի քուրմը տատանվեց:

— Դե խոսիր, քուրմ: Պատասխանիր աստվածային դա Վասկոյին,— խստությամբ բղավեց Ֆրենսիսը:

— Որտեղի՞ց իմանամ, թե նա աստվածային է,— արագ առարկեց քուրմը:— Ես ինքս էլ նման եմ նրան, բայց մի՞թե աստվածային եմ: Մի՞թե ես դա Վասկոն եմ: Կամ նա դա Վասկոն է: Իսկ միգուցե դա Վասկոն դեռևս Արևի վրա՞ է: Իմ մասին ճշտորեն գիտեմ, որ ինձ կին է ծնել,— դա երեք անգամ քսան և էլի տասնութ տարի սրանից առաջ էր,— և որ ես դա Վասկոն չեմ:

— Մի՞թե այդպես են պատասխանում մեծն դա Վասկոյին,— սպառնալից ձայնով ասաց Ֆրենսիսն ու խոնարհությամբ գլուխ տվեց Թորենսին, միաժամանակ ատամների արանքից ֆշացնելով անզլերեն.— Դե, հպարտ եղե՛ք, դևերը ձեզ ուտեն, հպարտ:

Քուրմը դանդաղեց, ապա դիմեց Թորենսին.

— Ես Արևի հավատարիմ քուրմն եմ ու չեմ կարող հեշտ ու հասարակ իմ հավատքը փոխել: Եթե դու աստվածային դա Վասկոն ես, ապա պատասխանիր մի հարցի:

Թորենս աննման հպարտությամբ գլխով արեց:

— Դու ոսկի սիրո՞ւմ ես:

— Սիրո՞ւմ եմ արդո՞ք ոսկի,— ծիծաղեց Թորեսը:— Ես արևի մեծ նավապետն եմ, իսկ արևը չէ՞ որ հենց ինքը ոսկի է: Ոսկի՞: Դե, ոսկին ինձ համար նույնն է, ինչ որ ոտքիս տակի ցեխը կամ ահա այս քարը, որից կազմված են ձեր հզոր լեռները:

— Կեցցե՛ք,— հավանությամբ շշուշաց Լեոնսիան:

— Այդ դեպքում, օ՛, աստվածային դա Վասկո,— խոնարհաբար ասաց Արևի քուրմը, չկարողանալով, սակայն, թաքցնել ձայնի հաղթական երանգը,— դու արժանի ես ենթարկվելու վաղուց ի վեր մեզ մոտ ընդունված հինավուրց փորձության: Եթե, ոսկե խմիչքը ճաշակելով, դու առաջվա պես կարող ես ասել, որ դա Վասկոն ես, ես և մենք բոլորս բերանքսիվայր կփռվենք քո առջև ու կերկրապագենք քեզ: Շատ անգամ են մեզ մոտ հովիտ թափանցել օտարերկրացիներ: Եվ միշտ նրանց տանջել է ոսկու ծարավը: Մենք այդ ծարավը հագեցրել ենք, բայց այնուհետև նրանք ընդմիշտ ազատվել են դրանից՝ մեռել են:

Նա խոսում էր, իսկ Կորոսայալ Յոգիներն ուշադիր նայում էին նրան. և ոչ պակաս ուշադիր, միայն թե արդեն երկյուղով, նրան էին նայում օտարականները: Զուրմը ձեռքը խոթեց կաշվե մի մեծ պարկի մեջ ու սկսեց այնտեղից բռնելով ոսկու բնակտորներ հանել ու նետել եռոտանի հալոցի մեջ: Ֆրենսիսը, Լեոնսիան ու Թորեսը այնքան մոտիկ էին կանգնած, որ լավ տեսնում էին, թե ոսկին ինչպես է հալվում, վերածվելով հեղուկի, ավելի ճիշտ՝ այն նույն խմիչքին, որով քուրմն սպառնում էր հարբեցնել Թորեսին:

Այդ ժամանակ, օգտվելով ցեղի ներսում ունեցած իր հատուկ դիրքից, աղջնակը համարձակ մոտեցավ ծերունուն ու ասաց այնպես, որպեսզի բոլորի համար լսելի լինի.

— Ախր սա դա Վասկոն է, նավապետ դա Վասկոն, աստվածային նավապետ դա Վասկոն, որը վաղուց-վաղուց մեր նախնիներին այստեղ է բերել:

Զուրմը բարկացած նայեց նրան, ասես հրամայելով լռել, բայց աղջիկը կրկնեց իր խոսքերը, համոզիչ շարժումներով ցույց տալով մերթ քարե արձանը, մերթ Թորեսին, ապա նորից արձանը: Եվ քուրմը, զգալով, որ հաղթանակը խույս է տալիս իրենից, մտովին անիծեց այն կործանարար սերը, որն իրեն կապել էր այդ աղջկա մոր հետ ու դարձրել սրա հայրը:

— Լռի՛ր դու,— խստությամբ հրամայեց նա:— Այս գործից ոչինչ չես հասկանում: Եթե սա նավապետ դա Վասկոն է, ապա, իբրև աստվածային արարած, կիսմի ոսկե խմիչքն ու կմսա անվնաս:

Նա հալած ոսկին լցրեց կավե կոպիտ շերտի մեջ, որը տաքացրել էին զոհասեղանի մոտ դրված կաթասիկի վրա: Նրա նշանով մի քանի պատանիներ իրենց նիզակները ցած դրին ու շարժվեցին դեպի Լեոնսիան՝ ուժով նրա ատամները բաց անելու ակնհայտ մտադրությամբ:

— Կանգ առ, քուրմ,— որոտընդոստ ձայնով բղավեց Ֆրենսիսը:— Ախր նա դա Վասկոյի նման աստվածային չէ: Նախ քո ոսկե խմիչքը դա Վասկոյի վրա փորձիր:

Լսելով այդ խոսքերը՝ Թորեսը ակնհայտ ցասումով լի մի հայացք նետեց Ֆրենսիսի վրա:

— Պահեք ձեզ ամբողջ բարձրամտությամբ ու գոռոզությամբ,— սովորեցնում էր նրան Ֆրենսիսը:— Յրաժարվեցեք խմելուց: Տույց տվեք ձեր սաղավարտի ներսի մակագրությունը:

— Ես չեմ խմի,— սարսափահար բղավեց Թորեսը, երբ քուրմը դարձավ նրան:

— Ոչ, կիսմես: Եվ դրանով կապացուցես, որ իսկապես դա Վասկոն ես, Արևից իջած աստվածային նավապետը: Այն ժամանակ մենք բերանքսիվայր կփռվենք քո առաջ ու կերկրապագենք քեզ:

Թորեսն աղաչական նայեց Ֆրենսիսին, որը չխուսափեց քուրմի նեղիկ աչքերից:

— Ինչպես երևում է, պետք է խմեք,— չոր-չոր ասաց Ֆրենսիսը:— Ինչ արած: Հանուն օրիորդի դատարկեցեք շերտիդ և մեռեք հերոսի նման:

Անսպասելի կտրուկ շարժումով Թորեսը ձեռքն ազատեց կաշկանդող կապանքներից, պրկեց գլխից սաղավարտն ու պարզեց քուրմին այնպես, որ նա կարողանար ներսի մակագրությունը կարդալ:

— Նայի՛ր, թե ինչ է գրած այստեղ,— գոչեց նա:

Տեսնելով «Դա Վասկո» մակագրությունը, քուրմն այնպես ապշեց, որ շերեփը ձեռքից ընկավ: Զեղուկ ոսկին, թափվելով գետնին, բոցավառեց շուրջը փռված խռիվը, իսկ նիզակակիրներից մեկը, որի ոտքին մի քանի կաթիլ մետաղ ընկավ, ցավից աղաղակեց ու ամողջ ոտքի վրա ցատկոտելով հեռու փախավ: Սակայն Արևի քուրմն արագ տիրապետեց իրեն. վերցնելով ածուխի կաթասն, նա ուզեց վառել երեք գոհերի շուրջը կիտված խռիվը: Բայց այստեղ աղջնակը նորից միջամտեց:

— Արևի աստվածը չուզեց, որ մեծ նավապետը քո շերեփից խմի,— ասաց նա:— Արևի աստվածն ստիպեց քո ձեռքին՝ դողալ ու թափել խմիչքը:

Կորուսյալ Զոգինների բազմության միջով տրտունջ անցավ. որպես թե այստեղ ամեն բան այնքան էլ պարզ չէ: Եվ քուրմն ստիպված էր հրաժարվել իր մտադրությունից: Սակայն նա հաստատ որոշեց ոչնչացնել երեք եկվորներին, ուստի, օգնության կանչելով իր ողջ հնարագիտությունը, ասաց հավաքվածներին.

— Սպասենք վերին նշանին: Յուր բերեք: Թող Արևի աստվածն ինքը նշան տա մեզ: Մոմ բերեք:

Մի բանկա յուղը դատարկելով խռիվներին, որպեսզի արագ բռնկվեն, ծերուկը դրանց կենտրոնում մի կտոր մոմ տնկեց ու ասաց.

— Վերին նշանին կսպասենք այնքան ժամանակ, որքան այս մոմը կվառվի: Ծի՛շտ է, օ՛ ժողովուրդ իմ:

Եվ բոլոր Կորուսյալ Զոգիները շշուկով պատասխանեցին.

— Ծի՛շտ է:

Թորեսն աղաչական հայացքով նայեց Ֆրենսիսին, բայց սա ասաց.

— Ծեր սրիկան լավ է կարճացրել մոմը: Լավագույն դեպքում դա կվառվի հինգ րոպե, իսկ միգուցե երեք րոպեից հետո արդեն մենք բոցավառվենք:

— Հապա ի՞նչ անենք,— սարսափից իրեն կորցրած, հարցրեց Թորեսը, մինչդեռ Լեոնսիան ժպտաց տխուր, սիրով լի ժպիտով, խիզախորեն նայելով Ֆրենսիսի աչքերի մեջ:

— Աղոթեցեք, որ անձրև գա,— պատասխանեց Ֆրենսիսը:— Չնայած երկինքն ապակու պես պարզ է: Իսկ երբ ժամը հասնի, մեռեք տղամարդու նման: Եվ շատ բարձր մի՛ ճղղացեք:

Եվ նրա հայացքը դարձավ Լեոնսիային, արտահայտելով իրեն փոթորկող զգացմունքները, իր անսահման սերը նրա հանդեպ: Չնայած նրանց իրարից բաժանում էր այն սյուների միջև ընկած տարածությունը, որոնցից կապված էին, բայց և այնպես զգում էին, թե ինչպես իրենց միջև հաստատվեց մի հատուկ, մինչ այդ անծանոթ մոտիկություն, և հայացքներն այն օղակն էին, որ միավորում ու կապում էին նրանց:

Նշանը ամառիկը տեսավ աղջնակը, որն ամբողջովին աչք դարձած նայում էր երկնքին: Թորեսը, որ հետևում էր արդեն համարյա վերջացող մոմին, լսելով աղջկա բացականչությունը, նայեց վերև: Եվ նույն րոպեին լսեց,— ինչպես և բոլորը,— համաչափ մի դղրոյուն, ասես երկնքում հսկայական մի բզեզ էր թռչում:

— Օղանավ,— շնչաց Ֆրենսիսը:— Թորես, ասացեք նրանց, որ աստծու նշանը հենց դա է:

Բայց դրա կարիքը չկար: Նրանց գլխավերևում, հարյուր ֆուտից ոչ ավելի բարձրության վրա, պտտվելով իջնում էր ամառիկն օղանավը, որ Կորուսյալ Զոգիները երբևէ տեսել էին, իսկ նրա միջից, ասես վերուստ տրված օրհնություն, լսվեցին ծանոթ խոսքերը.

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Հագարի դեմ երկուսով:

Լրիվ շրջան գործելով՝ օդանավը մոտ հազար ֆուտ վեր բարձրացավ, ինչ-որ առարկա անջատվեց նրանից, մի երեք հարյուր ոտնաչափ քարի պես սլացավ ցած, ապա ուղիղ հավաքվածների գլխավերևում բացվեց իբրև հսկայական պարաշյուտ, որի տակ, ինչպես սարդը սարդոստայնում, ճոճվում էր ինչ-որ կերպարանք: Եվ երբ պարաշյուտն արդեն բոլորովին մոտեցել էր գետնին, նորից լսվեց երգը.

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Հագարի դեմ երկուսով:

Այստեղ դեպքերն սկսեցին ապշեցուցիչ արագությամբ իրար գլխի կիտվել: Մոմի կտորը մաս-մաս եղավ, և վառվող պատրույզն ընկավ հեղուկ ճարպագուբի մեջ. գուբը բռնկվեց, իսկ նրա հետ մեկտեղ բռնկվեց նաև յուղով ներծծված խռիվը: Բայց Յենրին, որ վայրեջք էր կատարել հենց Կորոսայալ Հոգիների բազմության մեջ, պարաշյուտով, ասես վերմակով, ծածկելով հավաքվածների ավելի քան կեսին, երկու ցատկով հայտնվեց իր բարեկամների կողքին ու սկսեց ոտքով դես ու դեն շարտել վառվող ջախը: Նա միայն մի վայրկյան շեղվեց այդ զբաղմունքից, երբ Արևի քուրմը փորձեց խանգարել նրան: Քունքին հասցված լավ հարվածը աստծու գառամյալ սպասավորին փռեց մեջքի վրա, և, մինչդեռ նա ուշքի կգար ու դժվարությամբ ոտքի կկանգներ, Յենրին հասցրեց արդեն Լեոնսիային, Ֆրենսիսին ու Թորեսին կապկաղո թոկերը կտրատել: Նա ձեռքերը պարզեց՝ Լեոնսիային գրկելու, բայց սա ետ հրեց նրան, բացականչելով.

— Շո՛ւտ, ժամանակ չկա բացատրելու: Ծնկի իջեք Թորեսի առաջ ու ցույց տվեք, որ դուք նրա ստրուկն եք. . . և մի՛ խոսեք անգլերեն:

Յենրին ոչինչ չհասկացավ, բայց Լեոնսիան իր խոսքերն ամրասկզբեց պերճախոս հայացքով, դրան ավելացրած և այն, որ Ֆրենսիսն էլ փռվեց իրենց ընդհանուր թշնամու ոտքերի տակ:

— Այ քեզ օյի՛ն,— փնթփնթաց Յենրին, Ֆրենսիսին միանալով:— Այ քեզ բա՛ն: Սա թերևս մկնդեղից էլ ավելի վատ լինի:

Լեոնսիան հետևեց նրանց օրինակին, նրա հետևից էլ ամբողջ Կորոսայալ Հոգիները փռվեցին նավապետ դա Վասկոյի առջև. չէ՞ որ նրանց աչքի առաջ թռավ եկավ Արևի երկնային մունետիկը: Բոլորը պառկած էին գետնին, բացի քուրմից. կատարված դեպքից ցնցված, նա դեռևս մտմտում էր, թե արդյոք ինքն է՛լ պետք է ընդունի օտարականի աստվածային ծագումը, բայց այդ րոպեին Թորեսի հոգում բուն դրած մելոդրամայի խարդախ սատանան գայթակղեցրեց նրան՝ գերջանադրությամբ կատարելու իր դերը:

Մի բարձրամտությամբ, որի մասին Ֆրենսիսը շարունակ հիշեցնում էր նրան, Թորեսը աջ ոտքը բարձրացրեց ու դրեց Յենրիի վզին, ցավազնորեն ճմլելով նրա ականջը:

Յենրին տառացիորեն թռավ օդի մեջ:

— Ինչպե՛ս ես համարձակվում, Թորես,— բղավեց նա, Թորեսին շարտելով գետին, ինչպես քիչ առաջ քուրմին էր գետին շարտել:

— Դե, այժմ ամեն ինչ կորավ,— հուսահատորեն հառաչեց Ֆրենսիսը:

Եվ իրոք, Արևի քուրմն արդեն գլխի ընկավ, թե բանն ինչու՞մն է, և ուրախությամբ ձեռքերն էր թափահարում, կանչելով իր նիզակակիրներին: Բայց Յենրին ավտոմատ ատրճանակը դեմ տվեց ծեր քուրմի փորին, և սա հանկարծ հիշեց մահաբեր արկերի լեգենդը, արկեր, որոնք լցված են «վառող» կոչվող խորհրդավոր նյութով, ժպտաց հաշտարար եղանակով ու նշանացի հրամայեց նիզակակիրներին նահանջել:

— Սա իմ խելքից ու մտքից վեր է,— հայտարարեց նա, դիմելով իր ցեղին ու աչքը չկտրելով Յենրիի ատրճանակի փողից:— Ես ստիպված եմ դիմել վերջին միջոցին. սուրհանդակ ուղարկենք, որպեսզի արթնացնի Երագողին: Թող ասի նրան, որ մեզ մոտ են եկել երկնքից, կամ միգուցե Արևից իջած մարդիկ, և որ միայն նրա երազների իմաստությունն է ի վիճակի պարզելու մեզ համար այն, ինչ նույնիսկ ես անկարող եմ հասկանալ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Նիզակակիրները շրջապատեցին խումբը, որ բաղկացած էր Լեոնսիայից, երկու Սորգաններից ու Թորեսից, և տարան զվարթ կանաչին տվող, չնայած պարզունակ, բայց հիանալի մշակված դաշտերի, արագահոս առվակների ու ոչ մեծ մարգագետինների միջով, արոտավայրերի միջով, որոնք ծածկված էին մինչև ծնկները հասնող խոտով, և ուր արածում էին խոշոր հորթերի նմանվող ցածիկ կովեր:

— Սրանք, անկասկած, իսկական կթու կովեր են,— ասաց Յենրին:— Ի՛նչ գեղեցիկ են: Բայց երբևէ այսպիսի թզուկներ տեսե՞լ եք: Ուժեղ տղամարդը կարող է առանց դժվարության ամենախոշորին վերցնել ուսերին ու տանել:

— Կարծում եմ, սխալվում ես,— առարկեց Ֆրենսիսը:— Նայիր հապա այն սևին: Գրագ կգամ, որ նա երեք հարյուր ֆուտից պակաս չի կշռում:

— Որքա՞ն ես դնում:

— Ինքդ ասա:

— Հարյուր դոլար՝ հարյուրի դիմաց, որ ես կարող եմ նրան ուսիս առնել ու տանել,— հայտարարեց Յենրին:

— Համաձայն եմ:

Բայց թե նրանցից ո՛վ էր իրավացի, այդպես էլ անհայտ մնաց, որովհետև հենց որ Յենրին մի քայլ արավ դեպի կովերը, նիզակակիրները դեմքի ծամածռությամբ ու շարժումներով ստիպեցին նրան ետ դառնալ ու քայլել բոլորի հետ:

Անցնելով մռայլ մի ժայռի ստորոտից, նրանք վերևում այծերի մի հոտ տեսան:

— Ընտանի այծեր են,— նկատեց Ֆրենսիսը:— Տեսնում եք, նրանց հետ հովիվ տղաներ կան:

— Իզուր չէ, որ ասում էիք, թե ձեզ մատուցված ռագուն այծի մսից է,— ասաց Յենրին:— Ես միշտ էլ այծեր սիրել եմ: Եթե այդ նույն Երագողը, կամ ուրիշ ինչ կերպ ուզում է կոչվի, վերացնի քուրմի որոշումն ու մեզ կենդանի թողնի, և եթե մենք ստիպված լինենք մինչև մեր կյանքի վերջն ապրել Կորուսյալ Հողիների հետ, կիսնդրեմ, որպեսզի ինձ դարձնեն այս թագավորության այծերի գլխավոր հովիվ: Այն ժամանակ, Լեոնսիա, ես մի սիրուն քոտեջ կշինեմ ձեզ համար, և դուք կդառնաք պանիրների պալատական մատակարարուհի:

Բայց սա հնարավորությունն չունեցավ իր ֆանտաստիկ ծրագիրը զարգացնելու, քանզի այդ թույլերն նրանք դուրս եկան այնպիսի անպատմելի գեղեցկության մի լճի ափ, որ Ֆրենսիսը մինչև իսկ շվացրեց, Լեոնսիան ծափ զարկեց, իսկ Թորեսն ինչ-որ հավանության խոսքեր մրթմրթաց: Այդ լիճը փռվել էր ամբողջ մի մղոն երկարությամբ և ավելի քան կես մղոն լայնությամբ, ու անթերի ձվաձև էր: Միայն մի տուն էր խրվել ծառերից, բամբուկե մացառուտից ու թփուտներից կազմված շրջանակի մեջ, որոնք օղակաձև շրջապատում էին լիճը ու չէին ընդհատվում նույնիսկ ժայռի ստորոտում, ուր բամբուկն առանձնապես փարթամ էր աճել: Շրջապատի լեռներն այնպիսի հստակությամբ էին արտացոլվել լճի հարթ մակերևույթի մեջ, որ աչքը կդժվարանար որոշել՝ որտե՞ղ է վերջանում իրականությունը և որտեղ սկսվում արտացոլումը:

Լեոնսիան երկար չհիացավ հայելանման հարթությամբ. մի քանի թույլերից հետո նա հանկարծ հիասթափված նկատեց, որ լճի ջուրը բյուրեղային մաքրության ջուր չէ:

— Ափսոս, որ այդպես կեղտոտ է:

— Այդ նրանից է, որ հովիտն արգավանդ հողեր ունի,— բացատրեց Յենրին:— Այստեղ սևահողի շերտը հասնում է մի քանի հարյուր ֆուտի:

— Հավանորեն մի ժամանակ այս ամբողջ հովիտը եղել է լճի հատակ,— միջամտեց Ֆրենսիսը:— Նայեցեք ժայռին. նրա վրա երևում է, թե առաջ ջուրը մինչև որտեղ էր հասնում: Հետաքրքիր է, թե ինչու է նվազել:

— Ամենայն հավանականությամբ, երկրաշարժից հատակի տակ ինչ-որ անցք է բացվել, և լիճն իջել է մինչև իր այժմյան մակարդակը: Նա հիմա էլ է շարունակում նվազել: Այդ շոկոլադային գույլը ցույց է տալիս, որ նրա մեջ շարունակ ջրի նորանոր պաշարներ են լցվում, և սևահողը, որով հագեցած է, չի հասցնում նստել: Անկասկած, այս լիճը յուրատեսակ մի ավազան է, որի մեջ թափվում են շրջակայքի ողջ ջրերը:

— Ահա վերջապես և տունը,— հինգ րոպե հետո ասաց Լեոնսիան, երբ շրջանցելով ժայռի ելուստը, նրանք նկատեցին ժայռին ծեփված, բունգալոյի տիպի մի ցածրիկ շինություն, որն ուղղակի կախվել էր լճի վրա:

Տան համար իբրև ցցեր էին ծառայում ծառերի հաստ բները, բայց պատերը բամբուկից էին, իսկ տանիքը՝ ծղոտից: Այդ տունն այնպես առանձնակի էր կանգնած, որ այնտեղ հասնել կարելի էր կամ նավակով, կամ քսան ֆուտ երկարությամբ կամուրջով՝ այնքան նեղ, որ դեմ-դիմաց երկու մարդ չէին կարող իրար ճամփա տալ: Կամրջի ամեն մի ծայրին կանգնած էին երկուական պատանի ժամապահներ: Ենթարկվելով առջևից գնացող Արևի քուրմի նշանին՝ պատանի ժամապահները քաշվեցին մի կողմ, բաց թողնելով ամբողջ խումբը. ըստ որում, երկու Մորգաններն էլ նկատեցին, որ Մեծ տնից իրենց ուղեկցող նիզակակիրները մնացին կամրջի մյուս կողմում:

Անցնելով կամրջակը, նրանք ներս մտան բունգալոյի նման մի տուն ու հայտնվեցին ընդարձակ սենյակում, որ կահավորված էր ավելի լավ, քան կարելի էր սպասել Կորոսյալ Յոգիների Յովտում, չնայած և խիստ պարզունակ: Յատակին փռված խոտե խսիրները նուրբ ու գեղեցիկ գործվածք ունեին, իսկ պատուհանները ծածկող բամբուկե վարագույրները մինչև իսկ վարպետորեն էին պատրաստված: Սենյակի հեռավոր ծայրին, պատի տակ, բարձրանում էր ծագող արևի հսկայական ոսկե խորհրդանշանը՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին կախված էր Մեծ տան մոտ, գրհարանի վերևում: Բայց այդ տարօրինակ տեղում գերիների հատկապես ապշեցրին երկու կենդանի արարածներ, որոնք նրանց հայտնվելով տեղերից չշարժվեցին անգամ: Արևի սկավառակի ներքո, ոչ մեծ բարձրության վրա, բազմաթիվ բարձերով մահիճն էր՝ մի տեսակ կիսաբազմոց-կիսագահ: Իսկ այդ մահճում, բարձերի միջև, քնած էր մի կին՝ ինչ-որ փափուկ, փայլուն գործվածքի շապկով, ինչպիսին նրանցից ոչ ոք երբևէ չէր տեսել: Նրա կուրծքը հանդարտ բարձրանում էր ու իջնում: Նա, անշուշտ, չէր պատկանում Կորոսյալ Յոգիների ցեղին, կարաիբների և իսպանացիների այդ այլասերվող խառնուրդին: Գլխին կար դրվագված ոսկյա տիարա, պատած այնպիսի մեծության թանկագին քարերով, որ թվում էր, թե թագ է:

Կնոջ առջև հատակին դրված էին երկու ոսկյա եռոտանի. մեկի տակ վառվում էր կրակը, իսկ մյուսի վրա, որն զգալիորեն ավելի մեծ էր, դրված էր մի հսկայական ոսկե կաթսա: Եռոտանիների միջև, սֆինքսի պես անշարժ ու անթարթ. թաթերը մեկնած պառկել էր վիթխարի մի շուն, ձյան պես սպիտակ, նման ռուսական գելխեղդ շների: Եկողներին տեսնելով՝ շունն աչքերը չռեց նրանց վրա:

— Դե ախր այդ կինն իսկապես լեդի է, նման թագուհու. նրա երագներն էլ, անշուշտ, թագավորական են,— շնչաց Յենրին, և դրա համար իսկույն արժանացավ քուրմի զայրացկոտ հայացքին:

Լեոնսիան նայում էր շունչը պահած, իսկ Թորեսը ցնցվեց, խաչ հանեց երեսին ու ասաց.

— Երբեք չէի լսել, թե Կորոսյալ Յոգիների Յովտում այսպիսի հրաշք գոյություն ունի: Այդ կինն ամենախիսկական իսպանուհի է: Ավելին. նրա երակներում կաստիլիական ազնիվ արյուն է հոսում: Եվ աչքերն էլ պետք է երկնագույն լինեն. դա նույնքան ճշմարիտ է, որքան այն, որ ես ահա կանգնած եմ այստեղ: Բայց որքան գունատ է:— Նա նորից ցնցվեց:— Նրա քունը մի տեսակ անբնական քուն է: Կարծես ինչ-որ բան են խմեցրել և խմեցնում են արդեն վաղուց:

— Միանգամայն ճիշտ է,— ընդհատեց նրան Ֆրենսիսը հուզված շշուկով:— Երագողը նարկոտիկ քիի մեջ է: Երևի սրանք մշտապես նարկոտիկներով են սնում այդ կնոջը: Ինչպես երևում է, նա սրանց մոտ բարձրագույն քուրմի կամ գերագույն պատգամախոսի նման ինչ-որ բան է... Դե մի հուզվիր, ծերուկ,— դիմեց նա քուրմին իսպաներեն լեզվով:— Ի՞նչ մի սարսափելի բան կա, եթե մենք նրան արթնացնենք: Չէ որ մեզ բերել են այստեղ, որպեսզի ծանոթացնեն նրա հետ, և, ես հուսով եմ, ոչ քնած վիճակում:

Գեղեցկուհին շարժվեց տեղում, ասես այդ շշուշուները խռովեց նրա քունը: Եվ առաջին անգամ այդ ամբողջ ժամանակամիջոցում շարժվեց նաև շունը. նա գլուխը շուռ տվեց տիրուհու կողմը, և քնածի ձեռքը սիրալիք քնքշությամբ իջավ նրա պարանոցին: Քուրմն ավելի հրամայաբար ծամածռեց դեմքն ու ձեռքերը թափահարեց, պահանջելով լռություն: Բոլորը լուռ քարացան, դիտելով գուշակուհու արթնացումը:

Նա դանդաղորեն բարձրացավ մահճում և նորից քնքշորեն շոյեց երջանկացած շանը, որն ուրախ-ուրախ կլանչեց, մերկացնելով իր սարսափելի ժանիքները: Այդ տեսարանը երկյուղած սարսուռ առաջացրեց. բայց գերիներն ավելի մեծ սարսուռ զգացին, երբ կինը ուղիղ նայեց նրանց: Նրանք մինչ այդ երբեք այդպիսի աչքեր չէին տեսել. դրանց մեջ ասես արտացոլվում էին աստղերից վեր ու աստղերից վար գտնվող բոլոր աշխարհների ցոլքերը: Լեոնսիան ակամայից բարձրացրեց ձեռքը, ասես ուզում էր խաչակնքել, իսկ Թորեսը, ցնցված այդ հայացքից, ոչ միայն խաչակնքեց, այլևս սկսեց դողդոջուն շոթունքներով շշուշալ իր սիրած աղոթքն առ կույս Մարիամ: Մինչև իսկ Ֆրենսիսն ու Յենրին նայում էին նրան ասես դյուրված, անգործ՝ հայացքները կտրելու այդ աչքերի անհատակ կապույտից, աչքեր, որոնք բոլորովին սև էին թվում երկար, սև թարթիչների ստվերում:

— Կապուտայա թխահեր,— այնուամենայնիվ շշուշաց Ֆրենսիսը:

Ինչպիսի՜ աչքեր. . . Ավելի շուտ կլոր, քան երկարավուն: Բայց ոչ բոլորովին կլոր: Քառակուսի՜: Ոչ, բայց և այնպես ավելի ճիշտ՝ կլոր: Այնպիսի ձևի, որ ասենք թե նկարիչը, առանց ծայրը թղթից կտրելու, գծում է մի քանի քառակուսիներ, դրանց բոլոր անկյունները առնելով մի շրջագծի մեջ: Երկար թարթիչներն ստվերում էին կնոջ աչքերը, որի պատճառով նրանք անհատակ էին թվում: Անծանոթներին տեսնելով՝ այդ աչքերում ոչ զարմանք երևաց, ոչ երկյուղ, այլ միայն երազկոտ անտարբերություն: Ասենք, չնայած հոգևատանջ հայացքին, ակնհայտորեն գեղեցկուհու գիտակցությանն էր հասնում այն ամենը, ինչ նա տեսնում էր: Հանկարծ, ի մեծ զարմանս եկվորների, նրա աչքերում արտացոլվեց երկրային զգացմունքների մի ամբողջ գամմա: Հետզհետե աճելով՝ նրա Էուբայան ինչ-որ խորքերում թրթռաց թաքցրած ցավը: Հանկարծ կարեկցանքը պարուրեց դրանք խոնավ քողով, ինչպես զարնանային անձրևն է պարուրում ծովի կապույտ հեռուն, կամ առավոտյան մշուշը՝ լեռները: Ցավը, միշտ նույն ցավն էր՝ թաքնված նրանց սիրիուն անխռովության տակ: Թվում էր, թե ահա ուր որ է այդ աչքերում կամքի, գործողության Էլեկտրական կայծով կբռնկվի անսահման արիության կրակը: Բայց քնկոտ անզգայությունը պատրաստ էր իսկույն իջնել փափուկ, նախշավոր վարագույրի պես և քնած կնոջն անջրպետել բոլոր ապրումներից ու զգացմունքներից: Սակայն այդ ամենը հետին պլան էր քաշվում դարերի իմաստության առաջ, որով շնչում էր անծանոթուհու ողջ դեմքը: Այդ տպավորությունն առանձնապես ուժեղանում էր, երբ նայում էին նրա փոս ընկած այտերին, որոնք վկայում էին ճգնաժամի անկասկածի մասին: Այդ այտերին վառվում էր ոչ այն է թոքախտային, ոչ այն է կոսմետիկական մի վառ կարմրություն:

Երբ կինը բարձրացավ իր մահճից, պարզվեց, որ նա ֆեյայի պես բարախիկ է ու փխրուն: Նա փոքրակազմ էր, վտիտ, բայց նիհարի տպավորություն չէր թողնում: Եթե Յենրիի և Ֆրենսիսի կարծիքը հարցնեին, ապա նրանք թերևս ասեին, որ նա նիհար կանանցից ամենահրապուրիչն էր աշխարհում:

Արևի ծեր քուրմն իր զառամյալ մարմնով փռվեց հատակին՝ կնճռապատ ճակատը խոտե խսիրին հայելով: Մյուսները շարունակում էին կանգնած մնալ, չնայած Թորեսի ծնկները ծալվում էին, և նա, անշուշտ, կհետևեր քուրմի օրինակին, եթե իր ուղեկիցների կողմից դրան հետևելու ամենաչնչին պատրաստակամությունն իսկ նկատեր: Ընդհանրապես նրա ծնկները ծալվում էին, բայց, նայելով շիփ-շիտակ կանգնած Լեոնսիային և Մորգաններին, հարկադրեց իրեն ուղղվել:

Սկզբում Երազողը նայում էր միայն Լեոնսիային. ուշադիր գննելով աղջկան, նա գլխի շարժումով հրամայեց նրան՝ մոտենալ իրեն: Լեոնսիայի կարծիքով այդպիսի օդեղեն ու չքնաղ արարածի համար այդ շարժումը հույժ հրամայական էր, և նա իսկույն հակակրանք զգաց գեղեցկուհու հանդեպ: Ուստի տեղից չշարժվեց, մինչև որ Արևի քուրմը \$22ացող շշուշով չիրամայեց հնազանդվել: Այն ժամանակ Լեոնսիան ուղղվեց դեպի գեղեցկուհին, ուշադրություն չդարձնելով բրդոտ հսկա շան վրա. նա անցավ եռոտանիների միջից, շան մոտով, ու կանգ առավ միայն երկրորդ նշանով, նույնքան հրամայական, որքան և առաջինը: Մի ամբողջ րոպե երկու կանայք էլ սևեռուն հայացքներով նայում էին իրար, և այստեղ հաղթանակի ակամա զգացումով Լեոնսիան նկատեց, թե ինչպես նա՝ մյուսը, խոնարհեց աչքերը: Բայց նրա ուրախությունը վաղաժամ էր.

Երագորդը պարզապես գորոզ հետաքրքրասիրությամբ գննում էր Լեոնսիայի հագուստը: Նա նույնիսկ իր բարակ, գունատ ձեռքը պարզեց և զուտ կանացիորեն շոշափեց գործվածքը:

— Զուրմ,— կտրուկ ասաց նա:— Այսօր Արևի երրորդ օրն է Մանգոյի Տանը: Ես վաղուց էի արդեն կանխագուշակել, թե այդ օրը ինչ տեղի կունենա: Հիշեցրու, թե ինչ:

Հաճոյակատարությամբ գալարվելով նրա առաջ՝ Արևի քուրմը խոնթխոնթաց.

— Որ այդ օրը տեղի կունենան արտասովոր դեպքեր: Այդպես էլ եղավ, օ՛ թագուհի:

Բայց թագուհին արդեն մոռացավ, թե ինչ էր հարցրել: Շարունակելով շոյել կտորը, որից կարված էր Լեոնսիայի զգեստը, նա ուշադիր գննում էր նրան:

— Դու շատ բախտավոր ես,— ասաց թագուհին, ձեռքի շարժումով հասկացնելով Լեոնսիային, որ կարող է վերադառնալ յուրայինների մոտ:— Զեզ սիրում են տղամարդիկ: Դեռ ինձ ամեն ինչ պարզ չէ, բայց ես զգում եմ, որ տղամարդիկ քեզ շատ են սիրում:

Նրա փափուկ ու ցածր ձայնը աչքի էր ընկնում հնչյուն ինչ-որ զարմանալի հստակությամբ ու երգայնությամբ. դա նման էր երեկոյան զանգահարության, որը հավատացյալներին կանչում է աղոթելու, իսկ հոգով վշտացյալներին՝ հավիտենական հանգստի: Բայց Լեոնսիան ի վիճակի չէր գնահատելու այդ հրաշալի ձայնը: Նա զգում էր միայն, թե զայրույթից ինչպես շառագունեցին այտերը, և սիրտն սկսեց ավելի ուժգին բաբախել:

— Ես քեզ առաջ էլ եմ տեսել, և շատ անգամներ,— շարունակեց թագուհին:

— Երբե՞ք,— բացականչեց Լեոնսիան:

— Սը՛ս,— Ֆշշացրեց նրա վրա Արևի քուրմը:

— Այնտեղ,— ասաց թագուհին, մատնացույց անելով ոսկե մեծ կաթսան,— ես քեզ հաճախ եմ տեսել այնտեղ:

— Զեզ նույնպես,— ասաց նա՝ դիմելով Հենրիին:

— Եվ քեզ,— ասաց նա Ֆրենսիսին, բայց այստեղ նրա կապույտ, խոշոր աչքերն էլ ավելի լայնացան, և նա Ֆրենսիսի վրա այնպիսի երկար, սևեռուն մի հայացք զցեց, որ Լեոնսիան զգաց, թե ինչպես խանդը դաշույնի պես խոցեց իր սիրտը, մի խանդ, որ միայն կիսը կարող է ներշնչել մի այլ կնոջ:

Թագուհու աչքերը փայլատակում էին, երբ նա իր հայացքը Ֆրենսիսից դարձրեց Թորեսի վրա:

— Իսկ դո՛ւ ով ես, օտարական: Դու այնպես տարօրինակ ես հագնված. գլխիդ ասպետի սաղավարտ ունես, իսկ ոտքերիդ՝ ստրուկի սանդալներ:

— Ես դա Վասկոն եմ,— քաջաբար պատասխանեց նա:

— Դա շատ հինավուրց անուն է,— ժպտաց թագուհին:

— Ես հենց այդ հինավուրց դա Վասկոն եմ որ կամ,— ասաց նա ու առանց կանչելու մոտեցավ նրան. կիսը քմծիծաղեց այդ հանդգնության վրա, բայց չընդհատեց նրան:— Այս սաղավարտն իմ գլխին էր չորս հարյուր տարի առաջ, երբ ես Կորուսյալ Հողիների Նախնիներին բերեցի այս հովիտը:

Թագուհին ժպտաց կասկածամտորեն ու կամացուկ հարցրեց.

— Ուրեմն, դու ծնվել ես չորս հարյուր տարի առա՞ջ:

— Ե՛վ այդ, և՛ ոչ: Ես երբեք ծնված չեմ եղել: Ես դա Վասկոն եմ: Ես հավերժորեն գոյություն եմ ունեցել: Արևն է իմ տունը:

Թագուհու նրբագեղորեն գծագրված հոնքերը տարակուսանքով վեր բարձրացան, բայց նա լռեց: Մահճի մոտ դրված ոսկե փորագրված զգրոցից իր բարակ, համարյա թափանցիկ մատներով նա մի պտղունց ինչ-որ փոշի վերցրեց ու անփութորեն նետեց մեծ եռոտանու վրա դրված կաթսայի

մեջ, որի ժամանակ նրա նուրբ ու գեղեցիկ շրթունքները թեթևակի ծաղրական ժպիտից ծռմռվեցին: Կաթսայից ծխի մի սյուն բարձրացավ, որն իսկույն էլ լուծվեց ու չքացավ:

— Նայի՛ր,— հրամայեց նա:

Եվ Թորեսը մոտեցավ կաթսային ու նայեց նրա մեջ: Նրա ուղեկիցներն այնպես էլ երբեք չիմացան, թե նա ինչ տեսավ այնտեղ: Բայց թագուհին նույնպես խոնարհվել էր կաթսայի վրա և, դիտելով իր բարձունքից, տեսավ այն, ինչ որ տեսավ Թորեսը, և կնոջ դեմքին երևաց արհամարհական-կարեկցական մի ժպիտ: Իսկ Թորեսը տեսավ ննջարանը Բոկաս-դել Թորոյի տան երկրորդ հարկում, տուն, որը նրան էր անցել ժառանգաբար, և այդ ննջարանում մի օրորոց՝ նորածինը միջին: Այդ կարեկցական տեսարանը բացում էր նրա ծննդյան գաղտնիքը, և կարեկցական էր նաև թագուհու ժպիտը: Կախարդանքով Թորեսի աչքերի առաջ հայտնված «վառ տեսիլքը բացում էր նրան այն, ինչ նա գուշակում էր ու վաղուց արդեն կասկածում:

— Դու էլի ինչ-որ բան կտեսնես,— մեղմ ծաղրանքով ասաց թագուհին:— Ես քեզ ցույց տվի քո կյանքի սկիզբը: Իսկ այժմ նայիր նրա վախճանին:

Բայց Թորեսը, որ առանց այդ էլ ապշած էր տեսածով, ցնցվեց ու ետ ընկրկեց կաթսայից:

— Ներիր ինձ, գեղեցկուհի,— աղերսեց նա:— Եվ թույլ տուր հեռանալ: Մոռացիր այն, ինչ տեսար, ինչպես որ ես էլ հուսով եմ մոռանալ:

— Այնտեղ արդեն ոչինչ չկա,— ասաց թագուհին, ձեռքը թափահարելով կաթսայի վրա: Բայց մոռանալ չեմ կարող: Այն, ինչ ես տեսա, ընդմիշտ կմնա իմ հիշողության մեջ: Եվ քեզ էլ, ով Մարդ, տարիքով այդքան ջախել և այդքան ծեր, սաղավարտից դատելով, ես առաջ տեսել եմ իմ Աշխարհի Հայելում: Դու շատ անգամներ ես քո վարմունքով վրդովել ինձ: Բայց ոչ նրանով, որ կրում ես այդ սաղավարտը:— Նա ժպտաց հանգիստ, իմաստուն ժպիտով:— Ինձ թվում է, թե ամբողջ կյանքում ես իմ առաջ տեսել եմ մեռյալների քարայրը, ուր վաղուց ի վեր մեռած ասպետները կանգնել են ձգված, պահպանելով դարերի ընթացքում իրենց կրոնին, իրենց ցեղին խորթ գաղտնիքներ: Եվ այդ մեռյալների մեջ, հիշում եմ, ես տեսա հենց նրան, որի գլխին դրված էր քո հինավուրց սաղավարտը... Շարունակե՛մ պատմել

— Ո՛չ, ո՛չ,— աղերսեց Թորեսը:

Երագորը գլուխը թեքեց, հասկացնելով Թորեսին, որ հեռանա: Ապա նրա հայացքը կանգ առավ Ֆրենսիսի վրա, և գլխի շարժումով կանչեց նրան իր մոտ: Եվ, ինչպես երևում է, իսկույն էլ ուշքի գալով, որ իր բարձունքից վերից վար է նայում նրան, շփոթված իջավ հատակին ու այժմ արդեն նայելով վարից վեր, ձեռքը պարզեց նրան: Ֆրենսիսն անվճռականորեն սեղմեց այն, չիմանալով, թե հետո ինչ անի: Եվ, ասես կարդալով երիտասարդի մտքերը, կինը բացակայեց:

— Արա՛ այդ: Մինչև այժմ ոչ ոք դեռ իմ ձեռքը չի համբուրել: Ես երբեք չեմ տեսել, թե կյանքում ինչպես են անում, այլ տեսել եմ միայն իմ անուրջներում ու մեկ էլ այն պատկերներում, որ ինձ ցույց է տվել Աշխարհի Հայելին:

Ֆրենսիսը կռացավ ու համբուրեց նրա ձեռքը: Եվ քանի որ կինը ամենաչնչին ցանկությունն իսկ չունեցրեց ետ քաշելու իր ձեռքը, Ֆրենսիսը շարունակում էր պահել, ափով զգալով, թե արյունն ինչպես է հազիվ որսալի, բայց անխափան կերպով տրոփում նրա մատների վարդագույն ծայրերին: Այդպես նրանք երկուսով էլ կանգնել էին առանց ծպտուն հանելու: Ֆրենսիսը շփոթված էր, թագուհին թեթևորեն հառաչում էր, իսկ Լեոնսիայի սրտում փոթորկում էր մաքուր կանացի խանդը: Հանկարծ Հենրին ուրախ վրա տվեց անգլերեն.

— Դե, մեկ էլ համբուրիր նրա ձեռքը, Ֆրենսիս: Այդ բանը նրան դուր եկավ:

Արևի քուրմը սաստեց նրան: Բայց թագուհին, որ կուսական ամոթխածությամբ պատրաստվում էր ձեռքը ետ քաշել Ֆրենսիսի ձեռքից, նորից շտապով ափը նրա ափի մեջ դրեց:

— Ես նույնպես խոսում եմ այն լեզվով, որով խոսում ես դու,— ասաց նա Հենրիին:— Եվ ես, որ երբեք տղամարդ չեմ ճանաչել, չեմ ամաչի խոստովանել, թե դա դուր եկավ ինձ: Դա իմ կյանքում առաջին համբուրյուն է: Ֆրենսիս,— կարծես այդպե՛ս անվանեց քեզ քո բարեկամը,— լսիր նրան: Դա ինձ դուր եկավ: Դա ինձ շատ դուր եկավ: Մի անգամ էլ համբուրիր իմ ձեռքը:

Եվ Ֆրենսիսը ենթարկվեց. կնոջ ձեռքը առաջվա պես «մնում էր նրա ձեռքի մեջ, իսկ ինքը՝ թագուհին, մոռացած աշխարհում ամեն ինչ, ասես դյուրված, առանց կտրվելու նայում էր նրա աչքերին: Վերջապես, օգնության կոչելով իր ողջ կամքը, նա տիրապետեց իրեն, արագ ազատեց ձեռքը, նշանացի հրամայեց Ֆրենսիսին հեռանալ ու դիմեց Արևի քուրմին:

— Եվ այսպես, քուրմ,— սկսեց նա, և նրա ձայնի մեջ խիստ երանգներ հնչեցին,— արդեն հայտնի է ինձ, թե դու ինչո՞ւ ես գերիներին այստեղ բերել: Բայց և այնպես ես կուզենայի, որ դու ինքդ պատմեիր այդ մասին:

— Օ՛, թագուհի: Մի՞թե մեր պարտքը չի հրամայում սպանել այս եկվորներին, ինչպես պահանջում է սովորույթը: Ժողովուրդը շփոթահար է, չի վստահում իմ դատողությանը ու խնդրում է, որ դու որոշես:

— Իսկ դու գտնում ես, որ նրանց պետք է սպանե՞լ:

— Այո, իմ կարծիքն այդ է: Բայց ես ուզում եմ իմանալ քոնը, որպեսզի մեր կարծիքները միատեսակ լինեն:

Կինը նորից դիտեց չորս գերիներին. Թորեսին՝ արգահատանքով, Յենրիին՝ կասկածանքով, Լեոնսիային՝ մռայլ, իսկ Ֆրենսիսին՝ մի ամբողջ թույլ անսահման քնքշությամբ լի հայացքով,— համենայն դեպս, այդպես թվաց կատաղած Լեոնսիային:

— Ձեր մեջ կա՞ն այնպիսիները, որ կին չունեն,— անսպասելիորեն հարցրեց թագուհին:— Ասենք, ոչ,— շարունակեց նա, առանց պատասխանի սպասելու,— չէ՞ որ ես գիտեմ, որ ոչ մեկդ էլ կին չունի:— Եվ նա արագ շուռ եկավ դեպի Լեոնսիան.— Իսկ մի՞թե ճիշտ է,— հարցրեց նա,— որ կինը երկու ամուսին ունենա:

Լսելով այդ տարօրինակ ու անտեղի հարցը, ինչպես Յենրին, այնպես էլ Ֆրենսիսը չկարողացան ժպիտները զսպել: Սակայն Լեոնսիային և այդ հարցը ո՛չ անտեղի թվաց, ո՛չ տարօրինակ, և նրա այտերը նորից բռնկվեցին զայրույթով: Նա հասկացավ, որ իր առաջ կանգնած է իսկական մի կին, որը և նրա հետ կվարվի իբրև կին:

— Ոչ, ճիշտ չէ,— բարձր ու անհապաղ պատասխանեց Լեոնսիան:

— Դա շատ տարօրինակ է,— շարունակեց բարձրաձայն խորհրդածել թագուհին:— Տարօրինակ է ու անարդարացի: Քանի որ աշխարհում հավասար թվով տղամարդիկ ու կանայք կան, չի կարող արդարացի լինել, երբ մի կին երկու ամուսին ունենա. չէ՞ որ դա կնշանակեր, թե ինչ-որ մեկ ուրիշը բոլորովին ամուսին չի ունենա:

Նա մի պտղունց փոշի առավ ու նետեց իր ոսկե կաթսայի մեջ: Առաջվա նման նրա միջից ծխի մի սյուն բարձրացավ վեր ու իսկույն ցնդեց:

— Քուրմ, Աշխարհի Չայելին կասի ինձ, թե ինչպես պետք է վարվել մեր գերիների հետ:

Նա ուզում էր արդեն թեքվել կաթսայի վրա, երբ հանկարծ գլխում մի նոր միտք ծագեց: Լայն մի շարժումով, ասես գիրկը բանալով նրանց առաջ, նա բոլորին էլ հրավիրեց կաթսայի մոտ:

— Եկեք միասին նայենք,— ասաց նա:— Չեմ խոստանում, թե բոլորս էլ միևնույն բանը կտեսնենք: Ես էլ չեմ իմանա, թե ձեզանից յուրաքանչյուրն ինչ է տեսնում: Բայց ամեն մեկը կտեսնի լույս այն, ինչ վերաբերում է իրեն: Դու ևս կարող ես մոտենալ, քուրմ:

Կաթսան, որի տրամագիծը հասնում էր վեց ֆուտի, կիսով չափ լիքն էր ինչ-որ մետաղով:

— Ասես սնդիկ լինի, բայց սնդիկ չէ,— շնչաց Յենրին Ֆրենսիսին:— Երբեք այդպիսի մետաղ չեմ տեսել. Իմ կարծիքով դա հավված է:

— Ընդհակառակը, բոլորովին սառն է,— առարկեց նրան թագուհին անգլերեն լեզվով:— Բայց և այնպես դա կրակ է... Հապա, Ֆրենսիս, դրսի կողմից շոշափիր կաթսան:

Ֆրենսիսը ենթարկվեց և առանց տատանվելու ավի կացրեց կաթսայի կողին:

— Սա ավելի սառն է, քան սենյակի օդը,— ասաց Ֆրենսիսը:

— Իսկ հիմա նայեցեք,— բացականչեց թագուհին և Էլի մի քիչ փոշի գցեց կաթսայի մեջ:— Դա կրակ է, չնայած սառն է:

— Դա պարզապես մի փոշի է, որն ինքն իրեն բռնկվում է ու ծխում,— ասաց Թորեսը, խառնշտորելով բաճկոնի գրպանը. նա հանեց այնտեղից մի բուռ մանրացրած ծխախոտ, մի քանի կոտրատված լուցկի և շորի մի կտոր:— Իսկ ահա սա չի վառվի:— Եվ նա գրգռիչ տեսքով պատրաստվեց այդ ամենը նետել կաթսայի մեջ:

Ի նշան թույլտվության, թագուհին գլխով արեց նրան, և Թորեսը բոլորի աչքի առաջ կաթսայի մեջ նետեց այն ամենը, ինչ որ ձեռքում կար: Նույն վայրկյանին ծուխը դուրս հորդեց կաթսայից ու իսկույն ցնդեց օդում: Մետաղի հարթ մակերեսին չմնաց ոչինչ, անգամ մոխիր:

— Բայց և այնպես նա սառն է,— պնդեց Թորեսը և, Ֆրենսիսի օրինակով, շոշափեց կաթսայի կողը:

— Մատդ մտցրու նրա մեջ,— առաջարկեց թագուհին:

— Է՛, ո՛չ,— ասաց նա:

— Դու իրավացի ես,— համաձայնեց կինը:— Եթե անեիր, ապա այժմ մի մատ պակաս կունենայիր, քան ծնվելիս:— Նա Էլի մի քիչ փոշի նետեց կաթսայի մեջ:— Հիմա նայեք, և ամեն մեկը կտեսնի այն, ինչ վիճակված է տեսնել միայն նրան:

Այդպես էլ եղավ:

Լեոնսիային վիճակված էր տեսնել իրեն և Ֆրենսիսին բաժանող օվկիանոսը: Հենրին տեսավ թագուհուն և Ֆրենսիսին, որոնց պսակում էին այնպիսի տարօրինակ ձևով, որ նա միայն վերջում հասկացավ, թե ինչ արարողություն էր դա: Իսկ ինքը թագուհին իրեն տեսավ ինչ-որ մեծ տան մեջ. կանգնել է նա վերնասրահում ու նայում է ներքև, դեպի շքեղ հյուրասենյակը: Եթե Ֆրենսիսը տեսներ, կճանաչեր իր հոր տան հյուրասենյակը: Իսկ իր կողքին թագուհին տեսավ Ֆրենսիսին, որը գրկել էր նրա իրանը: Միևնույն ժամանակ աչքին երևաց մի բան, որը տազնապով լցրեց նրա հոգին. Լեոնսիայի դեմքը, քարացած, ինչպես մեռածի դեմք, իսկ ճակատին, աչքերի միջև, ցցված է սուր մի դաշույն, խրված մինչև դաստակը: Սակայն խոր վերքից ոչ մի կաթիլ արյուն չի հոսում: Թորեսի աչքերի առջև առկայծեց մի բան, որ, ինչպես հասկացավ, նրա վախճանի սկիզբն էր. նա խաչակնքեց և բոլորի մեջ միակն էր, որ ետ ընկրկեց, այլևս չկամենալով նայել: Իսկ Արևի քուրմը տեսավ իր թաքուն մեղքը՝ կերպարանքն ու դեմքը մի կնոջ, որի համար նա խախտել էր Արևի աստծու ուխտը, իսկ հետո Մեծ տան աղջնակի դեմքն ու կերպարանքը:

Երբ տեսիլքները խամրեցին ու անհետացան, և բոլորը, ասես պայմանավորված, հեռացան կաթսայից, Լեոնսիան, էգ վագրի նման փայլեցնելով աչքերը, նետվեց թագուհու վրա.

— Բո Աշխարհի Հայելին ստում է: Ստում է քո Աշխարհի Հայելին:

Ֆրենսիսն ու Հենրին, որ դեռ գտնվում էին տեսածի ուժեղ տպավորության տակ, նույնիսկ ցնցվեցին, ապշած Լեոնսիայի հանկարծական բռնկումից: Սակայն թագուհին մեղմորեն առարկեց.

— Իմ Աշխարհի Հայելին երբեք չի ստում: Ես չգիտեմ, թե նա քեզ ինչ ցույց տվեց: Բայց գիտեմ ինչ որ դու տեսար, ճշմարիտ է:

— Դու իրե՛ջ ես,— բացականչեց Լեոնսիան:— Կեղծ, զազրելի վիռկ:

— Մենք երկուսս էլ կին ենք,— մեղմ հանդիմանությամբ առարկեց թագուհին,— իսկ քանի որ կին ենք, ապա երբեմն ինքներս էլ չգիտենք, թե ինչ ենք անում ու ասում: Թող տղամարդիկ որոշեն ով եմ ես՝ կեղծ վիռկ, թե՛ կանացի սիրող սրտով մի կին: Իսկ մինչ այդ,— քանի որ մենք երկուսս էլ կին ենք և, ուրեմն, թույլ արարածներ,— մեծահոգի լինենք իրար նկատմամբ:

— Այժմ, Արևի քուրմ, խոսենք մեր որոշման մասին: Իբրև Արևի աստծու քուրմ, դու ինձանից ավելի լավ գիտես մեր հին սովորություններն ու ծեսերը: Դու ինձանից ավելի լավ գիտես այն ամենը, ինչ վերաբերում է ինձ, և այն, թե ես ինչպես հայտնվեցի այստեղ: Դու գիտես, որ միշտ մորից աղջկան և մոր ու աղջկա միջոցով մեր ցեղը սերնդից սերունդ հաղորդել է ու պահպանել այս տան

գաղտնիքը, ուր ապրել է Երազողը: Հասավ ժամը, որ մենք էլ մտածենք գալիք սերունդների մասին: Մեզ մոտ եկել են օտարականներ, նրանք ամուսնացած չեն: Պետք է հայտարարել հարսանիքի օրը, եթե ուզում ենք, որ մեր ցեղն էլ ապագայում ունենա Երազող: Այդպես պետք է լինի՝ ժամը հասավ, պահանջը հասունացել է և տեղը կանխորոշվել: Ես հարցում արի ուրվականներին, և նրանք հուշեցին ինձ, թե ինչպես վարվել: Եվ ահա իմ որոշումը. ես կամուսնանամ այս երեքից նրա հետ, որը ճակատագրի կողմից սահմանված է ինձ համար դեռևս աշխարհի հիմնադրումից առաջ: Թող լինի այդպես. եթե նրանցից ոչ մեկը չամուսնանա ինձ հետ, ապա բոլորն էլ կմեռնեն, և դու նրանց դեռևս տաք արյունը կգոհաբերես Արևի աստծու զոհասեղանին: Իսկ եթե սրանցից մեկն ամուսնանա ինձ հետ, ապա բոլորը ողջ կմնան, և ժամանակը կորոշի մեր հետագա բախտը:

Արևի քուրմը, բարկությունից՝ դողալով, փորձեց առարկել, բայց թագուհին ընդհատեց նրան.

— Լռի՛ր, քուրմ: Դու իմ շնորհիվ ես միայն կառավարում այս ժողովրդին: Հերիք է ես մի խոսք ասեմ, և... դու ինքդ գիտես, թե ինչ է սպասում քեզ: Դա թեթև մահ չի լինի:— Եվ նա շուռ եկավ դեպի երեք տղամարդիկ հետևյալ խոսքերով.— Այսպես, ուրեմն, ձեզանից ո՞վ է ամուսնանում ինձ հետ:

Նրանք շվարած ու շփոթված նայեցին իրար, բայց ոչ մեկը ծպտուն չհանեց:

— Ախր ես կի՛ն եմ,— ասաց թագուհին, գրգռելով նրանց:— Մի՞թե ոչ մի տղամարդ չի ցանկանում ինձ: Մի՞թե ջահել չեմ ես: Մի՞թե գեղեցիկ չեմ: Մի՞թե տղամարդիկ այնքան տարօրինակ են, որ ես ոչ մեկի աչքին գեղեցիկ չեմ թվում, և ոչ ոք չի ուզում ինձ իր գիրկն առնել ու համբուրել շրթունքներս, ինչպես բարի Ֆրենսիսը ձեռքս համբուրեց:

Նա նայեց Լեոնսիային:

— Դու՛ էր իր դատավոր: Դու կին ես, որին շատ տղամարդիկ են սիրում: Մի՞թե ես քեզ նման չեմ և մի՞թե ես էլ չեմ կարող սիրված լինել:

— Դու միշտ էլ ավելի բարի կլինես տղամարդկանց հանդեպ, քան կանանց,— պատասխանեց Լեոնսիան, և նրա խոսքերի իմաստը, որ հանելուկային էր երեք տղամարդկանց համար, լիովին պարզ էր թագուհու կանացի խելքի համար:— Իբրև կին,— շարունակեց Լեոնսիան,— դու բացառիկ գեղեցիկ ես ու հրապուրիչ. անշուշտ, աշխարհում կգտնվեն շատ տղամարդիկ, որոնք ամեն ինչ կտան քեզ իրենց գիրկն առնելու համար: Բայց, նախազգուշացնում եմ, թագուհի, տղամարդկանց մեջ պատահում են ամեն տեսակ մարդիկ:

Լսելով Լեոնսիային ու մտածելով նրա ասածների վրա, թագուհին կտրուկ շուռ եկավ դեպի քուրմը:

— Դու ամեն ինչ լսեցիր, քուրմ: Այսօր ես պետք է ամուսնանամ: Եթե օտարականներից ոչ ոք ինձ հետ չամուսնանա, ապա երեքն էլ կգոհաբերվեն քո սեղանին: Այս կինը նույնպես: Ինչպես երևում է, նա շատ է ուզում խայտառակել ու ստորացնել ինձ:— Թագուհին դիմում էր քուրմին, բայց նրա խոսքերն ակնհայտորեն հասցեագրված էին բոլորին:— Նրանք այստեղ երեք հոգի են, և նրանցից մեկին, իր ծնունդից դեռևս շատ առաջ, սահմանված էր իմ ամուսինը լինել: Եվ այսպես, քուրմ, ահա թե ինչ կասեմ ես քեզ. գերիներին տար մի ուրիշ տեղ, և թող նրանք իրար մեջ որոշեն, թե ով է ամուսնանալու ինձ հետ:

— Քանի որ դա կանխորոշված է վաղուց,— դուրս թռավ Լեոնսիայի շրթունքներից,— ուրեմն ինչո՞ւ որոշումը թողնել պատահարի քմահաճույքին: Դու ճանաչում ես քո ընտրյալին: Ինչո՞ւ գործել բախտի բերմամբ: Տո՛ւր նրա անունը, թագուհի, տուր նրա անունը հենց հիմա:

— Ես արդեն ասացի, թե նա ինչպես պետք է ընտրվի,— առարկեց թագուհին, ցրված մի պտղունց փոշի գցելով ոսկե կաթսայի մեջ և նույն ցրվածությամբ էլ նայելով կաթսային:— Իսկ հիմա գնացեք, և թող կատարվի անխուսափելի ընտրությունը: Ո՛չ, սպասեցեք,— հանկարծ բացականչեց նա, երբ գերիներն արդեն սենյակից դուրս էին գալիս:— Մոտ եկ, Ֆրենսիս: Ես տեսնում եմ ինչ-որ բան, որը վերաբերում է քեզ: Մոտ եկ և ինձ հետ միասին նայիր Աշխարհի Հայելուն:

Բոլորը կանգ առան սպասողաբար, իսկ Ֆրենսիսը, մոտենալով կաթսային, թագուհու հետ կռացավ նրա վրա ու սկսեց դիտել անծանոթ հեղուկ մետաղի մակերեսը: Նա իրեն տեսավ իր նյութորջյան տան գրադարանում, իսկ իր կողքին՝ Երազողին, և ինքը գրկել էր նրա իրանը: Կինը

հետաքրքրությամբ դիտում էր բորսային հեռագիրը: Ֆրենսիսն սկսեց բացատրել նրան, թե այդ ապարատն ինչպես է գործում, բայց փութանցիկ մի հայացք նետելով ժապավենին, նկատեց այնպիսի տհաճ լուրեր, որ իսկույն վազեց դեպի հեռախոսը՝ զանգելու իր մակերին,— և այդտեղ տեսիլքը չքացավ:

— Ի՞նչ տեսաք այնտեղ,— հարցրեց Լեոնսիան, երբ նրանք դուրս եկան:

Եվ Ֆրենսիսը ստեց: Ոչ մի խոսք չասելով այն մասին, որ իր կյուրյորքյան տան գրադարանում տեսավ Երազողին, նա պատասխանեց.

— Բաժնետոմսերի վիթխարի անկման մասին հաղորդող բորսային հեռագիր, անկում, որն սպառնում է իրարանցում առաջացնել Ուոլլ-սթրիտում: Բայց նա որտեղի՞ց գիտի, թե ես ինչ-որ առնչություն ունեմ Ուոլլ-սթրիտի և բորսային հեռագրերի հետ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

— Որևէ մեկը պետք է ամուսնանա այդ խելագարի հետ,— սկսեց Լեոնսիան, հենց որ չորսն էլ նստեցին խսիրների վրա, այն սենյակում, ուր քուրմը բերեց նրանց:— Եվ այդ հերոսական արարքով նա կփրկի մեր կյանքը, իրենը նույնպես: Սենյոր Թորես, ձեզ հնարավորություն է տրվում փրկել բոլորիս կյանքը, ինչպես և ձերը:

— Օ՛,— ցնցվեց Թորեսը:— Ես տասը միլիոն դոլարով նրա հետ չեմ ամուսնանա: Նա շատ է խելոք: Նա ինձ սարսափ է ներշնչում: Նա, ինչպես ասեմ, ձեր լեզվով ասած, ազդում է իմ ջղերի վրա: Ես հո խիզախ եմ: Բայց նրա ներկայությամբ իմ ողջ քաջությունը չքանում է: Վախից մինչև իսկ պաղ քրտինք տվեց վրաս: Ո՛չ, տասը միլիոն դոլարից պակաս գումարով ես նույնիսկ չեմ փորձի հաղթահարել իմ վախը: Յենրին և Ֆրենսիսը ինձանից քաջ են: Թող նրանցից մեկնումեկն էլ ամուսնանա նրա հետ:

— Բայց ախր ես նշանված եմ Լեոնսիայի հետ,— շտապով առարկեց Յենրին:— Ինչպե՞ս կարող եմ ամուսնանալ թագուհու հետ:

Բոլորի հայացքները դարձան Ֆրենսիսի կողմը, սակայն Լեոնսիան խանգարեց նրան պատասխանել:

— Դա անարդարացի է,— ասաց նա:— Չէ որ ձեզանից ոչ ոք չի ուզում ամուսնանալ նրա հետ: Ուստի միակ արդարացի ելքն այն է, որ վիճակ հանեք:— Այդ խոսքերի հետ նա երեք շուղ դուրս քաշեց այն խսիրից, որի վրա նստած էր, և մեկը մեջտեղից կտորեց:— Ով դուրս կքաշի կարճ շուղը, նա էլ կլինի զոհը: Սենյոր Թորես, առաջինը դուք քաշեք:

— Եվ ով առաջինը դուրս քաշի կարճ շուղը, թող բարեհաճի պսակադրության,— քմծիծաղեց Յենրին:

Ամբողջ մարմնով դողալով, Թորեսը խաչակնքեց ու քաշեց: Դուրս եկավ երկար շուղը, այնպես որ նա նույնիսկ պտտվեց սենյակում ու երգեց.

Չեմ գնա ես պսակի,

Թող թշնամին տրաքի...

Ապա վիճակը հանեց Ֆրենսիսը. նրան էլ երկար շուղը բաժին ընկավ: Այսպիսով, Յենրիի համար այլևս ընտրություն չկար: Լեոնսիայի ձեռքում մնացած ճակատագրական շուղը որոշում էր նրա վիճակը: Նա նայեց Լեոնսիային, և նրա դեմքի վրա արտացոլվեցին դժոխքի բոլոր տանջանքները: Լեոնսիան նկատեց այդ հայացքը և անսահման խղճահարությամբ համակվեց նրա հանդեպ, իսկ դա իր հերթին նկատեց Ֆրենսիսը և արագ որոշում ընդունեց: Ելք կա: Եվ ամեն ինչ մեկեն կպարզվի: Որքան էլ մեծ լինի սերը Լեոնսիայի հանդեպ, Յենրիի նվիրվածությունն ավելի մեծ է: Կարիք չկա տատանվելու: Ֆրենսիսը ուրախությամբ շոմփացրեց Յենրիի ուսին ու բացականչեց.

— Եվ այսպես, ձեր առջև կանգնած է ոչնչով չկաշկանդված մի ամուրի, որը չի վախենում ամուսնական կապերից: Ե՛ս կամուսնանամ նրա հետ:

Չենրին այնպիսի թեթևությամբ շնչեց, ասես ազատվել էր անխուսափելի մահից: Նա բռնեց Ֆրենսիսի ձեռքը, և նրանք ամուր սեղմեցին իրար ձեռք, նայելով ուղիղ մեկմեկու աչքերի մեջ, ինչպես կարող են նայել միայն ազնիվ, օրինավոր մարդիկ: Եվ նրանցից ոչ մեկը չնկատեց, թե այդքան անակնկալ ելքի պատճառով ինչպիսի խռովություն էր արտացոլվել Լենսիայի դեմքին: Երագողը ճիշտ էր ասում. Լենսիան անարդարացի էր իբրև կին. նա սիրում էր երկու տղամարդու, դրանով իսկ Երագողին զրկելով իր բաժին օրինական երջանկությունից:

Այդ թեմայի հետագա քննարկմանը վերջ տվեց աղջնակի հայտնվելը Մեծ տնից, որը ուրիշ կանանց հետ ճաշ բերեց գերիներին: Թորեսի սուր աչքն իսկույն նկատեց թանկագին քարերի մանյակը աղջկա վզին. դրանք սուտակներ էին, ըստ որում, հոյակապ սուտակներ:

— Սա ինձ նվիրել է Երագողը,— ասաց աղջնակը, ուրախանալով, որ օտարերկրացիներին դուր է գալիս իր նոր զարդը:

— Իսկ նա էլի՞ այդպիսի քարեր ունի,— հարցրեց Թորեսը:

— Իհարկե,— եղավ պատասխանը:— Նա հենց նոր ինձ ցույց տվեց մի սնդուկ, որ լիքն էր այսպիսի քարերով: Այնտեղ ամեն տեսակ քարեր կան, նույնիսկ շատ մեծերը սրանցից, միայն թե՛լի վրա չեն հազցրած: Չենց լցված են իրար վրա եգիպտացորենի հատիկների նման:

Մինչդեռ բոլորն ուտում էին ու գրուցում, Թորեսը ջղայնորեն ծխում էր, հետո վեր կացավ ու ասաց, որ ուտել չի ուզում, վատ է զգում իրեն:

— Ահա թե ինչ,— ազդեցիկ տոնով սկսեց նա:— Մորգաններ, ես ձեր երկուսից էլ լավ եմ խոսում իսպաներեն: Բացի դրանից, համոզված եմ, որ ձեզանից շատ ավելի լավ գիտեմ իսպանացի կանանց բնավորությունը: Եվ, որպեսզի ապացուցեմ, որ բարեկամաբար եմ տրամադրված ձեր հանդեպ, հենց հիմա կգնամ այդ կնոջ մոտ ու կփորձեմ համոզել նրան՝ հրաժարվել ամուսնությունից:

Նիզակակիրներից մեկը փակեց Թորեսի ճամփան և գնաց գեկուցելու նրա մասին, բայց շուտով վերադարձավ ու ձեռքի շարժումով հրավիրեց ներս: Բազմոցին կիսապառնկած թագուհին սիրալիր գլխով արեց Թորեսին ու թույլատրեց մոտենալ իրեն:

— Դու ոչինչ չե՛ս կերել,— հոգածությամբ հարցրեց նա Թորեսին, և երբ սա ասաց, որ փորժակ չունի, կինը առաջարկեց.— Իսկ խմել չե՛ս ուզում:

Թորեսի աչքերը վառվեցին: Նա զգաց, որ անհրաժեշտ է կազդուրվել. վերջին օրերի ընթացքում այնքան հուզմունքներ էր ապրել, իսկ առջևում սպասվում է նոր արկածախնդրություն, որի ընթացքում նա որոշել է ամեն գնով հասնել հաջողության: Թագուհին ծափ տվեց ու կարգադրություն արեց նաժիշտին, որ հայտնվել էր նրա կողքին: Եվ իսկույն էլ ծառան ներս բերեց ու բացեց փայտե ոչ մեծ մի տակառիկ:

— Սա շատ հին գինի է, որ պահվում է արդեն մի քանի հարյուրամյակ,— ասաց թագուհին:— Ասենք քեզ՝ դա Վասկոյիդ, պետք է որ հայտնի լինի. չե՞ որ չորս դար առաջ սա դու ես այստեղ բերել:

Որ տակառիկը հին էր՝ ոչ մի կասկած լինել չէր կարող, և Թորեսն զգաց, թե ինչպես կոկորդը մեկեն չորացավ տանջալից ծարավից. հապա մի մտածիր, ամբողջ տասներկու սերունդ էր ծնվել ու մահացել, ինչ այդ տակառիկը կտրել-անցել էր Ատլանտյան օվկիանոսը:

Աղախինը լցրեց մի մեծ գավաթ, և Թորեսը, դատարկելով այն, ապշեց խմիչքի փափկությամբ: Բայց շատ շուտով նրա ուղեղն ու ամբողջ մարմինն զգացին չորսհարյուրամյա գինու կախարդական ուժը:

Թագուհին առաջարկեց նստել մահճին, իր ոտքերի մոտ,— այդպես հարմար էր հետևել նրան,— և հարցրեց.

— Դու ինձ մոտ եկար առանց կանչելու: Ուզում ես որևէ բան ասել կամ որևէ բան հարցնել:

— Ես նա եմ, որի վրա ընկավ ընտրությունը,— պատասխանեց Թորեսը, ոլորելով բեղն ու աշխատելով հևարավորին չափ կտրիճ տեսք ընդունել, ինչպիսին վայել է սիրային արկածների մեջ մտնող իսկական տղամարդուն:

— Տարօրինակ է,— ասաց թագուհին:— Ես քեզ չտեսա Աշխարհի Հայելու մեջ: Այստեղ... Երևի ինչ-որ սխալ կա:

— Միանգամայն ճիշտ է, սխալ կա,— հաճույքով համաձայնեց Թորեսը, հասկանալով, որ նրան խաբել չի կարող:— Այս ամենը գինին արեց: Ինչ-որ կախարդական ուժ կար նրա մեջ, որն ստիպում է ինձ սիրտս բանալ քո առաջ. ախր ես այնպես ծարավի եմ քեզ:

Ժպտալով միայն աչքերով՝ թագուհին նորից կանչեց նաժիշտին ու պատվիրեց նորից լցնել նրա կավե գավաթը:

— Այժմ, երևի, երկրորդ սխալը լինի, այո՞,— ծաղրելով Թորեսին, նկատեց նա, երբ սա գավաթը պարպեց:

— Օ՛, ոչ, թագուհի,— պատասխանեց Թորեսը:— Այժմ գլխումս լիակատար պարզություն է, և ես կարող եմ գապել իմ սիրտը: Ընտրությունն ընկավ Ֆրենսիս Մորգանի վրա, նրա, որ համբուրեց քո ձեռքը. հենց նա էլ կլինի քո ամուսինը:

— Ճիշտ է,— հաղթականորեն ասաց նա:— Հենց նրա դեմքն էլ ես տեսա Աշխարհի Հայելում և իսկույն հասկացա, որ նա սահմանված է ինձ համար:

Նրա խոսքերից խրախուսված՝ Թորեսը շարունակեց.

— Ես նրա բարեկամն եմ, ամենայնով բարեկամը: Դու, որ ամեն ինչ գիտես, անկասկած գիտես և այն, որ սովորաբար հարսնացուի հետ նաև օժիտ են տալիս: Եվ ահա նա ուղարկեց ինձ, իր լավագույն բարեկամին, որպեսզի պարզեմ, թե նրա հարսնացուն ինչ օժիտ ունի, և զննեմ այն: Քեզ պետք է հայտնի լինի, որ նա ամենահարուստ մարդկանցից մեկն է իր երկրում, որտեղ շատ հարուստներ կան:

Թագուհին այնպիսի թափով վեր թռավ մահճից, որ Թորեսը վախից ամբողջովին կծկվեց, մեջքին դանակի հարվածի սպասելով: Սակայն թագուհին արագ անցավ կամ, ավելի ճիշտ, սահեց դեպի դուռը, որը տանում էր ներքին սենյակները:

— Ներս մտիր,— հրամայաբար ասաց նա:

Անցնելով շեմքը՝ Թորեսը մեկեն հասկացավ, որ դա նրա ննջարանն է: Բայց ինչպես զններ սենյակը, երբ թագուհին իսկույն բարձրացրեց պղնձապատ ծանր մնդուկի կափարիչը և ձեռքի շարժումով մոտ կանչեց Թորեսին: Սա մոտեցավ ու տեսավ մի այնպիսի բան, որից ով ասես կարող էր քար կտրել: Այո, աղջնակը ճիշտ էր ասում: Մնդուկը բերնեբերան լիքն էր անհամար քանակությամբ թանկագին քարերով՝ գոհարներով, սուտակներով, զմրուխտով, շափյուղայով՝ ամենամաքուր, ամենահազվագյուտ ու ամենախոշոր տեսակի, լցված իրար վրա, ինչպես եգիպտացորենի հատիկները:

— Ձեռքերդ մինչև ուսերդ թաղիր սրանց մեջ,— ասաց թագուհին,— ու համոզվիր, որ ապակու կտորներ չեն, ոչ էլ երևակայության արդյունք կամ խաբուսիկ երազ, այլ իսկական թանկարժեք քարեր: Եվ այն ժամանակ դու կարող ես ճիշտ հաշիվ տալ քո հարուստ բարեկամին, որը պետք է ամուսնանա ինձ հետ:

Եվ Թորեսը, որի ուղեղը հին գինուց բոցավառվել էր, արեց այն, ինչ պատվիրեցին իրեն:

— Մի՞թե այս ապակու կտորներն այդպիսի զարմանալի բաներ են քո աչքում,— ծաղրելով նրան, հարցրեց թագուհին:— Այնպես ես նայում դրանց, ասես չտեսնված հրաշալիքներ են քո առաջ:

— Երբեք մտքովս էլ չէր անցնում, թե աշխարհում որևէ տեղ կարող է այսպիսի գանձ լինել,— փնթփնթաց նա, բոլորովին շշմելով:

— Սրանք գին չունեն՝:

— Այո, գին չունեն:

— Սրանք ավելի թա՛նկ արժեն առաքինությունից, սիրուց և պատվից:

— Սրանք ամեն ինչից թանկ արժեն: Սրանք կարող են մարդու խելքահան անել:

— Եվ սրանցով կարելի է գնել կնոջ կամ տղամարդու իսկական սե՞րը:

— Սրանցով կարելի է ամբողջ աշխարհը գնել:

— Ի՛նչ ես ասում,— ասաց թագուհին:— Այ դու տղամարդ ես, կանանց պահել ես քո գրկում: Ուրեմն, մի՞թե այս քարերով կարելի է կին գնել:

— Աշխարհի ստեղծման օրից սրանցով գնել են կանանց ու վաճառել: Եվ սրանց համար կանայք իրենք են իրենց վաճառել:

— Իսկ կարո՞ղ են սրանք քո լավ բարեկամ Ֆրենսիսի սիրտը գնել ինձ համար:

Միայն այժմ Թորենն առաջին անգամ նայեց նրան, գլխով արեց ու ինչ-որ բան փնթփնթաց. խմած գինուց և այդպիսի քանակությամբ թանկագին քարերը դիտելուց հետո նրա աչքերը թափառում էին ու վառվում վայրի կրակով:

— Դու կարծո՞ւմ ես, որ քո հիանալի բարեկամ Ֆրենսիսն էլ քեզ նման բարձր կգնահատի սրանք:

Թորենը լուռ գլխով արեց:

— Եվ բոլո՞ր մարդիկ են այդպես բարձր գնահատում:

Թորենը նորից բազմանշանակ գլխով արեց:

Թագուհին ծիծաղեց արծաթե ծիծաղով, որի մեջ արհամարհանք էր հնչում: Նա կռացավ ու պատահած տեղից վերցրեց մի բուռ սքանչելի քարեր, որոնք գին չունեին:

— Գնանք,— հրամայեց նա:— Ես քեզ ցույց կտամ, թե որքան թանկ եմ գնահատում սրանք:

Նա Թորենին տարավ սենյակի միջով և նրա հետ միասին դուրս եկավ սրահ, որը կառուցված էր ուղղակի ջրի վրա: Այդ սրահը երեք կողմից օղակում էր տունը, մինչդեռ նրա չորրորդ պատը հարում էր ժայռին: Ժայռի ներքևում փոթորկում էր ջրապտույտը: Թորենը մտածեց, որ երևի հենց այստեղ էլ գտնվում է այն անցքը, որտեղից լճի ջուրը դուրս է հոսում, ինչպես ենթադրում էին Մորգանները:

Իսկ թագուհին, ծաղրելով նրան իր արծաթե ծիծաղով, բաց արեց բուռը և անգին քարերը շարտեց ուղղակի ջրապտույտի ձագարի մեջ:

— Ահա թե ես որքան թանկ եմ գնահատում սրանք,— ասաց նա:

Թորենը ցնցված էր, նա մեկն գգաստացավ, տեսնելով այդպիսի շոյալություն:

— Եվ դրանք այլևս երբեք ինձ մոտ չեն վերադառնա,— ծիծաղով շարունակեց թագուհին:— Այստեղից ոչինչ չի վերադառնում: Տե՛ս:

Եվ նա մի փոքրիկ ծաղկեփունջ նետեց ջուրը, որը սրընթաց պտտվեց, ասես շարժվելով պարուրածն, ու չքացավ ջրապտույտի մեջ:

— Եթե այստեղից ոչ մի բան չի վերադառնում, ապա այդ ամենը որտե՞ղ է չքանում,— խռպոտ ձայնով հարցրեց Թորենը:

Թագուհին թոթվեց ուսերը, բայց Թորենը հասկացավ, որ ջրերի գաղտնիքը հայտնի է նրան:

— Շատ մարդիկ են գնացել այդ ճամփով,— մտածկոտ ասաց նա,— բայց նրանցից ոչ ոք չի վերադարձել: Իմ մայրն էլ է այդ ճամփով գնացել. երբ մեռել է, նրան նետել են ջրապտույտի մեջ: Այն ժամանակ ես բոլորովին մանուկ էի:— Հանկարծ նա ասես ուշքի եկավ:— Իսկ հիմա հեռացիր, սաղավարտով մարդ: Եվ ամեն ինչ գեկուցիր քո տիրոջը, ուզում եմ ասել՝ քո բարեկամին: Պատմիր նրան, թե ինչպիսի օժիտ ունեմ: Եվ եթե նա թեկուզ կիսով չափ բռնված է այդ քարերի հանդեպ

Նույնպիսի խելագար կրթով, ինչպես դու, ապա շատ շուտով նրա ձեռքերը կփաթաթվեն իմ մեջքին: Իսկ ես կմնամ այստեղ ու մինչև նրա գալը կերագեմ: Ես կարող եմ անվերջ հիանալ ջրերի խաղով:

Հեռանալու հրաման ստանալով՝ Թորեսը մտավ ննջարան, բայց իսկույն էլ ոտքի մատների վրա վերադարձավ դեպի դուռը, որպեսզի տեսնի, թե ինչ է անում թագուհին: Սա նստել էր սրահի հատակին, և ձեռքը գլխին հենած, ակնապիշ նայում էր ջրապտույտին: Այն ժամանակ Թորեսը նետվեց դեպի սնդուկը, բարձրացրեց կափարիչը, մի լիքը բուռ քար վերցրեց ու լցրեց գրպանները: Բայց նախքան ձեռքը նորից դեպի սնդուկը կտաներ, հետևից լսեց թագուհու խայթիչ ծիծաղը:

Սարսափն ու ցասումը այն աստիճան համակեցին նրան, որ նա նետվեց թագուհու վրա. սա դուրս թռավ սրահ, Թորեսը՝ հետևից, բայց այն պահին, երբ թվում է, թե արդեն բռնելու վրա էր նրան, հանկարծ թագուհին դուրս քաշեց դաշույնը և բարձրացրեց Թորեսի վրա:

— Գո՛ղ,— հանգիստ ասաց նա:— Անխիղճ գող: Իսկ մեր հովտում բոլոր գողերի ճակատագիրը մեկ է՝ մահ: Հիմա ես կկանչեմ իմ նիզակակիրներին և կհրամայեմ նետել քեզ ջրապտույտի մեջ:

Դեպքերի այդպիսի անակնկալ շրջադարձը ստիպեց Թորեսին օգնության կանչել իր ամբողջ հնարամտությունը: Նայելով փրփրացող ջրին, ուր թագուհին սպառնում էր նետել նրան, նա ճչաց, ասես ինչ-որ ահավոր բան տեսնելով այնտեղ, ընկավ մի ծնկին ու ձեռքերով փակեց կեղծ վախից աղավաղված դեմքը: Թագուհին գլուխը շուռ տվեց ու նայեց նրա հայացքի ուղղությամբ: Հենց այդ էլ պետք էր Թորեսին: Նա վագրի պես ցատկեց նրա վրա, բռնեց ձեռքերից ու դուրս կորզեց դաշույնը:

Թորեսը սրբեց դեմքի քրտինքը. նա շնչում էր ընդհատ-ընդհատ, դեռևս չկարողանալով լիովին տիրապետել իրեն: Իսկ թագուհին նայում էր նրան հետաքրքրությամբ, բայց առանց որևէ երկյուղի:

— Դու դժոխքի ծնո՛ւնդ ես,— չարությամբ ֆշացրեց Թորեսը, դեռևս ցնցվելով զայրույթից,— վիուկ, որը գործում է խավարի ուժերի ու ամեն տեսակ դիվային բաների օգնությամբ: Սակայն դու կին ես, ծնվել ես իբրև կին, ուստի և մահկանացու ես: Դու նույնքան թույլ ես, որքան բոլոր մահկանացուներն ու բոլոր կանայք, ուստի ես քեզ թույլ եմ տալիս ընտրելու. կամ կնետվես ջրապտույտի մեջ ու կկործանվես, կամ...

— Կամ ի՞նչ,— հարցրեց թագուհին:

— Կամ...— Նա լռեց, լիզեց չորացած շրթունքներն ու վրա տվեց.— Ո՛չ: Երդվում եմ տիրամայրով, ես չեմ վախենում: Կամ դու հենց այսօր իսկ կամուսնանաս ինձ հետ: Ընտրի՛ր:

— Դու ուզում ես ամուսնանալ ինձ հետ ի՞նձ համար, թե իմ գանձերի:

— Գանձերի համար,— անպատկառորեն խոստովանեց նա:

— Բայց Կյանքի Գրքում գրված է, որ ես կամուսնանամ Ֆրենսիսի հետ,— առարկեց նա:

— Ինչ անենք: Մենք կվերարտադրենք Կյանքի Գրքի այդ էջը:

— Իբր թե դա կարելի՛ է անել,— ծիծաղեց կինը:

— Այդ դեպքում ես կապացուցեմ, որ դու մահկանացու ես, և քեզ կնետեմ այս ջրապտույտի մեջ, ինչպես դու նետեցիր ծաղիկները:

Այդ ռոպեին Թորեսն իրոք անվախ էր, անվախ, որովհետև հին թունդ գինին ջերմացրել էր նրա ուղեղն ու արյունը, այլև նրա համար, որ դրոշման տերը նա էր: Բացի դրանից, իբրև իսկական լատինամերիկացի, նա չէր կարող չհիանալ նման տեսարանով, երբ ինքը հնարավորություն ուներ ցուցադրել իրեն և ազատությունն տալ իր պերճախոսությանը:

Հանկարծ նա ցնցվեց, լսելով թագուհու մեղմ սուլոցը. լատինամերիկացիք այդ ձևով սովորաբար կանչում են ծառաներին: Նա կասկածամտությամբ աչքը թեքեց թագուհու վրա, ապա նայեց ննջարանի դռանը ու նորից հայացքը դարձրեց նրան:

Շենքի վրա, ասես ուրվական,— Թորենս աչքի աղոտ կերպով նշմարեց նրան,— հայտնվեց մի վիթխարի սպիտակ գամփո: Թորեսը վախից ականա ետ-ետ գնաց: Բայց նրա ոտքը հենակետ չգտավ և, չկարողանալով իրեն պահել, գլխիվայր նետվեց հորձանուտի մեջ: Թորեսը հուսահատորեն բղավեց և արդեն ջրի միջից տեսավ, որ գամփոն նետվեց իր հետևից:

Չնայած Թորեսը լավ լողորդ էր, բայց ջրապտույտի մեջ իրեն ծղոտից էլ անգոր զգաց, և Երագողը, թեքվելով սրահի ճաղերից ու ասես հմայված նայելով ներքև, տեսավ, թե ինչպես նախ՝ Թորեսին, ապա՝ շանը ներս քաշեց ջրապտույտը, որից վերադարձ չկար:

ԳԼՈՒԽ ԶՍԱՆԵՐՈՐԴ

Երագողը դեռ երկար նայում էր փոթորկվող ջրին: Ապա ասաց հառաչանքով. «Իմ խեղճ շուն»,— և շտկվեց: Թորեսի կործանումը բնավ չէր հուզում նրան: Նա մանկությունից սովոր էր տնօրինել իր կիսավայրենի, այլասերվող ժողովրդի կյանքն ու մահը, ուստի մարդկային կյանքը ինչ-որ սրբազան բան չէր թվում նրան: Եթե մարդու կյանքը դասավորվել է լավ ու գեղեցիկ, ապա պետք է հնարավորություն տալ նրան՝ վայելելու: Բայց եթե նա վատ, անբարոյական կյանք է վարել ու վտանգավոր եղել ուրիշների համար, ապա այդպիսի մարդը մեռք չէ. թող մեռնի, կամ նույնիսկ կարելի է ոչնչացնել նրան: Այսպիսով, Թորեսի մահը միայն մի Եպիզոդ էր նրա համար՝ տհաճ, բայց փութանցիկ: Միայն թե շունն էր ափսոս:

Նա վերադարձավ ննջարան ու բարձր ծափ տվեց, կանչելով աղախնին, ըստ որում չմոռացավ նկատել, որ թանկագին քարերի մնդուկի կափարիչը դեռևս բաց է: Կարգադրություն անելով աղախնին, նա վերադարձավ սրահ, որտեղից կարող էր աննկատ հետևել, թե սենյակում ինչ է տեղի ունենում:

Մի քանի րոպե հետո աղախինը ներս բերեց Ֆրենսիսին և մենակ թողեց սենյակում: Երիտասարդն ուրախ չէր: Որքան էլ ազնիվ էր նրա հրաժարումը Լեոնսիայից, այնուամենայնիվ դա մի առանձին ուրախություն չպատճառեց նրան: Չէր ուրախացնում նաև առաջիկա ամուսնության միտքը այդ տարօրինակ կնոջ հետ, որը կառավարում էր Կորուսյալ Յոզիներին և ապրում լճափի այդ խորհրդավոր բունգալոյում: Ճիշտ է, այդ կինը նրան ոչ վախ էր ներշնչում, ոչ թշնամանք, ինչպես Թորեսին: Ավելի շուտ՝ ընդհակառակը. Ֆրենսիսը խղճահարություն էր տածում նրա նկատմամբ: Նրան ականայից հուզում էր ուժերի լիակատար շրջանում ապրող այդ գեղեցկուհու ողբերգական վիճակը, որը, չնայած իր տիրական, հպարտ բնավորությանը, այդպիսի հուսահատությամբ սեր էր փնտրում և կյանքի ուղեկից:

Առաջին իսկ հայացքից Ֆրենսիսը հասկացավ, թե որտեղ է գտնվում և ականա մտածեց. արդյոք թագուհին նրան արդեն իր ամուսինը չի՞ համարում առանց ավելորդ խոսակցությունների, առանց իր համաձայնության, առանց ամեն տեսակ արարողությունների: Իր անուրախ մտքերով կլանված, նա ոչ մի ուշադրություն չդարձրեց սնդուկի վրա: Նրան հետևող թագուհին նկատեց, որ նա կանգնել է սենյակի մեջտեղում, ակնհայտորեն սպասելով իրեն՝ թագուհուն. այդպես, կանգնած մնալով մի քանի րոպե, նա մոտեցավ սնդուկին, վերցրեց մի բուռ թանկագին քարեր ու մեկ-մեկ իրար հետևից նորից լցրեց սնդուկը, ասես դրանք հասարակ ապակու կտորտանք էին. ապա շուռ եկավ և, մոտենալով նրան, սկսեց զննել մահիճը ծածկող ընձառյուծի մորթիները, ապա նստեց, հավասարապես անտարբեր և՛ անկողնու, և՛ գանձերի նկատմամբ: Այդ ամենը այնպիսի հիացմունք առաջացրեց թագուհու մեջ, որ նա այլևս չէր կարող մնալ իբրև կողմնակի դիտող: Մտնելով սենյակ՝ նա ծիծաղով ասաց.

— Եվ ի՞նչ, սենյոր Թորեսը շա՞տ էր սիրում ստել:

— Սիրում է՞ր,— հարցրեց Ֆրենսիսը որևէ բան ասած լինելու համար և ոտքի ելավ նրան ընդառաջ:

— Այո՛, այժմ արդեն նա ոչինչ չի սիրում: Իմ խոսքերն անհասկանալի են քեզ: Նա այլևս չկա,— բացատրեց թագուհին:— Ոչ մի տեղ չկա:— Եվ ավելացրեց, նկատելով, որ այդ լուրը հետաքրքրեց Ֆրենսիսին:— Նա անհետացավ, և դա շատ լավ է. այժմ արդեն նա երբեք չի վերադառնա: Բայց նա սիրում էր ստել, այո՛:

— Անկասկած,— պատասխանեց Ֆրենսիսը:— Նա անհուսալի ստախոս է:

Ֆրենսիսը չէր կարող չնկատել, թե թագուհու դեմքն ինչպես փոխվեց, երբ ինքը հաճույքով խոստովանեց Թորեսի ստախոսությունը:

— Իսկ ի՞նչ ասաց նա քեզ,— հարցրեց Ֆրենսիսը:

— Որ նրան են ընտրել ինձ հետ ամուսնանալու:

— Ստախո՛ւ,— չարությամբ նկատեց Ֆրենսիսը:

— Հետո ասաց, որ քեզ են ընտրել ինձ ամուսին: Դա էլ սուտ էր,— վերջացրեց նա բոլորովին թույլ ձայնով:

Ֆրենսիսը գլուխն օրորեց բացասաբար:

Ուրախության ճիչը, որ ականա դուրս թռավ թագուհու կրծքից, հուզեց Ֆրենսիսի սիրտը և այնպիսի քնքշանք ու խղճահարություն հարուցեց, որ մի պահ նրա մեջ ցանկություն առաջացավ գրկել ու մխիթարել նրան: Թագուհին սպասում էր, որ նա խոսի:

— Ես եմ այն մարդը, որը պետք է ամուսնանա քեզ հետ,— հաստատ ձայնով ասաց Ֆրենսիսը:— Դու գեղեցիկ ես: Ե՞րբ է լինելու մեր հարսանիքը:

Թագուհու դեմքը ողողվեց այնպիսի անզուսպ ուրախությամբ, որ Ֆրենսիսը երգվեց երբեք այդ դեմքը չմռայել վշտի ստվերով, որքան որ դա կախված կլինի իրենից: Չնայած նա Կորուսյալ Յոզիների տիրուհին է, անապատում գանձերի տեր և ապագան գուշակելու գերբնական ընդունակությամբ օժտված մի էակ, Ֆրենսիսի համար նա պարզապես միայնակ, միամիտ մի կին է՝ սիրով յի սրտով, սեր, որի մեջ նա դեռ բոլորովին անփորձ է:

— Ես քեզ կպատմեմ, թե ուրիշ ինչեր էր ասում այդ շուն Թորեսը,— ուրախ-ուրախ սկսեց թագուհին:— Նա ասաց ինձ, որ դու հարուստ ես և որ ամուսնանալուց առաջ ուզում ես իմանալ, թե ես ինչպիսի օժիտ ունեմ: Նա ասաց, որ դու իրեն ուղարկել ես իմ հարստությունները տեսնելու: Ես գիտեմ, որ դա սուտ է: Չէ՞ որ դու ամուսնանում ես ինձ հետ ոչ դրա համար:— Եվ նա արհամարհանքով ցույց տվեց թանկագին քարերի սևդուկը:

— Ֆրենսիսը վրդովմունքով գլուխն օրորեց:

— Զե՛ք հարկավոր եմ ես ինքս և ոչ թե դա,— հաղթականորեն եզրափակեց նա:

— Այո՛, դու ինքդ,— չկարողացավ չստել Ֆրենսիսը:

Եվ այստեղ նա տեսավ մի բան, որը խորապես զարմացրեց նրան: Թագուհին, այդ ամենաբռնակալը բոլոր կառավարչուհիներից, որն իշխում էր իր հպատակների ճակատագրի վրա, որը տնօրինեց Թորեսի կյանքն ու բավական համարեց միայն անցողակի հիշատակել այդ մասին, որն իր համար ամուսին ընտրեց նույնիսկ նրա համաձայնությունը չհարցնելով,— այդ նույն թագուհին հանկարծ կարմրեց: Պարանոցով վեր բարձրացավ կուսական ամոթխածության կարմիրը, վարդագույն ալիքով ներկելով այտերը, ճակատը, ականջները: Թագուհու հուզմունքն անցավ նաև Ֆրենսիսին, նա չգիտեր ինչ անի. արյունը հորդեց դեմքին, վառ կարմրությամբ ներկելով այրված մաշկը: Նա մտածեց, որ մարդկային ցեղի պատմության մեջ դեռ երբեք դրանից ավելի տարօրինակ հարաբերություններ չէին ծագել տղամարդու և կնոջ միջև: Երկուսն էլ այն աստիճան շփոթվել էին, որ նույնիսկ հանուն իր կյանքի փրկության Ֆրենսիսը չէր կարող ոչինչ հորինել՝ այդ լարվածությունը վերացնելու համար: Եվ թագուհին ստիպված էր առաջինը խոսել:

— Իսկ հիմա,— ասաց նա, ավելի ևս կարմրելով,— դու պետք է ցույց տաս քո սերը իմ նկատմամբ:

Ֆրենսիսը փորձեց խոսել, բայց շրթունքներն այնպես էին չորացել, որ նա լիզեց միայն դրանք և ինչ-որ անորոշ բան փնթփնթաց:

— Ինձ ոչ ոք երբևէ չի սիրել,— քաջությամբ շարունակեց թագուհին:— Իմ ժողովուրդը սիրելի չգիտե: Դրանք մարդիկ չեն, այլ անասուններ: Նրանք ընդունակ չեն ո՛չ մտածելու, ո՛չ դատելու: Բայց ես ու դու իսկական տղամարդ ու կին ենք: Իսկ աշխարհում գոյություն ունի և՛ գուրգուրանք, և՛ քնքշություն, ես դա գիտեմ իմ Աշխարհի Հայելուց: Բայց ես անփորձ եմ: Չգիտեմ, թե դա ինչպես

Է արվում: Մինչդեռ դու եկել ես մեծ աշխարհից և, իհարկե, գիտես, թե ինչ է սերը: Ես սպասում եմ: Դե սիրի՛ր ինձ:

Նա նստեց մահճին, Ֆրենսիսին նստեցրեց կողքին և, իր խոսքին հավատարիմ, սկսեց սպասել: Իսկ Ֆրենսիսը, որ պետք է սիրեր հրամանով, ասես շղթայված էր ամբողջովին: Նա զգում էր, որ ի վիճակի չէ տեղից շարժվելու:

— Մի՞թե ես գեղեցիկ չեմ,— կարճ լռությունից հետո հարցրեց թագուհին:— Մի՞թե դու ծարավի չես գրկելու ինձ, ինչպես ես եմ ծարավի քո գրկում լինելու: Տղամարդու շուրթերը դեռ երբեք չեն դիպել իմ շուրթերին: Ինչպե՞ս է լինում այդ՝ շուրթերին տրված համբույրը: Երբ քո շուրթերը դիպան իմ ձեռքին, ես երանություն զգացի: Այն ժամանակ դու համբուրեցիր ոչ միայն իմ ձեռքը, այլև հոգին: Ինձ թվաց, թե սիրտս բաբախում էր քո ձեռքերում: Մի՞թե դու չէիր զգում:

— Դե ահա,— ասաց թագուհին կես ժամ հետո. նրանք նստել էին մահճին ձեռք ձեռքի տված,— ես քեզ պատմեցի այն ամենը, ինչ գիտեմ իմ մասին: Իսկ ես իմ անցյալի մասին գիտեմ միայն ուրիշների պատմածներով: Ներկան պարզ եմ տեսնում իմ Աշխարհի Զայելում: Ապագան նույնպես կարող եմ տեսնել, բայց անորոշ, և տեսածից էլ ոչ բոլորն է, որ հասկանում եմ: Ես ծնվել եմ այստեղ, ինչպես և իմ մայրն ու տատը: Ամեն մի թագուհու կյանքում վաղ թե ուշ երևան է եկել իր սիրեկանը: Երբեմն նրանք այստեղ էլ են եկել, ինչպես դու: Մայրս պատմում էր, որ իր մայրը հեռացել է հովտից սիրածին գտնելու համար ու երկար տարիներ չի վերադարձել: Այդպես է վարվել նաև իմ մայրը: Ես մի գաղտնի անցք գիտեմ, ուր վաղուց մեռած կոնկիստադորները պահպանում են մայա ցեղի գաղտնիքները և ուր կանգնած է ինքը դա Վասկոն, որի սաղավարտն այդ շուն Թորեսը հանդգնել էր գողանալ ու ներկայացնել իբրև իր սեփականը: Եթե դու չգայիր, ես էլ ստիպված կլինեի գնալ քեզ փնտրելու, որովհետև դու իմ փեսացուն ես, ճակատագրի կողմից սահմանված ինձ համար:

Ներս մտավ աղախինը, որին հետևեց նիզակակիրը. Ֆրենսիսը դժվարությամբ էր որսում, թե նրանք ինչի մասին էին խոսում իրենց հին իսպաներեն հետաքրքիր լեզվով: Բարկանալով և միաժամանակ ուրախանալով, թագուհին համառոտակի հայտնեց նրան իրենց խոսակցության բովանդակությունը:

— Մենք պետք է անմիջապես գնանք Մեծ տուն: Այնտեղ հարսանեկան արարողություն կլինի: Արևի քուրմը համառում է, չգիտեմ ինչու. գուցե նրա համար, որ նրան թույլ չտվին ձեր արյունը թափել զոհասեղանին: Նա շատ է արյունարբու: Չնայած Արևի քուրմն է, բայց մի մեծ խելք չունի: Ինձ հայտնեցին, որ նա փորձում է ժողովրդին ոտքի հանել մեր ամուսնության դեմ: Ողորմելի շո՛ւն:— Նա սեղմեց ձեռքերը, դեմքը վճռական արտահայտություն ստացավ, իսկ աչքերը փայլատակեցին արքայական բարկությամբ:— Ես նրան կստիպեմ ամուսնացնել մեզ հինավուրց ծեսով՝ Մեծ տան առաջ, Արևի աստծու զոհասեղանի մոտ:

— Լսիր, Ֆրենսիս, դեռևս ուշ չէ որոշումը փոխել,— դիմեց նրան Զենրին:— Իսկապես, դա անարդարացի է: Ախր կարճ ծղոտը ես հանեցի: Այնպես չէ՞, Լեոնսիա:

Լեոնսիան չկարողացավ ոչ մի խոսք արտասանել: Նրանք բոլորը միասին կանգնած էին զոհասեղանի մոտ, իսկ նրանց հետևում խռնվել էին Կորուսյալ Զոգիները: Թագուհին և Արևի քուրմը փակվել էին Մեծ տանը:

— Բայց դուք չէիք կամենա, որ Զենրին ամուսնանար նրա հետ, այնպես չէ՞, Լեոնսիա,— հարցրեց Ֆրենսիսը:

— Ինչպես կուզենայի նաև, որ դուք էլ չամուսնանայիք,— առարկեց Լեոնսիան:— Միայն Թորեսին ուրախությամբ կտայի նրան իբրև ամուսին: Այդ կինն ինձ դուր չի գալիս: Ես չեի կամենա, որ իմ բարեկամներից որևէ մեկը նրա ամուսինը դառնար:

— Սակայն կարծես դուք խանդում եք,— նկատեց Զենրին:— Իսկ ըստ իս Ֆրենսիսն իր վիճակից այնքան էլ ընկճված չէ:

— Բայց ախր հո նա ինչ-որ հրեշ չէ,— ասաց Ֆրենսիսը:— Ես պատրաստ եմ արժանապատվությամբ,— և նույնիսկ առանց հատուկ դառնության,— դիմավորել իմ

ճակատագիրը: Բացի դրանից, պետք է ասեմ քեզ, Յենրի,— քանի որ այս խոսակցությունը դու բաց արիր,— որ նա չի ամուսնանա քեզ հետ, որքան էլ դու խնդրես:

— Դե, չգիտեմ,— ասաց Յենրին:

— Այդ դեպքում ի՛նքդ հարցրու նրան: Ահա գալիս է: Նայիր, թե աչքերն ինչ տեսակ են դառել: Իսկույն երևում է՝ փորձանք է պատահելու: Իսկ քուրմը ամպի պես մռայլ է: Առաջարկությունն արա նրան և կտեսնես, թե ինչպես կընդունի, քանի դեռ ես այստեղ եմ:

Յենրին համառությամբ գլխով արեց:

— Լավ. . . կանեմ, բայց ոչ նրա համար, որ ցույց տամ, թե ես կանացի սրտերի ինչպիսի նվաճող եմ, այլ հանուն արդարության: Ես անագնիվ վարվեցի, ընդունելով քո զոհաբերությունը: Այժմ ուզում եմ ազնիվ լինել:

Եվ մինչ նրանք կփորձեին խանգարել, նա մոտեցավ թագուհուն և, մի կողմ հրելով քուրմին, ճեղքեց ամբոխը, սկսեց մեծ եռանդով ինչ-որ բան ասել կնոջը, իսկ սա լսում էր ու ծիծաղում: Բայց նրա ծիծաղը Յենրիին չէր հասցեագրված. նա հաղթական տեսքով ծիծաղում էր Լեոնսիայի վրա:

Այնքան էլ շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի թագուհին Յենրիին մերժի, որից հետո նա մոտեցավ Լեոնսիային ու Ֆրենսիսին. նրան կրկնակոխ հետևում էր քուրմը, սրա հետևից՝ Յենրին, իզուր ջանալով թաքցնել այն ուրախությունը, որ այդ մերժումն առաջացրել էր նրա մեջ:

— Չէ, հապա մտածի՛ր,— բացականչեց թագուհին, ուղղակի Լեոնսիային դիմելով:— Բարի Յենրին հենց նոր ինձ առաջարկությունն արեց: Դա արդեն չորրորդ առաջարկությունն է այսօրվա ընթացքում: Ուրեմն, ինձ էլ են սիրում: Դու երբևէ լսե՛լ ես, որ չորս տղամարդ սեր խոստովանեն մի կնոջ՝ նրա հարսանիքի օրը:

— Ինչպե՛ս թե չորս,— զարմացավ Ֆրենսիսը:

Թագուհին քնքշությամբ նայեց նրան:

— Դու ինքդ և Յենրին, որին հենց նոր մերժեցի: Իսկ ձեզանից առաջ այդ անպատկառ թորեսը: Եվ հենց նոր, Մեծ տանը, ահա այս քուրմը:— Նրա աչքերում բռնկվեց գայրույթը, այտերը շիկնեցին:— Արևի այս քուրմը, որը վաղուց արդեն դրժել է իր ուխտը, այս կիսատղամարդն ուզում էր, որ ես ամուսնանամ իր հետ: Շուն: Գարշելի՛ արարած: Եվ ի վերջո այս հանդուգնը հայտարարեց, որ ես չեմ ամուսնանա Ֆրենսիսի հետ: Գնանք: Հիմա ես կսովորեցնեմ նրան: Նա նշան արավ իր թիկնապահներին, հրամայելով շրջապատել իրեն և օտարերկրացիներին, իսկ երկու նիզակակիրների պատվիրեց կանգնել քուրմի հետևում: Տեսնելով այդ, ամբոխը քրթմնջաց:

— Սկսի՛ր, քուրմ,— խստությամբ հրամայեց թագուհին:— Այլապես իմ մարդիկ կսպանեն քեզ:

Քուրմը կտրուկ շուռ եկավ, հավանորեն պատրաստվելով կոչ անել ժողովրդին, բայց տեսնելով կրծքին դեմ արած նիզակները, կծեց լեզուն ու հնազանդվեց: Նա Ֆրենսիսին և թագուհուն տարավ դեպի զոհասեղան, կանգնեցրեց երեսով իր կողմը, ինքը ելավ զոհասեղանին կից բարձրության վրա և նայելով հարսին, փեսային ու նրանց հետևում խռնված ժողովրդին, ասաց.

— Ես Արևի քուրմն եմ: Իմ երդումը սրբազան երդում է: Եվ իբրև երդում տված քուրմ, ես պետք է պսակեմ այս կնոջը՝ Երագողին, այս եկվորի, այս օտարականի հետ, փոխանակ նրա արյունը հեղելու մեր զոհասեղանին: Իմ երդումները սրբազան են: Ես չեմ կարող դրանց դավաճանել: Ես հրաժարվում եմ այս կնոջը միացնել այս տղամարդու հետ: Արևի աստծու անունից ես հրաժարվում եմ ծիսակատարությունից...

— Այդ դեպքում դու կմեռնես, քուրմ, և անմիջապես,— չարությամբ Ֆշշացրեց թագուհին և գլխի շարժումով հրամայեց մոտակա նիզակակիրներին՝ նիզակները դեմ տալ նրա կրծքին, իսկ մնացյալներին՝ ուղղել դրանք քրթմնջացող, խռնվության պատրաստ Կորուսյալ Հոգիների դեմ:

Տիրեց տանջալից լռություն: Եվ տևեց գրեթե ամբողջ մի րոպե: Ոչ ոք ծպտուն չհանեց, ոչ ոք չէրերաց տեղում: Բոլորը կանգնել էին ասես քարացած և նայում էին քուրմին, որի կրծքին դեմ էին արել նիզակները:

Նա, որի արյունն ու կյանքը խաղաթղթի վրա էին դրված, առաջինը խախտեց լռությունը՝ անձնատուր եղավ: Մեջքը հանգիստ շրջելով դեպի իրեն սպառնացող սիզակները, նա իջավ ծունկի և հին խսպաներենով աղոթեց Արևի աստծուն պողպատե դուռի համար: Ապա դարձավ թագուհուն ու Ֆրենսիսին և ձեռքի շարժումով ստիպեց նրանց խոնարհվել երկրպագության ու գրեթե ծունկի իջնել իր առաջ: Երբ ծերունու մատները դիպան նրանց միացած ձեռքերին, նրա դեմքն ակամայից ծամածռվեց:

Քուրմի նշանով հարսն ու փեսան ոտքի ելան, ծերուկը կիսեց եգիպտացորենի բլիթը, ամեն մի կեսը պարզելով մեկին:

— Սուրբ հաղորդություն, — շնչաց Յենրին Լեոնսիայի ականջին, մինչ Ֆրենսիսը և թագուհին կկծեին իրենց բլիթներից:

— Չոմեա-կաթոլիկական ծիսակատարություն, որը երևի դա Վասկոն է այստեղ բերել, ուր այն արդեն աստիճանաբար վեր է ածվել հարսանեկան ծեսի, — շնչաց ի պատասխան Լեոնսիան: Այն գիտակցությունը, որ ինքն ընդմիջտ կորցնում է Ֆրենսիսին, անսահմանորեն տանջալից էր, և նա հագիվ էր տիրապետում իրեն. շրթունքները սեղմվել էին ու սպիտակել, իսկ եղունգները ցավելու աստիճան խրել էր ակերի մեջ:

Քուրմը զոհասեղանից վերցրեց փոքրիկ մի դաշույն և ոսկե փոքրիկ մի թաս ու հանձնեց թագուհուն: Սա ինչ-որ բան ասաց Ֆրենսիսին, Ֆրենսիսը ծալեց թևքը և, մերկացնելով ձախ ձեռքը, մոտեցրեց նրան: Թագուհին արդեն պատրաստվում էր կտրվածք անել երիտասարդի մաշկին, երբ հանկարծ կանգ առավ, մտածեց և, փոխանակ այդ անելու, լեզվի ծայրով կամացուկ լիզեց դաշույնը:

Եվ այստեղ կատաղությունը համակեց նրան: Նա դեն շարտեց դաշույնը, պատրաստ հարձակվելու քուրմի վրա և հրամայելու իր սիզակակիրներին՝ սպանել նրան: Նա ամբողջ մարմնով դողում էր, իզուր ջանալով տիրապետել իրեն: Ստուգելով, թե դաշույնը ուր ընկավ, և համոզվելով, որ նրա թունավոր սայրը ոչ ոքի չի վիրավորել, նա կրծքի շրթի տակից հանեց մի այլ փոքրիկ դաշույն: Այդ դաշույնն էլ նա նախ լիզեց և միայն դրանից հետո Ֆրենսիսի թևին կտրվածք արավ ու մի քանի կաթիլ արյուն հավաքեց ոսկե թասի մեջ: Ֆրենսիսը նույնն արավ նրա թևին, ապա քուրմը, թագուհու զայրացկոտ հայացքի տակ, վերցրեց իրար խառնված արյունով այդ թասը և, լցնելով զոհասեղանին, կատարեց զոհաբերման արարողությունը:

Տիրեց լռություն: Թագուհին կանգնել էր մռայլ ու զայրացկոտ:

— Եթե այսօր որևէ մեկի արյունը պետք է թափվի Արևի աստծու զոհասեղանին... — սպառնալից սկսեց նա:

Եվ քուրմը, ասես հիշելով իր տհաճ պարտականությունը, շրջվեց դեպի ժողովուրդն ու հանդիսավորությամբ ազդարարեց, որ Ֆրենսիսն ու թագուհին այսուհետև մարդ ու կին են: Թագուհին շողարձակ դեմքով շուռ եկավ դեպի Ֆրենսիսը, ամբողջ Էոլթյամբ հրավիրելով նրան գրկելու իրեն: Ֆրենսիսը գրկեց ու համբուրեց նրան, իսկ Լեոնսիան, տեսնելով այդ, հառաչեց ու հենվեց Յենրիի ձեռքին, որպեսզի վայր չընկնի: Սակայն նրա այդ վայրկենական թուլությունը չխուսափեց Ֆրենսիսի հայացքից. նա նկատեց ու հասկացավ պատճառը, չնայած մի բոլոր հետո, երբ կարմրատակած թագուհին ճառագայթող հայացքը զցեց իր ախոյանի վրա, Լեոնսիան արդեն մարմնավորում էր հպարտ մի անտարբերություն:

ՉՈՒՄ ԸՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Թորեսի գլխում երկու միտք առկայծեց, երբ զգաց, որ ջրապտույտը քաշում է իրեն: Առաջինը վիթխարի սպիտակ գամփռի մասին էր, որը ցատկեց նրա հետևից: Իսկ երկրորդն այն էր, թե Աշխարհի Յայելին ստեց: Թորեսը չէր կասկածում, որ իր վերջը եկել է, բայց այն, ինչ նա աչքի պոչով տեսել էր Աշխարհի Յայելում, ամենից քիչ էր նման ջրային հորձանուտում մեռնելուն:

Նա հիանալի լողորդ էր, ուստի, զգալով, որ ջուրը սրընթացորեն ներս է քաշում իրեն ու տանում դեպի խորքը, վախենում էր միայն գլուխը ջախջախել, զարկելով քարե պատերին կամ ստորերկրյա թունելի կամարներին, որով հոսանքը տանում էր նրան: Բայց ճակատագրին հաճո

Եր, որ նա ոչ մի անգամ նույնիսկ չդիպչեր դրանց: Երբեմն միայն զգում էր, թե ինչպես է հոսանքն իրեն վերև հրում. ուրեմն, մոտիկ պատ կա կամ ելուստ. այն ժամանակ նա սուզվում էր, ամբողջովին կուչ գալով, ինչպես ծովային կրիան, որը շնածկների երևալուն պես գլուխը ներս է քաշում:

Բայց անցավ մեկ րոպե,— Թորեսը դա որոշեց շունչը պահելու տևողությամբ,— և նա նորից նկատեց, որ հոսանքը դանդաղում է: Այն ժամանակ գլուխը դուրս հանեց և թոքերը ցրեց զովասուն օդով: Նա դադարեց լողալ և միայն աշխատում էր մնալ ջրի երեսին ու միտք էր անում, թե ինչ պատահեց շանը և թե ինչ նոր անախորժություններ էր պատրաստում այդ ճանապարհորդությունը ստորերկրյա գետով:

Շուտով Թորեսը առջևում լույս նշմարեց՝ աղոտ, բայց անկասկած ցերեկային լույս: Կամաց-կամաց շուրջն ավելի էր լուսավորվում: Թորեսը շուռ եկավ ու նկատեց մի բան, որն ստիպեց նրան լողալ ամբողջ թափով: Դա շունն էր, որը լողում էր մռուլթը վեր տնկած ու սարսափելի ատամները մերկացրած: Այն տեղում, ուր վերևից լույս էր ընկել, Թորեսը նկատեց ժայռի մի ելուստ և մազցելով բարձրացավ նրա վրա: Նա ամենից առաջ ձեռքը գրպանը տարավ՝ ստուգելու, թե արդյոք պահպանվե՞լ էին այն թանկագին քարերը, որ գողացել էր թագուհուց: Բայց ստորերկրյա անցքի միջով ամպրոպի ճայթյունների նման գլորվող զրնգուն հաչոցը Թորեսին հիշեցրեց հետապնդողի հզոր ժանիքները, և քարերի փոխարեն նա շտապեց թագուհու դաշույնը դուրս քաշել:

Եվ նորից տարակուսանքները պաշարեցին Թորեսին: Արդյոք սպանե՞լ այդ սարսափելի շանը, քանի դեռ նա ջրի մեջ է, թե՛ մազցել վերև, այնտեղ, որտեղից լույսն է ընկնում, հուսալով, որ հոսանքը իր հետ կքշի կտանի շանը: Նա կանգ առավ երկրորդ որոշման վրա և սկսեց նեղ ելուստով արագորեն վեր մազցել: Բայց շունը ջրից դուրս ցատկեց ու սլացավ նրա հետևից այնպիսի արագությամբ, որին միայն ընդունակ է չորքոտանին, այնպես որ շուտով հասավ նրան: Թորեսը շուռ եկավ փոքրիկ հարթակում, որի վրա նրա ոտքերը հագիվ էին տեղավորվում, կռացավ ու դաշույնը քաշեց, պատրաստվելով հարվածել շանը, եթե ցատկեր իր վրա:

Բայց շունը ցատկեց: Լայն բացելով երախը, ասես ժպտալով, նա պազեց հետևի թաթերին և մեկնեց նրան առջևինը, ասես բարևելու համար: Թորեսը բռնեց այդ թաթն ու թոթվեց. քիչ մնաց, որ նա թեթևացումից ուշաթափվեր: Ծիծաղելով ջղային, հիստերիկ ծիծաղով, նա շարունակում էր ցնցել այդ թաթը, իսկ շունը, լեզուն դուրս զցած, իր բարի աչքերով նայում էր նրան ու անձայն ծիծաղում:

Շարունակելով առաջանալ ելուստի երկայնքով, շան ուղեկցությամբ, որը գոհ տեսքով հետևում էր նրան ու մերթ ընդ մերթ հոտոտում նրա սրունքները, Թորեսը շուտով նկատեց, որ նեղ արահետը, փոքր-ինչ վերև բարձրանալով, նորից իջնում է դեպի գետը: Եվ այստեղ նա երկու հայտնագործություն կատարեց. առաջինը նրան հարկադրեց ցնցվել ու կանգ առնել, իսկ երկրորդից սիրտն սկսեց բաբախել հույսով: Առաջինը ստորերկրյա գետն էր: Նա թափով թռչում էր քարե պատի վրա, և եռացող ալիքների ու փրփուրի մեջ կորած, շեշտակիորեն նետվում նրանց տակ, ինչ-որ տեղ. վեր թռչող ջրի կատաղի ճողփյունները ցույց էին տալիս հոսանքի սրընթաց արագությունը: Երկրորդը պատի մեջ եղած անցքն էր, որտեղից թափանցում էր ցերեկային լույսը: Մոտ տասնհինգ ոտնաչափ տրամագիծ ունեցող այդ անցքն ամբողջովին պատած էր սարդոստայնով՝ շատ ավելի հրեշավոր, քան կարող էր հորինել խելագարներից ամենախելագարի ուղեղը: Ավելի ևս չարագուշակ էին թվում չորս կողմ թափթփված ոսկորները: Ուտայնը ասես հյուսված էր մատիտի հաստությամբ արծաթե թելերից: Թորեսը ցնցվեց, ձեռքը դիպցնելով դրանցից մեկին: Թելը կպավ նրա մատներին, ինչպես սոսինձ, և միայն մեծ ջանքերից հետո հաջողվեց ձեռքն ազատել, ցնցելով ամբողջ սարդոստայնը: Նա փորձեց մաշկին կպած լարծուն զանգվածը մաքրել, ձեռքը քսելով իր շորերին ու շան մազերին:

Վիթխարի սարդոստայնի ներքևի երկու թելերը ձգվում էին իրարից այնքան հեռու, որ կարելի էր դրանց միջով անցնել ու դուրս գալ լույս աշխարհի, բայց նախքան իր մտնելն, զգուշ Թորեսը որոշեց նախ շանը խցկել այնտեղով: Սպիտակ գեխեղդը սողալով անցավ ու շուտով կորավ աչքից, և Թորեսն արդեն ուզում էր հետևել նրան, երբ հանկարծ շունը վերադարձավ: Նա սլանում էր այնպիսի արագությամբ և այնպես էր վախեցած ինչ-որ բանից, որ թռավ Թորեսի վրա, և երկունս էլ ցած ընկան: Բայց մարդուն հաջողվեց փրկվել, ձեռքերով կառչելով քարերից, իսկ նրա

չորքոտանի ուղեկիցը թավալզոր ընկավ ցած, ուղղակի կատաղի հոսանքի մեջ: Թորեսը փորձեց շանը փրկել, բայց հոսանքը նրան իսկույն մղեց ժայռի տակ:

Թորեսը երկար տատանվում էր: Սարսափելի էր նորից ստորերկրյա գետի մեջ նետվելու միտքը: Իսկ վերևում, թվում է, բաց ճանապարհն էր դեպի ցերեկային լույսը, և Թորեսի մեջ ամեն ինչ ձգտում էր դեպի այդ լույսը, ինչպես մեղուն կամ ծաղիկը դեպի արևն են ձգտում: Բայց ի՞նչ էր տեսել շունն այնտեղ, որ նրան ստիպել էր այդպես արագ ետ փախչել: Մտքերի մեջ խորասուզված՝ Թորեսը մեկն չնկատեց, որ իր ձեռքը հանգչում է ինչ-որ կլոր բանի վրա: Նա բարձրացրեց այդ առարկան ու տեսավ անաչք, անքիթ մարդկային մի գանգ: Այստեղ Թորեսի վախեցած հայացքի առաջ բացվեց մարդկային ոսկորներով ծածկված մի տարածություն: Նա պարզ կերպով գանազանեց կողերը, ողնաշարները, ազդրոսկրերը, որոնք այստեղ գոհված մարդկանց կմախքն էին կազմում մի ժամանակ: Այդ տեսարանը նրան թեքեց գետի մեջ ցատկելու օգտին: Բայց նայելով, թե ինչպես է նա, կատաղելով ու փրփրելով, ընթանում դեպի ժայռի ներքևի անցքը, Թորեսը ետ ընկրկեց:

Դուրս քաշելով թագուհու դաշույնը՝ Թորեսը մեծագույն զգուշությամբ սողաց սարդոստայնի ներքևի երկու թելերի միջով, տեսավ այն, ինչ տեսել էր շունը, և այնպիսի խուճապով ետ թռավ, որ նույնպես ընկավ ջուրը և, հագիվ հասցնելով թոքերն օդով լցնել, ջրապտույտի կողմից քաշվեց ներքևի զարհուրելի խավարի մեջ:

Այդ նույն միջոցին թագուհու՝ լճափին գտնվող տանը ոչ պակաս արագությամբ զարգանում էին ոչ պակաս կարևոր իրադարձություններ: Դուրերն ու նորասակները հենց նոր էին վերադարձել մեծ տան մոտ կատարված ամուսնական արարողությունից ու տեղավորվել սեղանի շուրջ, որը, եթե կարելի է այդպես արտահայտվել, սպասքաղրված էր հարսանեկան ընթրիքով, երբ հանկարծ բամբուկե պատի ճեղքից ներս թռավ մի նետ և, սուլոցով անցնելով թագուհու ու Ֆրենսիսի մեջտեղից, այնպիսի ուժով խրվեց դիմացի պատի մեջ, որ նրա փետրավոր ծայրը դեռևս շարունակում էր դողալ: Դենրին ու Ֆրենսիսը ցատկեցին դեպի նեղ կամրջակը բացվող պատուհանները և տեսան, որ վտանգավոր վիճակ է ստեղծվել: Նրանց աչքի առաջ թագուհու կամրջի մատույցը պահպանող նիզակակիրն ուզեց փախչել դեպի տուն և կամրջի մեջտեղում ընկավ ջուրը, խոցված նետով, որը շարունակում էր դողալ նրա մեջքին, ճիշտ նման այն մեկին, որը խրվել էր սենյակի պատի մեջ: Կամրջի այն կողմը, ափին, խռնվել էր Կորուսյալ Զոզիների Զովտի ամբողջ տղամարդկային բնակչությունը քուրմի գլխավորությամբ, տան վրա փետրածայր նետեր տեղալով: Նրանց հետևում կանգնած էին կանայք ու երեխաները:

Թագուհու նիզակակիրներից մեկն օրորվելով ներս ընկավ սենյակ. նա կանգ առավ, ոտքերը լայն բացելով, որպեսզի չընկնի. աչքերը դուրս էին թռչում բներից, իսկ շրթունքները շարժվում էին անձայն. նա իզուր էր ջանում ինչ-որ բան ասել. ոտքերը ծալվեցին, և նա բերանքսիվայր ցած փռվեց. նրա մեջքին, ինչպես խոզուկի ասեղներ, ցցվել էին նետերը: Դենրին ցատկեց կամրջի վրա բացվող դռան մոտ և ատրճանակի կրակով մուտքը մաքրեց հարձակվող Կորուսյալ Զոզիներից, որոնք կարող էին նեղ կամրջակով առաջ շարժվել միայն իծաշարուկ, և այժմ իրար հետևից ցած էին գլորվում՝ խոցված ատրճանակի կրակից:

Թեթև շինության պաշարումը երկար չտևեց: Չնայած Ֆրենսիսը կարողացավ Դենրիի ավտոմատ ատրճանակի պաշտպանությամբ կամուրջը ոչնչացնել, բայց պաշարվածներն անզոր էին հանգցնել տանիքի կրակը, որ քսան տեղ բռնկվել էր այրվող նետերից, որոնք քուրմի հրամանով արձակել էին հարձակվողները:

— Փրկության մի ելք կա միայն,— խեղդվելով ասաց թագուհին. նա կանգնել էր լճի վրա կախված սրահում և, սեղմելով Ֆրենսիսի ձեռքը, ասես պատրաստ էր նետվելու նրա գիրկը՝ պաշտպանություն գտնելու համար:— Եվ այդ ելքը մեզ դուրս կբերի լայնարձակ աշխարհ:— Նա ցույց տվեց ջրապտույտի ձագարը:— Այդտեղից ոչ ոք երբևէ չի վերադարձել: Ես իմ Աշխարհի Զայելում տեսել եմ, թե մեռյալներն ինչպես են լողացել այս ճամփով, և ջուրը նրանց դուրս է հանել մեծ աշխարհ: Եթե Թորեսին չհաշվենք, ես ոչ մի անգամ չեմ տեսել, որ կենդանի մարդ ընկնի այդտեղ: Միայն մեռյալներ են եղել: Եվ չեն վերադարձել երբեք: Ասենք, Թորեսն էլ չվերադարձավ:

Բոլորը նայում էին իրար, սարսափած այն մտքից, ինչ սպասում էր իրենց:

— Իսկ ուրիշ ճամփա չկա՞,— հարցրեց Դենրին՝ Լեոնսիային քաշելով դեպի իրեն:

Թագուհին գլուխն օրորեց: Տանիքի վառվող ծվեններն արդեն ընկնում էին նրանց շուրջը, իսկ ականջները դժժում էին արյան ծարավի Կորուսյալ Յոզիների խլացուցիչ ոռնոցից: Թագուհին ձեռքն ազատեց Ֆրենսիսի ձեռքից, ինչպես երևում է որոշելով ննջարան գնալ, բայց իսկույն էլ նորից բռնեց նրա ձեռքից ու տարավ իր հետ: Առանց բան հասկանալու, Ֆրենսիսը նրա հետ կանգ առավ թանկագին քարերով լի սնդուկի մոտ. թագուհին շտապով կափարիչը ծածկեց ու կողպեքով փակեց սնդուկը: Ապա խսիրը ոտքով մի կողմ նետեց ու բաց արավ հատակին գտնվող անցքը, որի տակ ջուրն էր: Նրա ցուցումով Ֆրենսիսը սնդուկը քաշեց բերեց անցքի մոտ ու նետեց ջուրը:

— Այս գաղտնարանի մասին նույնիսկ Արևի քուրմը չգիտե,— շնչաց թագուհին, նորից բռնելով Ֆրենսիսի ձեռքը և նրա հետ միասին վազելով վերադարձավ սրահ, որտեղ մնացել էին Յենրին ու Լենսիան:

— Յիմա իսկը փախչելու ժամանակն է: Ամուր գրկիր ինձ, Ֆրենսիս, իմ սիրելի ամուսին, գրկիր ու ինձ հետ միասին ցատկիր ջուրը,— հրամայեց նա:— Մենք մյուսներին ճամփա ցույց կտանք:

Եվ նրանք ցատկեցին: Նույն բռնեցին տանիքը ճարճատյունով փուլ եկավ, հրեղեն կայծեր սփռելով շուրջը: Այն ժամանակ Յենրին նույնպես թևի տակ առավ Լենսիային ու ցատկեց ջրապտույտի մեջ, ուր արդեն անհետացել էին Ֆրենսիսն ու թագուհին:

Ինչպես և Թորեսը, չորս փախստականները, ոչ մի անգամ ժայռերին չգարկվելով, ստորերկրյա գետով բարեհաջող դուրս եկան այն անցքի մոտ, որտեղից ցերեկային լույս էր թափանցում, և որտեղ մուտքը պահպանում էր հսկայական մի սարդ: Յենրիի համար լողալը շատ ավելի հեշտ էր, քան Ֆրենսիսի, որովհետև Լենսիան կարողանում էր լողալ: Ճիշտ է, Ֆրենսիսը հիանալի էր մտում ջրի մեջ, ուստի առանց հատուկ դժվարության կարող էր լողալ թագուհու հետ միասին: Վերջինս անխոս հնազանդվում էր նրան, չէր կառչում ձեռքերից ու չէր քաշում ներքև: Յանտեղով ժայռի ելուստին, չորսն էլ դուրս եկան ջրից ու որոշեցին դադար առնել: Կանայք սկսեցին քամել թրջված ու արձակված մազերը:

— Իսկ սա Կար առաջին լեռը չէ, որի ընդերքն են ընկնում ես ձեզ հետ,— ծիծաղելով նկատեց Լենսիան, դիմելով երկու Սորգաններին. ասենք, նրա խոսքերն ավելի շատ ուղղված էին թագուհուն, քան թե նրանց:

— Իսկ ես առաջին անգամ եմ այսպիսի տեղ ընկնում իմ ամուսնու հետ,— հարվածը ետ վանեց թագուհին, և նրա ծաղրի խայթող սայրը խոր մխրճվեց Լենսիայի սիրտը:

— Ֆրենսիս, ինչպես երևում է, քո կինն այնքան էլ մտադիր չէ համերաշխ ապրել իմ ապագա կնոջ հետ,— նկատեց Յենրին այն կոպտավուն ուղղամտությամբ, որը երևան է գալիս տղամարդկանց մոտ, երբ նրանք ուզում են թաքցնել կանանց անտակտությունից առաջացած շփոթությունը:

Սակայն այդպիսի զուտ տղամարդկային մոտեցմամբ Յենրին հասավ այն բանին, որ տիրեց լռություն՝ բոլորի համար էլ ավելի լարված ու ճնշող: Այդ բանը երկու կանանց էլ ասես նույնիսկ բավականություն էր պատճառում: Ֆրենսիսն իզուր էր գլուխ կոտրում, մտածելով, թե ինչ մի այնպիսի բան ասի, որպեսզի մթնոլորտը մեղմի, իսկ Յենրին լիակատար հուսահատությամբ հանկարծ վեր թռավ տեղից և, հայտարարելով, որ գնում է հետախուզության, առաջարկեց թագուհուն ուղեկցել իրեն: Նա ձեռքը պարզեց նրան ու օգնեց ոտքի կանգնելու: Ֆրենսիսն ու Լենսիան շարունակում էին նստած մնալ, պահպանելով համառ լռություն: Ֆրենսիսն առաջինը խախտեց:

— Գիտեք ինչ, Լենսիա, ես հաճույքով մի լավ կշրմփացնեի ձեզ:

— Իսկ ես ի՞նչ եմ արել որ,— գրգռիչ տոնով հարցրեց նա:

— Կարծես չգիտեք: Դուք ձեզ վատ պահեցիք:

— Այդ դուք վատ պահեցիք ձեզ,— խեղդված հեկեկանքը դուրս պոռթկաց նրա կրծքից, չնայած նա հաստատ որոշել էր կանացի թուլություն հանդես չբերել:— Ո՞վ ինդրեց ձեզ ամուսնանալ նրա հետ: Չէ որ կարճ ծղոտը դուք չքաշեցիք: Դե, հանուն ինչի՞ դուք ձեզ կամավոր կերպով կաշկանդեցիք, երբ նույնիսկ հրեշտակն այդպիսի քայլի չէր դիմի: Մի՞թե դրա համար ես ձեզ ինդրեցի: Զիչ մնաց իմ սիրտը կանգ առնել, երբ լսեցի, թե ինչպես դուք Յենրիին ասացիք, որ կամուսնանաք նրա հետ: Զիչ էր մտում ուշաթափվեմ: Դուք նույնիսկ խորհուրդ չարիք ինձ հետ:

Բայց դա ախր իմ առաջարկով էր,— որպեսզի ձեզ ազատեի նրանից,— որ որոշվեց ծղոտի վիճակահանությունը, և ես բոլորովին չեմ ամաչում խոստովանել, որ այդպես վարվեցի, որպեսզի դուք մնաք ինձ հետ: Չենրին ինչ-որ բոլորովին այլ կերպ է սիրում ինձ, քան դուք: Եվ ես էլ երբեք Չենրիին այնպես չեմ սիրել, ինչպես սիրում եմ ձեզ, սիրում եմ նույնիսկ հիմա, թող աստված ների ինձ:

Ֆրենսիսը կորցրեց իրեն: Նա գրկեց Լեոնսիային ու ամուր սեղմեց իր կրծքին:

— Եվ սա ձեր հարսանիքի օրը,— հանդիմանությամբ պոկվեց Լեոնսիայի շուրթերից:

Ֆրենսիսի ձեռքերն իսկույն թուլացան:

— Ի՛նչ եք ասում, Լեոնսիա, այն էլ այսպիսի պահին,— տրտմությամբ մրմնջաց նա:

— Իսկ ինչո՞ւ ոչ,— տաքացավ աղջիկը:— Դուք սիրում էիք ինձ: Դուք դա այնքան պարզ հասկացնել տվիք, որ ես ոչ մի կասկած չունեի ձեր սիրո հարցում: Եվ հանկարծ ամենաուրախ ու զվարթ տեսքով ամուսնանում եք պատահած առաջին կնոջ հետ, որը ձեզ գերում է իր մաշկի ճերմակությամբ:

— Դուք խանդում եք,— հանդիմանությամբ ասաց նա ու զգաց, թե ինչպես սիրտը վեր թռավ երջանկությունից, երբ կինը հաստատական գլխով արեց:— Կարող եմ երաշխավորել, որ խանդում եք, և միաժամանակ կանացի ամբողջ սեռին հատուկ ստեյուլ ընդունակությամբ՝ ստում: Ինչ որ ես արեցի, արեցի բնավ էլ ոչ ուրախ ու զվարթ տեսքով: Ես այդ բանն արի ձեզ համար ու ինձ համար: Իսկ ավելի ճիշտ՝ Չենրիի համար: Փառք աստծու, ես դեռ չեմ մոռացել, թե ինչ ասել է տղամարդկային պատիվ:

— Տղամարդկային պատիվը բոլորովին էլ միշտ չէ, որ կարող է կնոջը հիացնել,— առարկեց Լեոնսիան:

— Դուք կգերադասեիք անպատի՞վ տեսնել ինձ,— արագ հարցրեց Ֆրենսիսը:

— Ես միայն սիրող կին եմ,— աղաչեց նա:

— Դուք չար կրեստ եք և ոչ թե կին,— փոփոցեց երիտասարդը:— Եվ անարդարացի եք իմ նկատմամբ:

— Իսկ մի՞թե կինը արդարացի է լինում, երբ սիրում է,— հարցրեց Լեոնսիան, դրանով իսկ ընդունելով այդ մեծագույն ճշմարտությունն աշխարհում:— Թերևս տղամարդկանց համար գլխավորը պատվի կանոններն են, որ հենց իրենք էլ հորինում են, իսկ կանանց համար գլխավորը իրենց սիրող սրտի թելադրանքն է. իբրև կին, ես ինքս ստիպված եմ խոնարհաբար խոստովանել այդ:

— Թերևս դուք իրավացի եք: Պատիվը մաթեմատիկայի նման ունի իր տրամաբանական, բացատրելի օրենքները: Չեոնապես, կանանց համար գոյություն չունի ոչ մի բարոյական կանոն, այլ միայն. . .

— Միայն տրամադրություն, — նրա փոխարեն ավարտեց Լեոնսիան:

Այդ ժամանակ Չենրին ու թագուհին կանչեցին նրանց, այդպիսով վերջ տալով նրանց գրույցին: Ֆրենսիսն ու Լեոնսիան շտապեցին միանալ նրանց, և բոլորը միասին սկսեցին դիտել վիթխարի սարդոստայնը:

— Երբևէ այսպիսի հրեշավոր սարդոստայն տեսե՞լ էիք,— բացականչեց Լեոնսիան:

— Չետաքրքիր կլիներ տեսնել այն հրեշին, որը գործել է սա,— նկատեց Չենրին:

— Այո՛-ո՛, բայց և այնպես ավելի լավ է տեսնել նրան, քան լինել նրա պես,— ասաց Ֆրենսիսը:

Մեր բախտից է, որ այս ճամփով չպիտի գնանք,— ասաց թագուհին:

Բոլորը հարցական նայեցին նրան:

— Ահա մեր ճամփան,— ձեռքով ցույց տվեց նա գետը:— Այն ինձ լավ ծանոթ է: Ես հաճախ եմ այդ բանը տեսել իմ Աշխարհի Զայելում: Երբ իմ մայրը մեռավ ու թաղվեց ջրապտույտում, ես Աշխարհի Զայելու մեջ հետևում էի նրա դիակին ու տեսա, թե ինչպես այն հասավ այստեղ, ապա հոսանքը շարունակեց տանել նրան:

— Բայց ախր դա անշունչ մարմին էր,— արագ առարկեց Լեոնսիան:

Մրցակցությունն իսկույն նոր ուժով բռնկվեց նրանց միջև:

— Իմ նիզակակիրներից մեկը, մի սիրուն պատանի,— հանգիստ շարունակեց թագուհին,— համարձակվեց, ավա՜ղ, սիրո աչքերով նայել ինձ վրա: Նա ողջ-ողջ նետվեց ջրապտույտի մեջ: Ես նրան հետևեցի Աշխարհի Զայելում: Նա լողաց մինչև այստեղ ու դուրս եկավ ջրից: Տեսա, թե ինչպես սարդոստայնի միջով սողաց այնտեղ, դեպի լույսը, և իսկույն էլ ետ վազեց դեպի հոսանքը:

— Եվս մի մեռյալ,— ատամների արանքից մռայլ նետեց Զենրին:

— Ո՛չ, ես շարունակեցի Զայելու մեջ հետևել նրան, և չնայած որոշ ժամանակ շուրջը համատարած խավար էր, ու ես ոչինչ չէի տեսնում, ի վերջո,— և շատ շուտով,— նա հայտնվեց մի մեծ գետի ալիքների վրա՝ լուսավորված արևի պայծառ շողերով, լողաց դեպի ափ,— հիանալի հիշում եմ, որ դա ձախ ափն էր,— դուրս եկավ ջրից ու կորավ մեծ-մեծ ծառերի միջև, որոնց նմանը Կորուսյալ Զոգիների Զովտում չի աճում:

Բայց, ինչպես և Թորեսին, նրանց բոլորին սարսափեցնում էր այն միտքը, որ անհրաժեշտ է նետվել ժայռի տակ անհետացող այդ մութ գետը: Սակայն թագուհին իրենն էր պնդում:

— Տեսնո՞ւմ եք կենդանիների ու մարդկանց այդ ոսկորները, մարդիկ, որոնք վախեցել են գետից ու կամեցել այլ ճանապարհով լույս աշխարհի դուրս գալ: Զակացեք, դրանք բոլորն էլ կենդանի արարածներ են եղել: Եվ ահա թե նրանցից ինչ է մնացել: Իսկ շուտով այդ էլ չի լինի:

— Բայց և այնպես,— ասաց Ֆրենսիսը,— հանկարծ իմ մեջ այնպիսի ցանկություն առաջացավ նայել արևին: Մնացեք այստեղ, իսկ ես գնամ հետախուզության:

Դուրս քաշելով ավտոմատ ատրճանակը, որին ջուրը բոլորովին չէր վնասել, որովհետև գնդակներն անջրանցիկ էին, նա սողաց սարդոստայնի ներքևի թելերի միջով: Զենց որ նա աչքից կորավ, Լեոնսիան, թագուհին և Զենրին լսեցին կրակոցներ: Եվ համարյա անմիջապես էլ հայտնվեց Ֆրենսիսը. նա կրակելով նահանջում էր, իսկ նրա վրա հարձակվում էր ոստայնն ստեղծող՝ վիթխարի մի սարդ, որի մազմզոտ մի թաթից մինչև մյուսը երկու յարդից պակաս չէր լինի:

Չրահապատ իրանը, որից թաթերը ձգվում էին տարբեր կողմերի վրա, թղթերի զամբյուղի մեծությունն ունեին: Ամբողջովին ծակծկոտված Ֆրենսիսի գնդակներով՝ նա դեռ շարունակում էր պայքարել մահվան դեմ: Վայր ընկնելով, նա թնդածայն զարկվեց Ֆրենսիսի ուսերին ու մեջքին և, ետ ընկնելով, դեռևս շարունակելով մազոտ թաթերն անգորոթյամբ ճոճել օդում, ընկավ փրփրաշառաչ ջրերի մեջ: Չորս զույգ աչքեր հետևում էին, թե ինչպես հոսանքն արագորեն հասցրեց նրան ժայռին, քչեց նրա տակ ու անհետացրեց:

— Որտեղ մեկն էր, այնտեղ պետք է լինի նաև մյուսը,— նկատեց Զենրին, կասկածանքով նայելով այն անցքին, որտեղից թափանցում էր ցերեկային լույսը:

— Միակ ուղին այստեղ է, այստեղ,— ասաց թագուհին, ցույց տալով գետը:— Գնանք, ամուսինս, իրար գրկած, խավարի միջից դուրս գանք արև-աշխարհ: Զիշիր, ես երբեք այդ աշխարհը չեմ տեսել և շուտով առաջին անգամ կտեսնեմ քո շնորհիվ:

Նա բաց արեց գիրկը, և Ֆրենսիսը չէր կարող մերժել նրան:

— Սա ընդամենը մի անցք է ուղղաձիգ ժայռի մեջ, որի ներքևում հազար ոտնաչափ խորությամբ անդունդ է,— հայտնեց Ֆրենսիսն իր ուղեկիցներին, ինչ տեսել էր սարդոստայնի միջից դուրս սողալիս: Եվ, գրկելով թագուհուն, նա ցատկեց ջուրը:

Զենրին նույնպես գրկեց Լեոնսիային ու պատրաստվում էր ցատկել նրանց հետևից, բայց աղջիկը ետ պահեց նրան: — Դուք ինչո՞ւ ընդունեցիք Ֆրենսիսի զոհաբերությունը,— հարցրեց նա:

— Որովհետև. . . — Նա լռեց ու զարմանքով հայացքը հառեց կնոջ վրա:— Որովհետև ես ուզում էի ձեզ հետ լինել,— ավարտեց նա:— Նաև նրա համար, որ ես նշանված եմ ձեզ հետ, իսկ Ֆրենսիսն այն ժամանակ ազատ էր: Բացի դրանից, եթե չեմ սխալվում, Ֆրենսիսը լիովին գոհ է իր վիճակից:

— Ոչ,— համոզված գլուխն օրորեց կինը:— Պարզապես նա բնավորությամբ ասպետ է և իրեն այնպես է պահում, որպեսզի թագուհու զգացմունքները չվիրավորի:

— Դե, չգիտեմ: Հիշո՞ւմ եք, Մեծ տան մոտ, զոհասեղանի առաջ ես ասացի, որ կգնամ և սիրտս ու ձեռքս կառաջարկեմ թագուհուն, իսկ նա ծիծաղեց ու ասաց, որ թագուհին չի ամուսնանա ինձ հետ, եթե նույնիսկ աղաչեմ նրան: Դրանից միայն մի եզրակացություն կարելի է հանել, որ նա ինքն էր ուզում ամուսնանալ նրա հետ: Եվ իսկապես, ինչո՞ւ չամուսնանար: Նա ամուրի է, իսկ թագուհին գեղեցկուհի է:

Բայց Լեոնսիան հազիվ թե լսում էր նրան: Հանկարծ նա թափով ետ ընկրկեց և, ուղիղ նայելով Հենրիի աչքերի մեջ, հարցրեց.

— Ինչպե՞ս եք սիրում ինձ: Բո՞ւռն կերպով: Խելախեղորե՞ն: Կարո՞ղ եք ասել, որ ես ձեզ համար ամեն ինչ եմ աշխարհում, և նույնիսկ ավելին, շատ ավելին:

Հենրին միայն զարմանքով նայում էր նրան:

— Ուրեմն, կարո՞ղ եք, թե ոչ,— հարցուփորձում էր Լեոնսիան:

— Իհարկե, կարող եմ,— կարճ դադարից հետո պատասխանեց նա:— Բայց երբեք իմ մտքով չէր էլ անցնի այդպիսի արտահայտություններով սեր բացատրվել: Աստված իմ, ախր դուք ինձ համար միակ կինն եք աշխարհի երեսին: Եթե պիտի խոսել սեփական զգացմունքների մասին, ապա ես ավելի շուտ կասեի, որ սիրում եմ ձեզ խոր, ջերմ, քնքուշ սիրով: Իսկապես, ես այնպես եմ վարժվել ձեզ հետ, որ կարծես ողջ կյանքումս ճանաչել եմ ձեզ: Եվ այդ զգացումն ունեցել եմ մեր ծանոթության առաջին իսկ օրվանից:

— Նա նողկալի կին է,— բոլորովին անհարկի բացականչեց Լեոնսիան:— Ես առաջին հայացքից ասեցի նրան:

— Աստված իմ, ի՞նչ չարն եք դուք: Նույնիսկ սարսափելի է մտածել, թե դուք ինչպես կատեիք նրան, եթե նրա հետ ոչ թե Ֆրենսիսն ամուսնանար, այլ ես:

— Ավելի լավ է հետևենք նրանց,— ասաց Լեոնսիան, դրանով ավարտելով խոսակցությունը:

Եվ Հենրին, վերջնականապես մտահոգված, ամուր գրկեց նրան ու ցատկեց փրփրացայտ հոսանքի մեջ:

Գուլալակա գետի ափին նստել էին երկու հնդկուհիներ և ձուկ էին որսում: Նրանց դեմուդեմ, փոքր-ինչ հոսանքն ի վեր, ջրից դուրս էր ցցվել ուղղաբերձ մի ժայռ՝ բարձր լեռների ճյուղավորումներից մեկը: Գետն իր շոկոլադագույն ջրերը գլորում էր ժայռի կողքերից, բայց աղջիկների ոտքերի մոտ փռվել էր հանգիստ գետախորշը: Իսկ հանգիստ գետախորշում ձուկն էլ հանգիստ են որսում: Կարթաթելերն անշարժ կախվել էին ջրերի վրա. դրանց խայծերը ոչ ոքի չէին հրապուրում: Աղջիկներից մեկը, Նիկոյա անունով, հորանջեց, մի քիչ բանան կերավ, նորից հորանջեց և, մատների ծայրով բարձրացնելով կերած պտղի կեղևը, ձեռքը ետ տարավ, որ նետի հեռու:

— Կոնկորդիա, մենք ամբողջ ժամանակ հանգիստ նստած էինք,— ասաց նա ընկերուհուն,— բայց տես, ոչ մի ձուկ չենք բռնել: Սպասիր, հիմա ես աղմուկ կբարձրացնեմ ու կխառնեմ ջուրը: Իզուր չեն ասում. «Ինչ որ գցես վերև, կընկնի գետին»: Իսկ ինչո՞ւ հակառակը չի կարող լինել: Այ, ես հիմի մի բան կգցեմ ցած, և տեսնենք որևէ բան չի՞ լողա վերև: Հապա, փորձեմ: Նայիր:

Եվ բանանի կեղևը նետելով ջուրը, աղջիկը ծուլորեն հայացքը հառեց այնտեղ, ուր ընկավ կեղևը:

— Եթե որևէ բան պիտի դուրս գա ջրից, թող ինչ-որ մեծ բան լինի,— նույնպիսի ծուլությամբ մրմնջաց Կոնկորդիան:

Եվ հանկարծ նրանց ապշած հայացքի առաջ դարչնագույն խորքերից հայտնվեց մի վիթխարի սպիտակ շուն: Աղջիկները կարթերը թափով դուրս քաշեցին ջրից, նետեցին ափ և, գրկելով իրար, սկսեցին հետևել շանը, իսկ սա լողալով մոտեցավ ափին, այնտեղ, ուր ավելի ցածր էր, դուրս եկավ ջրից, թափ տվեց իրեն ու կորավ ծառերի միջև:

Նիկոյան և Կոնկորդիան ճղճղացին հիացմունքից:

— Մեկ էլ փորձիր,— խնդրեց Կոնկորդիան:

— Չէ, հիմա էլ դու: Տեսնենք, քեզ մոտ ինչ կստացվի: Չհավատալով իր փորձի հաջողությանը՝ Կոնկորդիան հողի մի կոշտ նետեց գետը: Եվ իսկույն էլ ջրի միջից հայտնվեց սաղավարտավոր մի գլուխ: Ամուր սեղմված իրարու, աղջիկները տեսան, թե ինչպես սաղավարտով մարդը լողալով մոտեցավ հենց այն տեղին, որտեղից շունը դուրս եկավ, և նույնպես չքացավ անտառում:

Եվ աղջիկները նորից ճղճղացին հիացմունքից, բայց այժմ արդեն, որքան էլ համոզում էին իրար, նրանցից ոչ ոք չհամարձակվեց որևէ բան նետել ջուրը:

Որոշ ժամանակ հետո, երբ նրանք դեռևս շարունակում էին ծղոտալ ու ծիծաղել, երկու ջահել հնդիկներ, որոնք կանոնով լողում էին հոսանքն ի վեր, ափին բուլրոսի մոտիկ, նկատեցին նրանց:

— Ի՞նչն է ձեզ այդպես զվարճացրել,— հարցրեց նրանցից մեկը:

— Մենք մի այնպիսի բան տեսանք ո՛ր,— քրքջաց Նիկոյան:

— Երևի պուկա եք կոնծել,— ենթադրեց պատանին:

Երկու աղջիկներն էլ գլուխները շարժեցին բացասաբար, և Կոնկորդիան ասաց.

— Մենք բուլրոսի էլ կարիք չունենք պուկա խմելու, որպեսզի ամեն տեսակ հրաշքեր տեսնենք: Սկզբում Նիկոյան բանալի կեղև գցեց ջուրը, և ջրից դուրս թռավ մի շուն, լեռնային վագրի մեծության սպիտակ մի շուն...

— Իսկ երբ Կոնկորդիան հողի մի կոշտ նետեց,— շարունակեց ընկերուհին,— ջրից դուրս եկավ երկաթե գլխով մի մարդ: Ինչ կասեք, հրաշք չէ՞: Ուրեմն, ես և Կոնկորդիան կախարդուհիներ ենք:

— Խոսե՛,— ասաց հնդիկներից մեկը մյուսին,— այս առթիվ արժե խմել:

Եվ նրանք, ամեն մեկը հերթով, մինչդեռ մյուսը թիակով կանոն կպահեր տեղում, շրթունքները դրեցին հուանդական ջինի քառակուսի մեծ շին, որը մինչև կեսը լցված էր պուկկայով:

— Չէ,— ասաց Խոսեն, երբ աղջիկները խնդրեցին հյուրասիրել իրենց:— Պուկկայի մի կում, և դուք նորից կտեսնեք վագրի մեծության սպիտակ շներ և երկաթե գլխով մարդիկ:

— Լավ,— ասաց Նիկոյան:— Այն ժամանակ քո պուկկայի շիշը գցիր ջուրը, և կտեսնես, թե ինչ կլինի: Մեզ մոտ ջրից դուրս թռան շուն ու մարդ, իսկ քեզ մոտ միգուցե սատանա դուրս թռչի:

— Շատ կուզենայի սատանա տեսնել,— ասաց Խոսեն, նորից կպչելով շին:— Այս պուկկայից այնպիսի քաջություն է եկել վրաս, որ էլ չասած: Անչափ շատ եմ ուզում սատանա տեսնել:

Նա շիշը հանձնեց ընկերոջը, նշանացի հասկացնելով, որ խմի վերջացնի:

— Իսկ հիմա նետիր ջուրը,— հրամայեց Խոսեն:

Դատարկ շիշը շրմփոցով ընկավ ջուրը, և նույն պահին էլ սպանված սարդի մազվզոտ, հրեշավոր մարմինը ջրի երես դուրս եկավ: Դա արդեն չափից դուրս էր սովորական հնդիկի համար:

Երիտասարդներն այնպես թափով մի կողմ նետվեցին, որ կանոն շուռ եկավ: Երբ ջրի վրա երևացին տղաների գլուխները, արագ հոսանքն արդեն նրանց հեռացրել էր գետախորշից, իսկ հետևից, ավելի դանդաղ, լողում էր շուռ եկած կանոն:

Այստեղ արդեն աղջիկները սիրտ չարին ծիծաղել: Կառչելով իրարից, նրանք նայում էին կախարդական ջրերին, միաժամանակ աչքի ծայրով հետևելով ահաբեկված պատանիներին, որոնք, վերջապես, բռնեցին կանոն, քարշ տվին ափ և, դուրս գալով հաստատուն հողի վրա, կծիկը դրեցին դեպի անտառ:

Ետմիջօրեի արևն արդեն խոնարհվում էր դեպի մայրամուտ, երբ աղջիկները սորից սիրտ արին մարտահրավեր նետել կախարդական գետին: Երկար հա ու չէից հետո նրանք վերջապես որոշեցին, որ երկուսով էլ միաժամանակ հողի մի-մի կոշտ կնետեն ջուրը: Եվ իսկույն ջրի միջից երևացին մի տղամարդ ու մի կին՝ Ֆրենսիսը և թագուհին: Աղջիկները մի ակնթարթում մտան թփերի մեջ և սկսեցին իրենց թաքստոցից հետևել Ֆրենսիսին, որը, թագուհուն բռնած, լողում էր դեպի ափ:

— Կարող է պատահել, որ դա պարզապես զուգադիպություն էր. . . Ախր նրանք կարող էին պատահականորեն հայտնվել հենց այն բուստին, երբ մենք ինչ-որ բան նետեցինք ջրի մեջ,— մի հինգ բուստ հետո շնչաց Նիկոյան Կոնկորդիայի ականջին:

— Բայց ախր երբ մենք մի բան գցեցինք, ջրի միջից էլ ինչ-որ մի բան դուրս եկավ,— առարկեց Կոնկորդիան:— Իսկ երբ երկու կոշտ նետեցինք, երկու հոգի հայտնվեցին:

— Լավ,— ասաց Նիկոյան:— Արի մի անգամ էլ փորձենք: Եվ երկուսով էլ միասին: Թե որ ոչինչ չերևա, ուրեմն մենք ոչ մի կախարդական զորություն էլ չունենք:

Նրանք սորից մի-մի կոշտ նետեցին գետը, և սորից ջրի միջից երևացին մի տղամարդ ու մի կին: Բայց այդ զույգը՝ Յենրին և Լեոնսիան, կարողանում էր լողալ. նրանք կողք կողքի լողացին դեպի այնտեղ, ուր ամենից հեշտ էր ափ դուրս գալ, և, ինչպես մինչ այդ հայտնվածները, կորան ծառերի հետևում:

Երկու հնդկուհիները դեռևս երկար նստած մնացին գետափին: Նրանք որոշեցին սպասել ու այլևս ոչինչ չգցել ջրի մեջ. եթե որևէ բան հայտնվի, ուրեմն այն ամենը, ինչ տեսել էին, պարզ զուգադիպություն էր, իսկ եթե ոչ՝ նշանակում է նրանք իրոք օժտված են կախարդական ուժով: Պառկել էին թփերի տակ ու հետևում էին ջրին, մինչև որ խավարը թաքցրեց գետը նրանց աչքերից: Այն ժամանակ հանդարտ, ծանր ու մեծ շարժվեցին դեպի գյուղ, ցնցված այն գիտակցությամբ, որ աստծու ողորմածությունը իջել է իրենց վրա:

ԳԼՈՒԽ ԶԱՆՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Թորեսը հաջորդ օրը միայն հասավ Սան Անտոնիո, երբ նրան հաջողվեց դուրս գալ ստորերկրյա գետի ջրերից: Նա քաղաք եկավ ոտքով, քրքրված շորերով ու կեղտի մեջ կորած, իսկ նրան հետևում էր հնդիկ մի մանչուկ, որը բերում էր դա Վասկոյի սաղավարտը: Թորեսն ուզում էր այդ սաղավարտը ցույց տալ ոստիկանապետին և դատավորին՝ իբրև իրեղեն ապացույց այն արտասովոր արկածների ճշմարտացիության, որոնց մասին ուզում էր որքան հնարավոր է շուտ պատմել նրանց:

Առաջին մարդը, որին նա տեսավ գլխավոր փողոցում, ոստիկանապետն էր, որը մինչև իսկ ճչաց նրան տեսնելով:

— Մի՞թե այդ իրոք դուք եք, սենյոր Թորես:— Եվ նախքան նրա ձեռքը սեղմելը, ոստիկանապետն ամենալուրջ կերպարանքով խաչակնքեց երեսը:

Այդ ձեռքի մաշկի տակ զգացվող մկանները, և առավել ևս այն ծածկող կեղտը Վերքարա-ի-Իքոսին համոզեցին, որ նրա առաջ իսկապես կանգնած է միս ու արյուն ունեցող Թորեսը:

Այն ժամանակ ոստիկանապետը համակվեց աննկարագրելի ցասումով:

— Իսկ ես ձեզ մեռած էի համարում,— բացականչեց նա:— Ի՞նչ շունն է այդ խոսե Մանչենոն: Եկավ այստեղ ու հայտարարեց, թե դուք մեռել եք: Մեռել եք ու թաղվել մայաների լեռան ընդերքում մինչև ահեղ դատաստան:

— Նա հիմար է, իսկ ես, ըստ երևույթին, այժմ ամենահարուստ մարդն եմ Պանամայում,— ծանրակշիռ տեսքով բարբառեց Թորեսը:— Համենայն դեպս, ես հանդես բերեցի ոչ պակաս քաջություն, քան վաղեմի հերոս-կոնկիստադորները. հաղթահարեցի բոլոր վտանգներն ու հասա գանձին: Ես տեսա այն: Ահա...

Թորեսն ուզեց ձեռքը շալվարի գրպանը տանել, որպեսզի հանի այն թանկագին քարերը, որ գողացել էր Երազողից, բայց ժամանակին ուշքի եկավ. չափից դուրս շատ աչքեր էին նայում նրան՝ ապշած նրա ողորմելի տեսքից:

— Ես շատ բան պետք է պատմեմ ձեզ,— շարունակեց Թորեսը:— Բայց այստեղ այդպիսի խոսակցությունների տեղը չէ: Ես ծեծել եմ մեռելների դռներն ու հանգուցյալների հագուստը կրել. տեսել եմ մարդկանց, որոնք մեռել են չորս հարյուր տարի առաջ, բայց չեն փոշիացել. իմ աչքի առաջ նրանք երկրորդ մահ ընդունեցին՝ խեղդվելով ջրի հորձանուտում. ես քայլել եմ լեռների վրայով ու լեռների ընդերքով, աղ ու հաց եմ կիսել Կորուսյալ Հոգիների հետ ու նայել Աշխարհի Հայելու մեջ: Այս բոլորը հարմար ժամին կպատմեմ ձեզ, իմ լավագույն բարեկամ, և հարգարժան դատավորին, քանզի մտադիր եմ հարստացնել ոչ միայն ինձ, այլև ձեզ:

— Իսկ դուք ու հո պատահաբար թթված պուկա չե՞ք խմել,— անվստահորեն հարցրեց ոստիկանապետը:

— Սան Անտոնիոյից դուրս գալուց ի վեր, ջրից և ավելի թունդ բան չեմ խմել,— եղավ պատասխանը:— Դրա փոխարեն այժմ կզնամ տուն ու կխմեմ ինչպես հարկն է, ապա կվճարեմ վրայիցս այս կեղտը և որևէ կարգին շոր կհագնեմ:

Բայց Թորեսն անմիջապես տուն չընկավ: Փողոցում նրա դեմ ելավ մի փոքրիկ ցնցոտիավոր, որը, տեսնելով նրան, ճիչ արձակեց, վազելով մոտեցավ ու պարզեց մի ծրար: Այդպիսի ծրարներ Թորեսն արդեն շատ անգամներ էր ստացել ու մեկեն գլխի ընկավ, որ դա տեղական կառավարական ռադիոկայանից ստացված հեռագիր է, հավանորեն Ռիգանից:

«Գոհ եմ ձեր հաջողություններով: Անհրաժեշտ է Նյու Յորք վերադառնալը ձգձգել և ս երեք շաբաթով: Հաջողության դեպքում հիսուն հազար»:

Տղայից մատիտը վերցնելով, Թորեսը ծրարի հակառակ երեսին գրեց.

«Ուղարկեցեք փողը: Նշված անձը երբեք չի վերադառնա: Չոհվեց լեռներում»:

Եվս երկու դեպք խանգարեցին Թորեսին իսկույն խմել ինչպես հարկն է ու լոզանք ընդունել: Ծերուկ Ռոդրիգես Ֆեռնանդեսի ոսկերչական կրպակի շեմքին, ուր նա պատրաստվում էր ներս մտնել, նրան կանգնեցրեց մայա ցեղի ծեր քուրմը, որին Թորեսը վերջին անգամ տեսել էր սրբազան լեռան ընդերքում: Իսպանացին ետ-ետ ընկրկեց, ասես ուրվական էր տեսնում, այնքան էր համոզված, որ ծերուկը խեղդվել է աստվածների քարանձավում, և նրան տեսնելիս վախեցավ ոչ պակաս, քան ոստիկանապետն իրեն տեսնելիս:

— Չքվիր,— բացականչեց Թորեսը:— Կորիր աչքիցս, անհանգիստ ծերուկ: Չէ որ դու ոգի ես: Իսկ մարմինդ հանգչում է հեղեղված լեռան ընդերքում՝ ուռած ու սարսափելի: Դու տեսիլք ես, ուրվական: Չքվիր, անմարմին ոգի: Իսկույն չքվիր: Եթե դու կենդանի մարդ լինեիր, կխփեի քեզ: Բայց դու ուրվական ես, իսկ ես այնքան էլ չեմ ուզում ուրվականների հետ կռվել:

Բայց ուրվականը բռնեց նրա ձեռքը և այնպես ամուր կառչեց, որ Թորեսն ականա հավատաց նրա նյութականությանը:

— Փո՛ղ,— թոթովեց ծերունին:— Փող տուր ինձ: Պարտքով տուր: Կվերադարձնեմ. ախր ես գիտեմ մայա ցեղի գանձերի գաղտնիքը: Իմ որդին մոլորվեց քարայրում, որտեղ պահված են այդ գանձերը: Երկու գրինգոներն էլ այնտեղ են: Օգնիր փրկելու իմ որդուն: Վերադարձրու նրան, և ես ամբողջ գանձերը քեզ կտամ: Բայց մեզ հարկավոր են շատ մարդիկ ու շատ հրաշագործ փոշի, որ սպիտակներն ունեն: Այդ փոշիով մենք ժայռի մեջ անցք կբանանք ու ջուրը բաց կթողնենք այնտեղից: Իմ որդին չի խեղդվել: Պարզապես ջուրը թույլ չի տալիս նրան դուրս գալու քարայրից, որտեղ կանգնած են Զիան և Խցատցյը, որոնց աչքերը թանկագին քարերից են: Միայն այդ կանաչ ու սիրուն քարերի համար կարելի է գնել աշխարհում եղած ամբողջ այդ հրաշագործ փոշին: Դե, տուր ինձ փող, որ կարողանամ հրաշագործ փոշի գնել:

Բայց Ավվարես Թորեսը տարօրինակ մարդ էր: Նրա բնավորության մեջ կար յուրատեսակ մի առանձնահատկություն կամ գիծ. եթե հարկ էր բաժանվել նույնիսկ ամենաաննշան գումարից, նա ոչ մի կերպ չէր կարողանում ստիպել իրեն այդ բանն անելու: Եվ որքան ավելի էր հարստանում, այնքան ավելի ուժեղ էր դրսևորվում նրա մոտ այդ տարօրինակությունը:

— Զը՛մ, փող,— կոպտությամբ կրկնեց նա և, մի կողմ հրելով քուրմին, բաց արեց Ֆեռնանդեսի կրպակի դուռը:— Ես որտեղի՞ց կարող եմ փող ունենալ: Ինքս էլ քուրջերի մեջ եմ, ոնց որ աղքատի մեկը: Ես ինձ համար փող չունեմ, ծերուկ, էլ ուր մնաց քեզ համար: Բացի դրանից, ախր դու ինքդ ես որդուդ տարել մայաների լեռը, ես այդտեղ գործ չունեմ: Եվ նրա մահվան մեղքը կրկնի քո վզին, ոչ թե իմ, քո որդու, որն ընկավ Չիայի ոտքերի տակ եղած փոսը, որ քո նախնիներն են փորել, և ոչ թե իմ:

Բայց ծերունին չէր հանգստանում ու շարունակում էր փող խնդրել, որպեսզի դինամիտ գնի: Այս անգամ Թորեսն այնպիսի ուժով բռնեց նրան, որ քուրմը չկարողացավ կանգնած մնալ իր ծերունական ոտքերի վրա ու փռվեց փողոցի սալահատակին:

Ռոդրիգես Ֆեռնանդեսի կրպակը փոքր էր ու կեղտոտ, ուներ միակ մի ցուցափեղկ՝ նույնպես փոքրիկ ու կեղտոտ, դրված նույնպիսի փոքրիկ ու կեղտոտ վաճառատեղանի վրա: Թվում էր, թե ամբողջ մի դար այդ կրպակը չէին ավելի ու չէին հավաքել: Մողեսներն ու ուտիճները սողում էին պատերի վրայով: Բոլոր անկյուններում սարդերը ոստայն էին հյուսել, իսկ առաստաղի վրայով շարժվում էր ինչ-որ միջատ, որի տեսքից Թորեսը արագ մի կողմ ցատկեց: Դա ամբողջ յոթ ոլոկմ երկարությամբ մի օձասանդղ էր, և Թորեսը բոլորովին չէր ուզում, որ այդ զեռունն ընկնի իր գլխին կամ օձիքի տակ: Իսկ երբ խորքում գտնվող ինչ-որ զարշահոտ խցիկից հսկայական սարդի նման դուրս սողաց ինքը Ֆեռնանդեսը, պարզվեց, որ նա Շեյլոկի ճշգրիտ պատճենն է, ինչպես նրան ներկայացնում էին Ելիզավետա թագուհու ժամանակվա դերասանները, միայն թե այնպիսի կեղտոտ Շեյլոկ, որին չէին հանդուրժի նույնիսկ Ելիզավետյան բեմում:

Ոսկերիչը ստրկահաճորեն խոնարհվեց Թորեսի առաջ և ճռճան ֆայցետով ողջունեց շատ ավելի նվաստացած, քան այդ կպահանջեր նույնիսկ նրա ողորմելի կրպակը: Թորեսը ենթադրաբար գրպանից հանեց մի տասը թանկարժեք քար, որ գողացել էր թագուհուց, ընտրեց ամենափոքրը և լուռ մեկնեց ոսկերչին, իսկ մնացածները նորից գրպանը դրեց:

— Ես աղքատ մարդ եմ,— կռթկռթաց Ֆեռնանդեսը, բայց Թորեսի հայացքից չվրիպեց, թե նա ինչպիսի ուշադրությամբ է զննում քարը:

Վերջապես ոսկերիչը նետեց այն ցուցափեղկի կափարիչին, ասես գրոշանոց մի բան, և հարցական հայացքով նայեց իր այցելուին: Թորեսը լուռ սպասում էր, գիտենալով, որ դա լավագույն միջոցն է՝ ստիպելու շատախոս ծերուկին բացվել:

— Արդյոք ճի՞շտ եմ հասկանում, որ մեծարգո սենյոր Թորեսն ուզում է իմ կարծիքն իմանալ այս քարի որակի մասին,— հարցրեց ծեր ոսկերիչը:

Թորեսը միայն լուռ գլխով արեց:

— Սա իսկական քար է: Ոչ մեծ: Ինչպես ինքներդ էլ նկատում եք՝ ոչ անթերի: Եվ միանգամայն հասկանալի է, որ հղկելիս սա դեռ էլի կփոքրանա:

— Իսկ որքա՛ն արժե սա,— անհամբերությունը չթաքցնելով, հարցրեց Թորեսը:

— Ես աղքատ մարդ եմ,— կրկնեց Ֆեռնանդեսը:

— Ես հո չեմ առաջարկում քեզ գնել, հիմար ծերուկ: Բայց քանի որ խոսք բացիր այդ մասին, ուրեմն, որքա՛ն կտաս դրան:

— Ինչպես արդեն ասացի, հարգելի սենյոր, վստահելով ձեր համբերատարությանը, ինչպես արդեն պատիվ ունեցա ասելու ձեզ, ես շատ աղքատ մարդ եմ: Օրեր են լինում, որ անգամ տասը սենտավո չեմ կարող ծախսել՝ մի կտոր հնացած ձուկ առնելու համար. օրեր են լինում, որ անգամ մի կում էժանագին կարմիր գինի չեմ կարող թույլ տալ ինձ, իսկ դա շատ օգտակար է իմ առողջության համար, ես այդ բանն իմացել եմ դեռևս պատանի հասակում, երբ իբրև աշակերտ

ծառայում էի հտալիայում, Բարսելոնից հեռու: Ես շատ աղքատ եմ և թանկագին քարեր չեմ գնում...

— Նույնիսկ եթե հետո կարելի է օգուտով վերավաճառե՞լ,— ընդհատեց նրան Թորեսը:

— Միայն այն դեպքում, երբ լիովին համոզված եմ, որ օգուտ կունենամ,— կռթռալից ծերունին:— Այո, այն ժամանակ գնում եմ, միայն թե աղքատության պատճառով չեմ կարող շատ վճարել:

Նա վերցրեց քարը և երկար, ուշադիր գննեց:— Սրա համար ես կտամ,— անվճռականորեն սկսեց նա,— կտամ... բայց խնդրում եմ ձեզ, մեծարգո սեևյոր, հասկացեք, որ ես շատ աղքատ մարդ եմ: Ամբողջ այսօրվա ընթացքում ընդամենը մի գդալ սոխով ապուր եմ կերել ու մի պատառ հաց առավոտյան սուրճի հետ:

— Օ, տեր աստված... Դե վերջապես որքա՞ն կտաս դրա համար, հիմար ծերուկ,— դրոտալից ձայնով բղավեց Թորեսը:

— Հինգ հարյուր դոլար, և այն էլ կասկածում եմ, թե արդյոք վնաս չե՞մ անի:

— Ոսկո՞վ:

— Ոչ, մեքսիկական դոլարներով,— պատասխանեց ոսկերիչը: Դա նշանակում էր ուղիղ կեսը, և Թորեսը հասկացավ, որ ծերուկը խորամանկում է:— Իհարկե, մեքսիկական դոլարներով, միայն մեքսիկական: Մենք բոլորս էլ մեր հաշիվները վարում ենք մեքսիկական դոլարներով:

Լսելով, որ այդպիսի փոքրիկ քարի համար այդքան մեծ գումար են տալիս, Թորեսն ուրախացավ, բայց ձևացրեց, թե վրդովված է ու մեկնեց ձեռքը՝ իր սեփականությունը ետ վերցնելու համար: Սակայն ծերունին արագությամբ ետ քաշեց ձեռքը, որի մեջ քարն էր, չկամենալով բաց թողնել շահավետ գործարքը:

— Մենք հին բարեկամներ ենք:— Ծերունու ձայնի մեջ ճղճղան նոտաներ հայտնվեցին:— Ես ձեզ առաջին անգամ տեսել եմ, երբ դուք, բոլորովին մանուկ, Բուկաս-դել-Թորոյից եկաք Սան Անտոնիո: Թող այդպես լինի, հանուն հին բարեկամության ես այդ գումարը ոսկով կվճարեմ ձեզ:

Միայն այդ ժամանակ Թորեսը լիակատար վստահությամբ պատկերացրեց, թե որքան մեծ է արժեքը թագուհու գանձերի, որ վաղ ժամանակներում Կորոլսյալ Յոգիները հափշտակել են մայաների քարայրի գաղտնարանից, չնայած դեռևս չգիտեր, թե ինչպես է եղել իրականում:

— Շատ լավ,— ասաց Թորեսը և արագ, նուրբ ու քաղաքավարի շարժումով քարը վերցրեց ոսկերչի ձեռքից:— Այս քարը պատկանում է իմ մի բարեկամին: Նա ուզում էր սրա դիմաց պարտք վերցնել ինձանից: Այժմ ձեր շնորհիվ ես գիտեմ, որ կարող եմ պարտք տալ նրան մինչև հինգ հարյուր դոլար ոսկով: Եվ ես երջանիկ կլինեմ հետևյալ անգամ, երբ մենք կհանդիպենք պովկերիայում, մի բաժակ,— ի՞նչ եմ ասում, քանի բաժակ որ ուզենաք,— կարմիր, թեթև, առողջության համար օգտակար գինի իրամցնել ձեզ:

Եվ Թորեսը կրպակից դուրս եկավ, նույնիսկ չաշխատելով թաքցնել իր հաղթանակն ու արհամարհանքը ոսկերչի հանդեպ. միաժամանակ ոչ առանց ներքին ցնձության մտածեց, որ իսպանական այդ խորամանկ աղվես Ֆեռնանդեսը, անկասկած, քարի իսկական արժեքի միայն կեսն առաջարկեց իրեն:

Այդ ժամանակ Լեոնսիան, թագուհին և զույգ Մորգանները, կանոն նստած, Գուալակա գետով Թորեսից շատ ավելի շուտ հասան ծովափ: Բայց Սոլանոների հասիենդա հասնելուց քիչ առաջ այնտեղ կատարվեց մի բան, որին այդ պահին հարկ եղած նշանակությունը չուվին: Հասիենդա տանող ոլորապտույտ արահետով դանդաղ բարձրանում էր ամենատարօրինակ մի այցելու, որ երբևէ եղել էր այստեղ. նրան ուղեկցում էր մի գառամյալ պառավ՝ գլխին սև շալ գցած, որի տակից երևում էր նիհար, խորշումած դեմքը, ջահել ժամանակ, ինչպես երևում է, աշխույժ ու գեղեցիկ:

Այդ այցելուն միջին տարիքի մի չինացի էր, հաստիկ ու կլորադեմ, նրա լուսնանման դեմքը ուղղակի ճառագայթում էր բարեհոգությամբ, որը սովորաբար հատուկ են համարում հաստիկ մարդկանց: Անունն էր Ի Պին. շարժումները մեղմ էին, փաղաքուշ և նույնքան քաղցր-մեղր,

որքան և իր անունը: Նա արտասովոր կերպով ուշադիր էր կողքից մանրաքայլ առաջացող զառամյալ պառավի նկատմամբ: Երբ սա հոգևածությունից ու թուլությունից սայթաքում էր, Ի Պինը կանգ էր առնում ու սպասում, մինչև որ պառավը հանգստանար և ուժ հավաքեր: Վերելքի ընթացքում նա երեք անգամ իր գրպանի տափաշից մեկական գդալ ֆրանսիական բրենդի խմեցրեց նրան:

Պառավին նստեցնելով բակի ստվերոտ անկյունում, Ի Պինը խիզախորեն ծեծեց շքամուտքի դուռը: Սովորաբար, հայտնվելով որևէ տեղ իր գործերով, նա օգտվում էր ետնամուտքից, բայց փորձառությունն ու խելքը հուշում էին նրան, թե երբ պետք է շքամուտքից օգտվի:

Դուռը բացող հնդկուհի նաժիշտը գնաց նրա մասին գեկուցելու հյուրասենյակում, որտեղ որդիների հետ նստած էր անմխիթար Էնրիկո Սոլանոն. նա ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ այն բանից հետո, ինչ Ռիկարդոն բերել էր մայաների քարայրում Լեոնսիայի գոհվելու լուրը: Նաժիշտը վերադարձավ ու հայտնեց այցելուին, որ սենյոր Սոլանոն վատ է զգում իրեն ու ոչ ոքի չի ընդունում: Այդ ամենը նաժիշտը ասաց խիստ քաղաքավարությամբ, չնայած դեմը կանգնած էր հասարակ մի չինացի:

— Զը՛մ,— արավ Պինը և սկսեց պարծենալ, որպեսզի իր նկատմամբ հարգանք ներշնչի և դրդի նաժիշտին երկրորդ անգամ գնալու տիրոջ մոտ ու գրությունը հանձնելու:— Ախր ես ինչ-որ կույի չեմ: Ես բարեկիրթ չինացի եմ: Ես երկար սովորել եմ դպրոցում: Խոսում եմ իսպաներեն: Գրում եմ անգլերեն: Տեսնում ես. հիմա ես իսպաներեն մի բան կգրեմ սենյոր Սոլանոյին: Դու գրել չգիտես ու չես կարող կարդալ, թե ես ինչ գրեցի: Իսկ ես գրեցի, որ ես Ի Պինն եմ: Եկել եմ այստեղ սենյոր Սոլանոյին տեսնելու համար: Ես կարևոր գործ ունեմ նրա հետ: Խիստ կարևոր: Խիստ գաղտնի: Ես այդ ամենը գրել եմ այս թղթի մեջ, բայց դու չես կարող կարդալ:

Սակայն նա աղախնին չասաց, որ իր գրությունը վերջանում էր այս խոսքերով.

«Սենյորիտա Սոլանո: Ես մի մեծ գաղտնիք գիտեմ»:

Ըստ երևույթին այդ երկտողն ստացել էր Ալեսանդրոն՝ Սոլանոյի որդիներից ավագը, որովհետև նա իսկույն սլացավ դեպի դուռը, առաջ անցնելով նաժիշտից:

— Խոսի՛ր, բանն ինչո՞ւմն է,— համարյա բղավելով նետվեց նա հաստիկ չինացու վրա:— Ի՞նչ գաղտնիք է: Պատմիր, շո՛ւտ:

— Շատ լավ գործ է:— Ոչ առանց գոհունակության Ի Պինը նկատեց, թե Ալեսանդրոն ինչպես հուզված է:— Ես շատ փող եմ վաստակում: Ես առնում եմ... ինչպես են ասում... գաղտնիքներ: Ծախում եմ գաղտնիքներ: Շատ հաճելի գործ է:

— Բեզ ի՞նչ է հայտնի սենյորիտա Սոլանոյի մասին,— բղավեց Ալեսանդրոն, բռնելով նրա ուսից:

— Ամեն ինչ: Շատ կարևոր տեղեկություններ...

Բայց Ալեսանդրոն այլևս ի վիճակի չէր իրեն զսպել: Նա համարյա քարշ տալով չինացուն ներս տարավ ուղղակի հյուրասենյակ, որտեղ նստած էր Էնրիկոն:

— Սա Լեոնսիայի մասին տեղեկություններ ունի,— գոչեց Ալեսանդրոն:

— Որտե՞ղ է նա,— խմբովին բացականչեցին Էնրիկոն և նրա որդիները:

«Օհո՛»,— անցավ Ի Պինի մտքով: Չնայած այդպիսի ընդհանուր գրգռվածությունը բարենպաստ էր նրա գործի համար, բայց նույնիսկ նրան էլ հուզեց:

Նրա մտորումները վախի տեղ ընդունելով, Էնրիկոն բարձրացրեց ձեռքը, հրամայելով որդիներին լռել, և հանգիստ իր հյուրին դիմեց հարցով.

— Որտե՞ղ է նա:

«Օհո՛»,— նորից մտածեց Ի Պինը: Ուրեմն, սենյորիտան կորել է: Դա նոր գաղտնիք է, որը կարող է ինչ-որ օգուտ բերել Ի Պինին— թող որ ոչ հիմա, սակայն ապագայում: Այդպիսի անվանի ընտանիքի գեղեցիկ աղջիկը կորել է չգիտես ուր. լատինամերիկյան երկրներում վատ չէ նման տեղեկություններ ունենալ: Մի գեղեցիկ օր այդ աղջիկը կարող է ամուսնանալ,— այդպիսի լուրեր

հո պատվում էին Կոյունում,— իսկ հետագայում երբևէ գժտվել ամուսնու հետ, կամ ամուսինը նրա հետ, և այն ժամանակ նա կամ նրա ամուսինը,— կարևոր չէ նրանցից որը,— թերևս ուրախ լինի այդ գաղտնիքի համար կարգին մի գումար վճարելու:

— Այդ սենյորիտա Լեոնսիան,— վերջապես ասաց նա խորամանկ շողմուխամբ,— ձեր աղջիկը չէ: Նա ուրիշ հայրիկ ու մայրիկ ունի:

Լեոնսիայի մահվան պատճառած վիշտը այնքան մեծ էր, որ Էնրիկոն մինչև իսկ չցնցվեց, երբ չինացին հայտնեց ընտանեկան այդ վաղեմի գաղտնիքը:

— Ճիշտ է,— հաստատեց Էնրիկոն:— Ես նրան որդեգրել եմ մանուկ հասակում, չնայած դա անհայտ է իմ ընտանիքի շրջանակներից դուրս: Տարօրինակ է, որ դուք գիտեք: Բայց ինձ չի հետաքրքրում այն, ինչ առանց ձեզ էլ ես գիտեմ: Այժմ ինձ հետաքրքրում է այլ բան՝ որտե՞ղ է նա:

Ի Պինը լուրջ ու ցավակցաբար գլուխն օրորեց:

— Դա բոլորովին այլ գաղտնիք է,— ասաց նա:— Միգուցե ես դա էլ իմանամ: Այն ժամանակ կվճարեմ ձեզ: Իսկ առայժմ հին գաղտնիք ունեմ: Դուք չգիտեք, թե ովքեր են եղել սենյորիտա Լեոնսիայի հայրն ու մայրը: Իսկ ես գիտեմ:

Ծերունի Էնրիկոն չկարողացավ թաքցնել այն հետաքրքրությունը, որ արթնացրեց նրա մեջ այդ գրգռիչ հաղորդումը:

— Պատմիր,— հրամայեց նա:— Տուր անունները, ապացուցիր, որ իրոք այդպես է, և ես քեզ կվարձատրեմ:

— Ո՛չ,— գլուխը բացասաբար տարուբերեց Պինը,— գործերն այդպես վարելը վատ է: Ես իմ գործերն ուրիշ ձևով եմ վարում: Դուք ինձ կվճարե՞ք՝ ես ձեզ կասեմ: Իմ գաղտնիքները լավ գաղտնիքներ են: Ես միշտ ապացուցում եմ իմ գաղտնիքները: Դուք ինձ կտաք հինգ հարյուր պեսո ու կվճարեք Կոյունից Սան Անտոնիո և Սան Անտոնիոյից Կոյուն ճանապարհի մեծ ծախսերը, իսկ ես հոր և մոր անունները կտամ:

Ի նշան համաձայնության Էնրիկո Սոլանոն գլխով արեց և այն է՝ պատրաստվում էր հրամայել Ալեսանդրոյին փողերը բերելու, երբ հանկարծ հնդկուհի աղախինը փոթորկի նման ներս ընկավ սենյակ: Այնպիսի սրընթացությամբ թռչելով Էնրիկո Սոլանոյի մոտ, որպիսին ոչ ոք չէր կարող նրանից սպասել, աղախինը արցունքն աչքերին կոտրատում էր ձեռքերը, ինչ-որ անորոշ բան փնթփնթալով, բայց երևում է՝ ոչ թե վշտից, այլ ուրախությունից:

— Սենյորիտան...— վերջապես արտաբերեց նա խեղդված շշուկով, գլխի շարժումով ու հայացքով ցույց տալով բակը:— Սենյորիտան...

Այստեղ բոլորը մոռացան Ի Պինին ու նրա գաղտնիքը: Էնրիկոն իր որդիների հետ միասին դուրս թռավ կողքի փողքիկ բակը ու տեսավ Լեոնսիային, թագուհուն և երկու Մորգաններին՝ ոտքից գլուխ փոշու մեջ կորած. այդ ընկալին նրանք իջնում էին ջորիներից, որոնց տեսքից դատելով, վարձել էին Գուալական գետի վերին հոսանքներում: Իսկ այդ միջոցին երկու հնդիկ ծառաներ, որոնց օգնության էր կանչել նաժիշտը, ճամփու դրեցին հաստիկ չինացուն և նրա գառամյալ ուղեկցուհուն:

— Մի ուրիշ անգամ եկեք,— ասացին նրանք:— Այժմ սենյոր Սոլանոն զբաղված է խիստ կարևոր գործով:

— Իհարկե, մի ուրիշ անգամ կգամ,— սիրալիր կերպով վստահեցրեց Ի Պինը, ոչ մի բանով չմատնելով իր վիշտն ու հիասթափությունը այն առթիվ, որ գործարքը ընդհատվեց ճիշտ այն պահին, երբ փողը համարյա նրա ձեռքումն էր:

Բայց նա հեռացավ մեծ տհաճությամբ: Այստեղ նրա գործունեության համար ընդարձակ դաշտ կար: Ինքը օդն անգամ ասես լիքն էր գաղտնիքներով: Նա իրեն զգում էր իբրև մի հնձվոր, որին քշում են Զանակի երկրից՝ թույլ չտալով հավաքելու առատ բերքը: Եթե հնդիկ ծառաների փութաջանությունը չլիներ, Ի Պինն անպայման կթաքնվեր տան անկյան հետևում ինչ-որ տեղ և գոնե աչքի ծայրով կդիտեր նոր ժամանածներին: Բայց կամա թե ակամա պետք էր ենթարկվել ու

հեռանալ. կես ճամփին, զգալով, թե պառազն ինչպես է ծանրացել իր վրա, նա կանգ առավ, և որպեսզի քաջալերի իր ուղեկցուհուն, բրենդիի կրկնակի բաժին լցրեց նրա բերանը:

Էնրիկոն Լեոնսիային ավելի շուտ իջեցրեց ջորուց, քան սա կհասցներ վար ցատկել,— այնքան որ չէր համբերում աղջկան սրտին սեղմելու: Մի քանի րոպե աղմկալից ողջույններ էին լսվում միայն. այդ Լեոնսիայի եղբայրներն էին, բոլոր կողմերից շրջապատած աղջկան, բուռն կերպով արտահայտում իրենց ուրախությունն ու սերը: Մի փոքր հանգստանալով, նրանք տեսան, որ Ֆրենսիսն արդեն օգնել էր մյուս կնոջը իջնելու ջորուց և այժմ կանգնած է նրա կողքին, կնոջ ձեռքն իր ձեռքում պահած, սպասելով, մինչև որ ուշադրություն կդարձնեն իրենց վրա:

— Սա իմ կինն է,— ներկայացրեց Ֆրենսիսը անծանոթուհուն:— Ես մեկնեցի Կորդիլերներ գանձի հետևից և ահա թե ինչ գտա: Տեսե՞լ եք երբևէ մի մարդ, որի բախտն այսպես բերեր:

— Բայց նա էլ է հսկայական գանձ զոհաբերել,— խիզախորեն մրմնջաց Լեոնսիան:

— Սա մի փոքրիկ կայսրության թագուհի էր,— բացատրեց Ֆրենսիսը, շնորհակալ ու հիացական մի հայացք նետելով Լեոնսիայի վրա:

Եվ վերջինս շտապեց բացատրել.

— Նա մեր բոլորի կյանքը փրկեց ու զոհաբերեց իր փոքրիկ կայսրությունը:

Եվ Լեոնսիան մեծահոգության պոռթկումով գրկեց թագուհուն իրանը և, անջատելով նրան Ֆրենսիսից, տարավ հասիենդա:

ԳԼՈՒԽ ԶՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Հագած իսպանական միջնադարյան հրաշալի կոստյում, որը կարված էր հաշվի առնելով Նոր Աշխարհի ճաշակը,— մինչև այսօր էլ Պանամայի անվանի ազարակատերերի հագին կարելի է այդպիսի կոստյումներ տեսնել,— Թորեսը ձի նստած գնում էր ծովափի երկայնքով, ուղղվելով դեպի Սոլանոների տունը: Նրա կողքից առածգական ցատկումներով,— երևում էր, որ նա անհրաժեշտության դեպքում կարող է առաջ անցնել Թորեսի լավագույն ձիերից,— սլանում էր նույն վիթխարի սպիտակ գամփռը, որը լողում էր նրա հետ ստորերկրյա գետով: Թորեսը նոր էր թեքվում դեպի Սոլանոների հասիենդան ոլորվող ճանապարհը, երբ հանդիպեց Ի Պինը. չինացին կանգ էր առել խաչվերուկում, որպեսզի հնարավորություն տա հանգստանալու իր գառամյալ ուղեկցուհուն: Սակայն Թորեսն այդ տարօրինակ զույգի վրա ավելի ուշադրություն չդարձրեց, քան ճամփի ցեխի վրա: Գոռոզ պարծենկոտության դիմակը, որ նա հագել էր շքեղ կոստյումի հետ միասին, թույլ չտվեց հետաքրքրություն հանդես բերել նրանց նկատմամբ, և նա լոկ բացակա հայացքով սահեց նրանց դեմքերի վրայով:

Մինչդեռ Ի Պինն իր շեղ աչքերով ինչպես հարկն է զննեց նրան, ոչ մի մանրուք բաց չթողնելով, ու մտածեց. «Ինչպես երևում է, շատ հարուստ է: Նա այդ Սոլանոների բարեկամն է ու գնում է նրանց տուն: Միգուցե և սենյորիտա Լեոնսիայի սիրածն է կամ նրա մերժած երկրպագուն: Ամեն դեպքում, անշուշտ, չի հրաժարվի զնելու սենյորիտայի ծննդյան գաղտնիքը:

Այո, տեսքից դատելով, նա հարուստ է, շատ հարուստ»: Այդ միջոցին հասիենդայի հյուրասենյակում հավաքվեցին բոլոր նրանք, ովքեր մասնակցել էին գանձի որոնումներին, և Սոլանոների ընտանիքի անդամները: Որոշելով իր լուման ավելացնել իրենց արկածների մասին արված պատմություններին՝ թագուհին աչքերը փայլեցնելով նկարագրեց, թե ինչպես Թորեսը գողացավ թանկագին քարերը և ինչպես հետո ընկավ ջրապտույտի մեջ, վախենալով գամփռից: Հանկարծ Լեոնսիան, որ Հենրիի հետ կանգնած էր պատուհանի մոտ, բարձրաձայն ճչաց:

— Գրո՞ղը տանի, անունը տուր՝ փայտը վերցրու,— ասաց Հենրին:— Հապա տեսեք, ինքը սենյոր Թորեսն է բարեհաճում մեզ մոտ:

— Առաջինը ե՛ս եմ,— գոչեց Ֆրենսիսը, սեղմելով բռունցքներն ու բազմանշանակ լարելով երկգլխանի մկանները:

— Ո՛հ,— ասաց Լեոնսիան:— Նա զարմանալի փչանն է: Մենք բոլորս առիթ ենք ունեցել համոզվելու, որ նա փչում է իսկապես զարմանալիորեն: Եկեք մի փոքր զվարճանանք: Ահա նա իջնում է ձիուց: Չորսս էլ թաքնվենք: Իսկ դուք,— նա ձեռքի շարժումով ցույց տվեց հորն ու եղբայրներին,— նստեք շրջան կազմած ու ձևացրեք, թե իբր ողբում եք իմ մահը: Այդ սրիկան այստեղ կգա: Դուք, իհարկե, կուզենաք նրանից իմանալ, թե ինչ կատարվեց մեզ հետ: Նա անթիվ-անհամար ստեր կփչի: Իսկ մենք առայժմ կթաքնվենք ահա այն ծածկոցի հետևում... Դե, գնանք:

Նա բռնեց թագուհու ձեռքից ու նետվեց դեպի ծածկոցը՝ հայացքով հրամայելով Ֆրենսիսին ու Յենրիին հետևել իրենց:

Երբ Թորեսը ներս մտավ, նրա աչքերի առաջ բացվեց խիստ մռայլ մի պատկեր: Դեռ մինչև վերջերս Էնրիկոն ու նրա որդիները այնպիսի վշտի մեջ էին, որ նրանց համար դժվար չէր այժմ նորից խաղալ: Յյուրին տեսնելով՝ Էնրիկոն ուզեց տեղից բարձրանալ նրան ողջունելու, բայց տեղնուտեղը նորից անզորությամբ ընկավ բազկաթոռին: Թորեսը զույգ ձեռքերով բռնեց նրա ձեռքը և դեմքին մեծագույն կարեկցանքի արտահայտություն տվեց, այնպես ձևացնելով, թե իբր հուզմունքից չի կարող ծպտուն հանել:

— Ավա՛րդ,— վերջապես արտասանեց նա ողբերգական տոնով:— Նրանք կործանվեցին: Ձեր չքնաղ Լեոնսիան ևս զոհվեց: Երկու Մորգանները՝ նույնպես: Հավանորեն Ռիկարդոն պատմել է, որ նրանք զոհվեցին մայաների լեռան ընդերքում:

— Դա ինչ-որ կախարդված տեղ է,— շարունակեց նա, սպասելով, մինչև որ կանցներ Էնրիկոյի վշտի առաջին բռնկումը:— Ես նրանց հետ էի, երբ մեռնում էին: Եթե լսեին ինձ, այժմ բոլորն էլ ողջ-առողջ կլինեին: Բայց անգամ Լեոնսիան չուզեց ականջ դնել ինձ բարեկամին: Ո՛հ: Նա գերադասեց այդ երկու գրինգոներին լսել: Իսկ ես, հաղթահարելով աննկարագրելի վտանգներ, դուրս եկա քարայրից, նայեցի ներքև, դեպի Կորուսյալ Հոգիների Հովիտը, իսկ երբ վերադարձա, նրանք արդեն հոգեվարքի մեջ էին...

Այդ թույլին սպիտակ գամփոք ներխուժեց սենյակ, իսկ նրա հետևից էլ՝ հնդիկ ծառան: Հուզմունքից դողալով ու վնգստալով՝ շուրջը հոտոտում էր սենյակը, զգալով մի հոտ, որը վկայում էր նրա տիրուհու ներկայության մասին: Բայց նա չհասցրեց մոտենալ ծածկույթին, որի հետևում թագուհին էր թաքնված. Թորեսը բռնեց նրա վզից ու հանձնեց երկու հնդիկ ծառաներին, որ պահեն:

— Թող շուրջը մնա այստեղ,— ասաց Թորեսը:— Նրա մասին հետո կպատմեմ: Իսկ այժմ նայեցեք այ սրան:— Եվ նա գրպանից հանեց ամբողջ մի բուռ թանկագին քարեր:— Ես ծեծեցի մեռյալների դռները, ու տեսեք՝ մայաների գանձը իմն է: Այժմ ես ոչ միայն Պանամայի, այլև երկու Ամերիկաների ամենահարուստ մարդն եմ: Ես կլինեմ մեծագոր:

— Ախր դուք իմ աղջկա հետ էիք, երբ նա մեռնում էր,— հեկեկալով ընդհատեց նրան Էնրիկոն:— Մի՞թե նա չխնդրեց որևէ բան հաղորդել ինձ:

— Այո,— նույնպես հեկեկանքով պատասխանեց Թորեսը, իսկապես էլ հուզված Լեոնսիայի մահվան տեսարանով, որ իր հարուստ երևակայությունը պատկերում էր:— Նա մեռավ ձեր անունը շուրթերին: Նրա վերջին խոսքերն էին...

Բայց այստեղ նա աչքերը չռեց ու պապանձվեց, չկարողանալով խոսքն ավարտել. այդ թույլին Յենրիին ու Լեոնսիան ամենաբնական տեսքով, անշտապ անցան սենյակի միջով, զբաղված խոսակցությամբ: Չնկատելով Թորեսին ու շարունակելով զրուցել՝ նրանք մոտեցան պատուհանին:

— Դուք պատմում էիք, որ նա մահվանից առաջ պատվիրեց հաղորդել ինձ...— հիշեցրեց Էնրիկոն:

— Ես... ես ստում էի,— կմկմալով արտասանեց Թորեսը, աշխատելով ժամանակ շահել՝ մի կերպ տհաճ դրությունից դուրս պրծնելու համար:— Ես համոզված էի, որ նրանք, միևնույն է, կմեռնեն, այլևս երբեք չեն կարող դուրս գալ այդ քարայրից, և ուզում էի հարվածը մեղմել, սենյոր Սոլանո, ասելով այն, ինչը անկասկած կատարեմ ձեր աղջիկը մեռնելիս: Իսկ հետո այդ Ֆրենսիսը, որն այնպես ձեր աչքը մտավ... Ես որոշեցի, որ ավելի լավ է նրան մեռած համարեք, քան իմանաք, թե այդ գրինգոն ինչպիսի վախկոտի մեկը դուրս եկավ:

Այստեղ շունը ուրախ կլանչեց, մղվելով դեպի ծածկույթը, և ծառաները մեծ ջանքերի գնով կարողացան նրան պահել: Իսկ Թորեսը, առանց իրողությունը կասկածելու, ի դժբախտություն իր՝ շարունակեց.

— Կորուսյալ Յոզիների Յովտում կա մի թուլամիտ, հիմարավուն արարած, որը պնդում է, թե կարող է ամեն տեսակ սատանայական միջոցներով կարգալ ապագան: Դա մի զարհուրելի, արյունարբու կին է: Չեմ կարող ժխտել, որ նա գեղեցիկ է: Բայց դա օձասանդղի գեղեցկություն է, որը կարող է դուր գալ միայն նրան, ով օձասանդղ սիրում է: Այժմ ես գիտեմ, թե այդ ամենն ինչպես կատարվեց. նա Յենրիին ու Լեոնսիային ցույց տվեց ինչ-որ գաղտնի անցք, որով նրանք դուրս են եկել հովտից, իսկ Ֆրենսիսը գերադասել է մնալ ու ապրել նրա հետ մեղքի մեջ. չէ՞ որ մեղքից բացի այլ կերպ չես կարող անվանել այդ կապը, քանի որ հովտում չկա կաթոլիկ քահանա, որը կարողանար օրհնել այդ միությունը: Օ՛, չկարծեք, թե Ֆրենսիսը սիրահարված է այդ ահավոր կնոջը, բնավ ոչ: Նա սիրահարված է նրա հարստության վրա: Ահա թե ինչպիսին է ձեր գրինգո Ֆրենսիսը: Դուք ձեր կրծքին օձ եք տաքացրել: Ախր նա հանդգնեց մինչև իսկ չքնաղ Լեոնսիային պղծել իր սիրահարված հայացքներով: Օ՛, ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Ես իմ սեփական աչքերով տեսա...

Շան ուրախ, բարձր հաչոցը խլացրեց նրա ձայնը, և նույն վայրկյանին Թորեսը նկատեց Ֆրենսիսին ու թագուհուն. նախորդ զույգի պես սրանք ևս դուրս եկան ծածկոցի հետևից և գրուցելով ինչ-որ բանի մասին, անցան սենյակի միջով: Թագուհին կանգ առավ ու փայփայեց շանը. գամփոռ այնքան մեծ էր, որ երբ թաթերը դրեց իր տիրուհու ուսերին, գլուխը ծածկեց թագուհու գլուխը: Իսկ Թորեսը, լիզելով հանկարծ չորացող շրթունքները, իզուր գլուխ էր կոտրում, թե ինչպես դուրս պրծնի այդ ահավոր դրությունից:

Առաջինը Էնրիկո Սոլանոն չկարողացավ ծիծաղը զսպել: Որդիները հետևեցին հորը. նրանք քրքրում էին արցունքոտվելու աստիճան:

— Ես ինքս էլ կարող էի ամուսնանալ նրա հետ,— թունավոր ծաղրանքով նկատեց Թորեսը:— Նա ծնկաչոք աղաչում էր ինձ դրա համար:

— Դե, բավական է,— ասաց Ֆրենսիսը,— ես ձեր բուրդին կազատեմ կեղտոտ աշխատանքից և այս սրիկային սեփական ձեռքերով դնից դուրս կշարտեմ:

Բայց Յենրին, արագ մոտենալով նրան, ասաց.

— Ես էլ եմ երբեմն կեղտոտ աշխատանք սիրում, իսկ այս մեկը կկատարեմ մի առանձին բավականությամբ:

Երկու Մորգաններն էլ արդեն պատրաստ էին հարձակվելու Թորեսի վրա, երբ թագուհին բարձրացրեց ձեռքը:

— Թող նախ վերադարձնի դաշույնը, որ դուրս է ցցվել գոտու տակից,— ասաց նա:— Այդ դաշույնը նա գողացել է ինձանից:

— Ի դեպ,— ասաց Էնրիկոն, երբ այդ բանը կատարվեց,— արոյոք նա չպե՞տք է վերադարձնի ձեզ այն թանկագին քարերը, որ թռցրել է ձեզանից:

Թորեսը չհապաղեց. ձեռքը խոթելով գրպանը, նա հանեց մի բուռ թանկագին քարեր ու թափեց սեղանին: Էնրիկոն նայեց թագուհուն, բայց սա շարունակում էր կանգնած մնալ, առանց ծափուն հանելու. նա սպասում էր:

— Էլի,— ասաց Էնրիկոն:

Թորեսը սեղանին դրեց ևս երեք սքանչելի չիղկված քարեր:

— Միզուցե դուք կսկսեք խուզարկել ինձ իբրև սովորական գողի՞,— վախով ու չարությամբ հարցրեց նա, շուռ տալով տաբատի դատարկ գրպանները:

— Դե, այժմ ես գործի կանցնեմ,— ասաց Ֆրենսիսը:

— Ոչ, ես,— ասաց Յենրին:

— Դե լավ,— համաձայնեց Ֆրենսիսը:— Արի միասին: Այդպես նա ավելի հեռու կթռչի աստիճաններով:

Նրանք երկուսով բռնեցին Թորեսի օձիքից ու ոտքերից և քարշ տվին դեպի դուռը:

Բոլորը, ովքեր գտնվում էին սենյակում, վազեցին պատուհանների մոտ, որպեսզի տեսնեն, թե Թորեսն ինչպես է դուրս թռչելու դռնից. Էնրիկոն բոլորից արագաշարժ դուրս եկավ, առաջինը հասնելով պատուհանին: Իսկ երբ, հետաքրքիր տեսարանով գոհացած, նորից վերադարձան սենյակի խորքը, թագուհին մի կույտի մեջ հավաքեց սեղանով մեկ ցրված քարերը և, երկու լիքը բռն վերցնելով, տվեց Լեոնսիային հետևյալ խոսքերով.

— Ֆրենսիսից և ինձանից հարսանեկան նվեր ձեզ և Յենրիին:

Այդ միջոցին Ի Պինը, պառավին թողնելով ծովափում, գողեգող ետ եկավ դեպի հասիենդա և, թաքնվելով թփերի մեջ, սկսեց դիտել, թե ինչ է տեղի ունենում տան ներսում: Տեսնելով, թե ինչպես հարուստ կաբայերոյին դուրս շարժեցին աստիճաններն ի վար այնպիսի ուժով, որ նա ամբողջ հասակով մեկ փռվեց ավազների վրա, Ի Պինը քորքաց գոհունակությամբ: Սակայն նա շատ էր խելոք, որպեսզի դուրս ցցվեր իր թաքստոցից ու ցույց տար, որ ամեն ինչ տեսավ: Դրա փոխարեն բլրակից ցած սլացավ և արդեն մինչև ափը կես ճամփին էր, երբ Թորեսն իր ձիով հասավ նրան:

Երկնքի զավակը հլուքյամբ դիմեց նրան, բայց գազազած Թորեսը մտրակը բարձրացրեց՝ նրա դեմքին թարս հասցնելու ակնհայտ մտադրությամբ: Սակայն ի Պինը չկորցրեց իրեն:

— Սենյորիտա Լեոնսիան...— արագ խոսեց նա, և մտրակն անշարժացավ Թորեսի ձեռքում:— Ես մի մեծ գաղտնիք ունեմ:— Թորեսն սպասում էր, առանց մտրակը ցած իջեցնելու:— Դուք չէի՞ք ուզենա, որ մի ուրիշ տղամարդ ամուսնանար չքնաղ սենյորիտա Լեոնսիայի հետ:

Թորեսը մտրակը ցած թողեց:

— Դե, ասա տեսնեմ,— խստությամբ հրամայեց նա:— Ի՞նչ գաղտնիք է այդ:

— Դուք չէի՞ք ուզենա, որ մի ուրիշ տղամարդ ամուսնանար սենյորիտա Լեոնսիայի հետ:

— Ենթադրենք, ոչ: Յետո՞ ինչ:

— Պատկերացրեք, որ կա մի գաղտնիք, և այն ժամանակ նա, այն մյուս տղամարդը, չի կարող ամուսնանալ սենյորիտա Լեոնսիայի հետ:

— Այդ ի՞նչ գաղտնիք է: Պատմիր, դե շուտ:

Ի Պինը գլուխն օրորեց:

— Նախ դուք վեց հարյուր դոլար կվճարեք ինձ ոսկով, հետո միայն ես ձեզ իմ գաղտնիքը կասեմ:

— Լավ, կվճարեմ,— պատրաստակամությամբ ասաց Թորեսը, չնայած մտքով իսկ չէր անցկացնում խոսքի տերը լինելու:— Դու սկզբում ասա, թե բանն ինչու՞մն է, և եթե ես տեսնեմ, որ չես փչել, կվճարեմ քեզ: Ահա, նայիր:

Եվ նա ծոցագրպանից հանեց բերնեբերան բանկոտներով ճխտված դրամապանակը: Պինը, տհաճությամբ համաձայնելով, տարավ նրան պառավի մոտ, որն սպասում էր ծովափին:

— Այս պառավ կինը երբեք չի ստում,— ասաց նա:— Սա հիվանդ է, շուտով կմեռնի: Սա վախենում է: Կոյունում խոսեց քահանայի հետ: Քահանան ասաց, որ սա պարտավոր է գաղտնիքը բացել, թե չէ մեռնելուց հետո ուղիղ դժոխք կգնա: Սա սուտ չի ասի:

— Ենթադրենք, թե սուտ չի ասի: Բայց և այնպես, ի՞նչ կարող է ասել ինձ:

— Դուք ինձ կվճարե՞ք:

— Իհարկե: Վեց հարյուր դոլար ոսկով:

— Ահա ուրեմն: Սա ծնվել է Իսպանիայի Կադիքս քաղաքում: Առաջին կարգի աղախին է եղել ու առաջին կարգի ստնտու: Եվ ահա վարձվել է մի անգլիական ընտանիքում, որը ճամփորդում էր

սրա երկրով: Երկար է ապրել այդ ընտանիքում, նույնիսկ նրա հետ մեկնել է Անգլիա: Յետո, դուք հո գիտեք, իսպանական արյունը շատ տաք արյուն է,— խիստ չարանում է նրանց վրա: Այդ ընտանիքում մի փոքրիկ աղջիկ է լինում: Սա այդ աղջկան գողանում է ու նրա հետ փախչում գալիս Պանամա: Այդ փոքրիկ աղջկան սենյոր Սոլանոն որդեգրում է: Նա շատ տղաներ ուներ և ոչ մի աղջիկ: Եվ ահա նա այդ փոքրիկ աղջկան իր աղջիկը դարձրեց: Բայց պառավը աղջկա ազգանունը չասաց նրան: Իսկ աղջիկը շատ անվանի ու շատ հարուստ ընտանիքից է: Ամբողջ Անգլիան ճանաչում է նրանց: Նրանց ազգանունն է Մորգան: Դուք լսե՛լ եք այդ ազգանունը: Սան Անտոնիոյից մարդիկ են եկել Կոլոն, որոնք ասում էին, թե սենյոր Սոլանոյի աղջիկն ամուսնանում է Մորգան ազգանունով մի անգլիացու հետ: Ահա, ուրեմն, այդ գրինգո Մորգանը սենյորիտա Լեոնսիայի եղբայրն է:

— Օհո՛,— բացականչեց Թորեսը բացահայտ չար հիացմունքով:

— Իսկ հիմա վճարեցեք ինձ վեց հարյուր դոլար ոսկով,— ասաց Ի Պինը:

— Շատ շնորհակալ եմ քեզանից, որ դու այդքան հիմար ես,— ասաց Թորեսը ծաղրական տոնով:— Միգուցե երբևէ սովորես ավելի խելոք կերպով վաճառել քո գաղտնիքները: Չէ որ գաղտնիքը ոչ կոշիկ է, ոչ կարմիր փայտ: Յայտնեցիր գաղտնիքը, և այլևս չկա այն, փնտրիր հետո, ինչպես դաշտում քամին: Ահա նա փչում է երեսիդ, մեկ էլ նայում ես՝ չկա: Ոնց որ ուրվական: Ո՞վ տեսավ: Կոշիկն ու կարմիր փայտը կարող ես ետ պահանջել: Բայց դու չես կարող ետ պահանջել գաղտնիքը, եթե պատմել ես:

— Մենք խոսում ենք ուրվականների մասին,— հանգիստ տոնով ասաց Ի Պինը:— Իսկ ուրվականներն իսկապես չքանում են: Ես ոչ մի գաղտնիք չեմ հայտնել ձեզ: Այդ ամենը երազում եք տեսել: Եթե սկսեք պատմել այդ մասին, կհարցնեն, թե ո՞վ ասաց: Դուք կասեք. «Ի Պինը»: Իսկ Ի Պինը կասի. «Ոչ»: Եվ այն ժամանակ բոլորը կասեն. «Դա ձեր աչքին է երևացել», ու կսկսեն ձեզ վրա ծիծաղել:

Եվ զգալով, որ խոսակիցն սկսում է իր տրամաբանության առաջ տեղի տալ, Ի Պինը բազմանշանակ լռեց:

— Մենք խոսեցինք, և մեր խոսակցությունը հավելեց օդում,— մի քանի վայրկյան հետո շարունակեց նա:— Դուք ճիշտ ասացիք, որ խոսքերն ուրվականներ են: Իսկ երբ ես վաճառում եմ գաղտնիքներ, ապա ուրվականներ չեմ վաճառում: Ես վաճառում եմ կոշիկներ: Վաճառում եմ կարմիր փայտ: Վաճառում եմ ապացույցներ: Ճշմարիտ ապացույցներ: Դրանք շատ ծանր են կշռում: Եթե դրանք թղթի վրա գրես,— գրես բոլոր կանոններով, որպեսզի գրառումն օրինական լինի,— թուղթը կարելի է պատռել: Բայց փաստերը թուղթ չեն, դրանք կարելի է խածել ու ջարդել ատամը: Խոսքերը չքացան առավոտյան մշուշի պես: Իսկ փաստերը մնացին ձեռքիս: Եվ այդ փաստերի համար դուք ինձ կվճարեք վեց հարյուր դոլար ոսկով, այլապես մարդիկ կծիծաղեն ձեզ վրա, որ դուք ականջ եք կախում ուրվականներին:

— Լավ,— ասաց Թորեսը, որին Ի Պինի փաստարկները համոզեցին:— Ցույց տուր քո ապացույցները, որպեսզի ես կարողանամ մի մասը թղթի պես պատռել, մյուս մասը փորձել ատամներով:

— Նախ վճարեցեք վեց հարյուր դոլար ոսկով:

— Այն բանից հետո, երբ դու ցույց կտաս քո ապացույցները:

— Նախ համրեցեք վեց հարյուր դոլար, և ապացույցները ձերը կլինեն. ուզում եք թղթի պես պատռեցեք, ուզում եք՝ կծեցեք: Դուք խոստացաք վճարել: Բայց խոստումը զեփյուռ է, ուրվական: Իսկ ինձ իսկական փող է հարկավոր, և ոչ թե ուրվական: Վճարեցեք իսկական դրամով, որպեսզի ես կարողանամ պատռել կամ ատամիս տակ փորձել:

Վերջ ի վերջո Թորեսն ստիպված եղավ զիջել և նախապես վճարել փաստաթղթերի, հին նամակների, մանկական մեղայրոնի և մանկական մի քանի իրերի համար, որոնց զննումից նա լիովին գոհ մնաց: Եվ Թորեսը ոչ միայն հավաստիացրեց Ի Պինին, որ գործարքից միանգամայն գոհ է, այլև, վերջինիս պնդմամբ նույնիսկ մի հարյուր դոլար էլ վճարեց նրան, որպեսզի մի հանձնարարություն կատարի իր համար:

Այդ միջոցին ննջարաններն իրար միացնող լոգարանում Յենրին և Ֆրենսիսը, թաքմ սպիտակեղեն հագնելով, սափրվում էին ու երգում:

Մենք՝ մեքք մեքքի, կայմի կողքին,

Յագարի դեմ երկուսով:

Իսկ նրբագեղ կահավորված իր սենյակում Լեոնսիան, երկու հնդկուհի դերձակների օգնությամբ, սիրալիր ու մեծահոգաբար թագուհուն ծանոթացնում էր քաղաքակիրթ կնոջ հարդարանքի գաղտնիքներին: Նա և՛ ուրախ էր, և՛ տխուր: Թագուհին,— մինչև մազերի ծայրը կին,— չէր թաքցնում իր անգուսպ հիացմունքը հիանալի հագուստների, սպիտակեղենի և գարդերի նկատմամբ, որոնցով լիքն էր Լեոնսիայի զգեստապահարանը: Երկուսն էլ անկեղծ բավականություն էին ստանում շորերի հետ զբաղվելով, իսկ հմուտ դերձակուհիները, այստեղ կուրթ անելով, այնտեղ՝ ծալք, այդ միջոցին Լեոնսիայի մի քանի հագուստները վերածնեցին թագուհու ավելի բարակ իրանի համար:

— Ձեզ կորսետ պետք չէ բոլորովին,— նկատեց Լեոնսիան՝ գնահատող հայացքով չափելով թագուհուն:— Այնպիսի կազմվածք, ինչպիսին ձերն է, հարյուր կանանցից մեկն է միայն ունենում: Առաջին անգամ եմ այսպիսի կլորավուն ձևեր տեսնում նիհար կնոջ մոտ: Դուք...— Լեոնսիան լռեց ու շուռ եկավ, ասես հարդարանքի սեղանից գնդասեղը վերցնելու համար, մինչդեռ իսկականից՝ որպեսզի թաքցնեք իրեն խեղդող հուզմունքը. և միայն հաղթահարելով այն, շարունակեց.— Դուք հմայիչ հարսնացու եք, և Ֆրենսիսը կարող է հպարտանալ ձեզանով:

— Այդ միջոցին Ֆրենսիսը, լոգանքի սենյակում երգելով, հենց նոր էր ավարտել սափրվելը, երբ ննջարանի դռան թխկոցն ստիպեց նրան երգն ընդհատել. նա գնաց դուռը բանալու և տեսավ Ֆեռնանդոյին՝ Սոլանոյի կրտսեր որդիներից մեկին, որի ձեռքին մի հեռագիր կար: Ֆրենսիսը վերցրեց ու կարդաց:

«Շտապ վերադարձեք: Անհրաժեշտ են ավելի լայն լիազորություններ: Բորսայում գները տատանվում են ուժեղ հարձակում ձեր բոլոր բաժնետոմսերի վրա, բացի «Տեմպլիկ պեթրոլեումից», որոնք առաջվա պես բարձր են գնահատվում: Յեռագրեցեք, թե երբ սպասեք ձեզ: Դրությունը լուրջ է: Յույս ունեմ դիմանալ, եթե անմիջապես մեկնեք: Սպասում եմ շտապ պատասխանի:

Բեկում»:

Մտնելով հյուրասենյակ, Մորգանները տեսան այնտեղ Էնրիկոյին ու նրա որդիներին, որոնք գինու շշերն էին բաց անում:

— Աղջկա դեռ ետ չստացած՝ նորից կորցնում եմ,— ասաց Էնրիկոն:— Բայց այս անգամ, Յենրի, ավելի հեշտ կտանեմ նրա կորուստը: Վաղը նշանակված է հարսանիքը: Եվ որքան շուտ լինի, այնքան լավ: Ախր այդ սրիկա Թորեսը հավանորեն այս րոպեիս արդեն Սան Անտոնիոյով մեկ փողիարում է, որ Լեոնսիան ձեզ հետ միասին եղել է լեռներում:

Բայց նախքան Յենրին իր երախտագիտությունը կհայտներ, սենյակ մտան Լեոնսիան ու թագուհին: Այնժամ Էնրիկոն բարձրացրեց գավաթը ու ազդարարեց:

— Յարսի կենացը...

Լեոնսիան, չհասկանալով, վերցրեց իր գավաթն ու նայեց թագուհուն:

— Ոչ, ոչ,— ասաց Յենրին, վերցնելով նրա ձեռքից գավաթը, որպեսզի թագուհուն հանձնի:

— Դե, գիտեք ինչ,— ասաց Էնրիկոն,— չի կարելի խմել առանց իմանալու ինչի համար, երբ կենացը կիսատ է մնացել: Ավելի լավ է՝ թույլ տվեք ավարտեմ: Եվ այսպես, հարսների կենացը:

— Վաղը դու և Յենրին պասկվում եք,— բացատրեց Ալեսանդրոն Լեոնսիային:

Որքան էլ այդ լուրը Լեոնսիայի համար անակնկալ էր ու դառն, բայց և այնպես նա տիրապետեց իրեն ու մինչև իսկ սիրտ արեց կեղծ ուրախությամբ նայել Ֆրենսիսի աչքերի մեջ:

— Մի կենաց էլ,— բացականչեց նա:— Փեսացուների կենացը:

Առանց այդ էլ Ֆրենսիսից քիչ ջանք չէր պահանջվել՝ համաձայնություն տալ թագուհու հետ ամուսնանալու, արտաքինապետ հանգստություն պահպանելով, իսկ այժմ, լսելով Լեոնսիայի առաջիկա պակադորության մասին, նա այլևս չէր կարող հանգիստ մնալ: Եվ Լեոնսիան անմիջապես նկատեց, թե նա ինչպիսի ջանքերի գնով կարողացավ իրեն զսպել: Երիտասարդի տանջանքները գաղտնի ուրախություն էին պատճառում նրան, և նա համարյա հաղթական զգացումով տեսավ, թե ինչպես Ֆրենսիսը ինչ-որ պատրվակով դուրս գնաց սենյակից:

Մինչ այդ Ֆրենսիսը հեռագիրը ցույց էր տվել բոլորին:

Իր կարողությունը խաղաթղթի վրա է դրված, ասաց նա, պետք է անհապաղ պատասխան տալ: Եվ նա խնդրեց Ֆեռնանդոյին՝ մի ձիավոր կանչել, որ հեռագիրը հասցնի Սան Անտոնիոյի կառավարական ռադիոկայան:

Լեոնսիան չուզեց երկար սպասել ու հետևեց Ֆրենսիսին: Նրան գտավ գրադարանում: Ֆրենսիսը նստել էր սեղանի մոտ, մի մաքուր թերթ առջևը դրած, ու երագուն հայացքով նայում էր Լեոնսիայի մեծ լուսանկարին, որ հանել էր ցածրիկ գրապահարանից ու դրել իր առաջ: Այստեղ Լեոնսիան այլևս չդիմացավ. նա ակամա հեկեկաց ու օրորվեց տեղում: Ֆրենսիսը մի ակնթարթում վեր թռավ տեղից ու նրան իր գիրկն առավ, որպեսզի վայր չընկնի: Եվ մինչ կհասկանային, թե ինչ է կատարվում, նրանց շրթունքները հպվեցին իրար կրքոտ համբույրով:

Հանկարծ Լեոնսիան դուրս թռավ Ֆրենսիսի գրկից ու սարսափով նայեց նրան:

— Բավական է, Ֆրենսիս, պետք է վերջ դնել սրան,— բացականչեց նա:— Ավելին. իմ հարսանիքին դուք չպետք է ներկա գտնվեք: Եթե դուք մնաք, ես ինձ համար պատասխանատու չեմ: Այսօր շոգենավ է մեկնում Սան Անտոնիոյից Կոլոն: Դուք պետք է մեկնեք այդ նավով ձեր կնոջ հետ միասին: Այնտեղից որևէ ընկերության նավով առանց դժվարության կհասնեք Նոր Օռլեան, իսկ հետո գնացքով՝ մինչև Նյու Յորք: Ես սիրում եմ ձեզ, դուք դա գիտեք:

— Բայց ես ու թագուհին դեռևս չենք պսակվել, — բացականչեց Ֆրենսիսը, այլևս չկարողանալով իրեն տիրապետել:— Հո չի կարելի Արևի աստծու զոհասեղանի առջև կատարված այդ ծիսակատարությունը իսկական պակադորություն համարել: Մենք մարդ ու կին չենք՝ ոչ ծիսակատարությամբ, ոչ իսկապես: Հավատացնում եմ ձեզ, Լեոնսիա: Դեռևս ուշ չէ...

— Բայց Արևի աստծու զոհասեղանի առջև տեղի ունեցած այդ ծիսակատարությունը մինչև այժմ կապել է ձեզ,— հանգիստ ու վճռականորեն ընդհատեց Լեոնսիան:— Թող շարունակի կապել ձեզ, մինչև դուք կհասնեք Նյու Յորք կամ գոնե... Կոլոն:

— Թագուհին չի ուզեմ պսակվել մեր օրենքներով,— ասաց Ֆրենսիսը:— Նա պնդում է, որ իր տոհմի բոլոր կանայք պսակվել են հենց այդպես, և որ Արևի աստծու զոհասեղանի առջև կատարված արարողությունը կապում է սրբազան կապերով:

Լեոնսիան անորոշ կերպով թոթվեց ուսերը, բայց առաջվա նման նրա դեմքն արտահայտում էր հաստատ վճռականություն:

— Ամուսնացած եք դուք, թե ոչ,— ասաց նա,— երկուսդ էլ պետք է մեկնեք, և հենց այսօր: Այնպես ես կխելագարվեմ: Նախագգուշացնում եմ՝ եթե դուք այստեղ լինեք, ես չեմ դիմանա: Ես չեմ կարող, գիտեմ, որ չեմ կարող ձեր աչքի առաջ պսակվել Հենրիի հետ ու դրանից հետո նորից տեսնել ձեզ... Խնդրում եմ, խնդրում եմ ինձ սխալ չհասկանաք: Ես իսկապես սիրում եմ Հենրիին, բայց... բայց ոչ այնպես, ինչպես ձեզ: Ես... Ես չեմ ամաչում համարձակորեն ասել. ես Հենրիին սիրում եմ մոտավորապես այնպես, ինչպես դուք սիրում եք թագուհուն, իսկ ձեզ սիրում եմ այնպես, ինչպես պետք է սիրելի Հենրիին, ինչպես դուք պետք է սիրեիք թագուհուն և ինչպես որ, ես գիտեմ, սիրում եք ինձ:

Նա բռնեց Ֆրենսիսի ձեռքը և սեղմեց իր սրտին:

— Ահա: Վերջին անգամ: Իսկ այժմ հեռացեք:

Բայց Ֆրենսիսի ձեռքերն արդեն օղակել էին նրա մեջքը, և Լեոնսիան պատասխանեց նրա համբույրին: Սակայն իսկույն էլ դուրս արժավ նրա գրկից նետվեց դեպի դուռը: Ֆրենսիսը հաշտվեց նրա որոշման հետ, ապա վերցրեց լուսանկարը:

— Ես սա վերցնում եմ հիշատակի համար,— ասաց նա:

— Դուք այդ բանը չպետք է անեք,— ասաց Լեոնսիան, և նրա դեմքը լուսավորվեց հրաժեշտի քնքուշ ժպիտով:— Ասե՛ք, վերցրե՛ք,— ավելացրեց նա, շուռ եկավ ու անհետացավ:

Եվ այսպես, Ի Պինը պետք է դեռևս կատարեր մի հանձնարարություն, որի համար Թորեսը նախապես հարյուր դուլար էր վճարել նրան: Յետևյալ առավոտյան, Ֆրենսիսի և թագուհու Կոլոն մեկնելուց մի քանի ժամ հետո, Ի Պինը հայտնվեց Սոլամոնների հասիենդայում: Էնրիկոն հովնոցում սիգար էր ծխում, չափազանց գոհ իրենից ու ամբողջ աշխարհից, այլև նրանից, թե ամեն բան ինչպես է դասավորվում այդ աշխարհում: Տեսնելով Ի Պինին, նա իսկույն ճանաչեց, որ դա երեկվա այցելուն է, և, նախքան նրա հետ զրուցելը, պատվիրեց Ալեսանդրոյին բերել հինգ հարյուր պետո, ինչպես երեկ պայմանավորվել էին: Այսպիսով Ի Պինը, որ զբաղվում էր գաղտնիքների վաճառքով, ոչ առանց գոհունակության իր ապրանքը երկրորդ անգամ վաճառեց: Բայց նա Թորեսի տված ցուցմունքներին հավատարիմ մնաց ու հայտարարեց, որ գաղտնիքը կհայտնի միայն Լեոնսիայի ու Յենրիի ներկայությամբ:

— Այս գաղտնիքը կապված է թոկով,— ասաց Ի Պինը, երբ Յենրին ու Լեոնսիան եկան, և նա սկսեց նրանց ներկայությամբ արձակել ապացույցների ծրարը:— Սենյորիտա Լեոնսիան և նրա նշանածը պետք է առաջին հերթին դիտեն այս իրերը: Իսկ հետո մյուսները կդիտեն:

— Դա միանգամայն արդարացի է, քանի որ առաջին հերթին նրանց է վերաբերում,— մեծահոգաբար համաձայնեց Էնրիկոն, չնայած աղջկան ու Յենրիին սեղանի մոտ կանչելու եղանակից զգացվում էր, որ նա չի համբերում որքան կարելի է շուտ ծանոթանալ ծրարի պարունակությանը:

Ծերունին աշխատում էր անտարբեր ձևանալ, բայց շարունակ թաքուն հետևում էր ջահելներին: Ի մեծ զարմանա նրա, հանկարծ Լեոնսիան ինչ-որ թուղթ շարտեց սեղանին, որ մինչ այդ կարողում էին Յենրիի հետ միասին, ու առանց քաշվելու, ամբողջ սրտով գրկեց նշանածին, ապա ամբողջ սրտով, առանց մազաչափ քաշվելու, համբուրեց ուղղակի շրթունքները: Իսկ Յենրին ետ քաշվեց և շփոթահար կարոտով բացականչեց.

— Բայց, աստված իմ, Լեոնսիա, ասիւր սա ամեն ինչի վերջն է: Մենք երբեք չենք կարող ամուսիններ լինել:

— Ինչպե՞ս,— փրփրեց Էնրիկոն:— Ի՞նչ խոսք կարող է լինել այդ մասին այժմ, երբ արդեն ամեն ինչ պատրաստ է հարսանիքի համար: Այս ի՞նչ է նշանակում, սրբ: Սա վիրավորանք է: Դուք կպսակվեք, և կպսակվեք այսօր և եթ:

Յենրին, որ քիչ մնաց կարկամախտով բռնվեր, նայեց միայն Լեոնսիային, ասես թողնելով, որ նա խոսի:

— Բայց աստվածային ու մարդկային օրենքներով,— ասաց Լեոնսիան,— ոչ մի մարդ չի կարող ամուսնանալ իր քրոջ հետ: Այժմ ինձ համար հասկանալի է, թե ինչու էի այդպիսի տարօրինակ զգացմունք տածում Յենրիի հանդեպ: Նա իմ եղբայրն է: Մենք հարազատ քույր ու եղբայր ենք, եթե այս փաստաթղթերը չեն ստում:

Ի Պինը հասկացավ, որ կարող է հաճելի լուրը հաղորդել Թորեսին. հարսանիքը չի կայանա ոչ այսօր, ոչ էլ երբևէ:

ԳԼՈՒԽ ԶԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Հասնելով Կոլոն փոքրիկ մի նավով, որը երթևեկում էր ափի երկայնքով, թագուհին ու Ֆրենսիսը արդեն քառորդ ժամից հետո գտնվում էին այն շոգենավի վրա, որը պատկանում էր «Յունայտեղ Ֆրուտ քուփսիին»: Ընդհանրապես, շնորհիվ հաջող հանգամանքների զուգադիպության, մինչև Նյու Յորք ընկած ողջ ճանապարհին անցան բացառիկ արագությամբ: Նոր Օռլեանի նավահանգստում Ֆրենսիսը տաքսի վերցրեց, որը նրանց մի ակնթարթում հասցրեց կայարան, իսկ այնտեղ փութաջան բեռնակիրները վերցրին նրանց ձեռքի ծանրոցներն ու օգնեցին թռչելու:

գնացք, որն արդեն հեռացել էր կառամատուցից: Նյու Յորքում Ֆրենսիսին դիմավորեց Բեսկոմը, և երիտասարդ գույզն արդեն սեփական ավտոմոբիլով գնաց Ռիվերսայդ-դրայվի վրա գտնվող, թերևս, չափազանց շքեղ աթոռանիստը, որը իր սեփական միլիոններով կառուցել էր ինքը՝ Ռ. Յ. Մ.-ն, Ֆրենսիսի հայրը:

Եվ ստացվեց այնպես, որ Նյու Յորք ընկնելով, թագուհին հագիվ թե ավելի ճանաչեց աշխարհը, քան այն պահին, երբ սկսեց իր ճանապարհորդությունը, նետվելով ստորերկրյա գետը: Եթե նա սովորական մարդ լիներ, կցնցվեր իրեն շրջապատող քաղաքակրթությունից: Մինչդեռ նա ամեն ինչ ընդունում էր արքայական անփոփոխությամբ, իբրև իր արքայական ամուսնու պարգևը: Իսկ որ Ֆրենսիսը արքա էր, նա չէր կասկածում. չէ որ այնքան շատ ստրուկներ էին ծառայում նրան: Մի՞թե նա վկա չէր եղել դրան նավի վրա, այլև գնացքում: Այստեղ ևս, ժամանելով նրա պալատը, թագուհին իբրև ինքնին հասկանալի մի բան ընդունեց այն, որ բազմաթիվ ծառաներ շարվել էին իրենց ողջունելու: Վարորդը լայն բաց արեց լիմուզինի դռնակը: Ուրիշ ծառաներ ճամպուրկները տուն տարան: Այդ ամբողջ ժամանակ Ֆրենսիսը մատն անգամ չչարժեց, եթե չհաշվենք այն, որ օգնեց նրան մեքենայից իջնելու: Նույնիսկ Բեսկոմը,— մի մարդ, որը, ինչպես նա գլխի էր ընկնում, չէր պատկանում ծառաների թվին,— ծառայում էր Ֆրենսիսին: Թագուհու աչքից չխուսափեց, որ, երբ իրենք արդեն ներս էին մտել պալատ, Ֆրենսիսի հրամանով Բեսկոմը նորից նստեց ավտոմոբիլ և շտապ ինչ-որ տեղ գնաց:

Իր երկրում նա իշխում էր մի բուռ վայրենիների վրա, ամբողջ աշխարհից կտրված մի հովտում: Իսկ նրա ամուսինը իշխում էր թագավորների վրա այստեղ, այս հզորագույն երկրում: Այդ ամենն այնպես հիանալի էր, և նա հրճվանքով ասում էր ինքն իրեն, որ Ֆրենսիսի հետ ունեցած կապից իր թագավորական արժանապատվությունը մազաչափ չէր տուժել:

Առանձնատան ներքին կահավորությունը մանկական միամիտ հիացմունք էր պատճառում նրան: Մոռանալով ծառաների ներկայության մասին, ավելի ճիշտ, ուշադրություն չդարձնելով նրանց վրա, ինչպես լճափին գտնվող իր տանը ուշադրություն չէր դարձնում աղախիհներին ու թիկնապահներին վրա, նա ծափ տվեց, տեսնելով վեհասքանչ նախասրահն ու մարմարե աստիճանները, արագորեն վազեց վերև ու նայեց մոտակա սենյակը: Դա գրադարանն էր, որ նա տեսել էր Աշխարհի Չայելում, Ֆրենսիսի հետ հանդիպելու օրը: Եվ այդ տեսիլքն այժմ իրականություն էր դարձել. կնոջ իրանը գրկած, Ֆրենսիսը մտավ գրքերով լի այդ մեծ սենյակը. ամեն բան ճիշտ այնպես էր, ինչպես նա տեսել էր ոսկե կաթսայի մեջ, հեղուկ մետաղի մակերեսին: Չիշում էր և հեռախոսները, և բորսային հեռագիրը, որ նույնպես տեսել էր այն ժամանակ: Եվ ճիշտ նույն ձևով, ինչպես այն ժամանակ, մոտեցավ հեռագրական ապարատին, ցանկանալով տեսնել, թե այդ ինչ արտասովոր բան է: Ֆրենսիսը հետևեց նրան, առանց ձեռքը նրա իրանից հեռացնելու:

Նա պատրաստվում էր բացատրել թագուհուն, թե այդ ապարատն ինչպես է գործում, բայց իսկույն էլ համոզվեց, որ մի քանի րոպեում պարզապես անհնարին է ծանոթացնել նրան բորսային գործողությունների ամբողջ բարդությամբ: Չանկարծ նրա հայացքը ժայթկելից որսաց մի թիվ, որը ցույց էր տալիս, թե «Ֆրիսկո կոնսոլիդեյտեդի» բաժնետոմսերն ընկել են քսան գիծ. դեռևս ոչ մի անգամ այդպիսի բան չէր կատարվել Այովայի այդ փոքրիկ երկաթուղագծի բաժնետոմսերի հետ, որը կառուցել ու ֆինանսավորել էր Ռ. Յ. Մ.-ն: Մինչև կյանքի վերջին օրը նա հավատում էր, որ այդ երկաթուղագծի բաժնետոմսերը կարող են դիմադրել ամեն տեսակ փոթորկի ու դիմանալ, եթե նույնիսկ բանկերի կեսը և ամբողջ Ուոլլ-սթրիտը հօդս ցնդեն:

Թագուհին հուզմունքով նկատեց, որ Ֆրենսիսը հուզված է իրենից ոչ պակաս:

— Այս իրը նույնպես կախարդական է, ինչպես իմ Աշխարհի Չայելին...— կիսահաստատական, կիսահարցական ասաց նա:

Ֆրենսիսը գլխով արեց:

— Չասկանում եմ՝ սա քո առաջ գաղտնիքներ է բացում,— շարունակեց թագուհին,— ինչպես իմ ոսկե կաթսա: Նա քեզ այստեղ, այս սենյակում, ցույց է տալիս, թե ինչ է կատարվում ամբողջ աշխարհում: Այն, ինչ դու հիմա տեսնում ես, անհանգստացնում է քեզ: Դա պարզ է: Միայն թե ի՞նչը կարող է քեզ անհանգստացնել այս աշխարհում, որտեղ դու մեծագույն թագավորներից մեկն ես:

Ֆրենսիսն ուզում էր պատասխանել, բայց այդպես էլ ոչինչ չասաց. այդ ամենն ինչպես բացատրել նրան, ինչպես նկարագրել այն պատկերները, որ այդ թուղիկն առկայծեցին իր մտքում՝ հեռուն փախչող երկաթգծեր և հսկայական նավահանգիստներ. բազմամարդ կայարաններ և աղմկալից նավաշինարաններ. Այլասկայի, Մոնտանի և Մահվան Յոզի հանքերում աշխատող հանքափորներ. կամուրջներով թամբած գետեր և սանձված ջրվեժներ. բարձր լարվածության գծեր, որոնք խաչաձևվում են հովիտների, ձորակների ու ճահճուտների վերևում, երկու հարյուր ֆուտ բարձրության վրա,— մի խոսքով, ամբողջ տեխնիկան, տնտեսությունը, ֆինանսները քսաներորդ դարի քաղաքակրթության պայմաններում:

— Ինչ-որ բան անհանգստացնում է քեզ,— համառորեն կրկնում էր թագուհին:— Իսկ ես, ավանդ, չեմ կարող օգնել քեզ: Չկա այլևս իմ ոսկե կաթսան: Այլևս երբեք չեմ տեսնի նրա մեջ, թե ինչ է կատարվում աշխարհում: Ես արդեն իշխանություն չունեմ ապագայի վրա: Այժմ ես պարզապես կին եմ, անօգնական ու անպաշտպան այս վիթխարի օտար աշխարհում, որտեղ դու ինձ բերիր: Ես պարզապես քո կինն եմ, Ֆրենսիս, մի կին, որը հպարտանում է քեզանով:

Այդ թուղիկն Ֆրենսիսին թվաց նույնիսկ, որ սիրում է նրան: Մի կողմ նետելով բորսային հեռագրի ժապավենը, նա նրան ամուր սեղմեց իրեն, ապա մոտեցավ սեղանի վրա շարված հեռախոսների մարտկոցին: «Նա սքանչելի է,— մտածեց Ֆրենսիսը:— Ո՛չ խորամանկություն ունի, ո՛չ նենգություն, պարզապես կին է, մինչև ուղևորվածը իսկական կին, սիրող և սիրո արժանի: Բայց, ավանդ, ինչպես երևում է, Լեոնսիային վիճակված է ընդմիշտ կանգնել մեր միջև»:

— Էլի մի կախարդություն,— քրթմնջաց թագուհին, երբ Ֆրենսիսը զանգելով Բեսկոմի գրասենյակ, խոսեց լսափողի մեջ.

— Կես ժամ հետո միստր Բեսկոմը պետք է վերադառնա այդտեղ: Սա Մորգանն է խոսում, Ֆրենսիս Մորգանը: Հինգ թուղիկ ամառ միստր Բեսկոմը գնաց իր գրասենյակը: Երբ տեսնեք նրան, ասացեք, որ ես դուրս եկա նրա հետևից և ձեզ մոտ կլինեմ համարյա նրա հետ միաժամանակ: Ես կարևոր գործ ունեմ միստր Բեսկոմի հետ: Ասացեք, որ ես արդեն դուրս եմ եկել: Շնորհակալություն: Ցտեսություն:

Հայտնվելով այդ վիթխարի, հրաշքներով լի տանը, բնական է, որ թագուհին կարծում էր, թե Ֆրենսիսն ամեն բան ցույց կտա իրեն, և շատ վշտացավ, լսելով, որ նա իսկույն պետք է մեկնի Ուոլլ-սթրիտ կոչվող ինչ-որ տեղ:

— Ի՞նչն է քեզ ստիպում բաժանվել ինձանից ու գնալ ինչ-որ տեղ, ասես դու ստրուկ ես,— հարցրեց նա, ձայնի մեջ դժգոհության երանգ:

— Բիզնեսը, որ ինձ համար շատ կարևոր է,— ժպտալով ասաց նա ու համբուրեց նրան:

— Իսկ ո՞վ է այդ Բիզնեսը, և ինչպե՞ս է, որ նա այդպիսի իշխանություն ունի քեզ նման ամենագոր թագավորի վրա: Այդպես են անվանում քո աստծո՞ւն, որին դուք բոլորդ երկրպագում եք, ինչպես իմ ժողովուրդը երկրպագում է Արևի աստծուն:

Ֆրենսիսը ժպտաց, զարմանալով նրա դիպուկ համեմատությամբ, և ասաց.

— Այո, ամերիկյան մեծ աստվածն է: Եվ շատ ահեղ աստված: Երբ նա պատժում է, ապա պատժում է արագ ու սարսափելի:

— Եվ դու ամառացրել ես նրա դժգոհությունը,— հարցրեց նա:

— Ավանդ, այո, թեև չգիտեմ ինչո՞վ: Ես հիմա պետք է գնամ Ուոլլ-սթրիտ...

— Այնտե՞ր է գտնվում նրա գրասենյակը,— հարցով ընդհատեց նրան թագուհին:

— Այո, այնտեղ է գտնվում նրա գրասենյակը,— հաստատեց նա,— և այնտեղ ես կիմանամ ինչով եմ զայրացրել նրան ու ինչով կարող եմ գուրջ շարժել, որպեսզի քավեմ մեղքս:

Ֆրենսիսը փորձեց շտապ բացատրել նրան նաժիշտի դերն ու պարտականությունները, նաժիշտ, որ նա դեռևս Կոլոնից հեռագրով պատվիրել էր վարձել, բայց դա բնավ չհետաքրքրեց նրա ջահել կնոջը. ընդհատելով նրան, թագուհին նկատեց, որ նաժիշտը երևի նույնն է, ինչ հնդիկ կանայք, որոնք ծառայում էին իրեն Կորոնայալ Յոզիների Յոզուում, և ավելացրեց, որ սովոր է նրանց

Ծառայություններին դեռևս մանկուց, այն ժամանակից, երբ մայրը դեռևս նոր-նոր էր իրեն անգլերեն ու իսպաներեն սովորեցնում:

Բայց երբ Ֆրենսիսը, գլխարկը վերցնելով, հրաժեշտի համբույր տվեց թագուհուն, այնուամենայնիվ նա մեղմացավ ու հաջողություն ցանկացավ նրան իր աստծու գոհասեղանի առաջ:

Իր սենյակներում անցկացրած մի քանի հույժ հետաքրքիր ժամերից հետո, ուր նրան բոլոր անկյուններում ման էր ածում ու խրատներ կարդում իսպաներեն խոսող ֆրանսուհի նաժիշտը, ապա ոմն փարթամ տիկին, տեսքից դատելով՝ նույնպես թագուհի (բայց իսկապես վարձած՝ նրան և Ֆրենսիսին ծառայելու համար), որը երկու օգնական-աղջիկների հետ բոլոր կողմերից չափչփեց նրան ու երկար հիանում էր նրա կազմվածքով, նոր տանտիրուհին ցած իջավ փառահեղ աստիճաններով, որպեսզի մի լավ տնտղի գրադարանը՝ իր կախարդական հեռախոսներով ու բորսային հեռագրի ապարատով:

Նա երկար-երկար դիտում էր բորսային հեռագրի ապարատը, ականջ դնելով նրա ընդհատ տկտկոցին: Ի՛նչ տարօրինակ է. այնքան ինքը կարողանում է անգլերեն ու իսպաներեն կարդալ, իսկ թե ժապավենի վրայի այդ խորհրդավոր նշաններն ինչ են նշանակում՝ չի կարող հասկանալ: Ապա սկսեց հեռախոսը գննել: Նա տեսավ, թե Ֆրենսիսն ինչպես էր անում, և ականջը դրեց միկրոֆոնին: Ապա, հիշելով, որ նա ուրիշ կերպ էր վարվել, լսափողը վերցրեց կեռիկից ու մոտեցրեց ականջին: Եվ հանկարծ լսեց ինչ-որ ձայն՝ անկասկած կանացի, և այնքան մոտիկ, որ թագուհին, անսպասելիությունից ցնցվելով, վախեցած ցած գցեց լսափողն ու ապարատից հեռու փախավ: Այդ թուպեին Փարկերը՝ Ֆրենսիսի ծեր սպասավորը, պատահաբար մտավ սենյակ: Թագուհին առաջ ծառաների բազմության մեջ չէր նկատել նրան. սպասավորի կոստյումն այնպես անթերի էր, իսկ կեցվածքն այնպես ազնիվ, որ թագուհին ավելի շուտ նրան ընդունեց Ֆրենսիսի բարեկամի, քան, ծառայի տեղ, Բեսկոմի նման վստահելի անձի, որը նրանց հանդիպեց կայարանում Ֆրենսիսի մեքենայով ու մեկնեց նրանց հետ, իբրև հավասար, իսկ հետո առանց դատողություններ անելու գնաց նրա ամուսնու հրամանները կատարելու:

Փարկերի դեմքի լուրջ արտահայտությունը շփոթեցրեց նրան. նա ծիծաղեց ու ձեռքի շարժումով ցույց տվեց հեռախոսը, ասես հարցնելով, թե դա ինչ բան է: Սպասավորը միշտ նույն լուրջ դեմքով վերցրեց լսափողը, ոչ բարձր ձայնով ասաց նրա մեջ. «Սխալ է», ու կախեց իր տեղը: Այդ մի քանի վայրկյանում թագուհու գիտակցության մեջ մի ամբողջ հեղափոխություն կատարվեց: Այն ձայնը, որ նա լսեց, բոլորովին էլ աստծու կամ ոգու ձայն չէր, այլ պարզապես կնոջ ձայն:

— Այդ կինը որտե՞ղ է,— հարցրեց նա:

Փարկերն ավելի ևս ուղղվեց, ընդունեց էլ ավելի կենտրոնացած տեսք ու գլուխ տվեց:

— Այստեղ, տանը, կին կա թաքնված,— հուզմունքով խոսեց թագուհին:— Ես այս բանի մեջ լսեցի նրա ձայնը: Նա երևի մոտերքում է, կողքի սենյակում...

— Դա հեռախոսավարուհին էր,— ասաց Փարկերը, փորձելով կանգնեցնել նրա խոսքերի հեղեղը:

— Ինձ համար միևնույն է, թե նրան ինչպես են կոչում,— ընդհատեց թագուհին:— Ես չեմ հանդուրժի, որպեսզի այս տանը բացի ինձանից մի ուրիշ կին ևս լինի: Ինդրեցեք նրան հեռանալ: Ես բարկանում եմ:

Բայց Փարկերը միայն էլ ավելի ուղղվեց և ընդունեց էլ ավելի կենտրոնացած տեսք: Այն ժամանակ հանկարծ մի նոր միտք ծագեց թագուհու գլխում. միզուցե այս հարգարժան ջենթլմենը փոքրիկ թագավորների հիերարխիայում շատ ավելի բարձր դիրք է գրավում, քան ինքը կարծում է: Միզուցե նա համարյա հավասար է Ֆրենսիսին: Իսկ ինքը նրա հետ վարվում է իբրև մի մարդու, որը շատ և շատ ցածր է իր ամուսնուց:

Թագուհին բռնեց Փարկերի ձեռքից և, չնայած նրա ակնհայտ դիմադրությանը, քարշ տվեց դեպի բազմոցն ու ստիպեց նստել իր կողքին: Վերջնականապես շփոթեցնելով ծեր սպասավորին, նա տուփից մի քանի կոնֆետ առավ և սկսեց հյուրասիրել նրան, ամեն անգամ շոկոլադը ճխտելով նրա բերանը, երբ ծերունին փորձում էր առարկել:

— Ասացեք,— վերջապես հարցրեց նա, ծերունու բերանը լիքը կոնֆետ լցնելով,— մի՞թե ձեր երկրում ընդունված է բազմակնությունը:

Լսելով այդքան շատակ ու անկեղծ այդ հարցը, Փարկերը աչքերը չռեց ու քիչ մնաց խեղդվե՞ր շոկոլադից:

— Օ՛, ես շատ լավ գիտեմ, թե այդ խոսքն ինչ է նշանակում,— հավատացրեց թագուհին:— Եվ նորից եմ հարցնում, մի՞թե ձեր երկրում ընդունված է բազմակնությունը:

— Տիրուհի, այս տանը ուրիշ կին չկա, բացի ձեզանից, եթե աղախիներին չհաշվենք,— վերջապես խոսեց Փարկերը:— Այդ ձայնը, որ դուք լսեցիք, պատկանում է մի կնոջ, որը գտնվում է ոչ թե այստեղ, այլ այստեղից շատ մղոններ հեռու, և նա պատրաստ է ծառայելու ինչպես ձեզ, այնպես էլ բոլոր նրանց, ովքեր ուզում են հեռախոսով խոսել:

— Նա գաղտնիքի ստրկուհի՞ն է,— հարցրեց թագուհին, սկսելով աղոտ կերպով հասկանալ, թե բանն ինչու՞մն է:

— Այո,— հաստատեց սպասավորը:— Նա հեռախոսի ստրկուհին է:

— Թռչող խոսքերի՞:

— Այո, տիրուհի, եթե ձեզ հաճելի է՝ թռչող խոսքերի:— Նա արդեն մատնվել էր լիակատար հուսահատության, չիմանալով, թե ինչպես դուրս պրծնի. իր ամբողջ ծառայության ընթացքում դեռևս ոչ մի անգամ այդպիսի վիճակի մեջ չէր ընկել:— Տիրուհի, ուզո՞ւմ եք՝ ես ձեզ ցույց տամ, թե ինչպես պետք է օգտվել հեռախոսային ապարատից: Թռչող խոսքերի ստրկուհին ցերեկվա ու գիշերվա ուզած ժամին ձեր տրամադրության տակ է: Եթե կամենաք, նա ձեզ կմիացնի ձեր ամուսնու՝ միստր Մորգանի հետ, և դուք կարող եք նրա հետ խոսել:

— Հիմա՞:

Փարկերը գլխով արեց, վեր կացավ բազմոցից ու թագուհուն տարավ հեռախոսի մոտ:

— Սկզբում,— սովորեցնում էր նա,— դուք կխոսեք ստրկուհու հետ: Հենց որ այս բանը վերցնեք կեռիկից ու տանեք ականջիդ, ստրկուհին կխոսի ձեզ հետ: Նա միշտ միևնույն բանն է հարցնում. «Համա՞րը»: Իսկ երբեմն էլ ասում է. «Համա՞րը: Համա՞րը»: Երբեմն նա խիստ գրգռված է լինում: Երբ հարցնում է. «Համա՞րը», դուք ասում եք. «Էդիսթոուն, տասներկու-իննսուներկու»:
Ստրկուհին ձեր հետևից կրկնում է. «Էդիսթոուն, տասներկու-իննսուներկու»:
Իսկ դուք ասում եք. «Այո, ինդրում եմ...»

— Ես ստրկուհուն պետք է ասեմ «ինդրո՞ւմ եմ»,— ընդհատեց նրան թագուհին:

— Այո, տիրուհի: Թռչող խոսքերի այդ ստրկուհիները բոլորովին հատուկ ստրկուհիներ են, որոնց ոչ ոք երբևէ չի տեսնում: Ես արդեն ջահել չեմ, բայց իմ ամբողջ կյանքի ընթացքում ոչ մի անգամ որևէ հեռախոսավարուհու չեմ տեսել... Եվ այսպես, մի քանի վայրկյանից հետո մի այլ ստրկուհի, նույնպես կին, որը գտնվում է առաջինից շատ ու շատ մղոնների վրա, կասի ձեզ. «Էդիսթոուն, տասներկու—իննսուներկու»:
Իսկ դուք կասեք. «Ես եմ, միսիս Մորգանը: Ես ուզում եմ խոսել միստր Մորգանի հետ, որը, որքան ինձ հայտնի է, գտնվում է միստր Բեսկոմի աշխատասենյակում»: Հետո կսպասեք,— կես ռոպե կամ մեկ,— և միստր Մորգանը կսկսի խոսել ձեզ հետ:

— Շատ ու շատ մղոններ հեռվի՞ց:

— Այո, տիրուհի, և լսելի կլինի այնպես, ասես հարևան սենյակում է: Իսկ երբ միստր Մորգանը կասի. «Ցտեսություն», դուք նույնպես կասեք. «Ցտեսություն», և լսափողը կկախեք, ինչպես ես արեցի:

Եվ թագուհին արեց այն ամենը, ինչ Փարկերն ասաց: Երկու տարբեր ստրկուհիներ պատասխանեցին նրան, ենթարկվելով իր անվանած կախարդական թվին: Եվ ահա արդեն Ֆրենսիսը խոսում է նրա հետ, ինդրում է չճանճրանալ ու խոստանում հինգից ոչ ուշ տանը լինել:

Իսկ Ֆրենսիսի համար ամբողջ այդ օրը լի էր գործերով ու հուզմունքներով:

— Այդ ի՞նչ գաղտնի թշնամի է լույս ընկել ձեզ համար,— նորից ու նորից հարցնում էր Բեսկոմը, բայց Ֆրենսիսն ամեն անգամ գլուխն էր օրորում, չկարողանալով հասկանալ, թե ով կարող է լինել:

— Ախր ինքներդ էլ տեսնում եք՝ այնտեղ, ուր դուք գործ չունեք, բորսայում դրուժությունը միանգամայն կայուն է: Իսկ ի՞նչ է կատարվում ձեր բաժնետոմսերի հետ: Սկսենք «Ֆրիսկո կոնսոլիդացիայից»: Ոչ մի պատճառով ու ենթադրությամբ չի կարելի բացատրել, թե ինչու են այդ ընկերության բաժնետոմսերն այդպես շեշտակի ցած ընկնում: Եվ սկստեցեք՝ ընկնում են միայն ձեր ձեռնարկությունների բաժնետոմսերը: Նյու Յորք, Վերմոնտ ընդ Քոննեքթիկուտ» ընկերությունը վերջին չորս եռամսյակում վճարել է տասնհինգ տոկոսի շահութամաս, և նրա բաժնետոմսերը թվում էին նույնչափ անսասան, որքան Ջիբրալթարի պարիսպները: Բայց և այնպես դրանք ցած գլորվեցին, և այն էլ շատ թունդ: Նույն բանը տեղի է ունենում «Մոնտանա Լոուդի», Մահվան Յոլվտի պղնձահանքերի, «Իմպիրիել Թանգստենի» և «Նորդ-Ուեստեռն Էլեկտրիկի» բաժնետոմսերի հետ: Իսկ վերջոյն «Այասկա Թրոդուելլի» բաժնետոմսերը: Դրանք ժայռից էլ կայուն էին: Միայն երեկ երեկոյան հարձակում սկսվեց դեմ: Բորսայի փակման ժամին դրանք ընկել էին ութ գիծ, իսկ այսօր՝ արդեն տասնվեց: Դրանք բոլորն այն ձեռնարկությունների բաժնետոմսերն են, ուր ներդրված է ձեր կապիտալը: Ուրիշ թղթերի ձեռք չի դիպել: Մնացյալ ամեն ինչում բորսային դրուժությունը միանգամայն կայուն է:

— Բայց ախր «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսերն էլ կայուն են,— առարկեց Ֆրենսիսը:— Իսկ այդ ձեռնարկության մեջ ես ամենամեծ գումարներն եմ դրել:

— Դուք համոզված եք, որ չեք կարող տալ մեկի անունը, որն ընդունակ է այդ բանին: Մի՞թե չեք կարողանում հիշել, թե ով է ձեր թշնամին:

— Աստված վկա, ոչ, Բեսկոմ: Ոչ ոքի չեմ կարող կասկածել: Ես ոչ մի թշնամի չունեմ պարզապես նրա համար, որ հորս մահվանից հետո բոլորովին չեմ զբաղվել գործերով: «Տեմպիկո պեթրոլեումը» միակ ձեռնարկությունն է, որով ես հետաքրքրվել եմ, բայց առայժմ նրա բաժնետոմսերի հարցում ամեն ինչ բարեհաջող է:— Նա անշտապ մոտեցավ բորսային հեռագրի ապարատին:— Ահա, տեսնում եք, վաճառված է ևս հինգ հարյուր բաժնետոմս կես գիծ ավելի բարձր գնով, քան մինչև այժմ:

— Բայց և այնպես ինչ-որ մեկը ուզում է ձեզ որսալ,— հավատացրեց Բեսկոմը:— Դա ցերեկվա պես պարզ է: Ես նայում եմ բոլոր այդ ձեռնարկությունների հաշվետվությունները, որ անվանեցի: Դրանցում փաստերը խառնված են, խառնված են վարպետորեն ու նուրբ կերպով, որպեսզի որքան կարելի է մռայլ տպավորություն ստացվի: Ինչո՞ւ, օրինակ, «Նորս Ուեստեռնը» շահութամաս չի վճարել: Ինչո՞ւ է Մալենին այդպիսի սև երանգներով կազմել «Մոնտանա Լոուդի» ձեռնարկությունների հաշվետվությունը: Լավ, չխոսենք այդ միտումնավոր հաշվետվությունների մասին: Բայց ինչո՞ւ է այդպիսի մեծ քանակությամբ բաժնետոմս նետվում շուկա: Խնդիրը պարզ է. ինչպես երևում է, ինչ-որ մեկը հարձակում է սկսել ձեր դեմ, և, հավատացեք, այդ հարձակումը պատահական չէ. այն նախապատրաստվել է դանդաղ ու անշեղորեն: Աղետը կարող է պայթել պատերազմի, մեծ գործադուլի կամ ֆինանսական խուճապի մասին առաջին իսկ լուրերի հետ, մի խոսքով, առաջին իսկ իրադարձության հետ, որը հարված կհասցնի ամբողջ բորսային շուկային:

Նայեցեք, թե ինչ վիճակում եք դուք այժմ. բոլոր ձեռնարկությունների բաժնետոմսերը, բացի նրանցից, որ դուք եք ֆինանսավորում, միանգամայն կայուն են: Այս ամբողջ ժամանակամիջոցում ես աշխատել եմ ծածկել բաժնետոմսերի ինքնարժեքի գնի միջև եղած տարբերությունը, և դա ինձ հաջողվել է: Բայց ձեր լրացուցիչ միջոցների զգալի մասն արդեն ծախսված է, իսկ բաժնետոմսերի ինքնարժեքի ու գնի միջև եղած տարբերությունը շարունակում է նվազել: Սա դատարկ բան չէ: Սա կարող է կործանման հասցնել: Դրուժությունը հույժ փափկանկատ է:

— Բայց մենք ունենք «Տեմպիկո պեթրոլեում», այստեղ բախտը դեռևս ժպտում է մեզ. սրա բաժնետոմսերը կարող են իբրև ապահովություն ծառայել բոլոր մնացյալների համար,— ասաց Ֆրենսիսը:— Ծիշտ է, ես բոլորովին չեի ուզենա ձեռք տալ դրանց,— ավելացրեց նա:

Բեսկոմը գլուխն օրորեց:

— Մենք պետք է հաշվի նստենք այն բանի հետ, որ հեղափոխությունը Մեքսիկայում միանգամայն հնարավոր է, և որ մեր կառավարությունն աչքի է ընկնում զարմանալի թուլամորթությամբ: Եթե խաղի մեջ մտցնենք «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսերը, իսկ այդ ժամանակ ինչ-որ լուրջ բարդացում սկսվի, ուրեմն՝ վերջ ձեզ, դուք կսնանկանաք ու կդատապարտվեք մուրացկանության:

Բայց և այնպես,— եզրափակեց Բեսկոմը,— ես այլ ելք չեմ տեսնում, բացի «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսերի օգնությանը դիմելը: Ես սպառել եմ համարյա այն բոլոր միջոցները, որ դուք թողել էիք: Իսկ այն, ինչ տեղի է ունենում մեզ հետ, անակնկալ վրա տալ չէ: Դա հանգիստ ու համառ առաջխաղացում է, որը հիշեցնում է լեռնիվար սողացող սառցասարը: Բոլոր այս տարիների ընթացքում, ինչ ես բորսայում վարում եմ ձեր գործերը, մենք առաջին անգամ ենք այսպիսի փակուղու առաջ կանգնում: Այժմ խոսենք ձեր ֆինանսական դրության մասին ընդհանրապես: Ձեր ֆինանսները վարում է Զոլլինգը, և նրան պետք է որ ամեն ինչ հայտնի լինի: Բայց դուք պետք է ամեն բանից տեղյակ լինեք: Ի՞նչ թղթեր կարող եք տալ ինձ իբրև ապահովում: Որո՞նք՝ այսօր, և որո՞նք՝ վաղը: Որո՞նք՝ եկող շաբաթ և հետագա երեք շաբաթներին:

— Իսկ որքա՞ն է հարկավոր ձեզ,— իր հերթին հարցրեց Ֆրենսիսը:

— Մեկ միլիոն դոլար այսօր, մինչև բորսայի փակվելը:— Բեսկոմը պերճախոսությամբ մատնացույց արեց բորսային հեռագրի ապարատը:— Եվ գոնե քսան միլիոն էլ առաջիկա երեք շաբաթվա ընթացքում, եթե,— խորհուրդ եմ տալիս լավ հիշել այս «եթե»-ն,— եթե աշխարհում ամեն ինչ խաղաղ ընթանա և դրությունը բորսայում լինի այնպիսին, ինչպես որ էր վերջին կես տարում:

Ֆրենսիսը վճռականորեն վեր կացավ ու ձեռքը տարավ գլխարկին:

— Ես իսկույն գնում եմ Զոլլինգի մոտ: Նա ավելի լավ է տեղյակ իմ գործերի վիճակին, քան ես: Մինչև բորսայի փակվելը գոնե մեկ միլիոնը կհանձնեմ ձեզ, և համարյա համոզված եմ, որ մնացածը կարող եմ հանձնել մոտակա շաբաթների ընթացքում:

— Հիշեցեք,— նախազգուշացրեց Բեսկոմը, սեղմելով նրա ձեռքը,— ձեր դեմ ուղղված հարձակման ամենաչարագուշակ գիծը այն մեթոդիկ անշտապողականությունն է, որով այդ հարձակումը ծավալվում է: Եվ դա դիմակահանդեսային կատակ չէ, այլ լայնորեն մտածված կամպանիա, որը, ամենայն հավանականությամբ, դեկավարում է որևէ խոշոր տուգ:

Այդ օրվա ու երեկոյի ընթացքում թռչող խոսքերի ստրկուհին շատ անգամներ թագուհուն ապարատի մոտ կանչեց ու միացրեց ամուսնու հետ: Թագուհին մեծ հիացմունքով նկատեց, որ իր ննջարանում, մահճակալի մոտ, հեռախոս կա, որի միջոցով, զանգելով Զոլլինգի աշխատասենյակ, բարի գիշեր մաղթեց Ֆրենսիսին ու փորձեց նույնիսկ համբուրել նրան, ի պատասխան որի լսեց ինչ-որ տարօրինակ, անորոշ ձայն՝ նրա պատասխան համբույրը:

Թագուհին չգիտեր՝ արդյոք երկա՞ր է քնել: Բայց, արթնանալով, կիսախուփ կոպերի տակից տեսավ, որ Ֆրենսիսը շեմքից իրեն է նայում, հետո կամացուկ դուրս գնաց ննջարանից: Թագուհին իսկույն վեր թռավ տեղից ու վազեց դեպի դռները, բայց Ֆրենսիսն արդեն ցած էր իջնում աստիճաններով:

«Նորից անախորժություններ ունի ամերիկյան աստծու հետ»,— մտածեց թագուհին, գլխի ընկնելով, որ Ֆրենսիսը հավանորեն կրկին գնում է այդ զարմանալի սենյակը՝ գրադարանը, որպեսզի տկտկացնող ապարատի ժապավենի վրա կարդա զայրացկոտ աստծու սպառնալիքներն ու նախազգուշացումները: Թագուհին նայեց հայելու մեջ, քորոցով ամրացրեց մազերը և, ինքնազոհությամբ ժպտալով, հագավ կապտոը՝ Ֆրենսիսի ուշադրության, պատրաստակամության ու հոգատարության ևս մի հիանալի ապացույց:

Գրադարանի մուտքի մոտ թագուհին կանգ առավ՝ դռների հետևում ինչ-որ օտար ձայն լսելով: Առաջին միտքն այն էր, որ դա կախարդական հեռախոսն է: Բայց ոչ, չի կարող պատահել. այդ ձայնը շատ բարձր ու մոտիկ է հնչում: Դռան ճեղքից նայելով՝ նա տեսավ կաշվե մեծ բազկաթոռներում դեմ-դիմաց նստած երկու տղամարդու: Հոգսերից ու հուզմունքներից նիհարած Ֆրենսիսը դեռևս ցերեկային կոստյումով էր, մինչդեռ մյուսը ֆրակ էր հագել: Նա լսեց, թե ինչպես այն մյուսն իր ամուսնուն անվանեց «Ֆրենսիս», իսկ սա ի պատասխան անվանեց նրան «Ջոննի»: Այդ հանգամանքը, այլև զրույցի անբռնազբոսիկ տոնը համոզեցին նրան, որ այդ երկու տղամարդիկ վաղեմի, մոտիկ բարեկամներ են:

— Ես էլ հենց հավատացի քեզ, Ֆրենսիս, որ դու այնտեղ, Պանամայում, մենակյացի կյանք ես վարել,— ասում էր այն մյուսը:— Երևի մի տասն անգամ սիրտդ պարզևել ես գեղեցիկ սենյորիտաներին:

— Միայն մեկին,— դադարից հետո ասաց Ֆրենսիսը, ուղիղ իր բարեկամի աչքերին նայելով, ինչպես նկատեց թագուհին:— Ավելին,— շարունակեց նա նոր լռությունից հետո,— ես իսկապես կորցրել եմ սիրտս... Բայց ոչ գլուխս: Ջոննի Պասմոր, ա՛խ, Ջոննի Պասմոր, դու պարզապես խելամոռի ու կնամոլի մեկն ես և կյանքից ոչինչ չես հասկանում: Այսպես ահա, Պանամայում ես հանդիպեցի աշխարհի ամենասքանչելի աղջկան. ես երջանիկ եմ, որ ապրեցի մինչև այդ հանդիպումը, և ուրախ կլինեի մեռնել նրա համար: Դա մի բուռն, կրակոտ, քնքուշ ու ազնիվ արարած է՝ իսկական թագուհի և ուրիշ ոչինչ:

Եվ թագուհին, որ լսում էր նրա խոսքերն ու տեսնում խանդավառ դեմքը, ժպտաց քնքշորեն ու հպարտ. ինչպիսի՜ սիրող ամուսին է գտել ինքը:

— Դե, իսկ կինը... ը՛մ-մ... փոխադարձաբար սիրո՞ւմ է քեզ,— հարցրեց Պասմորը:

Թագուհին տեսավ, թե ինչպես Ֆրենսիսը բազմանշանակ գլխով արեց:

— Նա սիրում է ինձ այնպես, ինչպես ես եմ սիրում նրան,— լռությամբ պատասխանեց նա:— Դա ես հաստատ գիտեմ:— Հանկարծ նա վեր կացավ իր բազկաթոռից:— Սպասիր, հիմա ես նրան կներկայացնեմ քեզ:

Ֆրենսիսն ուղղվեց դեպի դուռը, իսկ թագուհին, անասելիորեն ուրախացած ամուսնու խոստովանությամբ, մի ակնթարթում ներս ընկավ հարևան շքեղ սենյակը, որը չգիտես ինչի համար էր, և որը նաժիշտն անվանում էր հյուրասենյակ: Նա իսկական մանկական հուզմունքով էր պատկերացնում, թե Ֆրենսիսն ինչպես կգարմանա՝ իրեն անկողնում չգտնելով, ու խորամանկորեն նայեց նրա հետևից: Իսկ նա մարմարե լայն աստիճաններով վազեց վերև մի րոպե հետո ետ եկավ: Թագուհու սիրտը սեղմվեց թեթևակիորեն, երբ նկատեց, որ ամուսինը ոչ մի անհանգստություն ցույց չի տալիս ննջարանից իր բացակայության առթիվ: Նա ձեռքում բռնել էր խողովակաձև ոլորած բարակ, սպիտակ ստվարաթղթի մի կտոր և, առանց կողքերը նայելու, ուղղակի մտավ գրադարան:

Նայելով ճեղքից ներս՝ թագուհին նկատեց, որ նա բաց արեց փաթեթը և, դնելով Ջոննի Պասմորի առաջ, ասաց.

— Ինքդ դատիր: Ահա նա:

— Բայց ինչո՞ւ հուղարկավորի կերպարանք ունես,— հարցրեց Ջոննի Պասմորը լուսանկարն ուշադիր զննելուց հետո:

Որովհետև մեկը խիստ ուշացած հանդիպեցինք: Ես ստիպված էի ամուսնանալ ուրիշի հետ: Եվ ուրիշի հետ նրա պասկադրությունից մի քանի ժամ առաջ ես ընդմիշտ բաժանվեցի նրանից: Այդ ամուսնությունը որոշված էր ավելի վաղ, քան մեկը իմացանք իրար գոյության մասին: Նա, որի հետ ես ամուսնացա,— թող հայտնի լինի քեզ,— մի լավ, հիանալի կին է: Ամբողջ կյանքումս նվիրված կլինեմ նրան: Բայց, դժբախտաբար, նա երբեք իմ սիրտը չի նվաճի:

Այդ խոսքերը թագուհու առաջ բացին ամբողջ դառն ճշմարտությունը: Նա վատ զգաց իրեն և, համարյա ուշազևաց, ձեռքը տարավ սրտին: Չնայած գրադարանում խոսակցությունը շարունակվում էր, բայց նա այլևս ոչ մի բառ չէր լսում: Դանդաղորեն, կամքի վիթխարի լարումով, նա տիրապետեց իրեն: Վերջապես կռանալով, ավելի շուտ նման փայլուն գեղեցկուհու և հպարտ կնոջ ստվերին, ինչպիսին էր նա ընդամենը մի քանի րոպե առաջ, թագուհին երերալով անցավ նախասրահ և, ինչպես ահավոր երազում, սկսեց դանդաղորեն բարձրանալ աստիճան առ աստիճան, ասես ոտքերին կշռաքար էր կապած: Հասնելով ննջարան՝ նա ամեն տեսակ իշխանություն կորցրեց իր նկատմամբ: Մատից ցասկոտությամբ պոկեց Ֆրենսիսի մատանին ու սկսեց ոտքերով տրորել: Պոկեց գլխի գիշերային գլխանոցն ու կրիայի ոսկրից պատրաստած քորոցները և նույնպես սկսեց կոխկրտել: Ապա, ցնցվելով հեկեկանքներից ու ինչ-որ անորոշ բան մրմնջալով, թագուհին նետվեց մահճակալի վրա: Նա ցնցվում էր ասես տենդից. բայց երբ Ֆրենսիսը, քնելուց առաջ իր սենյակը զնալիս, մի րոպեով մտավ նրա ննջարանը, թագուհին ուժ գտավ իր մեջ քնած ձևանալու և ոչնչով չմատնեց իր վիշտը: Ամբողջ մի ժամ, որ նրան

հավիտենականությունն թվաց, թագուհին սպասում էր, մինչև որ նա քնի: Միայն դրանից հետո վեր կացավ, վերցրեց թանկագին քարերով դրվագված սուր դաշույնը, որ բերել էր իր հետ Կորուսյալ Հոգիների Հոգևորից, և գոյշ, ոտքի մատների վրա քայլելով, գողեգող մտավ նրա սենյակը: Այդտեղ, հարդարանքի փոքրիկ սեղանի վրա, դրված էր ստվարաթղթի այն կտորը՝ Լեոնսիայի մեծադիր լուսանկարը: Թագուհին կանգ առավ անվճռականորեն, դաշույնը սեղմելով այնպես, որ բռնակին դրվագված թանկագին քարերը մխրճվեցին մատների ու ավի մեջ: Ո՞ւմ հարվածել՝ ամուսնո՞ւն, թե Լեոնսիային: Քայլեց դեպի նրա անկողինը ու ձեռն արդեն բարձրացրեց հարվածելու, բայց այդ րոպեին նրա չոր աչքերը խոնավացան, և արցունքները, ասես մշուշե քողեր, ծածկեցին ամուսնուն: Նա հեծկլտաց ու ցած թողեց դաշույնը սեղմող ձեռքը:

Այնժամ նա այլ որոշում ընդունեց ու արագ մոտեցավ հարդարանքի սեղանին: Ուշադրությունը գրավեցին սեղանին դրված մատիտն ու ծոցատետրը: Նա երկու բառ խզբզեց, պոկեց ծոցատետրի թերթիկը, Լեոնսիայի լուսանկարը դրեց սեղանի հղկված, փայլուն երեսին, ծածկեց այդ թերթիկով ու հարվածեց... Հարվածն անցավ ախոյանուհու աչքերի ճիշտ մեջտեղով. դաշույնի ծայրը խրվեց փայտի մեջ, բռնակը երերաց ու անշարժացավ:

ԳԼՈՒԽ ԶՍԱՆՅԻՆԳԵՐՈՐԴ

Մինչդեռ Նյու Յորքում ամեն տեսակ դեպքեր էին տեղի ունենում, և Ռիզանը ճարպկորեն շարունակում էր վիթխարի հարձակումը Ֆրենսիսի բաժնետոմսերի վրա, իսկ Ֆրենսիսն ու Բենկլոնը իզուր փորձում էին պարզել, թե ով է դրանով զբաղվում, Պանամայում տեղի էին ունենում ոչ պակաս կարևոր իրադարձություններ, որոնք իրար բերեցին Լեոնսիային ու Սոլամոնների ընտանիքը՝ Թորեսի ու ոստիկանապետի հետ, և որոնց մեջ բնավ էլ ոչ վերջին դերը խաղաց ոմն Ի Պին՝ լուսնաման կերպարանքով հաստիկ մի չինացի:

Պատիկ ծերուկ դատավորը՝ ոստիկանապետի դրածոն, խմբիացնում էր Սան Անտոնիոյում դատական նիստի ժամանակ: Նա այդպես անխռով քնած էր արդեն մոտ երկու ժամ, ժամանակ առ ժամանակ գլուխը վեր բարձրացնելով ու քնի մեջ ինչ-որ փնթփնթալով խորիմաստորեն, չնայած քննվող գործը չափազանց լուրջ էր. մեղադրյալին սպառնում էր քսան տարվա աքսոր Սան Խուան, ուր անգամ ամենամուր մարդիկ տասը տարուց ավելի չէին դիմանում: Բայց դատավորը կարիք չուներ լսելու վկաների ցուցմունքները կամ կողմերի վիճաբանությունը. նախքան գործի քննարկումը՝ որոշումն արդեն ձևակերպվել էր նրա գլխում, և նա վաղօրոք դատավճիռ էր կայացրել շեֆի ցանկություններին համապատասխան: Վերջապես դատապաշտպանն ավարտեց իր հույժ ընդարձակ ճառը, դատարանի քարտուղարը փռշտաց, և դատավորն արթնացավ: Նա հապճեպորեն նայեց չորս կողմն ու բարբառեց.

— Մեղավոր է:

Ոչ ոք չգարմացավ, նույնիսկ ինքը մեղադրյալը:

— Վաղն առավոտյան կանգնել դատարանի առաջ՝ վճիռը լսելու: Հաջորդ գործը:

Այդպիսի կարգադրություն անելով՝ դատավորն արդեն պատրաստվում էր նորից խորասուզվել քնի մեջ, երբ հանկարծ նկատեց դահլիճ մտնող Թորեսին ու ոստիկանապետին: Շեֆի փայլատակող աչքերից դատավորն իսկույն հասկացավ, թե ինչ պետք է անել, և շտապ փակեց դատական նիստը:

Հինգ րոպե հետո, երբ դահլիճը դատարկվեց, ոստիկանապետն սկսեց խոսել:

— Ես եղա Ռոդրիգես Ֆեռնանդեսի մոտ: Նա ասում է, որ դա իսկական քար է և, չնայած հղկելիս շատ կմաշվի, բայց և այնպես պատրաստ է հինգ հարյուր դոլար տալ դրան: Սենյոր Թորես, ցույց տվեք դատավորին քարը, այլև մյուսները, որ ավելի մեծ են:

Այստեղ Թորեսն սկսեց ստել: Ստիպված էր ստել. հո չէր կարող խոստովանել, թե Սոլամոն ու Մորգանները, խայտառակելով, քարերը վերցրել էին ու իրեն էլ հասիդենայից դուրս շարտել: Եվ այնպես վարպետորեն էր ստում, որ անգամ ոստիկանապետին համոզեց, իսկ դատավորը վճռականորեն հավատում էր այն ամենին, ինչ պահանջում էր շեֆը, իր անկախ կարծիքը պահպանելով միայն ոգելից խմիչքների հարցով, Թորեսի պատմությունը համառոտակի հետևյալն

Էր, եթե այն ազատենք գուճազեղ մանրամասնություններից, որով նա համեմեց իր սուտը. նա, Թորեսը, համոզված էր, որ ոսկերիչը քարերի գինը նվազեցրեց, ուստի այդ քարերը ուղարկեց Կոլոնի իր գործակալին, հրամայելով ճամփել Եյու Յորք, «Թիֆֆանի» ֆիրմային՝ գնահատման, գուցե և վաճառքի համար:

Երբ նրանք դուրս եկան դատարանի դահլիճից և սկսեցին իջնել կավաշեն սյուների միջև ընկած աստիճաններով, սյուներ, որոնք պահպանել էին եղած բոլոր հեղափոխությունների գնդակների հետքերը, ոստիկանապետն ասաց.

— Այսպես, ուրեմն, քանի որ այդ գանձի հետևից գնալու համար մեզ անհրաժեշտ է օրենքի պաշտպանությունը, իսկ գլխավորը՝ քանի որ մենք երկուսով էլ սիրում ենք մեր լավ բարեկամ դատավորին, ապա մեր գտածից մի համեստ բաժին կառանձնացնենք նրա համար: Նա կփոխարինի մեզ Սան Անտոնիոյից մեր բացակայության ընթացքում և, եթե հարկ լինի, աջակցություն ցույց կտա օրենքով:

Ճիշտ այդ պահին սյուներից մեկի հետևում, շյապան աչքերին քաշած, նստել էր Ի Պինը: Նա պատահաբար չէր եկել այդտեղ: Վաղուց արդեն նա հասկացել էր, որ արժեքավոր գաղտնիքները, որոնք մարդկանց սրտերում հուզումներ ու տազնապ են ծնում, իբրև կանոն թևում են դատական շենքերի շուրջը, որտեղ այդ հուզումները, հասնելով բարձրագույն շիկացման, դրվում են ի ցույց: Ոչ ոք չգիտե, թե որ թուպին կարելի է դեմ առնել թաքուն բանի կամ գաղտնիքի: Եվ ահա Ի Պինը, ցանցը ծովը գցած ձկնորսի նման, հետևում էր հայցվորներին ու մեղադրյալներին, մեկ և մյուս կողմի վկաներին և մինչև իսկ նիստերի մշտական այցելուներին ու պատահական հասարակությանը:

Այդ առավոտ միակ մարդը, որ անորոշ հույսեր էր ներշնչում Ի Պինին, մի քրջոտ ծերունի պետն էր, որն այնպիսի տեսք ուներ, ասես ամբողջ կյանքում չափազանց շատ խմել էր ու հիմա կմեռներ իսկույն, եթե մի բաժակ բան չմատուցեին: Նրա աչքերը պղտոր էին, կարմիր կոպերով, բայց հյուժված դեմքին հուսահատ վճռականություն էր կարդացվում: Երբ դատարանի դահլիճը դատարկվեց, նա դուրս եկավ կանգնեց սյան մոտ, աստիճանների վրա:

«Իսկապես ինչո՞ւ է նա կանգնել այստեղ, տարակուսում էր Ի Պինը:— Չէ՞ որ դատարանում մնացել են միայն Սան Անտոնիոյի երեք պարագլուխները՝ շեֆը, Թորեսը և դատավորը»: Ի՞նչ կապ կարող էր լինել նրանց, կամ նրանցից մեկնումեկի, և այդ ողորմելի հարբեցողի միջև, որը կեսօրվա արևի այրող շողերի տակ դողում է, ինչպես սառնամանիքից: Չնայած Ի Պինը ոչինչ չգիտեր, բայց ենթագիտակցորեն զգում էր, որ արժե սպասել. հանկարծ ու, որքան էլ քիչ է հավանական, որևէ բան դուրս գա: Եվ այսպես, մեկնվելով քարի վրա, սյան հետևում, որտեղ ոչ մի ստվեր նրան չէր պաշտպանում այրող ու այնքան ատելի արևից, Ի Պինը ընդունեց այնպիսի մարդու տեսք, որը սիրում է տաքանալ արևի տակ: Ծեր պետը մի քայլ արեց, օրորվեց, ըստ որում քիչ մնաց վայր ընկներ, բայց և այնպես կարողացավ գրավել Թորեսի ուշադրությունն ու դրոճեց ցտ մնալ իր ուղեկիցներից: Իսկ նրանք մի փոքր հեռացան ու կանգ առան, սպասելով Թորեսին: Ապա սկսեցին ոտքից ոտք փոխադրվել ու ամեն կերպ արտահայտել մեծագույն անհամբերություն, ասես կանգնած էին շիկացած թավայի մեջ, չնայած միաժամանակ աշխույժ գրուցում էին իրար հետ:

Այդ միջոցին Ի Պինը ուշադիր հետևում էր վեհապան՝ Թորեսի և ողորմելի պետնի խոսակցությանը, ոչ մի բառ կամ շարժում աչքից չչափացնելով:

— Դե, էլի ի՞նչ կա,— կոպտությամբ հարցրեց Թորեսը:

— Փող, մի քիչ փող: Ի սեր աստծու, սենյոր, մի քիչ փող,— ծոր տվեց ծերունին:

— Ախր դու քոնս ստացար,— բղավեց նրա վրա Թորեսը:— Երբ ես գնացի, երկու անգամ ավելին տվի քեզ, քան հարկավոր էր ոչ թե սովորականի պես երկու շաբաթ, այլ ամբողջ մի ամիս ապրելու: Այնպես, որ դու ինձանից դեռ երկու շաբաթ էլ ոչ մի սենտավո չես ստանա:

— Ես բոլորին պարտք եմ,— շարունակեց նվաճվալ ծերունկը, ամբողջովին դողդողալով ակոհոլի ծարավից, չնայած բոլորովին վերջերս էր անձնատուր եղել գինարբուքի:

— «Պետրոսի ու Պողոսի մոտ» պովկերիայի տիրո՞ջը,— արհամարհական ծաղրանքով անսխալ գուշակեց Թորեսը:

— «Պետրոսի ու Պողոսի մոտ» պուլկերիայի տիրոջը,— անկեղծորեն խոստովանեց նա:— Եվ այն տախտակը, որի վրա գրում է իմ պարտքերը, արդեն լցվել է ծայրեծայր: Հիմա ինձ ոչ մի կաթիլ պարտք չեն տա: Ես աղքատ, դժբախտ մարդ եմ: Երբ պուլկա չեմ խմում, հազարավոր սատանաներ քրքրում են ինձ:

— Անխելք խոզ, ահա թե ով ես դու:

Հանկարծ ծերունին շտկվեց զարմանալի արժանապատվությամբ, ասես միտքը լուսավորվեց մեծագույն իմաստությամբ, և մինչև իսկ դադարեց դողալ:

— Ես ծեր մարդ եմ,— հանդիսավորությամբ արտասանեց նա:— Արյունը սառչում է իմ երակներում ու սրտում: Ջահելության ցանկությունները չքացել են: Իմ ջարդված մարմինը հնարավորություն չի տալիս աշխատելու, չնայած ես լավ գիտեմ, որ աշխատանքը թեթևություն կբերի ու մոռացում: Իսկ ես չեմ կարող ոչ աշխատել, ոչ անձնատուր լինել մոռացության: Մնունդը զգվեցնում է ինձ ու ցավեր առաջացնում ստամոքսումս: Կանայք ինձ համար նույնն են, թե ժանտախտը. զգվելի է մտածելը, որ ես մի ժամանակ ցանկացել եմ նրանց: Երեխանե՞ր: Ես իմ վերջին երեխային թաղել եմ տասներկու տարի առաջ: Կրոնը վախեցնում է ինձ: Մա՛հը: Նույնիսկ երազում սարսափով եմ մտածում նրա մասին: Պուլկան, օ՛, աստվածներ, իմ միակ սփոփանքն է, միայն այդ է մնացել ինձ կյանքում:

Դե, ի՞նչ արած, որ շատ-շատ եմ խմում: Ախր դա նրանից է, որ ես պետք է շատ բան մոռանամ և շատ քիչ օրեր են մնացել արևի շողերի տակ տաքանալու համար, որից հետո խավարը հավիտյան կծածկի նրան իմ ծերունական աչքերից:

Թորեն անհամբեր շարժվեց, ասես պատրաստվելով հեռանալ. ծերունու խոսակցությունն ակնհայտորեն գրգռում էր նրան:

— Մի քանի պետ, ընդամենը մի քանի պետ,— աղաչեց ծեր պեռնը:

— Ո՛չ մի սենտավո,— վճռականորեն կտրեց Թորեսը:

— Շա՛տ լավ,— նույնպես վճռականորեն ասաց ծերունին:

— Այդ ի՞նչ է նշանակում,— գրգռված հարցրեց Թորեսը, վատ բան կանխազգալով:

— Ինչ է, մոռացե՛լ ես,— պատասխանեց ծերունին այնքան բազմախորհուրդ, որ Ի Պինը ականջները սրեց. այդ ի՞նչ պատճառով է Թորեսը ծերուկին թոշակի կամ նպաստի նման ինչ-որ բան վճարում:

— Չէ՞ որ պայմանի համաձայն ես քեզ վճարում եմ, որպեսզի մոռանաս,— ասաց Թորեսը:

— Իսկ ես երբեք չեմ մոռանա այն, ինչ տեսել եմ իմ ծերացած աչքերը. իսկ նրանք տեսել են, թե դու ինչպես դանակը խրեցիր սենյոր Ալֆարո Սոլանոյի մեջքը,— պատասխանեց ծերունին:

Չնայած Ի Պինը շարունակում էր անշարժ նստել սյան հետևում, իբրև արևի տակ տաքացող մի մարդ, ներքևապես արդեն «ոտքի վրա» էր: Սոլանոները անվանի ու հարուստ մարդիկ են: Եվ այն, որ Թորեն սպանել էր նրանցից մեկին, մի այնպիսի գաղտնիք է, որի համար կարելի է կարգին գումար ստանալ:

— Անասո՛ւն: Բթամիտ խո՛զ: Կեղտոտ անասո՛ւն:— Թորեսը կատաղությամբ բռունցքներն էր սեղմում:— Համարձակվում ես այդպես խոսել, որովհետև ես շատ բարի եմ քո նկատմամբ: Համարձակվիր բերանիցդ մի խոսք թռցնել միայն, և ես մի ակնթարթում քեզ քշել կտամ Սան Խուան: Գիտես, թե դա ինչ է նշանակում: Մահվան երկյուղը քեզ կհետապնդի ոչ միայն քնի մեջ, այլև արթուն ժամանակ: Հենց միայն շամբաճուռակներին նայելիս սարսափից կդողաս. չէ՞ կհասկանաս, որ շատ շուտով նրանք կսկսեն քաշքշել քո ոսկորները: Եվ Սան Խուանում այլևս պուլկայի երես չես տեսնի: Նրանք, ում ես ճամփում եմ այնտեղ, նույնիսկ մոռանում են, թե պուլկան ինչ համ ունի: Ուրեմն, ինչպես: Հը՞: Դե, ահա այսպես ավելի լավ է: Կսպասես էլի երկու շաբաթ, և այն ժամանակ նորից փող կտամ: Չես սպասի՞ մինչև մահ ոչ մի կաթիլ պուլկայի երես չես տեսնի. ես կաշխատեմ, որպեսզի Սան Խուանի շամբաճուռակներն զբաղվեն քեզանով:

Թորեաը կտրուկ շուռ եկավ կրունկների վրա ու հեռացավ: Ի Պինը նայեց նրա և նրա երկու ուղեկիցների հետևից, մինչև որ երեքն էլ ծածկվեցին աչքից. այն ժամանակ դուրս եկավ սյան հետևից ու տեսավ, թե ինչպես, խումարությունից դուրս գալու հույսը կորցնելով, ծերունին փլվեց գետնին և, հառաչելով, հեծեծալով, ոռնալով սկսեց ողջ մարմնով դողալ, ինչպես դողում է հոգեվարքի մեջ գտնվող կենդանին. մատներն անգիտակցաբար չանգռում էին մաշկը ցնցոտիների հետ միասին, ասես նա բազում օձասանդրեր էր պոկում իր մարմնից: Ի Պինը նստեց նրա կողքին ու ներկայացում խաղաց. նա այդպիսի բաների մեծ վարպետ էր ու հորինող: Մի քանի ոսկե և արծաթե դրամներ հանելով գրպանից գրնգացնելով, նա սկսեց դրանք հաշվել. այդ ջինջ ու մելոդիկ ձայները ծարավից խելագար պեոնի ականջին թվում էին պուլկայի ամբողջ շատրվանների քլթքլթոց ու կարկաչ:

— Ես ու դու իմաստուն մարդիկ եք,— իսպանական փքուն ոճով ասաց Ի Պինը, շարունակելով գրնգացնել դրամները, մինչդեռ հարբեցողը նորից սկսեց նվնվալ ու մի քանի սենտավո մուրալ մի փոքրիկ բաժակ պուլկայի համար:— Մենք իմաստուն մարդիկ եք, ծերուկ: Արի նստենք այստեղ ու պատմենք իրար այն ամենը, ինչ հայտնի է մեզ տղամարդկանց ու կանանց մասին, կյանքի ու սիրո, բարկության ու անակնկալ մահվան մասին, սիրտն այրող կատաղության ու թիկունքը խրվող սառը պողպատի մասին. և ահա, եթե որևէ հետաքրքիր բան պատմեցիր, ես քեզ այնքան պուլկա կխմեցնեմ, որ ականջներիցդ դուրս հոսի ու հեղեղի աչքերդ: Դու պուլկա սիրում ես, այո՞: Ուզո՞ւմ ես հիմա, հենց այս րոպեին մի բաժակ կունծել:

Այդ գիշերը, երբ ոստիկանապետն ու Թորեաը մթության քողի տակ կազմեցին իրենց արշավախումբը, մնաց բոլոր նրանց հիշողության մեջ, ովքեր ապրում էին Սոլանոների հասիենդայում: Դեպքերն սկսեցին ծավալվել դեռևս մինչև գիշերվա վրա հասնելը: Ընդարձակ հովնոցում հենց նոր էին ճաշը վերջացրել, և Սոլանո ընտանիքի բոլոր տղամարդիկ, ներառյալ նաև Յենրին, որն այժմ մտել էր նույն ընտանիքի կազմի մեջ շնորհիվ Լեոնսիայի հետ ունեցած կապերի, սուրճ էին խմում ու սիգարետ ծխում: Հանկարծ ինչ-որ տարօրինակ կերպարանք հայտնվեց լուսնի լույսով լուսավորված աստիճանների վրա:

— Ոնց որ իսկական ուրվական լինի,— ասաց Ալվարադո Սոլանոն:

— Բայց ուրվականը հույժ մարմնացյալ է,— ավելացրեց նրա երկվորյակ եղբայր Մարտինեսը:

— Բոլորովին էլ ուրվական չի, այլ սովորական մի չինացի, որին չես կարող մատով խոցել,— ծիծաղեց Ռիկարդոն:

— Ախր սա հենց այն չինացին է, որը Լեոնսիային ու ինձ ամուսնությունից փրկեց,— նկատեց Յենրի Մորգանը, ճանաչելով հյուրին:

— Գաղտնիքներ վաճառողը,— ծիծաղելով միջամտեց Լեոնսիան:— Եվ ես խիստ կիսաթափվեմ, եթե նա ոչ մի նորոգություն բերած չլինի:

— Ի՞նչ ես ուզում, չինացի,— խստությամբ հարցրեց Ալեասնդրոն:

— Նոր գաղտնիք, հիանալի նոր գաղտնիք: Միգուցե կգնեի՞ք,— ուրախ-ուրախ բլբլացրեց Ի Պինը:

— Զո գաղտնիքները խիստ թանկ արժեն,— սառը ջուր ածելով նրա գլխին՝ ասաց Էնրիկոն:

— Այո, և այս հիանալի գաղտնիքն էլ շատ թանկ արժե,— խոնարհությամբ հաստատեց Ի Պինը:

— Դո՛ւրս կորիր,— բղավեց նրա վրա ծերունի Էնրիկոն:— Ես հուսով եմ դեռևս երկար ապրել, բայց մինչև մեռնելուս օրը այլևս ականջ չեմ դնի քո գաղտնիքներին:

Սակայն Ի Պինը, չնայած հնազանդ տոնին, իրեն պահում էր հույժ ինքնավստահ:

— Դուք շատ հիանալի մի եղբայր ունեիք,— ասաց նա:— Եվ ձեր այդ շատ հիանալի եղբայրը՝ սենյոր Ալֆարո Սոլանոն, մի անգամ մեռավ մեջքին հասցրած դանակի հարվածից: Շա՛տ լավ: Հետաքրքիր գաղտնիք է, չէ՞:

Բայց Էնրիկոն, ամբողջ մարմնով դողալով, արդեն թռել էր ոտքի և անհամբերությունից բեկվող ձայնով բղավեց.

— Ի՞նչ գիտես այդ մասին:

— Ինչքա՞ն կտաք,— հարցրեց Ի Պինը:

— Այն ամենը, ինչ ունեմ,— բացականչեց Էնրիկոն և, դառնալով Ալեսանդրոյին, ավելացրեց.— Պայմանավորվիր նրա հետ, տղաս: Լավ վճարիր նրան, եթե նա կարող է իր խոսքերը հաստատել ականատեսի վկայությամբ:

— Հանգիստ եղեք, ականատես կա,— արժանապատվությամբ ասաց Ի Պինը:— Նա ամեն ինչ իր աչքով է տեսել: Նա տեսել է, թե մթության մեջ ով իր դանակը խրեց սենյոր Ալֆարոյի մեջքը: Նրա անունն է...

— Դեհ, ասա՛, ասա՛,— խեղդվելով արտասանեց Էնրիկոն:

— Հազար դոլար նրա անվան համար,— ասաց Ի Պինը, մտմտալով, թե ինչ վայրուտայով պահանջի այդ գումարը:— Հազար դոլար ոսկով,— վերջապես խոսեց նա:

Էնրիկոն մոռացավ, որ դրամական բոլոր բանակցությունները հանձնարարել էր վարել ավագ որդուն:

— Որտե՞ղ է քո վկան,— բղավեց նա:

Ի Պինը կամացուկ ձայն տվեց ինչ-որ մեկին, և հովնոցի ներքևում աճող թփերի միջից դուրս սողաց ծեր հարբեցողը. նա դանդաղ մոտեցավ սանդուղքին, ինչպես իսկական ուրվական, և օրորվելով, սկսեց վեր բարձրանալ աստիճան առ աստիճան:

Այդ նույն ժամին քաղաքի ծայրին քսան ձիավորներ, որոնց մեջ էին նաև ժանդարմներ Ռաֆայելը, Իգնասիոն, Աուգուստինոն և Վիսենտեն, պահպանում էին քսանից ավելի ջորիների մի քարավան, սպասելով շեֆի հրամանին՝ շարժվելու դեպի Կորդիլերները, բոլորին անհայտ խորհրդավոր արշավի: Նրանք գիտեին միայն, որ ամենամեծ ջորու մեջքին, որին պահում էին մյուսներից առանձին, բարձված է երկու հարյուր հիսուն ֆունտ դինամիտ: Գիտեին նաև, որ ուշանում են սենյոր Թորեսի պատճառով, որը ծովածոցի ափով սլացավ ինչ-որ տեղ, կարու ցեղի այդ զարհուրելի մարդասպան խոսե Մանչենոյի հետ, և որը միայն աստծու և նրանց շեֆի ողորմածությամբ ահա արդեն մի քանի տարի է, ինչ խուսափում էր կախաղանից, չնայած պարանը վաղուց էր սպասում նրան:

Մինչդեռ այդ պահին Թորեսն ափին կանգնած սպասում էր, բռնած խոսե Մանչենոյի և էլի մեկ ուրիշ՝ պահեստի ձիու սանձերից, իսկ ինքը խոսեն ոլորապտույտ ճամփով բարձրանում էր դեպի բլրի գագաթը, որտեղ կանգնած էր Սոլանոների հասիենդան: Թորեսը չէր կասկածում, որ իրենից ընդամենը մի քսան ոտնաչափի վրա, ուղղակի մինչև ափը հասնող թփուտներում, հանգիստ քնած էր թունդ հարբած ծերուկը, իսկ նրա կողքին արթուն կանգնած էր բոլորովին ոչ քնատ և բոլորովին զգաստ չինացին, որի գոտու տակ պահված էր քիչ առաջ ստացած հազար դոլարը: Ի Պինը հագիվ հասցրեց պեռնին մի կողմ քաշել ճամփից ու թաքնվել, երբ Թորեսը հայտնվեց ավագոտ ափին ու կանգ առավ համարյա նրա կողքին:

Վերևում, հասիենդայում, Սոլանո ընտանիքի բոլոր անդամներն արդեն գնացել էին քնելու: Լեոնսիան պատրաստվում էր մազերը սանրել, բայց, լսելով ավագահատիկների խշրոտոցը ապակուն, մոտեցավ պատուհանին: Շշուկով նախագգուշացնելով նրան, որ աղմուկ չբարձրացնի ու ոչ ոքի չկանչի, խոսե Մանչենոն աղջկան պարզեց ճմրթված մի թուղթ,— Թորեսի գրությունը,— և խորհրդավոր տեսքով ասաց.

— Սա այն խելառ չինացին է ուղարկել, որն սպասում է ձեզ այնտեղ, թփերի հետևում:

Եվ Լեոնսիան կարդաց ներքոհիշյալը, գրված զարհուրելի իսպաներենով.

«Առաջին անգամ ես ձեզ ասացի Յենրի Մորգանի գաղտնիքի մասին: Այս անգամ ես գիտեմ Ֆրենսիսի գաղտնիքը: Եկեք ինձ մոտ, խոսակցության համար»:

Լեոնսիայի սիրտը բաբախեց, երբ կարդաց Ֆրենսիսի անունը: Թիկնոցը ուսերին զգելով, նա հետևեց կարուհին, ոչ մի բռնաբերում չկատարելով, որ իրեն սպասում է Ի Պիևը:

Ի Պիևը, որ ափին նստած հետևում էր Թորենին, նույնպես ոչ մի բռնաբերում չէր կատարում, թե ինչ է տեղի ունենում, երբ մարդասպան Խոսե Մանչենոն երևաց ճամփի վրա, պարկի պես ուսին զգած սենյորիտա Սոլանոյին, որի թևերը նախապես կապկպել էր ու բերանը խցանել: Ի Պիևը չէր կասկածում նաև, թե դրան ինչ է հետևելու. նա տեսավ, թե ինչպես Խոսեն և Թորենը Լեոնսիային կապեցին պահեստի ձիու թամբին ու քառատրոփ սլացան ափի երկայնքով: Հարբած պեռնին թողնելով թփերում քնելու, հաստիկ չինացին դուրս ելավ ճամփի վրա ու վազեց բլրակն ի վեր ամբողջ թափով, որին միայն ընդունակ էր: Հասնելով հասիենդա, նա, հագիվ շունչը ետ բերելով, բարձրացավ վեր, սկսեց ձեռքերով ու ոտքերով ծեծել դուռը, մտքում աղոթելով չինական բոլոր աստվածներին, որ այդ կատաղի Սոլանոներից մեկնումեկը չսպանի իրեն, նախքան ինքը կհասցնի բացատրել իր շտապողականության պատճառը:

— Ա՛խ, տե՛ր աստված, դե կորի՛ր դու գրողի ծոցը,— բղավեց Ալեսանդրոն, երբ դուռը բանալով, մոմի լույսի տակ նշմարեց աներես հյուրի դեմքը:

— Ես մի մեծ գաղտնիք ունեմ,— խեղդվելով վրա տվեց Ի Պիևը:— Շատ մեծ ու բոլորովին նոր:

— Արի վաղը այն ժամերին, երբ մարդիկ զբաղվում են գործերով,— բղավեց Ալեսանդրոն, պատրաստվելով մի քացի հասցնել չինացուն:

— Ես այդ գաղտնիքը չեմ վաճառում,— թոթովեց Ի Պիևը:— Այն նվիրում եմ ձեզ: Լսեցե՛ք. սենյորիտան, ձեր քույրը... Նրան փախցրին: Կապեցին ձիու թամբին ու արագ սլացան ծովափով:

Բայց Ալեսանդրոն, որ ընդամենը կես ժամ առաջ բարի գիշեր էր մաղթել Լեոնսիային, բարձրաձայն ծիծաղեց, չհավատալով չինացու և ոչ մի խոսքին ու նորից պատրաստվեց քացով դուրս նետել գաղտնիքներ վաճառողին: Ի Պիևը կատարյալ հուսահատության մատնվեց: Նա դուրս հանեց գոտու տակ պահած փողի քսակը և, խոթելով Ալեսանդրոյի ձեռքի մեջ, ասաց.

— Չնայած շուտ ու նայեք: Եթե սենյորիտան հիմա տանն է, այս հազար դոլարը կարող եք պահել ձեզ: Եթե սենյորիտան չկա, փողը ետ կտաք ինձ...

Դա համոզեց Ալեսանդրոյին: Մի բռնաբերում նա արդեն արթնացնում էր ամբողջ տունը: Իսկ ևս հինգ բռնաբերումներն ու պեռնները, դժվարությամբ արթնանալով խոր քնից, արդեն թամբում ու բեռնում էին ձիերն ու ջորիները, մինչ Սոլանոները կհագնվեին ու կգնվեին:

Սոլանոների ջոկատը ցրվեց ափի երկայնքով աջ ու ձախ, դեպի Կորդիլերները տանող բազմաթիվ արահետներով, անթափանց խավարում փնտրելով առևանգողների հետքերը: Առիթն այնպես բերեց, որ երեսուն ժամ հետո միայն Յենրիին հաջողվեց հետքը գտնել ու հասնել առևանգիչներին նույն փոսորակում, որը մայաների ծեր քուրմը անվանել էր Աստու ոտնահետք և որտեղից նա առաջին անգամ էր տեսել Չիա աստվածուհու աչքերը: Հենց այդտեղ էլ Յենրին հայտնաբերեց ամբողջ բանդան, ինչպես նաև առևանգված Լեոնսիային:

Առևանգիչները հենց նոր նախաճաշ էին պատրաստել իրենց համար և այժմ ազահորեն խժռում էին: Յենրին տիպիկ անգլոսաքսի խելք ուներ. նրա մտքով իսկ չանցավ միայնակ դուրս գալ քսան հոգու դեմ ու փորձել արդարության հասնել. դա կլիներ իսկական խելախելություն: Դրա փոխարեն նրա մտքով անցավ նայել դինամիտ բարձած ջորուն, որը ոտնակցված էր քառասուն ջորիներից առանձին և պեռնների կողմից թեթևամտորեն թողնված էր՝ վտանգավոր բեռը մեջքին: Փոխանակ փորձելու անկարելին՝ Լեոնսիային ազատելու համար, լավ միտք անելով, նա որոշեց, որ այդպիսի մեծ խմբի մեջ ոչինչ չի սպառնում կանացի պատվին, և դինամիտ բարձած ջորուն քաշեց-տարավ:

— Տարավ, բայց ոչ հեռու թաքնվելով ցածրահասակ անտառում, Յենրին բաց արեց հակը և բոլոր գրպանները ցրեց դինամիտի գլանիկներով, ապա վերցրեց ճայթիչների տուփ և պատրույգի ոչ մեծ մի կծիկ: Ափսոսանքով նայելով մնացած դինամիտին, որ բավականությամբ կպայթեցներ,

բայց չէր կարող, Յենրին սկսեց զբաղվել նահանջի ճանապարհի պատրաստությամբ, եթե իրեն հաջողվեր Լեոնսիային գողանալ նրա առևանգողներից: Ինչպես Ֆրենսիսն էր խուչիտանում իր նահանջի ճանապարհին արծաթե դուլարներ շաղ տալիս, այնպես էլ այժմ Յենրին նահանջի ճանապարհին դինամիտի գլանիկներ էր շաղ տալիս. նա գլանիկները դնում էր ոչ մեծ խրճերով, հետևելով, որպեսզի քուղերը երկար չլինեին ճայթիչներից և որպեսզի վերջիններս պինդ ամրացված լինեին դրանցից յուրաքանչյուրի ծայրին:

Ամբողջ երեք ժամ Յենրին թափառում էր Աստծու ոտնահետքում զարկած ճամբարի շուրջը, մինչև որ, վերջապես, հաջողվեց Լեոնսիային իմացնել իր ներկայության մասին. և էլի երկու թանկագին ժամեր անցան, մինչև որ աղջիկը հնարավորություն գտավ ծածուկ նրա մոտ գալու: Բայց ժամանակի կորուստն այնքան էլ մեծ դժբախտություն չէր լինի, եթե նրանց փախուստն անմիջապես չնկատվեր ժանդարմների և Թորեսի արշավախմբի մյուս մասնակիցների կողմից: Բոլորն էլ մի ակնթարթում նետվեցին դեպի ձիերը և արագորեն հասան փախստականներին:

Երբ Յենրին Լեոնսիայի հետ կուզեկուզ բարձրացավ կախ ընկած ժայռի վրա և լցրեց հրացանը, Լեոնսիան բողբջեց:

— Մենք ամենաչնչին շան անգամ չունենք, Յենրի,— ասաց նա:— Նրանք չափազանց շատ են: Փոխհրաձգություն կսկսվի, և նրանք կսպանեն քեզ: Այն ժամանակ ի՞նչ կպատահի ինձ: Ավելի լավ է փախիր, փախիր մենակ և օգնություն բեր այստեղ. իսկ մինչ այդ թող ինձ նորից գերի վերցնեն, այդպես ավելի լավ կլինի, միևնույն է, քո մահը չի փրկի ինձ:

Բայց Յենրին գլուխն օրորեց:

— Նրանք չեն կարող մեզ գերի վերցնել, թանկագին քույրիկս: Վստահիր ինձ և լավ նայիր շուրջը: Ահա նրանք գալիս են: Հիմա տե՛ս:

Լսվեց սմբակների դոփյուն, և ճամփին երևացին Թորեսը, ոստիկանապետը և ժանդարմները՝ ոմանք ձիեր, ոմանք էլ ջորիներ նստած. պարզ երևում էր, որ նրանք խուճապով էին պատրաստվել հետապնդելու: Յենրին նշան բռնեց, բայց ոչ նրանց, այլ մոտակա կոճղին, որի մոտ թաղել էր դինամիտի առաջին գլանիկը: Նա սեղմեց հրացանը, և շուրջը ամեն ինչ ծածկվեց ծխի ու փոշու թանձր ամպով: Երբ այդ ամպը դանդաղորեն ցնդեց, Յենրին ու Լեոնսիան տեսան, որ մարդկանց ու կենդանիների կեսը փռված է գետնին, իսկ մնացածները կանգնել են՝ պայթյունից շշմած ու ցնցված:

Յենրին բռնեց Լեոնսիայի ձեռքից, թափով ոտքի հանեց, և նրանք նետվեցին փախուստի: Անցնելով այն տեղից, ուր Յենրին թաղել էր դինամիտի երկրորդ պաշարը, փախստականները նստեցին շունչ առնելու:

— Այս անգամ նրանք այնքան էլ շուտ չեն հասնի մեզ,— հաղթականորեն ասաց Յենրին:— Եվ որքան երկար հետապնդեն, այնքան ավելի ու ավելի դանդաղ առաջ կշարժվեն:

Եվ իսկապես, երբ հետապնդողները նորից երևացին, Յենրին և իր քույրը նկատեցին, որ նրանք առաջ են շարժվում խիստ դանդաղ ու զգուշորեն:

— Հարկավոր էր բոլորին էլ գետին փռել,— ասաց Յենրին:— Բայց բախտները բերեց. ես չեմ կարող վերջ տալ նրանց. մեղքս գալիս են: Սակայն, մի տաք ապուր կկերցնեմ, իհարկե, որ բերանները վառի:

Եվ նա նորից կրակեց իր դրած դինամիտի վրա ու նորից, հակառակորդի շփոթվածությունից օգտվելով, Լեոնսիայի հետ վազեց հասավ այնտեղ, ուր թաղված էր երրորդ բաժինը:

Երրորդ լիցքը պայթեցնելով՝ փախստականները նետվեցին դեպի ոտնակցած ձի, Յենրին աղջկան նստեցրեց թամբին, իսկ ինքը վազեց ձիու կողքից՝ բռնած ասպանդակներից:

ԳԼՈՒԽ ԸՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Ֆրենսիսը պատվիրել էր Փարկերին, որ առավոտյան ժամը ութին արթնացնի իրեն, և երբ Փարկերը, զգուշորեն քայլելով, նշանակված ժամին մտավ տիրոջ մոտ, սա դեռևս քնած էր խոր քնով: Ջուր բաց թողնելով լոգանք ընդունելու և ամեն ինչ պատրաստելով սափրվելու համար, սպասավորը վերադարձավ ննջարան: Շարունակելով անշշուկ շարժվել սենյակում, որպեսզի տիրոջը հնարավորություն տա մի քանի րոպե ևս քնելու, Փարկերը հանկարծ նկատեց հարդարանքի փոքրիկ սեղանի փայլուն կափարիչին ցցված դաշույնը, որը ծակել էր երկտողի ծայրը՝ դրա տակ եղած լուսանկարի հետ միասին: Փարկերը նայեց, զարմացավ, ապա առանց տատանվելու կիսաբացեց միսիս Մորգանի ննջարանի դուռը և, աչք ածելով այնտեղ, արագորեն քայլերն ուղղեց դեպի տիրոջ մահճակալն ու սկսեց նրա ուսը ցնցել:

Ֆրենսիսն աչքերը բացեց, մի վայրկյան նայեց իր առջև, առանց որևէ բան հասկանալու, ինչպես լինում է, երբ մարդ հանկարծ արթնանում է խոր քնից, բայց իսկույն էլ հիշեց նախորդ օրն արած կարգադրությունը:

— Վեր կենալու ժամն է, սըր,— կամացուկ ասաց սպասավորը:

— Սա միշտ էլ ամենատհաճ ժամն է ինձ համար,— ժպտալով ասաց Ֆրենսիսը և, հորանջելով, նորից աչքերը փակեց:— Թույլ տուր մի քիչ էլ քնեմ, Փարկեր: Եթե ննջեմ, ուսս ցնցի:

Բայց Փարկերն իսկույն էլ սկսեց ցնցել նրան:

— Վեր կացեք շուտ, սըր: Ինձ թվում է միսիս Մորգանին ինչ-որ բան է պատահել. նա իր ննջարանում չէ, իսկ այստեղ ես գտա մի տարօրինակ գրություն ևս դանակ: Միգուցե ձեզ որևէ բան կասի: Ես, իսկապես, չգիտեմ, սըր...

Ֆրենսիսը մի ցատկով վեր թռավ անկողնուց. նա մի րոպե անթարթ նայում էր դաշույնին, ապա դուրս քաշեց փայտի միջից, կարդաց ու վերստին կարդաց երկտողը, ասես երբեք չէր կարող հասկանալ երեք պարզ բառերի իմաստը: «Մնաս բարով հավիտյան»:

Բայց երկտողից էլ ավելի նրան ապշեցրեց Լեոնսիայի աչքերի մեջտեղում խրված դաշույնը: Նայելով բարակ խավաքարտի վրա դաշույնի թողած անցքին, հանկարծ Ֆրենսիսը հստակորեն հիշեց, որ մի ժամանակ արդեն տեսել է դա. և մեկն հիշողության մեջ կանգնեց թագուհու տունը լճափին: Ահա իրենք կանգնած են ոսկե կաթսայի մոտ, նայում են նրա մեջ, և ամեն մեկը իրենն է տեսնում: Իսկ նրա աչքին այն ժամանակ երևաց Լեոնսիան, և նրա աչքերի միջև ցցված էր մի դանակ: Ֆրենսիսը նույնիսկ նորից դաշույնը խրեց լուսանկարի մեջ ու նորից դիտեց այն:

Բացատրությունն ինքնին պարզ էր: Հենց սկզբից թագուհին խանդում էր Լեոնսիային, և այստեղ, Նյու Յորքում, գտնելով նրա լուսանկարը իր ամուսնու հարդարանքի սեղանի վրա, արել է նույնքան ճիշտ հետևություն, որքան ճիշտ է եղել պողպատե սայրի հարվածը մեռյալ պատկերին: Բայց որտե՞ղ է նա ինքը: Ո՞ր է կորել: Այդ վիթխարի քաղաքում, տառացիորեն օտար բոլորին ու ամեն ինչին, լինելով միամիտ ու անփորձ հոգի, որը հեռախոսը համարում էր կախարդություն, Ուոլլ-սթրիտը՝ տաճար, իսկ բիզնեսը՝ նյույորքյան աստվածություն, նա, հավանորեն, այստեղ իրեն զգում է ճիշտ այնպես, ինչպես կզգար հանկարծ երկիր ընկած Մարսի բնակչուհին: Որտե՞ղ և ինչպե՞ս է անցկացրել նա գիշերը: Որտե՞ղ է հիմա: Եվ ընդհանրապես, ո՞րք է արդյոք:

Ֆրենսիսի աչքին պարզ երևաց դիասրահը՝ չճանաչված դիակների շարքերով, ապա՝ օվկիանոսի ափը, ուր մակընթացությունը դուրս է նետում ջրահեղձների մարմինները... Փարկերը ուշքի բերեց նրան:

— Սըր, արդյոք չե՞մ կարող որևէ բանով օգտակար լինել: Միգուցե զանգեք խուզարկուական գործակալություն: Ձեր հայրը միշտ էլ...

— Այո, այո,— փութկոտությամբ ընդհատեց նրան Ֆրենսիսը:— Կար մի մարդ, որի ծառայություններից նա առանձնապես հաճույքով էր օգտվում: Ջահել էր, աշխատում էր Պինկերտոնի մոտ... Չե՞ս հիշում, թե ազգանունն ինչպես էր:

— Բերչմեն, սըր,— արագ պատասխանեց Փարկերը, քայլելով արդեն դեպի դուռը:— Իսկույն կուղարկեմ նրա հետևից:

Եվ ահա Ֆրենսիսն իր կնոջ որոնման միջոցին կանգնեց նոր արկածների ուղու վրա, որոնք նրա՝ վաղեմի նյույորքցու առջև բաց արին վիթխարի քաղաքի կյանքի այնպիսի անկյուններ ու կողմեր, որոնց մասին նա մինչ այդ ամենաչնչին պատկերացում իսկ չուներ: Թագուհուն որոնում էր ոչ միայն Բերչմենը. նրա հետ աշխատում էին էլի մոտ մի տասնյակ խուզարկուներ, որոնք լայնքով ու երկայնքով սանրեցին ամբողջ քաղաքը, իսկ Չիկագոյում և Բոստոնում նրա ղեկավարությամբ աշխատում էին ուրիշ խուզարկուներ:

Ֆրենսիսի կյանքն այդ շրջանում բնավ չէր կարելի միակերպ համարել. Ուոլլ-սթրիտում նա պայքար էր մղում անհայտ հակառակորդի դեմ, իսկ տանը պատասխանում խուզարկուների անհամար կանչերին, որոնք պահանջում էին թռչել մերթ այստեղ, մերթ այնտեղ, մերթ էլի ինչ-որ տեղ՝ ճանաչելու հենց նոր գտնված մի կնոջ դիակ: Ֆրենսիսը մոռացել էր, թե ինչ ասել է քնել որոշակի ժամերին, և վարժվել էր այն բանին, որ ուզած ժամանակ նրան կարելի է դուրս քաշել սեղանի մոտից կամ նույնիսկ անկողնուց ու քշել չգիտես ուր՝ միշտ նորանոր դիակներ ճանաչելու: Բերչմենի տեղեկությունների համաձայն, թագուհու նման ոչ մի կին չէր հեռացել Նյու Յորքից ո՛չ գնացքով, ո՛չ շոգենավով, և նա շարունակում էր փութաջանորեն խուզարկել քաղաքը, համոզված, որ կինը դեռևս այնտեղ էր:

Այդպիսով, Ֆրենսիսը եղավ և՛ Մեթենուենում, և՛ Բլեքուելլում, և՛ «Դամբարան» կոչվող բանտում, և՛ ոստիկանական գիշերային դատարանում: Չխուսափեց նաև հիվանդանոցների ու դիսպենսարի անհամար կանչերից: Մի անգամ նրան նույնիսկ տարան հենց նոր բռնած մի գող կնոջ մոտ, որը ոստիկանությունում քարտ չուներ և որի անձնավորությունը ոչ մի կերպ չէին կարողանում պարզել: Նա հաճախ էր հանդիպում խորհրդավոր կանանց, որոնց Բերչմենի օգնականները գտել էին կասկածելի հյուրանոցների հետին սենյակներում, իսկ Վեստ Սայդի հիսուն փողոցներից ինչ-որ մեկում նա դեմ առավ երկու համեմատաբար անմեղ սիրային տեսարանների, մեծագույն շփոթության մատնելով երկու զույգերին և իրեն: Բայց թերևս ամենահետաքրքիրն ու ողբերգականն այն էր, ինչ նա տեսավ ածխի արքա Ֆիլիպ Ջենուերի առանձնատանը, որը տասը միլիոն դոլար էր նստել տիրոջ վրա: Ինչ-որ անհայտ գեղեցկուհի, բարձրահասակ ու վայելչակազմ, մի շաբաթ առաջ հայտնվել էր Ջենուերի տանը, և Ֆրենսիսին կանչեցին նրան տեսնելու: Ֆրենսիսի ներկայությամբ նա այնքան անմեղսագիտակ էր, ինչպես և ամբողջ շաբաթվա ընթացքում: Աղի արցունք թափելով ու կոտրատելով ձեռքերը՝ նա քրթմնջում էր կրքոտ շշուկով.

— Օտոտ, դու իրավացի չես: Ծնկաչոք հավատացնում եմ քեզ, որ դու իրավացի չես, Օտոտ, ես սիրում եմ քեզ, միայն ու միայն քեզ: Զեզանից բացի, ոչ ոք ինձ համար գոյություն չունի, Օտոտ: Եվ երբեք էլ գոյություն չի ունեցել: Այս ամենը ասավոր սխալ է: Հավատա ինձ, Օտոտ, հավատա, թե չէ ես կմեռնեմ...

Եվ ամբողջ այդ ժամանակամիջոցում Ուոլլ-սթրիտում շարունակվում էր պայքարը այնպես էլ չհայտնաբերված հզոր հակառակորդի դեմ, որը, Ֆրենսիսի և Բեսկոմի ընդհանուր կարծիքով, վճռական հարձակում էր սկսել երիտասարդ մագնատի կարողության վրա, հարձակում, որը նպատակ ուներ ոչնչացնել Ֆրենսիսին:

— Միայն թե դիմանայինք, առանց «Տեմպիկո պեթրոլեումը» գործի մեջ դնելու,— սրտանց ցանկացավ Բեսկոմը:

— Իմ ամբողջ հույսը «Տեմպիկո պեթրոլեումն» է,— պատասխանեց Ֆրենսիսը:— Երբ կլանվեն բոլոր բաժնետոմսերը, որ կարող եմ շուկա հանել, ես մարտի կնետեմ «Տեմպիկո պեթրոլեումը». դա հավասարազոր կլինի համարյա տանուլ տված ճակատամարտի ժամին կռվի մեջ թարմ բանակ մոցնելուն:

— Իսկ պատկերացրեք, որ մեզ անհայտ թշնամին բավականաչափ ուժեղ է, որպեսզի կլանի նաև այդ վերջին հոյակապ խաղազումարը և նույնիսկ էլի պահանջի,— ասաց Բեսկոմը:

Ֆրենսիսը ուներ թոթվեց:

— Ինչ արած, այն ժամանակ ես կսնանկանամ: Բայց իմ հայրը, նախքան հաստատապես ոտքի կանգնելը, սնանկացել է մի հինգ անգամ. նա հենց ծնվել է սնանկացած ընտանիքում, այնպես որ ես կարող եմ չանհանգստանալ այդպիսի դատարկ բանի համար:

Որոշ ժամանակ դեպքերը խիստ դանդաղ էին զարգանում Սուլանների հասիենդայում: Ընդհանրապես ասած, այն բանից հետո, երբ Յենրին,— ոչ առանց դիւստի օգնության,— փրկեց Լեոնսիային, այլևս ոչ մի դեպք էլ տեղի չէր ունեցել: Նույնիսկ Ի Պինը ոչ մի անգամ չհայտնվեց ինչ-որ թարմ ու վաճառքի համար բացարձակապես նոր գաղտնիքներով: Թվում էր՝ ոչինչ չի փոխվել, եթե չհաշվենք այն, որ Լեոնսիան շոջում էր ալարկոտ ու տխուր, և ո՛չ Էնրիկոն, ո՛չ Յենրին, ո՛չ էլ մնացած վեց եղբայրները, որոնք ըստ երկայնի արդեն նրա եղբայրները չէին, չէին կարողանում ուրախացնել նրան:

Մինչդեռ Լեոնսիան կթախծեր, Կորոսայալ Յոգինների Յոգտի գանձը հանգիստ չէր տալիս Յենրին և Էնրիկոյի հաղթահասակ որդիներին, գանձ, դեպի որը Թորեսն այդ ժամանակ դիւստիտով ճամփա էր բացում իր համար: Նրանց միայն մի բան էր հայտնի, որ Թորեսի արշավախումբը Աուգուստինոյի և Վիսենտինոյի ճամփով է Սան Անտոնիո՝ դիւստիտ բարձած ևս երկու շորու հետևից:

Խոսելով Էնրիկոյի հետ և ստանալով նրա թույլտվությունը՝ Յենրին Լեոնսիայի առաջ բացեց իր ծրագիրը:

— Սիրելի քույրիկ,— սկսեց նա,— մենք ուզում ենք գնալ լեռներն ու տեսնել, թե այդ սրիկա Թորեսն ինչ է անում այնտեղ իր ավազակախմբի հետ: Զո շնորհիվ այժմ նրանց նպատակը հայտնի է մեզ: Նրանք ուզում են լեռան մի մասը պայթեցնել դիւստիտով և թափանցել հովիտ: Մենք գիտենք, թե երազողը տան հրկիզումից հետո որտեղ թաքցրեց իր քարերը, իսկ Թորեսը չգիտե: Ուստի որոշել ենք, երբ նրանք ցամաքեցնեն մայաների քարայրները, նրանց հետևից մտնել հովիտ ու փորձել ձեռք գցել թանկագին քարերի սնդուկը: Ես կարծում եմ, որ մենք դրա համար ոչ պակաս, այլ թերևս ավելի մեծ շանսեր ունենք, քան նրանք: Այս ամենը նրա համար եմ ասում, որովհետև շատ կուզենայինք քեզ էլ վերցնել հետներս: Ինձ թվում է, որ եթե մեզ հաջողվի գանձը ձեռք բերել, դու չես առարկի, որպեսզի կրկնենք մեր ճանապարհորդությունը ստորերկրյա գետով:

Բայց Լեոնսիան հոգևած օրորեց գլուխը:

— Ոչ,— ասաց նա ի պատասխան նրա հորդորների: Ես ոչ միայն չեմ ուզում տեսնել Կորոսայալ Յոգինների Յոգտիտը, այլև լսել չեմ ուզում այդ մասին: Ախր ես այնտեղ Ֆրենսիսին զիջեցի այդ կնոջը:

— Սխալ ստացվեց, սիրելի քույրիկ: Բայց այն ժամանակ ո՞վ կարող էր իմանալ այդ բանը: Ես չգիտեի, դու չգիտեիր, և Ֆրենսիսն էլ, ախր, չգիտեր: Նա վարվեց տղամարդուն վայել պատվով ու ազնվությամբ: Նա չէր էլ կասկածում, որ ես ու դու քույր ու եղբայր ենք, գտնում էր, որ մենք նշանված ենք,— ախր այն ժամանակ իրոք այդպես էր,— չուզեց քեզ խլել ինձանից և, որպեսզի գայթակղության չմատնվի ու փրկի բոլորիս կյանքը, ամուսնացավ թագուհու հետ:

— Ես միշտ հիշում եմ այն երգը, որ այն ժամանակ դու և Ֆրենսիսը երգում էիք. «Մենք մեջք մեջքի, կայմի կողքին...»— անկապ ու տխուր մրմնջաց Լեոնսիան: Նրա աչքերում արցունքներ երևացին ու ցած կաթեցին թարթիչներից:

Նա շուռ եկավ, դուրս գնաց հովնոցից, կտրեց բացատն ու սկսեց աննպատակ ցած իջնել բլրակից: Յավանորեն, Ֆրենսիսի մեկնելուց ի վեր արդեն քսաներորդ անգամ աղջիկը թափառում էր այդ ճամփով, ուր ամեն ինչ հիշեցնում էր նրան: Ահա այստեղ ինքն առաջին անգամ տեսավ Ֆրենսիսին, երբ նա «Անջելիկայի» մակույկով մոտեցավ ափին. ինքը նրան քարշ տվեց ահա այստեղ, այս թիերի մեջ, որպեսզի փրկեր գայրացած եղբայրների ու հոր ձեռքից, իսկ հետո, ատրճանակով սպառնալով, հարկադրեց համբուրել իրեն, վերադառնալ մակույկ ու հեռանալ: Դա Ֆրենսիսի առաջին այցն էր այստեղ:

Ապա Լեոնսիան սկսեց վերհիշել ամենաչնչին մանրամասները՝ կապված նրա երկրորդ այցելության հետ, սկսած այն բռնակցից, երբ ծովալճակում լողանալուց հետո դուրս գալով ժայռի հետևից, ինքը տեսավ Ֆրենսիսին. ժայռին հենված՝ նա իր առաջին երկտողն էր գրում: Այդ արժանահիշատակ օրվա դեպքերը կանգնեցին նրա առաջ. ինքը վախեցած նետվեց դեպի ջուղկիները, ահա իր ոտքը լաբարրին կծեց (որին ինքն այն ժամանակ թուևավոր օձի տեղ դրեց), ահա, փախչելով, ինքն ընդհարվում է Ֆրենսիսի հետ և ուշաթափ ընկնում ավազների վրա:

Լեոնսիան բաց արեց հովանոցն ու նստեց. հիշեց, թե ինչպես ուշքի եկավ ու նկատեց, որ Ֆրենսիսը պատրաստվում է թույնը դուրս ծծել արդեն բաց արած կտրվածքից: Այժմ նա հասկացավ, որ հենց այդ կտրվածքի ցավն էր, որ իրեն ուշքի բերեց:

Լեոնսիան ամբողջովին թաղվեց իր սրտին սիրելի հիշողությունների մեջ. ինչպես Ֆրենսիսին ապտակեց, երբ նրա շրթունքները մոտեցան իր ծնկին, ինչպես ինքը շիկնեց ու երեսը ծածկեց ձեռքերով, ինչպես հետո ծիծաղեց, զգալով, որ ոտքը թմրել է՝ հանգույցը որքան կարելի է ձիգ անելու Ֆրենսիսի ջանքերի հետևանքով. վերհիշեց, թե ինչպես սաստիկ բարկացավ Ֆրենսիսի վրա, երբ նա իրեն հանդիմանեց, որ ինքը նրան համարում է իր հորեղբայր Ալֆարոյին սպանողը, և ինչպես, ի վերջո, մերժեց հանգույցը բացելու նրա առաջարկությունը: Այդ ամենն ասես երեկ լիներ, և միաժամանակ ասես այն օրից արդեն կես դար է անցել: Իսկ այդ ժամանակամիջոցում որքան արտասովոր արկածներ, հուզիչ իրադարձություններ, լիրիկական տեսարաններ բաժին ընկան իրեն:

Լեոնսիան այնպես էր խորասուզվել այդ հաճելի հիշողությունների մեջ, որ նույնիսկ չնկատեց ճամփին հայտնված վարձու կառքը, որ գալիս էր Սան Անտոնիոյից: Չնկատեց նաև, թե ինչպես կոյուրքյան նորածնությունների հանդեսի նկարին նմանվող ինչ-որ կին դուրս եկավ կառքից ու սկսեց մոտենալ իրեն: Դա ոչ այլ ոք էր, բայց եթե թագուհին՝ Ֆրենսիսի կինը: Նա էլ էր քայլում հովանոցը գլխին պահած՝ պաշտպանվելով կիզիչ արևից:

Կանգ առնելով Լեոնսիայի հետևում՝ թագուհին, անշուշտ, չէր էլ կասկածում, որ այդ ընկալիչ աղջիկը հրաժեշտ է տալիս իր ամենաթանկ հուշերին: Նա տեսնում էր միայն, որ Լեոնսիայի ձեռքին կար փոքրիկ մի լուսասնկար, որը հանել էր կորսածի տակից և սևեռուն հայացքով դիտում էր: Նայելով նրա ուսի վրայից, թագուհին ճանաչեց Ֆրենսիսի դեմքը և կույր խանդը նոր ուժով բռնկվեց նրա մեջ: Նա դուրս քաշեց կրծքին թաքցրած դաշույնը և այն է՝ պատրաստվում էր հարվածել, բայց որքան էլ այդ շարժումը արագ կատարվեց, Լեոնսիան զգաց և, հովանոցը փոքր-ինչ առաջ թեքելով, շուռ եկավ, որ տեսնի, թե ով է կանգնած իր թիկունքում: Կրած տառապանքներից մինչև իսկ զարմանալու ընդունակությունը կորցրած Լեոնսիան այնպես բարևեց Ֆրենսիս Մորգանի կնոջը, ասես իրենք ընդամենը մի ժամ առաջ էին բաժանվել: Նույնիսկ դաշույնը ոչ վախ, ոչ հետաքրքրասիրություն առաջացրեց նրա մեջ: Եթե նա հանդես բերեր այդ զգացումներից որևէ մեկը, թերևս ախոյանուհին խոցեր նրան պողպատե սայրով: Այսպես թե այնպես, թագուհին լոկ բացականչեց.

— Դու ստոր կին ես: Ստո՛ր, ստո՛ր:

Ի պատասխան Լեոնսիան միայն ուսերը թոթվեց ու ասաց.

— Խորհուրդ եմ տալիս հովանոցը պահել այնպես, որպեսզի ձեզ պաշտպանի արևից:

Թագուհին առաջ եկավ ու կանգնեց ուղիղ Լեոնսիայի դիմաց, վերից վար նայելով իր ախոյանուհուն: Չայրույթն ու խանդը խեղդում էին նրան, և նա չէր կարողանում ծալուն հանել:

— Բայց ինչո՞ւ եմ ստոր,— երկար լռությունից հետո առաջինը խոսեց Լեոնսիան:

— Որովհետև դու գող ես,— փրփրեց թագուհին:— Որովհետև գողանում ես տղամարդկանց, երբ դու ունես քո ամուսինը: Որովհետև դու անհավատարիմ ես քո ամուսնուն, գոնե հոգուդ խորքում. ավելիի համար դու առայժմ հնարավորություն չես ունեցել:

— Ես ամուսին չունեմ,— հանգիստ առարկեց Լեոնսիան:

— Դե, նշանած ունես... Դուք կարծեմ մեր մեկնելու հաջորդ օրը պետք է ամուսնանայիք:

— Ես նշանած էլ չունեմ,— նույն հանգստությամբ շարունակեց Լեոնսիան:

Թագուհու ամբողջ մարմինն այնպես լարվեց, իսկ դեմքն ընդունեց այնպիսի արտահայտություն, որ Լեոնսիան ակամա համեմատեց նրան Էզ վագրի հետ:

— Իսկ Չենրի Մորգանը,— բացականչեց թագուհին:

— Նա իմ եղբայրն է:

— Լեոնսիա Սոլանո, այդ խոսքը շատ բան կարող է նշանակել: Ես այժմ գիտեմ: Նյու Յորքում կան մարդիկ, որոնք երկրպագում են ինչ-որ անհասկանալի աստվածների և աշխարհի բոլոր տղամարդկանց անվանում են «եղբայրներ», իսկ բոլոր կանանց՝ «քույրեր»:

— Յենրիի հայրը եղել է իմ հայրը,— համբերությամբ բացատրեց Լեոնսիան:— Նրա մայրը եղել է իմ մայրը: Մենք հարազատ քույր ու եղբայր ենք:

— Իսկ Ֆրենսիսը,— հարցրեց թագուհին անակնկալ արթնացած հետաքրքրությամբ:— Դու նրա քույրն է՞լ ես:

Լեոնսիան գլուխն օրորեց:

— Ուրեմն, դու սիրո՞ւմ ես Ֆրենսիսին,— բացականչեց թագուհին դառն հիասթափության պոռթկումով:

— Բայց ախր նա պատկանում է ձեզ,— ասաց Լեոնսիան:

— Ո՛չ, դու նրան խլել ես ինձանից:

Լեոնսիան դանդաղ ու տխրությամբ օրորեց գլուխն ու նույնպիսի տխրությամբ նայեց հեռուն, այնտեղ, ուր արևի տակ փռվել էր ծխացող Չիրիկվի ծովալճակը:

Երկար լռությունից հետո նա հոգնածությամբ ասաց.

— Եթե ուզում եք, հավատացե՛ք դրան: Հավատացե՛ք այն ամենին, ինչին ուզում եք:

— Ես իսկույն ճանաչեցի քեզ,— բացականչեց թագուհին:— Դու տղամարդկանց վրա իշխելու տարօրինակ մի ուժ ունես: Ես կին եմ և նույնպես գեղեցիկ. այստեղ, մեծ աշխարհում, ինձ վրա էլ տղամարդիկ աչք են գցում, ես նկատել եմ: Ես գիտեմ, որ կարող եմ ցանկալի լինել: Նույնիսկ իմ Կորոսայա Հոգիների Հովտի ողորմելի տղամարդկանց աչքերում, որոնք միշտ նայում են գետնին, ես սեր եմ կարդացել: Նրանցից մեկը հանդգնեց հայտնել ինձ այդ մասին և մեռավ ինձ համար, կամ, ավելի ճիշտ, իմ պատճառով. նա նետվեց ջրապտույտի մեջ: Բայց դու քո հմայքով այնպես ես քեզ ենթարկել Ֆրենսիսին, որ նույնիսկ իմ գրկում նա քո մասին է մտածում: Ես դա գիտեմ: Ես գիտեմ, որ այդ ժամանակ էլ նա մտածում է քո մասին:

Վերջին խոսքերը հիվանդ, կրքից խոցված սրտի աղաղակ էին: Եվ հաջորդ պահին, բոլորովին չգարմացնելով Լեոնսիային, որն իր անհույս անտարբերության մեջ այլևս ընդունակ չէր ոչ մի բանի վրա զարմանալու, թագուհին դաշույնը ցած գցեց, նստեց ավազներին և, ձեռքերով ծածկելով դեմքը, հիստերիկ կերպով հեկեկաց: Ալարկոտությամբ ու զուտ մեքենայորեն Լեոնսիան գրկեց նրա ուսերը և սկսեց մխիթարել: Անցավ բավական ժամանակ, մինչև որ թագուհին հանգստացավ:

— Ես հեռացա Ֆրենսիսից հենց նույն րոպեին, երբ իմացա, որ նա սիրում է քեզ,— ասաց նա վճռական ձայնով:— Դաշույնով ծակեցի քո լուսանկարը, որ դրված էր նրա ննջարանում, և եկա այստեղ, որպեսզի նույն ձևով խոցեմ և քեզ: Բայց ես իրավացի չեի: Չէ՞ որ դա քո մեղքը չէ, ոչ էլ Ֆրենսիսի մեղքը: Միայն ես եմ մեղավոր, որ չկարողացա նվաճել նրա սերը: Ոչ թե դու, այլ ես պետք է մեռնեմ: Բայց ես նախ պետք է վերադառնամ հովիտ ու վերցնեմ իմ քարերը: Ֆրենսիսն այժմ մեծ տազնապի մեջ է, որովհետև այն աստվածը, որի տաճարը կոչվում է Ուոլլ-սթրիտ, բարկացել է նրա վրա: Նա ուզում է վերցնել Ֆրենսիսի հարստությունը, և Ֆրենսիսին հարկավոր է ուրիշ հարստություն՝ իրենը փրկելու համար: Ես ունեմ: Չի կարելի ժամանակ կորցնել: Կարո՞ղ եք դու և քո հարազատներն օգնել ինձ: Ախր դա ես անում եմ ի սեր Ֆրենսիսի:

ԳԼՈՒԽ ԶՍԱՆՅՈՒԹԵՐՈՐԴ

Այդպիսով, միաժամանակ երկու կողմից, լեռների միջով դեպի Կորոսայա Հոգիների Հովիտն էին շարժվում գանձ որոնողների երկու խումբ: Մի կողմից,— և շատ արագ,— առաջանում էին թագուհին, Լեոնսիան, Յենրի Մորգանը և Սոլանոների ամբողջ ընտանիքը: Նրանցից ավելի դանդաղ շարժվում էր Թորեսի և ոստիկանապետի խումբը, չնայած որ շատ ավելի առաջ էր ճամփա ընկել: Մոտենալով լեռանը, Թորեսը հասկացավ, որ նրա խորքերը թափանցելն այնքան էլ

հեշտ չէ: Քարայրների մուտքը պայթեցնելու համար շատ ավելի դինամիտ էր պահանջվում, քան նա ենթադրում էր. ժայռը դժվարությամբ էր ենթարկվում նրանց համառ ջանքերին: Երբ վերջապես պայթեցրին ժայռի մի մասը, և նրա մեջ ճեղք առաջացավ, պարզվեց, որ միևնույն է, այդ ճեղքը չի կարող ծառայել իբրև հոսքի հուն, քանի որ շատ ավելի բարձր է քարայրի ջրի մակարդակից: Ստիպված էին ժայռը մի անգամ ևս պայթեցնել: Հարկավոր եղավ էլի մի պայթյուն, երբ արդեն մտել էին քարայրը, ուր լողում էին կոնկրետադորների մումիաները, իսկ հետո նեղ անցուղով հասան դահլիճ, որտեղ կանգնած էին աստվածը և աստվածուհին: Բայց նախքան ճամփան շարունակելը դեպի լեռան սիրտը, Թորեսը հափշտակեց Չիայի սուտակյա և Խցատցլի զմրուխտյա աչքերը:

Այդ միջոցին թագուհին և նրա ուղեկիցները համարյա անարգել թափանցեցին հովիտ լեռան վրայով, որը պատնեշում էր այն հակադիր կողմից: Այժմ նրանք մի փոքր այլ ճամփով էին գնում, քան հովտից դուրս գալիս: Թագուհին, որ երկար տարիներ նայել էր Աշխարհի Հայելու մեջ, գիտեր ճանապարհի ամեն մի դյուլմը: Այնտեղ, ուր ստորերկրյա գետը լցվում էր ժայռի ներքևի անցքի մեջ ու թափվում Գուլալակա գետը, նրանք ստիպված էին նավակները թողնել: Տղամարդիկ թագուհու հետ խուզարկեցին չորս կողմը և համարյա ուղղաբերձ ժայռի մեջ հայտնաբերեցին դեպի քարայր տանող նեղ մի անցուղի, որը ծածկված էր թփերով. անցուղին կարող էր հայտնաբերել միայն նա, ով գիտեր, թե այն որտեղ է գտնվում: Թոկերով կապելով՝ ճանապարհորդները նավակները քարշ տվին քարայր, ապա ուսերին դրած տարան ոլոր-մոլոր անցուղով և իջեցրին ստորերկրյա գետը այնտեղ, ուր նա խաղաղ ու հանգիստ հոսում էր և համեմատաբար լայն էր, այնպես որ առանց դժվարության կարելի էր թիավարել հոսանքն ի վեր: Տեղ-տեղ, ուր հոսանքը շատ էր արագանում, նրանք ցատկում էին ափ ու նավակները թոկերով քաշում: Իսկ այնտեղ, ուր գետը սուզվում էր լեռան ընդերքը, թագուհին իր ուղեկիցներին ցույց էր տալիս անցուղիները, անշուշտ, փորված մարդու ձեռքով, ինչպես երևում է դեռևս հին ժամանակներում: Այդ անցուղիներով նրանք առանց դժվարության անցկացրին իրենց թեթև մակույկները:

— Այստեղ մենք կբաժանվենք մեր մակույկներից,— վերջապես ասաց թագուհին, և տղամարդիկ սկսեցին ջահերի թրթռացող լույսի տակ դրանք կապել ափին կուտակված ժայռաբեկորներին:— Շատ քիչ ճանապարհ մնաց անցնելու: Այս վերջին անցուղին մեզ դուրս կբերի ժայռի մեջ փորված մի փոքրիկ անցքի մոտ, որը ծածկված է վայրի որթատունկով ու ձարխտով: Այնտեղից կտեսնենք այն վայրը, որտեղ մի ժամանակ լճի վերևում գտնվում էր իմ տունը: Ապա թոկերով ժայռից ցած կիջնենք. դա բարձր չէ, մի հիսուն ֆուտից ոչ ավելի:

Հենրին Էլեկտրական լապտերով գնում էր առջևից, նրա կողքից՝ թագուհին, իսկ ծերունի Էնրիկոն ու Լեոնսիան փակում էին երթը, աչալուրջ կերպով հետևելով, որպեսզի որևէ փոքրոգի պեոն կամ մակույկավար հնդիկ չփորձի փախչել: Բայց երբ հասան այնտեղ, ուր պետք է որ անցք լիներ, տեսան, որ չկա: Ելքը վերից վար փակված էր զանազան մեծության քարերով՝ սկսած սովորական կոպիճներից մինչև բնիկների խրճիթի մեծության վիթխարի ժայռաբեկորները:

— Այս ո՞վ կարող էր անել,— վրդովմունքով բացականչեց թագուհին:

Բայց Հենրին, արագորեն գնելով շուրջը, հանգստացրեց նրան:

— Սա պարզապես փլվածք է,— ասաց նա:— Ցած են թափվել լեռան վերին ծածկույթը կազմող քարերը: Հիմա մենք իսկույն դինամիտի օգնությամբ կվերացնենք այդ արգելքը: Լավ է, որ այդ դինամիտը հետներս վերցրինք:

Սակայն դրա վրա բավական ժամանակ գնաց: Հարկ եղավ աշխատել օրվա ամբողջ մնացորդը և ամբողջ գիշեր: Պայթուցիկ նյութը դնում էին փոքրիկ լիցքերով, քանի որ Հենրին վախենում էր փլվածքից: Առավոտյան ժամը ութին պայթեցրին հերթական գլանիկը: Ժայռի մեջ ճեղք առաջացավ, և նրանք առջևում տեսան ցերեկային լույսը: Այն ժամանակ սկսեցին Էլ ավելի զգույշ գործել: Վերջապես, մնաց միայն մի վիթխարի ժայռաբեկոր, մոտ տասը տոննա քաշով, որը փակում էր անցքը: Ժայռաբեկորի երկու կողմերում բացին ճեղքեր, որոնց մեջ ազատ կերպով կարելի էր ձեռք մտցնել և նույնիսկ զգալ, թե արևն ինչպես է վառում, բայց դուրս գալ անհնարին էր: Ժայռաբեկորը փոքր-ինչ բարձրացնելու բոլոր փորձերն ապարդյուն անցան. զանգվածը միայն օրորվում էր, բայց տեղից չէր շարժվում: Այն ժամանակ Հենրին որոշեց մի անգամ Էլ դինամիտ դնել, հուսալով, որ պայթյունի ալիքը ժայռը ցած կնետի հովիտը:

— Կորուսյալ Յոգիներն, անշուշտ, գուշակել են, որ հյուրեր են գալիս իրենց մոտ. ախր տասնհինգ ժամ է արդեն, ինչ մենք ծեծում ենք նրանց ետնամուտքի դուռը,— ծիծաղեց նա, պատրաստվելով վառել պատրույզը:

Կորուսյալ Յոգիների Յովտի ամբողջ բնակչությունը, որ հավաքվել էր Արևի աստծու զոհասեղանի մոտ, Մեծ տան առաջ, իսկապես ոչ առանց սարսափի գուշակում էր անկոչ հյուրերի մոտենալը: Նրանց վերջին հանդիպումն օտարերկրացիների հետ, երբ այրվեց լճափի տունը, և իրենց թագուհին կործանվեց, այնքան ծանր էր, որ այժմ աղոթում էին Արևի աստծուն այլևս հյուրեր չուղարկել: Բայց միաժամանակ, զրգռված քուրմի կրքոտ կոչերից, նրանք հաստատ որոշում էին ընդունել այս անգամ անհապաղ, առանց ավելորդ խոսակցությունների, սպանել բոլոր նրանց, ովքեր կհայտնվեն իրենց հովտում:

— Նույնիսկ եթե դա ինքը դա Վասկոն լինի,— բացականչեց քուրմը:

— Նույնիսկ եթե դա ինքը դա Վասկոն լինի,— կրկնեցին Կորուսյալ Յոգիները:

Բոլորը զինված էին նիզակներով, մարտական մահակներով, նետ-աղեղով և, սպասելով օտարերկրացիներին, ջերմեռանդությամբ աղոթում էին զոհասեղանի առաջ: Համարյա րոպե մեկ լճակից վազելով սուրհանդակներ էին գալիս ու հայտնում միևնույն բանը. լեռը թնդում է, բայց ոչ ոք չի երևում այնտեղից:

Մեծ տան փոքրիկ աղջիկը, որ անցած անգամ ընդունել էր Լեոնսիային, առաջինը տեսավ օտարերկրացիներին: Այդպես ստացվեց, որովհետև ցեղի ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր լճի վերևում բարձրացող լեռան վրա, և ոչ ոք չէր սպասում, թե օտարականները կներխուժեն հակառակ կողմից:

— Դա Վասկոն,— բղավեց աղջիկը:— Դա Վասկոն:

Բոլորը նայեցին ցույց տված ուղղությամբ. այդ րոպեին Թորեսը, ոստիկանապետը և նրանց ամբողջ ավազակախումբը նոր-նոր մտնում էին մարզագետին և ընդամենը հիսուն յարդ էին հեռու զոհասեղանից: Թորեսի գլխին նորից նույն սաղավարտն էր, որ նա մումիաների քարայրում հանել էր իր չորացած նախահոր գլխից: Յուրերին սիրալիք ողջունեցին նետերի կարկուտով, որոնք մի ակնթարթում ցած փռեցին երկու հոգու: Եվ մեկեն Կորուսյալ Յոգիները՝ տղամարդ ու կին, հարձակման անցան: Բայց այստեղ խոսեցին ոստիկանների և Թորեսի հրացանները: Չավթիչներն ամենից քիչ էին սպասում այդպիսի հարձակման, այն էլ այդքան մոտիկ տարածությունից, և չնայած Կորուսյալ Յոգիներից շատերն ընկան՝ խոցված գնդակներից, բայց և այնպես մեծամասնությունը վազելով հասավ թշնամիներին, և այդտեղ սկսվեց կատաղի ձեռնամարտ: Այդ րոպեներին հրազենի առավելությունը հասավ նվազագույնի, և Կորուսյալ Յոգիների նիզակները խոցեցին ոչ քիչ ժանդարմների ու արշավախմբի այլ մասնակիցների, իսկ մահակները աջ ու ձախ փշրում էին թշնամիների գանգերը:

Ի վերջո, այնուամենայնիվ, Կորուսյալ Յոգիները ետ շարտվեցին,— չէ որ ատրճանակով կարելի է կրակել նաև տուրուղմիոցի ժամանակ,— իսկ ողջ մնացածները փախան: Բայց եկվորների կորուստներն էլ մեծ էին. կեսը պառկած էր գետնին, և ցեղի կանայք հոգացել էին, որպեսզի նրանք երկար չտանջվեն: Ոստիկանապետը ցավից ու բարկությունից մռնչում էր, աշխատելով դուրս քաշել ձեռքի մեջ ցցված նետը: Սակայն նրա բոլոր ջանքերն ապարդյուն անցան, և Վիսենտեն ստիպված եղավ կտրել նետի սուր ծայրը ու միայն դրանից հետո դուրս հանել:

Եթե չհաշվենք թևի ցավը, որ առաջացել էր մահակի հարվածից, Թորեսն ընդհանրապես ազատվեց թեթև վախով միայն. նա քիչ էր մնում ուրախությունից վեր-վեր թռչել, տեսնելով գետնին փռված քուրմին. ծերունին մեռել էր՝ գլուխը դրած աղջկա ծնկին:

Տեսնելով, որ իրենց վիրավորներն արդեն բժշկության կարիք չունեն, Թորեսն ու ոստիկանապետը ջոկատի մնացորդը տարան դեպի լիճը և ափով հասան թագուհու կացարանի ավերակներին: Միայն ջրից վեր բարձրացող, սևացած ցցերն էին ցույց տալիս այն տեղը, ուր առաջ գտնվում էր տունը: Այդ տեսնելով՝ Թորեսը շփոթվեց, իսկ ոստիկանապետը համակվեց կատաղի ցասումով:

— Ախր հենց այստեղ, այս տանն էր դրված գանձերի սնդուկը,— կակազելով մրթմրթաց Թորեսը:

— Ո՞րք չէ, փնտրիր, կգտնե՛ս,— մռնչաց ոստիկանապետը:— Սենյոր Թորես, ես միշտ կասկածել եմ, որ դուք հիմար եք:

— Ի՞նչ իմանայի, թե այս տունն այրվել է:

— Պետք է իմանայիք: Չէ որ դուք պարծենում եք, թե ամեն ինչ գիտեք,— կերցրեց ոստիկանապետը:— Միայն թե ինձ չեք կարող հիմարացնել: Ես արդեն վաղուց է, ինչ հետևում եմ ձեզ: Ես տեսա, թե ինչպես գողացաք կուռքերի աչքերի զմրուխտներն ու սուտակները: Բարեհաճեցեք կեսը ինձ տալ, և անմիջապես:

— Սպասեցեք, ինդրում եմ: Փոքր-ինչ համբերություն,— աղաչեց Թորեսը:— Եկեք նախ նայենք: Իհարկե, մենք հավասար կբաժանենք, բայց ինչ-որ չորս քարը ինչ նշանակություն ունի մի ամբողջ սնդուկի համեմատությամբ: Տունը թեթև, անհաստատ տուն էր: Սնդուկը հեշտությամբ կարող էր ընկնել ջուրը, երբ տանիքը փուլ է եկել: Իսկ թանկագին քարերը ջրից չեն փչանում:

Շեֆը հրամայեց իր մարդկանց՝ հատակը հետազոտել ածխացած ցցերի շուրջը, և նրանք, ով ինչպես կարող էր, խուզարկեցին ծանծաղ տեղերը, գգուշորեն խույս տալով ջրապտույտից: Գանձը գտավ Աուգուստինո-Լուսյացը՝ համարյա ափին, ուր ջուրը հագիվ էր հասնում նրա ծնկներին:

— Ես կանգնած եմ ինչ-որ պինդ բանի վրա,— հայտարարեց նա:

Թորեսը կռացավ ու շոշափեց առարկան, որի վրա կանգնած էր Աուգուստինոն:

— Համոզված եմ, որ սա սնդուկ է,— ազդարարեց նա:— Հապա, բոլորդ այստեղ: Բոլորդ: Հանեք ափ, տեսնենք ինչ կա մեջը:

Բայց երբ սնդուկը դուրս հանեցին, և Թորեսն արդեն պատրաստվում էր կափարիչը բարձրացնել, ոստիկանապետը կանգնեցրեց նրան:

— Մարշ նորից դեպի ջուրը,— հրամայեց նա իր մարդկանց:— Այնտեղ էլի շատ այսպիսի սնդուկներ կան, պետք է գտնել, այլապես մեր արշավախումբը իզուր ժամանակ է վատնում, ուրիշ ոչինչ: Մի՞թե որևէ սնդուկ կարող է ծածկել մեր բոլոր ծախսերը:

Եվ երբ բոլորը մտան ջուրը և սկսեցին սուզվել ու զննել հատակը, նոր միայն Թորեսը կափարիչը բարձրացրեց: Ոստիկանապետը շանթահարի պես մնաց տեղում կանգնած: Նա միայն նայում էր ու ինչ-որ անորոշ քրթմնջում:

— Դե ինչ, վերջապես հավատացի՞ք ինձ,— հարցրեց Թորեսը:— Ախր այս գանձը գին չունի: Այժմ մենք ամենահարուստ մարդիկն ենք Պանամայում, Հարավային Ամերիկայում և ամբողջ աշխարհում: Մայաների գանձը հենց սա է որ կա: Դեռևս մանուկ հասակում մենք լսել էինք այս մասին: Սրա մասին երազել են մեր հայրերն ու պապերը: Կոնկիստադորներին չհաջողվեց գտնել: Իսկ այժմ այդ գանձը մերն է: Մե՛րը:

Մինչդեռ նրանք քարացած կանգնել ու նայում էին իրենց հարստությանը, ժանդարմները իրար հետևից դուրս եկան ջրից, լուռ կիսաշրջան կազմեցին՝ նրանց թիկունքում և նույնպես աչքները տնկեցին սնդուկի վրա: Ոչ ոստիկանապետը, ոչ Թորեսը, ինչպես նաև նրանց թիկունքում կանգնածները չիմացան, որ Կորուսյալ Հոգիները գողեգող ու անշշուկ մոտենում են իրենց: Եվ երբ հովտի տերերը հարձակվեցին եկվորների վրա, սրանք, ասես հմայված, շարունակում էին նայել գանձին:

Տասը յարդ հեռավորությունից արձակված նետը մահացու է միշտ, մանավանդ, երբ նետածիզը ժամանակ ունի նշան բռնելու: Գանձ որոնողների երկու երրորդը տապալվեց գետին՝ խոցված Կորուսյալ Հոգիների նետերից: Վիսենտեի մարմնի մեջ, որը, հուրախություն Թորեսի, կանգնած էր նրա հետևում, ցցվել էր ամենաքիչը երկու նիզակ և հինգ նետ: Մի բուռ ողջ մնացածները հագիվ էին կարողացել հրացաններն առնել ու շուռ գալ դեպի հարձակվողները, երբ սրանք արդեն մահակները թափահարելով նետվեցին նրանց վրա:

Դեռևս Խուչիտանի նավթային դաշտի իրադարձություններին ներկա գտնվող երկու ժանդարմների՝ Ռաֆայելի ու Իգնասիոյի զուլխները համարյա իսկույն ճեղքեցին: Իսկ Կորուսյալ Հոգիների ցեղի կանայք առաջվա պես աշխատում էին, որպեսզի վիրավորները երկար չտանջվեն:

Թորեսին և ոստիկանապետին հաշված թուպներն էին մտում ապրելու, երբ հանկարծ խլացուցիչ ճայթյունը լճափի լեռան ընդերքում, և դրան հաջորդող փլուզումը հարձակվողների ուշադրությունը շեղեցին: Վերևից մի հսկայական քար գլորվեց մարտադաշտ: Դրությունը միանգամից փոխվեց: Մի քանի Կորուսյալ Յոզիներ, որ մինչ այդ ողջ էին մնացել, սարսափահար նետվեցին դեպի թփերը: Դեպքի վայրում մնացին միայն ոստիկանապետն ու Թորեսը: Նրանք նայեցին վերևում գտնվող ժայռին, որից դեռևս ծուխ էր հորդում, և հանկարծ տեսան ճեղքից դուրս եկող Յենրի Մորգանին ու թագուհուն:

— Դուք նշան բռնեք կնոջը,— մռլտաց ոստիկանապետը,— իսկ ես վերջ կտամ այդ գրինգո Մորգանին, թող թեկուզ դա լինի վերջին կրակոցն իմ կյանքում. ախր, ինչպես երևում է, այնքան էլ շատ չի մնացել ապրելու:

Երկուսն էլ բարձրացրին հրացաններն ու կրակեցին: Թորեսը, որը երբեք առանձնապես լավ հրաձիգ չէր եղել, որքան էլ տարօրինակ լինի, թագուհու ճիշտ սրտին խփեց: Բայց ոստիկանապետը,— հիանալի հրաձիգ ու դիպուկության համար մի քանի մեղավ շահած,— այս անգամ վրիպեց: Յաջորդ վայրկյանին Յենրիի գնդակը ծակեց նրա աջ դաստակը ու դուրս եկավ արմունկի մոտից: Եվ երբ շեֆի հրացանն աղմուկով ընկավ գետին, նա հասկացավ, որ ոսկորը ջարդված է և որ այլևս երբեք չի կարող գենք բռնել ձեռքում:

Բայց Յենրին այս անգամ այնքան էլ դիպուկ հրաձիգ դուրս չեկավ: Ամբողջ մի օր քարայրի մթուղայան մեջ լինելուց հետո նրա աչքերը չէին կարող մեկնել վարժվել արևի պայծառ լույսին: Առաջին կրակոցը հաջող էր. սակայն այնուհետև որքան էլ կրակեց ոստիկանապետի ու Թորեսի վրա, ոչ մի գնդակ չդիպեց: Նրանք շուռ եկան ու խելագարի պես նետվեցին թփերի մեջ:

Տասը թուպ հետո, Թորեսի աչքերի առաջ, ծառի հետևից դուրս թռավ Կորուսյալ Յոզիների ցեղի մի կին և, ահագին մի քար շարտելով, ջախջախեց վիրավոր ոստիկանապետի գլուխը, որը քայլում էր առջևից: Թորեսն սպանեց այդ կնոջը, ապա սարսափով խաչակնքեց և, սայթաքելով, շարունակեց վազել: Յեռվից լսվում էին նրան հետապնդող Յենրիի և Սուլանո եղբայրների ձայները, և այստեղ նա վերհիշեց այն, ինչ տեսել էր Աշխարհի Յայելում, բայց մինչև վերջ չէր դիտել: Մի՞թե իսկապես իրեն վիճակված է ահա հենց այսպես էլ մեռնել: Սակայն այս ծառերը, այս ծակծկող թփուտը, այս ջունգլիները բոլորովին նման չէին այն վայրին, որ նա տեսավ Աշխարհի Յայելում: Այնտեղ ոչ մի բուսականություն չկար՝ լոկ մռայլ, լերկ ժայռեր, շլացուցիչ արև ու կենդանիների ոսկորներ: Նորից հույսը պլավաց Թորեսի հոգում: Թերևս նրա վախճանը վրա հասնի ո՛չ այսօր, թերևս նույնիսկ ոչ այս տարի: Ով գիտե, միգուցե նրան վիճակված է ապրել ևս քսան տարի:

Անտառից դուրս գալով՝ Թորեսն իր առջևում տեսավ մի լերկ տարածություն, ասես ծածկված սառած լավայով: Այստեղ գոնե հետքեր չեն մնա. և Թորեսը, զգուշությամբ անցնելով, նորից թաղվեց մացառուտների մեջ. նա արդեն իրեն փրկված էր համարում: Մտքում հետզհետե վերջնականապես ձևավորվեց փախուստի ծրագիրը. կզտնի մի մեկուսի անկյուն, ուր կարելի է թաքնվել մինչև մուրճն ընկնելը, իսկ երբ մուրճն ընկնի, կվերադառնա լճափ, այնտեղ, ուր ջրապտույտն է: Այնտեղ արդեն ոչ ոք ու ոչինչ չեն կարող ետ պահել նրան: Կցատկի ջրի մեջ, և փրկված է: Այժմ արդեն ստորերկրյա գետով երկրորդ ճանապարհորդությունը նրան չէր վախեցնում: Երևակայության առաջ նորից կանգնեց հաճելի մի պատկեր՝ Գուալակա գետը, որը, արևի տակ փայլվելով, իր ջրերը դեպի ծովն է տանում: Այժմ նա ունի երկու խոշոր զմրուխտ և երկու նույնպիսի սուտակ՝ հանած Չիայի և Խցատցյի աչքերից: Դա ինքնին արդեն ամբողջ մի հարստություն է, այն էլ ոչ փոքր: Թող որ նրան չհաջողվեց ձեռք բերել մայաների գանձը և աշխարհի ամենահարուստ մարդը դառնալ. այդ չորս քարն էլ բավական է իրեն: Այժմ Թորեսը երագում էր լոկ, որպեսզի շուտ մթներ. այն ժամանակ վերջին անգամ կցատկի ջրապտույտի մեջ, ստորերկրյա գետով կլողա կանցնի լեռան ընդերքով և դուրս կգա դեպի ծով հոսող Գուալակա գետը:

Եվ այդ տեսարանն այնպես վառ պատկերացավ Թորեսի աչքին, որ չնկատելով, թե ոտքը որտեղ է դնում, կորցրեց հավասարակշռությունն ու գլորվեց ցած: Բայց ընկավ ոչ թե փրփրակոծ ջրերի մեջ, այլ թեք ժայռն ի վար: Ժայռն այնքան սլկուն էր, որ նա սրընթաց թռավ ներքև, բայց կարողացավ շուռ գալ ու այժմ սահում էր դեմքով դարձած դեպի ժայռը, հուսահատ փորձեր անելով ոտքերով ու ձեռքերով թեկուզ որևէ բանից կառչել: Սակայն նրա բոլոր ջանքերն իզուր էին.

ճիշտ է, այժմ արդեն նա ընկավ ոչ այնքան սրընթաց թափով, բայց որևէ բանից կառչել չկարողացավ:

Հասնելով կիրճի հատակին՝ Թորեսը մի քանի րոպե պառկեց շշմած, համարյա անշունչ վիճակում: Երբ ուշքի եկավ, ամենից առաջ զգաց, որ ձեռքն ինչ-որ տարօրինակ բան է սեղմում: Կարող էր երդվել, որ ատամներ են: Վերջապես, ուժերը հավաքելով, օգնության կոչեց իր ամբողջ վճռականությունը, աչքերը բացեց ու սիրտ արավ նայել. և իսկույն էլ թեթևացած շունչ քաշեց. դրանք իրոք խոզի ատամներ էին, արևից ու քամուց ճերմակած, իսկ կողքին ընկած էր խոզի ծնոտը: Նրա շուրջն ու նրա տակ փռված էին ոսկորների կույտեր. ուշադիր նայելով տեսավ, որ դրանք խոզի և ինչ-որ ավելի մանր կենդանիների ոսկորներ են:

Որտե՞ր էր այդքան շատ ոսկորներ տեսել... Թորեսը լարեց միտքն ու հիշեց թագուհու ոսկե մեծ կաթսան: Նայեց վերև: Օ՛, սուրբ աստվածածին: Նույն տեղն է: Գլուխը բարձրացնելուն պես իսկույն ճանաչեց այդ ձագարը: Մինչև ձագարի եզրը երկու հարյուր ոտնաչափից պակաս չի լինի: Եվ այդ ամբողջ երկու հարյուր ոտնաչափը՝ ուղղաձիգ, լերկ ժայռ: Թորեսը մի հայացքից հասկացավ, որ ոչ մի մահկանացու երբևէ չի կարող հաղթահարել այդ զանդիթափը:

Հիշողության մեջ արթնացած տեսիլքն ստիպեց Թորեսին վեր ցատկել ու շտապ աչք ածել չորս կողմը: Այդ ծուղակը, որի մեջ նա ընկավ այնպես անզգուշորեն, նրան հիշեցրեց ծուղակ-ջրհորները, որ սարդը փորում է ավազներում, ներքևում համբերությամբ սպասելով իր գոհին. միայն թե սա միլիոն անգամ ավելի մեծ էր, քան այդ ջրհորները: Բորբոքված երևակայությունը հուշում էր, որ այստեղ ևս կարող է թաքնված լինել այս անդունդին հարմար որևէ սարդ-իրեշ, որը դարանակալ սպասում է նրան խժռելու: Այդ մտքերից նա սարսուռ զգաց: Բայց նրա երկյուղն անտեղի էր: Ջրհորի կլոր հատակը մոտ տասը ֆուտ տրամագիծ ուներ և ամբողջովին ծածկված էր ինչ-որ մանր կենդանիների ոսկորների հաստ շերտով. «Հետաքրքիր է, թե հին մայաներն ինչո՞ւ են այսպիսի խոր հոր փորել»,—մտածեց Թորեսը: Նա համարյա համոզված էր, որ այդ ծուղակը, որի մեջ ինքն ընկավ, մարդկային ձեռքերով է շինված:

Մինչև մուժն ընկնելը Թորեսն ամենաքիչը մի տասը փորձ արեց վեր մագլցելու և համոզվեց, որ դա անկարելի է: Յուրաքանչյուր հուսահատ փորձից հետո նա գունդուկծիկ էր դառնում, որպեսզի պատսպարվի ողորմելի ստվերում, որը, բարեբախտաբար, արևի խոնարհվելու հետ գնալով մեծանում էր, և ծանր շնչելով հանգստանում, լիզելով չորացած, ծարավից ու շոգից ճաքճած շրթուքները: Այստեղ տաք էր, ինչպես վառարանում: Նա զգում էր, թե ինչպես մարմնի ծակոտիների միջից քրտնքի հետ մեկտեղ դուրս են գալիս իր կենսական վերջին հյուլերը: Գիշերը մի քանի անգամ արթնացավ, իզուր գլուխ կոտրելով, թե ինչպես փրկվի: Այստեղից դուրս գալ կարելի էր միայն մագլցելով, բայց ինչպե՞ս անել: Եվ նա սարսափով մտածեց մոտալուտ ցերեկվա մասին, քանզի գիտեր, որ ոչ մի մարդ չի կարող տասը ժամ շարունակ ապրել այդպիսի տապում: Նոր գիշերվա վրա հասնելուց դեռևս շատ առաջ մարմնի վերջին կաթիլ խոնավությունը կգոլորշիանա, և արևը նրան կդարձնի չորացած, կնճռապատ մումիա:

Վրա հասնող ցերեկը սարսափն ուժեղացրեց ու մտրակեց նրա հնարամտությունը, որը հուշեց մահվանից խուսափելու մի նոր խիստ հասարակ միջոց: Քանի որ չի կարող վեր մագլցել կամ անցնել պատերի միջով, ուրեմն միակ հնարավոր ուղին դեպի ներքև է: Այ քեզ ապո՛ւշ: Ախր նա կարող էր աշխատել գիշերվա զով ժամերին, իսկ այժմ բարեհաճիր տքնել, երբ արևը գնալով կսկսի ավելի ու ավելի ուժեղ վառել: Եվ նա սկսեց եռանդուն թափով փորել փշրվող ոսկորները: Դե իհարկե, այստեղ անցք կա դեպի ներքև: Այլապես անձրևաջուրն ո՛ւր պիտի կորչեր: Այն բերնեբերան կլցներ հորը, եթե այստեղ հոսք չլիներ: Ապո՛ւշ: Երիցս ապո՛ւշ:

Թորեսը փորում էր մի պատի մոտ, ոսկորները նետելով դեպի դիմացի պատը: Աշխատում էր այնպիսի կատաղությամբ և այնպես էր շտապում, որ եղունգները ջարդեց ու մատներն արյունլվիկ արավ: Բայց ապրելու ծարավը շատ մեծ էր, և նա գիտեր, որ արևի հետ այդ մրցության մեջ խաղաթղթի վրա է դրված իր կյանքը: Փորելու հետ ոսկորների շերտը գնալով թանձրանում էր, այնպես որ ստիպված էր նախ ջարդել իրացանի փողով, ապա բռնելով դուրս նետել փշրված ոսկորները:

Կեսօրվա դեմ, երբ տապից նրա գլուխն սկսեց խշշալ, հանկարծ հայտնագործություն արեց: Ժայռի այն մասի վրա, որ նա արդեն մերկացրել էր, երևացին ինչ-որ տառեր, ակնհայտորեն խազմզած դանակով: Թորեսը վերածնվող հույսով գլուխը մինչև ուսերը թաղեց փորած անցքի մեջ և սկսեց

շան նման փորփրել ոսկորները շարտելով ետ: Դրանց մի մասը մի կողմ էր թռչում, իսկ մյուս մասը,— ըստ որում շատը,— նորից թափվում էր Թորեսի վրա: Բայց արդեն այնպես էր տաքացել, որ չէր նկատում, թե իր ջանքերը ինչ աստիճան ապարդյուն են:

Վերջապես, նա մաքրեց ամբողջ մակագրությունն ու կարդաց.

Պիտեր Մաք-Յիլ, գլագոցի: 12 մարտի 1829 թվական: Սատանի քրհորից դուրս եկա այս անցքի միջով, որ ես գտա ու բացեցի:

Անցուղի՝ Ուրեմն, այս մակագրության տակ պետք է անցուղի լինի: Թորեսը կատաղությամբ վերսկսեց աշխատանքը: Նա այնպես էր թաթախվել հողի ու փոշու մեջ, որ նման էր հսկայական չորքոտանու, վիթխարի խլուրդի նման ինչ-որ բանի: Յոզը մի գլուխ թափվում էր նրա աչքերի մեջ, լցվում քիթն ու կոկորդը. այդ ժամանակ նա ակամա գլուխը դուրս էր հանում փոսից և սկսում փռշտալ ու հազալ: Երկու անգամ գիտակցությունը կորցրեց: Բայց արևը, որ այդ միջոցին կանգնած էր արդեն ուղիղ նրա գլխավերևում, հարկադրեց նորից գործի անցնելու:

Վերջապես, Թորեսը գտավ անցուղու վերին եզրը: Նա այլևս չչարունակեց փորել ու բացել ամբողջ անցուղին: Յենց որ անցքն այնքան բացվեց, որ նա կարող էր իր նիհար մարմինը մտցնել այնտեղ, Թորեսը կռացավ ու խցկվեց անցքի մեջ, աշխատելով որքան կարելի է շուտ թաքնվել արևի այրող ճառագայթներից: Մթության ու զովության մեջ փոքր-ինչ ուշքի եկավ, բայց ուրախ հուզմունքին հաջորդեց ուժերի անկումը, և սիրտն սկսեց այնպես ուժգին բաբախել, որ նա երրորդ անգամ կորցրեց գիտակցությունը:

Ուշքի գալով՝ ուռած, սևացած շրթունքներով ինչ-որ աղոթք մրմնջաց ու սողաց առաջ: Նա ստիպված էր սողալ, քանի որ անցքն այնքան ցած էր, որ թզուկն անգամ չէր կարող այդտեղ ուղղվել: Դա իսկական դամբարան էր: Ոսկորները խշրտում ու փշրվում էին Թորեսի ոտքերի տակ, և նա զգում էր, թե նրանց սուր բեկորներն ինչպես են քերծում իր մաշկը: Այդպես նա սողաց մոտ հարյուր ֆուտ, երբ նկատեց ցերեկային լույսի մի շող: Բայց որքան փրկությունը մոտենում էր, այնքան նա դանդաղ էր առաջ շարժվում. զգում էր, որ ուժերն սպառվում են. ոչ թե հոգնածությունից, ոչ թե քաղցից, այլ գլխավորապես ծարավից: Ջուր, մի քանի կում ջուր, և ուժերը նորից կվերադառնային: Բայց ջուր չկար:

Այդ միջոցին լույսը գնալով պայծառանում էր: Թորեսն ավելի ու ավելի էր մոտենում նրան: Շուտով նկատեց, որ անցուղին սկսում է ցած իջնել մոտ երեսուն աստիճան անկյան տակ: Այժմ առաջ շարժվելն ավելի հեշտ էր: Թորեսը սահում էր ցած, ձգողության ուժը նրա թուլացող մարմինը տանում էր առաջ, դեպի լույսի աղբյուրը: Համարյա անցքի մոտ ոսկորները շատացան: Բայց դա Թորեսին չանհանգստացրեց. արդեն վարժվել էր դրանց, մեկ էլ որ շատ էր տանջվել, որպեսզի մտածեր այդ մասին:

Չնայած աչքերի առաջ ամեն ինչ պտտվում էր, և մատները համարյա կորցրել էին զգայնությունը, նա ուշադրություն դարձրեց, որ անցքը նեղանում է: Թորեսը շարունակում էր ցած իջնել նույն երեսուն աստիճան անկյան տակ, երբ հանկարծ մտքով անցավ, որ այդ անցուղին շատ է նման առնետի թակարդի, իսկ ինքը՝ առնետի, որը գլխիվայր սահում է չգիտես դեպի ուր: Դեռևս նախքան դեպի արտաքին աշխարհի տանող անցքին հասնելը, որտեղից թափանցում էր ցերեկային պայծառ լույսը, նա մտածեց, որ այդ անցքը շատ է նեղ իր մարմնի համար: Եվ նրա երկյուղն արդարացավ: Առանց տատանվելու նա սողաց անցավ կմախքի միջով,— իսկույն հասկանալով, որ դա տղամարդու կմախք է,— ու մի հնարքով ականջները քերծելով, գլուխը մտրեց նեղ ճեղքի մեջ: Արևն անտանելի կերպով այրում էր դեմքը, բայց նա չէր նկատում. ագահորեն աչքերը հառել էր դեմը փռված արձակ տարածություններին, որտեղ նրան չէր ուզում թողնել անողորմ ժայռը:

Կարելի էր խելագարվել հենց միայն առվի տեսքից, որն այնպիսի անուշ կարկայցունով հոսում էր ընդամենը ինչ-որ հարյուր յարդ հեռավորության վրա, անտառապատ ափերի միջով, դեպի ուր իջնում էր կանաչապատ լանջը: Իսկ այդ առվի մեջ, ծառերի ստվերում, մինչև ծնկները ջրում թաղված, կանգնած էին այն թզուկ ցեղի քնկոտ կովերը, որ նա տեսել էր Կորուսյալ Յոզիների Յովտում. նրանք մերթ ընդ մերթ ծուլորեն թափահարում էին պոչերը, քշելով ճանճերին, ու ոտքից ոտք էին փոխադրվում: Թորեսն ատելությամբ էր նայում նրանց. ահա նրանք կարող են խմել, որքան սրտներն ուզենա, բայց, ըստ երևույթին, ծարավ չեն զգում: Հիմար արարածներ: Ինչպե՞ս կարելի է չխմել, երբ շուրջդ այդքան ծուլորեն կարկաչող ջուր կա:

Հանկարծ կովերն ականջները սրեցին ու շուռ տվին գլուխները. խիտ անտառից դուրս եկավ մի մեծ եղջերու: Կովերը եղջուրները դեմ արին ու սկսեցին ոտքերով հարվածել ջրին այնպես, որ ճողփյունը թորեսին հասավ, բայց եղջերուն, առանց ուշադրություն դարձնելու նրանց դժգոհության վրա, գլուխը թեքեց ու սկսեց խմել: Դա արդեն անտանելի էր. թորեսի կրծքից մի խելագար աղաղակ դուրս թռավ. թե որ այդ թռպեին խելքը տեղը լիներ, ոչ մի կերպ իր ձայնը չէր ճանաչի:

Եղջերուն ետ ընկրկեց, իսկ կովերը դարձան դեպի այն կողմը, որտեղից լսվեց այդ սարսափելի աղաղակը, ապա նորից ընկան քնկոտության մեջ, աչքերը փակելով ու մերթ ընդ մերթ պոչով քշելով ճանճերին: Հազիվ թե հասկանալով, որ կարող է ականջները պոկել, թորեսը կտրուկ թափով գլուխը ետ քաշեց և ուշաթափ ընկավ կմախքի վրա:

Մի երկու ժամ հետո,— չնայած նա, անշուշտ, հասկացողություն չուներ, թե որքան ժամանակ է անցել,— թորեսն ուշքի եկավ ու տեսավ, որ պառկած է, այտը կմախքի գանգին սեղմած: Մայր մտնող արևն իր թեք շողերը նետել էր նեղ անցքի մեջ, և հանկարծ թորեսի առաջ փայլեց ժանգոտած դանակի շեղբը. նրա բերանը կտորատված էր ու ջարդված, և թորեսն իսկույն հասկացավ՝ ինչու: Դա նույն դանակն էր, որով խազմզված էր ժայռի մակագրությունը, ստորերկրյա անցքի մուտքի մոտ, իսկ կմախքը, որի վրա այժմ պառկած է, կմախքն էր այն մարդու, որ արել էր այդ մակագրությունը: Եվ այստեղ Ալվարես թորեսը վերջնականապես խելքը թռցրեց:

— Ա-ա՛, Պիտեր Մաք-Յիլ, ուրեմն այդ դո՛ւ ես իմ թշնամին,— մրթմրթաց նա:— Գլազգոցի Պիտեր Մաք-Յիլ, դավաճան: Դու դիտմամբ ստիպեցիր ինձ քարշ գալ այս անցքով մինչև վերջ: Դե ա՛ռ քեզ, ա՛ռ քեզ, ա՛ռ քեզ...

Այդ խոսքերով նա ծանր դանակը խրեց գանգի փխրուն ճակատի մեջ: Երբեմնի Պիտեր Մաք-Յիլի ուղեղը պահպանող ոսկորների փոշին լցվեց թորեսի ռունգները՝ ավելի ևս կատաղեցնելով նրան: Նա նետվեց կմախքի վրա ու սկսեց ձեռքերով ջարդոտել, մաս-մաս անել. ոսկորներ է, որ թռչում էին չորս կողմ: Դա նման էր ճակատամարտի, որտեղ նա ոչնչացնում էր այն, ինչ մնացել էր Գլազգոյի երբեմնի բնակչից:

Թորեսը մի անգամ ևս գլուխը խոթեց նեղ անցքի մեջ, որպեսզի տեսնի աշխարհի մարող գեղեցկությունը: Հինավուրց մայաների թակարդով կոկորդից բռնված առնետի նման նա նայում էր, թե ինչպես է հրաշալի աշխարհը թաղվում խավարի մեջ, իսկ մայր մտնող օրվա հետ միասին մահվան խավարի մեջ էր թաղվում նաև նրա սեփական գիտակցությունը:

Իսկ կովերը շարունակում էին կանգնած մնալ ջրում և քնկոտությամբ քշել ճանճերին. հետո նորից հայտնվեց եղջերուն և, առանց նախրի վրա ուշադրություն դարձնելու, կռացավ ջրին ու սկսեց խմել:

ԳԼՈՒԽ ԶԱՆՈՒԹԵՐՈՐԴ

Իզուր չէ, որ կոլեգաները Ռիգանին Ուոլլ-սթրիտի Գայլ էին անվանում: Իբրև կանոն, նա բորսայում խաղում էր,— ճիշտ է, մեծ թափով,— չափազանց զգույշ, սակայն մերթ ընդ մերթ թունդ հարբեցողի պես հանկարծ նետվում էր ամենահամարձակ ու անհավատալի արկածների մեջ: Իր երկարատև կարիերայի ընթացքում նա գոնե հինգ անգամ խուճապ էր առաջացրել բորսայում, անփոփոխ կերպով միլիոններ գրպանելով: Բայց Ռիգանը հազվադեպ էր միայն այդպես մոլեգնում ու երբեք ձեռքերը չէր կեղտոտում չևչին բաների վրա:

Մի քանի տարի իրար վրա հանգիստ էր մտում, որպեսզի հակառակորդների կասկածամտությունը քնեցնի ու ներշնչի նրանց, թե իբրև Գայլը, վերջապես ծերացել է ու խաղաղվել: Եվ հանկարծ ամպրոպի նման փլվում էր նրա՝ գլխին, ում որոշել էր կործանել: Եվ չնայած հարվածը ճայթում էր, ինչպես կայծակը պարզ երկնքից, բայց երբեք անակնկալ չէր լինում: Ռիգանը երկար ամիսների, երբեմն մինչև իսկ տարիների ընթացքում օրեցօր, ուշի ուշով, պատրաստվում էր այդ հարվածին, համբերությամբ հասունացնելով իր մեջ ապագա գլխավոր ճակատամարտի ծրագրերը:

Ճիշտ այդպես էլ մշակված ու նախապատրաստված էր Ֆրենսիս Մորգանի անխուսափելի Վաթեռլոուն: Դրա հիմքում ընկած էր վրեժխնդրությունը, բայց վրեժխնդրությունը հանգուցյալի հանդեպ, ո՛չ թե Ֆրենսիսի, այլ Ֆրենսիսի հոր դեմ էր մտածված այդ հարվածը, չնայած խոցում էր

գերեզմանում հանգչողին նրա կենդանի որդու միջոցով: Ռիզանը ութ տարի շարունակ սպասում և առիթ էր որոնում հարվածի համար, քանի դեռ ծեր Ռ. Յ. Մ.-ն՝ Ռիչարդ Յենրի Մորգանը ողջ էր: Բայց այդպիսի հնարավորություն չստեղծվեց: Չնայած Ռիզանը Ուոլլ-սթրիտի Գայլն էր, բայց նրան այնպես էլ բախտ չվիճակվեց ոչ մի անգամ հարձակվելու Առյուծի վրա, մինչև վերջինիս մահը:

Եվ ահա, շարունակ քողարկվելով բարյացակամության դիմակի տակ, Ռիզանն իր ատելությունը հորից փոխադրեց որդու վրա: Սակայն այդ ատելությունն առաջացել էր սխալ հասկացված գործողություններից ու դրդումներից: Ռ. Յ. Մ.-ի մահվանից ութ տարի առաջ Ռիզանը փորձեց խաբել նրան, սակայն իզուր: Բայց Ռիզանի մտքով իսկ չանցավ, որ Ռ. Յ. Մ.-ն կռահել էր իր մտադրությունները, և ոչ միայն կռահել, այլև համոզվել էր, որ ճիշտ է կռահել. այն ժամանակ արագ ու ճարպիկ ոտք էր տվել իր ուխտադրուժ կոլեգային: Եթե Ռիզանը գլխի ընկներ, որ իր ուխտադրուժ մտադրությունները հայտնի են Ռ. Յ. Մ.-ին, հավանորեն հաբը կուլ տար ու չմտածեր վրեժխնդրության մասին: Բայց, համոզված լինելով, որ Ռ. Յ. Մ.-ն նույնպիսի անազնիվ մարդ է, ինչպես ինքը, և նույնքան ստոր, Ռիզանն այդ բանն ընդունեց իբրև ոչնչով չհիմնավորված հերթական ստորություն և որոշեց հաշիվները մաքրել այդ հանդուգն մարդու հետ՝ սնանկացնել եթե ոչ նրան, ապա նրա որդուն:

Եվ Ռիզանն սկսեց սպասել հարմար ժամի: Սկզբում Ֆրենսիսը բորսային խաղի մեջ չէր մտնում, գոհանալով իր պատկառելի ձեռնարկությունների եկամուտներով, ձեռնարկություններ, որոնց մեջ դրված էին նրա հոր փողերը: Եվ այն ժամանակ միայն, երբ Ֆրենսիսը դարձավ «Տեմպիկո պեթրոլեում» ընկերության պարագլուխներից մեկը, երբ նա միլիոնների շահույթ խոստացող այդ ձեռնարկության մեջ ներդրեց մի քանի միլիոն դոլար, Ռիզանը տեսավ երիտասարդ Մորգանին ոչնչացնելու հնարավորությունը: Բայց այժմ արդեն, երբ այդ հնարավորությունը երևան եկավ, նա ժամանակն իզուր չէր կորցնում, չնայած դեռևս շատ ամիսներ էին հարկավոր մեթոդիկ կերպով ու անշտապ հարձակման պատրաստվելու համար: Նախքան դրան ձեռք գարկելը, Ռիզանը մանրամասնորեն պարզեց, թե Ֆրենսիսն ինչ բաժնետոմսեր ունի օնկոլային հաշվում և ինչ բաժնետոմսեր՝ անմիջականորեն:

Ավելի քան երկու տարի պահանջվեց, որպեսզի Ռիզանը նախապատրաստվի: Մի քանի ընկերություններում, որտեղ Ֆրենսիսն զգալի գումարներ էր ներդրել, Ռիզանը դիրեկտորներից մեկն էր ու մեծ ազդեցություն ուներ: «Ֆրիսկո կոնսոլիդեյտեդում» նախագահ էր նա, «Նյու Յորք, Վերմոնտ ընդ Քոննեքթիկուլթ» ընկերությունում՝ փոխնախագահ, «Նորս Ուեստերն Էլեկտրիկում», որտեղ սկզբում նրան հաջողվեց իր ձեռքն առնել դիրեկտորներից միայն մեկին, անդրկոլիսային ինտրիգների օգնությամբ աստիճանաբար ձայների երկու երրորդն իրեն ենթարկեց: Այդպես ամենուր՝ ուղղակի կամ անուղղակի. կորպորացիաների բանկային բաժանմունքների օգնությամբ նա կենտրոնացրեց իր ձեռքում բոլոր այն ֆինանսների և առևտրի գաղտնի զսպանակներն ու լծակները, որոնցից կախված էր Ֆրենսիսի հարստությունը:

Սակայն այդ բոլոր ձեռնարկությունները մանրուք էին ամենախոշորի՝ «Տեմպիկո պեթրոլեումի» համեմատությամբ: Եթե հաշվի չառնենք բորսայում գնված ինչ-որ քսան հազարի ողորմելի բաժնետոմսերը, այստեղ Ռիզանը ոչ մի հենարան չուներ և ոչինչ հսկողության չէր ենթարկում, մինչդեռ մոտենում էր ֆինանսական վիթխարի ձեռնածությունների ժամը: «Տեմպիկո պեթրոլեումը» փաստորեն Ֆրենսիսի անհատական սեփականությունն էր: Նրանից բացի, այդ ձեռնարկությամբ խոշոր չափով շահագրգռված էին նրա մի քանի բարեկամները, այդ թվում նաև միսիս Բառուզերսը: Այդ անհանգիստ արարածը անվերջ տանջում էր Ֆրենսիսին և նույնիսկ, առանց քաշվելու, ձանձրացնում հեռախոսային զանգերով: Բայց կային և այնպիսիները,— Ջոնսի Պասմորի նման,— որոնք երբեք չէին անհանգստացնում նրան և հանդիպելիս միայն իմիջիայլոց, այն էլ լավատեսորեն, խոսում էին բորսայի ու ընդհանրապես ֆինանսների դրության մասին: Բայց դա Ֆրենսիսին ավելի շատ էր նեղում, քան միսիս Բառուզերսի անվերջ ձյուրի պես կայելը:

Ռիզանի մեքենայությունների հետևանքով «Նորս-Ուեստերն Էլեկտրիկի» բաժնետոմսերն ընկան ամբողջ երեսուն գիծ ու շարունակում էին խիստ ցածր արժեքի վրա: Իրենց ձեռնհաս համարող մարդիկ եկան այն եզրակացության, որ այդ ձեռնարկությունը խիստ անհուսալի է: Ապա հերթը հասավ հին, փոքրիկ, Ջիբրալթարի պես կայուն «Ֆրիսկո քոնսոլիդեյտեդ» ընկերությանը: Դրա մասին ամենավատ լուրերը տարածվեցին, խոսում էին նույնիսկ սնանկության մասին: «Մոնտանա Լոուդը» դեռևս ուշքի չէր գալիս գործերի վիճակի մասին Մալենիի հույժ մանրախնդիր ու բնավ էլ ոչ գովասանական հաշվետվությունից հետո, և նույնիսկ Ուեստոնը, իր բնագավառի խոշոր մասնագետ, որ ուղարկվել էր անգլիական փայտերերի կողմից, նույնիսկ նա չկարողացավ ոչ մի

միախթարական բան հաղորդել: «Իմպիրիել թանգստենը», որ ահա կես տարի է, ինչ ոչ մի եկամուտ չէր բերում, այժմ հսկայական վնասներ էր կրում խոշոր գործադուլի հետևանքով, որի վերջը չէր երևում: Եվ, բացի մի քանի վաճառված արհմիութենական ղեկավարներից, ոչ ոք չէր կասկածում, որ այդ ամենի հիմքում ընկած է Ռիզանի ոսկին:

Ֆրենսիսի վրա կատարվող այդ հարձակման խորհրդավորությունն ու մահաբերությունը ջլատում էին Բեսկոմի եռանդը: Թվում էր, թե սարից դանդաղորեն ցած սահող սառցադաշտն իր հետ քշում, անդունդ է տանում այն ամենը, որտեղ Ֆրենսիսը թեկուզ որևէ գումար է դրել: Կողքից ոչինչ չէր կարելի նկատել. դա պարզապես անշեղ անկում էր, որի հետևանքով Ֆրենսիսի հարստությունը օրեցօր հալվում էր: Ընկնում էին ոչ միայն անձնապես նրան պատկանող բաժնետոմսերը, այլև նրանք, որոնցով նա պարտք էր բանկերին:

Այդ ժամանակ լուրեր տարածվեցին պատերազմի մասին: Իրար հետևից օտարերկրյա դեսպաններին անձնագրեր հանձնեցին. այնպիսի տպավորություն էր ստացվում, ասես աշխարհի կեսը գեղքի էր կոչվում: Հենց այժմ, երբ դրությունը բորսայում անկայուն էր և թվում էր, թե ահա ուր որ է խուճապ կսկսվի, իսկ խոշոր տերությունները դանդաղում էին մորատորիում /Մորատորիում — վճարումների մարման տարկետում, որ սահմանվում է կառավարության կողմից որոշակի ժամկետի համար, ի նկատի ունենալով որևէ արտակարգ հանգամանք:/ հայտարարել, Ռիզանը որոշեց վերջնական հարվածը հասցնել: Դա ամենահարմար պահն էր իջեցում խաղալու, այն էլ մոտ մի տասնյակ այլ խոշոր «արջերի» /Արջ — բորսայորդ, որը իջեցում է խաղում:/ հետ միասին, որոնք լռելյայն ընդունել էին Ռիզանի ղեկավարությունը: Բայց նրանք անգամ կարգին չգիտեին, թե որոնք են Ռիզանի պլանները, և գլխի չէին ընկնում, թե որն է դրանց աստառը: Նրանք խաղին մասնակցում էին, որպեսզի մի բան շահեն, և ենթադրում էին, որ նա էլ նույն պատճառով է խաղում: Նրանց մտքով իսկ չէր անցնում, որ գլխավոր թիրախը Ֆրենսիս Մորգանն է, կամ, ավելի ճիշտ, նրա հոր ուրվականը, որի դեմ էլ հենց իսկապես ուղղված էր այդ հզոր հարվածը:

Ասեկոսենների ֆաբրիկան Ռիզանի ղեկավարությամբ աշխատում էր ամբողջ թափով: Ամենից շուտ և ամենից ցած ընկան Ֆրենսիսի ձեռնարկությունների բաժնետոմսերը, որոնք առանց այդ էլ արդեն չափազանց ցածր էին արժենշվում, նույնիսկ ավելի վաղ, քան «արջերը» կսկսեին գներն իջեցնել: Սակայն Ռիզանը խուսափում էր «Տեմպիկո պեթրոլեումի» վրա որևէ ճնշում գործադրել: Համընդհանուր կրախի իրարանցման մթնոլորտում այդ ընկերության բաժնետոմսերը անսասան կերպով պահպանվում էին բարձր մակարդակի վրա: Ռիզանն անհամբերությամբ սպասում էր միայն այն րոպեին, երբ հոսսահատությունը Ֆրենսիսին կստիպի դրանք նետել շուկա՝ մյուս ճեղքերը փակելու համար:

— Աստված իմ, աստված իմ:

Բեսկոմը ձեռքը տարավ այտին ու կնճռոտվեց, ասեր հանկարծ ատամները ցավեցին:

— Աստված իմ, աստված իմ,— կրկնեց նա:— Շուկան գրողի ծոցն անցավ: Նրա հետ էլ «Տեմպիկո պեթրոլեումը»: Ո՛վ կարող էր նման բան նախատեսել:

Ֆրենսիսը նստել էր Բեսկոմի առանձնասենյակում, համառորեն աշխատելով սիգարետ ծխել չնկատելով, որ այն վառած չէ:

— Բոլորը ծախում են ու ծախում, աշխատելով իրարից առաջ անցնել,— խոսեց նա:

— Մենք կդիմանանք ամենաշատը մինչև վաղն առավոտ, իսկ հետո ձեզ աճուրդի կհանեն, ինձ էլ ձեզ հետ միասին,— ասաց մակլերը՝ արագ մի հայացք նետելով ժամացույցի վրա:

Ֆրենսիսը նույնպես մեքենայորեն նայեց թվացույցին. սլաքները ցույց էին տալիս տասներկուսը:

— Շուկա նետեցեք «Տեմպիկոյի» մնացորդները,— հոգնած ասաց նա:— Դա հնարավորություն կտա մեզ դիմանալ մինչև վաղը:

— Իսկ ի՞նչ կլինի վաղը,— հարցրեց մակլերը:— Ախր հողը խլված է մեր ոտքերի տակից, և բոլորը, ընդհուպ մինչև կրտսեր գրագիրները, աշխատում են որքան կարելի է շուտով սաղացնել իրենց բաժնետոմսերը:

Ֆրենսիսն ուները թոթվեց:

— Դուք հո գիտեք, որ ես գրավ եմ դրել և՛ տունը, և՛ Դրիմուորդը, և՛ Ադիրոնդակյան լեռների ամառանոցը,— բոլորն էլ ամենաբարձր գներով:

— Դուք բարեկամներ ունե՞ք:

— Այսպիսի՝ ժամանակ,— դառնությամբ նկատեց Ֆրենսիսը:

— Այո, հենց այսպիսի ժամանակ,— հաստատեց Բեսկոմը:— Լսեցեք, Մորգան: Ես գիտեմ, թե դուք քուլեջում ում հետ էիք մտերիմ: Վերցնեք, օրինակ, Ջոնսի Պասմորին...

— Ախր նա էլ է մինչև ականջները խրվել այս գործի մեջ: Երբ ես սնանկանամ, նա էլ կսնանկանա: Դեյվ Դոնալդսոնն էլ կհարկադրվի շուտով ապրել ամիսը հարյուր վաթսուն դոլարով: Իսկ Քրիստ Ուեսթհաուզն ստիպված կլինի աշխատել կինոյում: Նա միշտ էլ լավ դերասան էր, և, ասում են, իդեալական դեմք ունի կինոյի համար:

— Բայց դուք մի բարեկամ էլ ունեք, Չարլի Տիպպերին,— հիշեցրեց Բեսկոմը, չնայած ակնհայտ էր, որ նա առանձին հույսեր չի դնում այդ բարեկամի վրա:

— Այո,— Նույնքան անհուսալիորեն համաձայնեց Ֆրենսիսը:— Մի բան է վատ՝ նրա հայրն առայժմ ողջ է:

— Զավթառ շունն իր կյանքում դեռ ոչ մի անգամ Նույնիսկ մի դոլարի ռիսկ չի արել,— ավելացրեց Բեսկոմը:— Դրա փոխարեն նա միշտ էլ ձեռքի տակ մի քանի միլիոն ունի: Դժբախտությունն այն է միայն, որ նա ոչ մի կերպ չի մեռնում:

— Չարլին կարող էր համոզել նրան և ինձ համար կաներ այդ բանը, եթե մի փոքր «բայց» չլիներ:

— Ձեզ մոտ բաժնետոմսեր չե՞ն մնացել գրավ դնելու համար,— առույգորեն հարցրեց մակերը:

Ֆրենսիսը գլխով արեց.

— Փորձեցեք հապա թեկուզ մեկ դոլար պոկել ծերուկից առանց գրավակալի:

Բայց և այնպես մի քանի բոպե հետո, հուսալով Չարլի Տիպպերիին գտնել գրասենյակում, Ֆրենսիսն արդեն իր այցեքարտը հանձնեց քարտուղարին: Տիպպերի ֆիրման ոսկերչական ամենախոշոր ֆիրման էր Նյու Յորքում, թերևս նաև ամբողջ աշխարհում: Ծերուկ Տիպպերիի մոտ աղամանդի վրա շատ ավելի խոշոր գումարներ էին ներդրված, քան ենթադրում էին Նույնիսկ այն մարդիկ, որոնց շատ բան էր հայտնի:

Ինչպես և կարծում էր Ֆրենսիսը, Չարլիի հետ խոսակցությունը ոչ մի արդյունք չտվեց: Ծերուկը դեռևս ամուր կերպով իր ձեռքում էր պահում կառավարման սանձերը, և որդին համարյա հույս չուներ, թե կհաջողվի նրանից օգնություն ստանալ:

— Ախր ես նրան գիտեմ,— ասաց նա Ֆրենսիսին:— Կփորձեմ կոտրել նրան, բայց ոչ մի բոպե մի հուսա, թե դրանից մի բան դուրս կգա: Կվերջանա նրանով, որ մենք նրա հետ մի լավ կզգվե՞նք: Ամենազայրացուցիչն այն է, որ նա ասի կանխիկ գումարներ ունի, չհաշված արդեն բազմաթիվ արժեթղթերն ու պետական պարտատոմսերը: Բայց, գիտեք ինչ, իմ պապն իր երիտասարդության օրերին, երբ Նոր-Նոր էր ոտքի կանգնում և հիմնում իր ձեռնարկությունը, իր ընկերներից մեկին հազար դոլար պարտք է տալիս: Նա այնպես էլ այլևս այդ փողը ետ չի ստանում և մինչև մահվան օրը չէր կարողանում այդ բանը մոռանալ: Չի կարողանում մոռանալ նաև իմ հայրը: Այդ տխուր փորձը ամբողջ կյանքում մնաց նրանց հիշողության մեջ: Հայրս Նույնիսկ Հյուսիսային բևեռում ոչ մի պենսի չի տա, եթե գրավական չստանա այդ բոլոր սառույցների դիմաց, և դեռ նախապես էլ էքսպերտներ կուղարկի, որպեսզի գնահատեն դրանք: Բայց ասիք դու ոչ մի ապահովություն չունես: Սակայն ասա թե ինչ կասեմ ես քեզ: Այսօր ճաշից հետո կխոսեմ ծերուկի հետ. այդ ժամին նա համարյա միշտ բարեհոգի տրամադրության մեջ է լինում: Հետո կնայեմ, թե ինքս ինչ ունեմ և ինչ կարող եմ անել քեզ համար: Օ, ես գիտեմ, որ մի քանի հարյուր հազարը քո ցավին դարման չի անի, բայց ես ամեն հնարավոր ու անհնար բան կանեմ, որպեսզի ճարեմ ավելին: Ինչպես էլ որ լինի, վաղը առավոտյան իննին ես քեզ մոտ կլինեմ...

— Հը՛մ, դա ինձ համար դժվարին օր է լինելու,— թույլ ժպիտով նկատեց Ֆրենսիսն ու սեղմեց բարեկամի ձեռքը:— Ժամը ութին ես արդեն տանը չեմ լինի:

— Այդ դեպքում ես կգամ մինչև ուրիշ,— ասաց Չարլի Տիպպերին ու նորից ջերմորեն սեղմեց նրա ձեռքը:— Իսկ առայժմ գործով զբաղվենք: Իմ գլխում արդեն որոշ մտքեր ծագեցին...

Նույն օրը Ֆրենսիսը ևս մի գործարար տեսակցություն ուներ: Երբ նա վերադարձավ իր մակեր Բեսկոմի գրասենյակը, վերջինս հայտնեց, թե զանգել է Ռիզանը և ասել, որ ուզում է տեսնվել նրա հետ: Ռիզանը խնդրել էր հայտնել, որ Ֆրենսիսի համար հետաքրքիր նորություններ ունի:

— Ես իսկույն նրա մոտ կգնամ,— ասաց Ֆրենսիսը, ձեռքը տանելով գլխարկին. արթնացող հույսից նրա դեմքը մեկեն զվարթացավ:— Նա հորս հին բարեկամն է, և եթե որևէ մեկը դեռևս կարող է ինձ դժբախտությունից դուրս հանել, ապա, անշուշտ, այդ նա է:

— Այդքան էլ համոզված մի՞ լինեք դրանում,— գլուխն օրորելով ասաց Բեսկոմն ու փոքր-ինչ լռեց, սիրտ չանելով արտահայտել այն, ինչ պտտվում էր լեզվի ծայրին:— Ես զանգեցի նրան Պանամայից ձեր վերադառնալու նախօրյակին: Շատ անկեղծ եղա նրա հետ: Ասացի, որ դուք բացակա եք, որ ձեր դրությունը ողբալի է և... դե, հենց ուղղակի էլ հարցրի՝ կարո՞ղ եմ կարիքի դեպքում հույս դնել նրա օգնության վրա: Եվ այստեղ նա սկսեց խույս տալ պատասխանից: Դուք գիտեք, թե մարդիկ ինչպես են խույս տալիս, երբ նրանցից պարտք եք խնդրում: Ահա այդպես էլ եղավ նրա հետ: Բայց ինձ թվաց, որ այստեղ ինչ-որ ուրիշ բան էլ է թաքնված... Ոչ, չէի համարձակվի ասել, որ դա թշնամություն է, միայն թե ես այն տպավորությունն ստացա... Դե, մի խոսքով, ինձ թվաց, որ նա ինչ-որ մի տեսակ արդեն շատ անտարբեր ու սառնասրտությամբ է վերաբերվում ձեր սևանկացման հեռանկարին:

— Ի՛նչ անհեթեթություն,— քմծիծաղեց Ֆրենսիսը:— Նա չափազանց լավ բարեկամ էր հորս հետ:

— Իսկ դուք երբևէ լսե՞լ եք. «Կոսմոպոլիտեն ռեյուլեյզի» միավորման մասին,— բազմանշանակ հարցրեց Բեսկոմը:

Ֆրենսիսը գլխով արեց:

— Բայց այն ժամանակ ես դեռ չէի ծնվել,— քիչ հետո ասաց նա:— Ես որոշ բաներ գիտեմ միայն լսածի հիման վրա: Դե, պատմեցեք տեսնեմ, թե ինչո՞ւմն էր բանը: Ինչո՞ւ դուք հանկարծ հիշեցիք այդ մասին:

— Շատ երկար պատմություն է, բայց լսեցեք իմ խորհուրդը. երբ Ռիզանին տեսնեք, ձեր բոլոր խաղաթղթերը մի բանաք: Թող առաջինը նա խաղա: Եվ եթե պատրաստվում է որևէ բան առաջարկել, թող ասի առանց ձեր կողմից որևէ խնդրանքի: Անշուշտ, գուցե ես սխալվում եմ, բայց վատ չէր լինի, եթե դուք նախապես նրա խաղաթղթերը տեսնեիք:

Կես ժամ հետո Ֆրենսիսն արդեն երես առ երես նստած էր Ռիզանի հետ նրա աշխատասենյակում: Նա այնքան պարզ էր հասկանում, թե ինչ արդեն է սպառնում իրեն, որ դժվարությամբ զսպեց այդ բանն անկեղծորեն խոստովանելու ցանկությունը, սակայն, հիշելով Բեսկոմի խորհուրդը, աշխատեց որքան կարելի է անփութորեն խոսել իր գործերի վիճակի մասին: Մինչև իսկ փորձեց լիակատար հանգստություն խաղալ:

— Մինչև ականջներդ թաղվել ես, հը՞,— սկսեց Ռիզանը:

— Դե, այդքան էլ խորը չէ,— կատակով արձագանքեց Ֆրենսիսը:— Գլուխս դեռ ջրի երեսին է: Շնչել դեռ կարող եմ ու չեմ պատրաստվում խեղդվել:

Ռիզանը մեկեն չպատասխանեց: Մի քանի րոպե ուսումնասիրում էր բորսային հեռագրի ժապավենի վերջին տվյալները:

— Բայց և այնպես դու բավական մեծ քանակությամբ «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսեր ես նետել շուկա:

— Եվ դրանք ուղղակի խլիսում են իրար ձեռքից,— հարվածը ետ վանեց Ֆրենսիսը և առաջին անգամ զարմանքով մտածեց, որ, թերևս, Բեսկոմն իրավացի էր:— Ոչինչ, ես իմ հակառակորդներին կստիպեմ այնքան բաժնետոմս կուլ տալ, որ հետո կսկսի սրտները խառնել:

— Բայց և այնպես նկատիր, որ «Տեմպիկոյի» բաժնետոմսերն սկսում են ընկնել, չնայած որ դրանք գնում են արագ թափով: Ահա թե ինչն է խիստ տարօրինակ,— ասաց Ռիզանը:

— Երբ բորսայում իջեցման խաղ է գնում, պատահում են ամեն տեսակ տարօրինակություններ,— հանգիստ ու խելոք առարկեց Ֆրենսիսը:— Բայց երբ իմ թշնամիներն իրենց փորները կճխտեն նրանով, որից ես ուրախությամբ պատրաստ եմ ազատվել, նրանց մոտ ծակոցներ կսկսվեն: Այն ժամանակ ոմանք ստիպված կլինեն թանկ վճարել, որպեսզի ազատվեն իրենց որկրամոլության հետևանքներից: Ես կարծում եմ, որ նրանք գրպանները շուռ կտան ավելի շուտ, քան ես իրենց հետ հաշիվներս կմաքրեմ:

— Բայց ախր դու արդեն վերջակետին ես հասել, տղաս: Ես հետևում էի բորսային այս ճակատամարտին, երբ դու դեռևս այստեղ չէիր: «Տեմպիկո պեթրոլեումը» քո միակ ու վերջին հենարանն է:

Ֆրենսիսը գլուխն օրորեց:

— Բոլորովին էլ այդպես չէ,— ստեց նա:— Ես կապիտալ ներդրումներ ունեմ, որոնց մասին բորսայի իմ հակառակորդները չեն էլ կասկածում: Ես նրանց հրապուրում եմ դեպի ծուղակը, դիտմամբ եմ հրապուրում: Իհարկե, Ռիզան, ես սա ասում եմ մեր մեջ: Չէ՞ որ դուք իմ հոր բարեկամն եք եղել: Ես այս խառնաշփոթությունից դուրս կպրծնեմ: Եվ եթե ուզում եք իմ խորհուրդը լսել, ապա գնեցեք, քանի դեռ գներն այդքան ցածր են շուկայում: Կարող եք չկասկածել, որ, երբ գները բարձրանան, ազատորեն կվճարեք ամեն ինչի համար:

— Այդ ի՞նչ կապիտալ ներդրումներ են, որ դու դեռևս ունես:

Ֆրենսիսն ուներ թոթվեց:

— Հակառակորդներս կիմանան դա, երբ բորսան կհեղեղվի իմ բաժնետոմսերով:

— Աչքիս թո՛ղ ես փչում,— հիացմունքով բացականչեց Ռիզանը:— Բայց դու քեզ ամուր ես պահում, ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ ծերուկ Ռ. Յ. Մ.-ն: Միայն թե, որպեսզի ես հավատամ, դու պետք է ապացուցես, որ սա աչքին թոզ փչել չէ:

Ռիզանն սպասում էր պատասխանի, և այստեղ Ֆրենսիսի գլխում մի միտք ծագեց:

— Ի՛նչ ապացուցել, դուք իրավացի եք,— մրթմրթաց նա:— Իսկապես, ձեր աչքին թոզ էի փչում: Ես խեղդվում եմ. ջուրն արդեն ականջներիս է հասել: Բայց դուրս կլողամ, եթե ինձ օգնեք: Հիշեցեք հորս և օգնության ձեռք մեկնեցեք որդուն: Եթե դուք ինձ օգնեք, նրանց բոլորի բանը վատ կլինի...

Եվ ահա հենց այդ ժամանակ էլ Ուոլլ-սթրիտի Գայլը ցույց տվեց իր ատամները: Նա մատը պարզեց դեպի Ռիչարդ Յենրի Մորգանի դիմանկարը:

— Ինչ ես կարծում, ինչո՞ւ եմ այսքան տարի այդ նկարը փակցրած պահում իմ պատին,— հարցրեց նա:

— Ֆրենսիսը գլխով արեց. իբրև թե՝ հասկանում եմ, ձեր մեջ տարիների փորձված բարեկամություն կար:

— Ո՛չ, չգուշակեցիր,— մռայլ քմծիծաղելով ասաց Ռիզանը:

Ֆրենսիսը տարակուսանքով ուներ թոթվեց:

— Որպեսզի միշտ հիշեմ նրան,— շարունակեց Գայլը:— Եվ ես ոչ մի ակնթարթ չեմ մոռանում: Հիշո՞ւմ ես «Կոսմոպոլիտեն ռեյուեյզի» միավորման պատմությունը: Զո հայրն այդ գործում խաբեց ինձ: Ու հավատա, լավ խաբեց: Բայց նա շատ էր խորամանկ, որպեսզի ես կարողանայի նրա հետ քվիթ լինել: Ահա թե ինչու նրա նկարը կախեցի այստեղ ու սկսեցի համբերությամբ սպասել: Եվ վերջապես հասա նպատակիս:

— Ուզում եք ասել...— հանգիստ հարցրեց Ֆրենսիսը:

— Հենց այդ է որ կա,— գոմռաց Ռիզանը:— Ես սպասում էի ու նախապատրաստում հարձակումը: Եվ ահա հասավ հարմար ժամը: Համենայն դեպս, քոթոթն իմ ձեռքում է:— Նա նենգ ժպիտով

Նայեց դիմանկարին:— Եվ եթե այս բանը մեր քավթառին չստիպի գերեզմանում շուռ գալ, այն ժամանակ...

Ֆրենսիսը վեր կացավ բազկաթռոցից ու երկար-երկար հետաքրքրությամբ դիտում էր իր հակառակորդին:

— Ո՛չ — ասաց նա, ասես խոսելով ինքն իր հետ:— Ո՛չ, չարժե:

— Ի՞նչը չարժե,— հարցրեց Ռիզանը, իսկույն վատ բան կռահելով:

— Թակել ձեզ,— եղավ հանգիստ պատասխանը:— Ես կարող էի հինգ րոպեում ահա այս ձեռքերով ձեզ այն աշխարհն ուղարկել: Ոչ մի գայլ էլ չէք դուք, այլ պարզապես շան ու գիշատիչ ժանտաքիսի խառնուրդ: Ինձ ասացին, որ ձեզանից կարելի է այդպիսի բան սպասել, բայց ես չհավատացի ու եկա այստեղ, որպեսզի անձամբ համոզվեմ: Բարեկամներս իրավացի էին: Դուք լիովին արժանի եք բոլոր այն մականուններին, որոնցով նրանք պարզևատրել են ձեզ: Օ՛Ֆ, պետք է որքան կարելի է շուտ հեռանալ այստեղից: Աղվեսի բնի հոտ է գալիս: Համարժեք գարշահոտություն է:

Արդեն դռան բռնակը ձեռքում, նա դանդաղեց ու շուռ եկավ: Չհաջողվեց Ռիզանին համբերությունից հանել:

— Ուրեմն, ի՞նչ ես մտադիր ձեռնարկել,— հեզանքով հարցրեց Ռիզանը:

— Եթե թույլ տաք հեռախոսով զանգել իմ մակերին, թերևս, կիմանաք,— պատասխանեց Ֆրենսիսը:

— Խնդրեմ, տղաս,— սիրալիրությամբ համաձայնեց Ռիզանը, բայց իսկույն էլ, չար դիտավորություն կասկածելով, ավելացրեց:— Ես ինքս քեզ կմիացնեմ նրա հետ:

Եվ համոզվելով միայն, որ հեռախոսի մոտ իրոք Բեսկոմն է, լսափողը տվեց Ֆրենսիսին:

— Դուք իրավացի էիք,— ասաց սա Բեսկոմին:— Ռիզանը արժանի է բոլոր այն մականուններին, որոնցով դուք նրան պարզևատրել եք, և նույնիսկ ավելին: Շարունակեցեք գործել մեր մշակած պլանի համաձայն: Մենք կարող ենք սեղմել նրան, երբ ուզենանք, չնայած ծեր աղվեսը ոչ մի րոպե չի հավատում դրան: Նա կարծում է, թե կարող է ցփի տկլորացնել ինձ:— Ֆրենսիսը մի պահ լռեց, մտածելով, թե ինչ կերպ կարող է ավելի ճարակորեն խաբել հակառակորդին, ապա շարունակեց:— Հիմա մի բան կասեմ ձեզ, որ առայժմ չգիտեք: Այդ նա է հենց սկզբից հարձակում սկսել մեզ վրա: Այնպես որ այժմ հայտնի է, թե ում պետք է թաղենք:

Մի քանի բան էլ ասելով նույն ոգով, նա լսափողը կախեց:

— Գիտեք ինչ,— բացատրեց նա, նորից կանգ առնելով շեմին,— դուք այնպես ճարակորեն էիք ծածկում ձեր հետքերը, որ մենք ոչ մի կերպ գլխի չէինք ընկնում, թե ում գործն է դա: Գրողը տանի, Ռիզան, արդ մենք պատրաստվում էինք դնչակալել ինչ-որ անհայտ հակառակորդի, որին մի տասն անգամ ձեզանից ուժեղ էինք համարում: Այժմ, երբ պարզվեց, որ այդ դուք եք, ամեն բան շատ ավելի հեշտ կլինի: Մենք պատրաստվում էինք ծանր մարտերի, իսկ այժմ ամեն ինչ հանգելու է հեշտ հաղթանակի: Վաղն այս ժամին, ահա այստեղ, ձեր առանձնասենյակում, տեղի կունենա հոգեհանգիստ, և դուք ողբացողների թվում չեք լինի: Երբ մենք ձեզ հետ հաշիվ տեսնենք, վերջացնենք, դուք կլինեք հանգուցյալ, ամենախսկական ֆինանսական մի դիակ:

— Ռ. Հ. Մ.-ի ճիշտ պատճենը,— հեզանքով նկատեց ծեր Գայլը:— Աստված իմ, ինչպես էր կարողանում նա մարդու աչքին թոզ փչել:

— Որքան եմ ցավում, որ նա չթաղեց ձեզ ու ինձ չազատեց այս հոգսերից,— հրաժեշտ տվեց նրան Ֆրենսիսը:

— Եվ դրա հետ կապված բոլոր ծախսերից,— բղավեց նրա հետևից Ռիզանը:— Այդ բանը թանկ կնստի ձեզ վրա, երիտասարդ, իսկ այս առանձնասենյակում ոչ մի հոգեհանգիստ չի լինի:

— Դե, վաղը վճռական օր է,— հայտարարեց Ֆրենսիսը Բեսկոմին, երբ նրանք երեկոյան հրաժեշտ էին տալիս:— Վաղը այս ժամին արդեն իմ գանգամաշկը կհանեն, և ես կպատրաստվեմ բոլոր կանոնների համաձայն՝ արևի տակ չորացրած, ծխահար մի նմուշ Ռիզանի մասնավոր հավաքածուի համար: Բայց ո՞վ կհավատար, որ այդ ծեր սրիկան ատամ ունի իմ դեմ: Ախր ես երբեք որևէ վատություն չեմ արել նրան: Ընդհակառակը, միշտ համարել եմ հորս լավագույն բարեկամը: Եթե միայն Չարլի Տիպպերիին հաջողվեր որևէ բան պոկել հորից...

— Կամ եթե հանկարծ Միացյալ Նահանգները մորատորիում հայտարարեին,— նույն տոնով նկատեց Բեսկոմը, սակայն բոլորովին չհավատալով դրան:

Իսկ այդ թույլին Ռիզանն իր մոտ հավաքված գործակալներին ու ասեկոսների վարպետներին ասում էր.

— Վաճառեցե՛ք: Վաճառեցե՛ք: Վաճառեցե՛ք այն ամենը, հանձնեցե՛ք ինչ ունեք, և տեղնուտեղն էլ բաժնետոմսերը հանձնեցե՛ք գևորդներին: Ես այս անկման վերջը չեմ տեսնում:

Իսկ Ֆրենսիսը, տուն գնալիս, ճամփին գնեց երեկոյան թերթն ու արագ աչքի անցկացնելով, նկատեց հսկայական տառերով շարված վերնագիրը.

«— Ես այս անկման վերջը չեմ տեսնում,— նախագուշակում է Թոմաս Ռիզանը»:

Հաջորդ առավոտյան ժամը ութին, երբ Չարլի Տիպպերին եկավ Ֆրենսիսի մոտ, վերջինս արդեն տանը չէր: Այդ գիշեր կառավարությունը Վաշինգտոնում չէր քնել, և գիշերային հեռագրերը երկրով մեկ տարածեցին այն հաղորդումը, որ, չնայած Միացյալ Նահանգները պատերազմի մեջ չեն մտել, սակայն հայտարարվում է մորատորիում, և վճարումները դադարեցվում են: Ժամը յոթին, երբ Ֆրենսիսը դեռևս անկողնում էր, այդ լուրերով նրա մոտ եկավ ինքը Բեսկոմը, և Ֆրենսիսն իսկույն նրա հետ մեկնեց Ուոլլ-սթրիտ: Կառավարության մորատորիում հայտարարելը հույս ներշնչեց, և նրանք շատ գործ ունեին անելու:

Սակայն Չարլզ Տիպպերին առաջին մարդը չէր, որ այդ առավոտ եկավ Ռիվերսայդ-դրայվի վրա գտնվող ապարանքը: Ժամը ութի մոտերքը շքամուտքից գանգահարեցին արևից սևացած, փոշոտված Յենրին ու Լեոնսիան: Մի կողմ հրելով դուռը բաց անող կրտսեր սպասավորին, նրանք ուղղակի դիմեցին դեպի սենյակները, ի մեծ շփոթություն ընդառաջ վազող Փարկերի:

— Իզուր եք բարձրանում,— ասաց նրանց Փարկերը:— Միսոր Մորգանը տանը չէ:

— Հապա ո՞ւր է,— հարցրեց Յենրին, ճամպրուկը ձեռքից ձեռք փոխադրելով:— Մեզ անհրաժեշտ է տեսնել նրան pronto: Իսկ pronto, հայտնի լինի ձեզ, նշանակում է անհապաղ: Ո՞վ եք դուք, գրողը տանի:

— Ես միսոր Մորգանի սպասավորն եմ,— հանդիսավորությամբ պատասխանեց Փարկերը:— Իսկ դո՞ւք ովքեր եք:

— Իմ ազգանունը Մորգան է,— կտրեց Յենրին ու աչք ածեց չորս կողմ, ասես ինչ-որ բան փնտրելով, ապա բաց արեց գրադարանի դուռն ու նկատեց հեռախոսը:— Որտե՞ղ է Ֆրենսիսը: Ո՞ր համարով կարող եմ գանգել նրան:

— Միսոր Մորգանը հատկապես պատվիրեց, որ ոչ ոք հեռախոսով չանհանգստացնի իրեն, բացի միայն հույժ կարևոր գործերի դեպքում:

— Դե, ես հենց հույժ կարևոր գործ ունեմ: Համարը տվեք:

— Միսոր Մորգանն այսօր զբաղված է,— համառորեն կրկնեց Փարկերը:

— Լավ են սեղմել, հը՞,— հարցրեց Յենրին:

Սպասավորի դեմքը մնաց անտարբեր:

— Ինչպես երևում է, նրան այսօր տկլորացնելու են, հը՞:

Փարկերի դեմքն ասես փայտացավ, կարծես նա չէր հասկանում, թե ինչ են ասում իրեն:

— Նորից եմ կրկնում՝ միսոր Մորգանը շատ է զբաղված. . . — սկսեց նա:

— Թո՛ւ քեզ, չար սատանա,— բարկացավ Յենրին:— Բայց ախր դա ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ բորսայում բռնել են նրա կոկորդից: Բոլորին է հայտնի: Առավոտյան բոլոր թերթերն այդ մասին են բղավում: Դե, պարոն սպասավոր, ասացեք համարը: Ես շատ կարևոր գործ ունեմ նրա հետ:

Բայց Փարկերն անդրդվելի էր:

— Ինչպե՞ս է նրա փաստաբանի ազգանունը: Կամ մակլերի: Կամ նրա ներկայացուցիչներից որևէ մեկի:

Փարկերը գլուխն օրորեց:

— Եթե դուք ասեք, թե ինչ գործ ունեք նրա հետ. . . — սկսեց սպասավորը:

Յենրին ճամպրուկը գցեց հատակին և, ասես, պատրաստվում էր նետվել Փարկերի վրա ու պատասխանը թափ տալ նրանից, բայց այդտեղ միջամտեց Լեոնսիան:

— Ասա նրան,— խորհուրդ տվեց նա:

— Ասել նրա՛ն: Ինչո՞ւ: Ավելի լավ է՝ ցույց տալ: Է՛յ, դուք, մոտ եկեք:— Յենրին մտավ գրադարան, ճամպրուկը դրեց գրասեղանին ու սկսեց բանալ:— Լսեցեք, պարոն սպասավոր, մենք իսկական, ինչպես ասում են՝ խիստ կարևոր գործ ունենք միսոր Մորգանի հետ: Մենք եկել ենք փրկելու նրան, դուրս հանելու դժբախտությունից: Մենք նրա համար միլիոններ ենք բերել ահա այս ճամպրուկով. . .

Փարկերը, որ մինչ այդ լսում էր սառը, դատապարտող տեսքով, վերջին խոսքերի վրա ահաբեկված ետ-ետ գնաց: Այդ տարօրինակ հյուրերը կամ խելագարներ են, կամ խորամանկ չարամիտներ: Ախր հենց այդ նույն րոպեին, մինչդեռ սրանք Փարկերին պահում են այստեղ՝ միլիոնների մասին իրենց առակներով, թերևս սրանց գործակիցներն արդեն մաքրագարդել են վերևի հարկը: Ինչ վերաբերում է ճամպրուկին, ապա, միգուցե, դրա մեջ դիմամիտ է դրված, ո՞վ գիտե:

— Սպասիր:

Եվ նախքան Փարկերը կհասցներ սենյակից դուրս թռչել, Յենրին բռնեց նրա օձիքից ու դեմքով դարձրեց դեպի սեղանը: Մյուս ձեռքով նա բարձրացրեց ճամպրուկի կափարիչը, և Փարկերը տեսավ չիղկված թանկագին քարերի մի բլրակ: Փարկերն ուշաթափվելու վրա էր, սակայն, Յենրին սիսալ հասկացավ նրա հուզմունքի պատճառը:

— Յո՛ւսով եմ, համոզեցի՞ ձեզ,— հաղթականորեն հարցրեց Յենրին:— Իսկ հիմա բարի եղեք, տվեք ինձ հեռախոսի համարը:

— Նստեցեք, ինդրեմ, սը՛ր. . . և դուք, տիրուհի,— միթմիթաց Փարկերը, հարգալիք գլուխ տալով ու չափազանց հաջող կերպով կարողանալով իրեն տիրապետել:— Նստեցեք ինդրեմ: Ես միսոր Մորգանի հեռախոսի համարը թողել եմ նրա ննջարանում. նա գրեց այս առավոտյան, երբ օգնում էի նրան հագնվելու: Այս րոպեին կբերեմ: Իսկ առայժմ նստեցեք ինդրեմ:

Գրադարանից դուրս գալով, Փարկերը նորից վերստացավ մտքի պարզությունը և իսկույն հանդես բերեց արտակարգ գործարարություն ու տնօրինելու շնորհք: Կրտսեր բարապանին կանգնեցնելով շքամուտքի, իսկ ավագին՝ գրադարանի դռան մոտ, նա մնացած ծառաներին ուղարկեց վերին հարկի սենյակները՝ տեսնելու, թե արդյոք այդ ոճրագործների համախոհները չէ՛ն թաքնված այնտեղ: Իսկ ինքը բուժետոմ գտնվող հեռախոսով զանգեց մոտակա ոստիկանատուն:

— Այո, սը՛ր,— կրկնեց նա ի պատասխան հերթապահ սերժանտի հարցին:— Կամ երկու խելագարներ են, կամ երկու ոճրագործներ: Ինդրում եմ, սը՛ր, անհապաղ ոստիկանական մի կառք ճամփեցեք պահպանությանը հանդերձ: Ես դեռևս չգիտեմ, թե այս րոպեին ինչ սարսափելի ոճրագործություններ են տեղի ունենում այս հարկի տակ. . .

Այդ միջոցին բարապանը զանգի վրա բացելով շքամուտքը, ակնհայտ թեթևությամբ ներս թողեց Չարլի Տիպպերիին, որը, չնայած վաղ ժամին, հագել էր ֆրակ. բարապանը գիտեր, որ նա տանտիրոջ վաղեմի ու անձնվեր բարեկամն է: Ուրախացավ նմանապես և ավագ բարապանը,

որը, աչքով անելով ու ամեն կերպ նախագուշացնելով Չարլի Տիպպերին, նրա առաջ լայն բաց արեց գրադարանի դուռը:

Սպասելով աստված գիտե ինչ կամ ում տեսնելու, Չարլի Տիպպերին ներս մտավ սենյակ, որտեղ նստած էին երկու անծանոթներ՝ մի տղամարդ ու մի կին: Նրանց այրված ու ճամփից հոգնած դեմքերը ոչ մի կասկած չառաջացրին նրա մեջ, ինչպես Փարկերի մեջ, այլ ավելի շուտ դրդեցին որքան կարելի է մեծ ուշադրությամբ վերաբերվել, քան այն, որ Նյու Յորքի բնակիչը սովորաբար հանդես է բերում սովորական եկվորների հանդեպ: Լեոնսիայի գեղեցկությունն ապշեցրեց նրան, և նա իսկույն հասկացավ, որ իր առջև իսկական լեդի է կանգնած: Յենրիի բրոնզագույն դեմքը, որ այնպես նման էր Ֆրենսիսի և Ռ. Յ. Մ.-ի դեմքերին, հարգանք էր ներշնչում և շատ դուր եկավ նրան:

— Բարի լույս,— դիմեց նա Յենրիին, երկուսին էլ գլուխ տալով:— Դուք Ֆրենսիսի բարեկամներն եք:

— Օ՛, սըր,— բացականչեց Լեոնսիան:— Ավելին, քան բարեկամներ: Մենք եկել ենք, որպեսզի փրկենք նրան: Ես կարողացի առավուտյան թերթերը: Եթե ծառաների հիմարությունը չլիներ...

Տիպպերիի վերջին կասկածները չքացան: Նա ձեռքը մեկնեց Յենրիին:

— Չարլզ Տիպպերի,— ներկայացավ Չարլին:

— Մորգան, Յենրի Մորգան,— իր հերթին ներկայացավ Յենրին, կառչելով նրա ձեռքից, ինչպես խեղդվողն է կառչում փրկողակից:— Իսկ սա միսս Սոլանոն է: Սենյորիտա Սոլանո, միստր Տիպպերի: Ճիշտն ասած, միսս Սոլանոն իմ քույրն է:

— Գիտե՞ք, ես էլ եմ նույն գործով եկել,— հայտնեց Չարլի Տիպպերին, երբ ծանոթությունն ավարտվեց:— Որքան ես հասկանում եմ, Ֆրենսիսին կարող է փրկել միայն զնգուն ոսկին կամ այնպիսի արժեքները, որոնք կարող են վերածվել փողի: Ես բերել եմ այն ամենը, ինչ հաջողվեց ժողովել այս գիշերվա ընթացքում, չնայած համոզված եմ, որ դա քիչ է...

— Որքա՞ն եք բերել,— ուղղակի հարցրեց Յենրին:

— Մեկ միլիոն ութ հարյուր հազար: Իսկ դո՞ւք:

— Յե՛չ, դատարկ բան,— ասաց Յենրին, ցույց տալով բաց ճամպրուկն ու չկասկածելով, որ խոսում է թանկագին քարերի ոսկերիչ-էքսպերտների երրորդ սերնդի ներկայացուցչի հետ:

Չարլի Տիպպերին պատահած տեղից առավ կես ոլոժին քարեր ու արագ զննեց, իսկ էլ ավելի արագ որոշեց, թե որքան քար կար ճամպրուկում. նրա դեմքը բռնկվեց՝ այնպես էր ցնցված նա:

— Ախր այստեղ միլիոնավոր դոլարների քարեր կան,— բացականչեց նա:— Ի՞նչ եք մտադիր անել դրանք:

— Վաճառել, որպեսզի օգնենք Ֆրենսիսին դուրս պրծնելու,— պատասխանեց Յենրին:— Սրանք կընդունեն իբրև ապահովություն ցանկացած գումարի դիմաց, այնպես չէ՞:

— Փակեցե՞ք ճամպրուկը,— հրամայեց Չարլի Տիպպերին:— Ես հիմա հեռախոսով կզանգեմ: Ուզում եմ հորս բռնել, քանի դեռ տանն է,— նետեց նա ուսի վրայով, արդեն հեռախոսի մոտ կանգնած սպասելով, թե երբ կմիացնեն հոր հետ:— Այստեղից մեզ մոտ հինգ րոպեի ճանապարհ է:

Յենց նոր էր նա իր կարճ խոսակցությունն ավարտել հոր հետ, երբ Փարկերը ներս մտավ ոստիկանական լեյտենանտի և երկու ոստիկանների ուղեկցությամբ:

— Ահա ամբողջ ավազակախումբը, լեյտենանտ, ձերբակալեցե՞ք նրանց,— ասաց Փարկերը:— Ա՛խ, ներողություն եմ խնդրում, միստր Տիպպերի: Ո՛չ ձեզ, իհարկե: Միայն ահա այդ երկուսին, լեյտենանտ: Թող դատարանը որոշի, թե ովքեր են նրանք: Խելագար են անկասկած, իսկ միգուցե և շատ ավելի լուրջ բան:

— Բարև ձեզ, միստր Տիպպերի,— ողջունեց լեյտենանտը, ճանաչելով երիտասարդին:

— Ոչ ոքի ձերբակալելու հարկ չկա, լեյտենանտ Բեռնս,— ժպտալով նկատեց Չարլին:— Կարող եք ձեր կառքը ետ ուղարկել: Ես հետո ամեն ինչ կբացատրեմ տեսուչին: Բայց ձեզ հարկ կլինի ինձ և այս կասկածելի մարդկանց իրենց ճամպրուկով հանդերձ ուղեկցել մինչև մեր տուն: Դուք կպահպանեք մեզ: Օ՛, ոչ ինձ, այլ այս ճամպրուկը. դրանում միլիոններ են՝ պառ, շլացուցիչ, սքանչելի: Երբ ես այս ճամպրուկը բանամ հորս առաջ, դուք ականատես կլինեք այնպիսի տեսարանի, որը քչերին է բախտ վիճակվում տեսնել: Իսկ հիմա գնանք: Մենք իզուր ժամանակ ենք կորցնում միայն:

Նա Յենրիի հետ միաժամանակ ձեռքը տարավ ճամպրուկին: Այդ նկատելով՝ լեյտենանտ Բեռնսն անմիջապես նետվեց նրանց մոտ:

— Բանի դեռ մենք չենք պայմանավորվել, թերևս ճամպրուկը ե՛ս վերցնեմ,— ասաց Յենրին:

— Իհարկե, իհարկե,— համաձայնեց Չարլի Տիպպերին:— Միայն թանկագին ժամանակը չկորցնենք: Չէ որ դեռ պետք է պայմանավորվել: Դե գնանք, շուտ:

ԳԼՈՒԽ ԶԱՄԱՆԻՆՆԵՐՈՐԴ

ԱՄՆ-ի կառավարության հայտարարած մորատորիումն օգնեց դրույթունը կայունացնելու, և բորսայում բաժնետոմսերի անկումը դադարեց, իսկ մի որոշ մասի գինը նույնիսկ սկսեց բարձրանալ: Այդպիսի պատկեր էր նկատվում համարյա բոլոր ձեռնարկությունների բաժնետոմսերի նկատմամբ, բացի նրանցից, որտեղ ներդրված էին Ֆրենսիսի կապիտալները և որոնցով Ռիզանը իջեցում էր խաղում: Նա շարունակում էր իջեցում խաղալ, առաջացնելով գների անշեղ անկում և ուրախությամբ նկատեց, որ շուկայում երևան եկան «Տեմպիկո պեթրոլեումի» բաժնետոմսերի մեծ-մեծ ծրարներ, որոնք, ակնհայտորեն, դուրս էր նետում ոչ այլ ոք, բայց եթե Ֆրենսիսը:

— Այժմ հասավ մեր հարմար ժամը,— հրամայեց Ռիզանն իր համախոհներին:— Վաճառեցեք ու գնեցեք: Երկու դեպքում էլ կշահեք: Եվ միշտ հիշեք այն ձեռնարկությունների ցուցակը, որ ես ձեզ տվել եմ: Վաճառեցեք միայն այդ բաժնետոմսերը, և այնպես, որ ինչքան կարելի է արագ կերպով գնորդի ձեռքը հանձնեք: Դրանք շարունակելու են ընկնել ու ընկնել: Իսկ մնացած բոլորը գնեցեք, և գնեցեք անմիջապես, ինչ որ վաճառում եք, անմիջապես հանձնեցեք գնորդին... Հասկացեք, այս խաղը անպայման շահող խաղ է, իսկ շարունակելով վաճառել ցուցակում նշված բաժնետոմսերը, դուք միանգամից երկու նապաստակ եք սպանում:

— Իսկ դո՞ւք ինչ պիտի անեք,— հարցրեց «արջերից» մեկը:

— Ե՛ս: Ես գնելու հարկ չունեմ,— եղավ պատասխանը:— Թող սա ծառայի իբրև ապացույց, որ ես ձեզ ազնիվ խորհուրդ եմ տալիս և որ կասկած չունեմ այս տակտիկայի ճշմարիտ լինելու մեջ: Ես չեմ վաճառել ոչ մի բաժնետոմս, բացի ցուցակում նշվածներից, այնպես որ գնորդներին ոչ մի բան պարտք չեմ: Ես տեղնուտեղը հաշիվները մաքրում եմ նրանց հետ և շարունակում դեկավարվել ցուցակով, և միայն ցուցակով: Իմ խաղը հենց այդ է որ կա, և դուք էլ կարող եք մասնակցել դրան. պետք է միայն վաճառել և տեղնուտեղը հաշիվները մաքրել գնորդի հետ:

— Ահա, վերջապես, և դուք,— հուսահատությամբ բացականչեց Բեսկոմը, երբ Ֆրենսիսը տասն անց կեսին մտավ նրա աշխատասենյակ:— Բորսայում բոլոր թղթերի գները բարձրանում են, բացառությամբ ձեր ձեռնարկությունների բաժնետոմսերի: Ռիզանն ուզում է ձեր երակը բանալ: Երբեք ենթադրել չէի կարող, թե նա այդպիսի ուժ հանդես կբերի: Մենք ի վիճակի չենք դիմանալ այդ հարձակմանը, բաններս բուրդ է: Մենք ջախջախված ենք՝ և՛ դուք, և՛ ես, և՛ մենք բոլորս...

Դեռևս երբեք Ֆրենսիսն այնպես հանգիստ չէր եղել, ինչպես այժմ: «Բանի որ ամեն ինչ կորած է, էլ ինչո՞ւ հուզվել»,— մտածում էր նա: Բորսային խաղի մեծ մասնագետ չլինելով հանդերձ, նա այնուամենայնիվ հանկարծ տեսավ այն լուսածեղալը, որ չէր նկատել բազմափորձ ու բորսային խաղի գիտակ Բեսկոմը:

— Ամեն ինչ այդպես մոտ մի՛ ընդունեք սրտներիդ,— խորհուրդ տվեց Ֆրենսիսը, մինչդեռ ուղեղում ծնված ծրագիրը վայրկյան առ վայրկյան ավելի պարզ գծագրություն էր ստանում:— Եկեք ծխենք ու փոքր-ինչ քննենք վիճակը:

Բեսկոմն անհամբերությամբ ձեռքը թափ տվեց:

— Դե սպասեցեք,— աղաչեց Ֆրենսիսը:— Լսեցեք: Ասում եք, բանս բո՞ւրդ է:

Մակլերը գլխով արեց:

— Ձերը նույնպե՞ս:

Նորից գլխի շարժում:

— Ուրեմն, մենք սնանկացած ենք, սնանկացած վերջնականապես,— շարունակեց Ֆրենսիսը, զարգացնելով մտքում ծնված ծրագիրը:— Իսկ ձեզ համար ու ինձ համար միանգամայն պարզ է, որ ավելի վատ բան չի կարող լինել, քան լիակատար, բացարձակ, հարյուրտոկոսանոց, վերջնական սնանկացումը:

— Մենք կորցնում ենք թանկագին ժամանակը,— բողոքեց Բեսկոմը, բայց և այնպես գլխի շարժումով հասկացնելով, որ համաձայն էր այդ եզրակացության հետ:

— Ուրեմն, ի՞նչ է մտում մեզ կորցնելու, եթե մենք սնանկացած ենք, ինչպես հենց նոր ընդունեցինք,— ժպտով հարցրեց Ֆրենսիսը:— Եթե մարդ սնանկացած է վերջնականապես, ապա արդեն ոչ ժամանակը, ոչ բաժնետոմսերի առ ու վաճառքը, ոչ մի բան այլևս նշանակություն չունի նրա համար: Բոլոր արժեքներն այժմ դադարել են գոյություն ունենալուց: Սա հասկանալի՞ է ձեզ, թե ոչ:

— Լավ, ի՞նչ եք առաջարկում,— հարցրեց Բեսկոմն անակնկալ հանգստությամբ, որ ծնվում է հուսահատությունից:— Ես սնանկացած եմ, և այն էլ ինչպե՞ս:

— Այ, հիմա ինձ հասկացաք,— ուրախացավ Ֆրենսիսը:— Դուք բորսայի անդամ եք: Ուրեմն, ո՞վ է ձեզ խանգարում խաղին մասնակցելու: Վաճառեցեք կամ գնեցեք: Արեք այն ամենը, ինչ ձեր սիրտն ուզում է: Ի՞նչ նույնպես: Մենք բան չունենք կորցնելու: Որքան էլ հանելու լինենք զրոյից, միևնույն է, զրոն կմնա զրո: Մենք շուկա նետեցինք այն ամենը, ինչ ունեինք: Իսկ այժմ եկեք նետենք այն, ինչ չունենք:

Բեսկոմը դեռևս փորձում էր անզորությամբ բողոքել, բայց Ֆրենսիսը վճռականորեն վերջ տվեց նրա դիմադրությանը:

— Հիշեցեք՝ զրոյից որքան էլ հանեք, միևնույն է, նորից զրո կմնա:

Եվ ահա Բեսկոմը, հետևելով Ֆրենսիսի խորհրդին, բայց գործելով արդեն ոչ իբրև նրա մակլերը, այլ սեփական պատասխանատվությամբ, թաղվեց ամենախելահեղ ֆինանսական արկածախնդրության մեջ, որ երբևէ ձեռնարկել էր իր ամբողջ կյանքում:

— Դե, ահա և բոլորը,— ծիծաղելով ասաց Ֆրենսիսը տասնմեկն անց կեսին,— հիմա մենք կարող ենք արդեն խաղից դուրս գալ: Եվ հիշեցեք՝ այս բոլորին մեր վիճակը բնավ էլ ավելի վատ չէ, քան մեկ ժամ առաջ: Այն ժամանակ մենք զրոյի վրա էինք: Այժմ էլ ենք զրոյի վրա: Հիմա դուք ուզած ժամանակ կարող եք հայտարարություն կախել գույքի վաճառքի մասին:

Բեսկոմը ծանրությամբ նստեց բազկաթոռին ու ձեռքը ծուլորեն տարավ դեպի խոսափողը, մտադրվելով կարգադրություն անել պայքարը դադարեցնելու և անվերապահ կապիտուլյացիա հայտարարելու մասին, երբ հանկարծ դուռը շրխկոցով բացվեց, և ծովահենային հին երգի ծանոթ կրկներգը ներխուժեց սենյակ: Այդ երգի առաջին հնչյունները լսելով՝ Ֆրենսիսը խլեց մակլերի ձեռքից խոսափողը և նետեց լծակի վրա:

— Սպասեցե՛ք,— գոչեց Ֆրենսիսը:— Լսեցե՛ք:

Եվ նրանք լսեցին.

Մենք մեջք մեջքի, կայմի կողքին,

Հագարի դեմ երկուսով:

Իսկ հետո սենյակ ընկավ նաև ինքը Յենրին, քարշ տալով իր հետ մի մեծ ճամպուռկ, բայց արդեն ոչ այն, որ մոտն էր առավոտյան: Տեսնելով նրան, Ֆրենսիսը ձայնակցեց կրկներգին:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Բեսկոմը Չարլի Տիպպերին:

Ֆրենսիսի բարեկամն առաջվա նման ֆրակով էր, բայց անքուն գիշերից ու կրած հուզմունքներից հետո գորշ ու տանջահար տեսք ուներ:

Տիպպերին ներսի գրպանից հանեց ու Բեսկոմին հանձնեց երեք փոխանցագրված չեք՝ մեկ միլիոն ութ հարյուր հազար դոլար ընդհանուր գումարով:

Բեսկոմը տխրությամբ գլուխն օրորեց:

— Շատ է ուշ,— ասաց նա:— Սա միայն մի կաթիլ է ծովում: Նորից դրեք գրպանդ: Կարիք չկա փողը քամուն տալ:

— Սպասեցե՛ք,— բացականչեց Չարլի Տիպպերին, ճամպուռկը խլեց Յենրիի ձեռքից, որը շարունակում էր երգել կոկորդով մեկ, ու բացեց:— Իսկ ահա սա ձեզ չի՞ օգնի:

«Սա»-ն բաղկացած էր կանոնավոր դարսված պարտատոմսերի հսկայական մի կույտից ու ոսկե եզրերով արժեթղթերից:

— Որքա՞ն է այստեղ,— շնչասպառ հարցրեց Բեսկոմը, և արիությունը բռնկվեց նրա մեջ խարույկի արծարծվող բոցի նման:

Իսկ Ֆրենսիսը, շժմած այդպիսի պատկառելի օգնությունից, դադարեց երգել ու քարացավ բաց բերանով: Բայց երբ Յենրին ներսի գրպանից դուրս հանեց ևս տասներկու փոխանցագրված չեք, Ֆրենսիսն ու Բեսկոմը բոլորովին համրացան ու չռեցին աչքները, քանզի յուրաքանչյուր չեքը մեկ միլիոն դոլարի էր:

— Մենք կարող ենք էլի որքան ուզեք ստանալ այնտեղից, որտեղից ստացել ենք սրանք,— անփութորեն նետեց Յենրին:— Բավական է մի խոսք ասես, Ֆրենսիս, և մենք «արջերի» այդ ավազակախմբին փոշի կդարձնենք: Իսկ այժմ շուտ գործի անցիր: Ամենուրեք մի գլուխ հենց այն մասին են խոսում, որ դու սնանկացել ես վերջնականապես: Ցույց տուր դրանց, թե ինչն ինչոց է: Բոլորին սնանկացրու, ովքեր քշել են քեզ վրա: Ամբողջ նրանց ոսկին թափ տուր, մինչև ժամացույցներն ու ատամի շապիկները:

— Ուրեմն, այնուամենայնիվ, գտա՞ք ծերուկ սըր Յենրիի գանձը,— ուրախացած հարցրեց Ֆրենսիսը:

— Ոչ,— գլուխն օրորեց Յենրին:— Սա մայաների հինավուրց գանձի մի մասն է. մոտ մի երրորդն է այստեղ: Երկրորդ մասը Էնրիկո Սոլանոյի մոտ է, իսկ վերջին մասը պահ է տրված «Ոսկերիչների ու առևտրականների ազգային բանկին»: Գիտես, ես քեզ համար շատ նորություններ ունեմ: Կպատմեմ, երբ ժամանակ ունենաս լսելու:

Բայց Ֆրենսիսն արդեն պատրաստ էր լսելու: Բեսկոմը նրանից լավ գիտեր, թե ինչ պետք է անել, և արդեն հեռախոսով կարգադրեց իր օգնականներին բաժնետոմսերը գնել այնպիսի վիթխարի չափերով, որ Ռիզանի ամբողջ կարողությունը չէր հերիքի՝ գնորդներին վճարելու այն ամենը, որ նա վաճառել էր՝ ամենակարճ ժամկետում նրանց ձեռքը հասցնելու պարտավորությամբ:

— Թորեսը մեռավ,— հայտնեց Յենրին:

— Ուռա՛,— ցնծաց Ֆրենսիսը, լսելով այդ նորությունը: Եվ մեռավ, ինչպես առնետը վանդակում: Ես տեսա ժայռի ճեղքից դուրս ընկած նրա գլուխը: Այնքան էլ հաճելի տեսարան չէր: Ոստիկանապետն էլ մեռավ: Եվ . . . Էլի մեկը . . .

— Մի՞թե Լեոնսիան,— բացականչեց Ֆրենսիսը:

Յենրին գլուխն օրորեց:

— Սուլաններից որևէ մե՛կը: Ծերունի Էնրիկո՛ն:

— Ո՛չ: Քո կինը, միսիս Մորգանը: Նրան թորեսն սպանեց, սպանեց ամենաստոր ձևով: Ես նրա կողքին էի, երբ ցած ընկավ: Իսկ այժմ դիմացիր. ես էլի նորություններ ունեմ քեզ համար: Լեոնսիան այստեղ է, կողքի սենյակում, ու սպասում է քեզ: Կանգ առ, ո՛ւր: Սպասիր: Ականջ դիր մինչև վերջ: Էլի նորություններ կան, որ պետք է հայտնեմ քեզ նախքան նրան տեսնելը: Թո՛ւ քեզ, չար սատանա: Եթե իմ տեղը մի ծանոթ չինացի լիներ, կստիպեր քեզ մի միլիոն վճարել այն գաղտնիքի համար, որ պատրաստվում եմ ձրի շարադրել քեզ:

— Դե, ասա, ուրիշ ի՞նչ կա,— անհամբերությամբ հարցրեց Ֆրենսիսը:

— Նորությունը, անշուշտ, հաճելի է, և նույնիսկ շատ, ամենահաճելի նորությունը, որ դու երբևէ լսել ես: Ես... Խնդրում եմ միայն չծիծաղես ու մտքովդ չանցնի գլուխս թոցնես... Այսպես, ուրեմն. նոր քույր է լույս ընկել ինձ համար:

— Զետո ի՞նչ,— կոպտությամբ ընդհատեց Ֆրենսիսը:— Ես միշտ գիտեի, որ դու Անգլիայում քույրեր ունես:

— Բայց դու ինձ չես հասկանում,— շարունակեց գրգռել նրան Զենրին:— Լույս է ընկել բոլորովին նոր քույրիկ, լիովին հասակն առած, և այնպիսի գեղեցկուհի, որ աշխարհում նմանը չկա:

— Զետո ի՞նչ,— մրթմրթաց Ֆրենսիսը:— Զեզ համար դա, հավանորեն, խիստ հաճելի նորություն է: Բայց ես այստեղ ի՞նչ գործ ունեմ:

— Դե ահա և մենք մոտեցանք ամենագլխավորին,— քմծիծաղեց Զենրին:— Դու կամուսնանաս նրա հետ: Լիովին թույլ եմ տալիս...

— Եթե նա մինչև իսկ տասն անգամ քո քույրը լիներ և հարյուր անգամ գեղեցկուհի, միևնույն է, ես չէի ամուսնանա նրա հետ,— ընդհատեց Ֆրենսիսը:— Աշխարհում չկա այնպիսի մի կին, որի հետ ես կարող եմ ամուսնանալ:

— Բայց և այնպես, Ֆրենսիս, տղաս, դու կամուսնանաս այդ կնոջ հետ: Ես դա գիտեմ, ամբողջ իմ եռությամբ եմ զգում: Ուզո՞ւմ ես գրագ գալ:

— Դնում եմ հազար, որ չեմ ամուսնանա:

— Ոչ, բարձրացրու խաղէջքը, որ գրագն իսկական գրագ լինի,— ասաց Զենրին:

— Կարող եմ ղնել, որքան ուզում ես:

— Զիանալի: Այդ դեպքում հազար հինգ հարյուր դուլար: Իսկ այժմ գնա հարևան սենյակն ու տես հարսնացուիդ:

— Նա Լեոնսիայի հե՛տ է:

— Ոչ: Նա մենակ է:

— Ինձ թվաց՝ դու ասացիր, թե Լեոնսիան այստեղ է:

— Այո, ասացի: Ես այդ ասացի: Եվ Լեոնսիան իրոք այստեղ է: Եվ նրա հետ ոչ մի կենդանի էակ չկա. նա սպասում է, որպեսզի խոսի քեզ հետ:

Այստեղ արդեն Ֆրենսիսն սկսեց զայրանալ:

— Ի՞նչ ես քթիցս բռնած խաղացնում,— հարցրեց նա:— Ոչինչ չեմ հասկանում քո կոտրատվելուց: Մերթ այստեղ քո նոր քույրն է, մերթ քո կինը... .

— Զեզ ո՞վ ասաց, որ ես կին ունեմ,— իր հերթին բորբոքվեց Զենրին:

— Անձնատուր եմ լինում,— բացականչեց Ֆրենսիսը:— Գնամ Լեոնսիայի մոտ: Իսկ քեզ հետ կխոսենք հետո, երբ խելքդ տեղը գա:

Նա ուզում էր արդեն քայլել դեպի դուռը, բայց Զենրին պահեց նրան:

— Մի վայրկյան ևս, Ֆրենսիս, և ես քեզ բաց կթողնեմ,— ասաց նա:— Միգուցե գոնե այժմ որևէ բան հասկանաս: Ես ամուսնացած չեմ: Հարևան սենյակում քեզ մի աղջիկ է սպասում: Այդ աղջիկն իմ քույրն է: Եվ նա էլ Լեոնսիան է:

Պահանջվեց ամբողջ կես թույն, որպեսզի Ֆրենսիսը հասկանար այդ խոսքերի իմաստը: Իսկ երբ հասկացավ, թափով նետվեց դեպի դուռը, բայց Հենրիին նորից պահեց նրան:

— Տարած,— հարցրեց նա:

Բայց Ֆրենսիսը, նրան մի կողմ հրելով, բացեց դուռն ու շրխկոցով փակեց իր հետևից: